

վճռական հակահարված տալու հակահեղափոխական տարրերին, եթե նրանք փորձեն դեմ գնալ սովետական իշխանությանը: Ողջունում ենք համաշխարհային պրոլետարական հեղափոխության առաջնորդ ընկեր կենինին, որպես քաղաքային և գյուղական շքավորության փորձված պաշտպանի»:

Նույնանման որոշումներ ընդունվեցին Կարսում, Երևանում, Սարի-զամիշում, Դարաքիլիսայում, Ջալալօղլիում և այլ վայրերում:

Կոմունիստական կազմակերպությունները մեծ աշխատանք ծավալեցին գյուղում: Աշխատավոր գյուղացիությունը ևս պայքարի ելավ սովետական իշխանության հաստատման համար: Այդ պայքարը հատկապես մեծ թափ ստացավ Լոռու, Նոր Բայազետի, Զանգեզուրի և այլ գավառներում: Ելենովկայի շրջանի գյուղացիները, միանալով բանակից վերադարձած զինվորներին, կազմակերպում են սովետներ: Գոմաձորի սովետը պատվիրել էր հատուկ կնիք, որի վրա ուսներեն գրված էր՝ «Գոմաձորի գյուղական սովետ»: Գյուղացիական սովետներ են ստեղծվում նաև Լոռու, Ինչպես և Շամշադինի շրջանի գյուղերում:

1918 թ. գարնանը էլ ավելի ծավալվեցին գյուղացիական շարժումները Հայաստանում: Լոռու մի շարք գյուղերում գյուղացիները բռնագրավում էին կավածատերերի հողերը և հրաժարվում վճարել հարկերը: Նույն բանն էր կատարվում Բարանայի (այժմ՝ Նոյեմբերյանի) շրջանի գյուղերում:

Օրեցօր աճում էր բոլշևիկների ազդեցությունը վոլկասյան բանակում: Զինվորների մեջ լայնորեն տարածվում էր բոլշևիկյան մամուլը, որը նրանց պարզաբանում էր մեծ Հոկտեմբերի գաղափարները: Բոլշևիկ ազիտատորները շինել հազած գյուղացիներին բացատրում էին հեղափոխության փրկարար նշանակությունը բոլոր երկրների աշխատավորների համար: Հայաստանի վաշազորներում տեղի ունեցած միտինգներում ու ժողովներում զինվորների ճնշող մեծամասնությունը կանգնեց Հոկտեմբերյան հեղափոխության դրոշի ներքո:

Հոկտեմբերյան հեղափոխության լուրը հասավ նաև Արևմտյան Հայաստան: Այստեղ գտնվող ուսական բանակի զինվորներն իրենց հայտարարել էին հեղափոխական բանակ և որոշել էին ճանաչել միայն Սովետական Ռուսաստանի կառավարությունը:

1917 թ. նոյեմբերի 21—22-ին տեղի ունեցավ զինվորների և բանվորների ղեպուտատների էրզրումի սովետի, կովկասյան բանակային կոմիտեի և քաղաքի զորամասերի ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների միացյալ նիստ, որը ձայների ճնշող մեծամասնությամբ ընդունեց բոլշևիկների առաջարկած հետևյալ բանաձևը.

1. Ճանաչել Ռուսաստանի կենտրոնական իշխանությունը և անհա-

պաղ կենսագործել վեներտոնական կառավարության հրատարակած դեկրետներն ու որոշումները:

2. Տեղերում իշխանությունը հանձնել սովետներին:

3. Փոխել երկրային այն կազմակերպությունները, որոնք մշակել են Կովկասի անջատման նախագիծը:

Անդրկովկասի իշխող դասակարգերը և նրանց կուսակցությունները թշնամաբար ընդունեցին Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի լուրը և որոշեցին չճանաչել Ռուսաստանի սովետական իշխանությունը: Սոցիալիստական հեղափոխության հաղթարշավը կասեցնելու, երկրամասում ծավալված հեղափոխական շարժումները ճնշելու նպատակով նրանք գործարքի մեջ մտան օտարերկրյա իմպերիալիստների հետ և կազմեցին հակասովետական բրոկ:

1917 թ. նոյեմբերի 15-ին Անդրկովկասի հատուկ կոմիտեի փոխարեն ստեղծվեց Անդրկովկասյան կոմիսարիատ, որի գլուխ կանգնեց Պետական դումայի նախկին անդամ մենշևիկ Ե. Գեղեշկոբին: Կոմիսարիատում ղեկավար պաշտոնները գրավում էին մենշևիկներն ու էսէները: Դաշնակցականներից միայն երկու հոգի էին ղեկավար պաշտոն ստացել:

Անդրկովկասյան կոմիսարիատին առընթեր գործում էին նաև այսպես կոչված «ազգային խորհուրդներ», որոնք Անդրկովկասի բազմազգ աշխատավորության մեջ սերմանում էին փոխադարձ անվստահություն ու թշնամանք, աշխատում էին ջլատել Երկրամասի հեղափոխական ուժերը, նրանց փնտրելու և համերաշխությունը:

Հայոց ազգային խորհուրդը (նախագահ Ա. Ահարոնյան) հենց սկզբից թշնամական դիրք գրավեց Ռուսաստանի հեղափոխական ուժերի նկատմամբ, իսկ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո հայտարարեց, որ չի ճանաչում Սովետական Ռուսաստանի կառավարությունը: Հարկ է ընդգծել, որ Հայոց ազգային խորհուրդը չէր ներկայացնում ոչ Հայաստանի բանվորներին և ոչ էլ գյուղացիներին, շնայած հայտարարում էր, թե ինքը հայ ժողովրդի օրենսդիր և վառավարող օրգանն է:

Սակայն Անդրկովկասի հակահեղափոխական ուժերի մեքենայությունների դեմ համառ պայքար են ծավալում երկրամասի աշխատավոր մասսաները բոլշևիկների ղեկավարությամբ: Նրանք ամենուրեք բռն զայրույթով բողոքում էին հակահեղափոխական իշխանության նոր օրգանի ստեղծման դեմ և որոշումներ էին ընդունում նրա իշխանությունը չճանաչելու մասին: Օրինակ՝ 1917 թ. նոյեմբերի 24-ին Սարիզամիշի զինվորական օկրուգի ղեպուտատների սովետի ընդհանուր ժողովը, հակահարված տալով էսէներին, ընդունեց բոլշևիկյան բանաձև Անդրկով-

կասյան կոմիսարիատը բոլկոտի ենթարկելու և Ռուսաստանի ժողովրդրդական կոմիսարների խորհուրդը ճանաչելու մասին:

1917 թ. դեկտեմբերի 10-ին Քիֆլիսում բացված կովկասյան բանակի երկրային II համագումարը որոշում ընդունեց անհապաղ սովետական իշխանություն հաստատելու մասին: Համագումարի բոլշևիկ պատգամավորները, Ստ. Շահումյանի գլխավորությամբ, մերկացնում էին Անդրկովկասյան կոմիսարիատի հակահեղափոխական քաղաքականությունը, հակահարված տալիս համաձայնողական կուսակցություններին: Համագումարն ընտրեց կովկասյան բանակի երկրային սովետ, որի նախագահ ընտրվեց բոլշևիկ Գ. Կորգանովը: Համագումարի աշխատանքներին մասնակցում էին նաև Հայաստանի կայսրոններից ընտրված բոլշևիկ պատգամավորներ Ստ. Ալավերդյանը, Պ. Արվելաձեն և ուրիշներ:

1918 թ. հունվարի 2-ին Սարիգամիշում ստեղծվեց Ռազմահեղափոխական կոմիտե, որը մեկ ամիս փաստորեն իր ձեռքում էր պահում ամբողջ իշխանությունը: Հունվարի 9-ին Երևանում տեղի ունեցավ բոլշևիկների համաքաղաքային ժողով, որտեղ որոշվեց ճանաչել միայն Սովետական Ռուսաստանի կառավարությունը:

Անդրկովկասյան կոմիսարիատին չէր ճանաչում նաև Սովետական Ռուսաստանի կառավարությունը: 1917 թ. դեկտեմբերի 16-ին Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների խորհուրդը Վ. Ի. Լենինի նախագահությամբ հանգամանորեն քննության առավ Կովկասի դրություն հարցը և որոշեց բանվորների ու զինվորների ղեպուտատների Բաքվի սովետի նախագահ Ստ. Շահումյանին նշանակել Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար՝ մինչև Կովկասում սովետական իշխանության հաստատումը: Մեծ դժվարություններ հաղթահարելով, Ստ. Շահումյանը Բաքվից հասնում է Քիֆլիս և հունվարի 22-ին անցնում իր պարտականությունների կատարմանը: Սովետական Ռուսաստանի մանդատը, ինչպես նաև 500 հազար ռուբլի դրամ Պետրոգրադից Կովկաս էր բերել նշանավոր հեղափոխական Կամոն:

1918 թ. հունվարի 31-ին Ստ. Շահումյանը հանդես եկավ Անդրկովկասի աշխատավորությանն ուղղված դիմումով, որտեղ կոչ էր արվում տապալել Անդրկովկասյան կոմիսարիատի հակահեղափոխական իշխանությունը և հաստատել սովետական կարգեր: «Կովկասը, — գրված էր դիմումի մեջ, — կանգնած է անդնդի եզրին: Փրկեցե՛ք նրան: Ստեղծե՛ք այստեղ ինտերնացիոնալ բանվորացյուղացիական կառավարություն, որը Ռուսաստանի սովետական կենտրոնների ու ժողովրդական կոմիսարների սովետի հետ սերտ միասնություն ստեղծելով՝ վերջ կդնի Կովկասի հակահեղափոխությանը և երկրի բանվոր ու գյուղացի բնակչու-

րյանը կառաչնորդի դեպի լուսավոր ապագան, դեպի սոցիալիզմի թագավորությունը»:

Ստ. Շահումյանի այս բացառունչ դիմումը լայն արձագանք գտավ աշխատավոր մասսաների մեջ: Սակայն Անդրկովկասյան կոմիսարիատը նենգ ու խարդախ միջոցներով աշխատում էր խափանել այն հեղափոխական միջոցառումները, որ ձեռնարկվում էին Ստ. Շահումյանի և բոլշևիկյան վաղմակերպությունների կողմից:

Անդրկովկասյան կոմիսարիատը վարում էր հակահեղափոխական, հակաժողովրդական քաղաքականություն: Նա ռազմական դաշինքի մեջ էր մտել Հյուսիսային Կովկասի և Հարավային Ռուսաստանի սպիտակ-զվարդական զենեռալների հետ և զենք ու ռազմամթերք էր ուղարկում նրանց:

1918 թ. հունվարին Անդրկովկասյան կոմիսարիատը ստակալի ոճրագործություն կատարեց Շամխորում (Ելիզավետպոլի և Քիֆլիսի միջև): Ռուսական հեղափոխական բանակին հարված հասցնելու և, մյուս կողմից, այսպես կոչված, «ազգային զորքերը» զինելու նպատակով նա զրահապատ զնացք ուղարկեց Շամխոր, ուր մուսավաթական զինված բանդաները մի քանի օր շարունակ (հունվարի 9—12-ը), դարան մտած, զնդակոծում էին ռազմաճակատից վերադարձող զինվորական էջելունները: Այդ օրերին զոհվեցին հազարավոր ռուս զինվորներ, շատերը խեղանդամ եղան, բռնագրավվեց 15 հազար հրացան, մոտ 70 զնդացի, 20 թնդանոթ և այլն:

Անդրկովկասյան կոմիսարիատը զենքի ուժով ճնշում էր բանվորների ու գյուղացիների հեղափոխական ելույթները, հետապնդում և հալածում էր հեղափոխական գործիչներին, արգելում բոլշևիկյան կազմակերպությունների գործունեությունը: Փետրվարի 8-ին նրա կարգադրությամբ փակվեցին «Կովկասյան ռաբոչի», «Բանվորի կոիվը», «Բրձուլա» բոլշևիկյան թերթերը: Նույն օրերին փակվեց նաև Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կոմիտեի օրգան «Պրալիզա ժիզնի» թերթը: Անդրկովկասի մի շարք շրջաններում հայտարարվեց ռազմական դրություն:

Կոմիսարիատն առանձնապես վտանգավոր էր համարում Ստ. Շահումյանի գործունեությունը: 1918 թ. հունվարի 26-ին նա հրաման արձակեց Շահումյանին ձերբակալելու մասին: Սակայն վախենալով այդ հրամանի կենսագործման հետևանքներից, Կոմիսարիատը փետրվարի 14-ին առաջարկեց, որ Շահումյանը 24 ժամվա ընթացքում թողնի Վրաստանի սահմանները: Շահումյանը հարկադրված անցավ ընդհատակ, իսկ փետրվարի 20-ին վերադարձավ Բաքու:

1918 թ. փետրվարի 10-ին Քիֆլիսում գումարվեց Անդրկովկասի սեյմը, որի մեջ մտան Սահմանադիր ժողովի Անդրկովկասից ընտրված

պատգամավորները: Սեյմի կազմում կային 32 մենշևիկ, 27 դաշնակցական, 30 մուսավաթական, ինչպես և էսէռների, սոցիալ-ֆեդերալիստների, վրացական նացիոնալ-դեմոկրատական կուսակցության, մենշևիկ-համամեթականների, հայ ժողովրդական կուսակցության և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ: Սեյմի նախագահ ընտրվեց մենշևիկ Ն. Չխեիձեն:

Սեյմի բացման օրը բոլշևիկների ղեկավարությամբ Թիֆլիսի Ալեքսանդրյան այգում բանվորների և զինվորների մեծ միտինգ տեղի ունեցավ: Սակայն Անդրկովկասյան կոմիսարիատի կարգադրությամբ միտինգի մասնակից անդեն բանվորները գնդակոծվեցին: Դա մեծ դաշույթ առաջ բերեց աշխատավորության մեջ:

ՌՄԴԲ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեն և նրա տեղական կազմակերպությունները վճռական բողոք հայտնեցին սեյմի հրավիրման դեմ: Այդ կապակցությամբ տեղի ունեցան աշխատավորների բազմաթիվ բողոքի միտինգներ ու ժողովներ: Անդրկովկասի բանվորների ու գյուղացիների պայքարը սեյմի հակաժողովրդական քաղաքականության դեմ գնալով ավելի սուր բնույթ էր ստանում:

Սովետական Ռուսաստանի կառավարության ղեկի տակ Արևմտյան Հայաստանի մասին

Սովետական Ռուսաստանի կառավարությունը մրտահոգված էր ոչ միայն Արևելյան, այլև Արևմտյան Հայաստանի հայերի ազատագրման հարցով: Հավատարիմ մնալով իր հռչակած ազգային քաղաքականությանը, Սովետական Ռուսաստանի կա-

ռավարությունը Վ. Ի. Լենինի նախագահությամբ 1917 թ. դեկտեմբերի 29-ին ընդունեց առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ռուսական զորքերի կողմից գրավված «Ռուսահայաստանի» մասին ղեկրետը, որը շուտով հաստատվեց սովետների համառուսաստանյան III համագումարի կողմից: «Ժողովրդական կոմիսարների խորհուրդը հայտարարում է հայ ժողովրդին, — ասված է այդ ղեկրետում, — որ Ռուսաստանի բանվորական և գյուղացիական կառավարությունը պաշտպանում է Ռուսաստանի կողմից օկուպացված «Ռուսահայաստանի» հայերի ազատ ինֆեռոնչման իրավունքը՝ ընդհուպ մինչև կատարյալ անկախություն»:

Ժողովրդական կոմիսարների խորհուրդը գտնում էր, որ այդ իրավունքի իրագործումը հնարավոր է միայն մի շարք նախնական երաշխիքների պայմանով, որոնք բացարձակորեն անհրաժեշտ էին հայ ժողովրդի ազատ հանրաքվեի համար: Ժողովրդական կոմիսարների խորհուրդը այդպիսի երաշխիքներ էր համարում.

1. «Թուրքահայաստանի» սահմաններից զորքերի դուրս բերումը և

անմիջապես հայկական ժողովրդական միլիցիայի վազմակերպումը՝ տեղական բնակիչների անձի և գույքի ապահովության համար:

2. Զանազան երկրներում ցրված գաղթական հայերի, ինչպես և հայ վտարանդիների անարգել վերադարձը «Թուրքահայաստան»:

3. Պատերազմի ընթացքում թուրքական իշխանությունների կողմից բռնություններ թուրքիայի խորքերն արտաքսված հայերի անարգել վերադարձը «Թուրքահայաստան», որի վրա ժողովրդական կոմիսարների խորհուրդը պետք է պնդի թուրքական իշխանությունների հետ հաշտության բանակցություններ վարելիս:

4. «Թուրքահայաստանի» ժամանակավոր ժողովրդական վարչության կազմումը, որպես հայ ժողովրդի՝ դեմոկրատական սկզբունքներով ընտրված ղեկավարության սովետ:

Կովկասի գործերի արտակարգ կոմիսար Ստեփան Շահումյանին հանձնարարվում էր՝ «Թուրքահայաստանի» բնակչությանը ցույց տալ ամեն տեսակի աջակցություն 2-րդ և 4-րդ կետերի իրականացման գործում, ինչպես նաև կազմակերպել խառն հանձնաժողով՝ որոշելու համար այն ժամանակամիջոցն ու եղանակը, որոնց համաձայն զորքերը պետք է դուրս հանվեին «Թուրքահայաստանի» սահմաններից: «Թուրքահայաստանի» աշխարհագրական սահմանները պետք է որոշեին հայ ժողովրդի կողմից դեմոկրատական հիմունքներով ընտրված ներկայացուցիչները, համաձայնության գալով հարակից և վիճելի (մահմեդական և ուրիշ) շրջանների ներկայացուցիչների հետ՝ Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսարի մասնակցությամբ:

Հայ ժողովուրդը մեծ զոհունակությամբ ընդունեց իր պատմական ճակատագրի համար մեծագույն նշանակություն ունեցող այդ ղեկրետը, որը Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո սովետական կառավարության առաջին ղեկրետներից էր: Դրանով մեկընդմիջտ պետք է փրկվեին թուրք ջարդարանների արյունոտ յաթաղանին և իմպերիալիստական պետությունների խարդախ ղեկավանգիտական դավերին զոհ դարձած արևմտահայության բեկորները: Իրագործվելու էր հայ ժողովրդի դավաբոր իղձը՝ ազատ տնօրինելու իր բախտը:

Իեռևս Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ սովետների համառուսաստանյան առաջին համագումարում ունեցած իր ելույթում Վ. Ի. Լենինը, մերկացնելով ժամանակավոր կառավարության անհրաժեշտ նիստական քաղաքականությունը, պահանջում էր Արևմտյան Հայաստանին տալ անկախություն: Եթե ժամանակավոր կառավարությունը, ասում էր Վ. Ի. Լենինը, «Հայաստանը դարձնեք անկախ հայկական

ճանրապետություն և այն դրամը, որ մեզնից վեցնում են Անգլիայի և Ֆրանսիայի ֆինանսիստները, տաք նբանց, ապա այդ լավ կլինե՞ք»¹:

Արևմտյան Հայաստանի վերաբերյալ սովետական կառավարության լենինյան դեկրետը հաստատուն բազա էր ստեղծում դեմոկրատական հիմունքներով մեկ միասնական հայկական պետության ըստեղծման համար: Սակայն մի շարք արտաքին և ներքին աննպաստ պատճառների հետևանքով այն չիրագործվեց: Գեկրետը չիրագործվեց գլխավորապես Սովետական Ռուսաստանի վրա իմպերիալիստների, առաջին հերթին կալվերական Գերմանիայի կատարած ազդակալչին հարձակման, Անդրկովկասում Հոկտեմբերյան հեղափոխության ուշացման, Անդրկովկասը Սովետական Ռուսաստանից անջատելու, Անդրկովկասի բուրժուազգայնական կուսակցությունների և նրանց գլխավորած կոմիսարիատի ու սեյմի վարած հակասովետական, հակահեղափոխական հանցագործ քաղաքականության պատճառով: Ստեղծված ծանր կացության հետևանքով Սովետական Ռուսաստանը ոչ միայն հնարավորություն չունեցավ իրագործելու այդ դեկրետը, այլև հարկազրկված եղավ Բրեստ-Լիտովսկում ընդունել գերմանական իմպերիալիզմի թելադրած ծանր պայմանները: Հայտնի է, որ այդ կողոպտիչ պայմանագրով Սովետական Ռուսաստանից անջատվեց մոտ մեկ միլիոն քառ. կմ տերիտորիա՝ 46 միլիոն բնակչությամբ:

Օգտվելով հանգամանքից, թուրքական զավթիչները 1918 թվականի հունվարի վերջերին ներխուժեցին Արևմտյան Հայաստան, դրանով իսկ հայ բնակչությանը զրկելով Ժողկոմիսորհի դեկրետով նախատեսված ազատ ինքնորոշման իր իրավունքն իրականացնելու հնարավորությունից: Այն ժամանակ Սովետական Ռուսաստանն ի վիճակի չէր կանխելու թուրքական ագրեսիան Արևմտյան Հայաստանում, մանավանդ որ 1917 թ. դեկտեմբերի կեսերից կովկասյան ռազմաճակատն սկսվել էր կազմալուծվել: Երկարատև պատերազմից հոգնած ու տանջված ռուս զինվորները մասսայաբար տուն էին վերադառնում, որովհետև նրանք ծարավի էին հաշտության և հողի, վերադառնում էին, որպեսզի պաշտպանեն հեղափոխության նվաճումները: Կովկասյան ռազմաճակատի ռուսական բանակի նահանջը, մյուս կողմից հետևանք էր Սովետական Ռուսաստանի նկատմամբ Անդրկովկասյան կոմիսարիատի բռնած թշնամական դիրքի, Անդրկովկասը Սովետական Ռուսաստանից անջատելու ռուս զինվորի համար խորթ քաղաքականության:

Մերկացնելով Անդրկովկասյան կոմիսարիատի և նրա գրուխ կանգնած բուրժուազգայնական կուսակցությունների վարած հակահեղա-

փոխական քաղաքականության էությունը, Ստ. Ծահումյանն իրավացիորեն նրանց հարց էր տալիս. «Կովկասում կանգնած է ռուս զինվորների կես միլիոնանոց բանակ, զինվորներ, որոնք երեք տարի արյուն են թափել, պաշտպանելով Կովկասի սահմանները: Ի՞նչ էր վարժում, կարո՞ղ է նա հանդիստ մնալ ռազմաճակատում, երբ դուք դավաճանում եք ռուսաստանյան հեղափոխությանը, երբ դուք Կալեդինին գերադասում եք Լենինից»:

Մեղքը իրենց վրայից պահելով, դաշնակցության պարագլուխները, շարունակաբար լցված դեպի Սովետական Ռուսաստանը, շարունակ այն գրպարտիչ հերցուրանքն էին տարածում, թե իբր Արևմտյան Հայաստանի կորուստը, հայկական հարցի տապալումը, հետևանք էր այն բանի, որ դեկրետի առաջին կետով նախատեսվում էր ռուսական զորքերի զուրս բերումը Արևմտյան Հայաստանի սահմաններից: Սակայն միթե՞ պարզ չէ, որ սովետական կառավարությունը այլ կերպ վարվել չէր կարող, քանի որ նա արևմտահայությանը ինքնորոշման իրավունք էր տվել, որից նա պետք է օգտվեր ազատորեն: Սակայն սովետական կառավարությունը գտնում էր, որ եթե հայերը կամենան, ապա այնտեղ կթողնվեն պահանջված քանակությամբ զորք: Վ. Ի. Լենինը, գրում է Վ. Տերյանը 1917 թ. դեկտեմբերին Լենինի հետ ունեցած զրույցի մասին, «չափ լավ վերաբերվեց ու պարզեց, որ երբ ինքն ասում է զորքերը հանել Հայաստանից, սրանով ուզում է ասել, թե երբ հայերը պահանջեն այդ, որպեսզի նրանց վրա ճնշում չլինի Ռուսիայի կողմից և նրանք ստիպված չլինեն ռուսական օրինետացիան ընդունելու: Իսկ հայերի սպասվողության համար, եթե նրանք այդ կամենան, նա բնավ դեմ չէ, որ մնան հարկավոր եղած զորամասերը»:

Չպետք է մոռանալ նաև այն, որ դեկրետով չէր նախատեսվում ռուսական զորքի անմիջական հեռացումը գրավված շրջաններից, ինչպես այդ անժամանակ իրականացնում էր կովկասյան ռազմաճակատի ռուսական հակահեղափոխական գլխավոր հրամանատարությունը գեներալ Պրո-ժեկալսկու ղեկավարությամբ: Ժողկոմիսորհի դեկրետում ասված էր, որ ռուսական զորքը Հայաստանից հանելու ժամկետի և եղանակի հարցը պետք է որոշվեր խառն հանձնաժողովի կողմից՝ Կովկասի գործերի կոմիսար Ստ. Ծահումյանի ղեկավարությամբ:

Սովետական իշխանության հաստատումը Բաք-
վում
Նոյեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության դրոշմը Անդրկովկասում առաջինը բարձրացրեց Բաքվի հերոսական պրոլետարիատը, որը դարձավ ընթացող էր Անդրկովկասի հեղափոխական շարժումների ավանգարդում: 1917 թ. նոյեմբերի 2-ին Բաքվի բոլշևիկներին հաջողվեց հաղթանակ տանել բուրժուազգայնական կուսակցությունների դեմ և

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 25, էջ 37 (ընդգծումը մերն է:—Շ. Լ.):
-408

Բաքվում հռչակել սովետական իշխանություն: Բաքուն դարձավ պրոլետարական հեղափոխության միջնաբերդն ամբողջ Անդրկովկասում:

1918 թ. ապրիլի սկզբին Բաքվի հերոսական պրոլետարիատը բռնազինված զինվարություններ ղեկավարություններ ջախջախեց մուսավթականների հակահեղափոխական զինված խռովությունը: Սովետական իշխանությունը հաղթանակեց նախ Բաքվում, ապա նահանգի մոտակա հինգ զավառներում, ինչպես և Դաղստանում: Խնդիր դրվեց՝ սովետական իշխանություն հաստատել ամբողջ Ադրբեջանում և Անդրկովկասում:

1918 թ. ապրիլի 25-ին ստեղծվեց Բաքվի ժողովրդական կոմիսարների խորհուրդը, որը հայտնի է Բաքվի կոմունա անունով: Ժողովուրդի կազմի մեջ մտնում էին Ստ. Շահումյանը, Պ. Զափարիձեն, Մ. Ազիզբեկովը, Վ. Ֆիդուսովը և ուրիշներ: Բաքվի ժողովուրդի նախագահ և արտաքին գործերի ժողովում հաստատվեց Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների փորձված ղեկավար Ստ. Շահումյանը:

Բաքվի ժողովրդական կոմիսարների խորհուրդն իր ստեղծման առաջին օրից ձեռնամուխ եղավ սոցիալիստական մի շարք վերափոխությունների իրականացմանը: Նա ազգայնացրեց նավթարդյունաբերությունը, կասպիական առևտրական նավատորմը, բանկերը, ղեկընտ հրատարակեց վարվածատիրական հողերը բռնագրավելու և դրանք աշխատավոր գյուղացիներին հանձնելու մասին, ձեռնարկություններում մտցրեց 8-ժամյա աշխատանքային օր, կատարեց դպրոցական ռեֆորմ և լուծեց կուլտուրական շինարարության այլ հարցեր: Մի շարք միջոցներ ձեռնարկվեցին պետական նոր ապարատ ստեղծելու ուղղությամբ: Վերակազմվեց միլիցիան, ստեղծվեցին ժողովրդական դատարաններ, ամրապնդվեցին կարմիր զվարդիան և կարմիր բանակը: Գործնական քայլեր կատարվեցին Բաքվի նահանգում գյուղացիական սովետներ ստեղծելու և այդ սովետների համագումար հրավիրելու ուղղությամբ:

Այդ միջոցառումները մեծ նշանակություն ունեցան Անդրկովկասում հեղափոխական նոր վերելք ստեղծելու գործում: Սակայն՝ բոլշևիկները չկարողացան ամբողջ Անդրկովկասում ժամանակին կազմակերպել զինված պայքար հանուն սովետական իշխանության: Դրա գլխավոր պատճառն այն էր, որ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո երկրամասում ստեղծվել էր շփազանց բարդ ու լարված ռազմաքաղաքական իրավիճակ: Անդրկովկասի բոլշևիկները հարկադրված էին պայքար մղել երկու ճակատում՝ թե ներքին և թե արտաքին հակահեղափոխական ուժերի դեմ: Բացի դրանից, նրանք այդ պայքարում թույլ տվեցին լուրջ սխալներ, որոնք գլխավորապես արտահայտվեցին Կովկասյան կեսմիլիոնանոց բանակի հեղափոխական մեծ ուժի անտեսման, մանրբորժուր

կան մասսաների շրջանում անբավարար աշխատանք տանելու, պրոլետարիատի հեղափոխական գործողությունների՝ ոչ բավարար միասնություն, հակառակ Ստ. Շահումյանի և նրա կողմնակիցների ճիշտ դիրքի, ԽԿ(Բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեի մեծամասնության՝ իշխանությունը սովետներին «խաղաղ» ճանապարհով անցնելու մասին սխալ տեսակետի մեջ և այլն:

Երկրամասի սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկությունները, օտարերկրյա իմպերիալիստների ինտերվենցիան, բուրժուա-ազգայնական կուսակցությունների բացահայտ դավաճանական, հակաժողովրդական քաղաքականությունը, երկրամասի տերիտորիալ կտրվածությունը Սովետական Ռուսաստանից, բոլշևիկյան կազմակերպությունների երկրային կոմիտեի ղեկավարության թույլ տված տակտիկական սխալները այն գլխավոր պատճառներն էին, որոնց հետևանքով սովետական իշխանության հաղթանակը Անդրկովկասում, այդ թվում և Հայաստանում ձգձգվեց, աշխատավորության պայքարը սովետական իշխանության համար այն ժամանակ չպսակվեց հաղթանակով:

Գերմանա-թուրքական զավթիչները Անդրկովկասում 1918 թ. հունվարի վերջերից սկսած թուրքական զորքերը վերստին գրավեցին Արևմտյան Հայաստանի տերիտորիան և, խախտելով Անդրկովկասյան կոմիսարիատի հետ 1917 թ. դեկտեմբերի 5(18)-ին երզնկայում կնքված զինադադարը, շարժվեցին դեպի Անդրկովկաս: Այդ նույն ժամանակ գերմանական բանակը, գրավելով Ուկրաինան, նույնպես շարժվեց դեպի Անդրկովկաս:

Անդրկովկասյան կոմիսարիատն ու սեյմը, հակառակ Կովկասի գործերի արտակարգ կոմիսար Ստ. Շահումյանի ջանքերի, ձախողեցին Անդրկովկասի պաշտպանության գործը: Նրանք ոչ միայն միջոցներ ձեռք չառան գերմանա-թուրքական զավթիչների առաջխաղացումը կասեցնելու համար, այլև երկրում ծավալվող հեղափոխական շարժումները ճնշելու նպատակով գործարքի մեջ մտան օկուպանտների հետ: Անդրկովկասի հակահեղափոխական ուժերը, ի վնաս երկրամասի շահերի, հրաժարվեցին ճանաչել Բրեստի պայմանագիրը:

Ինչպես հայտնի է, այդ պայմանագրի շորթորդ հողվածի համաձայն ռուսական զորքերը պետք է դուրս գային Արդահանի, Կարսի և Բաթումի շրջաններից: Ճիշտ է, Բրեստի պայմանագիրը չափազանց ծանր էր մեր հայրենիքի բոլոր ժողովուրդների, այդ թվում և Անդրկովկասի ժողովուրդների համար, սակայն իրադրությունը պահանջում էր համաձայնել այդ ծանր պայմաններին: Բրեստի հաշտության կնքումով, որի անհրաժեշտությունը իրեն հատուկ խորաթափանցություններ հիմնավորում էր

Վ. Ի. Լենինը, ձեռք բերվեց դադար, որը հնարավորություն տվեց ժամանակ շահելու և ամրապնդելու սովետական իշխանությունը:

Ի դեպ, Բրեստի պայմանագիրը չէր նախատեսում, որ թուրքերը անվերապահորեն կարող են գրավել Կարսը, Արդահանը և Բաթումը: Որոշված էր այդ մարզերում նախապես անցկացնել համաժողովրդական քվեարկություն (հանրաքվե) իմանալու համար տեղական բնակչության ցանկությունը: Սակայն, ինչպես նշված է թուրքական կառավարությանն ուղղված Սովետական Ռուսաստանի 1918 թվականի սեպտեմբերի 20-ի նոտայում, այդ մարզերում, ուր թուրքերը հաստատել էին դաժան օկուպացիոն ուժեր, տեղական բնակչությունը հնարավորություն չունեցավ օգտվելու իրեն տրված իրավունքից՝ ազատորեն արտահայտելու իր կամքը հանրաքվեի ժամանակ: Հենց այդ նոտայով էլ Սովետական Ռուսաստանի կառավարությունը շեղյալ հայտարարեց Բրեստի պայմանագրի այն մասը, որը վերաբերում էր Կարսին, Արդահանին և Բաթումին:

Հրաժարվելով Բրեստի պայմանագիրը ճանաչելուց, Անդրկովկասի հակահեղափոխական իշխանությունները հայտարարեցին, որ իրենք անջատ բանակցություններ կսկսեն թուրքիայի հետ «պատվավոր» հաշտություն կնքելու համար: Մարտի 1 (14)-ին Տրապիզոնում թուրքիայի և Անդրկովկասյան սեյմի պատվիրակությունների միջև սկսվեցին հաշտության բանակցությունները: Տրապիզոնի կոնֆերանսում սեյմի պատվիրակության նախագահն էր Ա. Չխենկելին: Հայերից մասնակցում էին սեյմի անդամներ Հ. Քաջազնունին և Ալ. Խատիսյանը: Պատմաբան Լեոն մասնակցում էր որպես պատվիրակության խորհրդական: Սակայն բանակցություններն ավարտվեցին անհաջողությամբ: Ապրիլի 1 (14)-ին սեյմի պատվիրակությունը վերադարձավ Թիֆլիս: Թուրքիան մերժեց սեյմի այն պահանջը, որով Անդրկովկասի և Թուրքիայի միջև պետք է վերականգնվեին նախապատերազմյան սահմանները և Արևմտյան Հայաստանը ինքնավարություն ստանար: Բացի այդ, Թուրքիան պահանջում էր, որ նախ և առաջ Անդրկովկասը դառնա անկախ պետություն և ճանաչի Բրեստի պայմանագիրը: Տրապիզոնի կոնֆերանսում թուրքական պատվիրակությունը խիստ բացասական դիրք գրավեց հատկապես հայ ժողովրդի նկատմամբ: Պատվիրակության նախագահ Ռաուֆ-բեյը ցինիկորեն հայտարարեց, թե «... ուր հասնի թուրք զինվորը, այնտեղ այլևս հայ չի կարող գոյություն ունենալ»:

Թուրքական բանակը, որ փետրվարին գրավել էր Երզնկան, Բայբուրդը, Մամախաթունը, մարտին գրավեց Արդահանը, Էրզրումը, ապրիլին՝ Սարիղամիշը, Բաթումը և Կարսը: Վերջինս գրավվեց գրեթե առանց

կռվի, Անդրկովկասյան կառավարության գլուխ կանգնած մենշևիկ-պարագուլաների դավաճանություն հետևանքով: Հայ ժողովրդի վրա նորից կախվեց ֆիզիկական բնաջնջման ահավոր վտանգը: Թուրք նվաճողները գրաված շրջաններում կատարում էին հրեշավոր ոճրագործություններ, անասելի բռնություններ ու մասսայական կողոպուտ: Միայն հիշյալ շրջաններում թուրք ջարդարարները սրի քաշեցին մոտ 7000 մարդ, ավելի քան 8000 հոգի քշվեցին դեպի էրզրում, ուր նրանց զգալի մասը ոչնչացավ տաժանակիր աշխատանքի, ցրտի և սովի հետևանքով: Թուրքական զորքերի կազմում, հատկապես շտաբներում և հրամանատարության մեջ, կային գերմանական շատ սպաներ:

Թուրքական զավթիչների կատարած այդ գազանությունների դեմ բողոքով հանդես եկավ Սովետական Ռուսաստանը: 1918 թ. ապրիլի 13-ին Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի ժողովում Գեորգի Չիչերինը և ժողովի տեղակալ Լեոն Կարախանը հեռագրեցին Թիֆլիսի գերմանական հյուպատոսին, վճռաբար պահանջելով, որ Գերմանիան ազդի իր դաշնակից Թուրքիայի վրա՝ խողող բնակչության մասսայական կոտորածին վերջ տալու համար: Հայ ժողովուրդը, որ իր կամքին հակառակ ներքաշվել է համաշխարհային պատերազմի մեջ, ասված է սովետական կառավարության վերահիշյալ նոտայում, այլևս չպետք է ենթարկվի նոր աղետների, չպետք է զոհ դառնա թուրքական զորքերի վրեժխնդրության:

Անդրկովկասյան սեյմը գերմանա-թուրքական զավթիչների թելադրանքով ապրիլի 9 (22)-ին Անդրկովկասը պաշտոնապես անջատեց Սովետական Ռուսաստանից և հայտարարեց «անկախ» ֆեդերատիվ հանրապետություն: Դրանով հակահեղափոխական ուժերը նպատակ ունեին օտարերկրյա զավթիչների օգնությամբ ճնշելու հեղափոխական շարժումներն Անդրկովկասում, տապալելու սովետական իշխանությունը Բաքվում:

Անդրկովկասյան հանրապետության նոր կառավարության գլուխ կանգնեց մենշևիկ Ա. Չխենկելին: Այս անգամ ևս կառավարության ղեկավարությունը գտնվում էր մենշևիկների ձեռքին: Հայերից ֆինանսների մինիստր նշանակվեց Ա. Խատիսյանը, խնամատարության մինիստրը՝ Հ. Քաջազնունին, պարենավորման մինիստր՝ Ա. Սահակյանը:

Ինչ դիրք բռնեցին սեյմի դաշնակցական անդամները Անդրկովկասը Սովետական Ռուսաստանից անջատելու և այն անկախ հանրապետություն հռչակելու խնդրում: Այս հարցին պատասխան է տվել դաշնակցության ոչ անհայտ պարագուլաներից մեկը՝ Հ. Քաջազնունին: «Սեյմի դաշնակցական ֆրակցիայի կողմից հայտարարում եմ, — ասել է նա, — ու զգալով ամբողջ պատասխանատվությունը մեր արած քայլ

լի, միանում եմ Անդրկովկասը անկախ հանրապետություն հռչակելու առաջարկին»։ Դաշնակցական մի ուրիշ պարագլուխ, Ա. Խատիսյանը, ավելի առաջ անցավ այդ հարցում, հայտարարելով, թե «բանի որ Կովկասը անջատվել է Ռուսաստանից, հնարավոր է, որ հայերը կընտրեն իրենց համար թուրքական օրինատացիա»։ Այսպիսով, ոչ ավել, ոչ պակաս, դաշնակցության հիշյալ գործիչները կանգնած էին մենշևիկյան պարագլուխ Չխեիձեի այն դիրքում, թե «...լավ է թուրքիայի գիրկն անցնել, քան բոլշևիկներին հարել...»։

Այսպիսով, դաշնակցության պարագլուխները, հակառակ հայ ժողովրդի կենսական շահերի, մուսավաթականների և մենշևիկների հետ միասին ընտրեցին թուրքական օրինատացիա։ «Դաշնակցությունը փոխանակ Ռուսաստանի հետ դաշն կապելու,— գրել է Վ. Տերյանը,— դաշն կապեց հակահեղափոխական և արյունարբու բեկերի ու դավաճան մենշևիկների հետ»։

Անդրկովկասյան սեյմի դավաճանական այդ քայլը մեծ զայրույթ առաջացրեց երկրամասի ամբողջ աշխատավորության մեջ։

Բացահայտելով սեյմի քաղաքականության իսկական էությունը, ԽՍԻԲ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեն Անդրկովկասի աշխատավորությանն ուղղված թուրքիկում ցույց էր տալիս, որ Անդրկովկասի «անկախության» հռչակումը լիովին բխում է մուսուլման բեկերի, հայ կապիտալիստների և վրաց ազնվականների շահերից, որ այն հեշտացնում է Անդրկովկասի զավթումը թուրքական բռնակալների կողմից։

Եվ իրոք, Անդրկովկասի հակահեղափոխական ուժերը, թշնամական դիրք բռնելով Սովետական Ռուսաստանի նկատմամբ, անջատելով Անդրկովկասը Ռուսաստանից, ոչ միայն անկարող գտնվեցին կասեցնել թուրքական արշավանքը, այլև, բացելով երկրամասի դռները թուրք-գերմանական կոալիցիայի առջև, նպաստեցին նաև Բաքվի գրավմանը։

Վ. Ի. Լենինը 1918 թ. մայիսի 14-ին համառուսաստանյան Կենտրոնական կոմիտեի և Սոսկվայի սովետի միացյալ նիստում տված զեկուցման մեջ մերկացրեց սեյմի այդ դավաճանական քաղաքականությունը։ «Գեգեղիկոսի կառավարությունը,— ասել է Վ. Ի. Լենինը,— որն սկզբում հայտարարեց, թե Բրեստի հաշտությունը չի ճանաչում, իսկ հետո հայտարարում է անկախությունը։ Դրանից օգտվում է գերմանական իմպերիալիզմը։ Ուստի Գերմանիային և Թուրքիային, որպես աջակից պետություն, հնարավոր էր առաջ շարժվել ու առաջ շարժվել, ոչ մի բանի չպատասխանելով, ոչ մի բանի ուշադրություն չդարձնելով, հայտարարելով՝ մենք կվերցնենք այն, ինչ կկարողանանք վերցնել, մենք չենք խախտում Բրեստի հաշտությունը, որովհետև անդրկովկասյան բանակը այն չի ճանաչում, որովհետև Կովկասն անկախ է»¹։ Բացահայտելով

Անդրկովկասի «անկախության» իսկական էությունը, Վ. Ի. Լենինը դիպուկ կերպով ասել է. «Ումից է անկախ Գեգեղիկոսի կառավարությունը։ Սովետական հանրապետությունից նա անկախ է, բայց գերմանական իմպերիալիզմից նա մի քիչ կախյալ է, և դա բնական է»¹։ Մի այլ տեղ Վ. Ի. Լենինն ասում է. «Կովկասյան մենշևիկները դաշինք են կնքել թուրքական իմպերիալիզմի հետ»²։

Չճանաչելով Բրեստի պայմանագիրը և պաշտոնապես անջատելով Սովետական Ռուսաստանից, Անդրկովկասի հակահեղափոխական կառավարությունը ծանր դրության մեջ դրեց երկրամասը։ Օգտվելով հանգամանքից, գերմանա-թուրքական նվաճողները մայիսին վերսկսեցին իրենց հարձակումը Անդրկովկասի վրա։ Թուրքական բանակը մայիսի 15-ին գրավեց Ալեքսանդրապոլը։ Հայկական զորքերը, անկարող լինելով դիմադրել թուրքական գերակշռող ուժերին, հարկադրված եղան նահանջել դեպի Ղարաբաղի սահման, իսկ հետո՝ Դիլիջան։

Հայ ժողովրդի համար ստեղծվեց շտեմնված ծանր դրություն։ Մի քանի ամսում նա կորցրել էր Երզնկան, Էրզրումը, Կարսը, Ալեքսանդրապոլը։ Դարավոր թշնամին ձգտում էր գրավել նաև երկրի սիրտը՝ Վրաստանյան դաշտը։ Հայաստանի բնակչության կեսից ավելին տեղահանվեց, բռնեց գաղթի ճանապարհը։ «Տաճկական զինվորական իմպերիալիզմը ձգտում էր ամբողջապես կլանել Հայաստանը հայ արյան ծովի վրա» — 1919 թվականին գրել է ականավոր բոլշևիկ Սարգիս Կասյանը իր «Ո՛ր է կըրը» գրքուկում։

Հայ ժողովրդի բախտը տնօրինելու հավանություն ունեցող դաշնակցականները ոչ միայն անկարող գտնվեցին կազմակերպելու երկրի պաշտպանության գործը, այլև իրենց բռնած դիրքով ու դավաճանական քաղաքականությամբ նպաստեցին թուրքական ագրեսիայի հաջողությանը։ 1918 թ. մայիսի 29-ին Բաքվի սովետի միացյալ նիստում, պատասխանելով սովետի դաշնակցական պատգամավոր Զառաֆյանին, Ստ. Շահումյանն իրավացիորեն ասել է. «Նրանք ասում են, որ հարկադրված էին կապիտուլյացիա անել թուրքերի առաջ, իսկ ես ասել եմ ու կրկնում եմ, որ օբյեկտիվ պայմաններն այնպես էին դասավորվել, որ Անդրկովկասում կար հակադասական զինված ուժ, որը պատրաստ էր դուրս գալու թույլ Թուրքիայի դեմ։ Միմիայն հայկական ուժերը բավական էին թուրքերի հետ հաշիվ տեսնելու, սակայն դուք մենշևիկների և մուսավաթականների հետ կազմալուծեցիք զորքերի շարքերը, ոչ թե այն զորքերի, որոնք երեք տարվա պատերազմից հետո հաշտության էին ծարավի, այլ այն հայկական զորքերի, որոնք պատրաստ էին մեռնել և

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 462։

² Նույն տեղը, էջ 562։

պահել ընդ նոց երկիրը: 'Ի ուր այլասերեցիք այդ գործերը, — ահա թե ո՛րն է ձեր մեղքը, ահա թե ո՛րն է ձեր ոճրագործութիւնը»:

Հայ ժողովրդի պայքարը թուրքական զավթիչների դեմ

Հակառակ Անդրկովկասի հատկահարկոսական ուժերի կարիտուլյանտական քաղաքականութեան, աշխատավոր մասսաները ամենուրեք հերոսական դիմադրութիւն էին ցույց տալիս գերմանա-թուրքական զավթիչներին:

ՌՍԻԲ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեն 1918 թ. մարտին Անդրկովկասի բանվորներին, գյուղացիներին և զինվորներին կոչ արեց ստեղծելու սոցիալիստական կարմիր ջոկատներ՝ Հոկտեմբերյան հեղափոխութեան դեմ զինք բարձրացրած բուսպետական թուրքիայի հարձակումները ետ մղելու համար: Այս ուղղութեամբ առանձնապես լայն աշխատանք ծավալեց ՌՍԻԲ(բ)Կ Ալեքսանդրապոլի կոմիտեն: Դեռևս 1917 թվականի դեկտեմբերի 27-ին նա հատուկ դիմումով կոչ արեց զինվորներին, բանվորներին և բոլոր քաղաքացիներին՝ «բոլորս ղեպի բանվորների կարմիր զվարդիա, բոլորս ղեպի մերկացած ռազմաճակատ»: Ալեքսանդրապոլի կոմիտեի մի այլ կոչում գրված է. «Թուրքիան ուզում է ոչնչացնել արյունով ձեռք բերված ազատութիւնը: Հեղափոխական պարտքի և պատվի կատարյալ գիտակցութեամբ բոլորս դիմենք ճակատ»: Ալեքսանդրապոլի կոմիտեի կոչերը լայն արձագանք գտան աշխատավորութեան մեջ: Եռստով ստեղծվեց մոտ 500 հոգուց բաղկացած Կարմիր զվարդիա: Կարմիր զվարդիական ջոկատներ կազմակերպվեցին նաև Հայաստանի այլ վայրերում:

Չնայած իր համար ստեղծված ծանր դրութեանը, Սովետական Ռուսաստանը ակտիվ օժանդակութիւն էր կազմակերպում Անդրկովկասի ժողովուրդներին թուրքական զավթիչների դեմ նրանց մղած պայքարում: Այդ ուղղութեամբ եռանդուն նախաձեռնութիւն էր հանդես բերում Հայկական գործերի կոմիտարիատը, Ռուսաստանի, Ուկրաինայի, Հյուսիսային Կովկասի հայաբնակ վայրերում ստեղծվեցին կամավորական ջոկատներ, որոնք հանդերձավորվում, սպառազինվում էին տեղի կոմունիստական կազմակերպութեանների կողմից և ուղարկվում Անդրկովկաս: Ուշագրավ է, որ հայկական կամավորական ու պարտիզանական ջոկատներում կային նաև ռուսներ և այլ ազգերի ներկայացուցիչներ:

Թուրքական զավթիչների դեմ պայքարը սուր բնույթ ստացավ հատկապես Սարգարապատի հերոսամարտում:

Նպատակ ունենալով գրավել Երևանը, սպառնալիքի տակ պահել Թիֆլիսը և հարձակվել սովետական Բաքվի վրա, թուրքերը, Ալեքսանդրապոլը գրավելուց հետո, առաջ շարժվեցին երեք ուղղութեամբ՝ Ալեք-

416 15

սանդրապոլ—Երևան, Ալեքսանդրապոլ—Ղարաքիլիսա—Թիֆլիս և Ղարաքիլիսա—Գիլիջան—Ղազախ—Գանձակ—Բաքու: Դրութեանը կրիտիկական էր: Գլխավոր հրամանատարութեան ապիկարութեան պատճառով հայկական զորամասերի մեծ մասում հուսալքութիւն էր առաջ եկել: Վտանգավոր դիրք էին բռնել դաշնակցական պարագլուխները: Բաթումի հայ պատվիրակները հեռագրում էին Թիֆլիս՝ Հայոց ազգային խորհրդին. այլևս ռազմական դիմադրութիւն ցույց չտալ թուրքերին: Սայիսի 18-ին Երևանի քաղաքային դուման որոշում ընդունեց չդիմադրել ղեպի Երևան շարժվող թուրքերին և հանձնվել նրանց ողորմածութեանը: Հայկական զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Թովմաս Նազարբեկյանը Գիլիջանից, որտեղ գտնվում էր նրա շտաբը, հեռագրեց Թիֆլիս՝ Հայոց ազգային կենտրոնական խորհրդին, հայտնելով, որ ճակատում համարյա զորք չի մնացել, որ պետք է հաշտութիւն կնքել թուրքերի հետ: Սայիսի 19-ին Երևանի զորամասերի հրամանատար գեներալ Սիլիկյանը (Սիլիկովը) Սուրմալուի ռազմաճակատի հրամանատար Գանիել-Բեկ Փիրումյանին հրամայեց նահանջել, դատարկել Սուրմալուն և բարձրանալ Կոտայքի ու Սևանի բարձրավանդակը:

Ալեքսանդրապոլից Երևան շարժվող Շեքի փաշայի 9 հազարանոց բանակը, մտնելով Արարատյան դաշտ, մայիսի 21-ին առանց կովի զբրավեց Սարգարապատ կայարանն ու գյուղը և փորձեց առաջ շարժվել ղեպի Երևան: Սակայն այդ վճռական պահին վերջ տրվեց ընդհանուր հուսահատութեանը: Ժողովրդի ինքնապաշտպանական բնազդը հասավ իր գագաթնակետին. զորքը մոտ 4000 մարդ հերոսական, անձնուրաց կովի ելավ իր հայրենի հողի վերջին մնացորդները թշնամուց պաշտպանելու համար: Սարգարա—Սարգարապատ գծի վրա հավաքվեց մոտակա շրջանների հայ բնակչութիւնը, մասնավորապես հայ գաղթականութիւնը (իվով 100 հազար), և զինված ջոկատներով անհավասար մարտի մեջ մտավ ոսոխի դեմ: Մայիսի 22-ին քաջակորով զնդապետ Գանիել-Բեկ Փիրումյանի հրամանատարութեամբ սկսվեց Սարգարապատի ճակատամարտը, որը շարունակվելով մինչև մայիսի 26-ը, ավարտվեց հայ զորքի և նրանց միացած աշխարհազորայինների հաղթանակով: Շեքի փաշայի բանակը հարկադրված եղավ նահանջել ղեպի Ալեքսանդրապոլ, ռազմապաշտում թողնելով ավելի քան 3500 դիակ:

Այսպիսով, հայ ժողովրդի խիզախ դիմադրութեան շնորհիվ թուրքական զավթիչներին չհաջողվեց գրավել Երևանը՝ երկրի կենտրոնը: Սարգարապատի ճակատամարտը հայ ժողովրդի մահու և կենաց կռիվն էր թուրքական զավթիչների դեմ: Այդ գոյամարտը, որն ընդունեց ժողովրդազատագրական բնույթ, բախտորոշ նշանակութիւն ունեցավ հայ ժողովրդի համար, և պատահական չէր, որ այդ ճակատամարտին մաս-

նակցում էին հայ հասարակության բոլոր խավերը: Սարդարապատի հերոսամարտին ակտիվ մասնակցություն ունեցան կանաչը և աղջիկները, երեխաներն ու ծերերը: Դա իսկական ժողովրդական պատերազմ էր:

Հայ ժողովրդի այդ դուրսգնամարտը արժեքավորվում է նաև նրանով, որ այն օբյեկտիվորեն նպաստեց Բաքվի կոմունայի վրա սուր բարձրացրած գերմանա-թուրքական իմպերիալիզմի դեմ մղվող պայքարին, մի պայքար, որին մասնակցում էին հայ ժողովրդի հազարավոր գաղվականեր:

Սարդարապատի ճակատամարտում իրենց խիզախությամբ և ռազմական հմտությամբ գնդապետներ Պավել Փիրումյանի, որը «մահապարտներ» քաջարի գնդի հրամանատարն էր, Դուլուխանյանի, Կարաքեշիշյանի, կապիտաններ Խորեն Իգիթխանյանի, Սերգո Աթանասյանի և ուրիշների հետ աչքի ընկան նաև գնդապետներ Պերեկրյոստովի ու Սիլինի, փոխգնդապետ Կորոլկովի զորամասերը, կապիտան Կլիչի ու Սակելյարիի հրետանավորները և ուրիշներ: Անձնուրացությամբ էին կռվում հայկական աշխարհազորային ջոկատները Պանդուխտի, Թուրքիկ Հովսեփի և շատ ուրիշների գլխավորությամբ: Մարտերին ակտիվորեն մասնակցում էին հեծյալ ջոկատի հրամանատար, այժմ Սովետական Միության փառաբանված մարշալ Հովհաննես Բաղրամյանը, հետագայում ականավոր գրող Ակսել Բակունցը, լեզվաբան Գրիգոր Ղափանցյանը, գեներալ Արտակ Վարդանյանը և ուրիշներ: Պակաս դեր չէին խաղում նաև մի քանի հոգևորականներ, որոնց մեջ աչքի ընկավ Գևորգյան ճեմարանի երկարամյա տեսուչ Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը:

Սայիսի 22-ից սկսած ուժեղ մարտեր տեղի ունեցան նաև հայ ժողովրդի ինքնապաշտպանության մի այլ կենտրոնում՝ Բաղ-Ապարանի նակատում, ուր թուրքերի դեմ կռվի էին դուրս եկել ավելի քան 6000 մարդ: Առանձնապես աչքի ընկան աշխարհազորայիները, որոնց հետ միասին կռվում էին նաև մոտ 1500 եզդիներ: Այստեղ ևս թուրքերը ջախջախվեցին ու ետ շարվեցին:

Սայիսի 24—28-ին տեղի ունեցավ Ղարաֆիլիսայի հերոսամարտը: Այստեղ հայկական զորամասերն ու նրանց օգնության եկած Փամբակի, Դիլիջանի, Կաղախի և այլ շրջանների գյուղացիությունը (մոտ 10 հազար մարդ) համառ մարտեր մղեցին և 3 օր խափանեցին թվով գերակշռող թուրքական բանակի առաջխաղացումը, մեծ վրորուստներ պատճառելով նրան: Ղարաֆիլիսայի ճակատամարտում հայերի ցույց տված հերոսական դիմադրության մասին Բաթումի կոնֆերանսում ստիպված եղավ խոստովանել նույնիսկ թուրքական բանակի գլխավոր հրամանատար Վեհիբ փաշան: Սակայն թուրքական զավթիչներին հաջողվեց

մեծ կորուստների գնով կոտրել հայերի դիմադրությունը և առաջ շարժվել մինչև Շուշավեր (այժմ՝ Շահումյան):

Թուրքական բանակը հոնիսի սկզբին պատրաստվում էր հարձակվել Թիֆլիսի վրա: Սակայն լուր է ստացվում, որ վրացական մենշկիկները Բաթումում համաձայնություն են կնքել Վրաստանը գերմանական հովանավորության տակ դնելու մասին: Իրանով կանխվում է Թիֆլիսի գրավումը թուրքական բանակի կողմից:

Բաթումի պայմանագիրը

Թուրքիայի և Անդրկովկասյան սեյմի պատվիրակությունների միջև մայիսի 11-ին Բաթումում վերսկսվել էին Տրասիդոնում բողոքականության հետևանքով սկսված բանակցությունները, իսկ Անդրկովկասյան սեյմը լիկվիդացվելուց հետո նույն տեղում մայիսի 30-ին բանակցություններ սկսվեցին Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ազգային խորհուրդների և թուրքական պատվիրակությունների միջև առանձին-առանձին: Հայկական պատվիրակության նախագահն էր Ա. Խատիսյանը, անդամներ՝ Հ. Քաջազնունին և Մ. Պապաջանյանը:

Բաթումի բանակցությունների ժամանակ Թուրքիան ոչ մի գիշում չարեց նաև Անդրկովկասի «անկախ» հանրապետությանը: Դեռ ավելին, նա Անդրկովկասի պատվիրակության առաջ ավելի ծանր պայմաններ դրեց, քան նախատեսված էին Բրեստ-Լիտովսկի պայմանագրով: Թուրքերը ոչ միայն ավելացրել էին իրենց տերիտորիալ պահանջները, այլև, նպատակ ունենալով շարժվել հատկապես սովետական Բաքվի վրա, պահանջում էին Անդրկովկասի երկաթուղիներով ազատ երթևեկելու իրավունք: Կրկնով մի շարք ռազմական պարտություններ, անդրկովկասյան կառավարությունը անզոր գտնվեց մերժելու Թուրքիայի պահանջները:

Բաթումի բանակցություններին մասնակցում էր Գերմանիայի ներկայացուցիչ գեներալ Ֆոն Լոսովը, որը իր հերթին, ձգտում էր ապահովել գերմանական իմպերիալիզմի շահերն Անդրկովկասում: Ստեղծված դրությունից ելք գտնելու նպատակով սեյմի պատվիրակները, ըստ առանձին ազգությունների, գաղտնի բանակցություններ էին վարում Լոսովի հետ և խնդրում Գերմանիայի հովանավորությունը: Նման փորձ արեցին նաև դաշնակցական պատվիրակները, սակայն Գերմանիան, չուզենալով իր հարաբերությունները վատացնել դաշնակից Թուրքիայի հետ, մերժեց հայերի առաջարկը:

Սովետական Խուսաստանի կառավարությունը, վճռաբար հանդես գալով գերմանա-թուրքական զավթիչների և Անդրկովկասի բուրժուազգայնական կուսակցությունների ռազմաքաղաքական գործարքի դեմ, պահանջում էր իր ներկայացուցչին և մասնակից դարձնել

Բաթումի կոնֆերանսին, «...հակառակ դեպքում,— ասված էր Գ. Չիչե-
րինի հայտարարության մեջ,— ՌՍՖՍՀ կառավարությունը չի ձանաչի
առանց իր մասնակցության կնքված այդ պայմանագիրը»:

Հայոց ազգային խորհրդի պատվիրակությունը, հաշվի չառնելով
թուրքական զավթիչների դեմ հայ ժողովրդի մղած հերոսամարտերը,
1918 թ. հունիսի 4-ին, խախտելով Բրեստի պայմանագիրը, Թուրքիայի
հետ կնքեց Հայաստանի համար ծանր մի պայմանագիր, որն անվան-
վեց նույնիսկ «խաղաղության և բարեկամության դաշինք»: Նույն օրը
Թուրքիան պայմանագիր կնքեց նաև Վրաստանի ու Ադրբեջանի պատ-
վիրակությունների հետ:

Բաթումի պայմանագրով Թուրքիան զավթեց ոչ միայն Բաթումը,
Արդվինը, Կարսը, Արդահանը, Օրթին, Կաղզվանը, Ախալքալաղը, Ախալ-
ցխան, այլև ամբողջ Սուրմալուի գավառը, Ալեքսանդրապոլի և էջմիա-
ծյունի գավառների 3/4 մասը, Երևանի գավառի կեսը և Շարուր-Ռաթայա-
գյաղի գավառի 1/5-րդ մասը: Թուրքիային էր մնում նաև Ալեքսանդրա-
պոլը, ամբողջ երկաթուղին՝ մինչև Զուլֆա: Այսպիսով, Հայաստանի
տերիտորիան խիստ կրճատվում էր, մնում էր ընդամենը մոտ 10 հազար
քառ. կմ՝ 321 հազար բնակչությամբ: Բաթումի պայմանագրով Հայաս-
տանից և Վրաստանից Թուրքիային էր անցնում 12,421 քառ. վերստ տա-
րածություն և 655 հազար բնակչություն, այսինքն՝ ավելին, քան նախ-
տեսվում էր Բրեստ-Լիտովսկի պայմանագրով: Բնորոշ է, որ Հայկական
հանրապետությունում ապրող հայերը կազմում էին ամբողջ Կովկասի
հայ ազգաբնակչության միայն 1/8 մասը: «Տասը հազար քառակուսի
վերստ էր այդ Հայաստանը,— գրել է նշանավոր պատմաբան
Լեոն Բաթումի պայմանագրի կողոպտիչ բնույթի մասին:— Մեծ մա-
սամբ լեռ ու անապատ՝ Սևանա լճի շուրջ կողմը հայ ժողովրդի ոչ թե
բնակության տեղ, այլ գերեզման: Պետական սահմանը անցնում էր
Երևանի տակով, հայերի ձեռքին մնում էր միայն վեց վերստ երկարու-
թյամբ երկաթուղի»:

Բաթումի պայմանագիրն ուներ բացահայտ հակասովետական բը-
նույթ: Այն առաջին հերթին ուղղված էր Անդրկովկասում սովետական
իշխանության միջնաբերդի՝ Բաքվի կոմունայի դեմ: Պայմանագրի
համաձայն, դաշնակցականները համաձայնվել էին, որ Թուրքիային
իրավունք վերապահվի անարգել և անսահմանափակ ռազմական փո-
խադրումներ կատարել Հայաստանի տերիտորիայով, այդ թվում անցնել
Ադրբեջան՝ Բաքվի կոմունայի վրա հարձակվելու համար: Դաշնակցա-
կանները պարտավորվում են Բաքվից դուրս բերել հայկական ազգային
զորամասերը և զործնական աջակցություն ցույց տալ սովետական իշ-
խանությունը Բաքվում տապալելու գործին: Բաթումի պայմանագրի

համաձայն, Հայաստանը պետք է զորացրեր իր բանակը, իրավունք
չունենար ոչ մի հարաբերություն ունենալու Թուրքիայի թշնամի պե-
տությունների հետ և այլն:

Դաշնակցականները շտապեցին պայմանագրում հատուկ հողված
մտցնել նաև այն մասին, որ Թուրքիան պարտավորություն վերցնի
ռազմական օգնություն ցույց տալու իրենց՝ երկրի ներսում բանվորա-
գյուղացիական հեղափոխական շարժումները ճնշելու համար: Հաջորդ
հողվածով դաշնակցական կառավարությունն իր հերթին պարտավորվում
է ճնշել Հայաստանի տերիտորիայի սահմաններում այն ռազմական ուժե-
րը, որոնք զենքը ձեռքին պայքարում են թուրքական զավթիչների դեմ:
Խոսքը, իհարկե, առաջին հերթին վերաբերվում էր Անդրանիկի գլխավորած
հայկական հարվածող բրիգադին, որը պայմանագրում անվանված է
բանդա:

Բաթումի պայմանագրի կնքման լուրը խոր դաշրույթ առաջ բերեց
թե ռազմաճակատում և թե թիկունքում: Ամենուրեք տեղի ունեցան բու-
րբի ցույցեր, որոնց մասնակիցները պահանջում էին շճանաչել այդ
պայմանագիրը և շարունակել պայքարը թուրքական զավթիչների դեմ:
Խոստացույնս դատապարտելով Բաթումի ստրկացուցիչ պայմանագրի
կնքման գործում դաշնակցականների վարքագիծը, գեներալ Անդրանիկը
զայրագին ասել է. «Վեց հարյուր տարվան ստրկության շղթան դարձյալ
ձեր վիզն ու ոտքը կանցնեք ձեր ձեռքով: Չեմ կրնար այս պայմաններում
հանդուրժել, մոռանալով մեր երեսուն տարվա զոհերը և մեկ միլիոն նա-
հատակները»:

Այսպիսով, Թուրքիայի, Անդրկովկասի հակահեղափոխական իշ-
խանությունների և բուրժուազգայնական կուսակցությունների քա-
ղաքականության հետևանքով անասելի ծանր վիճակ ստեղծվեց Հա-
յաստանի համար: Դեռ ավելին, այն, ինչ որ թուրքերը «զիջեցին» դաշ-
նակցականներին, ժամանակավոր բնույթ էր կրում: Նրանք մտադիր էին
սովետական Բաքուն գրավելուց հետո զավթել ամբողջ Հայաստանը:

Անդրկովկաս ներսուծած գերմանա-թուրքական
Պայքար Բաքվի սովե-
տական իշխանության
ոսմար

Իմպերիալիստների հիմնական խնդիրներից մեկն
էլ Բաքվի սովետական իշխանության տապալումն
էր և Բաքվի նավթին տիրանալը: Նրանք ձգտում
էին գրավել Բաքուն՝ Արևելքի կարևոր ռազմատրատեգիական հան-
գույցը: Նույն նպատակն ունեին նաև անգլիական իմպերիալիստները:
Սրանք որոշել էին Բաքուն և ամբողջ Անդրկովկասը դարձնել հակահե-
ղափոխական ուժերի հենակետ՝ Սովետական Ռուսաստանի վրա արշա-
վելու համար:

1918 թ. ամռանը Բաքվի կոմունայի դրությունը վատացավ: Դեպի

Բաքու էին շարժվում, մի կողմից, գերմանա-թուրքական, մյուս կողմից՝ անգլիական օկուպանտները: Երկրի ներսում իրենց քայքայիչ աշխատանքն ուժեղացրել էին հակահեղափոխական տարրերը՝ մուսավաթականները, մենշևիկները, էսէռները, դաշնակցականները:

Բաքվի բոլշևիկները գործ էին դրել իրենց բոլոր ուժերը՝ փրկելու սովետական Բաքուն իմպերիալիստական զիշատիչների մահացու օղակից: Նրանց ղեկավարությամբ Բաքվի բանվորներից կազմակերպված կարմիրգվարդիական ջոկատները հերոսաբար էին կռվում թշնամու դեմ:

Սովետական Ռուսաստանը, չնայած նրա համար ստեղծված ծանր վիճակին, նգլոսոփա ամեն կերպ օգնում էր Բաքվի հերոսական պրոլետարիատին:

Այդ ծանր օրերին հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի փառաբանված հերոս Անդրանիկը որոշեց իր ուժերը տրամադրել Սովետական Ռուսաստանին: Հուլիսի 14-ին նա հեռագրում է Բաքու՝ Ստ. Շահումյանին, որ Նախիջևանի գավառը իր կողմից հայտարարված է Ռուսաստանի հանրապետության անբաժանելի մասը և որ թուրքերի դեմ կռվելու համար նա իր ջոկատը դնում է սովետական իշխանության տրամադրության տակ: «Ժողովրդական առաջնորդ Անդրանիկին. Ձեր հեռագիրը ստացա, — գրում է Շահումյանը իր պատասխան նամակում: — Լրիվ տե՛ստը հաղորդել եմ Մոսկվա, կենտրոնական կառավարությանը: Իմ կողմից, հանձին Ձեզ, ողջունում եմ իսկական ժողովրդական հերոսին: Եթե պարոնայք Քաջագունիները և մյուսները ձեզ նման լինեին, հայ գյուղացիությունը չէր ապրի ներկայիս ողբերգությունը: Իղջուն հաղորդեցե՛ք ձեր դրոշի տակ մարտնչող բոլոր խիզախ մարտիկներին և ամբողջ աշխատավոր ազգաբնակչությանը...»: Դժբախտաբար, ստեղծված պայմանները խանգարեցին Անդրանիկին իրագործելու իր ծրագիրը:

Դրությունը գնալով վատանում էր: Գերմանա-թուրքական հորդաները մոտեցել էին Բաքվին և մուսավաթական բանդաների հետ միասին մարտեր էին մղում քաղաքի մատուցյներում: Բաքվի սովետում մենշևիկները, դաշնակցականները և այլ էսէռները անգլիացիներին Բաքու հրավիրելու հարց դրին: Նրանք գաղտնի կապեր էին հաստատել Իրանում գտնվող անգլիական զենեթալ Դենստերվիլի հետ, որը ձգտում էր այդ ներքին հակահեղափոխական ուժերի օգնությամբ օկուպացնել Բաքուն:

Անգլիացիներին Բաքու հրավիրելու վերաբերյալ հակահեղափոխական ուժերի առաջարկին վճռաբար դեմ արտահայտվեց Բաքվի ժողովրդիսրհը՝ Ստ. Շահումյանի գլխավորությամբ: Բաքվի պրոլետարիատը և նրա հերոս մարտիկները ջերմորեն պաշտպանեցին Բաքվի սովե-

տական իշխանության ղեկավարների ինքնուրույն քաղաքականությունը: Բաքուն անգլիական իմպերիալիստներին հանձնելը, հայտարարում էր Շահումյանը, մեծագույն դավաճանություն կլինի Սովետական Ռուսաստանի նկատմամբ: Բաքվի սովետական իշխանությունը պետք է պաշտպանենք մեր ուժերով, Սովետական Ռուսաստանի օգնությամբ:

Այն բանից հետո, երբ դաշնակցականներին, այլ էսէռներին և մենշևիկներին հաջողվեց Բաքվի սովետի հուլիսի 25-ի և 31-ի նիստերում ձայների աննշան մեծամասնությամբ անցկացնել անգլիացիներին Բաքու հրավիրելու վերաբերյալ իրենց բանաձևը, երբ ռազմաճակատում դաշնակ-հրամանատարները լքեցին քաղաքի պաշտպանական դիրքերը և դավաճանաբար սպիտակ դրոշ բարձրացրին թշնամու առաջ, Բաքվի ժողովրդիսրհը բանվորների և զինվորների ղեկուտատների Բաքվի սովետի հուլիսի 31-ի նիստում հայտարարեց, որ իր լիազորությունները վայր է դնում:

Այսպիսով, գերմանա-թուրքական հրոսակախմբերի, նրանց մուսավաթական վարձկանների և անգլիական ինտերվենտների ճնշման տակ, դաշնակցականների, այլ էսէռների ու մենշևիկների դավաճանական գործունեության հետևանքով ժամանակավորապես ընկավ Բաքվի սովետական իշխանությունը: Դրանից հետո Բաքվում կազմակերպվեց նոր իշխանություն՝ այսպես կոչված «Յենտրոկասպիի զիկտատուրա», որը կույր գործիք դարձավ անգլիական իմպերիալիստների ձեռքին:

Վ. Բ. Լենինը, մերկացնելով Բաքվի սովետական իշխանության անկման գործում դաշնակցականների դավաճանական վարքագիծը, ասել է. «Ահա այս, սովետական իշխանությանը հավատարիմ, Բաքվի սովետում մինչև այժմ մեծամասնություն կազմած միջուկի դեմ է, որ անգլո-ֆրանսիական իմպերիալիզմը այս անգամ ստացել է 30 ձայնի գերակշռություն այն բանի հետևանքով, որ մեր դեմ և նրանց կողմն է անցել դաշնակցություն կուսակցության, հայ կիսասոցիալիստների հսկայական մեծամասնությունը»¹:

Օգոստոսի 14-ին սովետական զորքերը, Բաքվի կոմիսարները՝ Շահումյանի գլխավորությամբ, 17 նավով, ամբողջ սպառազինությամբ և ռազմական հանդերձանքով դուրս եկան Բաքվից և ուղևորվեցին Աստրախան: Սակայն շուտով նրանց վրա հարձակվեցին «Յենտրոկասպիի» կառավարության ռազմանավերը և պահանջեցին ետ վերադառնալ Բաքու: Ստանալով կոմիսարների բացասական պատասխանը, նրանք սկսեցին ռմբակոծել սովետական նավատորմը, որը ստիպված եղավ վերադառնալ Բաքու: Այստեղ ձերբակալվեցին Բաքվի 26 կոմիսարները և նետվեցին Բայրլովի բանտը:

¹ Վ. Բ. Լենին, Երկեր, հ. 28, էջ 5:

Սեպտեմբերի 15-ին Բաքու մտան թուրքական զավթիչները՝ մուսավաթական հրոսակախմբերի հետ միասին, չհանդիպելով ո՛չ «Յենտրոկասպիի դիկտատուրայի», ո՛չ Հայոց ազգային խորհրդի և ո՛չ էլ անդլիացիների դիմադրությանը, որոնք արդեն փախել էին քաղաքից: Բաքվում սկսվեցին հայ բնակչության կողոպուտն ու մասսայական կոտորածները, որոնց զոհ գնաց մոտ 30 հազար մարդ:

Շնորհիվ բոլշևիկյան մի խմբի եռանդուն ջանքերի, հաջողվեց բանտից ազատել կոմիսարներին և «Պուրքմեն» շոգենավով դուրս բերել Բաքվից: Սակայն շոգենավի դավաճան հրամանատարությունը նավն ուղղում է ոչ թե դեպի Աստրախան, այլ դեպի Կրասնովոդսկ: Այստեղ տեղական էսէռական կառավարությունը անգլիացիների թեկադրանքով ձերբակալում է Բաքվի կոմիսարներին՝ նրանց ընտանիքների հետ միասին:

Սեպտեմբերի 20-ին անգլիական դահիճներն իրենց էսէռ լակեյների հետ միասին անդրկասպյան ավազուտներում գազանաբար հոշոտեցին 26 կոմիսարներին՝ Ստ. Շահումյանին, Պ. Զափարիձեին, Մ. Ազիզբեկովին, Բ. Ֆիոլետովին, Գ. Կորգանովին, Յա. Զևինին և մյուսներին: Կոմիսարների վերջին խոսքն էր. «Մենք մեռնում ենք կոմունիզմի համար: Կեցցե՛ կոմունիզմը...»:

Անդրկովկասի հեղափոխական պրոլետարիատի և աշխատավոր գյուղացիության աննկուն ղեկավարների զնդակահարությունում ո՛չ օտարերկրյա իմպերիալիստներին և ո՛չ էլ նրանց ստոր գործակալներին չհաջողվեց կանխել սովետական իշխանության հաղթանակը Բաքվում և ամբողջ Անդրկովկասում: Չնայած դաժան հալածանքներին, Անդրկովկասի աշխատավորները կոմունիստական կուսակցության ղեկավարությունում շարունակեցին իրենց պայքարը մինչև վերջնական հաղթանակը:

XXI Գ Լ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (1918—1920)

Հայաստանի բուրժուական հանրապետության ստեղծումը

Անդրկովկասը նվաճելու և այն Սովետական Ռուսաստանի դեմ պայքարի հենակետ դարձնելու նըպատակով, օտարերկրյա իմպերիալիստների թեկադրանքով, 1918 թ. մայիսի վերջերին—

հունիսին Անդրկովկասում ստեղծվեցին երեք բուրժուազգայնական կառավարություններ: Կային նաև ներքին պատճառներ:

Անդրկովկասյան սեյմը, գտնվելով ներքին ճգնաժամի մեջ, այլևս չէր կարող շարունակել իր անփառունակ գոյությունը: Անդրկովկասյան սեյմում չկար և չէր կարող լինել միաբանություն: Երկրամասը կառավարող բուրժուազգայնական կուսակցությունները, որոնցից յուրաքանչյուրը ելնում էր իր ազգային բուրժուազի շահերից, չէին կարող ընդհանուր համաձայնության գալ միմյանց հետ: Կարված ազգամիջյան հարաբերությունների պայմաններում նրանց պայքարը գնալով ավելի սուր բնույթ էր ստանում:

1918 թ. մայիսի 26-ին Անդրկովկասյան սեյմը զազարեցրեց իր գործունեությունը: Քայքայվեց Անդրկովկասի «անկախ հանրապետությունը»: Ահա թե ինչ է ասված այդ մասին սեյմի որոշման մեջ. «Նկատի ունենալով, որ պատերազմի և հաշտության հարցերում արմատական տարաձայնություններ դրսևորվեցին այն ժողովուրդների միջև, որոնք կազմել էին Անդրկովկասյան անկախ հանրապետությունը, և այդ պատճառով անհնարին էր դարձել Անդրկովկասի անունից խոսող մեկ հեղինակավոր իշխանության հանդես գալը, սեյմը արձանագրում է Անդրկովկասի տրոհման փաստը և վայր է գնում իր լիազորությունները»:

Այդ նույն օրը մենշևիկները Վրաստանը հայտարարեցին «անկախ հանրապետություն» և կազմեցին մենշևիկյան կառավարություն Ն. Փորգանիայի գլխավորությամբ: Հաջորդ օրը մուսավաթականները Ադրբեջանը հայտարարեցին «անկախ հանրապետություն», որի կառավարության ղուլիս կանգնեց Խան-Նույսկին: Մուսավաթական կառավարության կենտրոնը սկզբում դարձավ Գանձակը (Նլիզավետպոլը), որովհետև Բաքուն սովետական իշխանության կենտրոնն էր:

Մայիսի 28-ին դաշնակցականների գլխավորած Հայոց ազգային կենտրոնական խորհուրդը Հայաստանը հռչակեց «անկախ հանրապետություն»: Սակայն դա ի՞նչ անկախություն էր, այն ամբողջովին կախված էր սկզբում թուրք-գերմանական, իսկ հետո անգլո-ֆրանսիական և ամերիկյան իմպերիալիստներից, խաղալիք էր նրանց ձեռքին:

Մինչև Հայաստանի կառավարություն կազմելը, Հայոց ազգային խորհուրդը 1918 թ. հունիսի 1-ին Թիֆլիսում հրապարակեց մի հայտարարություն, որով իրեն համարեց հայկական գավառների գերագույն և միակ իշխանությունը: Միջկուսակցական լարված պայքարից հետո, հուլիսի սկզբին, Թիֆլիսում կազմվում է Հայաստանի կառավարություն Հովհաննես Քաջաղնուու նախագահությամբ: Հուլիսի 17-ին թուրք-գերմանական սպաների ուղեկցությամբ Երևան են տեղափոխվում Հայոց ազգային խորհուրդը և կառավարությունը, որոնց կազմը համալրվում է Երևանում:

1918 թ. օգոստոսի 1-ին Երևանում բացվում է Հայաստանի խոր-

հրդարանը, որը նույն Ազգային խորհուրդն էր՝ անդամների եռապատիկ
թվով: Ավելանում են նաև 6 աղբիջանցի, 1 ուսու և 1 եզդի, ընդամենը
47 մարդ: Խորհրդարանը հաստատում է Հայաստանի առաջին կառավա-
րության կազմը, որի մեջ գերակշռում էին դաշնակցականները: Խոր-
հրդարանում կային նաև հայ կադետներ, այսինքն, այսպես կոչված
ժողովրդական կուսակցության ներկայացուցիչներ, էսէճներ, հնչակ-
յաններ, մենշևիկներ և մեկ բուլշևիկ (Արշավիր Մելիքյան): Վերջինս
Հայաստանի բուլշևիկների անունից խորհրդարանի նիստում հրապա-
րակում է դաշնակցականների և նրանց իմպերիալիստական տերերի հա-
կաժողովրդական քաղաքականությունը դատապարտող դեկլարացիա,
որի համար զրկվում է մանդատից:

Հակառակ իրենց ամպագոտզու հայտարարություններին, դաշնակ-
ցականները չկարողացան կազմակերպել «անկախ» պետականություն:
Հայաստանի անկախության հռչակումը ձևական բնույթ ուներ: Գրանով
միայն հաստատվեց բուրժուազգայնական դաշնակցության դիկտա-
տուրան, որը փաստորեն ղեկավարվում էր օտարերկրյա իմպերիալիստ-
ների կամքով: Դաշնակցականները աշխատում էին ցույց տալ, որ իբր
իրենց հաջողվել է ստեղծել «ազատ» պետություն, սակայն այդ արվում
էր միայն հայ աշխատավորական մասսաներին մոլորության մեջ գցելու
և իրենց հակաժողովրդական գործունեությունը քողարկելու նպատակով:
Չնայած 1919 թ. օգոստոսի 1-ին խորհրդարանին փոխարինեց Հա-
յաստանի պառլամենտը, սակայն դա խաբեություն էր: Դաշնակցական
կառավարության նախկին նախագահ Հ. Քաջազունին այդ մասին հե-
տագայում գրել է. «Պառլամենտ չկար Հայաստանում: Մի դատարկ ձև
էր՝ առանց պարունակության: Պետական հարցերը քննության էին առ-
նվում ու լուծվում դռնփակ, դաշնակցական ֆրակցիայի սենյակում ու
այս հայտարարվում պառլամենտի ամբիոնից, չկար և կառավարու-
թյուն, դա ևս ենթարկված էր դաշնակցության բյուրոյին և բյուրոյի մի
տեսակ գործադիր մարմինն էր պետության մեջ»:

Հայաստանի սոցիալ-
տնտեսական դրությունը

Իրենց տխրահռչակ կառավարման ժամանակա-
շրջանում դաշնակցականները չլուծեցին և չէին
կարող լուծել ժողովրդի շահերից ելնող սոցիալ-
տնտեսական որևէ կարևոր հարց: Հակաժողովրդա-
կան, հակահեղափոխական բնույթ ուներ նրանց թե՛ ներքին և թե՛ ար-
տաքին քաղաքականությունը: Այն արտահայտում էր հայ բուրժուազի-
այի և հայ հողատերերի շահերը: Նպատակ ունենալով ամրապնդել
ունևոր դասակարգերի դիրքերը, դաշնակցականների կառավարությունը,
չնայած նրա կեղծ խոստումներին, ոչ մի քայլ չարեց արդյունաբերու-
թյան, բանկերի, հողի և մասնավոր սեփականության մյուս ձևերի ազ-

գայնացման ուղղությամբ: Նա շարունակում էր վարել ցարիզմի և ժա-
մանակավոր կառավարության հակաժողովրդական քաղաքականու-
թյունը, ուստի պատահական չէ, որ Հայաստանի խորհրդարանը 1918 թ.
դեկտեմբերին ընդունեց օրենք Հայաստանի տերիտորիայի վրա նախկին
սուսական կայսրության օրենքները կիրառելու մասին՝ ժամանակավոր
կառավարության, Անդրկովկասյան կոմիսարիատի և սեյմի ու Հայաս-
տանի խորհրդի փոփոխումներով և լրացումներով հանդերձ: Այդ օրենքը
ցայտուն կերպով բնորոշում է դաշնակցականների գործունեության
սոցիալ-քաղաքական էությունը:

Դաշնակցականների և նրանց օտարերկրյա տերերի հակաժողո-
վրդական քաղաքականության հետևանքով Հայաստանի առանց այն էլ
թույլ զարգացած տնտեսությունն անասելի անկման հասավ: Անվերջ
պատերազմներն ու ազգամիջյան կոտորածները անտանելի դրություն
էին ստեղծել կրկրում: Հայաստանը դաշնակցականների տիրապետու-
թյան ժամանակաշրջանում դարձել էր սովի ու մահվան երկիր:

Քաջազյվի էր արդյունաբերությունը, չէր գործում արդյունաբե-
րական ձեռնարկությունների մեծ մասը, խիստ կրճատվել էր արտա-
գրությունը: Օրինակ՝ պղնձարդյունաբերությունը, որի տեսակարար կը-
շիոր նախապատերազմյան շրջանում կազմում էր Հայաստանի ամբողջ
արդյունաբերության 45% -ը, դադարել էր գոյություն ունենալուց: Զրով
էին լցվել Կափանի և Ալավերդու պղնձահանքերը, ավերակներ էին
վերածվել պղնձաձուլարանները: 1919 թվականին Հայաստանի արդյու-
նաբերության համախառն արտադրանքը 1913 թվականի համեմատու-
թյամբ կրճատվել էր ավելի քան 12 անգամ: Ողորմելի վիճակում էր
գտնվում նաև «անկախ» Հայաստանի երկաթուղային տրանսպորտը:

Չափազանց ծանր էր բանվորների դրությունը: Նրանք անտանելի
պայմաններում աշխատում էին օրական 12—15 ժամ, երբեմն էլ ավե-
լի, և ստանում չնչին աշխատավարձ: Ամիսներով ձգձգվում էր աշխա-
տավարձի վճարումը: Ոչ ոք չէր մտածում բանվորների աշխատանքի և
կուլտուր-կենցաղային պայմանների բարելավման մասին:

Դաշնակցականների իշխանության տարիներին Հայաստանում քայ-
քայվել էր նաև գյուղատնտեսությունը, որը ժողովրդական տնտեսու-
թյան հիմնական ճյուղն էր: Գյուղում պակասում էին աշխատող ձեռ-
քերը, քառող ուժը և գյուղատնտեսական գործիքները, որի հետևանքով
խիստ կրճատվել էին ցանքատարածությունները: Եթե 1913 թ. Հա-
յաստանի ներկա տերիտորիայում ամբողջ ցանքատարածությունները
կազմում էին 345,7 հազար հեկտար, ապա 1919 թվականին նվազեց և
հասավ 82,7 հազար հեկտարի: Որոշ շրջաններում գյուղատնտեսու-
թյունը ասել էր լրիակատար անկման: Օրինակ՝ Թալինի շրջանի 8 հայ-

կական գյուղերում ցանքատարածությունները 1919 թ. հունիսին կրթ-
ճատվել էին 98%-ով:

Զգալիորեն կրճատվել էր տեխնիկական կուլտուրաների, հատկա-
պես բամբակի մշակությունը: Եթե 1913 թ. Հայաստանում ցանվել էր
15 հազար հեկտար բամբակ, ապա 1919 թ. այն նվազել և հասել էր
600 հեկտարի: Յանքատարածությունների կրճատման հետ մեկտեղ
նվազում էր բերքատվությունը: Մեծ շահերով պահասեց նաև անա-
սունների գլխաքանակը: Քայքայվել էր ոռոգման սխեման:

Իրաչափացման կառավարության վարած հակաժողովրդական
ազդարարչին քաղաքականության հետևանքով էլ ավելի ծանրացավ
գյուղացու վիճակը, գյուղը դարձել էր կատարյալ դժոխք: Գյուղացիներ-
ը տառապում էին հողազրկությունից ու սակավահողությունից, են-
թարկվում ամեն տեսակ հալածանքների ու բռնությունների: Հավատա-
րիմ մնալով իրենց դասակարգային շահերին, դաշնակցականները
գյուղացուն ոչ միայն հող չտվին, այլև ավելի ամբապնդեցին կալվա-
ծատերերի մասնավոր սեփականատիրական իրավունքները: Նրանք
հայտարարում էին, թե «Հողային սեփականությունը սրբություն է, ոչ
ոք իրավունք չունի կալվածատիրոջը դիպչել»: Երկրում ծավալվող
ազդարարչին շարժումների ճնշման տակ նրանք թեև 1920 թ. հունիսին
հրապարակեցին իրենց հողային օրենքը, սակայն կյանքում այդ օրեն-
քը բոլորովին չկիրառվեց: Գյուղացիների մեծ մասը իր ընտանիքի գո-
յությունը պահպանելու համար հարկադրված էր հող վարձակալել կամ
ուղղակի դառնալ կուլակի ու կալվածատիրոջ բատրակը: Սովի ճիրաննե-
րից ազատվելու համար շատերը ստիպված էին լինում շնչին գներով
վաճառել իրենց ունեցվածքը, այդ թվում և տունը:

Հիմնովին քայքայվել էր նաև երկրի ֆինանսական սխեման: Արա-
գորեն ընկնում էր հայկական դրամանիշների կուրսը: Եթե 1920 թ. մար-
տին մեկ գուլարն արժեք 500 ուրլի, մայիսին՝ 1000 ուրլի, ապա նո-
յեմբերին այն արժեք 28000 ուրլի: Շուկայում անասելի շահերով թան-
կացել էին ապրանքների գները: 1919 թվականին մեկ կիլոգրամ հացն
արժեք 5000 ուրլի, շաքարը՝ 50000 ուրլի:

Տնտեսական կյանքի վատթարացման հետևանքով ստեղծվել էր
նաև պարենային սուր ճգնաժամ՝ հասնելով ահռելի շահերի և սպառնա-
լով ժողովրդի ֆիզիկական գոյությանը: Երկրում տարածվել էին սովն
ու համաճարակը, որոնց զոհ գնաց բնակչության ավելի քան մեկ եր-
րորդը: Պաշտոնական տվյալներով 1919 թ. միայն Երևանի փողոցներից
հավաքվել է 9055 դիակ: Էլ ավելի ծանր էր դրությունը շրջաններում ու
գյուղերում: Սրոջ շրջաններում (Թալին, Ապարան, Էջմիածին, Նոր Բա-
յազետ, Սուրմալու և այլն) մահացավ բնակչության կեսից ավելին:

Սովն ու համաճարակը առաջին հերթին հնձում էին հայ գաղթա-
կան աշխատավորներին: «Հայաստանի դրությունը ողբերգական է,—
1918 թ. հոկտեմբերի 12-ին Օրջոնիկիձեն հեռագրել է Լենինին:— Երե-
վանի նահանգի երկու գավառների մի փոքրիկ հողակտորի վրա կուտակ-
վել են ավելի քան 600000 գաղթականներ, որոնք մասսայաբար կոտոր-
վում են սովից ու համաճարակից: Գրաված գավառներում թուրքերը սրի
են քաշել բնակչության կեսին»:

Նույնիսկ ժամանակի դաշնակցական թերթերը ստիպված են եղել
խոստովանել, որ «Հայ ժողովրդի դրությունը երբեք այսքան հուսահատ
ու անելանելի չի եղել», որ «Հայաստանում թագավորում է համատա-
րած մահը, սովն ընդգրկել է ամբողջ երկիրը»:

Ժողովրդական մասսաները ոչ միայն քաղցած էին, այլև մերկ:
«Պարենավորման վիճակին կից պիտի շեշտել մասնավորապես ժողո-
վրդի մերկությունը Նոր Բայազետի գավառում,— գրված է դաշնակ-
ցական կառավարության ուղղված մի պաշտոնական զեկուցագրում,—
բազմաթիվ գյուղեր և ընտանիքներ կան, որ մերկ են այդ բառի իսկա-
կան իմաստով: Կանայք, երեխաներն ու տղամարդիկ հաճախ տներից
դուրս գալու հնարավորություն անգամ չունեն մերկության պատճառով»:

Հայաստանի աշխատավորները զոհ էին դառնում ո՛չ միայն սովին
ու համաճարակին, այլև խմբապետ-մատուցիտների սանձարձակ բռ-
նություններին: Ամբողջ երկրում թագավորում էր անարխիան, վայրենի
ճնշումն ու մասսայական կողոպուտը, շտեմնված շահերի էին հասել
այնկուլյացիան, կաշառակերությունը, պետական միջոցների հափշտա-
կումը, ամեն տեսակ ապօրինի գործողությունները: «Մեր պաշտոնեու-
թյան 90%-ը զեղծարար է,— գրել է «Հայաստանի աշխատավոր» թեր-
թը:— Զեղծում ու կեղծում են ամենքը, արան-թալան են անում բոլորը,
ովքեր «ծուլ չեն», որովհետև որքան շատ են կեղծում ու հափշ-
տակում՝ այնքան բարձրանում է նոցա աստիճանն ու պատիվը»: Դաշ-
նակների տիրապետության պատկերը դիպուկ կերպով արտահայտել է
Ա. Ի. Միկոյանը. «Հայաստանը դաշնակների ժամանակ որբերի երկիր
էր, արցունքի երկիր, աղքատության ու վայրենի կամայականության
երկիր»:

Հայ ժողովրդից քիչ զոհեր չխլեց նաև դաշնակցականների մոլի շո-
վինիզմը: Հավատարիմ իրենց դասակարգային շահերին, դաշնակցական-
ները, ինչպես նաև մոտավաթականներն ու վրացական մենշևիկները,
բազմազգ Անդրկովկասում անընդհատ բորբոքում էին ազգային թշնա-
մանք և ատելություն, հրահրում եղբայրասպան պատերազմներ ու ազ-
գամիչյան կռիվներ:

Աղգայնական կրթերի բորբոքման միջնորդարտում անհնարին էր տերիտորիալ սահմանավեճերը լուծել խաղաղ, դիվանագիտական ճանապարհով: Օտարերկրյա իմպերիալիստների թելադրանքով 1918 թ. ղեկտեմբերին եղբայրասպան պատերազմ սկսվեց Վրաստանի և Հայաստանի միջև: «Եթե Վրաստանի և Հայաստանի փոխհարաբերությունների ամբողջ պատմությունը,— գրել է Գ. Կ. Օրջոնիկիձեն, — երբեք պատերազմ չի տեսել այդ երկու եղբայրական ժողովուրդների միջև, ապա բավական «եղավ... մենշևիկների և դաշնակների իշխանության գլուխ անցնելը և երկու եղբայրական ժողովուրդները մահացու կռիվ սկսեցին ինչ-որ մի պատառ հողի համար, թափելով հարյուրավոր բանվորների ու գյուղացիների՝ հայերի ու վրացիների արյունը ի հաճույս անգլիական վաճառականների և արգյունաբերողների, որոնք օգտվեցին դրանից, որպեսզի թե՛ մենշևիկյան և թե՛ դաշնակցական բանդիտներին քշեին վիճելի տերիտորիաներից և հայտարարեին այն շեզոք գոտի, այսինքն՝ գցեին իրենց ձեռքը, որը և նրանք արին»:

Տերիտորիալ վեճերի հետևանքով ավերվում էին գյուղերն ու քաղաքները, բնաջնջվում էր բնակչությունը: Օրինակ՝ 1920 թ. գարնանը ավերվեց ու հրդեհվեց Ղարաբաղի Շուշի քաղաքը, կոտորվեց մոտ 7000 հայ: Իր հերթին դաշնակցական կառավարության զորքերը հարձակումներ էին կատարում Հայաստանի ադրբեջանական շրջանների՝ Զանգիբասարի, Վեդիբասարի, Աղբաբայի վրա և թալանում ու կոտորում տեղական ադրբեջանական բնակչությանը:

Դաշնակցականները, ինչպես և Անդրկովկասի մյուս բուրժուական նացիոնալիստները, հրահրելով ազգամիջյան կռիվներ, նպատակ ունեին նաև շեղել երկրամասի աշխատավորության ուշագրությունը դասակարգային պայքարից, ջլատել նրա ուժերը:

Դաշնակցականները թշնամաբար էին տրամադրված Սովետական Ռուսաստանի նկատմամբ: Անտանտի իմպերիալիստների թելադրանքով նրանք սերտ կապեր էին հաստատել Ռուսաստանի սպիտակգլավարիական բանդաների հետ և դաժանորեն պատժում էին երկրի ներսում սովետական իշխանության համար պայքարի ելած աշխատավորներին: Վ. Ի. Լենինը Սովետական Ռուսաստանի դեմ Չեքչիլի գլխավորած 14 պետությունների հակասովետական բլոկի մեջ հաշվում էր նաև դաշնակցական Հայաստանը:

1918 թ. ղեկտեմբերին Հայաստանի «պառլամենտում» հանդիսավոր կերպով ընթերցվում է գեներալ Գենիկինի ողջունը դաշնակցականների կառավարությանը և որոշվում է ուղարկել պատասխան ողջուն: Բնորոշ է, որ Գենիկինը Հայաստանը համարում էր իր տերիտորի-

ան, դաշնակցական բանակը՝ իր դիվիզիաներից մեկը: Դաշնակցական կառավարությունը իր ներկայացուցիչներն ուներ Կոլչակի, Գենիկինի, Վրանգելի ռազմական շտաբներում, նրանց ներկայացուցիչները Հայաստանում ընդունվում էին մեծ հանդիսավորությամբ: 1918 թ. վերջերին Հայաստան եկավ Գենիկինի ռազմական շտաբի ներկայացուցիչ գնդապետ Լեսլին: 1919 թ. հոկտեմբերին նրան փոխարինում է գնդապետ Զինկելը: Նրանք դաշնակցականների կառավարության հետ բանակցություններ էին վարում Սովետական Ռուսաստանի դեմ զինված պայքարի դուրս գալու մասին: Դաշնակցականները բռնությամբ «կամավորներ» էին հավաքագրում իրենց դաշնակցի բանակի համար: Գենիկինը փոխադարձաբար դաշնակցականների բանակին մատակարարում էր զենք և ռազմամթերք: Գենիկինի մոտ դառնում էր դաշնակցականների ներկայացուցիչը գրում է, որ ինքը վերջին անգամ ուղարկել է մեկ միլիոն 200000 զնդակ և 10000 շրապնել: 1919 թ. սեպտեմբերին Հայաստանի կառավարության նախագահ Ա. Խատիսյանը գաղտնի գրությամբ Եվրոպայում հայկական կառավարության պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանին հայտնում է, որ ստացվել է 3 միլիոն փամփուշտ:

Ռազմական օգնություն ստանալով Գենիկինից, ինչպես և Անտանտի իմպերիալիստներից, դաշնակցականները այն օգտագործում էին Սովետական Ռուսաստանի դեմ պայքարելու, երկրի հեղափոխական շարժումները ճնշելու համար:

Գենիկինի ջախջախելուց հետո դաշնակցականները սերտ կապեր հաստատեցին Վրանգելի հետ: «Նոր գլխավոր հրամանատարության հետ ստեղծվել էին այնպիսի լավ հարաբերություններ, ինչպես Գենիկինի հետ», — գրում է դաշնակցական կառավարության ներկայացուցիչը 1920 թ. մայիսի վերջերին: Այն ժամանակ, երբ աղքատ Հայաստանը ծայր աստիճան կարիքի մեջ էր, դաշնակցականները Վրանգելից ստացած ռազմամթերքի դիմաց Բաթումում ձեռք բերեցին մեծ քանակությամբ նավթ ու քարածուխ և հանձնեցին Վրանգելին:

Առաջին համաշխարհային պատերազմում գերմանա-թուրքական կողմից պարտություն կրեց և հանձնվեց Անտանտի ողորմածությանը: 1918 թ. հոկտեմբերի 30-ին Անտանտի տերությունների և սովետական Թուրքիայի միջև հունական Մուդրոս նավահանգստում կնքվեց համաձայնագիր, որով Թուրքիան լիակատար կապիտուլյացիայի ենթարկվեց: Նա պարտավորվեց իր զորքերը դուրս բերել Անդրկովկասից: Մուդրոսի համաձայնագրի 24-րդ հոդվածով Անտանտին իրավունք էր վերապահվում

գրավել հայկական 6 վիլայեթները՝ Վանը, Բիթլիսը, Խարբերդը, Էրզրու-
մը, Դիարբեքիրը, Տրապիզոնը:

Մինչև 1919 թ. ապրիլը թուրքական զորքերը պետք է լիովին ազա-
տեին Անդրկովկասում իրենց գրաված տերիտորիաները՝ նահանջել մինչ-
և 1914 թ. սահմանները: Այսպիսով, շեղյալ է դառնում Բաթումի պայ-
մանագիրը և կրկին Հայաստանին են մնում Կարսի մարզն ու Երևանի
նահանգի մի մասը: Սակայն Անդրկովկասից գերմանա-թուրքական
զորքերի հեռանալուց հետո այնտեղ մտան Անտանտի իմպերիալիստ-
ները: Ներխուժելով Անդրկովկաս, նրանց հիմնական խնդիրն էր տե-
ղական բուրժուա-ազգայնական կառավարությունների հետ միասին
ճնշել Անդրկովկասի ժողովուրդների հեղափոխական շարժումները, Ան-
դրկովկասը դարձնել պլացդարմ՝ Սովետական Ռուսաստանի դեմ պայ-
քարելու համար: Անտանտի իմպերիալիստների աչքում Անդրկովկասի՝
որպես հակասովետական պայքարի հենակետի, դերն էլ ավելի մեծա-
ցավ, երբ կարմիր բանակը ջախջախեց Դենիկինի բանդաներին: Պա-
տահական չէ, որ Փարիզում դաշնակիցների Գերագույն խորհուրդը
1920 թ. հունվարին որոշում ընդունեց դե-ֆակտո ճանաչել Անդրկով-
կասի երեք կառավարությունները:

Անդրկովկասի հակահեղափոխական կառավարությունները գըր-
կաբաց ընդունեցին օտարերկրյա նոր գաղութարարներին և դարձան
նրանց հյու կամակատարները: Դեռևս 1918 թ. դեկտեմբերի 17-ին
դաշնակցական կառավարությունը հրավիրեց արտակարգ նիստ, որտեղ
քննվեց Հայաստանի տնտեսական ու քաղաքական ղեկավարությունը
անգլիական ռազմական իշխանություններին հանձնելու հարցը: Շուտով
Անգլիան, Ֆրանսիան, ԱՄՆ-ը իրենց ռազմական, դիվանագիտական ու
տնտեսական ներկայացուցիչներն են ուղարկում Հայաստան, որոնք և
ուղղություն են տալիս հայկական «անկախ հանրապետության գործու-
նեությունը»: Դաշնակները շտեմնված ստորաքարշույթյամբ են դիմավո-
րում ամերիկյան գնդապետ Հասկելին, որը Փարիզի կոնֆերանսի Տասի
խորհրդի կողմից 1919 թ. հուլիսի 5-ին նշանակվել էր դաշնակիցների
գերագույն կոմիսար նախ Հայաստանում, ապա ամբողջ Անդրկովկա-
սում: Հայրենադավ դաշնակների ոչ պակաս ջերմ ընդունելությունն ար-
ժանացնել նաև ամերիկյան գեներալ Ջեմս Հարբորդի միսիան, որը
բաղկացած էր 50 հոգուց:

Միսիան ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնից առաջադրանք էր ստացել
հանգամանորեն ուսումնասիրել Հայաստանի տնտեսության բոլոր ճյու-
ղերը, բնական հարստությունները, աշխարհագրական պայմանները,
ջրային ռեժիմը, հաղորդակցության միջոցները, զինված ուժերը և այլն:
Ամերիկյան հետախույզներին առաջադրանք էր տրված նյութեր հավա-

քել նաև Հայաստանի բնակչության սոցիալական կազմի, կենցաղի,
կուլտուրայի, գույքային դրուժյան, քաղաքական տրամադրությունների,
գոյություն ունեցող կազմակերպությունների և բազմաթիվ այլ հարցե-
րի մասին: Հարբորդի միսիայի՝ դաշնակցական կառավարությանը ներ-
կայացրած հարցաթերթիկը պարունակում էր ավելի քան հազար հարց,
որոնց պատասխանները հետաքրքրություն էին ներկայացնում ԱՄՆ-ի
համար:

Դաշնակցականների արտաքին քաղաքականությունը ենթարկելով
իրենց շահերին, արևմուտքի իմպերիալիստները խառնվում էին
Հայաստանի նաև ներքին գործերին: Հեղափոխական շարժումների դեմ
պայքարելու համար նրանք երկրի ներսում ստեղծել էին լրտեսական-
ստտիկանական հատուկ ցանց: Օտարերկրյա իմպերիալիստները Հա-
յաստանում ունեին իրենց բանտերը, հսկում էին փոստի, հեռագրա-
տան և այլ հիմնարկների վրա: Նրանք հրահրում էին ազգամիջյան
ջարդեր, որոնց զոհ էին գնում աշխատավոր մասսաները: Անգլիական,
ֆրանսիական և ամերիկյան «քաղաքակիրթ» ավազակներն անխիղճ
կերպով կողոպտում էին սովալլուկ Հայաստանի վերջին հարստույթյու-
նները:

1919 թ. մայիսին բրիտանական ռազմական իշխանությունները
Կարսից տեղափոխել են մեծ քանակությամբ արկեր, բամբակ, մեքե-
նաների մասեր և այլն: Բացի դրանից, նրանք տեղափոխել են ավելի
քան 60 թնդանոթ: Արևիվային փաստաթղթերը վկայում են, որ Կարսի
բերդից հանված թնդանոթները անգլիացիները ուղարկում էին Հյուսի-
սային Կովկաս՝ Դենիկինին: «Կարսում շատ զենք և ռազմամթերք կա,—
գրել է Անգլիայի արևելյան զինված ուժերի զլխավոր հրամանատար
Միլնը դաշնակցականների կառավարությանը,— հատկապես շատ զին-
վորական հագուստ կա, անգլիացիները այդ ռազմամթերքն ու թնդա-
նոթներն ուղարկում են գեներալ Դենիկինի բանակին, իսկ Դենիկինը
կոչվում է բոլշևիկների դեմ»:

Տեղի ամերիկյան իշխանություններն անխնայ կերպով կորստում
էին Հայաստանի անտառները և արտահանում անտառանյութը: 1920 թ.
հուլիսին ֆրանսիական մի զինված ջոկատ Բաթումում ապօրինաբար
բռնազրավում է Հայաստանին պատկանող 40 հազար փութ բամբակ:
1919—1920 թվականներին օտարերկրյա իմպերիալիստները ոչ լրիվ
սովայներով Հայաստանից արտահանել են 160 հազար փութ բամբակ,
11 հազար խոշոր և 150 հազար մանր եղջերավոր անասունի կաշի, մեծ
քանակությամբ պղինձ, սպիրտ, գորգեր և այլ առարկաներ: Նույնպիսի
կողոպուտ էր կատարվում նաև Անդրկովկասի մյուս մասերում:

Հայաստանին օգնելու քողի տակ ամերիկյան իմպերիալիստները

Քաբընում էին իրենց իսկական մտադրությունը և խաբում ժողովրդական լայն մասսաներին: Այդպիսի մի քող էր նաև ԱՄՆ-ում գործող «Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն», որի գլուխ էր կանգնած գեներալ Ջեյմս Ջերարդը և որի աշխատանքին մասնակցում էին մի խումբ դաշնակցական պարագլուխներ: ԱՄՆ-ի իմպերիալիստական էքսպանսիան Հայաստանում իրականացնելու գործում պակաս դեր չէր խաղում ամերիկյան օգնության վարչությունը (APA), որի գլուխ էր կանգնած Սովետական Ռուսաստանի ամենաոխերիմ թշնամիներից մեկը՝ Հովհերը: «Բարեգործական», նպատակներով ստեղծված կոմիտեններից էր նաև «Մերձավոր Արևելքի ամերիկյան օգնության կոմիտեն»:

Հայկական հարցը Փարիզի կոնֆերանսում: Սևրի պայմանագիրը

1919 թ. հունվարին անգլո-ամերիկյան իմպերիալիստների նախաձեռնությամբ բացվեց Փարիզի խաղաղության կոնֆերանսը, որին Սովետական Ռուսաստանը չէր մասնակցում:

Անտանտի իմպերիալիստների նպատակն էր անդամահատել Սովետական Ռուսաստանը, տապալել սովետական կարգերը, գրավել Մերձավոր Արևելքը և Անդրկովկասը:

Իմպերիալիստական դիվանագետներն իրենց նվաճողական ձգտումները քողարկելու նպատակով առաջ էին քաշում զավթվող նոր երկրները «մանդատի իրավունքով» կառավարելու հարցը: Վ. Ի. Լենինը, մերկացնելով իմպերիալիստներին թույլ երկրների մանդատներ բաժանելու կողոպտիչ բնույթը, գրել է. «Եվ երբ խոսում են գաղութների մանդատներ բաժանելու մասին, մենք հիանալի գիտենք, որ դա մանդատների բաժանումն է հափշտակման, կողոպտի համար, որ դա երկրագնդի բնակչության մի շնչին մասին իրավունքների բաժանումն է երկրագնդի բնակչության մեծամասնությանը շահագործելու համար»¹:

Փարիզի խաղաղության կոնֆերանսում առաջ քաշվեց նաև հայկական հարցը: Այդ ժամանակ Փարիզում գտնվում էր հայկական երկու պատվիրակություն, որոնցից մեկը Հայաստանի հանրապետության կամ արևելահայերի պատվիրակությունն էր Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ, մյուսը՝ արևմտահայերի կամ գաղութահայերի պատվիրակությունը եգիպտահայ մեծահարուստ Պողոս Նուբարի գլխավորությամբ:

Հայկական հարցը քննվեց կոնֆերանսի բոլոր դեկավար օրգաններում՝ «Տասի խորհրդում», «Հնգի խորհրդում», «Չորսի խորհրդում»: Սակայն հենց սկզբից պարզ դարձավ, որ մեծ տերությունների ներկայացուցիչները հայկական հարցը քննում են ոչ թե հայ ժողովրդի, այլ միայն իրենց շահերի տեսանկյունից, ելնելով Մերձավոր Արևելքում իրենց պետությունների ազդեցությունն ուժեղացնելու նպատակից: Այլ

կերպ էլ չէր կարող լինել: Ինչպես միշտ, այս անգամ նույնպես, միջազգային իմպերիալիզմի դիվանագիտության կողմից շարաշահվում էր հայկական հարցը:

Փարիզի կոնֆերանսի կլոր սեղանի շուրջը բացահայտվեցին ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի իմպերիալիստների միջև եղած հակասությունները: Անդրկովկասին ու Հայաստանին տիրելը նրանց միջև մղվող սուր պայքարի հարցերից մեկն էր: Չնայած դրան, Սովետական Ռուսաստանի դեմ պայքարի միասնական ճակատ ստեղծելու նպատակով անգլիական և ֆրանսիական իմպերիալիստները համաձայնության եկան ԱՄՆ-ի հետ՝ օսմանյան նախկին կայսրության տարածքը և Սովետական Ռուսաստանի մի մասը մասնատելու և միմյանց միջև բաժանելու մասին: Մայիսի 14-ին «Չորսի խորհրդը» որոշեց Հայաստանի մանդատը տալ ԱՄՆ-ին, որը, սակայն, չբավարարվելով դրանով, ցանկանում էր միաժամանակ վերցնել նաև Անդրկովկասի ու Թուրքիայի մի մասի մանդատը:

Ինորոշ է, որ Փարիզի խաղաղության կոնֆերանս մեկնած հայկական պատվիրակությունները ամեն ջանք գործ էին դնում Հայաստանի մանդատը իմպերիալիստական որևէ երկրի հանձնելու համար: Ի վերջո, Ազգերի լիգան որոշում է Հայաստանի մանդատը հանձնել Փարիզի խաղաղության կոնֆերանսի ԱՄՆ-ի պատվիրակությանը, որը, Փարիզի հայկական պատվիրակության հետ միասին, կազմում է Հայաստանի համար ստրկացուցիչ համաձայնագիր: Ըստ այդ համաձայնագրի, ի չիք էր դառնում «անկախ Հայաստան» գաղափարը, Հայաստանը վերածվում էր ամերիկյան գաղութի:

Սակայն Հայաստանի մանդատի հարցը ամիսներով ձգձգվում էր: Այդ ժամանակամիջոցում որոշ փոփոխություններ էին տեղի ունեցել ԱՄՆ-ի դեկավար շրջանների արտաքին քաղաքականության մեջ: Խարխըվել էր Վիլսոնի հեղինակությունը ԱՄՆ-ում, սրվել էին միջկուսակցական տարաձայնությունները: 1920 թ. հունիսի 1-ին ԱՄՆ-ի սենատը, քննելով այդ հարցը, 52 ձայնով ընդդեմ 23-ի որոշում է մերժել Հայաստանի մանդատն ընդունելու վերաբերյալ Ազգերի լիգայի առաջարկը: Ամերիկյան իմպերիալիզմը, որը պայքարում էր համաշխարհային գերիշխանության համար, չէր բավարարվում այնպիսի մի աղքատ ու ավերված երկրով, ինչպիսին Հայաստանն էր: Երկրի ներքին ու արտաքին թշնամիների դեմ Սովետական Ռուսաստանի տարած փայլուն հաղթանակները, հեղափոխական և ազգային-ազատագրական շարժումների աճը մետրոպոլիաներում ու գաղութներում, ինչպես նաև Մերձավոր Արևելքում ու Անդրկովկասում, ձախողեցին ամերիկյան ագրեսորների բոլոր պլանները:

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 186:

Համաշխարհային պատերազմում պարտված օսմանյան կայսրության հետ կնքվելիք հաշտության պայմանագրի նախագիծը մշակելու համար 1920 թ. ապրիլին դաշնակիցների Գերագույն խորհուրդը հրավիրեց Սան-Ռեմոյի (Իտալիա) կոնֆերանսը, որին մասնակցում էր նաև Հայաստանի հանրապետության պատվիրակությունը: Հաշտության պայմանագիրը կնքվեց օգոստոսի 10-ին Ֆրանսիայի Սևր քաղաքում (Փարիզի մոտ): Այդ պայմանագրի 6-րդ հատվածի 88—93 հոդվածներն ամբողջովին վերաբերում են Հայաստանին: Պայմանագրի 88-րդ հոդվածով Թուրքիան պարտավորվում էր Հայաստանը ճանաչել որպես ազատ և անկախ պետություն: Հաջորդ հոդվածներում նախատեսվում էր ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնին իրավունք վերապահել որոշելու հայ-թուրքական սահմանները էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում, ապառազմականացնել օսմանյան կայսրության այդ սահմաններին կից տերիտորիաները, Հայաստանին ելք տալ դեպի ծով: Ադրբեջանի և Վըրաստանի հետ ունեցած տերիտորիալ վեճերը պետք է լուծվեին շահագրգռված երկրների ընդհանուր համաձայնությանմբ, իսկ չլուծվելու դեպքում հարցը պետք է լուծեին դաշնակից տերությունները: Սևրի պայմանագրով սահմանվում էին Հայաստանի ֆինանսական պարտավորությունները դաշնակիցների նկատմամբ: Առանձին հոդվածով հայկական պետությունը պարտավորվում էր կատարել դաշնակից տերությունների այն բոլոր որոշումները, որոնք կշռափեին այլազգիների տրանզիտային իրավունքները Հայաստանում:

Սևրի պայմանագրի կնքման օրը Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան և Ճապոնիան Հայաստանի հետ կնքեցին մի լրացուցիչ պայմանագիր, որը պետք է ապահովեր դաշնակից և միավորված տերությունների քաղաքական ու ֆինանսատնտեսական վերահսկողությունը Հայաստանի վրա:

Սևրի պայմանագիրը, որի տակ դրված էր նաև Հայկական հանրապետության պատվիրակության նախագահի ստորագրությունը, ժամանակին մեծ ոգևորություն առաջ բերեց հայ ժողովրդի մեջ: Սակայն այդ պայմանագիրը ոչինչ չտվեց նրան: Դաշնակիցները գործնական ոչ մի քայլ չարեցին Սևրի պայմանագրով նախատեսված տերիտորիաները թուրքական զավթիչներից ազատելու ուղղությամբ: Նրանք միայն խորհուրդ էին տալիս, որ Հայաստանը այդ տերիտորիաները վերցնի իր ուժերով, մի բան, որն անհնարին էր առանց վտանգելու հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը: Սևրի պայմանագրով դաշնակիցները հույս ունեին քեմալականներին գժտեցնել դաշնակցականների հետ, իսկ հետո, հայկական հարցի առիթով, նաև Սովետական Ռուսաստանի հետ:

Իրադարձությունները Կիլիկիայում

Անտանտի պետությունների խարդախ քաղաքականության հետևանքով ծանր դրություն էր ստեղծվել Կիլիկիայի հայերի համար: Համաշխարհային առաջին պատերազմի տարիներին Կիլիկիայի և Մերձավոր ու Միջին Արևելքի հայ բնակչությունը ակտիվ մասնակցություն էր ցույց տվել թուրքական զավթիչների դեմ մղվող պայքարին: 1918 թվականի աշնանը Պաղեստինի ռազմաճակատում դաշնակիցների բանակում հերոսաբար էր կռվում Արևելյան լեգեոնը, որը հիմնականում բաղկացած էր հայ կամավորներից: «Ես հպարտ եմ հրամանատարությունս տակ հայ զորամաս մը ունենալուս,— ասված է անգլո-ֆրանսիական զորքերի հրամանատար գեներալ Ալեմբերի հեռագրում:— Անոնք կռվեցան փայլուն կերպով և մեծ բաժին մը ունեցան հաղթանակի մեջ»:

Սևրի պայմանագրով Կիլիկիան տրված էր Ֆրանսիային, իսկ Զմյուռնիան՝ Հունաստանին, որը գտնվում էր Անգլիայի հովանավորության ներքո: Կիլիկիայից վտարված հայերը կրկին վերադարձան իրենց բնակավայրերը: Այդ ժամանակաշրջանում տեղական հայերի մեջ առաջ եկավ դաշնակիցների, առաջին հերթին Ֆրանսիայի օգնությամբ Կիլիկիայում հայկական ինքնուրույն պետություն ստեղծելու գաղափարը: 1920 թվականի օգոստոսին հնչակյան կուսակցության նախաձեռնությամբ Կիլիկիայում ստեղծվեց ժամանակավոր կառավարություն, սակայն շուտով ֆրանսիական զինվորական իշխանությունները ցրեցին այդ կառավարությունը:

Զճանաչելով Սևրի պայմանագիրը, քեմալականները ռազմական գործողություններ ծավալեցին Կիլիկիայում: Ֆրանսիացիները չկարողացան դիմադրել թուրքական զորքերին: Թուրքական հորդաները հրի ու սրի մատնեցին Կիլիկիայի հայկական քաղաքներն ու գյուղերը, մասսայաբար կոտորեցին հայ բնակչությանը: Տեղ-տեղ հայերը հերոսական դիմադրություն ցույց տվեցին թուրքական զավթիչներին: Առանձնապես նշանավոր է Հաճն քաղաքի պաշտպանությունը, որը տևեց ավելի քան 7 ամիս: Քաղաքի 10000 բնակիչից կենդանի մնաց միայն 480-ը:

Ֆրանսիական իմպերիալիստները լքեցին հայերին: 1921 թ. հոկտեմբերին Թուրքիայի հետ հանկարծակի դաշնագիր կնքելով, նրանք բախտի քմահաճույքին և թուրքական հորդաների հոշոտմանը հանձնեցին հայ բնակչությանը: Այդ դաշնագրի համաձայն, որի մի ծայրն էլ ուղղված էր Անգլիայի դեմ, Ֆրանսիան քեմալական Թուրքիային էր վերադարձնում Կիլիկիան, նրան տալիս էր մեծ քանակությամբ զենք, ռազմամթերք, հանդերձանք և այլն: Մեկ տարի հետո հույն-թուրքական պատերազմում Հունաստանի պարտությամբ ծանր վիճակ ստեղծվեց նաև Զմյուռնիայի և ծովափնյա հայկական մյուս շրջանների հա-

յության համար, որը նույնպես ենթարկվեց թուրք դավթիչների կոտորածին: «Սերի դաշնագիրն արդեն պատված էր,— գրում է Լեոն իր «Անցյալից» գրքում:— Եվ հայերն ընկնում էին այն բարձունքներից, ուր նրանց գրել էին այդ դաշնագիրն ստորագրողները, ընկնում էին և ջախջախվում: Կիլիկիայի անակնկալ հանձնումը Թուրքիային սարսափի էր մատնում նրա ամբողջ հայությունը, և 120 հազար հոգի փախչում էին նավերը, ցրվում էին աշխարհի բոլոր կողմերը կամ մնում էին նավերի ու նավակների վրա»: «Կիլիկիան դատարկվում էր հայությունից, ինչպես դատարկվել էր բուն Հայաստանը»,— կսկիծով գրել է հայրենասեր պատմաբանը իր մի այլ աշխատության մեջ:

XXII Գ Լ Ո Ւ Խ

ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

1. ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԱՊՍԱՄԲՈՒԹՅԱՆ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

Հեղափոխական շարժումները Հայաստանում մինչև Մայիսյան ապստամբությունը

1918—1920 թվականներին հեղափոխական շարժումները Հայաստանում լայն թափ ու ծավալ են ստանում: Բողոքների ղեկավարությամբ տեղի են ունենում մի շարք գործադուլներ, գյուղացիական ելույթներ, հակահառավարական ցույցեր:

1919 թվականին գործադուլ են անում Երևանի երկաթգծի, պետական արհեստանոցների, տպարանների, փոստ-հեռագրատան բանվոր-ծառայողները, Ալեքսանդրապոլի տպագրիչները, Ալավերդու և Ղափանի հանքափորները: Մի շարք վայրերում տեղի են ունենում նաև ուսուցչության, ստորին պաշտոնյաների և մանր արհեստավորների մասսայական հուզումներ:

1920 թ. հունվարին գործադուլ է տեղի ունենում Ալեքսանդրապոլի երկաթգծի ղեկավար: Գործադուլը ճնշելու համար դաշնակցականները դիմում են զինված ուժի՝ ձերբակալում են 15 բանվորի, այդ թվում բողոքիկ Սգոր Սևյանին: Դաշնակցականների տեղական իշխանությունների այդ բռնությունը առաջ է բերում քաղաքի աշխատավորության բուռն դաշույթը:

Երևանում, Ալեքսանդրապոլում և այլ վայրերում 1918—1920 թթ. քաղաքային սովյալ բնակչությունը, գլխավորապես գաղթականություն-

ներ, կազմակերպում է հակահառավարական մի շարք ցույցեր, որոնք ճնշվում են զենքի ուժով:

Այդ տարիներին Հայաստանում մեծ ծավալ են ստանում գյուղացիական շարժումները: 1918 թ. օգոստոս—սեպտեմբերին զինված ընդհարում է տեղի ունենում Ապարանի ու Եղվարդի գյուղացիների և դաշնակցական-խմբապետական զորքերի միջև: Գյուղացիական շարժումները սուր բնույթ են ստանում Նոր Բայազետի գավառում: Հոկտեմբերին գավառի Շահրիզ (այժմ՝ Գեղամավան) գյուղում բռնկում է ապստամբություն, որը ճնշվում է դաշնակցականների կողմից: 1918 թ. նոյեմբերին դաշնակցական պատժիչ ջոկատը շրջապատում և զնդակոծում է Մեծ Մազրա գյուղը, որը հրաժարվել էր հարկ վճարել և զինվորներ տալ պետությունը:

1919 թ. փետրվարին Բասարգեշարի (այժմ՝ Վարդենիս) շրջանի Զոզ գյուղում տեղի է ունենում ապստամբություն, որը ճնշվում է զինված ուժի միջոցով: Սիսիանի շրջանի Բոնակոթ գյուղում 1919 թ. գարնանը գյուղացիները բռնազրավում և միմյանց մեջ են բաժանում բեկական հողերը: Նույն թվականի ամռանը Շամշադինի շրջանի մի քանի գյուղերում գյուղացիները հրաժարվում են զինվորներ տալ դաշնակցական բանակին: Հոկտեմբերին Դարալագյազի գավառի երկրորդ տեղամասի կոմիսարը գավառի կոմիսարին ուղղած պաշտոնական գրության մեջ, նկարագրելով հատկապես Մարտիրոս գյուղի բնակիչների հակահառավարական ելույթները, առաջարկում է խստորեն պատժել ըմբոստ գյուղացիներին: «Հարկավոր է ուժ այս անարխիստիկ վերջ տալու,— գրում է նա,— եթե ոչ անարխիան կմեծանա, այն ժամանակ ավելի զժվար կլինի առաջն առնել. իմ կարծիքով, Մարտիրոս գյուղը, որ անարխիստի բուն է, հարկավոր է էկզեկուցիայի ենթարկել, որ ժողովուրդն իմանա, թե կառավարություն կա»:

Մի շարք գավառներում լայն գործունեություն են ծավալում գյուղացիական ղեկավարների սովետները: 1918 թ. օգոստոսին Ղազախում գումարվում է Նոր Բայազետի, Ալեքսանդրապոլի և Ղազախի գավառների գյուղացիական ղեկավարների համագումար, որը խիստ քննադատության է ենթարկում դաշնակցականների կառավարության հակաժողովրդական քաղաքականությունը: 1919 թ. ղեկտեմբերին Ուղունլար (այժմ՝ Օձուն) գյուղում բողոքիկների նախաձեռնությամբ հրավիրվում է Լոռու «Չեղոք գոտու» գյուղացիական ղեկավարների սովետի նիստ, որը որոշում է վերջ տալ կալվածատիրական հողատիրությանը և բանաձև է ընդունում հողային կոմիտեներ ստեղծելու մասին:

Գյուղացիական շարժումները գլխավորելու գործում մեծ դեր են խաղում Հայաստանի մի շարք վայրերում կազմակերպված գյուղացիա-

Քան միությունները: Օրինակ՝ 1919 թ. մարտին Ալեքսանդրապոլում հրավիրված գյուղացիական համագումարում կազմակերպվում է Շիրակի գյուղացիական միությունը, որը հրատարակում էր «Գյուղացիական միություն» թերթը: 1919 թ. հուլիսին Ալեքսանդրապոլում բացվում է գյուղացիական միության երկրորդ համագումարը, որը բոլշևիկների առաջարկով որոշում է ընդունում մասսաներին նախապատրաստել դաշնակցականների իշխանությունը տապալելու և սովետական իշխանություն հաստատելու համար: 1919—1920 թթ. լայն գործունեություն էր ծավալել «Արագածոտն» գյուղացիական միությունը, որի ղեկավարն էր ժողովրդի շահերի լավագույն պաշտպան բժիշկ Արտաշես Մելքոնյանը: Միությունը նրա խմբագրությունը 1920 թ. ապրիլին հրատարակում էր «Գյուղացու ձայն» թերթը, որը մի քանի համար լույս տեսնելուց հետո փակվում է:

1920 թ. սկզբներին գյուղացիական շարժումը նոր թափ է ստանում: Իջևանի շրջանի Գոթի (այժմ՝ Շավարշավան) գյուղի գյուղացիները 1920 թ. փետրվարին գյուղից վճռում են դաշնակցական կառավարության ներկայացուցիչներին, հայտարարելով, որ իրենք չեն ճանաչում նրանց:

Հեղափոխական խմբումների հետևանքով դաշնակցական բանակում մեծ շափերի էր հասնում դասալքությունը: Օրինակ՝ 1919 թ. վերջերին 40 հազարանոց բանակի մոտ 18 հազար զինվորներ դասալիքներ էին: 1918—1920 թթ. դաշնակցական կառավարության դեմ տեղի են ունենում նաև զինվորական ելույթներ: Հայաստանի տերիտորիայում գտնվող կայազորների հեղափոխական զինվորներն ու սպաները ջերմորեն պաշտպանում էին բանվորների ու գյուղացիների ելույթները:

Դաշնակցականների տիրապետության դեմ մղած պայքարը կրում էր ինտերնացիոնալ բնույթ: Այդ պայքարին ակտիվորեն մասնակցում էին նաև Հայաստանում ապրող ադրբեջանցի, ռուս, հույն և այլ ազգի աշխատավորները: Իր հերթին հայ աշխատավորությունը ակտիվորեն էր մասնակցում նաև Վրաստանում և Ադրբեջանում ծավալված հեղափոխական շարժումներին:

Հայկական գործերի կոմիսարիատը և Երա գործունեությունը

Սովետական Ռուսաստանը, չնայած իր արտաքին և ներքին ծանր դրությունը, մեծ հոգատարություն էր ցուցաբերում երկրի ծայրամասերի նախկինում ճնշված ժողովուրդների նկատմամբ, բարոյական և նյութական օժանդակություն էր ցույց տալիս նրանց:

1917 թվականի դեկտեմբերին Սովետական Ռուսաստանի Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատին կից ստեղծվեցին լեհերի, լիտվացիների, բելոռուսների և ուրիշ ժողովուրդների գործերի

կոմիսարիատներ: Ազգային կոմիսարիատները և բաժինները մեծ դեր էին խաղում Ռուսաստանի բազմազգ ժողովուրդների սոցիալ-քաղաքական և տնտեսական-կուլտուրական կյանքում: Այդ նորաստեղծ օրգանների հիմնական խնդիրը Ռուսաստանի ճնշված ժողովուրդներին Հոկտեմբերյան հեղափոխության դրոշի տակ համախմբելն էր, երկրի բոլոր ազգային ծայրամասերում սովետական իշխանության հաստատումը:

1917 թ. դեկտեմբերի վերջին Մոսկվայում կազմակերպվեց նաև Հայկական գործերի կոմիսարիատ, որը ղեկավարում էր ականավոր սովետական գործիչ Վառլամ Ավանեսովը (Սուրեն Մարտիրոսյան), իսկ նրա տեղակալն էր բոլշևիկ բանաստեղծ Վահան Տերչյանը:

Սովետական Ռուսաստանի կառավարությունը բոլոր պայմաններն ստեղծեց Հայկական գործերի կոմիսարիատի արդյունավետ գործունեություն համար: 1918 թ. մարտին կառավարությունը որոշեց վերացնել Պետրոգրադում գործող Հայկական ռազմական կոմիսարիատը: Հուլիսի 19-ին Վ. Բ. Լենինի ստորագրությամբ հրապարակվեց Սովետական Ռուսաստանի կառավարության նոր որոշումը՝ տարբեր անուններով Ռուսաստանում գոյություն ունեցող հայկական բուրժուազգայնական, հակահեղափոխական կազմակերպությունները (հայկական ազգային խորհուրդները, Հայաստանի պաշտպանության խորհուրդները կամ ռազմահեղափոխական կոմիտեները և հայկական հակահեղափոխական մյուս կազմակերպությունները) վերացնելու մասին: Օգոստոսին վերացվեց «Հայաստանի փրկության կոմիտեն»: Վերոհիշյալ կազմակերպությունները կապված էին Անդրկովկասի հակահեղափոխական իշխանությունների հետ և պայքարում էին սովետական կարգերի դեմ: Հիշյալ միջոցառումները մեծապես օգնեցին հայ աշխատավորությանը դաշնակցականների տիրապետության դեմ մղվող պայքարում: Ժողովրդական կոմիսարների սովետի որոշմամբ վերացված կազմակերպությունների բոլոր գործերը, գույքը, դրամական միջոցները և շենքերը հանձնվեցին Հայկական գործերի կոմիսարիատին:

Կոմիսարիատը կարճ ժամանակամիջոցում իր բաժանմունքներն ստեղծեց Աստրախանում, Սարատովում, Խարկովում, Արմավիրում, Պյատիգորսկում, Ցարիցինում, Թոստովում և Բաքվում: Լիազորություններ կազմակերպվեցին Պետրոգրադում, Վլադիկավկազում, Դերբենդում, Գոկանդում, Աշխաբադում, Կիևում, Օդեսայում, Մինսկում, Եկատերինոգրում, ինչպես նաև Միբրի ու Ղրիմի որոշ քաղաքներում:

Հայկական գործերի կոմիսարիատը իր եռամյա գոյության ընթացքում հսկայական աշխատանք ծավալեց ինչպես բուն Ռուսաստանում բնակություն հաստատած հարյուր հազարավոր հայերի, այնպես էլ Անդրկովկասի ու Հայաստանի հայ աշխատավորության մեջ: Նա Սովե-

տական Ռուսաստանի օգնությունը Մոսկվայում ստեղծեց հայկական տպարան, որտեղ տպագրվում էին թերթեր, բրոշյուրներ, կոչեր: 1918 թ. հունիսին Մոսկվայում հայերեն լեզվով լույս տեսավ կոմիսարիատի օրգան «Կոմունիստ» շաբաթաթերթը, որը մեծ դեր խաղաց հայ աշխատավորությանը սովետական իշխանության շուրջը համախմբելու գործում: 1918—1920 թթ. կոմիսարիատի տեղական բաժանմունքները նույնպես հրատարակում էին հայկական թերթեր՝ «Կարմիր օրեր» (Պլատիգորսկ), «Բանվորի ձայն» (Արմավիր), «Կարմիր բանվոր» (Աստրախան), «Կարմիր աստղ» (Կրասնոդար), «Բանվորի կոիվ» (Նոր Նախիջևան) և այլն:

Սովետական Ռուսաստանի կառավարության միջոցներով հայկական գործերի կոմիսարիատը մեծ օգնություն կազմակերպեց Ռուսաստանում ապաստան գտած հարյուր հազարավոր փախստական հայերին: Միայն 1918—1919 թթ. տասը ամիսների ընթացքում հայ գաղթականներն ստացան տասը միլիոն ռուբլի դրամ, մեծ քանակությամբ կտորեղեն, պատրաստի հագուստեղեն և կոշիկեղեն: Տարբեր վայրերում նրանց համար բացվեցին հանրակացարաններ, աշխատանքային արհեստանոցներ, ճաշարաններ, հիվանդանոցներ, բուժկայաններ, դպրոցներ, մանկապարտեզներ, ակումբներ, գրադարաններ, սրբանոցներ:

Հայ գաղթական աշխատավորությունն իր նկատմամբ ցուցաբերած հոգատարության համար երախտագիտությամբ էր լցված դեպի Սովետական Ռուսաստանի կառավարությունը, դեպի կոմունիստական կուսակցությունը: «Համաշխարհային իմպերիալիստական պատերազմի հետևանքով օթևանից զրկված և Սովետական Ռուսաստանում ապաստան գտած տաճկահայ գաղթականների զանգվածը, — ասված է 1919 թ. Սարատովի հայ գաղթականների միտինգում ընդունված բանաձևում, — եղբայրական ողջուն է հղում և երախտագիտության զգացմունք է հայտնում ռուսական հեղափոխական սրբուխարիատին ու գուղաջիտությանը՝ ի դեմս ժողովրդական կոմիսարների խորհրդի, նրանց կողմից ցուցաբերած ընդառաջման և ընկերական աջակցության համար»:

Ռուսաստանում բնակվող հայ աշխատավորությունն ակտիվ մասնակցություն ունեցավ սոցիալիստական հայրենիքի պաշտպանության գործին: Ուշագրավ է, որ 1918 թ. հոկտեմբերին Հյուսիսային Կովկասի Պլատիգորսկ քաղաքում ստեղծվում է հատուկ հայկական գունդ, որը կոչվում է Վ. Բ. Լենինի անունով: Գնդում կար 4000 հայ մարտիկ:

Սովետական Ռուսաստանի զինված ուժերի հրամանատարության փայլուն համաստեղության մեջ իրենց արժանի տեղն են գրավում հայ ժողովրդի ծոցից ելած տաղանդավոր զորավարներ, որոնց անունները ոսկե տառերով են գրված մեր բազմազգ հայրենիքի ժողովուրդների

պատմության մեջ: Ահա Հոկտեմբերյան հեղափոխության ակտիվ մասնակից, Արևմտյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար, Արևմտյան մարզի Հեղկոմի նախագահ, Արևմտյան մարզի ժողկոմխորհի և ապա Կենտրոնիկոմի նախագահ, Սովետական Ռուսաստանի զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի ժամանակավոր պաշտոնակատար, Արևելյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար, Բելոռուսիայի կոմունիստական կուսակցության Կենտկոմի բյուրոյի նախագահ, կուսակցության Մոսկվայի քաղկոմի քարտուղար **Ալեքսանդր Սյասնիկյանը**. Կազանի, Միմբիրսկի, Սարատովի, Օրենբուրգի և այլ քաղաքների ազատագրման համար մարտնչած 24-րդ երկաթյա դիվիզիայի, 1-ին հեղափոխական բանակի, առաջին կովկասյան հեծյալ դիվիզիայի, երրորդ հեծյալ կորպուսի հրամանատար Գայր՝ Հայկ Բժշկյանը. Կոլչակի սպիտակգլարիական բանդաների և շեխական կորպուսի դեմ մղված մարտերի հերոս, տաղանդավոր զորավար **Գասպար Ոսկանյանը**, որը Չապակից առաջ և նրա մահից հետո եղել է հոշակավոր 25-րդ շապակյան դիվիզիայի հրամանատար, այնուհետև թուրքմենական ճակատում 4-րդ բանակի, սպիտակների դեմ գործող 12-րդ բանակի հրամանատար. Պետրոպավլովսկ ամրոցի և նրան կից զինանոցի կոմիսար, Հոկտեմբերյան հեղափոխության ակտիվ մասնակից, Կերենսկու, Կրասնովի խոռվության, Մախնոյի բանդայի, Գենիկինի դեմ մղված պայքարի ղեկավար կազմակերպիչներից մեկը՝ **Միխայել Տեր-Հարությունյանը**. Կազանի, Սեֆայի, Չելյաբինսկի, Օմսկի ազատագրման համար մարտնչած 19-րդ հրաձգային կորպուսի հրամանատար **Գրիգոր Խախանյանը** և ուրիշներ:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի և նրա նվաճումների պաշտպանության համար մղված պայքարում 1917—1920 թվականներին Ռուսաստանում ապրող հայերից աչքի ընկան նաև Վառլամ Ավանեսովը, Ռուբեն Քաթանյանը, Արտաշես Խալաթյանը, Վլադիմիր Թայրովը, Հակոբ Մեթրույանը, Ալեքսանդր Գարսուկը, Ալեքսանդր Վերմիշևը, Օնիկ Սահակյանը, Ալեքսանդր Տոնիյանը և հայ ժողովրդի շատ այլ հերոս զավակներ: Նրանցից շատերն իրենց կյանքը զոհաբերեցին հանուն ազատության: Հոկտեմբերի հերոսուհի 20-ամյա կուսիկ Լիսինյանը զոհվեց Մոսկվայի Կրեմլի գրավման օրերին: Նա թաղվեց Կարմիր հրապարակում:

Հայկական գործերի կոմիսարիատի հետ գրեթե միաժամանակ 1918 թ. հունվարին Կովկասում աշխատող մի խումբ հայ կոմունիստներ (Գ. Հայկունի, Վ. Երեմյան, Գ. Վարդանյան, Հ. Հովսեփյան և ուրիշներ) ստեղծում են «Հայաստանի կոմունիստական կուսակցություն» կազմակերպությունը Արևմտյան Հայաստանում գործելու նպատակով:

Սակայն «Թուրքահայաստանի» վերաբերյալ Սովետական Ռուսաստանի կառավարության դեկրետը չիրագործելու պատճառով այդ կազմակերպությունը փորձեց քաղաքական-պրոպագանդիստական աշխատանք ծավալել Ռուսաստանի և Կովկասի հայ գաղթականության մեջ: «Հայաստանի կոմունիստական կուսակցությունը» 1918 թ. գարնանը Թիֆլիսում հրատարակում էր «Կարմիր օրեր», իսկ հետո՝ «Կարմիր դրոշակ» թերթերը: Այդ կազմակերպության գործունեության մեջ նշանակալի երևույթ էր այն, որ նրա ներկայացուցիչ Գ. Հայկունին վճռական ձայնի իրավունքով 1919 թ. մարտին մասնակցեց Կոմինտերնի առաջին հիմնադիր կոնգրեսին և 17 կոմունիստական կուսակցությունների պատվիրակությունների ներկայացուցիչների թվում ստորագրեց Կոմինտերնի հիմնադրման մասին ընդունված մանիֆեստը: 1920 թ. սկզբներին այդ կազմակերպությունը դադարեց գոյություն ունենալուց:

**ՌՍԴԲ(բ)Կ
կազմավորումը**

ՌՍԴԲ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեի ղեկավարությամբ 1918 թ. աշնանը Հայաստանում վերականգնվում և ամրապնդվում էին կոմունիստական կազմակերպությունները: Հատկապես աչքի ընկնող աշխատանք էին կատարում Երևանի, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Կարսի, Սարիղամիշի, Դիլիջանի, Լոռու և Զանգեզուրի կազմակերպությունները:

Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների միավորման և կուսակցական աշխատանքը հետագայում բարելավելու գործում մեծ դեր խաղաց 1919 թ. սեպտեմբերյան ընդհատակյա խորհրդակցությունը, որը տեղի ունեցավ Երևանում: Խորհրդակցությանը մասնակցում էին 12 հոգի, որոնք ներկայացնում էին կուսակցության մոտ 400 անդամների: Խորհրդակցությունում քննարկվեցին Հայաստանում կուսակցական աշխատանքի վիճակի, ընթացիկ մոմենտի, Հայաստանի երիտասարդական կոմունիստական շարժման հարցերը: Լավեցին նաև հազորդուններ տեղերից: Սեպտեմբերյան խորհրդակցությունը ընտրեց Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների ղեկավար կենտրոն՝ ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտե (Արմենկոմ):

Արմենկոմը եռանդուն գործունեություն ծավալեց Հայաստանում հեղափոխական շարժումը կազմակերպելու և ղեկավարելու ուղղությամբ: Այդ տեսակետից կարևոր նշանակություն ունեցավ Արմենկոմի հանձնարարությամբ նրա ղեկավարներից մեկի՝ Ս. Կասյանի (Ս. Ատենյան կեղծանունով) «Ո՛ւր է կլթը» գրքույկի հրատարակումը: Նշելով, որ երկրագնդի վրա թերևս ոչ մի ժողովուրդ այնպիսի ողբալի, օրհասական օրեր չի ապրում, ինչպես հայ ժողովուրդը, հեղինակը փրկության միակ ելքը համարում է սովետական կարգերի հաստատումը:

1920 թ. հունվարի 18—19-ին Երևանում հրավիրվեց Հայաստանի

կոմունիստական կազմակերպությունների առաջին ընդհատակյա կոնֆերանսը, որին մասնակցում էին 1200 կոմունիստներ ընդգրկող 22 կուսակցական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Կոնֆերանսը քննարկեց Հայաստանի կուսակցական կազմակերպությունների համար առաջնահերթ նշանակություն ունեցող մի շարք հարցեր: Կոնֆերանսը խնդիր դրեց՝ է՛լ ավելի ուժեղացնել աշխատանքը մասսաների մեջ և զինված ապստամբության միջոցով տապալել դաշնակցական կարգերը:

Հունվարյան կոնֆերանսը հատուկ ուշադրություն դարձրեց բանվորների և աշխատավոր գյուղացիների դաշինքի ամրապնդմանը, պրոֆմիություններում, բանվորական ակումբներում, գյուղացիական և երիտասարդական կազմակերպություններում կատարվող աշխատանքին: Կոնֆերանսն ընտրեց ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեի նոր կազմ, որի մեջ մտան Ս. Կասյանը, Ստ. Ալավերդյանը, Ա. Մուսվաթյանը, Գ. Շահվերդյանը, Ա. Նուրիջանյանը, Գ. Տեր-Սիմոնյանը, Ս. Մարտիրոսյանը, Ղ. Ղուկասյանը և ուրիշներ: Արմենկոմի նախագահը Ս. Կասյանն էր, իսկ 1920 թ. փետրվարից հետո, երբ դաշնակցական կառավարությունը նրան արտաքսեց Հայաստանից, Արմենկոմը փաստորեն ղեկավարում էր Ստ. Ալավերդյանը:

Կոնֆերանսը մեծ նշանակություն ունեցավ Հայաստանի կուսակցական կազմակերպությունների միավորման և ամրապնդման, նրա հետագա աշխատանքների ծավալման համար:

Կուսակցական-հեղափոխական աշխատանքի ուժեղացմանը մեծապես նպաստում էր հայ բոլշևիկյան մամուլի հրատարակումը: 1920 թ. հունվար-ապրիլին լույս էին տեսնում «Պահակ», «Նոր ուղի» (Թիֆլիս), «Ալիք» (Ալեքսանդրապոլ), «Լոռվա գյուղացիության ձայնը» (Լոռի-Ուզունլար), «Կոմունիստ», «Գյուղացու ձայն» (Երևան) և այլ թերթեր:

Երկրամասի կոմունիստական կազմակերպություններին ցույց տրվող ղեկավարությունն ու օգնությունը ուժեղացնելու նպատակով 1920 թ. ապրիլին ՌԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը որոշեց ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեի փոխարեն ստեղծել ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրո, որի կազմում էին Գ. Օրջոնիկիձեն, Ս. Կիրովը, Ս. Ստասովան, Հ. Նազարեթյանը, Մ. Օրախելաշվիլին և ուրիշներ:

ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն շուտով ձեռնամուխ եղավ Հայաստանի և Վրաստանի կոմունիստական կազմակերպությունների կազմակերպական ձևավորմանը: Ազդեցանում կոմունիստական կուսակցությունը ձևավորվել էր 1920 թ. փետրվարին՝ ՌԿ(բ)Կ առաջին համագումարում:

Պետք է ասել, որ ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեն մինչև

1919 թ. կեսերը առաջ շէր քաշում անկախ ազգային հանրապետութիւններ և դրա հետ կապված ազգային ինքնուրույն կոմունիստական կուսակցութիւններ ստեղծելու հարցը: Նա կանգնած էր «Սովետական Կովկաս» լուղունգի դիրքերում: Սակայն հետագայում պարզվեց, որ դա սխալ էր: Հարկավոր էր ազգային բուրժուազիայի և բուրժուազգայնական կուսակցութիւնների ձեռքից խլել ազգային անկախութեան համար մղվող պայքարի դրոշը: ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեն 1919 թ. մայիսին վերանայեց իր դիրքը և ՌԿ(բ)Կ Կենտկոմի օգնութեամբ ու ղեկավարութեամբ ձեռնամուխ եղավ այդ խնդրի իրականացմանը:

Հայաստանում կուսակցական աշխատանքի ծավալման գործին օգնելու նպատակով 1920 թ. գարնանը ստեղծվում է Հայաստանի կոմունիստական կազմակերպութիւնների արուսահամաձայն բյուրո, որը մինչև հունիս ամիսը գտնվում էր Թիֆլիսում, ապա՝ փոխադրվեց Բաքու: Արտասահմանյան բյուրոյի մեջ մտնում էին Ա. Բեկզադյանը, Ս. Կասյանը, Ա. Մոսվեյանը, Գ. Շահվերդյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը, Ի. Գովլաթյանը, Ա. Նուրիջանյանը և ուրիշներ:

1920 թ. հունիսին կազմավորվեց Հայաստանի կոմունիստական կուսակցութիւնը: 1920 թ. հուլիսի վերջերին ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն հաստատեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի կազմը, որի մեջ մտան Ի. Գովլաթյանը, Ա. Նուրիջանյանը, Հ. Կոստանյանը, Ա. Խանջյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը: Թեկնածուներ հաստատվեցին Շ. Ամիրխանյանը և Վ. Շահգեղյանը: Աշնանը Կենտկոմի կազմի մեջ մտցվում են Ս. Կասյանը, Ա. Բեկզադյանը:

«Սպարտակը» և Երա գործունէութիւնը

Իեռևս 1917 թ. գարնանն ու ամռանը բոլշևիկներին ղեկավարութեամբ Հայաստանում ստեղծվում են երիտասարդական խմբակներ ու միութիւններ: Իրանցից են Երևանի թեմական դպրոցում ստեղծված աշակերտական, Ալավերդու պղնձաձուլական գործարանի, Սանահին և Ախթալա կայարանների բանվորական ու գյուղացիական երիտասարդական խմբակները: 1917 թ. դեկտեմբերին Երևանի աշակերտական ինտերնացիոնալիստական խմբակի ջանքերով ստեղծվում է մարքսիստական աշակերտական միութիւն, որը շուտով կապ է հաստատում 1917 թ. սեպտեմբերին Թիֆլիսում ստեղծված «Սպարտակ» կազմակերպութեան հետ:

1919 թ. մարտին Թիֆլիսում տեղի է ունենում երիտասարդ սոցիալիստ-ինտերնացիոնալիստների «Սպարտակ» կազմակերպութիւնների կոնֆերանս, որի աշխատանքներին Հայաստանից մասնակցում էր Ղ. Կուկասյանը: Ապրիլին Երևանում գումարվում է մարքսիստական աշա-

կերտական միութեան ժողով, որտեղ նա ղեկուցում է Ռուսաստանի կոմունիստական երիտասարդական միութեան առաջին համագումարի և Թիֆլիսի կոնֆերանսի արդյունքների մասին: Ժողովը որոշում է միութիւնը վերանվանել երիտասարդ սոցիալիստ-ինտերնացիոնալիստների «Սպարտակ» կազմակերպութիւն, որը մայիսի վերջին վերանվանվում է երիտասարդ կոմունիստների «Սպարտակ» միութիւն: Շուտով երիտասարդ կոմունիստների «Սպարտակ» կազմակերպութիւններ են ստեղծվում նաև Նոր Բայազետում, Իլիլջանում, Ալեքսանդրապոլում և Հայաստանի այլ վայրերում: «Սպարտակը» Հայաստանի առաջին կոմերիտական կազմակերպութիւնն էր, որի մեջ ղեկավար դեր էին կատարում երիտասարդ կոմունիստներ Կուկաս Կուկասյանը, Արմենակ Բուրաղյանը և Աղասի Խանջյանը:

1919 թ. մայիսի մեկին լույս է տեսնում «Սպարտակ» միութեան օրգան «Սպարտակ» թերթը, որը մեկ համարից հետո արգելվում է: «Սպարտակ» միութիւնը աշխույժ գործունէութիւն է ծավալում Հայաստանում: 1919 թ. օգոստոսի 1-ին, դաշնակցական «պառլամենտի» բացման օրը, միութիւնը հրատարակում է մի թուղթիկ, որի մեջ մերկացնելով դաշնակցականների հակաժողովրդական քաղաքականութիւնը, կոչ է անում «խտացնել կոմունիստական շարքերը, խմբվել կարմիր դրոշակի շուրջը»:

1919 թ. երկրորդ կեսին ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեի ցուցումներով լայն աշխատանք էր կատարվում Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի կոմունիստական երիտասարդական միութիւնները միավորելու և ՌԿԵՄ-ի հետ կազմակերպորեն ձուլելու համար: Այն նրպատակով 1919 թ. սեպտեմբերին Բաքվում հրավիրվում է Անդրկովկասի բանվորագյուղացիական երիտասարդական միութիւնների առաջին միացյալ կոնֆերանսը: Այստեղ ընտրվում է ՌԿԵՄ Անդրկովկասյան երկրային կոմիտե, որի կազմի մեջ մտնում են Բ. Չնելաձեն, Ղ. Կուկասյանը և ուրիշներ: Կոնֆերանսը ընդունում է կոչ՝ ուղղված Անդրկովկասի բանվորական և գյուղացիական երիտասարդութեանը:

1919 թ. աշնանից Հայաստանի կոմունիստական երիտասարդական կազմակերպութիւնների աշխատանքն զգալիորեն աշխուժանում է: Կուսակցական կազմակերպութիւնների ղեկավարութեամբ նրանք ավելի ու ավելի ակտիվ մասնակցութիւն են ցուցաբերում Հայաստանի աշխատավորութեան մղած հեղափոխական պայքարին:

2. ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Մայիսի 1-ին ցույցերը Հայաստանում

XI բանակը, Հյուսիսային Կովկասը մաքրելով սպիտակ գվարդիական բանդաներից, 1920 թ. գարնանը մոտեցավ Անդրկովկասի սահմաններին: Կարմիր բանակի հաղթանակները բուռն ոգևորություն առաջ բերեցին Անդրկովկասի բանվորների ու գյուղացիների մեջ, որոնք հերոսական պայքար էին մղում իրենց ազատագրության համար: Այդ ժամանակ ՌԿ(Բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեն Կովկասի կոմունիստական կազմակերպությունների և բոլոր աշխատավորների անունից դիմում է Համահոսաստանյան Կենտրոնի կոմիտեին, ժողկոմխորհին, Կոմինտերնին և կարմիր բանակին, խնդրելով օգնություն ցույց տալ երկրամասի աշխատավորությանը: «Մեզ դեռ չի լուսավորել Հոկտեմբերյան հեղափոխության մեծ արևը, — գրված է այդ դիմումի մեջ, — մենք անսահման հավատ ենք տածում և համոզված ենք, որ բանվոր-գյուղացիական Սովետական Ռուսաստանը, կոմունիստական ինտերնացիոնալը և փառապանծ կարմիր բանակը... ակտիվ կերպով կօգնեն մեզ ազատելու կապիտալի իշխանությունից»:

1920 թ. ապրիլի 28-ին սովետական կարգեր հաստատվեցին Ադրբեջանում: Եղբայրական ժողովրդի այդ մեծ հաղթանակի լուրը կաթմակի արագությամբ տարածվեց և հեղափոխական նոր վերելք ստեղծեց Հայաստանում:

Մայիսի 1-ին՝ միջազգային պրոլետարիատի համերաշխության տոնին, Հայաստանի քաղաքներում և գյուղերում տեղի ունեցան աշխատավորների հզոր ցույցեր ու միտինգներ, որոնք անցան կոմունիստների առաջադրած լողունգներով: «Կուրչի՛ դաշնակների կառավարությունը», «Կեցցե՛ Սովետական Հայաստանը», «Բախում ընկավ, հերքը Երևանի՛նն է» լողունգները ոչ թե սովորական խաղաղ ցույցի, այլ զինված պայքարի կոչեր էին:

Երևանի աշխատավորները մայիսի 1-ին դուրս գալով ցույցի, ընկերներ Ստ. Ալավերդյանի, Ս. Մարտիկյանի, Ղ. Ղուկասյանի և ուրիշ բոլշևիկ գործիչների գլխավորությամբ, կարմիր դրոշակներով և հեղափոխական երգերով, փողային նվագախմբի հնչյունների տակ շարժվեցին դեպի դաշնակցական պառլամենտի (այժմ՝ երաժշտական կոմիտեի թատրոն) շենքը, որի դիմաց պետք է տեղի ունենար մայիսի 1-ի միտինգը: Յուցարարները իրենց հետ տանում էին Մարքսի, էնգելսի, Լենինի և Շահումյանի նկարները: Կոմունիստները կրում էին կարմիր նշան: Յուցարարների մեջ իրենց կազմակերպվածությամբ աչքի

էին ընկնում երևանի ավտոգարաժի, տպարանի, երկաթուղու, փոստ-հեռագրատան, ուղիովայանի բանվոր-ծառայողները: Ուշագրավ է, որ այդ օրը կոմունիստների ձեռքում էր գտնվում երևանի ուղիովայանը, որտեղից և հաջողվում էր ուղարկել Բաքու և Մոսկվա:

Միտինգում կոմունիստների անունից կրակոտ ճառով հանդես է գալիս Արմենկոմի անդամ, բոլշևիկյան կուսակցության ակադեմիկոս գործիչ Ստ. Ալավերդյանը: Նա կոչ է անում համախմբվել կոմունիստական կուսակցության շուրջը, լրացնել հեղափոխական մարտիկների շարքերը: Ալավերդյանն իր ճառում խոսում է ճնշված ժողովուրդների ազատագրման գործում Սովետական Ռուսաստանի դերի, ուսումնասիրելու հետեղբայրական կապերի ամրապնդման մասին: Նա իր ճառն ավարտում է «Կեցցե՛ սովետական իշխանությունը», «Կեցցե՛ կոմունիստական կուսակցությունը», «Կեցցե՛ Անդրկովկասի ժողովուրդների եղբայրությունը» լողունգներով:

Մայիսի 1-ի ցույցի տոնակատարությունը արտակարգ խանդավառությամբ, քաղաքական բարձր մակարդակով է անցնում նաև Ալեքսանդրապոլում: Յուցարարների ավանգարդում էին գտնվում երկաթուղային բանվորները: Քաղաքի մի շարք վայրերում տեղի են ունենում միտինգներ: Զորանոցներում աշխատավորների ներկայությամբ տեղի ունեցած միտինգում կրակոտ ճառերով հանդես են գալիս բոլշևիկներ Բ. Ղարիբջանյանը, Ա. Նուրիջանյանը, Ե. Սևյանը և ուրիշներ: «Վարդան զորավար» զրահագնացքի հրամանատար Ս. Մուսայելյանը իր ճառում հայտնում է, որ զրահագնացքի ամբողջ անձնակազմը պատրաստ է կռվելու հանուն ամբողջ Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի: Միտինգում շատ զինվորներ հանդիսավոր կերպով իրենց հայտարարում են կարմիրբանակայիններ:

1920 թ. մայիսի 1-ի ցույցերը մեծ հաջողությամբ են անցնում նաև Կարսում, Սարիղամիշում, Ղարաքիլիսայում, Զանգեզուրում և այլ վայրերում:

Մայիսի 1-ի ցույցերը խոշոր նշանակություն ունեցան Հայաստանի բանվորների և գյուղացիների հեղափոխական պայքարի նոր վերելքի համար, նախերգանք հանդիսացան Մայիսյան պանծալի ապստամբության:

Մայիսի 1-ի ցույցից հետո Ալեքսանդրապոլի երկաթուղային կայարանը փաստորեն գտնվում էր կոմունիստների ձեռքում: Այստեղ էր կանգնած «Վարդան զորավար» զրահագնացքը, որի անձնակազմը Ս. Մուսայելյանի ղեկավարությամբ երդվել էր հավատարիմ մնալ սովետական իշխանությանը, մինչև վերջ պայքարել դաշնակցական լուծելու թափախելու համար: Ծուռով ստեղծվում է զինված բանվորական զվարդիա:

Այս գործում աշխի բնկնող դեր է խաղում Բաքվի հերոսական կարմիր զվարդիայի շարքերում կոսոված մարտիկ Եզոբ Սեւյանը:

Կոմունիստները լայն բացատրական աշխատանք են տանում զորքի մեջ: Զորամասերի ներկայացուցիչներն ամեն օր գալիս են կայարան և հայտնում իրենց պատրաստակամությունը՝ կռվել հանուն սովետական իշխանության: Այդ օրերին զինված ուժերի կազմակերպման գործում եռանդուն աշխատանք է կատարում հայ ժողովրդի պանծալի զավակ Հովհաննես Բաղրամյանը, որն այն ժամանակ առաջին հայկական հեծյալ զնդի հեծելավաշտի հրամանատարն էր: Սովետական իշխանության հաստատման համար մղվող պայքարի առաջին դիրքերում կանգնեց նաև զնդի հրամանատար Ա. Մելիք-Շահնազարյանը:

Զինված ապստամբության համար Ալեքսանդրապոլում ստեղծվել էր նպաստավոր իրադրություն: Սակայն ՌԿ(Բ)Կ Հայաստանի կոմիտեն նախապես որոշել էր զինված ապստամբությունն սկսել Հայաստանի հյուսիսային շրջաններում, որոնք սահմանակից էին Սովետական Ադրբեջանին, որտեղից կարելի էր համապատասխան օգնություն ստանալ: ՌԿ(Բ)Կ Ալեքսանդրապոլի կոմիտեի ղեկավարները, մասնավորապես Ա. Նուրիջանյանը, մայիսի 3-ին և 5-ին ՌԿ(Բ)Կ Հայաստանի կոմիտեին գրած տաճնապալից նամակներում գտնում էին, որ Արմենկոմի որոշումը պետք է փոխել և ապստամբությունն սկսել Ալեքսանդրապոլից:

Ելնելով ստեղծված դրությունից, ՌԿ(Բ)Կ Հայաստանի կոմիտեն իր ներկու ներկայացուցիչներին (Գ. Տեր-Սիմոնյանին և Ա. Մելքոնյանին) ուղարկում է Ալեքսանդրապոլ՝ տեղում որոշելու ապստամբության հետ կապված հարցերը:

Մայիսի 7-ին ՌԿ(Բ)Կ Հայաստանի կոմիտեի ներկայացուցիչների մասնակցությամբ զրահագնացքում տեղի է ունենում Ալեքսանդրապոլի, Կարսի, Մարիդամիշի, Քավթապոլի, Ղազախի, Ղարաբլիխայի կոմունիստական կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցությունը ղեկավարելու համար ընտրվում է Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտե, որի կազմի մեջ մտան Ս. Մուսայելյանը, Ա. Նուրիջանյանը, Ա. Մելքոնյանը, Գ. Տեր-Սիմոնյանը, Լ. Ուլիբեկյանը, Ա. Գոգունցը, Պ. Պետրոսյանը, Գ. Սարգսյանը և Ա. Տեր-Սահակյանը: Որոշվում է ռազմահեղափոխական կոմիտեներ կազմակերպել նաև շրջաններում: Հայաստանի կարմիր բանակի հրամանատար է նշանակվում կապիտան Ս. Մուսայելյանը:

Մայիսի 10-ին Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն Ալեքսանդրապոլում և ամբողջ Հայաստանում հռչակում է սովետական իշխանություն: Նույն օրը հրապարակվում է նաև Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեի և կարմիր բանակի հրամանատարության համա-

տեղ հայտարարությունը, որի մեջ ասված է. «...Չփափոք գյուղացիության, բանվորների և կարմիր զորքի կամով Հայաստանի կոմունիստական կուսակցության ռազմահեղափոխական կոմիտեն Հայաստանի հանրապետության մեջ հռչակում է սովետական իշխանություն: Այս օրվանից մաուգերիզմի, խմբապետների, սպեկուլյանտների վրա հենված և բռնության, կողոպուտի, ինքնիշխանության վրա հիմնված դաշնակների կառավարությունը տապալված է»:

Այդ նույն հայտարարության մեջ նախատեսվում էին մի շարք միջոցառումներ, որոնց նպատակն էր քաղաքում հեղափոխական կարգ ու կանոն ստեղծելը: Օրվա երկրորդ կեսին ապստամբները մտնում են քաղաք և զրավում փոստ-հեռագրատունը, բանկը և պետական հիմնարկները: Այսպիսով, Ալեքսանդրապոլում տապալվում է դաշնակցականների իշխանությունը և հաստատվում են սովետական կարգեր:

Ուշագրավ է, որ Ալեքսանդրապոլի ամբողջ կայազորը և նրա սպայական կազմը ենթարկվում են նոր իշխանության: Դա պետք է բացատրել այն բարձր հեղափոխական տրամադրությամբ, որով համակվել էր զորքը: Նրբ դաշնակցականների կառավարությունը փորձում է կապիտան Մուսայելյանի վրա ճնշում գործադրել և խաղաղ կերպով վերացնել Ալեքսանդրապոլում սկսված շարժումը, Ս. Մուսայելյանը հրաժարվում է կատարել դաշնակցականների կամքը: Դաշնակցական կառավարության անունից նրանից հեռախոսով անձնատուր լինելու առաջարկ անող զիներալ Գամաղովին նա պատասխանում է. «Կոմունիստական կուսակցության խոր համոզմամբ հայ աշխատասեր գյուղացիության և բանվորների փրկությունը ավելալ պահին միայն խորհրդային իշխանություն հռչակելն է»: Պատասխանելով Գամաղովի այն խոսքերին, թե այժմ հարկավոր է հայրենիքը պաշտպանել արտաքին թշնամիներից, Ս. Մուսայելյանն ասում է. «Կարմիր բանակը իր կարմիր սպայության հետ միշտ էլ պատրաստ է կրծքով պաշտպանելու Հայաստանի աշխատավոր ժողովրդին»: Այնուհետև նա շարունակում է. «Թող չջանան շուռ տալ պատմության անիվը, թող չփորձեն կանգնեցնել իրազարձությունների բնական ընթացքը, դաշնակցական կառավարության երզը արդեն երզված է, և մենք կոչ ենք անում երկրի բոլոր կենդանի ուժերին՝ միավորվել կարմիր զրոշների շուրջը և տառապյալ հայ ժողովրդին դուրս բերել դաշնակների ստեղծած ողբերգական դրությունից»:

Իշխանությունը զրավելուց հետո Ալեքսանդրապոլի բոլշևիկներն անհատապես մի շարք գործնական քայլեր են կատարում այն ամրապնդելու համար: Ստեղծվում են պետական կառավարման տեղական օրգաններ՝ զավառային կոմիսարիատ, ֆինանսների, հողագործության կոմիսարիատներ, արտակարգ հանձնաժողով, պարենավորման խորհուրդ և այլն: Ռազմահեղափոխական կոմիտեի հրամանով բռնագրավ-

վում են Ալեքսանդրապոլում եղած ամերիկյան պահեստները և հսկողութ-
վուն է սահմանվում միերբների բաշխման վրա:

Զինված ապստամբության հաղթանակը քաղաքում ոտքի է հանում
նաև գավառի գյուղացիությանը: Մայիսի 10-ին սովետական իշխանու-
թյուն է հաստատվում Քավթալուի (այժմ՝ Արթիկի շրջանի Փանիկ գյուղ)
շրջանում: Այստեղ գյուղացիների հեղափոխական պայքարը զխավո-
րում էր շրջանային հեղկոմը (նախագահ՝ Ա. Փանյան):

Զինված ապստամբու-
թյունը Կարսում և Մա-
րիղամիշում

Ալեքսանդրապոլից հետո Մայիսյան ապստամբու-
թյան մյուս կարևոր օջախը Կարս քաղաքն էր, որը
մարզային վարչական կենտրոն էր և ռազմա-
ստրատեգիական հանգույց:

Մայիսի 10-ին ցույցերից հետո այստեղ ևս ստեղծվել էր հեղափո-
խական իրադրություն: Քաղաքի բոլշևիկյան կոմիտեի ղեկավարությամբ
կուսակցական կազմակերպությունները մեծ աշխատանք էին կատարում
զինված ապստամբություն նախապատրաստելու համար:

Մայիսի 8-ին ՌԿ(Բ)Կ Հայաստանի կոմիտեի անդամ, երիտասարդ
բոլշևիկ Ղ. Ղուկասյանի ղեկավարությամբ տեղի է ունենում Կարսի կու-
սակցական կազմակերպության զաղտնի ժողովը՝ զորամասերի ներկայա-
ցուցիչների մասնակցությամբ: Ժողովը որոշում է անհապաղ գրավել իշ-
խանությունը: Զինված ապստամբությունը ղեկավարելու համար ընտրը-
վում է ռազմահեղափոխական կոմիտե, որի մեջ մտնում են Ղուկաս
Ղուկասյանը, Դմիտրի Մելիքյանը, Ալեքսանդր Նազարյանը, Վուստ
Ղանչյանը, Արշակ Թովմասյանը և Գրիգոր Բայթունին:

Մայիսի 10-ին, հենվելով բանվորների և կայազորի զինվորների
աջակցության վրա, Կարսի բոլշևիկներն սկսում են զինված ապստամ-
բություն, որի ընթացքում աչքի են ընկնում հատկապես երկաթուղա-
յինները, ավտոգարաժի բանվորները և բերդի հրետանու երկրորդ ու
պարետային վաշտերի զինվորները: Ապստամբությանը միանում են
նաև շրջակա մի քանի գյուղերի, հատկապես Բլագոդարնոե գյուղի
գյուղացիները:

Կոտրելով դաշնակցական կառավարությանը հավատարիմ մնացած
զորքի դիմադրությունը, ապստամբները գրավում են քաղաքային կա-
յարանը, փոստ-հեռագրատունը, բանկը և պետական այլ հիմնարկներ:
Ռազմահեղափոխական կոմիտեն հիմնարկներում նշանակում է քա-
ղաքական կոմիտարներ:

Ալեքսանդրապոլի և Կարսի հեղափոխական իրադարձություններն
իրենց արձագանքն են գտնում Սարիղամիշում: Այստեղ էր կանգնած
4-րդ գունդը, որն աչքի էր ընկնում իր հեղափոխական բարձր տրամա-
դրությամբ: Մայիսի 10-ին ցույցից հետո Սարիղամիշում իշխանու-
թյուն

նր փաստորեն կոմունիստների ձեռքում էր: Քաղաքի կարևորագույն կե-
տերը գտնվում էին հեղափոխական զինվորների հսկողութվան տակ:

Մայիսի 9-ին կազմվում է Սարիղամիշի ռազմահեղափոխական
կոմիտե, որի կազմում էին Անդրանիկ Ճուղուրյանը (Աղոկը), Լիպա-
րիտ Մխչյանը (որը նշանակվում է կարմիր բանակի հրամանատար),
Կարո Կարազաշը, Պավել Կուխմալայիինը, Պյոտր Մատիչկոն, Ալեք-
սանդր Առաքելյանը:

Նախապես կապվելով Ալեքսանդրապոլի ռազմահեղափոխական
կոմիտեի հետ և ստանալով վերջինիս ցուցումը, մայիսի 10-ի լույս 11-ի
գիշերը ռազմահեղափոխական կոմիտեի ղեկավարությամբ ապստամբ
բանվորներն ու զինվորները գրավում են քաղաքային վարչութվան շեն-
քը և հայտարարում սովետական իշխանություն: Ապստամբները գրա-
վում են նաև կառավարական տեղական օրգանները և ձերբակալում
դաշնակցական զործիչներին:

Զինված ապստամբու-
թյունը Նոր Բայազե-
տում

Հայաստանի հեղափոխական շարժումների կարևոր
կենտրոններից մեկն էլ Նոր Բայազետի գավառն էր:
Այստեղ ևս դաշնակցականների կառավարության
նկատմամբ, խոր ատելություն էին լցված ինչպես աշխատավոր գյուղացի-
ները, այնպես էլ գավառում տեղաբաշխված զորամասերի զինվորները:

ՌԿ(Բ)Կ Հայաստանի կոմիտեի հանձնարարությամբ մայիսի 8-ին
Նոր Բայազետ է վերադառնում գավառի կուսակցական կազմակերպու-
թյունների փորձված ղեկավար Հովհաննես Սարուխանյանը, որը Բաղիկ
Բաղիկյանի և տեղի մյուս կոմունիստների հետ միասին ձեռնամուխ է
լինում ապստամբության նախապատրաստման գործին: Շուտով կազ-
մակերպվում է Նոր Բայազետի ռազմահեղափոխական կոմիտե՝ Հ. Սա-
րուխանյանի զխավորությամբ:

Նոր Բայազետի գավառում ապստամբություն սկսվում է մայիսի
13-ին Ն. Ղարանլուղ (այժմ՝ Մարտունի) գյուղից, որտեղ կանգնած էր
դաշնակցական ռազմախիլիցիոներական գունդը: Ապստամբներին միա-
նում են Բասարգեշարից Ն. Ղարանլուղ եկած զինվորները, որոնք դիմա-
դրություն էին ցույց տվել դաշնակցական բանակի հրամանատարությա-
նը և հրաժարվել էին կովել եղբայրական Սովետական Ադրբեջանի դեմ:

Նույն օրը ստեղծվում է Ն. Ղարանլուղի ռազմահեղափոխական կո-
միտե, որի ղեկավարությամբ ապստամբները, գրավելով դաշնակցա-
կան զորքի շտաբը, ձերբակալում են զենքերալ Սիլիկովին և շտաբի մյուս
սպաներին: Ռազմահեղափոխական կոմիտեին կից ստեղծվում է զին-
վորների և գյուղացիների սովետ:

Իրենց ուժերի մի մասը թողնելով Ղարանլուղում, ապստամբները
նույն օրը շարժվում են զեպի գավառի կենտրոն՝ Նոր Բայազետ: Ճա-

5-յիսի 13

նապարհին ապստամբներին են միանում բազմաթիվ զինված գյուղացիներ, ինչպես և դաշնակցական բանակը լքած 700 զինվոր:

Գաշնակցականների դեմ մղած համառ մարտերից հետո ապստամբները մայիսի 17-ին մտնում են Նոր Բայազետ: Տեղական բնակչությունը ջերմորեն է դիմավորում նրանց: Գրավելով փոստը, հեռագրատունը, բանկը և քաղաքի մյուս հիմնարկները, ռազմահեղափոխական կոմիտեն ստեղծում է սովետական իշխանության տեղական օրգաններ: Նոր Բայազետի ապստամբների թիվը հասնում էր 1300 հոգու, որոնց մեջ առանձնապես աչքի են ընկնում երկրորդ գումարտակի զինվորները:

Ապստամբությունը Դիլիջանի գավառում

Գեոևս մայիսի մեկյան ցույցից առաջ Դիլիջանի գավառի կուսակցական կազմակերպությունները եռանդուն գործունեություն էին ծավալել դաշնակցականների խմբապետական ռեժիմի դեմ՝ աշխատավորությանը զինված պայքարի դուրս բերելու համար: Ապրիլի 25-ին Քրդեանում (այժմ՝ Ենոքավան) գումարվում է Դիլիջանի գավառի կուսակցական կոնֆերանսը, որը քննարկում է զինված ապստամբության նախապատրաստման հարցը:

Մայիսի 9-ին Ղրղի գյուղում տեղի է ունենում Շամշադինի շրջանի կուսակցական կազմակերպությունների համագումար, որը նույնպես որոշում է զենք ձեռք բերել և զինել աշխատավորությանը: Ընտրվում է շրջանային կոմիտե և ռազմահեղափոխական կոմիտե:

Գավառում զինված ապստամբությունը ղեկավարելու համար մայիսի 12-ին ստեղծվում է Դիլիջանի գավառային հեղկոմ, որի կազմի մեջ մտնում են Ծ. Ամիրխանյանը (նախագահ), Հ. Յաղոբչյանը, Ե. Մրկերտովյանը, Կ. Ալվազյանը և ուրիշներ: Մայիսի 11-ից սկսած Ղաղախ-Շամշադինի շրջանի գրեթե բոլոր գյուղերում լայն ծավալ են ստանում գյուղացիական ելույթները: Զինվորները մասսայաբար անցնում են ապստամբների կողմը: Մայիսի 15-ին սովետական իշխանություն է հաստատվում շրջանի կենտրոնում՝ Բերդում:

Ձեռք բերված հաղթանակն ամրապնդելու նպատակով ապստամբները որոշում են օգնություն խնդրել Սովետական Ադրբեջանից: Մայիսի 18-ին Բաբու է մեկնում Շամշադինի շրջանի ապստամբների մի խումբ, որը Գ. Օրջոնիկիձեի, Ա. Միկոյանի, Ն. Նարիմանովի աջակցությամբ Սովետական Ադրբեջանից ստանում է 17 վագոն սննդամթերք և հինգ միլիոն ռուբլի դրամ:

Մայիսի 19-ին սովետական իշխանության դրոշ է բարձրացնում Ղաղախ-Քարվանսարայի (Իջևան) շրջանի աշխատավորները: Նույն օրը ապստամբությունը հաղթանակում է Սևբարում, ուր ստեղծվում է գյուղական հեղկոմ: Այնուհետև ապստամբները շարժվում են Քարվանսարա, որտեղ նույնպես սովետական իշխանություն է հաստատվում: Կազմվում

է ռազմահեղափոխական կոմիտե, որի ղեկավարությամբ ապստամբները գրավում են բոլոր պետական հիմնարկները, փոստը, հեռագրատունը և ձերբակալում դաշնակցական պաշտոնյաներին: Մայիսի 21-ին հրապարակվում է Հեղկոմի առաջին հրամանը, որով հռչակվում է սովետական իշխանություն և ազգաբնակչությանը կոչ է արվում անցնելու խաղաղ աշխատանքի:

Մարտական հարձակումը ծավալելու նպատակով ռազմահեղափոխական կոմիտեն դիմում է Սովետական Ադրբեջանի սահմանագլխին կանգնած XI բանակի հրամանատարությանը, խնդրելով օգնություն ցույց տալ ապստամբներին: «Քարվանսարայի գավառում, — Բաբլից Գ. Կ. Օրջոնիկիձեն հեռագրում է Մոսկվա՝ Վ. Ի. Լենինին, — հայտարարված է սովետական իշխանություն: Հայկական կանոնավոր զորամասերի երկու զնդեր անցան ապստամբների կողմը: Հեղկոմը դիմել է մեզ օգնության հնդրում եմ Ձեր անհապաղ կոնկրետ ցուցումները»: XI բանակի 32-րդ զվիլիայի հրամանատարությունը Քարվանսարա է ուղարկում մի ջոկատ, որին տեղական ազգաբնակչությունը դիմավորում է աղու հացով:

Մայիսի 21-ին ապստամբները գրավում են Դիլիջանը: Կազմվում է ռազմահեղափոխական կոմիտե՝ Ե. Մկրտումյանի նախագահությամբ: Այստեղ ապստամբների կողմն է անցնում 6-րդ գունդը: Մայիսի 20-ին սովետական իշխանություն էր հաստատվել նաև Միխայլովկայի (այժմ՝ Կրասնոսելսկ) շրջանում:

Ադրբեջանում սովետական կարգերի հաստատումը և կարմիր բանակի մուտքը Լեռնային Ղարաբաղ հզոր խթան հանդիսացան Զանգեզուրի աշխատավորության հեղափոխական պայքարի վերելքի գործում:

Զանգեզուրի կուսակցական կազմակերպությունները, որոնք Հայաստանի ամենաուժեղ կազմակերպություններից էին, զգալի նախապատրաստական աշխատանք էին կատարել բանվորներին, գյուղացիներին զինված պայքարի դուրս բերելու համար: Մայիսի 5-ին Գորիսում հրավիրվում է կուսակցական ղեկավար աշխատողների խորհրդակցություն, որը քննարկում է զինված ապստամբության կազմակերպման հետ կապված հարցերը և ընտրում գավառային կոմիտեի նոր կազմ՝ հեղափոխական գործիչ Հակոբ Կամարու (Բեջանյանի) նախագահությամբ:

Մայիսի 15—20-ին զինված ապստամբություն է բռնկվում Միտիանի շրջանում: Ապստամբները գրավում են Բռնակոթնում գտնվող ռազմական պահեստը, զինում գյուղացիներին և բանտարկում դաշնակցական պաշտոնյաներին: Մայիսի 24-ին Բռնակոթնում ստեղծվում է ռազմահեղափոխական կոմիտե, որը շրջանում հայտարարում է սովետական իշ

խանություն: Սիսիանի շրջանի ապստամբ զինված ուժերը շուտով միավորվում են, ստեղծվում է կարմիր զորամաս:

Մայիսի 25-ին ստեղծվում է Խնձորեսկի (Գորիսի շրջան) ռազմահեղափոխական կոմիտեն, որը եռանդուն աշխատանք է կատարում ենթաշրջանի գյուղերի աշխատավորության մեջ: Խնձորեսկը Զանգեզուրի ամենահեղափոխական գյուղերից մեկն էր: 1920 թ. մայիսին գյուղում կային 150-ից ավելի զինված կոմունիստներ և նրանց համակրողներ: Մայիսի 28-ին ալստեղ հաստատվում է սովետական իշխանություն: Ապստամբները գրավում են գյուղի դաշնակցական զորքերի շտաբը, զինապահեստը և ձերբակալում շտաբի պետին ու մյուս սպաներին:

Ապստամբության հաղթանակն ապահովելու նպատակով Զանգեզուրի գավառային կոմիտեն կապեր է հաստատում Ղարաբաղի կոմունիստներին ու կարմիր բանակի զորամասերի հետ և խնդրում նրանց օգնությունը ապստամբ բանվորներին ու գյուղացիներին: Սակայն այնտեղ գտնվող Դրոյի և Նժդեհի զինված ուժերը անհամեմատ ավելի շատ էին, որի հետևանքով ապստամբությունը լայն ծավալ չի ստանում: Մայիսին ապստամբություններ տեղի չունեցան Ղափանում և Մեղրիում: XI բանակի օգնությամբ Զանգեզուրում քաղաքացիական կռիվները լայն թափ ստացան հուլիս ամսին:

1920 թ. մայիսին զինված ապստամբության նախապատրաստական աշխատանքներ կատարվեցին նաև Ղարաբաղի խաչուսում, Իգդիրում, Կաղըզվանում, Ղամաբլվում և Հայաստանի այլ վայրերում: Սակայն դաշնակցականներին հաջողվել էր նախօրոք ձերբակալել ապստամբության ղեկավարներին և կանխել հեղափոխական ելույթներն այդ շրջաններում: Համապատասխան աշխատանք չկազմակերպելու պատճառով զինված ապստամբություն տեղի չունեցավ նաև Երևանում, մի հանգամանք, որը խիստ բացասաբար անդրադարձավ ապստամբության ընդհանուր ընթացքի վրա:

Մայիսյան ապստամբության ճնշումը

Մայիսի 5-ին ընկնում է Խատիսյանի կառավարությունը, կազմվում է նոր կառավարություն, որը պետք է վճռական միջոցներով ճնշեր համաժողովրդական ապստամբությունը Հայաստանում: Նորընտիր կառավարությունը բժիշկ Հ. Օհանջանյանի նախագահությամբ ամբողջապես կազմված էր դաշնակցության արևելյան բյուրոյի անդամներից, այդ պատճառով էլ այն երբեմն կոչվում էր բյուրո-կառավարություն: Ստանալով Ալեքսանդրապոլի ապստամբության լուրը, կառավարությունը մեկ ամսով ցրում է պառլամենտը, որի անդամները արտակարգ լիազորություններով գործուղվում են Հայաստանի տարբեր շրջ-

ջանները՝ տեղերում հեղափոխական ելույթներին վերջ տալու նպատակով: Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում և Նոր Բայազետում հիմնվում են արտակարգ դատարաններ և ապստամբների նկատմամբ ընդունում մահապատժի օրենք: Շտապ կերպով կազմակերպվում են պատժիչ ջոկատներ: Դաշնակցականները լայնորեն գործի դրեցին հակաբոլշևիկյան պրոպագանդայի բոլոր միջոցները:

Դաշնակցական կառավարությունն իր ուժերը առաջին հերթին ուղղում է Ալեքսանդրապոլի դեմ, որը ապստամբության գլխավոր կենտրոնն էր:

Ապստամբությունը ճնշելու համար մայիսի 12-ին Ալեքսանդրապոլ է շարժվում խմբապետ Սեպուհի ջոկատը: Դեռ Ալեքսանդրապոլ չհասած, Անի—Աղին գծի վրա, ընդհարում է տեղի ունենում կարմիր զրահագնացքի և Սեպուհի ջոկատի միջև, սակայն վերջինս շրջանցելով երկավիճի, գյուղերով մոտենում է Ալեքսանդրապոլին:

Մայիսի 13-ին, շրջապատելով Ալեքսանդրապոլը, Սեպուհի ուլտիմատում է ներկայացնում ռազմահեղափոխական կոմիտեին՝ առանց կռվի հանձնելու քաղաքը: Ռազմահեղափոխական կոմիտեն սկզբում մերժում է այդ առաջարկը և որոշում պաշտպանվել: Բայց շուտով հարկադրված կոմիտեի անդամները թողնում են քաղաքը և ցրվում տարբեր ուղղություններով: Մայիսի 14-ին Սեպուհի ջոկատը մտնում է քաղաք և դաժան հաշվհարդար տեսնում ապստամբների հետ:

Ալեքսանդրապոլի ապստամբության պարտությունը խիստ բացասաբար է անդրադառնում մյուս վայրերի վրա: Մայիսի 13-ին, համառմարտերից հետո, ճնշվում է ապստամբությունը Կարսում: Չստանալով Ալեքսանդրապոլից և Սարիղամիշից սպասվող օգնությունը, ապստամբների մի խումբ Ղ. Ղուկասյանի ղեկավարությամբ մայիսի 13-ի գիշերը ձեռքում է թշնամու օդակը և, ճանապարհին մարտեր մղելով, շարժվում դեպի Ալեքսանդրապոլ: Սակայն ապստամբներին հետապնդող դաշնակ-մաուղերիստներին հաջողվում է Ալեքսանդրապոլից ոչ հեռու, Արգինայի ձորում տեղի ունեցած անհավասար մարտում կոտրել ապստամբների դիմադրությունը և զազանաբար գնդակահարել 9 հոգու, այդ թվում և բոցաշունչ բոլշևիկ Ղ. Ղուկասյանին:

Մայիսի 19-ին ապստամբությունը ճնշվում է նաև Սարիղամիշում և Նոր Բայազետում: Գեներալ Խանկալամյանի և խմբապետ Սեպուհի գերակշիռ ուժերի ճնշման տակ մայիսի 23-ին ընկնում են նաև Դիլիջանն ու Քարվանսարան: Չնայած դրան, ապստամբները շարունակում են հերոսական դիմադրություն ցույց տալ դաշնակցական զորքերին: Հատկապես Քարվանսարայի և Շամշադինի շրջաններում շարունակվում են պարտիզանական կռիվները, որոնք տևում են մինչև հունիս-հուլիս ամիսը, որից հետո մոտ 2000 ապստամբներ անցնում են Սովետական

Ադրբեջան և միանում կարմիր բանակին: Այստեղ էլ ձևավորվում է հայա-կազմ ապստամբական հատուկ գունդը, որը նշանակալից դեր խաղաց Հայաստանում սովետական կարգերի հաստատման գործում:

Ապստամբությունը ճնշվում է նաև Զանգեզուրում: Սակայն ինչպես Ղազախ-Շամշղադինում, այնպես էլ Զանգեզուրում XI բանակի օգնու-թյամբ ապստամբները շարունակում են իրենց ազատագրական պայ-քարը դաշնակ-խմբապետների տիրապետության դեմ մինչև սովետական կարգերի հաստատումը:

Ճնշելով ապստամբությունը, դաշնակցականներն սկսեցին դաժան հաշվեհարկար տեսնել ապստամբության ղեկավարների ու հարյուրա-վոր մասնակիցների հետ: Ամբողջ Հայաստանում մոլեգնում էր սպի-տակ տեռորը, որին զոհ գնացին Ստ. Ալավերդյանը, Ն. Սարուխանյանը, Ս. Մուսայելյանը, Բ. Ղարիբջանյանը, Ե. Սեյանը, Ե. Փանջանը, Ղ. Ղու-կասյանը, Ա. Ճուղուրյանը, Բ. Բաղիկյանը, Ե. Մկրտումյանը, Բ. Հա-րությունյանը, Վ. Ալեքսեևը, Ա. Մելքոնյանը և ուրիշներ:

Չնայած ապստամբների նկատմամբ կիրառվող հրեշավոր բռնու-թյուններին ու սոսկալի տանջանքներին, դաշնակցականներին չի հաջող-վում ընկճել սովետական կարգերի համար հերոսաբար պայքարող խի-զախ հեղափոխականներին: «Կնոնվեմ կախաղանի վրա, բայց հեղափո-խությանը չեմ դավանանի», — մահից առաջ խիզախորեն հայտարարել է հեղափոխության աննկուն մարտիկ Հ. Սարուխանյանը: 1920 թ. օգոս-տոսի 14-ին, գնդակահարությունից առաջ, Ստ. Ալավերդյանը հայտա-րարել է. «Լա՛վ հիշեցե՛ք, հեղափոխության գործը չի մեռնի, Հայասա-նի բանվորներն ու գյուղացիները տե՛ր կդառնան իշխանության...»: Ս. Մուսայելյանը բաց անելով կուրծքը, դահիճներին է դիմում հետևյալ խոսքերով. «Ես մահից վախեցող չեմ, սպանեցե՛ք ինձ հենց այստեղ, բայց դու՛ք չե՛ք կարող խափանել անխուսափելին, այն, որ Հայաստանը ազատ կլինի և մե՛ր գործը չի մեռնի»: «Հայաստանի հողը, — ասել է Բ. Ղարիբջանյանը, — մե՛ր արյունով կներկվի և կդառնա կառմիր: Մի՛ մո-ռանա՛ք իմ խոսքերը՝ Հայաստանը խորհրդային կդառնա»:

Դաշնակցականներին դեմ պայքարի ելած հեղափոխական մար-տիկների նկատմամբ կատարված բարբարոսությունները բուռն զայրույթ առաջացրին Սովետական Ռուսաստանի և ամբողջ Անդրկովկասի աշխա-տավոր լայն մասսաների մեջ:

Նրանք պահանջում են դադարեցնել կոմունիստների գնդակահարու-թյունները, ձեռքազրկությունները և վայրենի հալածանքները: Ձեռնարկ-ված միջոցառումների շնորհիվ հաջողվեց բանտերից ազատել մի շարք կոմունիստների, փրկել նրանց կյանքը:

Մայիսյան ապստամբության պարտությունը թանկ նստեց հայ ժողովրդին: Եվ դա ոչ միայն այն պատճառով, որ դաշնակցական տե-

որի զոհ դարձան մեր ժողովրդի լավագույն զավակները, այլև այն պատճառով, որ եթե ապստամբությունը հաղթանակեր, ապա չէր լինի 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և, հետևաբար, Թուրքիայի կող-մից այդ պատերազմի ժամանակ զավթված տերիտորիաները կմնային Հայաստանին:

**Մայիսյան ապստամ-
բության պարտության
պատճառները**

1920 թ. մայիսին Հայաստանում առկա էին բոլոր անհրաժեշտ պայմանները սովետական իշխանու-
թյան հաղթանակի համար: Չնայած դրան, Մայիս-
յան ապստամբությունը պարտություն կրեց: Որո՞նք
էին պարտության պատճառները:

ՌԿ(Բ)Կ Հայաստանի կոմիտեն և հայաստանի ռազմահեղափոխա-կան կոմիտեն թույլ տվեցին քաղաքական ռազմատրատեգիական լուրջ սխալներ: Նրանք չկարողացան կիրառել զինված ապստամբության վերաբերյալ մարքս-լենինյան գրույթը, որը ապստամբության կազմա-կերպումը համարում է արվեստ: Նրանք հանդես չբերեցին անհրաժեշտ ճկունություն և վճռականություն համաժողովրդական ապստամբույու-նը ղեկավարելու գործում: Մարքսիզմ-լենինիզմը սովորեցնում է, որ երբ մասսաների հեղափոխական պայքարը վեր է ածվում զինված ապստամ-բության, կուսակցությունը, որպես մասսաների ավանգարդ, պետք է կանգնի այդ պայքարի գլուխ, համարձակ կերպով ուղղություն տա նրան, ամեն կերպ ապահովի նրա վերջնական հաղթանակը: ՌԿ(Բ)Կ հա-յաստանի կոմիտեն հարձակողական գործողություններ ծավալելու փո-խարեն հապաղեց և ապա անցավ պաշտպանության, իսկ «պաշտպան-վելը, — ասում է Կ. Մարքսը, — զինված ապստամբության մահն է»:

Ապստամբության օրերին չկար միասնական և ուժեղ ղեկավարու-թյուն: Մայիսի 7-ին Ալեքսանդրապոլում ստեղծված Հայաստանի ռազ-մահեղափոխական կոմիտեն իր ղեկավարությունը սահմանափակեց միայն Ալեքսանդրապոլով, Հեղկոմը չվերածվեց համահայաստանյան ղեկավար օրգանի: Չկար գործողությունների միասնական պլան և մը-շակված շէր թշնամու վրա միահամուռ ուժերով գրոհելու տակտիկա, որի հետևանքով ապստամբությունները տարբեր վայրերում տեղի ունեցան տարբեր ժամանակ և վերածվեցին անջատ-անջատ ելույթների: Այսպի-սով, շարժման մասնատվածությունը դարձավ Մայիսյան ապստամբու-թյան պարտության գլխավոր պատճառներից մեկը:

Մարքսիզմ-լենինիզմը սովորեցնում է, որ զինված ապստամբության ժամանակ պետք է անխնա լինել թշնամու նկատմամբ, մինչդեռ ապրս-տամբության ղեկավար օրգանները ցուցաբերեցին անվճռականություն, անթույլատրելի բարեհոգություն հակահեղափոխականների նկատմամբ: Ռազմահեղափոխական կոմիտեն կարմիր բանակի շտաբի պետ էր նը-շանակել դաշնակցական ծպտյալ լրտես գնդապետ Կորգանովին, որը,

օգտվելով իր դիրքից, Ս. Մուսայելյանի անունից ինքնագլուխ հրամաններ էր տալիս, աղավաղում նրա հրամանները և թշնամուն հայտնում ռազմահեղափոխական կոմիտեի պլանները: Ռազմահեղափոխական կոմիտեն շնորհակալությամբ հակահեղափոխական տարրերին, որոնք օգտավելով այդ հանգամանքից, եռանդուն միջոցների էին դիմում ապստամբությունը ճնշելու համար: Օրինակ՝ Ալեքսանդրապոլում ազատ շրջում էին միլիցիայի պետ Պահլավունին, Կարսում՝ գեներալ Փիրումովը, նահանգապետ Կորգանովը և ուրիշներ:

Ապստամբության ղեկավարները չկարողացան նաև անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել հեղափոխական իշխանության նոր օրգաններն ամրապնդելու համար: Թույլ էր քաղաքական-կուսակցական և կազմակերպական աշխատանքը գյուղում, չէր ստեղծվել բանվորների և գյուղացիների ամուր դաշինք: ՌԿ(Բ)Կ Հայաստանի կոմիտեն բավարար աշխատանք չէր կազմակերպել անկուսակցական-մասսայական կազմակերպություններում, մանավանդ դաշնակցականների ազդեցության տակ գտնվող արհմիություններում:

Բանակում կազմակերպական-քաղաքական անբավարար աշխատանքի հետևանքով զինվորների մի մասը դարձավ դաշնակցության բուրժուազգայնական քաղաքականության կույր գործիք: ՌԿ(Բ)Կ Հայաստանի կոմիտեն և Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն լրջորեն չէին մտածել նաև զինված ապստամբությունը տեխնիկապես նախապատրաստելու մասին, մի բան, որը շարժական կարևոր էր ապստամբության հաղթանակի համար:

Դաշնակցականների կառավարությունը, օգտվելով ապստամբության ղեկավարման գործում բուլղերիկների թույլ տված սխալներից, կարողացավ առանձին-առանձին ճնշել Հայաստանի տարբեր վայրերում բռնկված հեղափոխական ելույթները: Հայաստանի աշխատավորության ապստամբական շարժումը ճնշելու գործում դաշնակցականներին օգնում էին Հայաստանում եղած բոլոր հակահեղափոխական կուսակցություններն ու կազմակերպությունները՝ կադետները, էսէները, մենշևիկները, սպիցիֆիկները և ուրիշներ, որոնք այդ օրերին մի կողմ էին թողել իրենց ներկուսակցական վեճերն ու տարածայնությունները և սրբազան դաշինք կնքել ծավալվող հեղափոխության դեմ:

Դաշնակցականներն ապստամբների դեմ կարողացան օգտագործել նաև արևմտահայ ռեակցիոն ուժերին՝ մատղերիստական խմբերին:

Մայիսյան ապստամբությունն ինքնին ուղղված էր նաև ամբերիկա-անգլիական գաղութարարների դեմ, ուստի պատահական չէր, որ վերջիններս նույնպես շտապեցին օգնություն ցույց տալ դաշնակցականների կառավարությանը: Դաշնակցականներն իրենք էին խնդրում այդ օգնությունը: «Բուլղերիկները գրավել են Դիլիջանը: Դաշնակցիկներից վրձ-

աբար օգնություն պահանջեց՝», — խուճապահար հեռագրում էր դաշնակցական կառավարության արտաքին գործոց մինիստրը Վրաստանի դիվանագիտական ներկայացուցչին:

Հայաստանի և Անդրկովկասի «գերագույն կոմիտար» Հասկելը Վրաստանի մենշևիկյան կառավարության հետ միասին աշխատում էր տնտեսական բյուրոկրատի և թարգմանի Հայաստանը: Մայիսի 14-ին Հասկելը, որը մայիսյան զինված ելույթներից սարսափահար փախել էր Բթում, պաշտոնապես նախազգուշացրեց, որ իր կառավարությունը կդադարեցնի ալյուրի և մյուս սննդամթերքների բացթողումը, եթե ապստամբները վայր չդնեն զենքը:

Այսպիսով, ապստամբների նյութական ծանր վիճակը նույնպես բացասաբար ազդեց ապստամբության ընթացքի վրա: «Պարենավորման բացակայությունը, — բանտից գրել է Ս. Մուսայելյանը Կովկասյան երկրաբան կոմիտեին ուղարկած նամակում, — և բազմազան պատճառներ ստիպեցին հանձնել քաղաքը առանց կովի»: Ապստամբության ճնշման գործում իրենց սև գործը կատարեցին նաև սպիտակ կազակներն ու դենիկինյան սպաները:

Մայիսյան ապստամբության պարտության պատճառներից մեկն էլ այն էր, որ 11-րդ բանակը ի վիճակի չեղավ այդ օրերին անհրաժեշտ օգնություն ցույց տալ Հայաստանի ապստամբ աշխատավորությանը: Այդ ժամանակ նա զբաղված էր Ադրբեջանում Թուրքիայի կողմից հրահրված հակասովետական խռովությունը ճնշելով: Նրա զորքի մի մասն էլ ուղարկվում էր լեհական դավթիչների և ապա Վրանգելի դեմ կովելու համար:

Մայիսյան ապստամբության ճշգրտակետային

Չնայած Մայիսյան ապստամբությունը պարտվեց, բայց այն մեծ նշանակություն ունեցավ Հայաստանի աշխատավոր մասսաների քաղաքական գիտակցության բարձրացման, Հայաստանի հեղափոխական շարժումների հետագա զարգացման համար: Թեև ռազմական հաղթանակ տարան դաշնակցականները, բայց բարոյաքաղաքական հաղթանակը բուլղերիկների կողմն էր: Մայիսյան ապստամբությունը համաժողովրդական մի հզոր շարժում էր, որը մեծ հարված հասցրեց դաշնակցականների տիրապետությանը:

Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, անկասկած, պատմական անհրաժեշտություն էր: Ապստամբությունը անխուսափելի հետևանք էր սոցիալ-տնտեսական և քաղաքական այն ծանր պայմանների, որոնց մեջ գտնվում էր Հայաստանի աշխատավորությունը դաշնակցականների իշխանության տարիներին: Ուստի պետք է մերժել այն անհիմն ու սխալ պնդումը, թե 1920 թ. հեղափոխական շարժումների հա-

մար Հայաստանում հող չկար և իբր ավելորդ էր Մայիսյան ապստամբությունը:

Մայիսյան ապստամբությունը հանդիսացավ այն պայքարի օրգանական շարունակությունը, որ Հայաստանի աշխատավորությունը կոմունիստների ղեկավարությամբ մղում էր Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը Հայաստանում ապահովելու համար: Լինելով Հոկտեմբերյան հեղափոխության օղակներից մեկը, Մայիսյան ապստամբությունն ունեցավ պատմական մեծ նշանակություն: Նա մի փառապանծ էջ է ո՛չ միայն Հայաստանի, այլև ամբողջ Անդրկովկասի հեղափոխական շարժումների պատմության մեջ, նշանակալից նոր էտապ հայ ժողովրդի մղած ապստամբական պայքարում:

Հայաստանի աշխատավոր մասսաները վերջնականապես համոզվեցին, որ դաշնակցականների և նրանց օտարերկրյա տերերի ծանր լծից իրենց ազատագրությունն անխզելիորեն կապված է ուս մեծ ժողովրդի օգնության և Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների համատեղ պայքարի հետ:

Մայիսյան ապստամբությունը մեծ դաս էր Հայաստանի կոմունիստական կուսակցության, Հայաստանի աշխատավոր մասսաների համար: Նրա հերոսներն իզուր արյուն չթափեցին: «Իսկ քաղաքացիական պատերազմի դպրոցն ապարդյուն չի անցնում ժողովուրդների համար, — գրել է Վ. Ի. Լենինը, — ...այդ դպրոցը ճնշված դասակարգերին սովորեցնում է, թե ինչպես պետք է քաղաքացիական պատերազմ վարել, սովորեցնում է հաղթական հեղափոխություն...»¹:

Հայ ժողովուրդը բարձր է գնահատում Մայիսյան ապստամբության հերոսներին, վառ է պահում նրանց պայծառ հիշատակը: «Այսօր մենք ծունկ չոճենք Ալեքսանդրապոլի հերոսների առաջ, — ասել է Ա. Մյասնիկյանը ապստամբության առաջին տարեդարձի առթիվ տված իր զեկուցման մեջ, — ...Գասեր պիտի առնենք Ալեքսանդրապոլի ապստամբությունից: Ամենագլխավոր դասը դա այն գիտակցությունն է, որ Հայաստանի աշխատավորության համար չկա փրկություն առանց խորհրդային իշխանության»:

Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները, հաշվի առնելով Մայիսյան ապստամբության փորձն ու դասերը, աշխատավոր մասսաներին նախապատրաստեցին հեղափոխական նոր պայքարի՝ հանուն սովետական կարգերի հաստատման:

¹ Վ. Ի. Լենին, երկերի լիակատար ժողովածու, հ. 17, էջ 212:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920 Թ. ԿԵՍԵՐԻՆ

ԱՆՈՒՍՆԻ ԻՄԱԿԵՐԻԱՎԻՍՏՆԵՐԻ ԺԱՆՔԵՐԸ ԱՆՊԵՐԿՈՎԿԱՍԻ ԳՆԱՍՏԱՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒՅԱՆ ԿԱՐԳԻ ԱՎԵՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՆՈՒՄԸ

Անտանտի իմպերիալիստները 1920 թ. գարնանը Սովետական Ռուսաստանի դեմ կազմակերպեցին նոր ինտերվենցիա: Այս անգամ նրանք սովետական երկրի դեմ դուրս բերեցին պանական և հաստանին և Ղրիմում ամրացած Վրանգելի սպիտակ-գվարդիական բանդաներին: Դրանք, Վ. Ի. Լենինի արտահայտությամբ, երկու ձեռքերն էին միջազգային իմպերիալիզմի, որը փորձում էր արյան մեջ խեղդել սովետների երկիրը:

Անգլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի իմպերիալիստները շարունակում էին դորձադրել բոլոր ջանքերը Անդրկովկասը հակասովետական պայքարի պլանցդարմ դարձնելու համար: Զանազան խոստումներ տալով, նրանք Անդրկովկասի բուրժուազգայնական կառավարություններին զրդում էին պայքարի դուրս գալ Սովետական Ռուսաստանի դեմ, ամեն կերպ խեղդել երկրամասում ծավալվող հեղափոխական շարժումները: Անդրկովկասի նացիոնալիստները՝ մենշևիկները, դաշնակցականներն ու մուսավաթականները, բոլոր միջոցներով օգնում էին Սովետական Ռուսաստանի դեմ կազմակերպված ինտերվենցիային: Դենիկինի ջախջախումից հետո նրանք սերտ կապերի մեջ մտան Վրանգելի հետ: 1920 թ. ամռանը Անտանտը ռազմածովային խոշոր ուժեր կենտրոնացրեց Բաթումում, նպատակ ունենալով Վրաստանի և Հայաստանի վրայով անցնել դեպի Սովետական Ադրբեջան և տիրանալ Բաքվի նավթին:

Անտանտի իմպերիալիստները իրենց հակասովետական պայքարի պլաններում մեծ տեղ էին հատկացնում Հայաստանին, այն դիտելով ոչ միայն որպես կարևոր ռազմատարածքային հանգույց, այլև մի տերիտորիա, որը կարելի էր որպես փոխհատուցում զիջել քեմալական թուրքիային, եթե վերջինս համաձայներ իր զինքն ուղղել Սովետական Ռուսաստանի դեմ:

Այսպիսով, Անտանտի իմպերիալիստները, չնայած իրենց կեղծ հայասիրական հայտարարություններին, ձգտում էին Հայաստանը և հայ ժողովրդին զոհաբերել հանուն իրենց իմպերիալիստական պլանների իրականացման: Սակայն Սովետական Ռուսաստանի դեմ պայքարի նրանց բոլոր պլանները ձախողվեցին: Սովետական զինված ուժերը շուտով ջախջախեցին Անտանտի երրորդ արշավանքը ևս: 1920 թ. ամռանը լիվիդազգվեցին նաև Գանձակի և Կովկասի այլ մասերում ծագած հակահեղափոխական խռովությունները:

Սովետական Ռուսաստանի կառավարության և դաշնակցական կառավարության բանակցությունները

Նպատակ ունենալով Հայաստանը դուրս բերել Անտանտի ճիրաններից, Սովետական Ռուսաստանի կառավարությունը իր պատրաստակամությունը հայտնեց բոլոր միջոցներով աջակցություն ցույց տալ հայ ժողովրդին: Այդ նպատակով 1920 թ. մայիսի վերջերին Մոսկվայում դիվանագիտական բանակցություններ սկսվեցին: Հայաստանի դաշնակցական կառավարության հետ սովետական կառավարության անունից բանակցություններ էին վարում ՌՍՖՍՀ արտաքին գործերի ժողովոմ Գ. Չիչերինը և նրա տեղակալ Լ. Կարախանը: Հայաստանի պատվիրակության նախագահն էր գրող Լևոն Շանթը, անդամները՝ Համբարձում Տերտերյանը և Լևոն Զառաֆյանը: Բանակցությունների ժամանակ հիմնականում շոշափվում էին հետևյալ հարցերը՝ Հայաստանի անկախության ճանաչումը Սովետական Ռուսաստանի կողմից, Հայաստանի և Սովետական Ադրբեյջանի սահմանային վեճերը (հատկապես Ղարաբաղի հարցում), հայ-թուրքական հարաբերությունները և հայկական հողերը Հայաստանին միացնելը, Ռուսաստանում և Հյուսիսային Կովկասում բնակվող հայ դաղթականության տեղափոխումը Հայաստան և այլն:

Մոսկվայի բանակցությունները, որոնք տևեցին շուրջ երկու ամիս, ոչ մի արդյունք չտվեցին: Բնորոշ է, որ դաշնակցականների կառավարությունը Մոսկվա գործուղած իր պատվիրակությանը հանձնարարել էր գործել դանդաղ, շտապել, սպասել, մինչև որ Եվրոպա մեկնած պատվիրակությունները վերջնական տեղեկություններ հաղորդեն արևմտյան տերությունների որոշումների ու օգնության մասին: Դաշնակցականների այս երկդիմի ու նենդ քաղաքականությունը ծանր նստեց հայ ժողովրդին:

Մոսկվայում բանակցություններ էին վարվում նաև քեմալական թուրքիայի հետ, որի պատվիրակության նախագահն էր արտաքին գործերի մինիստր Բեքիր Սամի բեյը: Երկուստեք վարվող այդ բանակցությունների ընթացքում պարզվեց, որ թուրքիան ոչ մի զիջում չի ուզում անել Հայաստանին, նույնիսկ պահանջում է Կարսի մարզը, իսկ հայկական պատվիրակությունը, մերժելով Սովետական Ռուսաստանի միջնորդությունը, չէր բավարարվում 3 վիլայեթները (Վանի, Տրապիզոնի, էրզրումի) Հայաստանին միացնելով, պահանջում էր նաև Արևմտյան Հայաստանի մյուս երեք՝ Բիթլիսի, Դիարբեքի, Խարբեքի վիլայեթները: Այս հողի վրա գնալով ավելի էին սրվում Հայաստանի և թուրքիայի հարաբերությունները:

Հավատարիմ իր հռչակած խաղաղասիրական քաղաքականությանը, Սովետական Ռուսաստանի կառավարությունը գործադրում էր բո-

լոր միջոցները խաղաղ կերպով լուծելու երկու երկրների միջև ծագած վիճելի հարցերը: Դեռևս 1920 թ. հունիսի 3-ին Գ. Չիչերինը թուրքիայի ազգային մեծ ժողովին ուղղած նամակում առաջ է քաշում այն հարցը, թե թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայ ժողովուրդը պետք է ինքը տնօրինի իր բախտը: «Սովետական կառավարությունը հուսով է, — ասված է այդ նամակում, — որ դիվանագիտական բանակցությունները ազգային մեծ ժողովին թույլ կտան որոշել մի կողմից թուրքիայի, մյուս կողմից՝ Հայաստանի և Պարսկաստանի միջև ճիշտ սահմաններ, որ պահանջում են արդարությունը և ժողովուրդների ինքնորոշման իրավունքը»: Սովետական Ռուսաստանի կառավարության այդ պահանջը բխում էր Արևմտյան Հայաստանի մասին իր ընդունած 1917 թ. դեկտեմբերի 29-ի դեկրետից:

1920 թվականի հուլիսի 25-ին Ս. Մ. Կիրովը, որն այն ժամանակ ՌՍՖՍՀ-ի լիազոր-ներկայացուցիչն էր Վրաստանում, հայտարարեց, որ «...Մենք պարտավոր ենք օգնել հայերին, նույնիսկ ռազմական ուժով պաշտպանել անկախ Հայաստանի սահմանները: Մենք բոլոր ժողովուրդների առաջ մեր հեղինակությունը չափազանց բարձրացրած կհամարենք, եթե մեզ հաջողվի հայկական հարցը լուծել ոչ թե ջարդերով, ինչպես արել են եվրոպացիները, այլ ապահովելով հայ ժողովրդի անկախությունը»:

1920 թ. հուլիսի 19-ին Սովետական Ռուսաստանի կառավարությունը հատուկ նոտայով դիմեց դաշնակցական կառավարությանը, առաջարկելով իր միջնորդությունը քեմալականների և դաշնակցականների միջև ծագած կոնֆլիկտը վերացնելու և հայ-թուրքական պատերազմը կանխելու համար, բայց մերժում ստացավ: Դաշնակցականների կառավարությունը չկարողացավ և չուզեց ճիշտ ըմբռնել սովետական կառավարության դերը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործում, նա չգնահատեց սովետական կառավարության այն միջոցառումների բացառիկ կարևոր նշանակությունը, որոնք ուղղված էին թուրքական ագրեսորներին սանձահարելու և Հայաստանի վրա նրանց հարձակումը կանխելու նպատակին:

Սովետական Ռուսաստանի կառավարությունը, ցանկանալով բարելավել սովետա-հայկական հարաբերությունները, դաշնակցականներին առաջարկեց բանակցությունները տեղափոխել Երևան: Սովետական պատվիրակության ղեկավարումը հանձնարարվեց Հայաստանի ՌՍՖՍՀ լիազոր-ներկայացուցիչ նշանակված Բորիս Լեգրանին: Սակայն դաշնակցականների կառավարությունը երկար ժամանակ ոչ միայն ձգձգում էր Մոսկվայում բնդհատված բանակցությունների վերսկսումը Երևանում, այլև, Անտանտի դեսպանների թելագրանքով, արգելում էր սովետական պատվիրակության մուտքը Հայաստան:

1920 թ. հուլիս-օգոստոսին Նախիջևանի վրա թուրքական հարձակումը կանխելու և Հայաստանի ու Ադրբեջանի միջև եղած տերիտորիալ վեճերը կարգավորելու նպատակով XI բանակի զորամասերը մտել էին Զանգեզուր, Ղարաբաղ և Նախիջևան: Սակայն հակառակ տեղական բնակչության բուռն ցանկությանը, դաշնակցական զորքերը Դրոյի և Նժդեհի ղեկավարությամբ կատաղի դիմադրություն ցույց տվեցին սովետական բանակին: Մոսկվայի բանակցություններում վիճելի հարցերը չէին լուծվում: Եվ այն բանից հետո, երբ այդ բանակցությունները փակուղու մեջ ընկան, իսկ դաշնակցական կառավարությունն արգելեց կեզրանի մուտքը Երևան, Սովետական Ռուսաստանի կառավարությունը դաշնակցականներին առաջարկեց բանակցություններ վարել Քիֆլիսում՝ անհասպաղ զինադադարի համաձայնագիր կնքելու համար: Այդ բանակցությունների արդյունքը եղավ այն, որ օգոստոսի 10-ին, մինչև հայկական պատվիրակության Մոսկվայից վերադառնալը, Քիֆլիսում ժամանակավոր համաձայնագիր կնքվեց Սովետական Ռուսաստանի և Հայաստանի միջև, որով Ռուսաստանը ճանաչում էր Հայաստանի անկախությունն ու ինքնուրույնությունը, դադարեցվում էին պատերազմական գործողությունները Զանգեզուրի և Նախիջևանի շրջաններում, Շահ-Ֆախտ-Ջուլֆա երկաթգիծը անցնում էր Հայաստանին և այլն: Օգոստոսի 10-ի համաձայնագրի կնքումը շարունակվեց ընդունեցին իմպերիալիստական երկրները: Նրանք դժգոհ էին դաշնակցականների այդ քայլից, սպառնում էին նրանց և պահանջում, որ դաշնակցականները ոչ թե մերձենան Սովետական Ռուսաստանին, այլ շարունակեն իրենց պայքարը նրա դեմ: Այդ նպատակով օգոստոսի վերջերին Երևան ժամանեցին ֆրանսիական միսիոն՝ գնդապետ Կորբելի գլխավորությամբ և անգլիական զերգուլյն կոմիսար Լուկր:

Դաշնակցականների կառավարությունը շտապեց հաղորդել իր տերերին, որ Սովետական Ռուսաստանի հետ կնքված համաձայնագիրը ձևական և ժամանակավոր բնույթ է կրում, որ ինքը առաջվա պես հավատարիմ է մնում դաշնակիցներին: «Հայաստանի կառավարությունը,— հանգստացնում էր վարչապետ Հ. Օհանջանյանը ֆրանսիացի գնդապետին,— չի փոխել իր օրիննաացիան և շարունակում է մնալ հակաբոլշևիկ»: Դաշնակցական կառավարությունն իր հույսը գլխավորապես դրել էր նույն օրը Սևրում կնքված պայմանագրի վրա, արևմտյան տերությունների հետ կապելով հայ ժողովրդի բախտը: Սակայն, երբ ըսկրսվեց թուրքական հարձակումը, դաշնակցականների կառավարությունը հարկադրված եղավ այդ հարցում փոխել իր դիրքը և վերսկսել բանակցությունները կեզրանի հետ Երևանում: Այդ նպատակով հոկտեմբերի 11-ին Երևան ժամանեց սովետական պատվիրակությունը՝ Բ. Կեզրանի գլխավորությամբ: Պատվիրակության մեջ էին Օ. Միլինը,

Ս. Տեր-Գաբրիելյանը, Ա. Բոբրիշևը: Հոկտեմբերի 14-ին սկսվեցին բանակցությունները Լ. Շանթի գլխավորած պատվիրակության հետ:

Շանթի պատվիրակությունն իր կառավարության թելադրանքով այս անգամ ևս ամեն կերպ ձգձգում էր բանակցությունները: Նա Սովետական Ռուսաստանին Հայաստանի վրայով ռազմական տրանզիտի իրավունք տալու համար դիտավորյալ կերպով այնպիսի պայմաններ էր առաջադրում, որոնց մի մասը հնարավոր չէր կատարել: Հայկական պատվիրակությունը համաձայնում էր այդ իրավունքը տալ միայն այն դեպքում, եթե թուրքական զորքերը ետ քաշվեին մինչև Երզնկա, Հայաստանի վրայով փոխադրվող ամբողջ ռազմամթերքի 50 տոկոսը տրվեր դաշնակցականների կառավարությանը, Հայաստանին հանձնվեր Զանգեզուրը և Նախիջևանը, վճարվեր 5 միլիոն ռուբլի ոսկի, հայոց կառավարությունն ընդմիջտ ազատվեր Ռուսաստանի պարտքը վճարելուց և այլն: Այսպիսով, սովետա-հայկական բանակցությունները այս անգամ ևս փակուղու մեջ ընկան:

Քանի որ Սովետական Ռուսաստանի կառավարության քաղաքականությունն ուղղված էր Հայաստանը հակասովետական իմպերիալիստական բուլկից մեկուսացնելու և դրանով հայ ժողովրդին միջազգային իմպերիալիզմի ճիրաններից փրկելու նպատակին, Անտանտի իմպերիալիստները քիչ ջանքեր չթափեցին սովետա-հայկական բանակցությունները վիժեցնելու համար: Բրիտանական իմպերիալիզմի ներկայացուցիչ զեներալ Ստոքսը դաշնակցականներին խորհուրդ էր տալիս այնպիսի պայմաններ առաջարկել կեզրանին, որ Սովետական Ռուսաստանը ստիպված լինի հրաժարվել դրանք ընդունելուց: Եվ երբ նա ծանոթանում է այդ պայմաններին, ասում է. «Եթե ինձ առաջարկեին այսպիսի պայմաններ, ես 24 ժամվա ընթացքում կհեռանայի ձեր սահմաններից և կդադարեցնեի բանակցությունները: Կեզրանն էլ երևի այդպես կըվարվի: Այս պայմանները շատ լավ են: Սա ապացուցում է, որ դուք համաձայնություն չեք փնտրում սովետական իշխանության հետ. առաջարկեցեք այս պայմանները և վստահ եղեք, որ մենք ամեն աջակցություն ցույց կտանք ձեզ»: Սակայն մեծ է լինում դաշնակցականների և նրանց եվրոպական «հովանավորների» դարմանքը, երբ սովետական միսիոն, հակառակ Ստոքսի ակնկալություններին, չի խզում հարաբերությունները և չի հեռանում Հայաստանի սահմաններից, այլ համաձայնում է դաշնակցականների առաջարկած մի շարք պայմաններին: Ավելին, սովետական ներկայացուցիչներն անում են մի շարք լրացուցիչ առաջարկներ, որոնք միանգամայն ձեռնառու էին հայ ժողովրդին:

Սովետա-հայկական բանակցությունները վերջիվերջո ավարտվեցին նրանով, որ, հիմք ընդունելով օգոստոսի 10-ին Քիֆլիսում կնքված համաձայնագիրը, հոկտեմբերի 28-ին Սովետական Ռուսաստանի և

Հայաստանի կառավարությունների միջև կնքվեց պայմանագիր Առվե-տական Ռուսաստանի կառավարության կողմից հայկական հանրապե-տությունը ճանաչելու և վիճելի հարցերը խաղաղ կերպով կարգավորելու մասին: Պայմանագրի առաջին կետում նշված էր, որ ՌՍՖՍՀ կառա-վարությունը արդարացի է գտնում «Թուրքահայաստանի» մարզերի միացումը Հայկական հանրապետությանը և պատրաստ է այդ գործում Հայաստանի կառավարությանը ցույց տալ իր բարեկամական աջակ-ցությունը: Պայմանագրի 4-րդ հոդվածով Սովետական Ռուսաստանը ընդունում էր, որ Հայկական հանրապետության կազմի մեջ են մտնում Երևանի և Կարսի նահանգները (բացառությամբ Նախիջևանի գավառի) և Երիզավետպոլի նահանգի Ղազախի գավառի հարավային մասը (Քար-վանասարա, Դիլիջան): Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունների միջև Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի գավառների պետական պատկանելիության հարցը համաձայնությամբ չլուծվելու դեպքում, պետք է անցկացվեր հանրաքվե:

Պայմանագրի համաձայն Սովետական Ռուսաստանի կառավարու-թյունը պարտավորվում էր Հայաստանին անվերադարձ բաց թողնել 2,5 միլիոն ռուբլի վարկ (ոսկով), նրա մեկ տարվա պահանջի շահով նավթ, ապրանքային վազոններ, բամբակազտիչ գործարանի սարքավո-րում և այլն:

Սակայն թուրքական հարձակման ուժեղացման և Հայաստանի ռազմական անհաջողությունների պատճառով հոկտեմբերի 28-ի պայ-մանագիրը չիրագործվեց, որը ծանր հետևանքներ ունեցավ հայ ժողո-վրդի համար: Դրությունն այլ կլինեք, եթե դաշնակցական կառավարու-թյունը այդ պայմանագրի կնքումը չձգձգեր և այն մի քանի ամիս շուտ կնքվեր: Այն ժամանակ չէր լինի թուրքական հարձակումը Հայաստանի վրա և հայ ժողովուրդը ծանր դրության մեջ չէր ընկնի:

1920 թ. թուրք-հայկա-կան պատերազմը

1920 թվականի երկրորդ կեսին գնալով ավելի սրը-վեցին Հայաստանի և Թուրքիայի հարաբերություն-ները: Առաջին համաշխարհային պատերազմում

հաղթանակած պետությունները 1920 թ. օգոստոսին Սևրում հաշտու-թյան պայմանագիր էին կնքել Թուրքիայի սուլթանական կառավարու-թյան հետ, մինչդեռ ապրիլի 23-ին Անկարայում գումարված Ազգային մեծ ժողովը՝ Մուստաֆա Քեմալ փաշայի գլխավորությամբ, երկրի իշխա-նությունը վերցրել էր իր ձեռքը, հրաժարվելով ճանաչել սուլթանական կառավարության կնքած պայմանագրերը: Քեմալականները ձգտում էին վերականգնել Օսմանյան կայսրության նախկին բոլոր սահմանները:

Դրան հակառակ, դաշնակցականները, հենվելով Սևրի պայմանա-գրի վրա, ձգտում էին ստեղծել միացյալ ու անկախ Հայաստան: Դաշ-նակցական կառավարությունը դեռևս 1919 թ. մայիսի 28-ին գրավոր

հայտարարություն էր հրապարակել «միացյալ և ազատ Հայաստանի» անկախության մասին: Հայտարարության մեջ ասված էր, որ Հայաստա-նի կառավարությունը այսուհետև իր իշխանությունը տարածում է նաև Արևմտյան Հայաստանի վրա:

Պատերազմը նախապատրաստվում էր երկուստեք: Սակայն պետք է նշել, որ դաշնակցականների մեղքը ոչ թե այն էր, որ նրանք ձգտում էին միավորել հայկական վաղեմի հողերը, դա հայ ժողովրդի արդարացի պահանջն էր, այլ այն, որ նրանք, սխալ ուղի էին ընտրել՝ հարցի լու-ծումը կապում էին Անտանտի իմպերիալիստների օգնության հետ: Դաշ-նակցականների այդ քաղաքականությունը ծանր նստեց մեր ժողովրդի վրա, շատ զոհեր խլեց նրանից:

Քեմալականները զավթողական պլաններ ունեին նաև Անդրկովկա-սի նկատմամբ: Թուրք ջարդարարները որոշել էին մեկեկես միլիոն արևմտահայերի կոտորելուց հետո օկուպացնել նաև Արևելյան Հայաստա-նը և վերջնականապես իրականացնել հայ ժողովրդին բնաջնջելու իրենց հրեշավոր պլանը: Այդ նպատակով քեմալական բանակները կազմ ու պատրաստ կանգնած էին Արևելյան Հայաստանի սահմանագլխին և հար-մար առիթի էին սպասում հարձակման համար:

1920 թ. հունիսին ռազմական կոնֆլիկտ տեղի ունեցավ Թուրքիայի և Հայաստանի միջև: Ստանալով Անգլիայից և մասամբ Ֆրանսիայից ռազմական որոշ օգնություն, դաշնակցական զորքերը հունիսի 18-ին ռազմական զործողություններ սկսեցին և գրավեցին Կարսի մարզի՝ քարածխով հարուստ Օլթիի շրջանը: Օլթիի վրա հարձակվելիս դաշնակ-ցական կառավարությունը հենվում էր 1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուղղոսում կնքված պայմանագրի վրա, որի համաձայն թուրքերը պետք է իրենց զորքերը լիովին հանեին նաև Կարսի մարզից, վերա-կանգնելով ռուսական կայսրության հետ ունեցած 1914 թ. սահման-ները: Սակայն քեմալական կառավարությունը, չճանաչելով Մուղղոսի և ապա Սևրի պայմանագրերը, պնդում էր, որ տերիտորիալ հարցերում ինքը հիմք է ընդունում Բրեստի և Բաթումի պայմանագրերը, որոնց համաձայն դաշնակցական զորքերը ոչ միայն պետք է դուրս դաշին Օլ-թիի շրջանից, այլև պետք է Թուրքիային վիչեին Արևելյան Հայաստանի տերիտորիայի կեսից ավելին: Քեմալական կառավարությունն անտեսում էր այն հայտնի իրողությունը, որ Սովետական Ռուսաստանը 1918 թ. աշնանը չեղյալ էր հայտարարել Բրեստի պայմանագիրը, իսկ ինչ վերա-բերում է Բաթումի պայմանագրին, ապա այն չէր վավերացվել երկու կողմերի կառավարությունների կողմից: Թուրքական կառավարությունը Հայաստանի կառավարությունից պահանջեց հտ քաշվել Օլթիից, բայց, մերժում ստանալով, նորից գրավեց այն:

Արևելյան Հայաստանի վրա հարձակվելիս թուրքական կառավարու-

Թյունը օգտագործում էր նաև դաշնակցական կառավարության հակասովետական դիրքը, որի հետևանքով երկիրը փաստորեն մեկուսացվել էր և անպաշտպան մնացել թուրքական հարձակման հանդեպ: Վերահաս աղետը սկսեց սպառնալ հայ ժողովրդի կենդանի մնացած մի զգալի հատվածի ֆիզիկական գոյությունը:

Թուրք-հայկական պատերազմի սանձազերծման գործում քիչ դեր չխաղացին Անտանտի պետությունները (գլխավորապես Անգլիան), որոնք մի կողմից դաշնակցականներին գրգռում էին Թուրքիայի դեմ, զինում նրանց, մյուս կողմից՝ իմպերիալիստական, հակասովետական բլոկի մեջ ներգրավելու նպատակով սիրաշահում էին Թուրքիային ու հրահրում հարձակվել Հայաստանի վրա:

1920 թ. սեպտեմբերի 22-ին թուրքական 30 հազարանոց բանակը Բյազին-Կարաբեքիր փառայի հրամանատարությունը անցավ հայ-թուրքական սահմանը: Չկարողանալով լուրջ դիմադրություն ցույց տալ, դաշնակցական բանակը թշնամու առաջին իսկ հարվածից հետո սկսեց նահանջել: Սեպտեմբերի 29-ին թուրքական բանակը գրավեց Սարիղամիշն ու Կողզվանը: 1920 թվականի հոկտեմբերի 9-ին հանդես գալով ՌԿ(Բ)Կ Մոսկվայի կազմակերպության ակտիվի խորհրդակցությունում, Վ. Ի. Լենինն ասել է. «Վերջերս թուրքերը հարձակում են սկսել Հայաստանի վրա, նպատակ ունենալով գրավել Բաթումը, իսկ հետո, կարող է նաև Բաքուն»¹:

Թուրքական բանակը հոկտեմբերի 30-ին գրավեց Կարսը և շարժվեց դեպի Ալեքսանդրապոլ: Կարսի աղետը ծանր նստեց հայ ժողովրդի վրա: Հայկական թույլ բանակը չդիմացավ թուրքական արյունարբու հորդաների հարձակմանը:

Կանգնած լինելով անխուսափելի պարտության առջև, դաշնակցականները նոյեմբերի 3-ին թուրքական զավթիչներից հաշտություն են խնդրում: Երկու կողմերի միջև նոյեմբերի 6-ին կնքված զինադադարի պայմանների համաձայն թուրքերը հաջորդ օրը գրավում են Ալեքսանդրապոլը իր շրջակայքով:

Անկարող լինելով սեփական ուժերով կովել թշնամու դեմ, դաշնակցական կառավարությունը սեպտեմբերին դիմում է Անգրկովկասում Անգլիայի ներկայացուցիչ Ստոքսին, ինչպես և Ֆրանսիայի ու այլ պետությունների ներկայացուցիչներին: Հոկտեմբերին դաշնակցական կառավարության ներկայացուցիչը Եվրոպայում դիմում է Ազգերի լիգային, տեսակցություն է ունենում Ֆրանսիայի կառավարության նախագահի, Ֆրանսիայում ամերիկյան դեսպանի և ուրիշների հետ, դիմում է նաև մարշալ Ֆոշին, բայց այդ բոլոր դիմումներն անհետևանք են մնում: Սա-

րիղամիշի անկումից հետո, հոկտեմբերի 3-ին, Ստոքսը գալով Երևան, դաշնակցականների կառավարությանը հայտնում է, որ «...Անգլիան անգոր է այժմ ունալ օգնություն հասցնել Հայաստանին»: Նոյեմբերի 5-ին՝ Ալեքսանդրապոլի անկման նախօրյակին, դաշնակցական կառավարությունը վերջին անգամ դիմում է ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնին, Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի արտաքին գործերի մինիստրներին, նորից օգնություն է խնդրում նրանցից, սակայն այս անգամ ևս այդ դիմումները մերժվում են:

Լինելով անհեռատես քաղաքագետներ, դաշնակցականները չէին ուզում ըմբռնել, որ արևմտյան իմպերիալիստական տերությունները շահագրգռված էին թուրքական ինտերվենցիայով Անգրկովկասում և որ հայ ժողովրդի ողբերգական ծանր վիճակի համար այդ կեղծավոր ու խարերա «քաղաքակիրթ» դաշնակիցները պակաս մեղավոր չեն: Պարզից էլ պարզ էր, որ Անտանտի տերությունները Մոսկոյի համաձայնագրով և Սերի պայմանագրով նպատակ ունեին ոչ թե բավարարել հայ ժողովրդի արդարացի պահանջը, այլ, այդ տերիտորիաները Թուրքիայից խլելով, զազուխացնել դրանք, դարձնել պլացդարմ՝ մի կողմից Սովետական Ռուսաստանի, մյուս կողմից՝ Թուրքիայի դեմ մղվող պայքարում:

Թուրքական զավթիչները տեսնելով, որ դաշնակիցները չեն օգնում հայերին, իսկ դաշնակցականներն էլ մերժել են Սովետական Ռուսաստանի օգնությունը, ավելի ու ավելի են առաջանում դեպի Հայաստանի խորքերը՝ մահ և ավերածություն սփռելով գրափած շրջաններում:

Այն բանից հետո, երբ թուրքական զորքերը գրավում են Ջաջուրը, Իզդիրը և շարժվում դեպի Երևան, նոյեմբերի 16-ին դաշնակցական կառավարությունը ստիպված է լինում ընդունելու Թուրքիայի առաջարկած զինադադարի նոր և անհամեմատ ավելի ծանր պայմանները:

Թշնամու առջև իրենց նահանջելը դաշնակցականները փորձում էին բացատրել միայն բանակի փոքրաթիվությամբ ու անբավարար զինվածությամբ, մինչդեռ դաշնակցական բանակի պարտությունը առաջին հերթին Հայաստանի սոցիալ-տնտեսական և ռազմաքաղաքական ծանրը վիճակի հետևանքն էր: Երկիրն ապրում էր տնտեսական փլուզում, բանակը բարոյալքված էր, նրա ապաշնորհ հրամանատարները, ինչպես և վերջիններիս հետ անընդհատ ընդհարման մեջ գտնվող խմբապետները, ռազմական գործողությունները ղեկավարելու փոխարեն զբաղված էին կողոպուտով: Նրանք հեղինակություն չունեին զինվորների մեջ, չէին վայելում նրանց վստահությունը:

Հայկական բանակի պարտության գործում պակաս դեր չխաղաց նաև այն, որ, մի կողմից թուրքերը, մյուս կողմից դաշնակցականները, լուրեր տարածելով այն մասին, թե իբր քեմալականները Սովետական Ռուսաստանի դաշնակիցներն են, դեպի Սովետական Ռուսաստան կողմ-

¹ В. И. Ленин, Полное собрание сочинений, т. 41, стр. 339—340.

նորոշված հայ զինվորների մի մասի մեջ ստեղծել էին այն համոզումը, որ եթե այդպես է, է՛լ ինչու կովենք թուրքերի դեմ:

Ինչպես միշտ, այս անգամ ևս թուրք բարբարոսներն անըուր շարագործություններ կատարեցին իրենց գրաված շրջաններում: Նրանք ավերում էին Հայաստանի քաղաքներն ու գյուղերը, անխնա ոչնչացնում և կողոպտում տեղական բնակչությանը: Պաշտոնական տվյալներով 1920 թվականին Հայաստանում թուրք ջարդարարների ձեռքով սպանվել է մոտ 60 հազար մարդ, որից 30 հազարը երեխաներ և կանայք, վիրավորվել է 56 հազար և սովից, ցրտահարությունից ու համաճարակներից մահացել 32 հազար մարդ: Թուրքերը գրաված վայրերից բռնություններ գեպի Թուրքիայի խորքերն են բռնել ավելի քան 8000 մարդ, որոնց օգտագործել են ծանր հարկադիր աշխատանքներում:

Ոչ լրիվ տվյալներով թուրք զավթիչները միայն Ալեքսանդրապոլի գավառից տարան և ոչնչացրին մոտ 20 միլիոն ռուբլու (ոսկով) գույք և զանազան այլ արժեքներ:

Սովետական Ռուսաստանի խաղաղասիրական և որ առաջարկը

Սովետական կառավարությունը շէր կարող անտարբեր մնալ արյունաքամ եղող հայ ժողովրդի բախտի նկատմամբ: Բացի այդ, Թուրքիայի ռազմաքաղաքական պլանների իրականացումը, վտանգ էր ստեղծում նաև Սովետական Ռուսաստանի և, առաջին հերթին, Սովետական Ադրբեջանի համար: Վ. Ի. Լենինը հոկտեմբերի 12-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյին հասցեագրած նամակում առաջարկում էր հաստատել Չիչերինի ներկայացրած 3 առաջարկները՝ Հայաստանում սովետական իշխանություն հաստատելու, թուրքերի հետագա հարձակումը կանգնեցնելու և նոր, սովետական կառավարությանն աջակցելու մասին¹: 1920 թ. նոյեմբերի 21-ին ՌԿ(բ)Կ Սոսկվայի նահանգային կոնֆերանսում արտասանած ճառում, անդրադառնալով Կովկասում ստեղծված դրությունը, Վ. Ի. Լենինն ասել է. «Կովկասում ներկայումս հյուսվում են շատ բարդ պայմաններ, որ վերին աստիճանի դժվար է ըմբռնել, ըստ որում մեր վզին կարող է պատերազմ փաթաթվել նույնիսկ օր-ավուր»²: Հետագայում, 1920 թ. դեկտեմբերի 21-ին, սովետների համառուսաստանյան VIII համագումարի ՌԿ(բ)Կ ֆրակցիայի նիստում նա ասել է. «Թուրքական հարձակումը մեր դեմ էր ուղղված... Թուրքիան ղեկավարում են կադետները, օկտյաբրիստները, ազգայնականները, որոնք պատրաստ են մեզ վաճառելու Անտանտին»³:

Հայաստանի համար այդ ծանր օրերին, 1920 թ. նոյեմբերի 11-ին

ՌՍՖՍՀ կառավարությունը հեռագրով կրկին դիմում է Հայաստանի և Թուրքիայի կառավարություններին, հայտնելով, որ իր վրա է վերցնում միջնորդի դերը երկու կողմերի միջև հաշտություն կնքելու գործում և այդ նպատակով ռազմական գործողությունների շրջանն է ուղարկում իր լիազոր-ներկայացուցիչ Բ. Մդիվանուն: Վերջինս և Բ. Լեգրանը, նոյեմբերի 19-ին ժամանելով Երևան, հանդիպում են ունենում դաշնակցական կառավարության պատվիրակության հետ, որին գլխավորում էր վարչապետ Հ. Օհանջանյանը: Այդ նույն նիստի արձանագրության մեջ նշված է, որ սովետական պատվիրակությունն իր խնդիրն է համարում «...Թուրքիային ստիպել նահանջելու Ռուսաստանի նախկին՝ 1914 թվականի սահմանը»: Բանակցությունների ժամանակ սովետական պատվիրակության նախագահը հայտարարում է, որ եթե Հայաստանի կառավարությունը դիմի սովետական կառավարությանը ռազմական օգնություն ստանալու համար, ապա նա այդպիսին կստանա:

Սակայն արևմտյան իմպերիալիստներին ապավինած դաշնակցականներն այս անգամ ևս մերժում են սովետական օգնությունը, որոշում են առանց Սովետական Ռուսաստանի միջնորդության, Ալեքսանդրապոլում անհնարադ հաշտության բանակցություններ սկսել Թուրքիայի հետ: Արևմտյան տերությունները դաշնակցականներին խորհուրդ էին տալիս, որ ավելի լավ է ընդունել թուրքերի պայմանները, քան Սովետական Ռուսաստանի օգնությունը:

Սովետական Ռուսաստանը պարզ տեսնում էր, որ Անտանտի իմպերիալիստները քեմալականներին օգնում են իրենց հակասովետական պլաններն իրականացնելու նպատակով և որ այդ քաղաքականության գոհերից մեկն էլ Հայաստանն է դառնալու: Հենց այդ նկատի ունեւր Գ. Չիչերինը, երբ 1920 թ. նոյեմբերի 5-ին Բ. Լեգրանին ուղղած դիրեկտիվնամակում գրում էր, թե վերջին ժամանակներս Անտանտը մեծ ակտիվություն է հանդես բերում Մերձավոր Արևելքում, անդրկովկասյան բանակցություններ է վարում քեմալականների հետ, խոստանում է վերանայել Սևրի պայմանագիրը, այդ թվում զիջել Հայաստանը, միայն թե Թուրքիան հանդես գա Սովետական Ռուսաստանի դեմ: Այդ դառը ճըրմարտությունը խոր ծերություն տարիներին ստիպված եղավ խոստովանել Մեծ Բրիտանիայի կառավարության նախագահ Լոյդ Ջորջը, իր հուշերում ուղղակի գրելով, թե «Հայաստանը մեր զոհն էր»:

Սովետական Ռուսաստանը վարում էր հակառակ քաղաքականություն: Նա քեմալական Թուրքիային զենք և ոսկի տվեց իմպերիալիզմի դեմ ուղղված նրա պայքարին օգնելու նպատակով, սակայն երբ պարզվեց, որ քեմալականները այդ զենքի մի մասն օգտագործում են արևելյան ռազմաճակատում, ներխուժելով Արևելյան Հայաստան՝ իբր այն դաշնակցականների լծից ազատագրելու նպատակով, սովետական կառա-

¹ В. И. Ленин, Полное собрание сочинений, т. 54, стр. 432, 717.

² Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 520:

³ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 42, էջ 271:

վարությունը որոշեց անհապաղ դադարեցնել գեների մատակարարումը Թուրքիային, մինչև որ նա շղաղարեցնի հարձակումը Հայաստանի վրա: «Թուրքերը հայտարարում են, — նույնիսկ 7-ին գրել է Չիչերինը Լեզ-րանին, — որ իբր իրենք ուզում են Հայաստանը ազատագրել դաշնակցա-կաններից. դա խաբեություն է, պետք է դադարեցնել նրանց գեներ բաց բողոքը, մինչև որ նրանք գինեղադար չկնեն»:

Ալեքսանդրապոլի պայմանագիրը

1920 թվականի աշնանը, երբ Հայաստանը պարտ-վել էր պատերազմում, դաշնակցական կառավարու-թյունը երկրի ներսում աճող հեղափոխական շար-ժումները կանխելու նպատակով շրջադարձ կատարեց դեպի Թուրքիան: Դաշնակցականները հույս ունեին, առանց Սովետական Ռուսաստանի մի-ջամտության, Թուրքիայի հետ հաշտության պայմանագիր կնքելով փրկել իրենց իշխանությունը, Թուրքիայի օգնությամբ կանխել սովետա-կան իշխանության հաստատումը Հայաստանում: «Իր փրկության համար Հայաստանն ունի մի ճանապարհ, — 1920 թ. նոյեմբերի 20-ին գրում էր դաշնակցական «Հառաջ» թերթը, — գտնել անմիջական կերպով մի ընդ-հանուր լեզու իր հարևանի՝ Թուրքի հետ: Եթե հայ ժողովուրդը կամենում է ապրել և ապահովել իր պետական և ֆիզիկական գոյությունը հարա-տևորեն, նա պետք է ունենա ոչ թե ռուսական, այլ թուրքական օրինե-տացիա»: Դրանից առաջ, երբ վրաստանում դաշնակցական կառավա-րության ներկայացուցիչ Տ. Բեկզադյանը նոյեմբերի 11-ին Ստոքսի հետ ունեցած իր զրույցի մասին հաղորդում է Երևան, դաշնակցական կառավարությունը նրան հետևյալ ցուցումն է տալիս. «Այժմ աշխատե-ցեք այնպիսի հիմք գտնել, որը կկարողանար համաձայնեցնել մեր, քե-մալական և անգլիական շահերը: Աշխատեցեք Ստոքսի միջոցով կապեր հաստատել քեմալականների հետ»:

Քեմալականները պակաս շահագրգռված չէին ժամ առաջ հաշտու-թյան պայմանագիր կնքելու մեջ, որպեսզի օրինականացնեն իրենց զավ-թումները Հայաստանում ու կանխեն այնտեղ սովետական իշխանության ստեղծումը և նրա շահերը պաշտպանող Սովետական Ռուսաստանի կա-ռավարության հետագա միջամտությունը:

Նոյեմբերի 24-ին դաշնակցական կառավարության արտաքին գոր-ծոց մինիստր Ա. Խատիսյանի նախագահությամբ հայկական պատվի-րակույթյունը Երևանից ժամանում է Ալեքսանդրապոլ, որտեղ գեներալ Քյաղիմ Կարաբեքիրի զլխավորած թուրքական պատվիրակության հետ սկսում է հաշտության բանակցություններ: Դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը ժամը 2-ին, երբ արդեն Հայաստանը հայտարարված էր սովետա-կան հանրապետություն, Ալեքսանդրապոլում կնքվում է Հայաստանի համար ստրկացուցիչ, ըստ էության անօրինական պայմանագիր, որը ինչպես պատմաբան Լեոն է ասում. «Պիտի մնա դաշնակցության հավի-

տենական ամոքն ու խայտառակությունը»: Ալեքսանդրապոլում հայկա-կան պատվիրակությունը կարող էր թուրքական պատվիրակության հետ չկնքել հաշտության այդ ծանր պայմանագիրը նաև այն պարզ պատճա-ռով, որ դաշնակցական կառավարությունը դրանից 12 ժամ առաջ Երե-վանում ստորագրել էր իր կապիտուլյացիայի ակտը, որի մասին պատ-վիրակությունը գիտեր:

Այդ հարցում մեծ մեղք ունի նաև Դրոն, որը դեկտեմբերի 2-ին Ա. Խատիսյանի հետ ունեցած հեռախոսային խոսակցության ժամանակ տված իր երկդիմի պատասխաններով ոչ միայն չկանխեց պայմանա-գրքի կնքումը, այլ դավաճանաբար նպաստեց այդ խայտառակ ակ-տին: Միանգամայն պարզ է, որ թե՛ Ալեքսանդրապոլի պատվիրակու-թյունը և թե՛ նրան հրահանգավորող Հայաստանի կառավարության ղե-կավարները հույս ունեին, որ այդ պայմանագիրը կարող է հիմք դառ-նալ հետագայում հայ-թուրքական դինակցությամբ տապալելու սովե-տական իշխանությունը Հայաստանում:

Միանգամայն ճիշտ բնութագրելով Ալեքսանդրապոլի պայմանա-գրքի հակասովետական էությունը, ՍՍՀՄ արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինը 1925 թ. մարտին Ալեքսանդրապոլի զավառային սովետ-ների համագումարում արտասանած ճառում ասել է. «Դա այն ժամա-նակն էր, երբ դաշնակցականները այստեղ օտար պետության հետ կըն-քեցին դաշինք, որով նրանք գրեթե ամբողջ Հայաստանը դրեցին թշնամի պետության հովանավորության տակ, որպեսզի օգտվեն այդ պետու-թյան օգնությունից՝ կռվելու համար ներքին թշնամու դեմ... Դաշ-նակցականների կուսակցությունը, որն իբր թե կռվում էր հայ ժողո-վրդի ազգային ազատագրության համար, այդ պայմանագրով վերջ-նականապես վաճառեց հայ ժողովրդի անկախությունը»:

Այսպիսով, տապալված դաշնակցականների կառավարությունը, մի կողմից հարկադրված եղավ խոնարհվել ժողովրդի կամքի առաջ և տո-րագրել իր մահախոսականը, մյուս կողմից՝ արդեն իշխանություն չու-նենալով, իր ներկայացուցիչների միջոցով Թուրքիայի հետ Ալեքսանդրա-պոլում կնքել հայ ժողովրդի համար ծանր, անօրինական մի պայմա-նագիր: Դրանով դաշնակցականները, որոնք երեք տասնամյակ շարունակ հանդես էին գալիս որպես հայ ազգի շահերի պաշտպան, վավերացրին Հայաստանի տերիտորիայի մի զգալի մասի զավթումը քեմալական Թուր-քիայի կողմից, իսկ մնացած փոքրիկ Հայաստանն էլ ստրկական կախման մեջ դրեցին Թուրքիայից: Դա մեծագույն դավաճանություն էր հայ ժողո-վրդի նկատմամբ:

Ալեքսանդրապոլի պայմանագրով դաշնակցականները հրաժարվում էին Աերի պայմանագրից, Հայաստանի տերիտորիան հավասարվում էր 1918 թ. Բաթումի պայմանագրով որոշված տերիտորիային: Թուրքիան

Արևելյան Հայաստանից կրկին զավթում էր ^{խաղաղ} Կարսը, Սարիղամիշը, Օլթին, Արդահանը, Սուրմալուն, Երևանի գավառի մի մասը, Հայաստանին թողնելով միայն 9,5 հազար քառ. կմ տարածություն: Թուրքիան Հայաստանից անջատում էր նաև Նախիջևանն ու Շարուրը: Հայաստանին թողնված տերիտորիայում փաստորեն սահմանվում էր թուրքական գերիշխանություն: Հայաստանը զինաթափվում էր. նա իրավունք ուներ պահել միայն 1500 զինվոր 8 թնդանոթ և 20 զնդացիր: Թուրքիային իրավունք էր վերապահվում ռազմական գործողություններ վարելու Հայաստանի տերիտորիայում և ձեռք առնելու Թուրքիայի անվտանգության շահերից բխող այլ միջոցներ: Այդ բոլորի դիմաց Թուրքիան խոստանում էր դաշնակցականներին օգնել սովետական իշխանությունը Հայաստանում տապալելու խնդրում: «Իր կողմից, Թուրքիայի... կառավարությունը, — ասված է պայմանագրի 5-րդ կետում, — պարտավորվում է իր զինված օգնությունը տրամադրել Հայաստանին, երբ պահանջի արտաքին կամ ներքին վտանգը և երբ Հայաստանի հանրապետությունը դիմի իրեն մատնանշված խնդրով: Այսպիսով, Ալեքսանդրապոլի պայմանագիրը դաշնակ-քեմալական գործարք էր ընդդեմ սովետական իշխանության:

XXIV Գ Լ Ո Ւ Ն

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԿԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հեղափոխական վերելքը Հայաստանում 1920 թ. աշնանը

Թուրքերի հարձակման հետևանքով ծայրաստիճան վատացել էր երկրի սոցիալ-տնտեսական դրությունը: Օրրստօրի աճող պարենային ճգնաժամը մասսայական սովի առաջ էր կանգնեցրել ազգաբնակչությանը: Առանձնապես ծանր էր տասնյակ հազարավոր հայ գաղթականների վիճակը:

Նոյեմբերի 10-ին Երևանի քաղաքային ինքնավարության արտակարգ նիստում հայտարարվում է, որ քաղաքային վարչությունը միայն երկու օրվա հաց ունի բնակչությանը բաժանելու համար: Գրամի արագ արժեքազրկման հետևանքով շտեմնված չափերով թանկացել էին սննդամթերքները: Հայաստանի առևտրաարդյունաբերական պալատի՝ մամուլում հրապարակած տվյալների համաձայն Երևանի շուկայում մայիսի վերջերին ցորենի փութն արժեք 3500 ռուբլի, կարտոֆիլինը՝ 2000 ռուբլի, նոյեմբերի վերջերին ցորենի մեկ փթի արժեքը հասավ 35000 ռուբլու, կարտոֆիլինը՝ 18000 ռուբլու: Գների այս առասպելական բարձ-

րացումից առաջին հերթին շահում էին սպեկուլյանտները, վաշխառուներն ու առևտրականները:

Երկրի ներսում մեծ չափերի էին հասել անարխիան, կողոպուտը, կամայականությունները, սպիտակ տեռորը, որոնք է՛լ ավելի էին բորբոքում մասսաներին և սրում դասակարգային հակասությունները: Դաշնակցականների հանցագործ քաղաքականությունը երկիրը և ժողովրդին կանգնեցրել էր կործանման եզրին: Ստեղծված ծանր դրությունից դուրս գալու միակ ելքը Հայաստանում սովետական իշխանության հաստատումն էր: Այդ նպատակին էին ուղղված Հայաստանի կոմունիստական կուսակցության կոչերը, որոնք լայն արձագանք էին գտնում աշխատավոր մասսաների մեջ:

1920 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին Չանգեզուրի աշխատավորները XI կարմիր բանակի զորամասերի օգնությամբ գավառի մեծ մասում հաստատում են սովետական իշխանություն: Սակայն Լենքորանում ծագած մուսավաթական խռովությունը լիկվիդացնելու, ինչպես և լեռնային պայմաններում ձմռանը ռազմական գործողություններ մղելու դժվարության պատճառով նոյեմբերի կեսերին կարմիր բանակի զորամասերը և ապստամբական ջոկատները ստիպված են լինում թողնել Չանգեզուրը: Դաշնակցականների զինված ուժերը, որոնց հաջողվել էր մինչև այդ գրավել Ղափանն ու Սիսիանը, նոյեմբերի 20-ին գրավում են նաև Գորիսը և դաժան դատաստան տեսնում Չանգեզուրի աշխատավորության ու նրանց կոմունիստ ղեկավարների հետ: Դաշնակցականները զենդակահարում են հեղափոխական գործիչներ Բ. Հարությունյանին, որը Ղափանի հեղկոմի նախագահն էր, Բ. Մկրտչյանին, Մ. Մաշուրյանին, Սեյրիին (Ա. Գուլոյան) և ուրիշներին:

Կոմիստերնի գործկոմի նախաձեռնությամբ 1920 թ. սեպտեմբերին Բաքվում տեղի ունեցավ Արևելքի ժողովուրդների համագումար, որը մեծ դեր խաղաց հեղափոխական պայքարը Հայաստանում է՛լ ավելի ծավալելու գործում: Համագումարի աշխատանքին մասնակցում էր Արևելքի տարբեր երկրների 37 ազգությունների 1891 պատվիրակ, որոնցից 157-ը հայեր էին:

Հայաստանում սովետական կարգերի հաստատման համար մղվող պայքարը զլխավորելու գործում խոշոր դեր խաղաց Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների կոնֆերանսը, որը տեղի ունեցավ սեպտեմբերին Բաքվում: Այստեղ էին գտնվում Հայաստանի կոմկուսակցության Կենտկոմը և նրա Արտասահմանյան բյուրոն, որոնք ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի և Ադրբեջանի բոլշևիկների օգնությամբ նախապատրաստական լայն աշխատանք էին կատարում զինված ապստամբություն կազմակերպելու համար:

Նոյեմբերի 7-ին Հայաստանի կոմունիստական կուսակցության

հովիթյամբ: Դաշնակցական նոր կառավարութիւնը նոյնիմանի 26-ին հրապարակած իր դեկլարացիայում հարկադրված էր դառն հուսահատութիւնով խոստովանել երկրի ծայրաստիճան ծանր դրութիւնը: «Տաճիկ զինված ուժերը գրավել են մեր երկրի խոշոր մասը,— ասված է կառավարական դեկլարացիայում:— Ազգաբնակչութիւնը գրաված վայրերից տեղահան է եղած և գաղթական վիճակի մեջ անխնա կոտորվում է ցրտից ու սովից: Պետութեան ներքին կյանքի բնականոն ընթացքը խանգարված է: Վարչական մեքենան թուլացած է մեծապես, ֆինանսական և հաղորդակցութեան միջոցները քայքայված: Արդարադատութիւնը անհնարին վիճակում է, պարենի մուտքը դուրսից կանգ է առել, իսկ ներքին աղբյուրները ցամաքում են արագութեամբ, կայուն չէ ժողովրդի հոգեկան վիճակը... Երկիրն ապրում է ներքին ծանր տագնապ»:

Սակայն դաշնակցականներն անկարող էին փոխել երկիրը կործանումից: Արդեն հասել էր նրանց անփառունակ տիրապետութեան վախճանը: Վերոհիշյալ փաստերը ցույց են տալիս, որ նոյնիմանի վերջերին հայկական հանրապետութիւնը, որպէս պետութիւն, փաստորեն դադարել էր գոյութիւն ունենալուց: Դաշնակցականների դավաճանութիւնը լցրել էր հայ ժողովրդի համբերութեան բաժակը:

Սովետական իշխանության հաստատումը Հայաստանում: Սովետական Ռուսաստանի օգնութիւնը հայ ժողովրդին

1920 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին արտաքին ու ներքին հակահեղափոխութեան դեմ Սովետական Ռուսաստանի տարած փայլուն հաղթանակները խոշոր նշանակութիւն ունեցան հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի համար: Եղբայրական ռուս ժողովուրդը շէր կարող բախտի բմահաճույթին թողնել մահվան ճիրաններում գալարվող Հայաստանի աշխատավորութեանը:

ՌԿ(Բ)Կ Կենտկոմի հանձնարարութեամբ նոյեմբերի սկզբին Բաքվում Հայաստանի դրութեան հարցը քննարկվում է ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի և Ադրբեջանի Կ(Բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի համատեղ նիստում, որին մասնակցում են նաև ՀԿ(Բ)Կ Կենտկոմի և նրա Արտասահմանյան բյուրոյի անդամները: Նոյեմբերի կեսերին Հայաստանին օգնութիւն ցույց տալու հարցը քննվում է Ադրբեջանի Կ(Բ)Կ Կենտկոմի պլենումում: ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն հայ ժողովրդի լավագույն բարեկամ Գ. Կ. Օրջոնիկիձեի ղեկավարութեամբ մի շարք միջոցառումներ է մշակում հայ ժողովրդի ազատագրական պայքարը հաղթանակով պսակելու համար:

Նոյեմբերի կեսերին Հայաստանի ժողովրդական մասսաների հեղափոխական պայքարը գլխավորելու համար ՀԿ(Բ)Կ Կենտկոմի և նրա Արտասահմանյան բյուրոյի անդամներից Բաքվում կազմվում է Հայաստանի ռազմաճակատական կոմիտե հետեւյալ կազմով՝ Սարգիս Կասյան

(նախագահ), Սահակ Տեր-Գաբրիելյան, Ասքանազ Մոսվյան, Ավիս Նուրիջանյան, Ալեքսանդր Բեկզադյան և Իսահակ Դովլաթյան: Այդ ժամանակ ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն Հայաստանի կոմկուսակցութեան Կենտկոմի առաջին քարտուղար է հաստատում Գևորգ Ալիխանյանին:

Նոյեմբերի վերջին Հայհեղկոմի և ՀԿ(Բ)Կ Կենտկոմի Արտասահմանյան բյուրոյի անդամները տեղափոխվում են Ղազախ, որտեղ և ծավալում են զինված ապստամբութեան նախապատրաստական աշխատանքները: Այստեղ են փոխադրվում նաև հայկական հատուկ զուգը, XI բանակի որոշ զորամասեր՝ Մ. Վելիկանովի և Պ. Կուրիշկոյի հրամանատարութեամբ:

Երկրում ստեղծված դրութիւնը պահանջում էր դիմել արագ դրոժոգութեան՝ առաջին հերթին թուրքական զավթիչների հետագա առաջխաղացումը կանխելու և նրանց հետ դաշնակցականների կնքած դործարքը ի չիք դարձնելու համար:

Ռազմահեղափոխական կոմիտեն, նոյեմբերի 29-ի վաղ առավոտյան անցնելով սահմանը, մտնում է Իջևան և գլխավորում Հայաստանի հյուսիսային շրջաններում մասսայաբար ծավալված ապստամբութեանը դաշնակցական կառավարութեան դեմ: Ապստամբները ձերբակալում են դաշնակցական պաշտոնյաներին և տեղերում հայտարարում սովետական իշխանութիւն: Նույն օրը Սովետական Ադրբեջանի տերիտորիայից Իջևան է մտնում հայկական հատուկ ապստամբական զուգը, ապա XI կարմիր բանակի զորամասերը, որոնց տեղական բնակչութիւնը դիմավորում է ցնծութեամբ: «Քարվանսարան գրավվեց առանց մի կրակոցի,— Իջևանից Ա. Նուրիջանյանը հեռախոսով հաղորդում է Բաքու՝ Կովկասյան ճակատի ռազմահեղափոխական խորհրդի նախագահ Գ. Օրջոնիկիձեին:— Շրջանում գյուղացիները ցնծութեամբ դիմավորեցին մեր զորամասերին: Մեր ելույթը միանգամայն ժամանակին էր, քանի որ գյուղացիներն ապստամբել էին կոմունիստների ղեկավարութեամբ, նրանք մի բանի անգամ դեռ-դուռնայով մոտեցել են կարմիր զորամասերի սահմաններին և խնդրել օգնութիւն»:

Ապստամբների կողմն է անցնում Սովետական Ադրբեջանի սահմանադրին կանգնած դաշնակցական ռազմաճակատների բնակական զուգը, որին նախապատրաստել էին բոլշևիկները: Ապստամբութիւնը ճնշելու համար ուղարկված դաշնակցական զորքերը ևս ոչ միայն հրաժարվում են կռիւլ, այլև մասսայաբար անցնում են ապստամբների կողմը:

Նույն օրը Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն, որը հայ ժողովրդի ազգային անկախ պետական իշխանութեան անդրանիկ օրգանն էր, Իջևանում հրապարակում է Հայաստանի աշխատավորութեանն ուղղած ղեկավարացիա, որով ազդարարվում է դաշնակցականների կառավարութեան

տապալումը և սովետական կարգերի հաստատումը Հայաստանում. «Հայաստանի ապստամբ աշխատավոր ժողովրդի կամֆոլ ու ցանկությունը, — ասված է դեկլարացիայում, — Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությունը այսօրվանից Հայաստանը հայտարարում է Սոցիալիստական խորհրդային Հանրապետություն: Այսօրվանից խորհրդային Հայաստանի կարմիր դրոշը պաշտպանելու է նրա աշխատավոր ժողովրդին ներշնչելու դարավոր լծից»:

Բնութագրելով դաշնակցականների հակաժողովրդական քաղաքականությունը, Հեղկոմի դեկլարացիայում ասվում է, որ «...դաշնակցականների կառավարությունը երեք տարվա ընթացքում ոչ միայն ժողովրդին չազատեց աղբատությունից ու կորստից, այլև ցարիզմի քաղաքականության տասնյակ հազարավոր զոհերի թվին ավելացրեց անթիվ հայերի անթիվ ու անհամար զնդեր, որոնք հուսահատ դրություն հասած՝ շորս դին մահ ու անեծք էին տարածում: Քաղաքներն ավեր, շեներն ամայի ու անմարդաբնակ, երկաթուղիները քարուքանդ, կանգ առած, ժողովրդի լավագույն զավակները սահմանավեճների ու անգամ միջյան ընդհարումների արդյունք անմիտ ու քմահաճ պատերազմներում սրախողխող: Ողբ ու կական, աղի արցունքներ են, որ լսվում ու հոսում են Հայաստանի մի ծայրից մյուսը»: Գեկլարացիայում հույս է հայտնվում, որ Սովետական Ռուսաստանի եղբայրական օգնությամբ Հայաստանի աշխատավոր մասսաները արագորեն կբուժեն դաշնակցականների հասցրած վերքերը, կվերականգնեն և կզարգացնեն երկրի ժողովրդական տնտեսությունը:

Նոյեմբերի 30-ին Հայաստանի Հեղկոմը Վ. Ի. Լենինին հղում է հեռագիր, որի մեջ ասված է. «Թող հայտնի լինի համաշխարհային հեղափոխության առաջնորդին, որ Գիլիջանի և Քարվանսարայի շրջանների գյուղացիները, զայրացած դաշնակցական կառավարության հանցավոր քաղաքականությունից և երկրում խորացող անարխիայից, բարձրացրին ապստամբության դրոշը: Հայաստանի կոմունիստական կուսակցությունը իսկույն ևեթ ստանձնեց այդ տարերային շարժման ղեկավարությունը և ստեղծեց Հայաստանի Հեղկոմ, Հայաստանը հայտարարելով Սոցիալիստական Սովետական Հանրապետություն»:

Այնուհետև հեռագրում ասված է, որ Հեղկոմը Հայաստանի բանվորների և գյուղացիների անունից խնդրում է օգնություն ցույց տալ դաշնակցականների կառավարությունը վերջնականապես տապալելու համար:

Հայ աշխատավոր ժողովրդի խնդրանքը լիովին բավարարվում է: Դաշնակցականների լուծը տապալելու համար մղած պայքարում նրան եղբայրական օգնություն են ցույց տալիս Սովետական Ռուսաստանի XI բանակի զորամասերը: Նրանց օգնությամբ էր, որ դեռևս 1920 թ. գարնանը սովետական իշխանություն էր հաստատվել Ադրբեջանում: Այդ

գործում մեծ է եղել XI բանակի ռազմահեղափոխական խորհրդի ղեկավար գործիչներ Ս. Օրջոնիկիձեի, Ս. Կիրովի և Ա. Միկոյանի դերը:

Սովետական Ռուսաստանի կառավարությունը աշխատում էր հայ ժողովրդի ազատագրմանը հասնել որքան կարելի է առանց արյունահեղության, դիվանագիտական ճանապարհով: Նա առանց այն էլ արյունաքամ էր եղել արտաքին և ներքին թշնամիների կողմից: Վ. Ի. Լենինը դեռևս 1916 թվականին գրել է. «Բայց չի կարելի ժխտել այն, որ առանձին դեպքերում, իբրև բացառություն, օրինակ, որևէ փոքրիկ պետության մեջ, այն բանից հետո, երբ հարևան մեծ պետությունն արդեն սոցիալական հեղափոխություն կատարել է, հնարավոր է բուրժուազիայի կողմից իշխանության խաղաղ գիշումը, եթե նա համոզվի դիմադրության անհուսալիությանը և գերադասի պահպանել իր գլուխը»¹:

1920 թ. նոյեմբերի 30-ին ՌՍՖՍՀ կառավարության ցուցումներով Հայաստանի լիազոր-ներկայացուցիչ կեղանը, որը գտնվում էր Երևանում, դաշնակցականների կառավարությանն առաջարկում է առանց դիմադրության, խաղաղ կերպով զիջել իշխանությունը Հայհեղկոմին, որը աշխատավոր ժողովրդի կամքով ու ցանկությամբ Հայաստանը արդեն հռչակել էր սովետական հանրապետություն: Լեզրանը միաժամանակ նախազգուշացնում էր, որ եթե դաշնակցական կառավարությունը չհրաժարվի իշխանությունից, ապա, միևնույն է, կտապալվի ապստամբ մասսայի կողմից:

Կանգնելով կատարված փաստի առջև և անկարող լինելով ճնշելու սովետական իշխանության համար Հայաստանի բանվորների ու գյուղացիների ամբողջ երկրով մեկ ծավալված համաժողովրդական հեղափոխական շարժումը, դաշնակցականների կառավարությունը ստիպված է լինում հրաժարվել իշխանությունից, կապիտուլյացիայի ենթարկվել: Այդ կապակցությամբ դեկտեմբերի 1-ին բանակցություններ են տեղի ունենում Լեզրանի և դաշնակցական կառավարության կողմից լիազորված Դրաստամատ Կանայանի (Դրոշի) ու Համբարձում Տերտերյանի միջև:

Նպատակ ունենալով հարցը լուծել ոչ թե ռազմական ընդհարման, այլ դիվանագիտական ճանապարհով, նույն օրը Լեզրանը Երևանից հեռագրում է Գիլիջան՝ կարմիր բանակի հրամանատարությանը և Հեղկոմին, որ քաղաքական իրադրությունը պահանջում է դադարեցնել կարմիր բանակի ու Հեղկոմի հետագա առաջխաղացումը մինչև դեկտեմբերի 3-ը, որպեսզի այդ ժամանակամիջոցում անհրաժեշտ պայմաններ ստեղծվեն անարգել շարժման համար դեպի Երևան:

Գեկտեմբերի 2-ին Լեզրանի և դաշնակցական կառավարության վերոհիշյալ ներկայացուցիչների միջև Երևանում կնքվում է համաձայնա-

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 23, էջ 80:

գիր, որի առաջին հոդվածով դաշնակցականները հարկադրված ճանաչում են Հայհեղուի կողմից Հայաստանը սոցիալիստական հանրապետություն հռչակելու պատմական ակտը: Հաջորդ հոդվածով որոշվում է, որ մինչև Հայաստանի սովետների համագումարի հրավիրումը Հայաստանում ամբողջ իշխանությունն անցնում է Ռազմահեղափոխական կոմիտեի ձեռքը: Մի այլ հոդվածով որոշվում է Հեղկոմի կազմի մեջ ձախ դաշնակցականների խմբից մտցնել երկու հոգու՝ կոմունիստական կուսակցության համաձայնությամբ: Երրորդ հոդվածում խոսվում է Հայկական ՍՍՀ տեղի տրիաչի մասին: Յոթերորդ հոդվածով Սովետական Ռուսաստանը պարտավորվում է անհապաղ միջոցներ ձեռնարկել և ռազմական ուժերը կենտրոնացնել ՀՍՍՀ անկախությունը պաշտպանելու համար: Համաձայնագրի վերջին, ութերորդ հոդվածում ասված է. «Ներկա համաձայնագիրը ստորագրելուց հետո Հայաստանի հանրապետության կառավարությունը հեռանում է իշխանությունից, իշխանությունը ժամանակավորապես, մինչև Հեղափոխական կոմիտեի ժամանումը, անցնում է զինվորական հրամանատարությունը...», այսինքն՝ բանակի հրամանատար Դրոշին և ՌՖՍՍՀ կոմիսար Սիլինին:

Դաշնակ գրչակները, կեղծելով Հայաստանում սովետական կարգերի հաստատման պատմությունը, շարունակում են պնդել իրենց հերյուրանքները իշխանությունը Հեղկոմին «խաղաղ ու կամովին փոխանցելու» մասին: Պատմական փաստերը անհերքելիորեն հաստատում են այն ճշմարտությունը, որ ստեղծված կոնկրետ պայմաններում դաշնակցականների կառավարությունը ստիպված էր այդ քայլին դիմել, որովհետև այլ ելք չուներ: Նա ի վիճակի չէր կանխել Հայաստանում սովետական կարգերի հաստատումը, ուստի նա ոչ թե իր բարի ցանկությամբ հրաժարվեց իշխանությունից, այլ փուլ եկավ՝ քայքայվելով ներքին հակասություններից, սարսափելով իր դեմ գեներալ բարձրացրած Հայաստանի բանվորագյուղացիական մասսաների հեղափոխական հուժկու պայքարից:

Դաշնակցական կառավարիչները տեսնում էին, որ իրենց իշխանությունը շարունակելու համար աննպաստ էին ոչ միայն ներքին, այլև արտաքին պայմանները, Հայաստանի միջազգային դրությունը: Դրանք են՝ Անտանտը, չնայած իր խոստումներին, չէր օգնում Հայաստանին, երկիրը քեմալական Թուրքիայից կռել էր ռազմական պարտություն և ի չիք էր եղել «ծովից-ծով» Հայաստանի գաղափարը, որը նրանք չարաշահում էին ժողովրդի մեջ կեղծ հեղինակություն ստեղծելու համար, ջախջախվել էր Վրանգելը, հետևաբար Սովետական Ռուսաստանի օգնությունը Հայաստանի աշխատավորությանը ռեալ կլիներ, վրացական մենշևիկների իշխանության օրերը հաշված էին և այլն և այլն: Ի դեպ, ինչպես հետագայում պարզվեց, իշխանությունից հրաժարումը դաշնակցականները

համարում էին տակտիկական քայլ, որպեսզի ժամանակ շահին և, ուժերը վերամիավորելով, դրսի օգնությամբ, փորձեին տապալել սովետական իշխանությունը Հայաստանում:

Դաշնակցականների տիրապետության դեմ 1918—1920 թվականներին Հայաստանի աշխատավորության մղած հերոսական պայքարի պատմությունն ամբողջովին հերքում է նաև երկրից արտասահման փախած դաշնակ պարագլուխների այն ստահոդ պնդումը, թե իբր Հայաստանում հակապարտ դասակարգեր չեն եղել, որ Հայաստանում դաշնակցականների տիրապետության դեմ դասակարգային պայքարի համար չկար և չէր կարող լինել սոցիալ-տնտեսական որևէ հիմք: Հրեշավոր սուտ է դաշնակցականների այն պնդումը, թե իբր սովետական իշխանությունը Հայաստան է ներմուծվել դրսից՝ «ռուսական սվինի միջոցով», կարմիր բանակի բռնի ուժով: Դաշնակցականների այդ հերյուրանքները հերքելու համար բավական է հիշատակել Վ. Ի. Լենինի կողմից գրված ՌԿ(Բ)Կ կենտկոմի քաղքյուրոյի 1920 թ. նոյեմբերի 27-ի որոշման նախագծի հետևյալ խոսքերը, թե «Վրաստանի, Հայաստանի, Թուրքիայի և Պարսկաստանի նկատմամբ վառել առավելագույն հաշտ ֆաղափականություն, այսինքն՝ այնպիսի ֆաղափականություն, որն ինչպես լինի ամենից շատ այն բանին, որ խուսափենք պատերազմից: Խնդիր չդնել արշավանք կազմակերպելու ո՛չ Վրաստանի, ո՛չ Հայաստանի, ո՛չ էլ Պարսկաստանի դեմ»¹:

Խոսելով ղեկավարների 2-ի համաձայնագրի մասին, ՀԿ(Բ)Կ կենտկոմի օրգան «Կոմունիստ» թերթը 1920 թ. ղեկավարների 5-ին իր առաջին համարի առաջնորդողում գրել է. «Համո Օհանջանյանի ոճրագործ բյուրոյապետության անփառունակ վախճանից հետո անհետացավ նաև դաշնակների ստեղծած վերջին կառավարական խրտվիլակը: Դեկտեմբերի 2-ին Վրացյանի նորահնար կաբինետը հազիվ կյանքի կոչված, խոնարհվելով ժողովրդական կամքի առաջ, ստորագրեց սեփական մահավճիռը»: «...Հայ գործերը Դիլիջանում համբույրներով են ընդունել կարմիրներին», — դառնորեն խոստովանել է Ս. Վրացյանը Երևանից Ալեքսանդրապոլ՝ Ա. Խատիսյանին հղած հեռագրում:

Հայհեղկոմի ղեկավարությամբ ղեկավարների 4-ին ապստամբները, իսկ երկու օր հետո նաև XI կարմիր բանակի զորամասերը մտնում են Երևան, որտեղ նրանց ջերմ ընդունելություն են ցույց տալիս քաղաքի և նրա շրջակա գյուղերի աշխատավորները: Երևանի վրա հաղթականորեն ծածանվում է մեծ Հոկտեմբերի կարմիր դրոշը:

Հայաստանում սովետական կարգերի հաստատումը ջերմորեն ողջունեց մեծ Լենինը: Դեկտեմբերի 2-ին Հայաստանի ռազմահեղափո-

¹ В. И. Ленин. Полное собрание сочинений, т. 42, стр. 47.

խական կոմիտեի նախագահ Ս. Կասյանի անունով Երևան ուղարկված ողջույնի հեռագրում Վ. Ի. Լենինը գրում է. «Հանձին Ձեզ ողջունում եմ իմպերիալիզմի ենշումից ազատագրված աշխատավորական Սովետական Հայաստանին»¹:

Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում բուռն խանդավառություն և ցնծություն առաջացրեց Հայաստանի աշխատավոր մասսաների մեջ: Ամենուրեք տեղի ունեցան խանդավառ միտինգներ ու ժողովներ, որտեղ աշխատավորներն իրենց ողջույնի և երախտագիտության առաջին խոսքն ուղղում էին Հոկտեմբերյան հեղափոխության առաջնորդ Վ. Ի. Լենինին: Օրինակ՝ դեկտեմբերի 6-ին Երևանում տեղի ունեցավ աշխատավորների մեծ միտինգ XI բանակի դորամասերի մարտիկների մասնակցությամբ: Միտինգում ընդունվեց ողջույնի հեռագիր՝ ուղղված Վ. Ի. Լենինին: «Խիտ ու կուտ շարքերով համախմբվելով կոմունիստական կարմիր դրոշների շուրջը, — ասված է հեռագրում, — աշխատավորությունը հանձին ձեզ՝ ողջունում է Հոկտեմբերյան հեղափոխության առաջնորդին, հեղափոխություն, որի ալիքները, խորտակելով ու ոչնչացնելով բոլոր արգելքները, հասան հեռավոր Հայաստան»:

Հայաստանի բանվորների ու գյուղացիների փառավոր հաղթանակը ջերմորեն ողջունեցին Սովետական Ռուսաստանի, Հյուսիսային Կովկասի, Սովետական Ադրբեջանի, Վրաստանի և այլ վայրերի աշխատավորները:

Հայաստանի աշխատավորության մեջ բուռն ոգևորություն առաջ բերեց Ադրբեջանի Հեղկոմի 1920 թ. նոյեմբերի 30-ի դեկլարացիան, որ հրապարակեց Հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովը հաջորդ օրը՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատմանը նվիրված Բաբվի սովետի հանդիսավոր նիստում: Այդ դեկլարացիայում ասված է, որ Սովետական Ադրբեջանը, ընդառաջելով դաշնակցական տիրապետության դեմ պայքարող եղբայրական հայ ժողովրդին, հայտարարում է, որ այսուհետև ոչ մի տերիտորիալ հարց չի կարող երկու դարավոր հարևան ժողովուրդների փոխադարձ արյունահեղության պատճառ դառնալ: Բայց գնահատելով Ադրբեջանի Հեղկոմի դեկլարացիայի նշանակությունը հայ և ադրբեջանական ժողովուրդների ինտերնացիոնալ համերաշխության համար, Գ. Օրջոնիկիձեն իր ողջույնի ճառում ասել է, «Այստեղ կատարված այս ակտը մեծագույն կարևորություն ունեցող ակտ է, սա պատմական մեծ ակտ է, որը մարդկության պատմության մեջ իր օրինակը չունի»: Նա հաջորդ օրը Վ. Ի. Լենինին հղած հեռագրում գրում է. «Ադրբեջանը երեկ արդեն Սովետական Հայաստանի օգտին հայտարարեց Նախիջևանը, Զանգեզուրը և Լեռնային Ղարաբաղը հանձնելու մասին»:

Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում լայն արձա-

գանք գտավ նաև սփյուռքի հայկական առաջադիմական շրջաններում: Ոչ միայն արտասահմանի հայ կոմունիստների, այլև հնչակյան և ուսակավար կուսակցությունների պարբերականները դրվատական խոսք են ասում Սովետական Ռուսաստանի և Սովետական Հայաստանի մասին: «Այսօր գրեթե ընդհանուր է այն կարծիքը, թե Հայաստանի համար փրկարար և նպատակահարմար է այն քաղաքականությունը, որ իրան կապահովե Ռուսաստանի բարեկամությունը» — գրված է Կ. Պոլսում հրատարակվող «Առավոտ» թերթի 1921 թ. հունվարի 12-ի խումբագրական հոդվածում:

Սակայն հայ ժողովրդի պատմական հաղթանակը, ինչպես և պետք էր սպասել, կատաղի շարությամբ ընդունեցին կապիտալիստական երկրների ղեկավարները, հակասովետական շրջանները, մասնավորապես Անտանտի երկրներում, որոնք, ի դեմս դաշնակցականների, Հայաստանում առհավետ կորցրին իրենց հավատարիմ ծառաներին: Կատաղի ոռնոց բարձրացրին նաև վրացական մենշևիկները, որոնց ոտքի տակի հողը արագորեն փոփ էր գալիս ժողովրդի օրեցօր աճող հեղափոխական շարժման հարվածներից:

Այսպիսով, Հայաստանի ապստամբ բանվորներն ու գյուղացիները, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնությամբ, տապալեցին դաշնակցականների և նրանց իմպերիալիստական տերերի արյունոտ իշխանությունը և հաստատեցին սովետական իշխանություն: Դա Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակն էր Հայաստանում: Պատմական այդ մեծ ակտով հայ ժողովուրդը ոչ միայն ազատվեց ֆիզիկական բնաջնջումից, շահագործումից ու կեղեքումից, այլև ձեռք բերեց դառնով երազած պետականություն ու անկախություն: Հայ ժողովուրդը կանգնեց ազգային վերածննդի ուղու վրա, նրա բազմադարյան կյանքում բացվեց մի նոր, սփռնչելի դարաշրջան՝ կոմունիզմի դարաշրջանը:

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, Գ. 31, էջ 550:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ

Հանրապետության
դրությունը սովետա-
կան կարգերի հաս-
տատման առաջին
ամիսներին

Հայաստանի քաղաքական ու տնտեսական վիճակը սովետական կարգերի հաստատման առաջին ամիսներին չափազանց ծանր էր: Դեռևս շարունակվում էին հին կարգերից ժառանգություն մնացած պարենային սուր ճգնաժամը, սովը և համաճարակը:

Երկիրը լցված էր բազմահազար գաղթականներով ու որբերով: Մայրաստիճան քայքայված էր ժողովրդական տնտեսությունը: Հանրապետության տերիտորիայի զգալի մասում դեռևս իշխում էին հայ ժողովրդի թշնամիները. թուրքական զավթիչները օկուպացրել էին Հայաստանի տերիտորիայի մոտավորապես կեսը, Լոռու նախկին «չեղոք գոտին» գտնվում էր վրացական մենշևիկների ձեռքին, իսկ Զանգեզուրը՝ դաշնակ-խմբապետների ձեռքին:

Թուրքական օկուպանտները, վրացական մենշևիկները և դաշնակցականները, անասելի ճնշման ենթարկելով տեղական աշխատավոր բնակչությանը, միաժամանակ հակասովետական դավեր էին նյութում, օտարերկրյա իմպերիալիստների օգնությամբ համախմբում էին իրենց ուժերը նորաստեղծ Սովետական Հայաստանին հարված հասցնելու համար: Այդ թշնամական ուժերի դեմ պայքար մղելն անհետաձգելի անհրաժեշտություն էր, որը Հայաստանի աշխատավորներից շատ ջանքեր ու միջոցներ էր պահանջում: Սակայն այդ պայքարում Սովետական Հայաստանի բանվորներն ու գյուղացիները միայնակ չէին: Այդ դժվարին օրերին ևս նրանց եղբայրական օգնության ձեռք մեկնեց Սովետական Ռուսաստանը:

Հենվելով Սովետական Ռուսաստանի եռամյա փորձի վրա, Սովետական Հայաստանի Հեղկոմը և կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության Կենտկոմը Հայաստանում սովետական իշխանության հաստատման առաջին իսկ օրերից ձեռնամուխ եղան երկրի պաշտպանության ամրապլանում, ներքին հակահեղափոխության դեմ պայքար կազմակերպելու, սովետական հին ապարատը և հին օրենքները փոխելու, տնտեսության ու կուլտուրայի բոլոր բնագավառներում սոցիալիստական վերափոխություններ կատարելու գործին:

Սովետական իշխանության ամրապլանում համար անհրաժեշտ էր, նախ, վերացնել պետական հին ապարատը և ապա ստեղծել նորը: Այս կարևորագույն գործին ձեռնամուխ եղավ ՀՍՍՀ Հեղկոմը, որն այն ժամանակ իշխանության բարձրագույն օրգանն էր: Հիմնական դժվարությունը կազմերի պակասն էր, որը հաղ-

Պետական հին ապարատի վերացումը և նորի ստեղծումը

Քահարվեց գլխավորապես եղբայրական հանրապետություններից, առաջին հերթին Սովետական Ռուսաստանից, մոբիլիզացիոն կարգով փորձված ազգային կարգեր Սովետական Հայաստան տեղափոխելու միջոցով:

1920 թ. դեկտեմբերին ՀՍՍՀ Հեղկոմի հրամանով ստեղծվեցին ՀՍՍՀ ժողովրդական կոմիսարիատներ: Դեկտեմբերի 22-ին հաստատվեց ՀՍՍՀ ժողովրդական կոմիսարների կազմը:

Հայհեղկոմի 1921 թ. հունվարի 4-ի հրամանով ստեղծվեց պետական վերահսկողության մարմին՝ բանվորագյուղացիական տեսչություն:

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու առաջին օրերին ստեղծվել էին նաև գավառական, շրջանային և գյուղական հեղկոմներ, որոնք ոչ թե ընտրովի, այլ նշանակովի օրգաններ էին: Հեղկոմները մինչև 1921 թ. վերջերը փոխարինում էին բանվորների, գյուղացիների և զինվորների դեպուտատների սովետներին: Տեղերում իշխանության կազմակերպումը դրված էր Հայաստանի ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի վրա, որը հանրապետության բարձրագույն վարչական մարմինն էր:

Բուրժուական հին ապարատը վերացնելու նպատակով ՀՍՍՀ Հեղկոմը և նրան կից ժողովրդական կոմիսարիատները իրագործեցին մի շարք միջոցառումներ: Չեղյալ հայտարարվեցին դաշնակցական կառավարության արտասահմանյան բոլոր դիվանագիտական ներկայացուցչություններն ու միախաները: Վերացվեցին բոլոր հին վարչական հիմնարկները՝ նահանգապետությունները, քաղաքային ինքնավարությունները, գավառային կոմիսարիատները, ներքին գործոց նախարարության բոլոր օրգանները:

Հայկական ՍՍՀ արդարադատության ժողովրդական կոմիսարիատը վերացրեց հին դատարանները և ստեղծեց նոր, ժողովրդական դատարաններ: ՌՍՖՍՀ-ի օրինակով ՀՍՍՀ Հեղկոմին կից ստեղծվեց Գերագույն հեղափոխական տրիբունալ, իսկ արդարադատության ժողովրդական կոմիսարիատին կից՝ Հեղափոխական տրիբունալ: ՀՍՍՀ Հեղկոմի ղեկը բտով Սովետական Հայաստանի սահմաններում վերացվեցին «Ռուսական կայսրության հավաք օրինացը» այն բոլոր փոփոխություններով, որ մտցրել էին ժամանակավոր կառավարությունը, Անդրկովկասյան սելյուր, Հայաստանի խորհուրդը, պառլամենտը և կառավարությունը: Այդ նույն ղեկը բտով ՀՍՍՀ սահմաններում սկսեցին գործել ՌՍՖՍՀ-ի օրենքները՝ Հայաստանի Հեղկոմի մտցրած փոփոխություններով ու լրացումներով: ՀՍՍՀ ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի հրամանով վերացվեցին դասերը և քաղաքացիական աստիճանները իրենց բոլոր արտնություններով ու սահմափակումներով: Վերացնելով ամեն տեսակի կոչումներն ու տիտղոսները, Հայաստանի ամբողջ ազգաբնակչության հա-

մար սահմանվեց մի ընդհանուր կոչում՝ Հայաստանի հանրապետության քաղաքացի:

Երկրի պաշտպանության համար և Արքայի հակահեղափոխության դեմ ձեռնարկված միջոցառումները

1920 թ. դեկտեմբերի 2-ին դրվեց Սովետական Հայաստանի կարմիր բանակի կազմակերպման հիմքը: Նրա հիմնական կորիզը կազմեց հայկական ապստամբական զունդը:

Բանակում նշանակվեցին քաղաքական կոմիսարներ, որոնք խոշոր դեր խաղացին կարմիր բանակի կազմերի բարոյաբաղաբական վիճակի բարձրացման, նրանց կոմունիստական դաստիարակության գործում: ՀՍՍՀ կարմիր բանակին կից հիմնվեց քաղաքական վարչություն, որի պետ նշանակվեց Հովսեփ կազյանը:

Սովետական Հայաստանի երիտասարդ կարմիր բանակի համար հրամանատարական բարձրորակ կազմեր պատրաստելու նպատակով 1921 թվականի հուլիսին, Հայկական ՍՍՀ ռազմական գործերի ժողկոմ Ա. Մյասնիկյանի հրամանով, երևանում կազմակերպվեց ռազմական դպրոց (1925 թվականից՝ Ա. Մյասնիկյանի անվան): Իր գործունեության 6 տարիների ընթացքում դպրոցը տվեց հիանալի շրջանավարտներ, որոնցից շատերի անունները մտան Հայրենական մեծ պատերազմի փառավոր տարեգրության մեջ: (Հ. Բաբաջանյան, Բ. Առուշանյան, Ս. Զաքյան, Ա. Կարապետյան, Ա. Ղազարյան, Գ. Տեր-Գասպարյան, Ն. Սաֆարյան և ուրիշներ):

Հայաստանի կարմիր բանակի ամրապնդման գործում, մեծ վաստակ ունի քաղաքացիական կոիվների լեզենդար հերոս Գալբ, որը Սովետական Հայաստանի կառավարության միջնորդությամբ 1922 թվականին տեղափոխվեց Հայաստան և կարճ ժամանակով աշխատեց որպես ՀՍՍՀ ռազմական գործերի ժողկոմ:

Ներքին հեղափոխության և սպեկուլյացիայի դեմ պայքարելու նպատակով Հեղկոմը 1920 թ. դեկտեմբերի 6-ին Սովետական Հայաստանում ստեղծեց Արտակարգ հանձնաժողով (ԶեԿԱ):

Հակահեղափոխության դեմ մղվող պայքարի կարևորագույն միջոցառումներից էր նաև բուրժուական թերթերի, դաշնակցական ակումբների և զանազան ընկերությունների ու կազմակերպությունների վերացումը: Հեղկոմը և Արտակարգ հանձնաժողովը վճռական միջոցներ ձեռք առան դաշնակցական պրովոկատորների, խմբապետների և մաուզերիստների դեմ, որոնք ահաբեկում էին բնակչությանը, փորձում խուճապ առաջացնել, արհամարհում էին սովետական օրինականությունը:

Հայաստան հեղկոմի դեկրետները տնտեսական կյանքի բնագավառում

Սովետական Ռուսաստանի օրինակով Հայաստանի Հեղկոմը ձեռնամուխ եղավ ժողովրդական տնտեսության ազգայնացման գործին, որի շնորհիվ իր ձեռքը վերցրեց տնտեսության իշխող բարձունքները:

Ագրարային հարցը Հայաստանի՝ գերազանցապես գյուղացիական մի երկրի համար ուներ հսկայական նշանակություն: Հայաստանի աշխատավոր գյուղացիության վիճակը դաշնակցականների օրոք ոչ միայն չբարելավվեց, այլև ծայրաստիճան վատացավ: ՀՍՍՀ Հեղկոմը 1920 թ. դեկտեմբերի 28-ին դեկրետ ընդունեց հողերի պետականացման մասին: «Բանվորագյուղացիական ազգաբնակչության հողազուրկ և սակավահող մասը, — ասված է դեկրետում, — հողաբաժիններով, ապահովելու և գյուղատնտեսությունը զբաղվել ցանկացողներին հողեր բաշխելու նպատակով, այլև հանրապետության բոլոր կարիքները բավարարելու համար արբունական, նաղելի, եկեղեցական, վանքերի, վակուֆային, մեշետային, իրավաբանական անձերի և մասնավոր հողերը զանոնում են Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության սեփականություն»:

Հայաստանի Հեղկոմի հիշյալ դեկրետով մեկընդմիջտ վերացվեց հողի մասնավոր սեփականությունը, բավարարվեց հայ գյուղացու պահանջը, որի համար նա դարերով պայքարել էր հողատեր-կալվածատերերի դեմ: Սովետական իշխանությունը ազգայնացրեց և հայ աշխատավոր գյուղացիությանը հանձնեց մոտ 1,5 միլիոն հեկտար հող: Հողի ազգայնացումը պայմաններ ստեղծեց հետագայում գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացման համար: Հողից բացի, գյուղացու համար պակաս կարևոր նշանակություն չունեին նաև ջրի հարցը, որը լուծվեց ՀՍՍՀ Հեղկոմի համապատասխան դեկրետներով:

Հեղկոմի դեկրետներով պետականացվեցին հանրապետության բոլոր անտառները, օգտակար հանածոները, հանքային ջրերը, լճերը, գետերը, ջրանցքները և այլն: Հատուկ դեկրետներով պետականացվեցին մասնավոր գործարանները, արհեստանոցները և արդյունաբերական այլ ձեռնարկություններ: Միջոցներ ձեռնարկվեցին հանրապետության ֆինանսական գրությունը բարելավելու ուղղությամբ: Հայաստանի Հեղկոմի դեկրետով ազգայնացվեցին մասնավոր բանկերը, կազմակերպվեց ՀՍՍՀ պետական բանկը, Հայաստանում շրջանառության մեջ դրվեցին ՌՍՖՍՀ-ի դրամանիշերը:

Սովետական իշխանության հիշյալ միջոցառումների շնորհիվ ստեղծվեց սոցիալիստական տնտեսաձև, խթանվեց արտադրողական ուժերի զարգացումը: Հանրապետության ժողովրդական տնտեսությունն ավելի կոնկրետ ղեկավարելու համար 1921 թ. հունվարին ստեղծվեց ՀՍՍՀ

ժողովրդական տնտեսության խորհուրդ (ժողտնխորհ), որը մեծ դեր խաղաց երկրի տնտեսական կյանքում:

1920 թ. դեկտեմբերից Սովետական Հայաստանում սկսեց իրագործվել ուսումնական կոմունիզմի ֆաղափականությունը: ՀՍՍՀ Հեղկոմի առաջին հրամանն ընդունվեց 1920 թ. դեկտեմբերի 8-ին: Գեկտեմբերի 18-ին հրապարակվեց ՀՍՍՀ պարենավորման ժողովրդական կոմիսարիատի հրամանը հանրապետությունում պարենավորման գործը կարգավորելու մասին: Հեղկոմի հրապարակած մի շարք գեկտեմբերով ուղղմական դրույթյան մեջ հայտարարվեցին հանրապետության երկաթուղիները, ավտոտրանսպորտը, փոստ-հեռագրատունը, ոսդիոկայանը և այլն:

Ռազմական կոմունիզմի քաղաքականության կիրառումը Հայաստանում շատ կարճ տևեց: Սակայն այդ քաղաքականության կիրառման ընթացքում առանձին տեղերում թույլ տրվեցին կոպիտ աղավաղումներ, որոնցից օգտվեց դասակարգային թշնամին: Վերջինս փորձեց բնակչության հետամնաց խավերի մեջ ստեղծել դժգոհություն և նրանց դուրս բերել սովետական իշխանության դեմ:

Հանրապետության ժողովրդական տնտեսության վերականգնման համար քաղաքի և գյուղի աշխատավորները մասսայական շարժում ծավալեցին: Ձեռնարկված միջոցառումներից մեկն էլ կոմունիստական շաքարոչակներն էին, որոնց ընթացքում աշխատավորները կարգի էին բերում և վերանորոգում հիմնարկ-ձեռնարկությունները, դպրոցական շենքերը, կամուրջները, մշակում շքավորների ու կարմիրբանակայինների ընտանիքների հողերը, այգիները, կատարում այլ հանրօգուտ աշխատանքներ: Վ. Ի. Լենինը մեծ նշանակություն էր տալիս շաքարոչակներին և ինքն էլ հաճույքով մասնակցում էր աշխատավորների այդ նախաձեռնությունը:

Սովետական իշխանության ազգային քաղաքականությունը

Գաշնակցականների, մենշևիկների և մուսավաթականների տիրապետության ժամանակաշրջանում սրվել էին Անդրկովկասի ժողովուրդների ազգային հարաբերությունները: Սովետական իշխանությունը շուտով ձեռնամուխ եղավ նաև ազգային հարցի լուծմանը:

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու առաջին օրերից լայն աշխատանք ծավալվեց տարբեր ազգությունների աշխատավորների փոխադարձ վստահությունն ու եղբայրական համագործակցությունն ամրապնդելու ուղղությամբ: Ստեղծվեցին բարենպաստ պայմաններ ազգային փոքրամասնությունների տնտեսական-քաղաքական և կուլտուրական կյանքի զարգացման համար: Նրանք, որպես հանրապետության լիիրավ քաղաքացիներ, ակտիվորեն ներգրավվեցին սոցիա-

լիստական շինարարության և պետական կառավարման գործի մեջ:

1920 թ. դեկտեմբերի 6-ին ՀՍՍՀ Հեղկոմի գեկտեմբերով Հայաստանում պետական լեզու ընդունվեց հայերենը, իսկ ազդեցիկներով բնակեցված վայրերում՝ նաև ազդեցիկներենը: Ազգային փոքրամասնությունների համար բացվեցին դպրոցներ, հրատարակվեցին թերթեր ու գրականություն:

Սովետական իշխանության ճիշտ ազգային քաղաքականությունը բուռն ոգևորություն և երախտագիտության ջերմ զգացումներ առաջ բերեց ազգային փոքրամասնությունների մեջ: Հանրապետության բոլոր աշխատավորների հետ միասին նրանք պատրաստ էին պաշտպանել իրենց սոցիալիստական հայրենիքը: 1920 թ. դեկտեմբերի 16-ին Երևանում տեղի ունեցավ ազդեցիկական ազգաբնակչության խանդավառ միտինգ, որի ընդունած բանաձևում ասված է. «Հայաստանի մուսուլմանական աշխատավորությունը հայտարարում է ի լուր ամբողջ աշխարհի, որ ինքը պատրաստ է թափել արյան վերջին կաթիլը՝ պաշտպանելու բանվորազյուզացիական Հայաստանի խորհրդային հանրապետությունը»:

Միջոցառումներ կուլտուրական շինարարության ասպարեզում

Տնտեսական և քաղաքական կյանքի տարբեր ասպարեզներում լայն գործունեություն ծավալելու հետ միասին ՀՍՍՀ Հեղկոմը զարկ տվեց նաև կուլտուրական շինարարությանը: Նա 1920 թ. դեկտեմբերի 17-ին գեկտեմբերով ընդունեց հանրապետության հոգևոր հաստատություններին պատկանող կուլտուր-կրթական հիմնարկները՝ դպրոցները, հնագիտական և ազգագրական թանգարանները, գրադարանները, տպարանները պետականացնելու և Հայաստանի նորաստեղծ լուսավորության ժողովրդական կոմիսարիատի իրավասությունները հանձնելու մասին: Մի շարք միջոցառումներ իրագործվեցին դպրոցը եկեղեցու սեպարատիզմից ազդեցությունից ազատելու համար: ՀՍՍՀ լուսժողովուրդի հրամանով արգելվեցին դպրոցներում կրոնական առարկաների դասավանդումը և կրոնական ծեսերի կատարումը: Հատուկ հրամանով արգելվեց հոգևոր դասին պատկանող անձանց նշանակումը դասատուի պաշտոնում և այլն: Հեղկոմի դեկտեմբերի 17-ի գեկտեմբերով պետականացվեց նաև էջմիածնի վանքին պատկանող հարուստ ձեռագրատունը (մատենադարանը), որը կարևոր նշանակություն ունեցավ Հայաստանում հայագիտության զարգացման համար:

Կուլտուրական շինարարության ասպարեզում Հայաստանի Հեղկոմի աչքի ընկնող միջոցառումներից մեկը Սովետական Հայաստանի առաջին բարձրագույն ուսումնական հաստատության՝ Երևանի համալսարանի հիմնադրումն էր: Համալսարանի բացումը, որը տեղի ունեցավ 1921 թ. հունվարի 23-ին խոշոր երևույթ էր հայ ժողովրդի քաղաքացիական

պատմության մեջ: 1921 թ. փետրվարի 5-ին Հայաստանի Հեղկոմի ղեկը հետով էջմիածնում հիմնադրվեց Սովետական Հայաստանի առաջին գիտահետազոտական հիմնարկը՝ կուլտուր-պատմական ինստիտուտը, որը 1921 թ. մայիսին վերանվանվեց Հայաստանի գիտական ինստիտուտ:

Ժողովրդական լուսավորության գործը հանրապետությունում կանոնավոր հիմքերի վրա դնելու նպատակով 1920 թ. դեկտեմբերի վերջին ՀՍՍՀ լուսժողկոմատին կից կազմակերպվեց ժողովրդական լուսավորության կուրսը, որի կազմում էր նաև ակադեմիայի քանաստեղծ Ե. Չարենցը:

Սովետական իշխանության հաստատումը Լոռիում

Դեռ 1918 թ. դեկտեմբերի վերջերին Անտանտի զորահրամանատարության միջամտությամբ Բորչալուի գավառի մի մասը, գրեթե ամբողջ Լոռին (43 գյուղ), որը գրավված էր հայկական զորքերի կողմից, հայտարարվել է «չեզոք գոտի», ուր տնօրինություն էին անում օտարերկրյա իմպերիալիստները:

1920 թ. կեսերից, Անդրկովկասից անգլո-ամերիկյան զորքերի հեռանալուց հետո, Լոռու «չեզոք գոտին» Հայաստանի դաշնակցական կառավարության համաձայնությամբ մնում էր վրացական մենշևիկների տիրապետության տակ: Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո վրացական մենշևիկները ավելի ընդարձակեցին իրենց սահմանները Լոռիում:

Ծանր էր Լոռու աշխատավորության դրությունը: Այստեղ նույնպես տիրում էին թալանն ու դաժան տեռորը: Տեղական կալվածատերերն ու կուլակները, մենշևիկներն ու դաշնակցականները, անգլո-ամերիկյան զավթիչները անխնա կեղեքում էին գյուղացիներին: «Լոռվա գյուղացիության ձայնը» բոլշևիկյան թերթը հաղորդում էր, որ Լոռվա աշխատավոր գյուղացիներից գանձվում է ավելի քան 14 տեսակի հարկ:

Հայաստանում սովետական կարգերի հաղթանակից հետո Վրաստանի մենշևիկյան կառավարությունը էլ ավելի ուժեղացրեց Լոռու աշխատավորության հալածանքներն ու ճնշումը: Նա բացահայտ թշնամական դիրք բռնեց Սովետական Հայաստանի նկատմամբ: ՀՍՍՀ Հեղկոմը 1920 թ. դեկտեմբերին Վրաստանի կառավարությանը ներկայացրած մի շարք նոտաներով վճռականորեն պահանջում էր վերջ տալ աշխատավորության նկատմամբ կիրառվող բռնություններին ու կամայականություններին, մենշևիկյան զորքերը դուրս բերել Լոռուց: Սակայն վերջինը մերժում էր Հեղկոմի առաջարկները և շարունակում իր հակաժողովրդական քաղաքականությունը:

Լոռու բոլշևիկյան կազմակերպությունները, որոնք Հայաստանի հնագույն և ուժեղ կազմակերպություններից էին, ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի ցուցումներով, Վրաստանի և Հայաստանի կոմու-

նիստական կուսակցությունների անմիջական ղեկավարությամբ, սկսեցին աշխատավորությանը նախապատրաստել զինված ապստամբության:

1920 թվականի դեկտեմբերին Լոռու գավառի մի շարք գյուղերում գումարվեցին համագումարներ, միտինգներ, ժողովներ, որտեղ աշխատավորներն իրենց բուն զայրույթն էին հայտնում Վրաստանի մենշևիկյան կառավարության դեմ և պահանջում Լոռին միացնել Սովետական Հայաստանին: Նրանք օգնության համար դիմեցին Սովետական Ռուսաստանին, Հայաստանին ու Ադրբեջանին: Շուտով Չարաքիլիսայում կազմակերպվում է Լոռու ապստամբության շտաբ, որի գլուխ է կանգնում ՀԿ(բ)Կ Կենտկոմից գործուղված Հ. Լազյանը: 1921 թ. փետրվարի 7-ին կազմակերպվեց Լոռու ռազմահեղափոխական կոմիտե, որի կազմի մեջ մտան Հ. Լազյանը, Գ. Առուստամյանը, Ս. Սարգսյանը, Ս. Էփոյանը և ուրիշներ: Լոռու կոմիտեն կազմակերպում է նաև գյուղական հեղկոմներ, արտակարգ հանձնաժողով, կարևոր հիմնարկներում նշանակում է կոմիտարներ և այլն: Հատուկ ուշադրություն նվիրվեց մենշևիկյան զորքի մեջ, ինչպես և Լոռու ադրբեջանական գյուղերում կազմակերպվող ագիտացիոն-մասսայական աշխատանքին:

Նախապատրաստական բոլոր աշխատանքներն ավարտելուց հետո, նշված ժամկետին՝ 1921 թ. փետրվարի 11-ի լույս 12-ի գիշերը, Լոռիում սկսվում է զինված ապստամբություն: «Մենք գիտենք, — ասում է Վ. Ի. Լևինը 1921 թ. փետրվարի 28-ին Մոսկվայի սովետի պլենումի նիստում տված զեկուցման մեջ, — որ ապստամբությունը Հայաստանում սկսվեց հենց այն շեզոք գոտում, որն ընկած է Վրաստանի ու Հայաստանի միջև և որը Վրաստանը գրավել է Անտանտի իմպերիալիստների բուլլոյությունով...: Վրացական մենշևիկների ձեռքին էր գտնվում հայ գյուղացիությանը միակ երկաթուղով պարենավորելու բանալին!»:

Առաջին իսկ օրը ապստամբները մեծ հաղթանակ տարան: Կայծակնային հարվածով գրավելով Շահալիի կամուրջը, նրանց հաջողվում է կանխել կամուրջի պայթեցումը, որ նախապատրաստել էր մենշևիկյան կայազորը:

Շուտով ազատագրվեցին մի շարք գյուղեր: Մենշևիկյան բանակում բոլշևիկների եռանդուն գործունեության շնորհիվ զինվորների մեծամասնությունը ամենուրեք անցնում է ապստամբների կողմը: Սակայն, այսպես կոչված, մենշևիկյան գվարդիականները կատաղի դիմադրություն են ցույց տալիս ապստամբներին և հրետանային ուժեղ կրակով ավերում Վորոնցովկա, Պրիվոլնոյե և մոտակա մի շարք բնակավայրեր: Լոռու հեղկոմը և ապստամբության շտաբը դիմում են Չարաքիլիսայում կանգնած XI կարմիր բանակին և անմիջապես օգնություն ստանում: «Պարզ է, իհարկե, — ասել է Գ. Օրջոնիկի-

Լվ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 175:

ձեն, — որ մոտ կանգնած կարմիր բանակը չէր կարող սառնարյուն կերպով նայել, թե ինչպես են մենշևիկները գնդակահարում սովետական իշխանության համար ապստամբություն բարձրացրած գյուղացիներին: Բոցավառվող Վորոնցովկա և Պրիվոլնոյե գյուղերը մի ազդանշան եղան, որոնք կարմիր բանակին օգնության կանչեցին ապստամբներին...»:

1921 թ. փետրվարի 14-ին կարմիր բանակի զորամասերի օգնությամբ զինված ապստամբությունը լիակատար հաղթանակ տարավ ամբողջ զավառում: Ազատագրվելով մենշևիկյան լծից, Լոռին միացավ Սովետական Հայաստանին:

Փետրվարի 25-ին Վրաստանում հաստատվեց սովետական իշխանություն: Թիֆլիսի ուղղությամբ հարձակվող զորամասերի մեջ էին նաև Հայկական հեծյալ բրիգադը և Լոռու պարտիզանական հատուկ զույգը, որոնց շարքերում կովում էր մոտ 2000 մարդ:

Ալեքսանդրապոլի պայմանագրի վերանայումը

Հայաստանի Հեղկոմի առաջին կարևորագույն քայլերից մեկը եղավ այն, որ նա շճանաչեց ղեկավարների 2-ին Ալեքսանդրապոլում դաշնակցականներին կնքած ապօրինի պայմանագիրը և չեղյալ հայտարարեց այն: Դեկտեմբերի 10-ի նոտայով թուրքական կառավարությանն առաջարկվեց շտապ կարգով հրավիրել նոր կոնֆերանս արդարացի հաշտության պայմանագիր կնքելու համար: Հեղկոմը միաժամանակ մի շարք նոտաներով բողոք հայտնեց թուրքական կառավարությանը՝ օկուպացված հայկական շրջաններում հրեշավոր շարագործություններ կատարելու դեմ, պահանջեց թուրքական զորքերը դուրս բերել Ալեքսանդրապոլի օկուպից և հայ բնակչություն ունեցող սահմանակից շրջաններից, ետ վերադարձնել էրզրումի համակենտրոնացման ճամբարում ծանր վիճակի մեջ գտնվող հայ ռազմագերիներին:

Քեմալական կառավարությունը, չնայած նրա որոշ գործիչների կեղծ հայտարարություններին, թշնամաբար էր տրամադրված Սովետական Հայաստանի նկատմամբ, շարունակում էր իր ջարդարարական, կողոպտաչական հին քաղաքականությունը՝ նա՛ մերժեց հայ-թուրքական կոնֆերանս հրավիրելու և Ալեքսանդրապոլի պայմանագիրը վերանայելու առաջարկը: Հայաստանի Հեղկոմը հարկադրված եղավ դիմել Սովետական Ռուսաստանի կառավարությանը՝ խնդրելով օգնություն ցույց տալ իրեն, ներառել թուրքիայի վրա: Սովետական Ռուսաստանի կառավարությունը դիվանագիտական բանակցություններ սկսեց թուրքիայի հետ: Որոշվեց հրավիրել սովետա-թուրքական կոնֆերանս՝ Հայաստանի և Ադրբեջանի սովետական կառավարությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Վ. Ի. Լենինը 1920 թ. դեկտեմբերի 13-ին ընդունելով Հայաստանի Հեղկոմի անդամներ Ա. Մոսվյանին և Ս. Տեր-Գաբրիելյանին, խոստա-

նում էր միջոցներ ձեռք առնել թուրքական զավթիչներից ազատելու Ալեքսանդրապոլն ու երկաթուղին:

Սովետական Ռուսաստանի կառավարության անունից արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինը բողոք է հայտնում Մուստաֆա Քեմալին՝ Հայաստանում նրա զորքերի կատարած ռճրագործությունների կապակցությամբ և ՀՍՍՀ Հեղկոմի նախագահ Ս. Կասյանին հղած հեռագրում խոստանում, որ Սովետական Ռուսաստանի կառավարությունը ամենավճռական կերպով կպահանջի թուրքական կառավարությունից՝ փոխելու իր վերաբերմունքը Սովետական Հայաստանի նկատմամբ:

1921 թ. փետրվար-մարտ ամիսներին Մոսկվայում տեղի ունեցավ սովետա-թուրքական կոնֆերանս: Հունվարի վերջին Մոսկվա էր մեկնել հայկական պատվիրակությունն արտաքին գործերի ժողկոմ Ա. Բեկզադյանի գլխավորությամբ: Սակայն թուրքական կառավարությունը կտրականապես դեմ դուրս եկավ այդ բանակցություններին հայկական պատվիրակության մասնակցությանը: Թուրքական կառավարությունը այդ ամիսներին փաստորեն չէր ճանաչում սովետական իշխանության գոյությունը Հայաստանում: Այս հարցում քիչ բացասական դեր չխաղաց նաև դաշնակցականների փետրվարյան խռովությունը, որը շարամտորեն օգտագործվում էր թուրքական դիվանագիտության կողմից: 1921 թ. փետրվարի 18-ին Երևանը զավթած դաշնակցականները հեռագրում են Մոսկվա, թե Ա. Բեկզադյանը իրավունք չունի հանդես գալ հայկական կառավարության անունից: Դա ձեռնտու էր թուրքիային, քանի որ նրան հայտնի էր, որ դաշնակցական խռովարարները Ալեքսանդրապոլի պայմանագրի վերանայման հարց չեն դնում: Ուստի պատահական չէ, որ 1921 թ. Մոսկվայի սովետա-թուրքական կոնֆերանսում թուրքական պատվիրակությունը թունոտ ձևով հայտարարեց, թե ինքը Հայաստանի ներկայացուցիչ ճանաչում է ոչ թե Հեղկոմի, այլ «Փրկության կոմիտեի» ներկայացուցիչին:

Կոնֆերանսում տեղի ունեցած բանակցություններում Սովետական Ռուսաստանի կառավարությունը եռանդուն կերպով առաջ է քաշում հայ ժողովրդի օրինական տերիտորիալ պահանջները, սակայն հանդիպում է թուրքիայի խիստ բացասական վերաբերմունքին: Թուրքական պատվիրակությունը նույնիսկ լսել չէր ուզում իր գրաված տերիտորիաներից հեռանալու մասին, նա ցանկանում էր իր ձեռքում պահել Բաթումի և Կարսի մարզերը, Ախալքալախի և Ախալցխայի շրջանները, Սուրմալուի գավառը, պահանջում էր մեծ քանակությամբ ոսկի և այլն: Ուստի սովետական պատվիրակությունը հարկադրված էր մեծ դժվարություններ հաղթահարել թուրք նվաճողների ախորժակը սահմանափակելու համար: Զպետք է մոռանալ, որ սովետա-թուրքական բանակցություններն ընթանում էին ոչ միայն Սովետական Հայաստանի, այլև Ռուսաստանի

Համար անբարենպաստ պայմաններում, որից ամեն կերպ օգուտ էր քաղում թուրքական պատվիրակությունը: Նախ, այդ նույն ժամանակ թուրքական մի ուրիշ պատվիրակություն Լոնդոնում բանակցություններ էր վարում Անտանտի երկրների հետ, և վերջիններս Թուրքիային մեծ խոստումներ էին տալիս նրան Սովետական Ռուսաստանի դեմ հանելու համար: Բացի այդ, երկիրը գտնվում էր պարենային և վառելիքային ծանր դրություն մեջ, Կրոնշտադտում սկսվել էր հակասովետական խռովություն, որից ցանկանում էին օգտվել երկրի թե՛ ներքին, թե՛ արտաքին թշնամիները:

Չնայած թուրքական պատվիրակության համառ առարկություններին, 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում կնքված սովետա-թուրքական պայմանագրի համաձայն փաստորեն շեղյալ հայտարարվեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Մակայն հաշվի առնելով, որ այդ հողի վրա կարող են խիստ լարվել սովետա-թուրքական հարաբերությունները, ընդհուպ մինչև դրանց խզումը, սովետական կառավարությունը տերիտորիալ հարցերում ստիպված եղավ բավարարվել միայն Ալեքսանդրապոլի գավառի ազատագրումով: Թուրքական պատվիրակության անդիջում պահանջի հետևանքով սովետա-թուրքական պայմանագրի 3-րդ կետով Նախիջևանի մարզը հայտարարվեց «Ինքնավար տերիտորիա՝ Ադրբեջանի հովանավորությամբ, պայմանով, որ Ադրբեջանը իր հովանավորությունը չդիջի որևէ երրորդ պետության», այսինքն՝ Սովետական Հայաստանին:

Այն հարցին, թե ինչով էր բացատրվում Կարսի, Արդահանի և Արզվինի զիջումը քեմալական Թուրքիային, Գ. Կ. Օրջոնիկիձեն 1921 թ. ապրիլի 11-ին Բաքվի սովետի նիստում տվել է հետևյալ պատասխանը. «...Այստեղ մենք ստիպված էինք հաշվի նստել կատարված փաստի հետ: Դաշնակցականներն արդեն համապատասխան պայմանագրեր էին կնքել, թուրքերը գրավել էին իրենց հանձնված մարզերը և Մոսկվայում մեզ հետ բանակցություններ վարելու ժամանակ կտրականապես հրաժարվում էին վերադարձնել դրանք մեզ: Այդ բանի համար մենք թուրքերի հետ բախվել չէինք ցանկանում: Դա ձեռնառու կլիներ միայն Անգլիային ու Ֆրանսիային»:

Հակառակ Մոսկվայի պայմանագրի, Թուրքիայի արևելյան ռազմաճակատի հրամանատարությունը ձգձգում էր օկուպացիոն զորքերի դուրսբերումը Ալեքսանդրապոլի գավառից: Միայն Սովետական Ռուսաստանի վճռական պահանջով էր, որ թուրքական զորքերը ապրիլի 22-ին ետ քաշվեցին այդ գավառից: Սովետական Ռուսաստանի աջակցությամբ Ալեքսանդրապոլի ազատագրումը և նրա միացումը Սովետական Հայաստանին վերջ դրեց թուրք ջարդարանների հրեշավոր շարա-

զործություններին: Սովետական Հայաստանի երկաթուղային տրանսպորտը դուրս եկավ փակուղուց: Ալեքսանդրապոլի աշխատավորությունը կանգնեց կյանքի նոր ուղու վրա:

XXVI Գ Լ Ո Ւ Խ

ԲԱՂԱԲԱՅԻԱԿԱՆ ԿՈՒՎՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1921 ԹՎԱԿԱՆԻՆ

1. ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԽՈՒՎՈՒՅՑՈՒՆԸ

Դաշնակցականների
ընդհատակյա գոր-
ծունեությունը

Դաշնակցականները չէին հաշտվել իրենց անփառունակ վարչակարգի տապալման փաստի հետ, ամեն կերպ աշխատում էին վերականգնել հին կարգերը: Այդ նպատակին հասնելու համար նրանք իրենց շուրջը համախմբեցին երկրի բոլոր հակահեղափոխական ուժերին և ընդհատակյա պայքար սկսեցին սովետական իշխանության դեմ: Երևանում, Բաշ-Ֆյառնիում, Աշտարակում, Էջմիածնում, Դարալագյազում և մի քանի այլ շրջաններում նրանք կազմակերպեցին զինված ջոկատներ: Դաշնակցականները նախապատրաստական աշխատանք էին կատարում նաև Չանգեզուրում, որը դեռևս գտնվում էր նրանց ձեռքին: 1920 թ. դեկտեմբերի կեսերին Երևանում ստեղծվել էր դաշնակցական գաղտնի կոմիտե:

Դաշնակցականների կողմից սովետական իշխանության դեմ նախապատրաստվող դավադրությունը միջազգային հակասովետական պայքարի մի օղակն էր Անդրկովկասում: Իմպերիալիստական տերությունները նույնիսկ չէին թաքցնում իրենց նվաճողական նպատակները Անդրկովկասի նկատմամբ: 1920 թ. դեկտեմբերի 16-ին ֆրանսիական «գերագույն կոմիսար» Շևալիեն Թիֆլիսում մենշևիկյան Վրաստանի հեռագրական գործակալության աշխատակցին հայտարարել էր, որ պետք է տապալել Հայաստանի և Ադրբեջանի սովետական իշխանությունները: 1921 թ. հունվարի 27-ին անգլիական բուրժուազիայի օրգան «Թայմս» թերթը նշելով, որ «դաշնակցականների լիդերները այս ամսի սկզբին Թիֆլիսում ունեցած կոնֆերանսում վճռել են բոլոր հնարավոր միջոցներով շարունակել կռիվը բոլշևիզմի դեմ», անհրաժեշտ էր համարում այդ գործում դրսից նրանց օգնություն կազմակերպելը: Դաշնակցականները իրական օգնություն էին սպասում ոչ միայն անգլո-ամերիկյան և ֆրան-

սիական իմպերիալիստներից, այլև Վրաստանի մենշևիկյան կառավարությունից և քեմալական Թուրքիայից:

Դաշնակցականների հակասովետական խռովությունը նախապատրաստվում էր երկրի համար ստեղծված ծանր պայմաններում: Մենշևիկյան Վրաստանը փակել էր Սովետական Ռուսաստանից և Սովետական Ադրբեջանից դեպի Հայաստան մեկնող պարենամթերքով բեռնված գնացքների ճանապարհը:

Դաշնակցականներն օգտագործեցին ռազմական կոմունիզմի քաղաքականության իրականացման ընթացքում մի շարք տեղերում թույլ տրված սխալների հետևանքով բնակչության մի մասի մեջ առաջացած դժգոհությունը, վարկաբեկում էին սովետական իշխանության տնտեսական քաղաքականությունը:

Դեռևս ամրապնդված չէր Հայաստանի երիտասարդ կարմիր բանակը, որի ուժերի զգալի մասը 1921 թ. փետրվարին օգնության կարգով մասնակցում էր Լոռիում, ինչպես նաև ամբողջ Բորչալուի գավառում վրացական մենշևիկների դեմ ուղղված ապստամբությունը: Մյուս կողմից, երկրի տնտեսական դժվարությունները անհնարին էին դարձնում Հայաստանում մեծ քանակությամբ զորամասեր պահելը:

Բացասաբար էր ազդում նաև կուսակցական, սովետական և զինվորական կադրերի այն պակասը, որ զգացվում էր սովետական իշխանությունյան առաջին ամիսներին: Դեռևս չէին ամրապնդվել սովետական իշխանության տեղական օրգանները, թույլ էր քաղաքական-մասսայական աշխատանքը գյուղում, մասնավորապես արևմտահայ գաղթականությունյան մեջ:

Հայաստանի Հեղկոմը դաշնակցական պարագլուխների (Ս. Վրացյան, Դրո և ուրիշներ) նկատմամբ վճռական միջոցներ ձեռք չառավ: Վերջիններս օգտագործում էին բոլոր լեզու և անլեզու հնարավորությունները հակահեղափոխական խռովություն նախապատրաստելու համար: Բացի այդ, Հայաստանի կուսակցական-պետական ղեկավար գործիչների մեջ դաշնակցության նկատմամբ վարվող քաղաքականության հարցում 1921 թվականի հունվարին և փետրվարի առաջին կեսին սուր տարաձայնություններ կային, որոնք ճարպկորեն օգտագործվում էին դաշնակցականների կողմից:

Սովետական իշխանության դեմ դաշնակցականներն իրենց դավադրության առաջին փորձը կատարեցին 1921 թ. հունվարի 22-ին Բաշ-Գյառնի (այժմ՝ Գառնի) գյուղում, ուր գտնվում էր խռովարարների

Փետրվարյան հակահեղափոխական խռովության սկիզբը

զլխավոր շտաբը՝ կարմիր բանակից փախած գնդապետ Թարխանյանի ղեկավարությամբ: Գրավելով Բաշ-Գյառնին, դաշնակ խռովարարները մտադիր էին այնտեղից հարձակվել Երևանի վրա: Սակայն կարմիր բա-

նակի զորամասերը, տեղական աշխատավորության օգնությամբ, մի քանի օրվա ընթացքում ճնշեցին այդ խռովությունը:

Դաշնակցականների հակահեղափոխական ընդհանուր խռովությունն սկսվեց 1921 թ. փետրվարի 13-ին: Այդ օրը դաշնակցական զինված ջոկատները Զանգեզուրի կողմից հարձակվում են Քեշիշքենդի վրա (այժմ՝ Եղեգնաձոր) և, հանկարծակիի բերելով, գաղանաբար սրախողխող անում XI կարմիր բանակի XX դիվիզիայի 180-րդ գնդի շատ մարտիկներին ու սպաններին, իսկ մնացածներին գերի վերցնում: Գրավելով Գարալագյազը, դաշնակցական ջոկատները խմբապետներ Նժդեհի ու Յապոնի հրամանատարությամբ շարժվում են դեպի Նոր Բայազետ և գրավում այն: Միաժամանակ զինված ելույթներ են տեղի ունենում Բաշ-Գյառնիում, Ապարանում, Էջմիածնում, Աշտարակում, Ախտալում, Նիկնովկայում և այլ վայրերում: Այսպիսով, դաշնակցականներն իրենց կազմակերպած խռովությամբ երիտասարդ Սովետական Հայաստանը ներքաշեցին քաղաքացիական պատերազմի մեջ:

Քեշիշքենդի վրա կատարված հարձակումը փետրվարյան խռովության ազդանշան հանդիսացավ: Փետրվարի 16-ին խմբապետ Մարտիրոսի ջոկատը, առաջ շարժվելով, գրավում է Գյամրեկ, Ճաթղոան, Բաշգյուղ, Արամուս, Ողջաբերդ և այլ գյուղեր: Ապա հարձակման անցնելով Թաղազյուղ-Քանաքեռ ուղղությամբ, գրավում է Էլար-Մհուր գիծը, որի հետևանքով կտրվում է հեռախոսային կապը Հայաստանի կարմիր բանակի և XI բանակի հրամանատարության միջև: Նույն օրը խմբապետ Սմբատը, շարժվելով Աշտարակի խճուղիով, գրավում է Փարպի և Կարպի գյուղերը: Դաշնակցականները հարձակման են անցնում նաև Շորբուլաղ—Նորը—Երևան, Բաշ-Գյառնի—Վ. Աղբաշ—Երևան և Ուլուխանլու—Վ. Աղբաշ—Երևան ուղղություններով:

Դաշնակցականների զինված ուժերի մեջ մտնում էին գլխավորապես խմբապետ-մուղերիստների խմբերը, որոնց մի մասը գաղտնի կերպով Զանգեզուրից տեղափոխվել էր Սովետական Հայաստան: 1921 թ. փետրվարի 15-ին հակառակորդի բանակը կազմված էր Բաշ-Գյառնիում՝ խմբապետ Մարտիրոսի, Ալագյազում՝ խմբապետ Սմբատի, Նեջուլում՝ խմբապետ Արամյանի ջոկատներից և Երևանի մաուզերիստների խմբից, որի գլուխ էր կանգնած Երևանի պարետի օգնական դաշնակցական Սարգսյանը:

Այդ ժամանակ կարմիր բանակը բաղկացած էր երկրորդ հրաձգային բրիգադից (հրամանատար՝ Երմոլենկո), որը գտնվում էր Ապարան—Աշտարակ—Էջմիածին—Սարդարապատ գծի վրա, առաջին հրաձգային բրիգադից (հրամանատար՝ Միրիմանյան), որը գտնվում էր Ղամարլու—Վեդի գծի վրա, ապա Նոր Բայազետի խմբից (հրամանատար՝ Բեկ-Զուրաբյան), Գարալագյազի ջոկատից (հրամանատար՝ Մելիք-Մու-

րադյան) և բանակի պահեստային մասից (3-րդ հրաձգային բրիգադ, հրամանատար՝ Տիմչենկո), որը գտնվում էր Երևան—Քանաքեռ—Ախտա—Սևան գծի վրա: Կարմիր բանակի տրամադրությունն սակ էին գրտնրվում «Մուսալեյան» (նախկին «Վարդան զորավար») և «Ազատամարտ» զրահագնացքները: 1921 թ. հունվարի սկզբին Դրոյի փոխարեն հանրապետության կարմիր բանակի հրամանատար էր նշանակվել Մ. Մուկաչանովը, կոմիսարն էր Ի. Սվիրիդովը:

Փետրվարի 17-ին էջմիածնի և Աշտարակի շրջանները գտնվում էին խմբապետների Սմբատի և Կարո Սասունու խմբերի ձեռքում: Առաջ շարժվելով դեպի Երևան, երեկոյան նրանք մոտենում են Հրազդան գետի կամրջին: Նույն օրը համառ մարտեր են տեղի ունենում Քանաքեռում: Այստեղ թշնամու գերազանցող ուժերի դեմ մղվող կռվում առանձնապես աչքի է ընկնում Երևանի կայազորի պետ Նիկոլայ Երմոլենկոյի հրամանատարությունը գործող ջոկատը, որի մարտիկները, խիզախ հրամանատարի հետ միասին, հերոսաբար զոհվում են իրենց մարտական գիրքերում: Հակառակորդը բոլոր միջոցներով աշխատում էր տիրանալ հանրապետության մայրաքաղաք Երևանին, որը շրջապատվել էր երեք կողմից:

Երևանում գտնվող սովետական զորամասերը և աշխատավորությունը Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի և Հայաստանի Հեղկոմի ղեկավարությունը ձեռք են առնում մի շարք միջոցներ քաղաքը պաշտպանելու համար: Կոմունիստներից ու կոմերիտականներից կազմակերպվում է կոմունիստական ջոկատ, որի գլուխ է կանգնում հին բոլշևիկ, սպիտակգվարդիականության դեմ մղվող պայքարի ակտիվ կազմակերպիչներից մեկը՝ Ն. Յանիշևսկին: Զինվում է քաղաքի միլիցիան: Հատուկ ջոկատ է կազմակերպվում Երևանում իր աշխատանքը նոր ավարտած անկուսակցական կարմիրբանակայինների առաջին կոնֆերանսի պատգամավորներից և ռազմաքաղաքական դրությունի ունկնդիրներից: Հրաման է տրվում 178-րդ գնդին Շահխաթից շտապ դեպի Երևան շարժվելու մասին:

Փետրվարի 18-ի վաղ առավոտյան թշնամին Քանաքեռի, Նորքի և Հրազդանի կամրջի կողմից մտնում է Երևան, որտեղ տեղի են ունենում կատաղի կռիվներ: Քաղաքի պաշտպանները հերոսական մարտեր են մղում դաշակ-մատուցների խմբերի դեմ: Երևանի շատ փողոցներում հրաձգությունը փոխվում է սվինամարտի ու բռնցքամարտի: Շատ շենքեր ձեռքից ձեռք են անցնում: Սակայն ուժերն անհավասար էին: Չնայած որոշ հաջողություններին, այնուհետևայնիվ, դրուսյունը չի փոխում նաև 178-րդ գունդը, որը Շահխաթ—Երևան ճանապարհին ուղացել էր «Ազատամարտ» զրահագնացքի հրամանատարի և մեքենավարի դավաճանության պատճառով: Փետրվարի 18-ի երեկոյան

քաղաքը գտնվում էր խոտվարարների ձեռքին, որոնք սկսում են դաժան հաշվահարգար տեսնել կոմունիստների և նրանց ընտանիքների հետ:

Կարմիր բանակի զորամասերը հարկադրված են լինում թողնել Երևանը, կուսակցական ու սովետական ղեկավար օրգանների հետ միասին, 178-րդ գնդի և «Ազատամարտ» ու «Մուսալեյան» զրահագնացքների պաշտպանության տակ, տեղափոխվել Ղամարլուի շրջան: Այստեղ նրանք միանում են հայկական առաջին հրաձգային բրիգադին և տեղավորվում Ղամարլուի ու Վեդու շրջանների գյուղերում: ՀԿ(բ)Կ Կենտկոմը, ՀՍՍՀ Հեղկոմը, զորքերի շտաբը և մյուս հիմնարկները գտնվում էին վազոնների մեջ, որոնք կանգնած էին Արարատ կայարանում:

Նույն օրը՝ փետրվարի 18-ին Երևանում կազմակերպվում է դաշակցականների այսպես կոչված «Հայրենիքի փրկության կոմիտե»՝ Մ. Վրացյանի ղեկավարությամբ: Գրաված շրջաններում ստեղծվում են «Հայրենիքի փրկության» շրջանային կոմիտեներ, որոնց գլուխ են կանգնում տեղի հակահեղափոխական ուժերը:

Հայաստանի մի մասում ժամանակավորապես կանգնելով իշխանության գլուխ, դաշակցականները վերականգնեցին կողոպուտի, կամաչականության և տեղորի իրենց դաժան ուժի մը: Մատուցների ուժով նրանք ահաբեկում էին աշխատավորությանը, մասսայաբար բանտ էին նետում կոմունիստներին, հեղափոխական բանվորներին ու գյուղացիներին: Լցված սովետական իշխանության նկատմամբ խոր ատելությունը, դաշակցական խոտվարարներն ամեն տեսակի ստոր միջոցների էին դիմում աշխատավոր մասսաներին խաբելու, նրանց սովետական իշխանության դեմ դուրս բերելու համար:

Ի պատասխան այդ շարանները պրոպոկացիաների, Հայաստանի աշխատավորությունը դատապարտում էր դաշակցական արկածախնդիրների կազմակերպած խոտվությունը և կոմունիստների ղեկավարությունը զենքը ձեռքին պայքարի էր դուրս գալիս սովետական կարգերը պաշտպանելու համար: Իջևանի աշխատավոր գյուղացիները փետրվարի 27-ի միտինգում ընդունված բանաձևում գրել են. «Հաստատ խոսք ենք տալիս զենքը ձեռքից վայր չդնել մինչև Հայաստանում վերջնականապես հաստատվի բանվորների և գյուղացիների իշխանությունը»:

Դաշակցականների խոտվությունը բուռն զայրույթ առաջ բերեց ամբողջ Անդրկովկասի աշխատավորության, այդ թվում և հայ մտավորականության մեջ: «Սրտի խորին կսկիծով հաստատ աղբյուրներից տեղեկանում ենք,— գրել է մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը,— որ Երևանի «հեղաշրջում» կոչված ավանտյուրան կատարողները կույր գործիք են հանդիսացել մի սոսկալի դավադրության, նույնիսկ հայ ժողովրդի և նրա դատի դեմ և որ հեղաշրջումը կատարվել է արյունալի ոճիրներով: Էսպիսով, մի նոր աղետ է գալիս դժբախտ հայ

ժողովրդի գլխին հենց էն ժամանակ, երբ նա պետք է ազատվեր ամեն աղետներից»։ Մեծանուն բանաստեղծը դաշնակիների խոսվածքները ճշմարտեպես համար հայ ժողովրդի անունից օգնություն էր խնդրում Սովետական Ռուսաստանից։

Նկատի ունենալով, որ Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմը և Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտեն գրտնրվում էին Ղամարլու՝ շրջապատման մեջ և, կտրված էին Սովետական Հայաստանի մյուս շրջաններից, մարտի 4-ին Գիլիջանում ստեղծվում է ՀԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրո, որի մեջ մտնում են Ա. Մուսվաթյանը, Ա. Խանջյանը, Գ. Ալիխանյանը, Ղազար-Գիլիջանի խմբավորման գործերի ղեկավարական կոմիտեի ն. Պոլյանսկին և ուրիշներ։ Դեռևս փետրվարի 26-ին Գիլիջանում ստեղծվել էր Հայաստանի հյուսիսային գավառների Ռազմահեղափոխական կոմիտե՝ հին բոլշևիկ, Հյուսիսային Կովկասի քաղաքացիական կռիվների բոցերի մեջ կոփված Գեորգ Աթաբեկյանի նախագահությամբ։ ՀԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրոն և Ռազմահեղափոխական կոմիտեն Հայաստանի բոլոր սովետական շրջաններում հայտարարեցին ռազմական դրություն, մոբիլիզացնելով աշխատավորության ուժերը, հաջողությամբ սկսեցին պայքարը դաշնակցականների դեմ։

Կոմունիստական կազմակերպությունների ղեկավարությամբ Հայաստանի բոլոր շրջաններում ստեղծվում են պարտիզանական մարտական ջոկատներ, որոնք ակտիվորեն մասնակցում են փետրվարյան խոսվածքային ճնշմանը։

**Ղամարլուի ռազմա-
ճակատը**

1921 թ. քաղաքացիական կռիվների պատմության մեջ բացառիկ տեղ է գրավում Ղամարլուի ռազմա-ճակատը։ Այստեղ շրջապատման մեջ գտնվող սովետական զորամասերը 45 օր շարունակ հերոսական պայքար մղեցին թվով մի քանի անգամ գերազանցող թշնամու դեմ։

Բռնի զորահավաքի միջոցով և դրսից օգնություն ստանալով, դաշնակցականներին հաջողվում է զինվորների թիվը հասցնել 7000-ի (6000 հետևակ, 1000 հեծյալ), հրանոթների թիվը՝ 28-ի։ Ղամարլուի ռազմա-ճակատում կարմիր զորամասերն ունեին 1664 հետևակ, 70 հեծյալ, 2 զրահագնացք, 11 հրանոթ և 64 գնդացիր։

Վերադասավորելով ուժերը, ամրացնելով Յանիշևսկու գլխավորած կոմունիստական ջոկատը, կարմիր բանակի շարքերը համարելով տեղի աշխատավոր գյուղացիներով, Ղամարլու—Վեդի գծի վրա գտնվող կարմիր զորամասերը փետրվարի 24-ի լույս 25-ի գիշերը երկու ուղղությամբ անցան հարձակման Երևանն ազատագրելու համար։ Առանձնապես լարված մարտեր տեղի ունեցան Վ. Աղբաշ—Ուլուխանլու հատվածում։ Ծանր մարտեր մղելով, կարմիր բանակի զորամասերը առաջ

շարժվեցին դեպի Երևան և հասան քաղաքից մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող Վ. Շենգավիթ և Չարբախ գյուղերը։ Չնայած այդ կռիվներում թշնամին մեծ կորուստներ կրեց, սակայն ստանալով նոր ուժեր, փետրվարի 28-ի գիշերը կարմիր զորամասերին հարկադրեց ետ քաշվել գրաված դիրքերից։

Ղամարլուի ռազմաճակատում ռազմական գործողությունները լայն ծավալ են ստանում մարտ ամսին։ Նպատակ ունենալով թիկունքից հարվածել Ղամարլու—Վեդի գծում գործող սովետական զորամասերին և լիովին շրջապատել նրանց, միանալ «Հայրենիքի փրկության կոմիտեի» Երևանում գտնվող զինված ուժերին։ Դարալագազում ամրացած խմբապետ Յապոնի զինված խումբը մարտի 1-ին ուժեղ հարձակումներ է կատարում Վեդու ուղղությամբ։

Սակայն թշնամուն չի հաջողվում իրագործել իր մտադրությունները։ ՀԿ(Բ)Կ Կենտկոմի, Հայաստանի Հեղկոմի և բանակի հրամանատարության խնդրանքով օգնության է գալիս Նախիջևանի բանվորներից ու աշխատավոր գյուղացիներից կազմված «Կարմիր տաբուր» պարտիզանական ջոկատը՝ ժողովրդական հերոս Աբբաս-Ղուլի Շադիխանլու գլխավորությամբ։

Հուլյս ունենալով մինչև XI բանակի ուժերի գալը լիկվիդացնել Ղամարլուի ճակատը, դաշնակցականները մարտի 8-ին Երևանի կողմից հարձակվում են Փոքր-Վեդի գյուղի և Խոր-Վիրապի վրա։ Տեղի են ունենում համառ մարտեր, որոնց ընթացքում թշնամին, հանդիպելով հայկական կարմիր բանակի առաջին հրաձգային բրիգադի հակադրոհներին, ջախջախվում և խուճապահար նահանջում է։ Այդ օրը բացառիկ խիզախություն է ցուցաբերում հայկական բրիգադի մարտական կոմիտեի կապրիտ Մաշյանը, որը ծանր վիրավորվում է մարտի դաշտում և ապրիլի 16-ին մահանում Երևանում։ Հակառակորդը մեծ կորուստներ է կրում։ Նա տալիս է ավելի քան հարյուր սպանված և շատ վիրավորներ, մարտի դաշտում թողնելով երկու գնդացիր, բազմաթիվ հրացաններ և այլ զենքեր։

Մարտի 9-ին Ղամարլուի ռազմաճակատի զորամասերին հաջողվում է վերականգնել Թիֆլիսի և Բաքվի հետ ընդհատված ռադիոկապը։ Մարտիկների մեջ մեծ ոգևորություն է առաջ բերում այն լուրը, որ XI բանակի ուժերը շարժվում են դեպի Երևան։

Իր հերթին Ղամարլուի ռազմաճակատի զորամասերը կոտրում են հակառակորդի դիմադրությունը և, առաջ շարժվելով դեպի Երևան, մարտի 17-ին ամրանում են Վ. Աղբաշ—Ուլուխանլու հատվածում։ Աղբաշում մղված մարտում հերոսաբար զոհվում է ռուս ժողովրդի քաջարի զավակ, գնդի հրամանատար Անդրեյ Ֆեշիլևիչը։

Ղամարլուի ռազմաճակատում զգացվում էր ռազմամթերքի և հատ-

կապես պարենի ու հանգերձանքի սուր պակասություն: Մարտիկները կերակրվում էին գլխավորապես շոր մրգով: Սակայն ՌՍՖՍՀ կառավարությունը ցուցումով Գ. Կ. Օրջոնիկիձեն մարտի 25-ին Թիֆլիսից ուղարկում է 47 կգ ոսկի, որով Մակուի և Թավրիզի շուկաներում ձեռք են բերվում անհրաժեշտ սննդամթերքներ և բավարարում բանակի կարիքները: Այդ օրհասական պահին նյութական մեծ օգնությունն ստացվում է սովետական ինքնաթիռով, որի խիզախ օդաչուներ Վսևլոդ Մելնիկովը և Բորիս Կուրդինը, մեծ ղեկավարությամբ հաղթահարելով բնական բոլոր արգելքները, վայրէջք են կատարում Արարատյան դաշտում: Այդ օգնությունն էլ ավելի է բարձրացնում ռազմիկների մարտական ոգին, նրանց մղում քաջության և խիզախության: Հայ ժողովուրդը հրեք չի մոռանա կովկասյան բազենների սխրանքը:

Փետրվարյան խռովության ջախջախումը

Դաշնակցական խմբերի խռովությունն արագորեն ջախջախելու գործում Սովետական Հայաստանի աշխատավորությանը վճռական օգնություն ցույց տվեցին Սովետական Ռուսաստանի զինված ուժերը:

XI կարմիր բանակի 20-րդ դիվիզիայի զորամասերը և պարտիզանական ջոկատները մարտի սկզբից ուժեղ հարձակում սկսեցին Ելենովկա—Նոր Բայազետ, Ելենովկա—Երևան և Համամլու—Ապարան—Երևան ուղղություններով: Գ. Կ. Օրջոնիկիձեն, անդրադառնալով Հայաստանի դրությունը, մարտի 9-ին ասել է. «Ներկա մոմենտում Հայաստանում դրությունն այսպես է. Երևանը շրջապատված է կարմիր զորքերի օղակով: Զորքերի առաջին խումբը գտնվում է Երևանից 18 վերստ հեռավորության վրա՝ Ղամարլուի շրջանում, ունի երկու զրահապատ և բավարար քանակությամբ զնդացիներ: Երկրորդ խումբը գտնվում է Ելենովկայի, Ներքին Ախտայի շրջանում, երրորդ խումբը՝ Համամլու—Ղարաքիլիսայի շրջանում: Օղակը քանի գնում նեղանում է և մոտ օրերս Վրացյանի երևանյան ավանտյուրան, առանց որևէ կասկածի, լիկվիդացիայի կենթարկվի»:

Կորցնելով մենշևիկյան Վրաստանից օգնությունն ստանալու հույսը (այնտեղ արդեն տապալված էր մենշևիկների իշխանությունը), հենարան չունենալով աշխատավոր ժողովրդի մեջ, «Հայրենիքի փրկության կոմիտեն» դիմում է Թուրքիայի օգնությանը:

1921 թ. մարտի 18-ին Ս. Վրացյանը Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությանը ուղղում է մի դիմում, որով խնդրում է իր բանակը համարելու համար վերադարձնել հայ ռազմագերիներին, բաց թողնել ռազմամթերք և ցույց տալ ռազմական այլ օգնություն: Վրացյանը Թուրքիայի օգնությանը դիմելիս ելնում էր 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի պայմանագրից: «Սույն դիմումն անելով, — ասված է վերոհիշյալ փաստաթղթի մեջ, — Հայաստանի կառավարությունը հիմ-

նրվում է այն բարեկամական հարաբերությունների վրա, որոնց հիմք են դրված Ալեքսանդրապոլի դաշնագրից սկսած և որոնք խանգարված էին բոլշևիկյան իշխանության ժամանակ»:

Պատահական չէր, որ այդ օրերին «Հայրենիքի փրկության կոմիտեի» օրգան «Ազատ Հայաստան» թերթուկը անամոթաբար գրում էր, թե իբր «իրերի պատմական բերումով Անդրկովկասի ժողովուրդների քաղաքական ազատության իրական պաշտպանը կարող է դառնալ միայն Տաճկաստանը: Որովհետև Տաճկաստանն է այն միակ իրական մերձավորագույն քաղաքական ուժը, որն անմիջապես և կենսապես շահագրքոված է Անդրկովկասի ժողովուրդների կատարյալ ազատագրմամբ»: Բահաէդդին բեյը Երևանում թուրքական կառավարության անունից դաշնակցականներին հաղորդել է, որ Թուրքիայի կառավարությունը ճանաչում է «Հայրենիքի փրկության կոմիտեին» որպես միակ ազգային իշխանությունը Հայաստանում և չի վարանի ռազմական օգնություն ցույց տալ նրան»:

Դաշնակցականները օգնություն են խնդրում նաև արևմտյան տերություններից, ինչպես և Իրանի խաներից: Ս. Վրացյանը մարտի 18-ին անձնական նամակով դիմում է նաև Զանգեզուրում ծվարած Նժդեհի օգնությանը, հայտնելով նրան, թե «Միրելի Նժդեհ... մտել ենք բանակցությունների մեջ օգնության մասին նաև տաճիկ հրամանատարության հետ»:

Սակայն իրականում ո՛չ ներքին և ո՛չ էլ արտաքին ուժերով դաշնակ-ավանտյուրիստները չէին կարող փրկվել: Նրանց մնում էր անձնատուր լինել: Մարտի 16-ին կարմիր բանակի զորամասերի և պարտիզանական ջոկատների համատեղ զործողությունների շնորհիվ ազատագրվում է Նոր Բայազետը: Այստեղ ծավալված համառ մարտերում աչքի են ընկնում Բաքվի բանվորներից, Նոր Բայազետի, Շամշադինի, Իջևվանի, Գիլիջանի և Ղարաքիլիսայի աշխատավորներից կազմված կոմունիստական-պարտիզանական ջոկատները, որոնց շարքերում կար մոտ 500 մարդ: Այդ մարտերում իրենց հայրենասիրական պարտքը կատարեցին Նոր Բայազետի հազարավոր աշխատավորներ, որոնք թշնամուն հարվածում էին թիկունքից: Ռուսական մի զորամաս, Ելենովկայից առաջ շարժվելով, հասել էր Ախտա: Երևանի ուղղությամբ առաջ էին շարժվում նաև Համամլուից եկած զորամասերը XX դիվիզիայի հրամանատար Ն. Վելիկանովի հրամանատարությամբ:

Հետագա արյունահեղություններից խուսափելու նպատակով մարտի 20-ին Գ. Կ. Օրջոնիկիձեն «Հայրենիքի փրկության կոմիտեի» նախագահից հեռագրով պահանջում է դադարեցնել կռիվը և անձնատուր լինել: Նման առաջարկություն անելու նպատակով նույն օրը Օրջոնիկիձեի հանձնարարությամբ Երևան է մեկնում Հովհաննես Թումանյանը, սակայն դաշնակցականները հրաժարվում են զենքը վայր դնել:

Մարտի 25-ին, երեք հիմնական ուղղութիւններով ծավալելով հարձակումը, կարմիր բանակի զորամասերն ու պարտիզանական ջոկատները շարժվում են դեպի Երևան: Համամուլու—Երևան ուղղութիւնով զործող կարմիր զորամասերը, կտրելով թշնամու համառ դիմադրութիւնը, գրավում են Փամբակի լեռնանցքը: Առաջ շարժվելով, նրանք գրավում են Ապարանը, Աշտարակը: Ելենովկա—Երևան գծում գտնվող զորամասերը մի շարք մարտեր մղելով, հասնում են էլար և առաջ շարժվում դեպի Երևան:

Ձախջախելով հակառակորդի դիմադրութիւնը, կարմիր բանակի զորամասերն ու պարտիզանական ջոկատները Քանաքեռի և Աշտարակի կողմից ապրիլի 2-ին մտնում են Երևան: Սովետական Հայաստանի մայրաքաղաքի վրա նորից ծածանվում է մեծ Հոկտեմբերի կարմիր դրոշը: Ապրիլի 4-ին Երևան են մտնում նաև Ղամարլուի և Վեդու շրջաններում գտնվող սովետական զորամասերն ու պարտիզանական ջոկատները: Հայաստանի բանվորների և գյուղացիների այդ փառավոր հաղթանակի մասին Գ. Աթաբեկյանը ապրիլի 3-ին Երևանից հեռագրում է Մոսկվա՝ Վ. Ի. Լենինին. «Այսօր հայ աշխատավոր մասսաների ջանքերով, կարմիր բանակի զորամասերի օգնութիւնով, լիվիզացված է դաշնակցութիւն կուսակցութեան նողկալի ավանտյուրան»:

Դաշնակցական խռովարարները դուրս շարժվելով Երևանից, Բաշ-Գյառնիի վրայով, խուճապահար փախան Դարալագյազ, իսկ այնտեղից՝ Զանգեզուր: Հետապնդելով ջախջախված հակառակորդին, կարմիր բանակի զորամասերը մինչև ապրիլի 16-ը ազատագրեցին Բաշ-Գյառնին, Ղարանլուղի, Բասարգեշարի և Դարալագյազի շրջանները:

Դաշնակցականների փետրվարյան խռովութեան ջախջախման գործում առավել աչքի ընկած 126 ռազմիկներ ու պարտիզաններ ՀՍՍՀ կարմիր բանակի հրամանատարութեան կողմից պարգևատրվեցին Կարմիր դրոշի շքանշանով: Պարգևատրվածների թվում էին 3-րդ հրաձգային գնդի հրամանատար Արմենակ Բաղդասարյանը, զինկոմ Հակոբ Աթոյանը, գումարտակի հրամանատար Լեոն Կարապետյանը, առաջին հրետանային գնդի դիվիզիայի դիվիզիոնի հրամանատար Գեորգի Սեմիչևը, «Մուսայելյան» զրահագնացքի հրամանատար Մանուկ Աղաբաբյանը, «Կարմիր տաբորի» հրամանատար Աբբաս-Ղուլի Շաղիխսկին, առաջին մարտկոցի դասակի հրամանատար Գեորգի Չալախյանը և ուրիշներ:

Երևանից փախչելիս դաշնակցականները կողոպտեցին պետական գանձարանը, իրենց հետ տանելով մեծ քանակութեամբ դրամ և բազմաթիվ թանկարժեք իրեր: Նրանք գաղանային հաշվեհարդար տեսան ժողովրդի լավագույն զավակների հետ: Այդ օրերին շտեմնված չափերի հասավ սպիտակ տեռորը: Դաշնակցական ճիվաղները դեռևս մարտի 25-ին Երևանի բանտից հանեցին 63 հեղափոխական մարտիկների,

և, տանջանքների ենթարկելով, կիսամերկ ու քաղցած, խիստ հսկողութեան տակ տեղափոխեցին Զանգեզուր՝ այնտեղ գաղանաբար հոշոտելու համար: Ապրիլի 5-ին սվինահար են անում Հայաստանի կոմերիտիութեան Կենտկոմի քարտուղար Արմենակ Բուդաղյանին: Ապրիլի 13-ին Գնդակզում դաշնակցականները սոսկալի տանջանքների ու խոշտանգումների ենթարկելով, սպանեցին 12 հոգու, իսկ ապրիլի 13-ին Տաթևի ժայռից ցած գլորեցին 104 հոգու:

Երախտապարտ հայ ժողովուրդը զոհվածների հիշատակը հավերժացնելու համար Սովետական Հայաստանի բազմաթիվ վայրերում կառուցել է հուշարձաններ:

2. ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

Զանգեզուրը դաշնակցականների լիջնաբերդն էր

Դաշնակցականների իշխանութեան շրջանում անասելի ծանր էր Զանգեզուրի աշխատավորութեան դրութիւնը: Հիմնովին քայքայվել էր գավառի տնտեսական կյանքը: Չէին աշխատում պղնձահանքերը, պղնձածուլարանը: Մոլեգնում էին սովն ու համաճարակը:

Դաշնակցական-խմբապետական վարչակարգի բռնութիւններն ու կամայականութիւնները սահման չունեին: Նրանք անգթորեն կողոպտում էին աշխատավոր գյուղացու վերջին ունեցվածքը: Դաշնակցականների իշխանութեան ամբողջ ժամանակաշրջանում Զանգեզուրը դարձել էր աղգամիջյան արյունալի կոհիլների թատերաբեմ: Նրանք ճնշում ու արշան մեջ խեղդում էին գավառի աշխատավորութեան հեղափոխական շարժումները, առանձնապես դաժան դատաստան էին տեսնում կոմունիստների նկատմամբ:

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո դաշնակցականները Զանգեզուրը դարձրել էին հակասովետական ուժերի որջ: 1920 թ. դեկտեմբերի 25-ին Տաթևի վանքում տեղի ունեցավ դաշնակցականների և հակահեղափոխական մյուս կուսակցութիւնների, հոգևորականների ու կուսակների համագումար, որտեղ Զանգեզուրը հայտարարվեց «Ինքնավար Սյունիք»: Այստեղ նժգեզը, որպես ռազմական դիկտատոր, հռչակվեց «Սյունյաց սպարապետ»: 1921 թ. ապրիլի 21-ին Տաթևվում գումարվեց Երևանից փախած «նախարարների» ժողով, որտեղ «Հայրենիքի փրկութեան կոմիտեն» լուծարքի ենթարկվեց: Ապրիլի 26-ին Տաթևի վանքում դաշնակցականների գումարած երկրորդ համագումարը որոշում է «Ինքնավար Սյունիքը» վերանվանել Լեռնահայաստան՝ Գորիս մայրաքաղաքով: Համագումարը իրեն հայտարարում է պառլամենտ, իսկ իր պատագամավորներին՝ նախարարներ:

Զանգեզուրում գործող դաշնակցական վարչակարգը շարունակում

է դավեր նյութել Սովետական Հայաստանի դեմ, դաժան տեղորի ենթարկել սովետական կարգերի հաստատման համար պայքարի ելած աշխատավորութեանը:

Դաշնակցականների փետրվարյան խռովութեան ջախջախումից հետո, 1921 թ. ապրիլ-մայիս ամիսներին, Սովետական Հայաստանի տնտեսական, ռազմաքաղաքական դրութիւնն զգալիորեն բարելավվեց: Այդ ժամանակ ՌԿ(բ)Կ Կենտկոմը Վ. Ի. Լենինի առաջարկով Հայաստան ղեկավար աշխատանքի ուղարկեց մի շարք հայ գործիչների, այդ թվում Ա. Մյասնիկյանին (Ալ. Մարտունի), Ս. Սրապիոնյանին (Լուկաշին), Ս. Համբարձումյանին, Պ. Մակինցյանին, Ա. Երզնկյանին, Ս. Խանոյանին և ուրիշների: Լենինյան զվարդիայի ակնաւոր ներկայացուցիչ, պետական, ռազմական և կուսակցական գործիչ Ա. Մյասնիկյանը նշանակվեց Հայաստանի Հեղկոմի նախագահ: Շուտով, մայիսի 21-ին, Հայաստանի Հեղկոմը վերակազմվեց Հայաստանի Ժողովրդական կոմիսարներին խորհրդի, որի նախագահ և ռազմական գործերի ժողկոմ նշանակվեց Ա. Մյասնիկյանը: Լուկաշինը նշանակվում է Ժողտնտխորհի նախագահ, որը միաժամանակ ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարն էր:

ՀՍՍՀ Ժողկոմխորհի կազմում էին Ա. Մոսավյանը՝ արտաքին գործերի ժողկոմ, Պ. Մակինցյանը՝ ներքին գործերի, Ա. Կարինյանը՝ արդարադատութեան, Ա. Երզնկյանը՝ հողագործութեան, Ա. Հովհաննիսյանը՝ ջուսավորութեան, Ս. Համբարձումյանը՝ առողջապահութեան, Ս. Խանոյանը՝ ֆինանսների, Ա. Բեկզադյանը՝ պարենային և արտաքին առևտրի, Դր. Տեր-Սիմոնյանը՝ փոստի և հեռագրի, Ա. Խաչանը՝ աշխատանքի և սոցիալական ապահովութեան, Ա. Շահվերդյանը՝ բանվորագյուղացիական տեսչութեան ժողկոմ:

Նպատակ ունենալով խուսափելու հետագա ավելորդ արյունահեղութիւնից, Սովետական Հայաստանի կառավարութիւնը հատուկ պատվիրակութիւն է ուղարկում Զանգեզուր բանակցութիւններ վարելու համար: Պատվիրակութիւնը (Ա. Կարինյան, Վ. Մելնիկով) մայիսի 12-ին ժամանում է Սիսիանի շրջանի Ղալաշող գյուղը և սկսում բանակցութիւնները:

Սակայն դաշնակցականները զանազան պատրվակներով աշխատում էին ձգձգել բանակցութիւնները: Նրանք գաղտագողի նախապատրաստվում էին Սովետական Հայաստանի վրա հանկարծակի հարձակում գործելու համար:

Մայիսի վերջերին Զանգեզուրում Ս. Վրացյանը դառնում է վարչապետ, Նժդեհը՝ զինված ուժերի հրամանատար: Սովետական Հայաստանի վրա միացյալ ուժերով հարձակվելու նպատակով դաշնակցականներն այդ նույն օրերին Քավրիզում համաձայնութեան են գալիս անգլիական, թուրքական և պարսկական ներկայացուցիչների հետ: Փորձ

է արվում ստեղծելու նաև դաշնակ-մուսավաթական ռազմական դաշինք՝ սուղված Սովետական Հայաստանի և Սովետական Ադրբեջանի դեմ:

Դաշնակցականները հուլիսը էին կապում նաև այն բանի հետ, որ Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Հյուսիսային Կովկասի տապալված հակահեղափոխական կառավարութիւնների ներկայացուցիչները (Ա. Ահարոնյան, Ա. Զխենկելի, Ա. Թոփչիբաշև, Ս. Զերմոև) 1921 թ. հունիսին Փարիզում համաձայնագիր էին կնքել Կովկասի սովետական հանրապետութիւնների դեմ համատեղ պայքար մղելու համար:

Այն պահին, երբ դաշնակցականները տենդորեն պատերազմ էին նախապատրաստում, Սովետական Հայաստանի կառավարութիւնը, նկատի ունենալով, որ դաշտային աշխատանքների համար անհրաժեշտ են աշխատող ձեռքեր, զորացրեց կարմիր բանակի, այդ թվում նաև Դարալագյազի կայազորի զինվորների մեծ մասին:

Հունիսի 15-ի գիշերը, երբ երկու կողմերի միջև դեռևս շարունակվում էին պաշտոնական բանակցութիւնները, դաշնակցականների զինված ուժերը հանկարծակի հարձակվեցին Դարալագյազի վրա: Թշնամու դեմ համառ մարտեր մղելուց հետո սովետական զորամասերը հունիսի 21-ին հարկադրված եղան նահանջել Դարալագյազից:

Դաշնակցական խմբապետական ուժերի ավազակային հարձակումը և աշխատավոր բնակչութեան նկատմամբ նրանց գործադրած դաժան բռնութիւններն առաջ բերեցին հայ ժողովրդի խոր զայրույթը: Հանրապետութեան քաղաքներում և գյուղերում տեղի ունեցան աշխատավորների միտինգներ, ուր խայտառակութեան սյունին էին դամում դաշնակ-խռովարարներին և իրենց պատրաստակամութիւնը հայտնում վերջնականապես ջախջախելու նենգ թշնամուն:

1921 թ. հունիսի 19-ին ՀՍՍՀ Ժողկոմխորհի նախագահ Ա. Մյասնիկյանը դիմում է Սովետական Հայաստանի աշխատավորութեանը, կոչ անելով ազատագրել Զանգեզուրը դաշնակցականներից: Նույն օրը հրապարակվում է Հայաստանի ՍՍՀ Ժողկոմխորհի հայտարարութիւնը, որով կրկին առաջարկվում էր դաշնակցականներին զենքը վաչր դնել և ենթարկվել երկրի միակ օրինական իշխանութեանը՝ Սովետական Հայաստանի կառավարութեանը: Հունիսի 25-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմը կոչով դիմում է կուսակցական բոլոր կազմակերպութիւններին՝ մոբիլիզացնել ուժերը Զանգեզուրի հակահեղափոխական ուժերը ջախջախելու համար:

Զանգեզուրի ազատագրման համար մարտական գործողութիւնները հիմնականում երկու ուղղությամբ էին տեղի ունենում: Թշնամուն հարվածող զլխավոր ուժերը կարմիր բանակի ղարաբաղ-զանգեզուրյան և երևանյան խմբավորումներն էին: Երևանյան խմբավորումը բաժան-

ված էր երեք զորասյունների, որոնք գրոհը ծավալում էին Վեդի—Քեշիշ-բենդ, Նախիջևան—Սիսիան և Օրդուբադ—Մեղրի ուղղութիւններով: Հունիսի 22-ին սկսելով հարձակումը, կարմիր բանակի զորամասերը հունիսի 26-ին ազատագրեցին Գարալագյազը և մտան Զանգեզուր: Այդ օրերին նոր Բայազետից հարձակվող զորախումբը գրավեց Սելիմի (Հայոց ձոր) լեռնանցքը:

Շարունակելով հաղթական առաջխաղացումը, հունիսի 30-ին կարմիր բանակի զորամասերը ազատագրեցին Սիսիանի շրջանը: Դաշնակցականների բարոյալքված բանակի զինվորները խմբերով անցնում էին կարմիր զորամասերի կողմը: Ազատագրված շրջաններում տեղական բնակչութիւնը բացառիկ խանդավառութեամբ էր դիմավորում կարմիր բանակի զորամասերին: Շատ գյուղերում գործում էին կոմունիստական ջոկատներ, որոնք թշնամուն հարվածում էին թրկուներից: Զանգեզուրի հակահեղափոխական խմբերի դեմ հերոսաբար էին կռվում նաև նախիջևանյան «Կարմիր տաբորի» պարտիզանները:

Կովկասյան առաջին կորպուսի հրամանատար Ա. Տոգորսկու դարաբադ-զանգեզուրյան խմբավորման և Մ. Վելիկանովի երևանյան խմբավորման համաձայնեցված գործողութիւնների շնորհիվ, համառմարտերից հետո, հուլիսի 2-ին ազատագրվում է Զանգեզուրի գավառային կենտրոն Գորիս քաղաքը: Կարմիր բանակի զորամասերը հուլիսի 4-ին ազատագրում են Տաթևը, հուլիսի 7-ին՝ Ղափանը:

Հետապնդելով թշնամուն, կարմիր բանակի զորամասերը հուլիսի 13-ին ազատագրում են նաև Մեղրին: Պատահական չէ, որ Շվանիձոր գյուղում հակառակորդից խլված մեծ քանակութեամբ ռազմավարի մեջ կային անզլիական հրանոթներ, փամփուշտներ, գնդացիներ, ֆրանսիական զենքի տարբեր տեսակներ, իտալական դրամներ և այդ երկրներից ստացված զինվորական համազգեստ:

Հուլիսի 13-ին կարմիր բանակի զորամասերը վերջնականապես ջախջախեցին և Հայաստանի սահմաններից դուրս շարտեցին դաշնակցական խոռվարարներին: «Ամբողջ Զանգեզուրի վրա ծածանվում է սովետական դրոշմը, վերջ է տրված դաշնակցական ավանտյուրային», — ասված է Զանգեզուրի կարմիր զորամասերի հրամանատարութեան 1921 թ. հուլիսի 16-ի հաղորդագրութեան մեջ:

Ազատագրված Զանգեզուրը անցնում է խաղաղ շինարարական աշխատանքի: Գավառի աշխատավորութիւնը երախտագիտական ջերմ ողջույններ է հղում Սովետական Հայաստանի աշխատավորներին, կառավարութեանը և կարմիր բանակին:

Այսպիսով, երկրի ներքին ու արտաքին թշնամիների դեմ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ Սովետական Հայաստանի աշխատավորության մղած պայքարը պսակվեց հաղթանակով: Զան-

գեզուրի ազատագրումով ավարտվեցին քաղաքացիական կռիվները Հայաստանում: Զանգեզուր միացավ Սովետական Հայաստանին որպես նրա անբաժան մասը:

Պարտութիւն կրած դաշնակ-խոռվարարները փախչելով Հայաստանից, ապաստան գտան Իրանում և այլ երկրներում, որտեղ շարունակեցին իրենց հակասովետական գործունեութիւնը:

Հայաստանի կոմունիստական կուսակցութիւնը և սովետական կառավարութիւնը բարձր գնահատեցին քաղաքացիական կռիվներում աչքի ընկած զորամասերի ու առանձին ռազմիկների կատարած հերոսութիւնները: «Կոմունիզմի պատմական ոսկե գրքում, — գրել է Ա. Մյասնիկյանը 1921 թ. հուլիսի 18-ին Զանգեզուրի ազատագրման կապակցութեամբ, — հաղթության մի էջ էլ ավելացավ, ուր մտցված են երևանի զորամասի զինվորների փառավոր անունները»: Թշնամու դեմ մղված պայքարում աչքի ընկած մեծ թվով զինվորներ և հրամանատարներ պարգևատրվեցին ՀՍՍՀ Կարմիր դրոշի շքանշանով, այդ թվում Կովկասյան հատուկ զորաբանակի հրամանատար Ա. Գեկկերը, կորպուսի հրամանատար Ա. Տոգորսկին, կարմիր բանակի երևանյան խմբավորման հրամանատար Մ. Վելիկանովը, ՀՍՍՀ կարմիր բանակի հրաձգային բրիգադի հրամանատար Ա. Միրիմանյանը և ուրիշներ:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՍՈՑԻԱԼԻՉՄԻ
ԿԱՌՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ
(1921—1937)

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՍՈՑԻԱԼԻՉՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԻՄՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1921—1932)

XXVII ԳԼՈՒԽ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԺՈՂՈՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1921—1925)

1. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՍԿԶԲՈՒՄ

Ժողովրդական տրև-
տեսության վերա-
կանգնման առաջին
քայլերը

Քաղաքացիական կռիվներում հաղթանակ տանե-
լուց հետո Սովետական Հայաստանի աշխատա-
վորությունը ձեռնամուխ եղավ երկրի տնտեսու-
թյան վերականգնման խաղաղ աշխատանքին: Ան-
հրաժեշտ էր առաջին հերթին վերականգնել երկրի ծայրաստիճան քայ-
քայված տնտեսությունը: «Քայքայում, կարիք, աղքատացում»¹ — այս-
պես է բնութագրել Վ. Ի. Լենինը սովետական հանրապետությունների
տնտեսական դրությունը այդ ժամանակաշրջանում: Սովետական իշ-
խանությունը ժառանգություն էր ստացել ավերված տնտեսություն: Դա-
դարել էին գործելուց առանց այն էլ սակավաթիվ արդյունաբերական
ձեռնարկությունները: Հայաստանի ամբողջ արդյունաբերության հա-
մախառն արտադրանքը կազմում էր նախապատերազմյան արտադրան-
քի մեկ տասներորդը: Քայքայվել էր երկաթուղային տրանսպորտը: Թուր-
քական զավթիչներն ավերել էին Հայաստանի միակ դեպոն Ալեքսան-

դրապոլում, կողոպտել և իրենց հետ տարել էին նրա կարևորագույն
սարքավորումները:

Ծանր վիճակում էր գտնվում նաև գյուղատնտեսությունը: Հայաս-
տանում սովետական կարգերի հաստատման ժամանակ գյուղատնտե-
սության համախառն արտադրանքը 1913 թվականի համեմատությամբ
պակասել էր հինգ անգամ, անասունների զխաքանակը՝ չորս անգամ:
Խիստ կրճատվել էին ցանքատարածությունները, նվազել էր բերքատը-
վությունը, քայքայվել էր ոռոգման սիստեմը:

Անասելի ծանր էր երկրի ֆինանսական դրությունը: Շուկան ողող-
ված էր արժեզրկված թղթադրամներով: Դեռևս շարունակվում էին պա-
րենային սուր ճգնաժամը, սովը և համաճարակը: Դեռ 1922 թվականի
սկզբներին Հայաստանում կար 234 հազար սովյալ, որոնց մեծ մասը
գաղթականներ էին: Զգացվում էր մանուֆակտուրայի, կոշիկեղենի և
առաջին անհրաժեշտության այլ ապրանքների սուր պակաս:

Երկրի ժողովրդական տնտեսությանը մեծ վնաս պատճառեց նաև
գաղնակցականների փետրվարյան խռովությունը, որն էլ ավելի խորաց-
րեց տնտեսության քայքայումը: Այդ կարճ ժամանակամիջոցում նչութա-
կան արժեքների մեծ կորուստ տեղի ունեցավ: Դրությունն անշափ ծանր
էր հատկապես բեմալականներից ազատագրված վայրերում՝ Շիրակի
գյուղերում:

Հայաստանի բանվորներն ու գյուղացիները մեծ ջանքեր թափեցին
սովի և քայքայվածության դեմ պայքարելու համար: Նրանք լարեցին
իրենց բոլոր ուժերը տնտեսական դժվարությունները հաղթահարելու
համար: Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և սովետական
կառավարությունը մի շարք միջոցներ ձեռք առան հանրապետության
ժողովրդական տնտեսությունը վերականգնելու համար: Այս տեսակե-
տից կարևոր նշանակություն ունեցան Հայաստանի հեղկոմի, ապա Ժո-
ղովրդական կոմիսարների խորհրդի մի քանի նոր դեկրետներն ու հրա-
մանները:

Հայաստանի կառավարությունը աշխատավոր գյուղացիությանը
մեծ քանակությամբ սերմացու, անասուններ, գյուղատնտեսական գոր-
ծիքներ տրամադրեց, ինչպես և օգնեց ֆինանսական միջոցներով:

Լայն միջոցառումներ իրագործվեցին արդյունաբերական ձեռնար-
կությունների և տրանսպորտի աշխատանքը վերսկսելու ուղղությամբ:
Սկսեցին արտադրանք տալ Երևանի զինու-կոնյակի, կաշվի նախնական
վերամշակման, պահածոների և մի քանի այլ գործարաններ: Մեծ արդ-
յուն էին տալիս մասսայական շաբաթօրյակները, որոնց կազմակերպ-
ման գործում առանձին ակտիվություն էին ցուցաբերում կուսակցական,
արհմիութենական և կոմերիտական կազմակերպությունները:

Գյուղի և քաղաքի միջև ապրանքափոխանակությունը ծավալելու

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 329:

նպատակով 1921 թ. հունիսին ստեղծվեց Սովետական Հայաստանի սպառողական կոոպերացիա՝ Հայկոոպ: Արմատապես բարելավվեց տասնյակ հազարավոր գաղթականների և որբերի վիճակը:

Խաղաղ շինարարության անցնելու գործին նպաստեց նաև դիվանագիտական ու տնտեսական հարաբերությունների հաստատումը Իրանի և Թուրքիայի հետ: 1921 թ. հուլիսին այդ երկրների և Անդրկովկասի երկաթուղային վարչությունների միջև կնքվեց համաձայնագիր, որով ուղիղ երկաթուղային (ապրանքատար) հաղորդակցություն էր սկսվում Անդրկովկասի և Իրանի միջև՝ Զուլֆայով, և Անդրկովկասի ու Թուրքիայի միջև՝ Ալեքսանդրապոլով: 1921 թ. հոկտեմբերի 13-ին Կարսում, Սովետական Ռուսաստանի ներկայացուցիչների մասնակցությամբ, պայմանագիր կնքվեց մի կողմից Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի սովետական հանրապետությունների, մյուս կողմից՝ քեմալական Թուրքիայի միջև: Այդ պայմանագիրը բխում էր 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում կնքված սովետա-թուրքական պայմանագրից:

Սովետական Ռուսաստանի և սովետական մյուս հանրապետությունների եղբայրական օգնությունը Հայաստանին

Հանրապետության ժողովրդական տնտեսությունը վերականգնելու գործում Սովետական Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին եղբայրական անշահախնդիր օգնություն ցույց տվեցին բոլոր սովետական հանրապետությունները, առաջին հերթին Սովետական Ռուսաստանը:

ՌԿ(Բ)Կ Կենտկոմը և Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների խորհուրդը, Վ. Ի. Լենինի գլխավորությամբ, արտակարգ միջոցներ էին ձեռնարկում նորաստեղծ Սովետական Հայաստանին ցույց տալու ոչ միայն ռազմաքաղաքական, դիվանագիտական, այլև տնտեսական լայն աջակցություն:

1920 թ. դեկտեմբերի կեսերին սովետական կառավարության ցուցումով 11-րդ բանակի ֆոնդից առանձնացվեց և Բաքվից Հայաստան ուղարկվեց 40 վագոն հացահատիկ: «Թող Հայաստանի բանվորներն ու գյուղացիները իմանան, — այդ օրերին հայտարարել է ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի նախագահ Գ. Կ. Օրջոնիկիձեն, — որ Սովետական Ռուսաստանի... բանվոր դասակարգը և կարմիր բանակը իրենց հացի խղճով պաշարը կբաժանեն Հայաստանի բանվորների և գյուղացիների հետ»:

Նպատակ ունենալով խափանելու Սովետական Հայաստանին ցույց տրվող օգնությունը, Վրաստանի մենշևիկյան կառավարությունը ամեն կերպ խոչընդոտներ էր ստեղծում և արգելում Սովետական Հայաստան մեկնող զննարկների շարժումը, որոնք բեռնված էին հացով և այլ մթերքներով: Սակայն Սովետական Ռուսաստանի կառավարության, անձամբ Վ. Ի. Լենինի ձեռք առած վճարական միջոցների շնորհիվ Վրաստանի մեն-

շևիկյան կառավարությունը հարկադրված եղավ վերացնել այդ արգելքները: 1920 թ. դեկտեմբերի 18-ին Թիֆլիսից դեպի Երևան շարժվեց հացով և նավթով բեռնված առաջին զննարկը:

1920 թ. դեկտեմբերի 13-ին Վ. Ի. Լենինը Սովետական Հայաստանի Հեղկոմի անդամներ Ա. Մոսկովսկի և Ս. Տեր-Գաբրիելյանի հետ ունեցած զրույցի ժամանակ հավաստիացնում է, որ հայ ժողովրդին ցույց կտրվի ամեն տեսակի օգնություն: «Մենք ինքներս դժվարին դրության մեջ ենք, — ասել է Վ. Ի. Լենինը, — բայց Սովետական Հայաստանին կօգնենք ամեն կերպ»: Նույն օրը Սովետական Ռուսաստանի կառավարությունը, որպես առաջին օգնություն, որոշեց Սովետական Հայաստանին բաց թողնել երեք միլիարդ ռուբլի սովետական թղթադրամ: Պարենժողովմատի կարգադրությամբ Հայաստանին տրամադրվեց մեծ քանակությամբ սննդամթերք և արդյունաբերական ապրանքներ: Սովետական Հայաստան ուղարկվեցին նաև գյուղատնտեսական գործիքներ, սերմացու և այլն:

Չնայած 1921 թ. ամռանը Սովետական Ռուսաստանի և Ուկրաինայի մի շարք նահանգներում, հատկապես Մերձվոլգյան շրջաններում, երաշտի և անբերրիության պատճառով սով էր տարածվել, Սովետական Ռուսաստանի կառավարությունը շարունակում էր եղբայրական օգնություն ցույց տալ Անդրկովկասի սովետական հանրապետություններին: Այդ ժամանակ նա կովկասյան հանրապետություններին ուղարկեց մեկ միլիոն փութ հացահատիկ: Հայաստանին 75 հազար փութ հացահատիկ ուղարկեց նաև Սովետական Ուկրաինան:

Գաշնակցականների փետրվարյան խռովությունը ճնշելուց անմիջապես հետո, 1921 թ. ապրիլի 9-ին, պատասխանելով Գ. Կ. Օրջոնիկիձեի հեռագրին, Վ. Ի. Լենինը գրում է. «Ստացա Ձեր ծածկագիրը Անդրկովկասի պարենային հուսահատական դրության մասին: Մենք ձեռք առնք մի շարք միջոցներ, Հայաստանին մի քիչ ոսկի տվինք, հաստատեցինք պարենկոմին արված ամեն տեսակ հանձնարարությունները»:

1921 թ. սեպտեմբերի 30-ին ՌՍՖՍՀ-ի և Սովետական Հայաստանի միջև կնքվեց ֆինանսատնտեսական պայմանագիր, որը մեծ շահով նպաստեց տնտեսական շինարարության բնագավառում եղած բազմաթիվ դժվարությունների հաղթահարման գործին:

1921 թ. մայիս-նոյեմբեր ամիսներին Հայաստանը Սովետական Ռուսաստանից ստացավ 1,5 միլիոն ռուբլի (ոսկով), 1,5 միլիոն արշին կտորեղեն և մեծ քանակությամբ պատրաստի հագուստեղեն ու կոշիկեղեն, 326 հազար փութ հացահատիկ և այլուր, 5000 փութ շաքար, 7 վագոն բրինձ, 50 հազար փութ ձուկ, 1500 գլուխ անասուն, 12 վագոն

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 35, էջ 521:

գեղորդաք, 10173 գյուղատնտեսական զանազան գործիքներ և այլն: Նույն ժամանակաշրջանում Սովետական Ազգային տնտեսական կազմակերպության կողմից 1 միլիոն 177 հազար փութ վառելիքային (նավթ, բենզին, մազութ և այլն): 1922 թ. հոկտեմբերին ՌՍՖՍՀ Աշխատանքի և պաշտպանության խորհուրդը, Վ. Ի. Լենինի առաջարկությամբ, որոշում է Հայաստանին բաց թողնել 1,5 միլիոն ուրբի (ոսկով)՝ գլխավորապես արտասահմանից գյուղատնտեսական գործիքներ, մեքենաներ ու անասուններ զնելու համար: Արագըայանում միայն բամբակագործությունը վերականգնելու համար Աշխատանքի և պաշտպանության խորհուրդը 1922 թ. հոկտեմբերին Հայաստանին բաց թողնեց 620 հազար ուրբի (ոսկով):

Չնայած իր անշափ զբաղված լինելուն և, մասնավորապես, ծանր հիվանդությանը, Վ. Ի. Լենինը անձամբ հետևում էր, որ Սովետական Ռուսաստանի բաց թողած գումարները անհապաղ Հայաստան փոխադրվեն: ՌԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարին 1922 թ. հոկտեմբերի 28-ին Վ. Ի. Լենինը գրել է. «Խնդրում եմ կարգալ, ուշադրություն դարձնել և վերադարձնել ինձ: Երկտողով հազարոցեքը, թե ոսկի ուղարկվե՞լ է արդյոք Հայաստան (1½ մլն. ուրբ., կարծեմ, որոշված է):

Իսկ հայերին օգնելու մյուս միջոցները:

Հարկավոր է շտապեցնել և ստուգել:

Սպասում եմ պատասխանի»:

Ա. Մյասնիկյանը 1922 թ. դեկտեմբերին, Գորկայում Վ. Ի. Լենինի հետ ունեցած իր վերջին հանդիպման մասին գրել է. «Շատ հարցեր էր տալիս, ըստ սովորության՝ աշխույժ կերպով հետաքրքրվում էր ամեն բանով, խոսում էր անդրկովկասյան գործերի մասին: Հարցնում էր, թե արդյոք ոտքի կանգնե՞լ է ավերված Հայաստանը, ի՞նչ դրություն մեջ է այնտեղ բամբակի, ուտոգման, պարենամթերքի գործերը, բավականաչափ ամո՞ղբ է արդյոք աղգային կարմիր բանակը...»:

Սովետական Ռուսաստանից շարունակվում էին ստացվել ոչ միայն դրամ, պարենային և արդյունաբերական ապրանքներ, սերմացու, այլև մեքենաներ: 1921 թ. դեկտեմբերին Ռուստոլից Սովետական Հայաստանն ստացավ կաթնամշակման գործարանի սարքավորում: 1922 թ. վերջերին Իվանովո-Վոզնեսենսկի (այժմ՝ Իվանովո) տեքստիլագործ բանվորները Սովետական Հայաստանին նվիրեցին մեծ քանակությամբ մանող մեքենաներ և գործող հաստոցներ, որոնց հիմքի վրա հետագայում կառուցվեց Լենինականի տեքստիլ ֆաբրիկան՝ Սովետական Հայաստանի տեքստիլ արդյունաբերության առաջնեկը: Նոր ձեռնարկությունը սարքավորելու համար Իվանովո-Վոզնեսենսկից Ալեքսանդրապոլ եկան մի խումբ հմուտ տեքստիլագործներ: Հանձնելով նվեր բերած սարքավորում-

ները, նրանք ասացին. «Թանկագին հայ ընկերներ, ընդունեցե՛ք մեր համեստ նվերը ձեր հայրենական արդյունաբերության զարգացման համար: Թող դարերով տանջված հայ աշխատավորները այժմ լենինյան կոմունիստական կուսակցության և ռուս ժողովրդի օգնությամբ կառուցեն իրենց նոր սոցիալիստական կյանքը և երջանիկ ապագան»: Լենին-գրադի բանվորների ուղարկած մետաղահատ հաստոցները հնարավորություն ստեղծեցին վերակառուցելու Հայաստանի արդյունաբերական ամենահին ձեռնարկություններից մեկը՝ Երևանի մեխանիկական գործարանը: Երևանում նոր կառուցվող մեխանիկական գործարանը ՌՍՖՍՀ ժողովրդախորհրդի որպես նվեր ստացավ մեկ ձուլարան և 30 հաստոց: Սովետական Ռուսաստանի օգնության շնորհիվ ոտքի կանգնեցին հանրապետության արդյունաբերական շատ ճյուղեր: Հսկայական նյութական միջոցներ տրամադրվեց Հայաստանում բամբակագործությունը և այգեգործությունը զարգացնելու համար: Մինչև 1924 թվականը Սովետական Ռուսաստանը Հայաստանի գյուղատնտեսության զարգացման համար արդեն բաց էր թողել 10 միլիոն ուրբի վարկ:

Ռուս ժողովուրդը Սովետական Հայաստանին մեծ օգնություն ցույց տվեց նաև կուլտուրական շինարարության ծավալման գործում: 1921 թվականին սովետական Ռուսաստանից սկսեցին ստացվել տպարանական սարքավորումներ, մեծ քանակությամբ թուղթ, գրականություն և այլն: Ժողովրդական տնտեսության և կուլտուրայի տարբեր բնագավառների համար աղգային կադրեր պատրաստելու նպատակով Սովետական Ռուսաստանի բուհերն ուղարկվեցին բազմաթիվ հայ երիտասարդներ: 1921 թ. սեպտեմբերին ՌՍՖՍՀ Կենտգործկոմը դեկրետ ընդունեց Սոսկվայում գտնվող նախկին Լազարյան ձեռարանը (Հայկական ինստիտուտը) «Սովետական Հայաստանի կուլտուրայի տուն» վերանվանելու և նրա բոլոր նյութական ու կուլտուրական արժեքները Սովետական Հայաստանի կառավարության տրամադրության տակ զնելու մասին: 1922 թ. դարձան Երևան փոխադրվեց առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Մոսկվա տեղափոխված էջմիածնի մատենադարանի գույքը, հատկապես հայ ժողովրդի հոգևոր մշակույթի մասունքները՝ շուրջ 5 հազար հին ձեռագիր մատյաններ: Երևան փոխադրվեցին նաև Լազարյան ձեռարանի թանգարանը, գրադարանը, նոր նախիջևանի թանգարանը, բազմաթիվ հայկական ձեռագրեր Ռուսաստանի տարբեր գաղթօջախներից:

Ստանալով ռուս և սովետական մյուս ժողովուրդների եղբայրական օգնությունը, Սովետական Հայաստանի աշխատավորությունը հնարավորություն ստացավ դուրս գալու ծանր վիճակից, փրկվելու սովից, ձեռնամուխ լինելու երկրի տնտեսության վերականգնման աշխատանքներին:

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 45, էջ 646:

Հայ ժողովրդին Սովետական Ռուսաստանի ցույց տված անշահախնդիր օգնությունը լայն արձագանք գտավ արտասահմանի հայկական շրջաններում: Թավրիզում հրատարակվող «Զանգ» թերթը իր առաջնորդողներից մեկում գրել է. «Հայկական պետությունը վերջնական կորստից փրկեց Խորհրդային Ռուսաստանը: Այսպիսով, աշխատավոր Հայաստանի համար նոր, խաղաղ կյանք սկսվեց»:

2. ԱՆՅՈՒՄԸ ԵՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԽՍՂԱԳ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

23ր ապ 14
Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ԳԱՄԱԿԸ
ԿՈՎԿԱՍԻ ԿՈՄՈՆԻՍՏՆԵՐԻԳ

Քայքայված ժողովրդական տնտեսությունը վերականգնելու և սոցիալիզմի կառուցման գործում Կովկասի, այդ թվում նաև Հայաստանի կոմունիստների համար ուղեցույց հանդիսացան Վ. Ի. Լենինի պատմական ցուցումները: Այդ ցուցումները շարադրված են Ազրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների հանրապետության կոմունիստներին ուղղված Վ. Ի. Լենինի 1921 թ. ապրիլի 14-ի նամակում, որն իր հետ Կովկաս բերեց Ա. Մյասնիկյանը:

Վ. Ի. Լենինի այդ ծրագրային նամակում հանձարեղ խորաթափանցությամբ շարադրված են նոր տնտեսական քաղաքականությանն անցնելու կոնկրետ ձևերն ու մեթոդները: Վ. Ի. Լենինը Կովկասի կոմունիստներին նախազգուշացնում էր, որ նրանք հասկանան իրենց հանրապետությունների գրուբյան յուրօրինականությունը, ի տարբերություն ՌՍՖՍՀ գրուբյան ու պայմանների, «հասկանան մեր տակտիկան և ույնությամբ չընդօրինակելու, այլ մտածված կերպով կոնկրետ պայմանների տարբերության համապատասխան այն ձևափոխելու անհրաժեշտությունը»¹: Բնութագրելով Կովկասի սովետական հանրապետությունների գրուբյան յուրօրինակությունը Ռուսաստանի համեմատությամբ, Վ. Ի. Լենինը նշում է չորս հիմնական տարբերություն.

1. Սովետական Ռուսաստանը ոչ մի տեղից ուղղակիան ու քաղաքական օգնություն չէր ստանում, թեև նա տարիներ շարունակ հարկադրված էր կովիլ Անտանտի ուղղակիան արշավանքների ու բռնկողայի դեմ, իսկ Կովկասի սովետական հանրապետությունները քաղաքական և ուղղակիան օժանդակություն էին ստանում Սովետական Ռուսաստանից:

2. Կովկասի սովետական հանրապետությունները կարող են չվախենալ Անտանտից և Կովկասյան սպիտակզվարդիականներին նրա ցույց

տված ուղղակիան օժանդակությունից: «Ռուսաստանը,— գրում է Վ. Ի. Լենինը,— դադել է Անտանտի ձեռքերը»:

3. Կովկասյան հանրապետություններն առավել գյուղացիական երկրներ են, քան Ռուսաստանը:

4. Տնտեսապես Ռուսաստանը կտրված էր և ղզալի շափով կտրված է մնում առաջավոր կապիտալիստական երկրներից, իսկ Կովկասը կարող է ավելի արագ ու ավելի հեշտ կերպով կազմակերպել ապրանքափոխանակություն կապիտալիստական Արևմուտքի հետ:

Վ. Ի. Լենինի նամակում պարզորոշ կերպով ցույց է տրվում, որ ժողովրդական տնտեսության վերականգնումը պետք է սկսել գյուղատնտեսությունից, հատուկ ուշադրություն դարձնել ոռոգման և էլեկտրիֆիկացման վրա, ամեն կերպ զարգացնել երկրամասի արտագրողական ուժերը: Հատկապես ընդգծելով էլեկտրիֆիկացման և ոռոգման հրահրական նշանակությունը, Վ. Ի. Լենինը գրում է. «Խսկույն աշխատել բարելավել գյուղացիների գրուբյունը և սկսել էլեկտրիֆիկացիայի, ոռոգման խոշոր աշխատանքներ: Ոռոգումն ամենից ավելի է պետք և ամենից ավելի կվերատեղծի երկիրը, կվերածնի նրան, կքաղի անցյալը, կամբապնդի անցումը դեպի սոցիալիզմ»²:

Վ. Ի. Լենինը իր նամակում առաջ է քաշում նաև ազգային խաղաղություն և ժողովուրդների ինտերնացիոնալ բարեկամություն ստեղծելու հարցը, որը սոցիալիզմի կառուցման կարևորագույն պայմաններից մեկն է: Սակայն այդ ժամանակ գլխավոր խնդիրը նա համարում էր սովետական իշխանության ամրապնդումը: «Բայց որքան էլ կարևոր է ազգային խաղաղությունը Կովկասի ազգությունների բանվորների ու գյուղացիների միջև,— գրում է Լենինը,— անհամեմատ է՛լ ավելի կարևոր է, սակայն, պահպանել ու զարգացնել սովետական իշխանությունը՝ որպես անցում դեպի սոցիալիզմ: Դժվարին, բայց լիովին իրականացնելի մի խնդիր»²:

Վ. Ի. Լենինը նամակի վերջում Կովկասի կոմունիստներից պահանջում դեպի սոցիալիզմ: Դժվարին, բայց լիովին իրականացնելի մի տարը, այլ ոգին, իմաստը, դասերը:

Նոր տնտեսական քաղաքականության իրագործումը Հայաստանում 1921 թ. մարտին ՌԿ(Բ)Կ X համագումարը, լսելով Վ. Ի. Լենինի ղեկուցումը, որոշեց ուղղակիան կոմունիզմի քաղաքականությունից անցնել նոր տնտեսական քաղաքականության (ՆԷՊ): Դա անհրաժեշտ միջոցառում էր կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանում: Պարենմասնատրումը պարենհարկով փոխարինելու և առևտրի ազատություն թույլ տալու շնորհիվ կծավալվեր աշխույժ ապ-

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 402:

² Նույն տեղում, էջ 402:

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 402:

րանքափոխանակություն գյուղի ու քաղաքի միջև, կիրախուսվեր գյուղատնտեսության և ամբողջ ժողովրդական տնտեսության զարգացումը:

Առաջնորդվելով ԻԿ(բ)Կ X համագումարի պատմական որոշումներով և Վ. Ի. Լենինի ցուցումներով, 1921 թ. գարնանից Հայաստանում նույնպես սկսվեց նոր տնտեսական քաղաքականության իրագործումը: Չնայած պարենհարկին անցնելու վերաբերյալ Հայաստանի Ժողովրդական կոմիսարների խորհրդի ղեկընտն ավելի ուշ ընդունվեց, բայց մինչև այդ՝ ապրիլ-մայիսին, դաշնակցականների փետրվարյան խռովությունը չախջախելուց հետո, որոշ քայլեր արդեն արվել էին ռազմական կոմունիզմի քաղաքականությունը դադարեցնելու ուղղությամբ:

1921 թ. ապրիլին հրապարկվեցին Սովետական Հայաստանի պարենային ժողովրդական կոմիսարի «Պարենային բռնագրավումները վերացնելու մասին», «Հանրապետության մեջ բռնագրավումների ամբողջական վերացման մասին» հրամանները: Սակայն նոր տնտեսական քաղաքականությանն անցնելը վերջնականապես օրենսդրական կարգով ձևակերպվեց Հայաստանի Ժողովուրդի 1921 թ. հունիսի 24-ի ղեկընտնով: Այդ ղեկընտնի առաջին կետում ասվում էր, որ բանակի, բանվորների, սովետական ծառայողների, որբերի և գաղթականների կարիքները բավարարելու համար պահանջվող պարենի մի մասը ծածկելու նպատակով Սովետական Հայաստանի ամբողջ տերիտորիայում մտցվում է պարենհարկ: Յուրաքանչյուր քաղաքացի, ով զբաղվում է հացահատիկի, կարտոֆիլի, տեխնիկական կուլտուրաների մշակմամբ, ինչպես նաև մեղվաբուծությամբ և անասնապահությամբ, պարտավոր է պետությանը վճարել պարենային հարկ: Դեկրետի հաջորդ կետում ասվում է, որ պարենային հարկի չափերը սահմանվում են այնպես, որ գյուղացու տնտեսությունը չձանրաբեռնվի, իսկ չբավոր գյուղացիներն ամբողջովին ազատվեն այդ հարկից: Սահմանվող հարկը պրոգրեսիվ էր, այն պետք է հավաքվեր իբրև մի որոշ տոկոս կամ բաժին տնտեսության ընդհանուր արդյունքից, իսկ նրա չափը պետք է որոշվեր ըստ բերքի և սպառողների թվի: Պարենահարկի չափերն անհամեմատ ավելի պակաս էին պարենամասնատրումից: Պարենահարկը պետությանը հանձնելուց հետո մընացած ամբողջ ավելցուկը մնում էր գյուղացու տրամադրության տակ, որը նա կարող էր ազատ կերպով վաճառել շուկայում: Այդ հանգամանքը խթանում էր գյուղատնտեսության զարգացումը, քանի որ բարձրացնում էր գյուղացու անձնական շահագրգռվածությունը, նա աշխատում էր հնարավորին չափ ավելի շատ ավելցուկներ ստեղծել: Այսպիսով, նոր տնտեսական քաղաքականությունը պետք է մեր երկրում գյուղատնտեսության և ամբողջ ժողովրդական տնտեսության վերականգնման հզոր ազդակ հանդիսանար:

Սովետական պետական ապարատի ամրապնդումը: Հայաստանի ՍՍՀ Հեղկոմի վերակառուցումը Հայաստանի ՍՍՀ Ժողովուրդի

Նոր տնտեսական քաղաքականության հաջող իրագործումը պահանջում էր սովետական ապարատի արմատական վերակառուցում: Կուսակցությունը և կառավարությունը քաղաքում և գյուղում մեծ աշխատանք ծավալեցին նոր տնտեսական քաղաքականության էությունը և նշանակությունը լայն մասսաներին պարզաբանելու համար: Աշխատավորությունը մեծ գոհունակությամբ ընդունեց նոր տնտեսական քաղաքականությանն անցնելու վերաբերյալ կառավարության ղեկընտնը:

1921 թ. գարնանից խնդիր դրվեց՝ ամեն կերպ ամրապնդել սովետական պետական ապարատը, պետության կառավարման աշխատանքում ավելի լայնորեն ներգրավել աշխատավոր մասսաներին: Հատուկ ուշադրություն դարձվեց երկրի կառավարմանը աշխատավոր կանանց և կրիտասարգությունը մասնակից դարձնելու գործին: 1921 թ. հունիսին երևանում տեղի ունեցան Սովետական Հայաստանի աշխատավոր կանանց, օգոստոսին՝ Հայաստանի կոմերիտիության առաջին համագումարները: Աշխուժացավ արհմիութենական կազմակերպությունների աշխատանքը: Արհմիութենական կյանքում կարևոր իրադարձություն էր Հայաստանի արհմիությունների առաջին համագումարը, որը տեղի ունեցավ 1921 թ. օգոստոսին: Այդ ժամանակ Հայաստանում գործում էին մոտ 20 արհեստակցական միություններ:

Պետական ապարատի վերակառուցման ու ամրապնդման գործում մեծ դեր խաղաց բանվորագյուղացիական տեսչության ժողովրդական կոմիտարիատը, որն ստեղծվել էր 1921 թ. հունվարին: Այդ օրգանի միջոցով վերահսկողություն էր սահմանվում ինչպես պետական ամբողջ ապարատի, այնպես էլ տնտեսական ու հասարակական կազմակերպությունների աշխատանքի վրա, պաշար էր կազմակերպվում այնտնտեսավարության, շարաշահումների, բյուրոկրատիզմի և թափթփվածության դեմ: Բանվորագյուղացիական տեսչության ժողովմատի ապարատի և հատկապես նրա տեղական օրգանների աշխատանքներում նույնպես ներդրվում էին գյուղի և քաղաքի աշխատավոր լայն մասսաները:

Սովետական Հայաստանի կուսակցական, սովետական և տնտեսական ապարատի արմատական բարելավման գործում խոշոր դեր խաղացին եղբայրական սովետական հանրապետություններից Հայաստան գործուղված ղեկավար կադրերը: Կարևոր միջոցառում էր 1921 թ. գարնանը Հայկական ՍՍՀ Հեղկոմը Հայկական ՍՍՀ Ժողովուրդի վերակառուցումը:

Նոր տնտեսական քաղաքականությունը հաջողությամբ իրականացնելու և ամբողջ ժողովրդական տնտեսությունը վերականգնելու համար անհրաժեշտ էր ուժեղացնել կուսակցական ղեկավարությունը, ամրապնդ-

գել կուսակցության շարքերը: 1921 թ. հոկտեմբերին Սովետական Հայաստանում անցկացվեցին կոմունիստական կուսակցության շարքերի ստուգում և դստում: Այդ միջոցառման շնորհիվ կուսակցությունից վտարվեցին մանրբուրժուական տարրերը, կարիերիստները, մորթապաշտները, կուսակցական կարգապահությունը խախտողները (ավելի քան երկու հազար հոգի): Հայաստանի կոմունիստական կուսակցության անդամ-թեկնածուների թիվը թեև քանակապես նվազեց, բայց այն դարձավ էլ ավելի մարտունակ ու միաձուլ:

Ժողովրդական տրեստայան վերականգնման հաջողությունները և Գ-ի առաջին տարիներին

Նոր տնտեսական քաղաքականության հիման վրա ժողովրդական տնտեսության վերականգնումը տեղի էր ունենում ծանր պայմաններում: Վերականգնման առաջին տարին (1921 թվականը) երաշտային էր: Այդ հանգամանքն էլ ավելի ծանրացրեց աշխատավորների վիճակը: Երկրում դեռևս շարունակվում էին պարենային դժվարությունները:

1921 թվականի պարենային հարկի պետական պլանը թերակատարվեց: Հայաստանի ժողովրդական կոմիսարների խորհուրդը որոշեց ոչ միայն կրճատել պարենահարկի չափը, լիովին ազատել պարենահարկից, այլև լայն օգնություն կազմակերպել այն գյուղացիական տնտեսություններին, որոնք ի վիճակի չէին ցանք կատարել և արդյունավետ կերպով զբաղվել գյուղատնտեսական մյուս աշխատանքներով:

Հայաստանի գաղթական և սովյալ բնակչությանն օգնություն կազմակերպելու և հանրապետությունում սկսված շինարարական աշխատանքներին օժանդակելու համար 1921 թ. սեպտեմբերին Երևանում հիմնվեց Հայաստանի օգնության կոմիտե (ՀՕԿ), որի կենտրոնական վարչության նախագահ ընտրվեց մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը: Նրա կազմում էին հանրապետության անվանի գրողներ, արվեստագետներ, գիտնականներ և պետական ու հասարակական գործիչներ: ՀՕԿ-ը դիմեց արտասահմանյան հայությունը Սովետական Հայաստանին օգնություն ցույց տալու կոչով, որը մեծ արձագանք գտավ սփյուռքահայության շրջանում: «Աշխարհի ամեն կողմ ցրված հայ ժողովուրդ, — ասված է կոչում, — լսի՛ր, քե՛զ է՛ կանչում Հայաստանի օգնության կոմիտեն, քեզ է՛ կանչում Հայաստանի մայրաքաղաքում գտնարված ամեն հոսանքի հայ գործիչների և գրականագետների ժողովը: Եվ գուցե երբեք դու չես լսել նրա ձայնը այսպես միացած ու միահամուռ: Եվ այսքան մեծախորհուրդ մի վայրկյանի: Լսի՛ր, դարավոր մաքառումներից հետո, համաշխարհային թոհ ու բոհից, լայնածավալ արևկոծությունների և աղետների ծովից գերագույն ճիգերով բարձրանում է ազատ ու անկախ Հայաստանը: Լսի՛ր քեզ կանչող Հայրենիքի ձայնը և շտապիր օգնության ամեն բանով, ինչով կարող ես...»: Այնուհետև կոչում ասվում է, թե

ինչ է հարկավոր ուղարկել Սովետական Հայաստան: «Հայրենակիցնե՛ր... Շուտափույթ հասցրեք Հայաստանի օգնության կոմիտեին առաջին հերթին հաց, սերմացու, գյուղատնտեսական գործիքներ, զգեստ, դեղորայք և դրամ՝ ապահովելու բնակչությանը սովամահության վտանգից, ընդունելու այն գաղթականներին, որոնք հոգնած ու ընչազուրկ դառնում են իրենց հայրենիքը»:

Շուտով ՀՕԿ-ի մասնաճյուղեր ստեղծվեցին Անդրկովկասի մյուս հանրապետություններում, Ռուսաստանում, Ուկրաինայում, Միջին Ասիայում, ինչպես նաև Իրանում, Հունաստանում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Եգիպտոսում և արտասահմանյան այլ երկրներում: Ոչ լրիվ տրվելով իրենց 1923 թվականի վերջը Հայաստանում ՀՕԿ-ի արտասահմանյան մասնաճյուղերից ստացվել է 42 հազար փութ ալյուր, 30 հազար փութ սերմացու, 266 հազար ոտբլու հագուստեղեն, կոշիկեղեն, զեղորայք և այլն: ՀՕԿ-ը զգալի աշխատանք կատարեց Հայաստանի ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման գործում:

Սովետական Հայաստանի աշխատավորությանը շարունակում էր մեծ օգնություն ցույց տալ Սովետական Ռուսաստանի կառավարությունը, շնայած երկրի մի շարք նահանգներում բռնկված սովին: Բնորոշ է, որ, իր հերթին, հավատարիմ ժողովուրդների բարեկամության և ինտերնացիոնալ համերաշխության մեծ գաղափարին, սովյալներին օգնելու նպատակով եղբայրական սովետական բոլոր հանրապետություններում ծավալված համաժողովրդական շարժմանը ակտիվորեն մասնակցեցին նաև Սովետական Հայաստանի աշխատավորները:

Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը մի շարք միջոցառումներ իրականացրին հանրապետության ժողովրդական տնտեսության վերականգնման գործում եղած դժվարությունները հաղթահարելու համար: 1921 թ. սեպտեմբերին ՀՍՍՀ Ժողովխորհը ղեկրեա ընդունեց գյուղի ներքին հողաբաժանման մասին, որի շնորհիվ զգալիորեն կարգավորվեցին հողային հարաբերությունները: Նոյեմբերին հրապարակվեց Ժողովխորհի ղեկրետր բամբակագործությունը հանրապետությունում զարգացնելու մասին: Հանրապետությունում հաջողությամբ էին մշակվում նաև գյուղատնտեսության մյուս կուլտուրաները (ծխախոտ, խաղող և այլն): Զարկ տրվեց անասնապահությանը: 1921 թ. Վորոնցովկայում (այժմ՝ Կալինինո) կազմակերպվեց կաթնատնտեսական ֆերմա, իսկ Երևանում՝ պետական սերմնարածարան և շերամապահության կայան:

Լայն աշխատանք էր կատարվում ոռոգման բնագավառում: 1922 թ. հոկտեմբերին սկսվեց Ծիրակի ջրանցքի կառուցումը: Հայաստանում սովետական կարգերի հաստատման տարեդարձի օրը՝ նոյեմբերի 29-ին, հանդիսավոր կերպով շահագործման հանձնվեց էջմիածնի կենինի անվան

ջրանցքը 23 կմ երկարությամբ, որը ոռոգելի դարձրեց ավելի քան հազար հեկտար հող: 1923 թ. մայիսին շահագործման հանձնվեց Երևանի Շահումյանի անվան ջրանցքը, 1924 թ. ապրիլին՝ Էվջիլարի (այժմ՝ Արազափ) ջրանցքը: Արդեն 1922 թվականին հանրապետության ոռոգելի տարածությունները հասնում էին նախապատերազմյանի 90% -ին, իսկ ցանքսերի ընդհանուր տարածությունը 15 հազար հեկտարով գերազանցում էր 1919 թ. մակարդակը:

Հայաստանի գյուղատնտեսության վերականգնման և հետագա զարգացման գործում խթան հանդիսացավ գյուղատնտեսության աշխատողների առաջին համագումարը, որը տեղի ունեցավ 1922 թ. նոյեմբերին:

Գյուղատնտեսության զարգացման գործում զգալի դեր խաղացին պետական տնտեսությունները՝ սովխոզները, որոնք ստեղծվեցին Հայաստանում սովետական իշխանության հաստատման առաջին տարում նախկին կալվածատիրական հողերի բազայի վրա: 1923 թվականին Հայաստանում գործում էր շորս սովխոզ՝ Երևանում, Կոտայքի, Էջմիածնի ու Լոռու շրջաններում:

Սովետական Հայաստանի գյուղատնտեսության նվաճումները լայնորեն ցուցադրվեցին 1923 թ. աշնանը Հայաստանում առաջին անգամ կազմակերպված բերքի տոնին և Մոսկվայի համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսում, որտեղ ստեղծվել էր հայկական տաղավար: Այստեղ ներկայացված էին Հայաստանի գյուղատնտեսական, ինչպես նաև արդյունաբերական արտադրանքի բազմաթիվ նմուշներ: Երևանի գինու և կոնյակի «Արարատ» տրեստը, Հայաստանի շերամապահական կայանը, «Վերածնություն» և «Ինտերնացիոնալ» արտելները ցուցահանդեսի ժյուրիի կողմից պարգևատրվեցին զիպլումներով: Ժյուրին հատկապես բարձր գնահատականի արժանացրեց Վորոնցովկայի շվեյցարական եղանակով պատրաստված պանիրը:

Գյուղատնտեսության բնագավառում ձեռք բերված ակնառու հաջողությունները պայմաններ ստեղծեցին հանրապետության արդյունաբերության վերականգնման համար: 1921—1922 թթ. սկսեցին աշխատել Երևանի գինու-կոնյակի «Արարատ» գործարանը, կաշվի երկու փոքր գործարանները և արդյունաբերական մի շարք այլ ձեռնարկություններ:

Սովետական Ռուսաստանի օգնությամբ ընդարձակվեց պոլիգրաֆիական արդյունաբերությունը, դրվեց տեքստիլ արդյունաբերության հիմք: 1923 թվականին որոշակի քայլեր արվեցին երկրի էլեկտրիֆիկացման ուղղությամբ: Սկսվեց Երևանի առաջին հիդրոէլեկտրակայանի կառուցումը:

Ժողովրդական տնտեսության վերականգնմանը ղուգրնթաց ծավալվում էր ապրանքաշրջանառությունը գյուղի և քաղաքի միջև: Սովետական Հայաստանի սպառողական կոոպերացիան միավորված էր Հայկոոպի մեջ, որը հանրապետությունում ստեղծել էր լայն ցանց: Նա իր բաժանմունքներն ուներ նաև եղբայրական հանրապետությունների մի շարք քաղաքներում:

Հայկոոպին տրված էր արտաքին առևտրի իրավունք: Նա իր բաժանմունքներն ուներ Քավրիզում, Կոստանդնուպոլսում և Արևմտյան Եվրոպայի մի քանի երկրներում: Առևտրական գործարքներից բացի, 1921—1922 թթ. հանրապետության տարբեր դավառներում Հայկոոպը հիմնել էր նաև արտադրական մի շարք ձեռնարկություններ: 1921—1922 թթ. Հայաստանում կազմակերպվեցին առաջին արտադրական և վարկային կոոպերատիվ բնկերությունները, որոնց լայն օգնություն էր ցույց տալիս պետությունը:

Խաղաղ տնտեսական շինարարության ծավալումը հանրապետության աշխատավորների մեջ առաջ էր բերել բուռն խանդավառություն: Հերոսական աշխատանքի պայթույթ համակել էր Հայաստանի բոլոր աշխատավորներին: Կոմունիստական կուսակցությունը լայն բացատրական աշխատանք էր տանում երկրի վերաշինման գործին լծված հազարավոր աշխատավորների շրջանում, ոգևորում և խրախուսում էր, նրանց մեջ դաստիարակում սոցիալիստական վերաբերմունք աշխատանքի նկատմամբ: Սոցիալիստական շինարարության բնագավառում առավել աչքի բնկած կուկիտիվներին և անձանց պարգևատրելու համար 1923 թ. հուլիսին ՀՍՍՀ Կենտգործկոմը սահմանեց ՀՍՍՀ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշան:

Չնայած ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում ծավալված շինարարությանը, այնուամենայնիվ, 1921—1923 թթ. դեռևս թե՛ գյուղատնտեսության և թե՛ արդյունաբերության մեջ չէին հաղթահարվել բազմաթիվ դժվարություններ: Ցածր էր բերքատվությունը: Արդյունաբերության մի շարք ճյուղերում վերականգնման աշխատանքները դանդաղ էին ընթանում՝ զլխավորապես հումքի և մեքենայական սարքավորման պակասության պատճառով:

3. ՀՍՍՀ ԱՌԱՋԻՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ:
ԱՆԴՐՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԵՎ ՍՍՀՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Սովետների ընտրությունները

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո ստեղծված ռազմաքաղաքական ծանր պայմանները հնարավորություն չտվեցին կառավարելու սովետների ընտրություններ, ուստի ստեղծվեցին հեղկոմներ, որոնք իշխանություն նշանակովի և ժամանակավոր օրգաններ էին:

1921 թ. աշնանը, երբ երկիրը թևակոխեց խաղաղ շինարարության ժամանակաշրջան, խնդիր դրվեց՝ հեղկոմները, որոնք կատարել էին իրենց պատմական դերը, փոխարինել իշխանության ընտրովի օրգաններով: Սովետական նորաստեղծ պետության առաջ ծառանում էին բազմաթիվ նոր խնդիրներ, որոնք հեղկոմները չէին կարող լուծել, ուստի ղեկավարողական հիմունքներով պետք է ստեղծվեին այնպիսի օրգաններ, որոնք սերտորեն կապվեին քաղաքի և գյուղի աշխատավորների հետ, կարողանային ավելի ճկուն կերպով իրականացնել ղեկավարման իրենց ֆունկցիան, աշխատավորներին ավելի լայնորեն մասնակից դարձնեն երկրի պետական կառավարման և սոցիալիստական շինարարության գործին: Այդպիսի օրգաններ կարող էին լինել բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների ղեկավարողների սովետները:

1921 թ. նոյեմբերի 20-ին ՀՍՍՀ Ժողովրդական կոմիսարների խորհուրդը հրապարակեց «Պատգամավորական խորհուրդների գործադիր կոմիտեների և խորհուրդների համագումարների մասին» ժամանակավոր կանոնադրություն, որով սահմանվեց սովետների համագումարների պատգամավորների ընտրության կարգը: Հանրապետությունում լայնորեն ծավալվեց նախընտրական կամպանիան:

Հայաստանի կոմկուսակցության Կենտկոմը նոյեմբերի վերջերին հրապարակեց բանվորներին և գյուղացիներին ուղղված դիմում, որով կոչ էր անում կազմակերպված, դասակարգային բարձր գիտակցականությամբ անցկացնել սովետների ընտրությունները, ակտիվորեն մասնակցել քաղաքական մեծ նշանակություն ունեցող այդ կամպանիային:

Կուսակցական կազմակերպությունները տեղերում ամենօրյա աշխատանք կազմակերպեցին հանրապետության աշխատավորների ակտիվ մասնակցությունն ընտրություններին ապահովելու համար: Ամենուրեք որոշումներ էին ընդունվում՝ սովետների կազմում ընտրել բանվորագյուղացիական մասսաների ներկայացուցիչներին, սովետական իշխանությանը նվիրված մարդկանց: Այդ օրերին մեծ աշխատանք ծավալեցին արհմիութենական և կոմերիտական կազմակերպությունները: Կայն աշխատանք էր տարվում կանանց շրջանում:

1921 թ. դեկտեմբերի 1-ին Սովետական Հայաստանի գյուղերում և

քաղաքներում սկսվեցին տեղական սովետների ընտրությունները, որոնք ավարտվեցին 1922 թ. հունվարի կեսերին: Ջերմորեն արձագանքելով կոմունիստական կուսակցության կոչին, հանրապետության աշխատավորներն ակտիվորեն մասնակցեցին սովետների ընտրություններին, որոնք անցնում էին ժողովրդական տնտեսությունն արագորեն վերականգնելու նշանաբանով: Կուսակցական կազմակերպությունների ղեկավարությունը նրանք հակահարված տվեցին դասակարգային խորթ տարրերին, որոնք փորձում էին վիժեցնել ընտրությունները, թափանցել սովետների մեջ:

1921 թ. դեկտեմբերի 27-ին Հայաստանում առաջին անգամ բացվեց Ալեքսանդրապոլի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների ղեկավարողների սովետի նիստը, իսկ 1922 թվականի հունվարի 1-ին՝ հանրապետության մայրաքաղաք Երևանի ղեկավարողների սովետի անդրանիկ նիստը: Այդ երկու քաղաքների սովետները Վ. Ի. Լենինին ընտրեցին պատվավոր նախագահ, նրան ուղարկելով ողջունի հեռագրեր:

Հայաստանի կոմունիստական կուսակցության և սովետների առաջին համագումարները:

1921 թ. դեկտեմբեր և 1922 թ. հունվար ամիսներին տեղի ունեցան Հայաստանի կուսակցական կազմակերպությունների հաշվետու-ընտրական ժողովներ և կոնֆերանսներ: 1922 թ. հունվարի 26-ին Երևանում բացվեց Հայաստանի կոմունիստական կուսակցության I համագումարը, որը քննարկեց մի շարք հրատապ հարցեր: Համագումարը լսեց Կենտկոմի առաջին քարտուղար Ս. Լուկաշինի զեկուցումը ՀԿ(բ)Կ Կենտկոմի քաղաքական հաշվետվության մասին, Ա. Նուրիջանյանի հարակից զեկուցումը՝ կուսակցության վարած քաղաքականության մասին: ՌԿ(բ)Կ XI կոնֆերանսի արդյունքների և սովետական շինարարության ու Անդրֆեդերացիայի վերաբերյալ զեկուցումներով հանդես եկավ Ա. Մյասնիկյանը: Համագումարը քրննարկեց նաև տնտեսական հարցեր: Ս. Լուկաշինը զեկուցեց նոր տնտեսական քաղաքականության մասին, իսկ հողժողկոմ Ա. Երզնկյանը՝ հողային քաղաքականության և առաջիկա զարնանացանի աշխատանքների մասին: ՀԿ(բ)Կ I համագումարում Վ. Ի. Լենինն ընտրվեց պատվավոր նախագահ:

Մեծ է Հայաստանի կոմունիստական կուսակցության I համագումարի նշանակությունը: Համագումարը վերջնականապես ավարտեց Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմակերպական ձևավորումը: Առաջին անգամ ստեղծվեց ընտրովի Կենտրոնական կոմիտե՝ բաղկացած 17 հոգուց: Հանրագումարի բերելով կուսակցության ամբողջ նախընթաց գործունեությունը և առաջ քաշելով երկրի տնտեսական շինարարության հիմնական խնդիրները, համագումարը ընդունեց մի շարք կարևոր

վոր որոշումներ, որոնք հանրապետության կուսակցական ու սովետական կազմակերպությունների համար հանդիսացան հետագա գործունեության լայն ծրագիրը: Համագումարը ջերմորեն արձագանքեց Անդրկովկասյան Ֆեդերացիայի կազմակերպման առաջարկին և միահամուռ որոշում ընդունեց ֆեդերացիայի կազմակերպումն արագացնելու մասին:

1922 թ. փետրվարին Թիֆլիսում բացվեց Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների առաջին համագումարը: Համագումարը քննարկեց ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի հաշվետվությունը, որով հանդես եկավ Ս. Օրջոնիկիձեն, կուսակցական և սովետական շինարարության հարցերը, որոնց մասին զեկուցեց Ա. Մյասնիկյանը: Համագումարը ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի փոխարեն ընտրեց Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների երկրային կոմիտե՝ Անդրբեկեղամ, որի առաջին պլենումն ընտրեց Երկրային կոմիտեի նախագահություն և քարտուղարություն: Քիչ ուշ Անդրբեկեղամի քարտուղար ընտրվեց Ա. Մյասնիկյանը:

1922 թ. հունվարի 30-ին, երբ ամբողջ հանրապետությունում ավարտվել էին սովետների ընտրությունները, Երևանում բացվեց Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների ղեկուստատների սովետների I համագումարը, որին մասնակցում էին վճռական ձայնի իրավունքով 239 պատգամավոր, խորհրդակցական ձայնի իրավունքով 13 պատգամավոր: Համագումարի պատգամավորներ էին ընտրվել Սովետական Հայաստանում ապրող բոլոր ազգությունների ներկայացուցիչները: 252 պատգամավորներից հայեր էին 212-ը, ռուսներ՝ 21, ադրբեջանցիներ՝ 14, քրդեր՝ 2, լեհ՝ 1, հույն՝ 1, ասորի՝ 1: Համագումարի պատգամավորներից՝ 235-ը տղամարդ էին, 17-ը՝ կին, գյուղացի՝ 154, բանվոր՝ 40, ծառայող՝ 24, զինվորական՝ 34:

Սովետների համագումարը քննության առավ հետևյալ հարցերը. 1. Հայաստանի ՍՍՀ կառավարության հաշվետվությունը (զեկուցող՝ Ա. Մյասնիկյան), 2. Հայաստանի ՍՍՀ սահմանադրության ընդունումը (զեկուցող՝ Ա. Մուսվյան), 3. Անդրֆեդերացիայի կազմակերպման հարցը (զեկուցող՝ Ա. Մուսվյան), 4. Տնտեսական քաղաքականության մասին (զեկուցող՝ Ս. Լուկաշին), 5. Գյուղատնտեսության և հողային քաղաքականության մասին (զեկուցող՝ Ա. Երզնկյան): Համագումարում քննարկվեց նաև կոոպերացիայի, սոցիալական ապահովության, կարմիր բանակի վերաբերյալ հարցերը, լավեց պարենավորման ժողովրդական կոմիսարիատի հաշվետվությունը և այլն:

Իր հաշվետու զեկուցման մեջ Ա. Մյասնիկյանը ամփոփեց ՀՍՍՀ կառավարության մեկ տարվա գործունեության արդյունքները և նշեց նրա հերթական խնդիրները: Վեր հանելով քայքայված երկրի տնտեսական

վերականգնման ուղղությամբ ձեռք բերված հաջողությունները, Ա. Մյասնիկյանը միաժամանակ նշեց վերականգնման գործում եղած այն լուրջ դժվարությունները, որոնք պետք է հաղթահարվեն կարճ ժամանակամիջոցում: Նա հանրապետության աշխատավորությանը կոչ արեց նոր եռանդով լծվել ժողովրդական տնտեսության վերականգնման և կուլտուրական շինարարության գործին: Համագումարը հավանություն տվեց կառավարության գործունեությանը:

Հայաստանի սովետների առաջին համագումարը համապատասխան որոշումներ ընդունեց քննակված բոլոր հարցերի վերաբերյալ: Ընտրվեց Հայաստանի ՍՍՀ Կենտրոնական գործադիր կոմիտե՝ բաղկացած 75 անդամից և 17 թեկնածուից: Կենտգործկոմի անդամներ ընտրվեցին Ս. Օրջոնիկիձեն, Ա. Մյասնիկյանը, Ա. Միկոյանը, Ա. Մուսվյանը, Ս. Լուկաշինը, Ս. Համբարձումյանը, Ա. Հովհաննիսյանը, Հ. Աղատյանը, Ա. Կարինյանը, Շ. Ամիրխանյանը, Ս. Մարտիկյանը, Սիմակը և ուրիշներ: Հայաստանի Կենտգործկոմի առաջին նախագահ ընտրվեց Սարո Համբարձումյանը: Կենտգործկոմի առաջին նստաշրջանում հաստատվեց հանրապետության ժողովրդական կոմիսարների խորհրդի կազմը՝ Ա. Մյասնիկյանի նախագահությամբ: Սակայն 1922 թ. մարտին, Ա. Մյասնիկյանի՝ Անդրկովկասի մասշտաբով ղեկավար աշխատանքի անցնելուց հետո, ՀՍՍՀ ժողովրդախորհի նախագահ ընտրվեց Ս. Լուկաշինը, իսկ նրա փոխարեն ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար ընտրվեց Աշոտ Հովհաննիսյանը:

Համագումարը միահամուռ կերպով ընդունեց ողջույնի դիմումներ՝ ուղղված Սովետական Հայաստանի և արտասահմանի բոլոր հայ աշխատավորներին: Համագումարը Հայաստանի բանվորների և գյուղացիների անունից ողջույնի հեռագիր ուղարկեց Վ. Ի. Լենինին, ռուս մեծ ժողովրդին, արտահայտելով իր խոր երախտագիտությունը:

Հայաստանի ՍՍՀ Սովետների առաջին համագումարը 1922 թ. փետրվարի 3-ին պատգամավորների որոտայից ծափահարությունների տակ հանտատեց Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության սահմանադրությունը: ՀՍՍՀ սահմանադրության ընդունումը պատմական մեծ իրադարձություն էր ազգային և սոցիալական ճնշումից ազատագրված հայ ժողովրդի կյանքում:

ՀՍՍՀ սահմանադրությունը կազմված էր ՌՍՖՍՀ սահմանադրության հիմնական դրույթների հիման վրա, բայց միաժամանակ հաշվի էին առնված մեր հանրապետության առանձնահատկությունները, նրա յուրատեսակ պայմանները: Այն բաղկացած էր հինգ հատվածից և 12 գլխից (ընդամենը 89 հոդված): Առաջին գլխում շարադրված էին սովետական իշխանության հիմնական սկզբունքները: «Ամբողջ իշխանությունը

նը կենտրոնում և տեղերում, — ասված է սահմանադրության մեջ, — պատկանում է բանվորների, գյուղացիների և կարմիր զինվորների պատգամավորական խորհուրդներին»: Սահմանադրության մեջ հռչակվում է բոլոր ազգերի իրավահավասարությունը «ՀՍՍՀ սահմաններում բոլոր աշխատավորները, առանց ազգի և դավանանքի խտրության վայելում են հավասար իրավունքներ»:

ՀՍՍՀ սահմանադրության մեջ օրենսդրական կարգով ամրապնդվեցին սովետական իշխանության տնտեսական հիմքերը, տնտեսության հրամանատարական բարձունքների անցումը աշխատավորների ձեռքը: Հոգը, նրա ընդերքը, անտառները, բանկերը, երկաթուղին, գործարանները հայտարարվում են պետական-համաժողովրդական սեփականություն:

Սոցիալիստական կյանքի միակ հիմքը համարելով աշխատանքը և միայն աշխատավորին համարելով բոլոր արժեքների ստեղծողը, սահմանադրությունը աշխատանքը պարտադիր համարեց ՀՍՍՀ բոլոր քաղաքացիների համար, նշանաբան ունենալով «ով չի աշխատի, նա չի ուտի» սկզբունքը: Շահագործող դասակարգերը զրկվեցին քաղաքական իրավունքներից:

ՀՍՍՀ սահմանադրությունը եկեղեցին անջատեց պետությունից, իսկ դպրոցը՝ եկեղեցուց: Աշխատավորների համար սահմանվեց ձրի կրթություն: Սահմանադրությունը բոլոր աշխատավորների համար հռչակեց խոսքի և մամուլի ազատություն:

Սահմանադրության 8-րդ հոդվածով չեղյալ էին համարվում Հայաստանի նախկին կառավարությունների կնքած բոլոր միջազգային դաշնագրերը, վերջ էր տրվում՝ գաղտնի դիվանագիտությանը, հարեանների հետ հաստատվում էին բարեկամական հարաբերություններ:

Սահմանադրության հաջորդ հոդվածում ասված է, որ բանվորների ու աշխատավոր գյուղացիների հեղափոխական դիկտատուրան ապահովելու և այն արտաքին ու ներքին հակահեղափոխությունից պաշտպանելու նպատակով կազմվում է ՀՍՍՀ կարմիր բանակ, բոլորի համար պարտադիր զարձնելով զինվորական ծառայությունը:

ՀՍՍՀ սահմանադրության երկրորդ հատվածում խոսվում է սովետական իշխանության կառուցվածքի մասին: ՀՍՍՀ-ում իշխանության բարձրագույն օրգանը Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների ղեկուսատաների սովետների համագումարն է, որը գումարվում է տարեկան մեկ անգամ: Համագումարն ընտրում է ՀՍՍՀ Կենտգործկոմ, որը համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում հանդիսանում է իշխանության օրենսդիր, կարգադիր և ղեկավար օրգանը, հաշվետու է համագումարի առաջ: Չորս ամիսը մեկ անգամ հրավիրվում է Կենտգործկոմի հերթական նստաշրջան: Կենտգործկոմը

ընտրում է նախագահություն և կազմում է կառավարություն՝ ժողովրդական կոմիսարների խորհուրդ:

Ժողովրդական տնտեսության և կուլտուրական շինարարության տարբեր բնագավառները ղեկավարելու համար սահմանադրությունը հաստատում է հետևյալ կոմիսարիատները՝ արտաքին գործերի, ներքին գործերի, արդարադատության, ժողովրդական լուսավորության, ուղիղապահության, ֆինանսների, պարենավորման, արտաքին առևտրի, սոցիալական ապահովության, փոստ-հեռագրի, առողջապահության, աշխատանքի ու հաղորդակցության ճանապարհների և բանվորագյուղացիական տեսչություն: ՀՍՍՀ կառավարության կազմում ստեղծվում է ժողովրդական տնտեսության խորհուրդ, որը միավորում և ղեկավարում է հանրապետության ժողովրդական տնտեսությունը, գլխավորապես արդյունաբերությունը:

Սահմանադրության VI դիտում ասված է, որ գյուղում և քաղաքում իշխանության բարձրագույն օրգանը ղեկուսատաների տեղական սովետներն է: Գավառամասի (շրջանի) և գավառի սահմաններում պետական իշխանության բարձրագույն մարմիններ են ղեկուսատաների սովետների գավառամասային (շրջանային) և գավառային համագումարները, իսկ համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում՝ գավառամասային (շրջանային) և գավառային գործադիր կոմիտեները: Սովետների վերընտրությունը պետք է կատարվեր գյուղերում տարեկան երկու, իսկ քաղաքներում՝ տարեկան մեկ անգամ:

ՀՍՍՀ սահմանադրության երրորդ հատվածը նվիրված է ընտրական իրավունքին և ընտրությունների կարգին: Սովետներում ընտրելու և ընտրվելու իրավունք ունենին 18 տարին լրացրած ՀՍՍՀ բոլոր աշխատավորները՝ անկախ նրանց ազգությունից, դավանանքից, նստակեցությունից և սեռից: Ընտրելու և ընտրվելու իրավունքից զրկվում էին բոլոր ոչ աշխատավոր տարրերը՝ վարձու աշխատանք շահագործողները, անաշխատ եկամտով ապրողները, մասնավոր առևտրականները, կրոնական պաշտամունքի հոգևոր սպասավորները, տապալված կառավարությունների անդամները, քաղաքական հետախուզության ու ոստիկանության պատասխանատու պաշտոնյաները, խմբապետներն ու մաուզերիստները, իրավազրկման դատապարտվածները:

Ելնելով մանրբուրժուական տարրերի նկատմամբ բանվոր դասակարգի ղեկավարությունն ապահովելու անհրաժեշտությունից, սահմանադրությունը նախատեսում էր ոչ թե հավասար, այլ անհավասար ընտրություններ: Ընտրական սիստեմը կառուցված էր այնպես, որ բանվորներն ավելի մեծ թվով ղեկուսատաներ ունենային սովետներում, քան գյուղացիները: Օրինակ՝ տեղական սովետների ղեկավար օրգանների համար գյուղի 1000 բնակչից ընտրվում էր մեկ ղեկուսատ, իսկ քա-

դաքի 200 ընտրողից՝ մեկ ղեկավարատ: Սովետների ընտրությունները բազմաստիճան էին ու բաց: Դա բխում էր ժամանակի սոցիալ-քաղաքական պայմաններից, որոնք հետագայում փոփոխվեցին:

Սահմանադրության շորրորդ հատվածը վերաբերում էր բյուջեին, հինգերորդը՝ պետական գերբին և դրոշակին: Հայ ժողովրդի պետական գերբի վրա առաջին անգամ պատկերվեց բանվորագյուղացիական իշխանության խորհրդանիշը՝ մուրճն ու մանգաղը: Հայ մեծանուն բանաստեղծ Հովհ. Քումանյանը, տեսնելով Սովետական Հայաստանի գերբը, ասել է. «Ահա մի իշխանություն, որի գերբի վրա տեսնում ենք ոչ թե գազաններ ու զենքեր, այլ մուրճ ու մանգաղ, բանվորի և գյուղացու աշխատանքային սիմվոլը միատեղ ու միասին, մի իշխանություն, որը գալիս է իր հետ բերելով հաշտ ու խաղաղ կյանք ու արդար աշխատանք և ոչ թե կռիվ ու կոտորած»:

Անդրկովկասյան
Ֆեդերացիայի կազմակերպումը

Անդրկովկասում սովետական իշխանություն հաստատվելուց հետո կոմունիստական կուսակցությունը խնդիր դրեց տնտեսական և քաղաքական ամուր դաշինք ստեղծել Անդրկովկասի երեք հանրապետությունների միջև: Վ. Ի. Լենինը Կովկասի կոմունիստներին ուղղած պատմական նամակում նշում էր, որ այդ դաշինքը կստեղծի ազգային խաղաղության մի այնպիսի օրինակ, որպիսին չի եղել բուրժուազիայի ժամանակ և անհնարին է բուրժուական հասարակարգում: Լենինի այդ ցուցումը կանխորոշեց Անդրկովկասյան Ֆեդերացիայի ստեղծումը, որը թեև դրվում էր տնտեսական և քաղաքական անհրաժեշտությամբ: Առանց Անդրկովկասի սովետական երեք հանրապետությունների բոլոր ուժերի միավորման, անհնարին կլինեի վերականգնել և զարգացնել ժողովրդական տնտեսությունը, ամրապնդել ժողովուրդների բարեկամությունը, հաջողությամբ պայքարել ներքին և արտաքին թշնամիների դեմ:

Անդրկովկասյան հանրապետությունների տնտեսական միավորման անհրաժեշտության մասին 1921 թ. ապրիլի սկզբին Վ. Ի. Լենինը գրում էր. «Այժմ Վրաստանը դարձել է սովետական, խոսք վերաբերում է կովկասյան հանրապետությունները՝ Ադրբեջանը, Հայաստանը, Վրաստանը, մի տնտեսական կենտրոնի մեջ միավորելուն»¹: Նույն օրերին Գ. Կ. Օրջոնիկիձեին ուղղած հեռագրում Վ. Ի. Լենինը դարձյալ խնդիր էր դնում Անդրկովկասում ստեղծել մարդային տնտեսական օրգան:

Անդրկովկասյան Ֆեդերացիայի հիմքերը դրվել էին դեռևս 1921 թ. գարնանը: Ապրիլին Անդրկովկասի հանրապետությունները պայմանագիր կնքեցին երկաթուղիների, հուլիսին՝ արտաքին առևտրի միավորման վերաբերյալ: ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոն հանձնարարել էր Ազգր-

բեջանի, Վրաստանի և Հայաստանի պատվիրակություններին 1921 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Թուրքիայի հետ Կարսում բանակցություններ վարելիս բոլոր հարցերում հանդես գալ միասնաբար: «Թուրքիայի հետ միասնական պայմանագիր կնքելը, — ասել է Գ. Կ. Օրջոնիկիձեն 1921 թ. դեկտեմբերին սովետների անդրկովկասյան առաջին համագումարում տված զեկուցման մեջ, — մի ավելորդ անգամ ցույց է տալիս, որ Հայաստանը, Վրաստանն ու Արբեջանը հանդես են գալիս որպես միասնական ամբողջություն, որպես միասնական եղբայրական հանրապետություն»:

1921 թ. նոյեմբերի 3-ին ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի պլենումը, որին մասնակցում էին Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի կոմկուսակցությունների կենտկոմների անդամները, որոշում ընդունեց Անդրկովկասի հանրապետությունների միջև ռազմական, տնտեսական, ֆինանսական և արտաքին քաղաքականության բնագավառներում ֆեդերատիվ դաշինք կնքելու անհրաժեշտության մասին:

1921 թ. նոյեմբերի 29-ին ՌԿ(Բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն հաստատեց Վ. Ի. Լենինի կազմած նախագիծը Անդրկովկասյան Ֆեդերացիա կազմակերպելու մասին: Քաղբյուրոյի որոշման նախագիծում Վ. Ի. Լենինը Անդրկովկասյան հանրապետությունների ֆեդերացիան համարում էր սկզբունքորեն ճիշտ և անպայման իրագործման ենթակա, «...սակայն գործնականապես անհասարակ իրագործելու իմաստով վաղաժամ, այսինքն՝ պահանջում է որոշ ժամանակ քննարկման, պրոպագանդայի և սովետական եղանակով ներքին անցկացնելու համար»²: Վ. Ի. Լենինը գտնում էր, որ չի կարելի Անդրկովկասյան Ֆեդերացիա ստեղծել առանց այդ հարցը Անդրկովկասի աշխատավորական լայն մասսաների քննարկմանը դնելու: «Առաջարկել (Կովկասյան բյուրոյի միջոցով), — այնուհետև գրում է Լենինը նախագիծում, — Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի կենտրոնական կոմիտեներին՝ ֆեդերացիայի հարցն ավելի լայնորեն դնել կուսակցության և բանվորական ու գյուղացիական մասսաների քննարկմանը, եռանդուն պրոպագանդա մղել ֆեդերացիայի օգտին և այն անցկացնել յուրաքանչյուր հանրապետության սովետների համագումարների միջոցով...»²:

Առաջնորդվելով լենինյան ցուցումներով, Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի կոմունիստական կուսակցությունները՝ Գ. Օրջոնիկիձեի, Ս. Կիրովի, Ա. Մյասնիկյանի, Մ. Օրախելաշվիլու, Ն. Նարիմանովի ղեկավարությամբ, աշխատավոր մասսաներին համախմբեցին Անդրկովկասի հանրապետությունների պետական միավորման գաղափարի շուրջը:

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 136:

² Նույն տեղը:

¹ В. И. Ленин, Полное собрание сочинений, т. 43, стр. 186.

Նրանք նախապատրաստական լայն աշխատանք ծավալեցին Անդրկովկասյան Ֆեդերացիա կազմակերպելու համար: Բանվորների, գյուղացիների և դինվորների բազմամարդ ժողովները, աշխատավորների դեպուտատների սովետների նիստերը, կուսակցական կոնֆերանսները, համագումարներն իրենց ընդունած որոշումներում հավանություն էին տալիս Անդրկովկասյան Ֆեդերացիայի ստեղծմանը:

Անդրկովկասյան Ֆեդերացիայի ստեղծումը և նրա հետագա ամրապնդումն ընթացավ նացիոնալ-ուկրոնիզմի դեմ մղվող համառ պայքարում: Այդ թեքումը գլխավորապես արտահայտվեց Վրամտանի կուսակցական և սովետական մի խումբ դեկավար աշխատողների մոտ, որոնք դիմադրություն էին ցույց տալիս Ֆեդերացիայի կազմակերպմանը: Երկրամասի կուսակցական կազմակերպությունները ջախջախեցին Անդրկովկասյան Ֆեդերացիայի կազմակերպման հակառակորդների սխալ հայացքները և հաջողությամբ առաջ տարան Ֆեդերացիայի ըստ ստեղծման գործը: 1921 թ. մարտի 5-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը դատապարտեց Ֆեդերացիայի հակառակորդներին և հավանություն տրվեց Կենտկոմի կովկասյան բյուրոյի վարած քաղաքականությանը:

1922 թ. մարտի 12-ին Քիֆլիսում գումարված Անդրկովկասի սովետական հանրապետությունների կենտրոնականների ներկայացուցիչների լիագոր-կոնֆերանսը հիմք դրեց Անդրկովկասյան Ֆեդերացիային: Միանգամայն կամավոր հիմունքներով հաստատվեց երեք հանրապետությունների ռազմաֆաղափական և տնտեսական դաշնագիրը Անդրկովկասի Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Ֆեդերատիվ Միություն ստեղծելու մասին:

Դաշնակցային պայմանագրի 13-րդ կետով որոշվում է Անդրկովկասյան Ֆեդերացիայի պետական կառուցվածքը և իշխանության համատեղ օրգանների գործունեության շրջանակները: Լիազոր-կոնֆերանսը հայտարարվում էր իշխանության բարձրագույն օրգան: Միացյալ կառավարության գործադիր մարմինն էր Դաշնակցային խորհուրդը, որի նախագահ հաստատվեց Ա. Մյասնիկյանը:

Դաշնակցային խորհուրդը գոյություն ունեցավ 9 ամիս: 1922 թ. դեկտեմբերին Բաքվում տեղի ունեցավ բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների սովետների անդրկովկասյան համագումարը, որը որոշեց Անդրկովկասի Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Ֆեդերատիվ Միությունը (ԱՍՍՀՅՄ) վերակազմել Անդրկովկասի Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության (ԱՍՖՍՀ): Համագումարը հաստատեց ԱՍՖՍՀ-ի սահմանադրությունը և ընտրեց Ֆեդերացիայի պետական իշխանության գերագույն օրգան՝ Անդրկենտրոնը, որը կազմեց Անդրֆեդերացիայի կառավարություն՝ Անդրժողովարհ: 1923 թ. հունվարին բացվեց Անդր-

կենտրոնի առաջին նստաշրջանը, որտեղ ընտրվեց նախագահություն: Անդրկենտրոնի նախագահության նախագահներ ընտրվեցին Ս. Աղամալիօղլին, Ս. Համբարձումյանը և Մ. Յիսակյան: Նստաշրջանն ընտրեց նաև Անդրժողովարհ, որի նախագահ հաստատվեց Մ. Օրախելաշվիլին, իսկ տեղակալներ՝ Մ. Հուսեյնովը և Ա. Մյասնիկյանը:

ԱՍՖՍՀ սահմանադրության համաձայն Անդրկովկասի երեք հանրապետությունների տնտեսական-քաղաքական ընդհանուր հարցերը հանձնվեցին Անդրկենտրոնի և Անդրժողովարհի իրավասությանը, իսկ մյուս հարցերը, որոնք վերաբերում էին ներքին գործերին, արդարագատությանը, ժողովրդական լուսավորությանը, առողջապահությանը, սոցիալական ապահովությանը և այլն, մնում էին հանրապետությունների իրավասության ներքո:

Այսպիսով, 1922 թ. կառուցվեց Անդրկովկասի ժողովուրդների եղբայրական համերաշխության անխրտակիչ շենք, որով նոր էջ բացվեց Անդրկովկասի ժողովուրդների բազմադարյան պատմության մեջ: Անդրկովկասյան Ֆեդերացիայի մեջ մտնող ժողովուրդները կարճ ժամանակամիջոցում վիթխարի հաջողություններ ձեռք բերեցին սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում:

ՍՍՀՄ-ի կազմակերպումը Կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության փայլուն հաղթանակը հանդիսացավ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության՝ ՍՍՀՄ-ի ստեղծումը:

1922 թ. երկրորդ կեսին ամբողջ երկրում սկսվեց ՍՍՀՄ ստեղծման համաժողովրդական լայն շարժում, որը գլխավորում էր կոմունիստական կուսակցությունը: 1922 թ. հոկտեմբերի 6-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը ընդունեց Վ. Ի. Լենինի առաջարկությունը ՍՍՀՄ ստեղծելու անհրաժեշտության մասին: Մինչ այդ, սեպտեմբերին, ինչպես և դեկտեմբերի վերջին օրերին, Վ. Ի. Լենինը, որը հիմնականում պատճառով չկարողացավ մասնակցել սովետների I համագումարին, խիստ քննադատության ենթարկեց Ի. Վ. Ստալինի առաջ քաշած «ավտոնոմիզացիայի» սխալ դրույթը, որը փաստորեն անտեսում էր սովետական ազգային հանրապետությունների լիակատար իրավահավասարության գաղափարը: Ըստ այդ դրույթի, ազգային սովետական հանրապետությունները պետք է Ռուսաստանի Ֆեդերացիայի մեջ մտնեին ավտոնոմիայի սկզբունքով: Վ. Ի. Լենինը, ընդհակառակը, գտնում էր, որ միայն լիակատար իրավահավասարության հիմունքներով պետք է բոլոր սովետական հանրապետությունները, այդ թվում և Ռուսաստանի Ֆեդերացիան, կամավոր միավորվեն ՍՍՀՄ մեջ:

ՍՍՀՄ կազմակերպմանը, սովետական բոլոր հանրապետությունների հետ միասին, ակտիվ մասնակցություն ցույց տվեց նաև Հայաս-

տանի ՍՍՀ-ն: Նոյեմբերին Երևանում բացվեց ՀՍՍՀ սովետների II համագումարը, որը միահամուռ հավանություն տվեց եղբայրական շորս հանրապետությունների միջև դաշինք կնքելու որոշման նախագծին: ՍՍՀՄ կազմակերպման գործում աչքի ընկնող դեր խաղաց Անդրկովկասյան Ֆեդերացիան:

Սովետների անդրկովկասյան առաջին համագումարը դիմեց Համառուսաստանյան Կենտրոնականի նախագահությանը, առաջարկելով հրավիրել ՌՍՖՍՀ, ԱՍՖՍՀ, ՌԻՍՍՀ և ԲՍՍՀ սովետների միացյալ համագումար և քննության առնել ՍՍՀՄ ստեղծելու հարցը: Նույնպիսի որոշումներ ընդունեցին նաև Ուկրաինայի, Բելոռուսիայի և Ռուսաստանի սովետների համագումարները:

1922 թ. դեկտեմբերի 30-ին Մոսկվայում տեղի ունեցավ ՍՍՀՄ սովետների I համագումարը, որին Անդրկովկասից մասնակցում էր 91 պատգամավոր, այդ թվում՝ Գ. Կ. Օրջոնիկիձեն, Ա. Մյասնիկյանը, Ս. Կիրովը, Մ. Օրախելաշվիլին, Հ. Նազարեթյանը և ուրիշներ: Հայաստանից որպես պատգամավորներ համագումարին մասնակցում էին Ս. Լուկաշինը, Ս. Տեր-Գաբրիելյանը, Ս. Համբարձումյանը, Ի. Գովլաթյանը, Հ. Հովսեփյանը, Ռ. Գաշտոյանը և ուրիշներ: Համագումարը միաձայն հաստատեց ՍՍՀՄ կազմակերպելու վերաբերյալ դեկլարացիան և պայմանագիրը: Այնուհետև ընտրվեց ՍՍՀՄ Կենտրոնական գործադիր կոմիտե, որի կազմում ընտրվեցին Ա. Մյասնիկյանը, Հ. Նազարեթյանը, Լ. Միրզոյանը, Ս. Համբարձումյանը, Ա. Տեր-Գաբրիելյանը, Ս. Լուկաշինը և ուրիշներ: Նույն օրը տեղի ունեցավ ՍՍՀՄ Կենտրոնականի առաջին նստաշրջանը, որն ընտրեց Կենտրոնականի նախագահություն: Անդրկովկասից նախագահության անդամ ընտրվեց Ա. Մյասնիկյանը:

Այսպես ստեղծվեց աշխարհում առաջին բազմազգ սոցիալիստական պետությունը, որը գլխավորում էր ժողովուրդների մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինը:

ՍՍՀՄ ստեղծումով սկսվեց սովետական հանրապետությունների միասնական համատեղ պետական գոյության ժամանակաշրջանը: 1924 թվականին ՍՍՀՄ սովետների II համագումարում ընդունվեց ՍՍՀՄ առաջին սահմանադրությունը՝ սովետական պետության Հիմնական օրենքը:

Մտնելով Անդրկովկասյան Ֆեդերացիայի և վերջինիս միջոցով նաև ՍՍՀՄ կազմի մեջ, Սովետական Հայաստանը մեծ հնարավորություններ ստացավ իր քաղաքական, տնտեսական և մշակութային հետագա զարգացման համար:

Կուսակցությունը, սովետական ժողովուրդը, համաշխարհային պրոլետարիատը, ամբողջ առաջադեմ մարդկությունը մեծ կորուստ կրեցին: 1924 թ. հունվարի 21-ին վախճանվեց Վ. Ի. Լենինը: Մեծ առաջնորդի

մահը անսահման վիշտ պատճառեց աշխարհի բոլոր աշխատավորներին:

Առաջնորդի մահը խորապես ցնցեց նաև հայ ժողովրդին: Ամենուրեք տեղի ունեցան սգո միտինգներ ու նիստեր: Լենինի գլխավորությամբ մղված հեղափոխական պայքարի շնորհիվ աղգային և սոցիալական ազատություն ձեռք բերած երախտապարտ հայ ժողովուրդը, սովետական մյուս ժողովուրդների հետ միասին, էլ՝ ավելի համախմբվեց լենինյան կոմունիստական կուսակցության և սովետական կոոպերատիվային շուրջը, մեծ եռանդով լծվեց Վ. Ի. Լենինի պատգամներն անշեղորեն իրականացնելու գործին:

Ի հավերժացումն Վ. Ի. Լենինի հիշատակի, հունվարի 26-ին որոշվեց Երևանի նախկին պարետային վարչության շենքի առաջ դնելով հրապարակը կոչել Լենինի անունով: Հաջորդ օրը հրապարակում տեղի ունեցած Երևանի բազմահազար աշխատավորների սգո միտինգում դրվեց Վ. Ի. Լենինի հուշարձանի հիմքը: ՀՍՍՀ Կենտրոնականի և Ժողովուրդի միջնորդությամբ ՍՍՀՄ Կենտրոնականը, ընդառաջելով Ալեքսանդրյանի աշխատավորության ցանկությանը, փետրվարի 26-ին որոշում ընդունեց Ալեքսանդրյանի քաղաքը Լենինական վերանվանելու մասին:

4. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՎԵՐՋՈՒՄ

1923—1924 թվականներից սկսած գյուղատնտեսությունը վերականգնում էր արագ թափով: 1925 թվականին Հայաստանում ցանքատարածությունները 1922 թվականի համեմատությամբ արդեն ավելացել էին ավելի քան 3 անգամ, կազմելով 295,7 հազար հեկտար, տեխնիկական կուլտուրաների ցանքատարածությունները 1922 թվականի 600 հեկտարի փոխարեն 1925 թվականին հասան մոտ 23 հազար հեկտարի: Չնայած 1925 թվականին ցանքատարածությունները դեռևս չէին հասել նախապատերազմյան մակարդակին, սակայն համախառն արտադրանքի գծով գերազանցվել էր այդ մակարդակը:

Գյուղատնտեսության վերականգնման գործում մեծ դեր խաղացին ուղղման ցանցի վերականգնումը և նոր ջրանցքների կառուցելը: Այդ աշխատանքները լայն թափով առաջ էին ընթանում վերականգնման ժամանակաշրջանի բոլոր տարիներին: Կառուցվող ջրանցքներից ամենամեծը Երևակի ջրանցքն էր, որի շինարարություն սկսվել էր 1922 թ. աշնանը: Ջրանցքի շինարարությունը համաժողովրդական բնույթ էր ստացել, դարձել էր հանրապետության բոլոր աշխատավորների պատվի գործը: Ավելին. Երևակի ջրանցքի շինարարական աշխատանքներին

մասնակցում էին նաև Սովետական Միության մյուս վայրերում և սփյուռքում ապրող հայերը: 204-ի միջոցով զգալի գումարներ ստացվեցին Արևմտյան Եվրոպայի, ԱՄՆ-ի, Մերձավոր Արևելքի և այլ երկրների հայ գաղթօջախներից: Զրանցքի կառուցողները քիչ զժվարություններ չհաղթահարեցին: Նրանց հերոսական աշխատանքի շնորհիվ շուտով ավարտվեց ջրանցքի կառուցումը: 1925 թ. հունիսին տեղի ունեցավ ջրանցքի հանդիսավոր բացումը, որին ներկա էին Հայաստանի և հարևան եղբայրական հանրապետությունների աշխատավորության շատ ներկայացուցիչներ: Բացմանը ներկա էր նաև նորվեգացի նշանավոր բեռախույզ Ֆ. Նանսենը, որը հուզիչ ճառ արտասանեց: «Հայ ժողովուրդը, — ասաց նա, — ամենից շատ է տառապել համաբաշխային պատերազմից: Այն բազմաթիվ ավերածությունների հետևերը, որ նկատելի են ձեր երկրում, դրա ապացույց են: Սակայն հայ ժողովրդի ջանասիրությունը և եռանդն այժմյան խաղաղ պայմաններում մեծ գործեր կարող են կատարել: Ես հավատացած եմ, որ այս ջրանցքին պիտի հետևեն ուրիշ ջրանցքներ և շինարարության ուրիշ օբյեկտներ»:

Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության վերականգնման շրջանի այդ նշանավոր կառույցը, որն ուներ 30 կմ երկարություն, պետք է ոռոգեր դարերով անջրդի մնացած ավելի քան 10000 հեկտար հողատարածություն: Խանդավառված այդ հոյակապ հաղթանակով, հայ պրոլետարական մեծ բանաստեղծ Լ. Հակոբյանը 1924 թ. գրեց «Քոլչևիկ է Շիր-կանալը» ոգեշունչ բանաստեղծությունը:

Գյուղատնտեսության վերականգնմանը զուգընթաց խոշոր տեղաշարժեր էին կատարվում նաև գյուղի սոցիալ-տնտեսական կյանքում: Զգալի աշխատանք կատարվեց շքավոր գյուղացիության վիճակը բարելավելու ուղղությամբ: Կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության ձեռք առած միջոցների շնորհիվ խիստ կրճատվեց ցանք չունեցող գյուղացիական տնտեսությունների թիվը: Թեև ՆԷՊ-ի առաջին տարիներին մեր երկրում տեղի ունեցավ կուլակային տնտեսությունների որոշ աճ, բայց շուտով կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը անցան կուլակության աճի սահմանափակման քաղաքականությանը: Գնալով կրճատվում էր կուլակային տնտեսությունների տեսակարար կշիռը: 1926 թվականին նրանք Սովետական Հայաստանում կազմում էին 5,5%:

Գյուղատնտեսության վերականգնման և հետագա զարգացման գործում մեծագույն դեր խաղաց գյուղատնտեսության կոոպերացումը: Դա կարևոր նշանակություն ունեցավ մանր գյուղացիական տնտեսություններն աստիճանաբար կոլեկտիվ տնտեսությունների մեջ ներգրավելու խնդրում: 1924 թվականից սկսած Սովետական Հայաստանում աճեց գյուղատնտեսական կոոպերացիայի ցանցը: 1924 թ. օգոստոսին ՀՍՍՀ

ժողովուրդը և Կենտրոնում որոշում ընդունեցին հանրապետության գյուղատնտեսական կոոպերացիայի մասին: Ստեղծվեց Հայգյուղկոոպ, որը գյուղացիներին միավորում էր արտադրական կոոպերացիայի տարբեր ձևերի մեջ (արտադրական, այգեգործական, բամբակագործական, ծխախոտագործական, անասնաբուծական և այլն), կազմակերպում էր նրանց գյուղատնտեսական գործիքներով, սերմացուով, պարարտանյութով և ֆինանսական միջոցներով օգնություն ցույց տալու գործը: Գյուղացիական տնտեսությունների վարկավորումը լավ հիմքերի վրա դնելու նպատակով 1924 թ. մարտին հիմնադրվեց ՀՍՍՀ գյուղատնտեսական բանկ:

1925 թ. դեկտեմբերին ՀԿ(Բ)Կ IV համագումարում ամփոփվեցին գյուղատնտեսության և, մասնավորապես, գյուղատնտեսական կոոպերացիայի բնագավառում ձեռք բերված նվաճումները: Համագումարը հանրապետության կուսակցական կազմակերպությունների առաջ խնդիր դրեց՝ ընդլայնել հատկապես արտադրական կոոպերացիայի ցանցը: Համագումարը գյուղատնտեսական բանկին և վարկային կոոպերացիային պարտավորեցրեց ուժեղացնել շքավոր և միջակ տնտեսություններին ցույց տրվող օգնությունը:

Գյուղատնտեսության բնագավառում ձեռք բերված ակնառու հաջողությունները պայմաններ ստեղծեցին հանրապետության արդյունաբերության վերականգնման համար: Առանձնապես արագ էր ընթանում թեթև և սննդի արդյունաբերության վերականգնումը: Վերականգնման ժամանակաշրջանի վերջերին արդյունաբերության առանձին ճյուղեր ոչ միայն լիովին վերականգնվեցին, այլև գերազանցեցին նախապատերազմյան մակարդակը: Ստեղծվեցին նաև արդյունաբերական նոր ճյուղեր: 1924—1925 թվականներին Երևանի և Սարգարապատի բամբակազտիչ գործարանների գործարկման շնորհիվ 1913 թ. համեմատությամբ զգալիորեն ավելացավ բամբակի արտադրությունը: Բամբակազտիչ գործարանների արտադրության բազայի վրա 1926 թվականին սկսեց արտադրանք տալ Հայբամբակկոմի Երևանի ձեթ-օձառի գործարանը: Արագ թափով զարգանում էր տեքստիլ արդյունաբերությունը: 1924—1925 տնտեսական տարում կենդանական տեքստիլ ֆաբրիկան արտադրեց 10 տ գործվածք և 92300 մ բյազ:

Հաջողությամբ էր վերականգնվում նաև կաշվի արտադրությունը: Մեծ աշխատանք կատարվեց գինու-կոնյակի արտադրության վերականգնման ուղղությամբ: 1925 թվականին Երևանում ստեղծվեց ծխախոտի ֆաբրիկա:

1923—1924 տնտեսական տարվանից սկսվեցին Հայաստանի արդյունաբերության կարևորագույն ճյուղերից մեկի՝ պղնձարդյունաբե-

րության վերականգնման աշխատանքները: Մեծ դժվարություն էր ստեղծում ֆինանսական միջոցների պակասը, որը հաղթահարվեց Սովետական Միության կառավարության օգնությամբ: Հանրապետության պղնձարդյունաբերության վերականգնման համար միութենական կառավարությունը բաց թողեց երկու միլիոն ռուբլի: Ստացվեցին նոր մեքենայական սարքավորումներ, լուրջ քայլեր կատարվեցին ինժեներատեխնիկական անձնակազմի և որակյալ բանվորական կազմի պատրաստման ուղղությամբ: 1924 թ. նոյեմբերի 7-ին, Հոկտեմբերյան հեղափոխության 7-րդ տարեդարձի օրը, Ղափանում վերսկսվեց պղնձի ձուլումը, որը դադարել էր 1916 թվականից: Այդ ժամանակ Ղափանում աշխատող բանվորների թիվը հասնում էր 800-ի: Վերականգնման լայն աշխատանքներ ծավալվեցին նաև Հայաստանի պղնձարդյունաբերության մյուս կենտրոնում՝ Ալավերդիում: 1924—1925 տնտեսական տարում արդյունահանվեց 50 տ հանքաքար: Չնայած դրան, Հայաստանի պղնձարդյունաբերությունը վերականգնման ժամանակաշրջանի վերջում դեռևս չէր հասել նախապատերազմյան մակարդակին, այն կազմում էր նրա միայն 13,1 %-ը: Հանրապետության գունավոր մետալուրգիայի արտադրանքը 1913 թ. մակարդակին հասավ միայն 1937 թվականին:

Սովետական Ռուսաստանից ստացված տպարանական նոր սարքավորումների բազայի վրա արագորեն զարգանում էր հանրապետության պոլիգրաֆարդյունաբերությունը, որի արտադրանքը 1913 թվականի համեմատությամբ 1924 թվականին ավելացավ երեք անգամ, 1925—1926 տնտեսական տարում՝ տասն անգամ:

Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին հանրապետությունում մեծ աշխատանք կատարվեց էլեկտրակայաններ կառուցելու ուղղությամբ: 1925 թ. զարնանը հանդիսավոր պայմաններում գրվեցին Երևանի և Լենինականի հիդրոէլեկտրակայանների հիմքերը: Երևանի հիդրոէլեկտրակայանի հանդիսավոր հիմնադրմանը ներկա էին ՍՍՀՄ կառավարության մի խումբ անդամներ՝ Գ. Զիչերինը, Ա. Միկոյանը, Յու. Ռուժուտակը, Ն. Սեմաշկոն, ինչպես նաև զինվորական գործիչներ Ս. Բուդյոնին, Ա. Եգորովը և ուրիշներ: Գործակվեցին նոր Բայազետի, Ղամարլուի շրջանային էլեկտրակայանները: 1925—1926 տնտեսական տարում Հայաստանի էլեկտրաէներգիայի արտադրությունը 3,5 անգամ գերազանցում էր նախապատերազմյան մակարդակը:

Հայաստանի կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ վերականգնման աշխատանքները հաջողությամբ էին ընթանում նաև արդյունաբերական այլ ճյուղերում: Զգալիորեն բարելավվեց երկաթուղային տրանսպորտի աշխատանքը:

Հանրապետության ժողովրդական տնտեսության վերականգնման ուղղությամբ կատարված աշխատանքներն ամփոփվեցին Հայաստանի

սովետների IV համագումարում, որը տեղի ունեցավ 1925 թ. մարտին: Նշելով արդյունաբերության վերականգնման գործում ձեռք բերված խոշորագույն նվաճումները, համագումարը միաժամանակ խնդրի դրեց միջոցներ ձեռք առնել արդյունաբերության հետագա անշեղ զարգացման ուղղությամբ: Համագումարի բանաձևում հատկապես ընդգծվեց պղնձի, կաշվի, գինու, կոնյակի, սպիրտի արդյունաբերության վերականգնման ու զարգացման, նոր էլեկտրակայանների կառուցման, Լենինականի տեքստիլ ֆաբրիկայի շինարարությունն արագացնելու անհրաժեշտությունը: Ամփոփելով ժողովրդական տնտեսության վերականգնման արդյունքները, Հայաստանի կոմունիստական կուսակցության IV համագումարը (1925 թ. նոյեմբեր) իր բանաձևում նշեց. «Կոմունիստական կուսակցության տնտեսական քաղաքականությունը մեր երկրում առաջ բերեց տնտեսական վերելք... ընթացիկ տարում մեր տնտեսությունն ընդհանուր առմամբ ավարտեց իր վերականգնման պրոցեսը»:

Կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության ազգային քաղաքականության հետևողական կիրառման շնորհիվ Հայաստանի արդյունաբերությունը վերականգնման տեմպերի տեսակետից զգալիորեն գերազանցում էր ինչպես ամբողջ ՍՍՀՄ-ի, այնպես էլ մի շարք առաջավոր հանրապետությունների զարգացման տեմպերը: Այնուամենայնիվ, 1925—1926 տնտեսական տարում Հայաստանի խոշոր արդյունաբերության ընդհանուր արտադրանքը կազմեց նախապատերազմյանի 74,4 %-ը: Հանրապետության արդյունաբերության համախառն արտադրանքի ընդհանուր մակարդակը 1913 թ. մակարդակին հասավ միայն 1928 թվականին:

Պետական և կոոպերատիվ առևտրի ծավալումը: Գրամական և ֆոնդը

Ժողովրդական տնտեսության վերականգնման կարևորագույն լծակներից մեկն էր նաև ապրանքաշրջանառության լայն ծավալումը գյուղի և քաղաքի միջև: Վերականգնման առաջին տարիներին այդ բնագավառում լուրջ դժվարություններ էին ստեղծվել, որոնք շուտով հաղթահարվեցին: Օրինակ՝ 1923 թ. աշնանը գյուղատնտեսական մթերքների և արդյունաբերական արտադրանքի գների միջև զգալի անհամապատասխանություն էր առաջացել: Գյուղատնտեսական մթերքների գներն զգալիորեն ցածր էին, արդյունաբերական ապրանքներինը՝ բարձր: Չնայած այդ տարիներին քիչ ապրանք էր արտադրվում, այնուամենայնիվ, պահեստներում կուտակվել էին չվաճառվող ապրանքներ: Դա բացատրվում էր նրանով, որ գյուղացին ի վիճակի չէր ապրանքներ գնել այդպիսի բարձր գներով:

Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը շուտափուլով միջոցներ ձեռք առան. իջեցվեցին լայն սպառման ապրանքների գները և համապատասխանորեն բարձրացվեցին գյուղատնտես-

տեսական միջերգների գնեք, որի շնորհիվ զգալիորեն բարձրացավ ժողովրդի գնողունակությունը: 1925—1926 տնտեսական տարում Սովետական Հայաստանի մանրածախ առևտուրը, 1922—1923 տնտեսական տարվա համեմատությամբ, աճեց ավելի քան յոթ անգամ: Արագորեն աճում էր նաև մեծածախ առևտուրը, որը հիմնականում գտնվում էր պետության և կոոպերացիայի ձեռքին: Պետական և կոոպերատիվ առևտրի ծավալման շնորհիվ զգալի չափով կրճատվեց մասնավոր առևտուրը:

Ապրանքաշրջանառության ծավալմանը, գյուղի և քաղաքի միջև տրեստեսական կապերի ամրապնդմանը մեծ չափով խանգարում էր անկայուն դրամական սիտուսի: Մինչև 1924 թվականը Հայաստանում շրջանառության մեջ էին գտնվում մի քանի տեսակ դրամանիշեր՝ հայկական շեկեր, անդրկովկասյան բոնեք, ՌՍՖՍՀ դրամանիշեր:

1924 թվականին սովետական պետությունը կատարեց դրամական ռեֆորմ, ՍՍՀՄ Կենտրոնի և Ժողովրդի ղեկընտով զաղաքացիական կայուն դրամանիշերի բացթողումը: Դրամական շրջանառության մեջ մտավ պետական գանձատուր՝ շերվոնեցը, որը ապահովված էր ոսկով: Սովետական կառավարությունը հաստատեց ուրբու կայուն կոբրս, շերջանառությունից հանվեցին հին դրամանիշերը:

Դրամական ռեֆորմն զգալիորեն ամրապնդեց երկրի տնտեսական դրությունը: Սովետական պետության այդ կարևոր միջոցառումը նպաստեց քաղաքի և գյուղի աշխատավորների դրության բարելավմանը: Մյուս կողմից, լուրջ հարված հասցվեց սպեկուլյանտներին ու կուլակներին, որոնք, օգտվելով դրամի կուրսի անկումից, կողոպտում էին աշխատավորությունը:

Կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության ֆինանսական նոր քաղաքականության դեմ հանդես եկան սոցիալիզմի բոլոր հակառակորդները, առաջին հերթին տրոցկիստները, որոնք պահանջում էին հրաժարվել դրամական ռեֆորմից: Նրանք արտահայտվում էին արդյունաբերական ապրանքների գների իջեցման դեմ, պահանջում էին ավելացնել գյուղացիներից գանձված հարկի չափերը, պատրվակ բռնելով անշահութաբերությունը՝ փակել ժողովրդատնտեսական կարևոր նշանակություն ունեցող մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ, և այլն: Սակայն կուսակցությունը ջանախեց տրոցկիստների բոլոր փորձերը սովետական ժողովրդին շեղելու սոցիալիզմի կառուցման ճիշտ ուղուց:

Աշխատավորների կենսամակարդակի բարձրացումը

Ժողովրդական տնտեսության վերելքի շնորհիվ զգալիորեն բարելավվեց քաղաքի և գյուղի աշխատավորների նյութական դրությունը: Պատմության գիրկն անցան մասսայական սովն ու համաճարակները: Հաջողությամբ վերանում էր գործազրկությունը: Տարեցտարի բա-

րելավվում էին բանվոր-ծառայողների աշխատանքի և կենցաղի պայմանները: Հետևողականորեն կիրառվում էր 8-ժամյա աշխատանքային օրը: Հատուկ ուշադրություն էր դարձվում կանանց ու անչափահասների աշխատանքի պայմանների բարելավմանը: Երեխաների, հատկապես մանկատների մեծահասակ սանների, համար 1921 թվականից բացվեցին դպրոց-արհեստանոցներ:

1925 թվականին հանրապետության բանվորների և ծառայողների թիվը 1922 թվականի համեմատությամբ գրեթե կրկնապատկվեց, հասնելով 26878 մարդու: Հատկապես մեծ չափով աճեց արդյունաբերության և շինարարության մեջ աշխատողների թիվը: Զգալիորեն բարելավվեցին նաև գյուղացիության նյութական պայմանները: Արմատապես բարելավվեց մտավորականության վիճակը:

Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին մի շարք միջոցառումներ կիրառվեցին աշխատավորների առողջապահության գործը բարելավելու ուղղությամբ: Ընդարձակվեց առողջապահական հիմնարկների ցանցը, ավելացավ բժշկական կադրերի թիվը: Հատուկ ուշադրություն էր դարձվում երիտասարդության ֆիզիկական դաստիարակությանը:

Աշխատավորների կենսամակարդակի բարձրացման ուղղությամբ կիրառված միջոցառումներից մեկը բնակարանային շինարարությունն էր, որն ընթանում էր արագ տեմպերով: 1925—1926 թթ. Սովետական Հայաստանի միայն քաղաքատիպ վայրերում կառուցվեցին ավելի քան 3000 անհատական շենքեր: Պետությունը հսկայական միջոցներ տրամադրեց քաղաքների բարեկարգման համար: 1924 թվականին Սովետական Հայաստանում հաշվվում էր 7 քաղաք՝ Երևան, Լենինական, Ղարաբաղի խոս, Նոր Բայազետ, Դիլիջան, Գորիս և Վաղարշապատ:

Աշխատավորների նյութական և կուլտուրական մակարդակի բարձրացման շնորհիվ զգալիորեն աճում էր հանրապետության բնակչության թիվը: Եթե 1920 թվականին, դաշնակցականների տիրապետության ժամանակ, Հայաստանում բնակչության թիվը կազմում էր 720 հազար մարդ, ապա 1926 թվականին այն հասավ 881290 մարդու:

Սովետական երկրի հաջողությունները զայրացնում էին դասակարգային թշնամիներին, որոնք բոլոր միջոցներով խանգարում էին մեր երկրում բուռն թափով ընթացող սոցիալիստական շինարարության հետագա ծավալմանը: Դաշնակցական և կուլակային տարրերը հաճախ կազմակերպում էին կուսակցական, պետական, կոմերիտական ու հասարակական ակտիվ գործիչների սպանություններ, շարքից հանում, հրկիցում էին պետական գույքը, տարածում էին պրովոկացիաներ, թշնամական լուրեր և այլն: Դասակարգային թշնամիներին երբեմն հաջողվում

էր թափանցել սովետական հիմնարկները և քայքայիչ աշխատանք կատարել:

Կոմունիստական կուսակցութեան և սովետական իշխանութեան դեմ մղվող դասակարգային պայքարն արտահայտվում էր նաև գաղափարական բնագավառում: Օրինակ՝ 20-ական թվականների սկզբին Հայաստանում որոշ տարածում գտավ սմենովեխականությունը: Այդ հոսանքի գլխավոր ներկայացուցիչը դաշնակցական կառավարութեան նախկին վարչապետ Հ. Քաջաղունին էր, որը 1923 թվականին հրապարակեց «Հ. Հ. դաշնակցությունն անելիք շունի ալլևա» գրքուկը:

Սմենովեխականության հայկական տարատեսակն իր ժամանակին խիստ քննադատության ենթարկվեց: Զախչախիչ հակահարված ստացան նրանց այն փորձերը, որոնց նպատակն էր դաշնակցությունը հնարավորություն տալ գործելու լեզալ պայմաններում:

20-ական թվականների սկզբին Սովետական Հայաստանում և ամբողջ Անդրկովկասում քայքայվում էին հայ բուրժուազգայնական կուսակցությունները: 1923 թ. հուլիսին Անդրկովկասի հնչակյանների Կենտրոնական կոմիտեն որոշում է ընդունում՝ վերացնել հնչակյան տեղական կազմակերպությունները և դրանք ձուլել կոմունիստական կազմակերպություններին: Այդ որոշման մեջ նույն բանն անելու կոչ էր արվում Ռուսաստանի և արտասահմանի իր կազմակերպություններին: 1923 թ. նոյեմբերին Երևանում բացվեց նախկին շարքային դաշնակցականների համահայաստանյան ինքնալիկվիդացիոն համագումարը, որը ներկայացնում էր չորս հազար նախկին դաշնակցականների: Համագումարի պատգամավորները խստորեն դատապարտեցին դաշնակցության հակահեղափոխական, հակաժողովրդական գործունեությունը, պահանջեցին հրաժարվել դաշնակցությունից և ազնվաբար աշխատել հանուն Սովետական Հայաստանի բարգավաճման:

Նույն երևույթը որոշ չափով տեղի էր ունենում արտասահմանի հայ գաղթօջախներում: Օրինակ՝ Ամերիկայում 1922 թվականի մարտին դաշնակցական և հնչակյան կուսակցությունների անդամների մի մեծ խումբ հեռացավ և մտավ նորաստեղծ հայ բանվորական կուսակցության մեջ: 1924 թվականի հոկտեմբերին հրապարակվում է Թավրիզի նախկին շարքային դաշնակցականների դեկլարացիան դաշնակցությունից հրաժարվելու մասին:

Այդ տարիներին կոմունիստական կուսակցության քաղաքականության դեմ իրենց պայքարն ուժեղացրին տրոցկիստները: Նպատակադրվելով քայքայել կուսակցությունը, 1923 թ. նրանք սրեցին ներկուսակցական դիսկուսիոն պայքարը: Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները, համախմբվելով ՀամԿ(բ)Կ Կենտկոմի շուրջը, դատապարտեցին ու ջախջախիչ հակահարված տվեցին տրոցկիստներին:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇԸՐ-ՋՆՆՈՒՄ: ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԻ ԿԱՌՈՑՈՒՄԸ (1926—1932)

1. ԱՆՅՈՒՄԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՅՄԱՆԸ

Սոցիալիստական ինդուստրացման ճիգերը

Չնայած 1925 թվականին հիմնականում ավարտվել էր մեր երկրի ժողովրդական տնտեսության վերականգնումը, այնուամենայնիվ, նա դեռևս մնում էր որպես աղքատային, հետամնաց: Հարկավոր էր երկրի ժողովրդական տնտեսության վերականգնումից անցնել նրա սոցիալիստական վերակառուցմանը, սոցիալիզմի կառուցման համար ըստեղծել նյութատեխնիկական բազա, այսինքն՝ խոշոր մեքենայացված արդյունաբերություն, որն ընդունակ լիներ առաջ մղելու ամբողջ ժողովրդական տնտեսությունը: Մեծ կենիքը սովորեցնում էր, որ «Սոցիալիզմի միակ նյութական հիմքը կարող է լինել խոշոր մեքենայական արդյունաբերությունը, որն քնդունակ է վերակառուցելու նաև հողագործությունը»:

Սակայն երկրի սոցիալիստական վերակառուցման ճանապարհին լուրջ դժվարություններ կային՝ տեխնիկատնտեսական հետամնացությունը, կապիտալ շինարարության համար անհրաժեշտ միջոցների և որակյալ կադրերի պակասը և այլն: Բացի այդ, սոցիալիստական ինդուստրացումը հանդիպում էր երկրի կապիտալիստական տարրերի, ինչպես և տրոցկիստական-զինովեխական բլոկի կատաղի դիմադրությանը:

Չնայած այդ հանգամանքներին, կուսակցությունը ինդուստրացման վճռական կուրս վերցրեց: 1925 թ. դեկտեմբերին տեղի ունեցավ ՀամԿ(բ)Կ XIV համագումարը, որը, ամփոփելով ժողովրդական տնտեսության վերականգնման արդյունքները, տվեց երկրի սոցիալիստական վերակառուցման հռչակապ ծրագիր: Համագումարը պատմության մեջ մտավ որպես երկրի ինդուստրացման համագումար: Սոցիալիստական ինդուստրացման անցնելը նոր էտապ էր սոցիալիզմի կառուցման համար՝ մղվող պայքարում կոմունիստական կուսակցության և սովետական ժողովրդի կյանքում:

Վ. Բ. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 591:

Երկրի սոցիալիստական ինդուստրացման վիթխարի պլանն իրագործելու համար կոմունիստական կուսակցությունը հսկայական աշխատանք ծավալեց մասսաների քաղաքական և աշխատանքային ակտիվությունը բարձրացնելու ուղղությամբ: Այդ կապակցությամբ խնդիր դրվեց վերակառուցել սովետների, արհմիությունների, կոմերիտիության և հասարակական մյուս կազմակերպությունների աշխատանքը: Կուսակցությունն առաջ բաշեց «Երեսներս դեպի արտագրություն» լույունգը, որին արձագանքեցին բոլոր աշխատավորները:

Սոցիալիստական ինդուստրացման առաջին հաջողությունները Սովետական Հայաստանում

Ձեռնամուխ լինելով երկրի սոցիալիստական ինդուստրացման լենինյան պլանի իրականացմանը, կոմունիստական կուսակցությունը նպատակ էր դրնում հզոր արդյունաբերություն ստեղծել բոլոր միութենական հանրապետություններում, ազգային շրջաններում: Դա հսկայական նշանակություն ուներ նախկին ճնշված ժողովուրդների փաստական հետամնացության վերացման, ազգային կադրերի աճման, ազգային մշակույթի զարգացման համար:

Սովետական Հայաստանի աշխատավորությունը միահամուռ կերպով հավանություն տվեց կուսակցության XIV համագումարի որոշումներին: Նշանակալից հաջողություններ ձեռք բերելով ժողովրդական տրնտեսության վերականգնման ասպարեզում, նա մեծ եռանդով ձեռնամուխ եղավ սոցիալիստական ինդուստրացման գործին:

Ինդուստրացման առաջին տարիներին թեև շարունակվում էր արդյունաբերական հին ձեռնարկությունների վերականգնման աշխատանքը, բայց գլխավոր ուղղությունը կենտրոնացվում էր նոր ձեռնարկությունների ստեղծման վրա: Պետությունը հսկայական գումարներ էր ներդրում արդյունաբերական շինարարության մեջ: 1926—1927 տնտեսական տարում Հայաստանի արդյունաբերության մեջ կապիտալ ներդրումները կազմեցին 18 միլիոն ուրլի, որի մեծագույն մասը հատկացվեց էլեկտրիֆիկացիային և լեռնահանքային արդյունաբերությանը: Այդ գումարը մի քանի անգամ ավելի էր վերականգնման տարիներին ներդրված գումարներից:

Հայաստանի սոցիալիստական արդյունաբերության զարգացման գործում մեծ նշանակություն ուներ էներգետիկ բազայի ստեղծումը: 1926 թ. մայիսի 16-ին տեղի ունեցավ հանրապետության ինդուստրիալ ձեռնարկությունների առաջնեկի՝ Երևանի հիդրոէլեկտրակայանի (Երհէկի) հանդիսավոր բացումը: 1927 թվականին դրվեց Չորագետի հիդրոէլեկտրակայանի հիմքը, որը ժամանակի տեխնիկական շատ բարդ կառուցաներից էր: Նրա ամբարտակի փականը ամենախոշորն էր աշխարհում: Չորահէկի շինարարությունը ղեկավարում էր հանրապետության

սոցիալիստական շինարարության էնտուզիաստ ինժեներ Հովսեփ Տեր-Աստվածատրյանը:

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 8-րդ տարեդարձի օրը՝ 1928 թվականի նոյեմբերի 29-ին, շարք մտավ Լենինականի հիդրոէլեկտրակայանը: Կառուցվեցին նաև շրջանային էլեկտրակայաններ: 1927—1928 տնտեսական տարում Հայաստանում արտադրված էլեկտրաէներգիայի քանակն արդեն չորս անգամ գերազանցում էր 1913 թ. մակարդակը:

Սոցիալիստական ինդուստրացման տարիներին մեծ աշխատանք կատարվեց գունավոր մետալուրգիայի, մասնավորապես պղնձարդյունաբերության զարգացման բնագավառում: Այստեղ հսկայական գումարներ էին ծախսվում ոչ միայն հանրապետության, այլև միութենական կառավարության բաց թողած ֆինանսական խոշոր հատկացումների հաշվին: Եղբայրական հանրապետությունները, առաջին հերթին Ռուսաստանը և Ուկրաինան, Հայաստանին օգնեցին նաև բանվորների, ինժեներների և տեխնիկների բարձրորակ կադրերով: Վերականգնման աշխատանքներն սկսվելուց երկու տարի հետո՝ 1926—1927 տնտեսական տարում, Հայաստանում արտադրվեց մոտ 20 հազար տոննա հարստացված հանքաքար, իսկ հաջորդ տարում այն ավելացավ մոտ երկու և կես անգամ:

Նախասովետական Հայաստանը շունչ էր քիմիական արդյունաբերություն, ուստի սովետական իշխանության հաստատման առաջին իսկ տարիներին հատուկ ուշադրություն դարձվեց այդ կարևոր ճյուղի ստեղծմանը: Վերականգնման տարիներին հիմնադրվեց և 1927 թվականին շահագործման հանձնվեց Հայաստանի քիմիական արդյունաբերության առաջնեկը՝ Երևանի կարբիդի գործարանը:

Երկրի ինդուստրացման տարիներին Երևանում և Լենինականում կառուցվեցին մեխանիկական գործարաններ, որոնց բազայի վրա հետագայում զարգացավ ծանր արդյունաբերության կարևոր ճյուղերից մեկը՝ մեքենաշինությունը:

Հայաստանը հարուստ է բազմազան արժեքավոր շինանյութերով, որոնց արտադրությունը մեծ նշանակություն ունի արդյունաբերական շինարարության, ինչպես և քաղաքների կառուցման համար: 20-ական թվականների վերջերին դրվեց շինանյութերի արտադրության հիմքը: 1928 թվականին ստեղծվեցին հանքային շինանյութերի և «Արթիկուտֆ» տրեստները: Շուտով համաշխարհային ճանաչում ստացավ Արթիկի տուֆը, որը 1928 թ. բարձր գնահատականի արժանացավ Փարիզի համաշխարհային ցուցահանդեսում: Մեծ ծավալ ստացան նաև Անիի պեմզայի, Փամբակի գրանիտի մշակման աշխատանքները: 1928 թվականին

շահագործման հանձնվեց մարմարի վերամշակման առաջին գործարանը Երևանում:

Սովետական Հայաստանում զարգանում էր նաև թեթև և սննդի արդյունաբերությունը: Լենինականը դարձավ հանրապետության տեքստիլ արդյունաբերության կենտրոն. Հայաստանում սովետական կարգերի հաստատման 8-րդ տարեդարձի օրը տեղի ունեցավ Լենինականի նոր տեքստիլ գործարանի հանդիսավոր բացումը:

Այսպիսով, Սովետական Հայաստանի աշխատավորությունը սոցիալիստական ինդուստրացման առաջին իսկ տարիներին խոշոր հաջողություններ ձեռք բերեց: Նոր գործարանների կառուցման շնորհիվ զգալիորեն ավելացավ արդյունաբերության համախառն արտադրանքը: Ամբողջ արդյունաբերության մեջ մեծ չափով ավելացավ նաև խոշոր արդյունաբերության տեքստիլային կշիռը: Արդյունաբերական արտադրանքը 1913 թ. համեմատությամբ աճեց 36 %-ով, իսկ 1919 թ. համեմատությամբ՝ մոտ 17 անգամ:

2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿՈՒՆԿՏԻՎԱՑՈՒՄԸ

Կոլեկտիվացման սկիզբը

Չնայած սոցիալիստական արդյունաբերությունը վերելք էր ապրում, զարգանում էր բարձր տեմպերով, բայց գյուղատնտեսությունը ետ էր մնում, ծայրաստիճան դանդաղ էր զարգանում: Առանձնապես ցածր էր բերքատվությունը, գյուղատնտեսությունը թույլ էր զինված տեխնիկայով: 1928 թվականին բոլոր ցանքերի երեք քառորդը կատարվել էր ձեռքով: Ձեռքի աշխատանքով էր հավաքվում նաև բերքը: Խիստ կրճատվել էր ապրանքային հացի արտադրությունը, որի հետևանքով վտանգի տակ էր գրվել քաղաքի բնակչությանը հացով ապահովելու գործը: Գյուղատնտեսության աչքպիսի վիճակը խոշորագույնում էր ամբողջ ժողովրդական տնտեսության հետագա զարգացմանը:

Ստեղծված վիճակից դուրս գալու միակ ելքը խոշոր սոցիալիստական գյուղատնտեսություն ստեղծելն էր: Միայն գյուղատնտեսության մասսայական կոլեկտիվացումը երկիրը դուրս կբերեր սոցիալիստական շինարարության լայն ուղու վրա, աշխատավոր գյուղացիությանը կփրկեր աղքատությունից, հետամնացությունից, կուլակային հարստահարումից: «Մանր տնտեսությամբ կարիքից չես դուրս գա», — ասում էր Վ. Ի. Լենինը:

Ելնելով Լենինյան ցուցումներից, ՀամԿ(բ)Կ XV համագումարը, որը տեղի ունեցավ 1927 թ. դեկտեմբերին, ամբողջ սրությամբ առաջ քաշեց գյուղատնտեսության կոլեկտիվացման հարցը: Համագումարը մեր

երկրի սոցիալիստական շինարարության պատմության մեջ մտավ որպես կոլեկտիվացման համագումար:

XV համագումարի որոշումները բուռն խանդավառություն առաջ բերեցին Սովետական Միության բոլոր հանրապետությունների, այդ թվում և Սովետական Հայաստանի աշխատավորության մեջ: Հանրապետությունում լայն ծավալ ստացավ գյուղատնտեսական տարբեր տիպի կոոպերատիվների և կոլտնտեսությունների կազմակերպման աշխատանքը:

Պետությունը զգալի օգնություն ցույց տվեց գյուղացիական այն տնտեսություններին, որոնք ընդգրկվել էին սպառողական, հայթայթման, վարկային և արտադրական կոոպերացիայի ցանցում: Կոոպերատիվ ընկերությունները պետությունից ստանում էին սերմացու, պարարտանյութ, տրակտորներ, գույքաներ, հնձող և կալսող մեքենաներ, շարքացաններ և գյուղատնտեսական այլ գործիքներ: Չքավոր և միջակ տնտեսությունները պետությունից ստանում էին նաև դրամական վարկեր:

Տարեցտարի մեծանում էր կոոպերատիվ ընկերությունների և ներանց մեջ ընդգրկված տնտեսությունների թիվը: 1924 թվականին գյուղատնտեսական կոոպերացիայի մեջ ընդգրկված էին Հայաստանի բոլոր գյուղացիական տնտեսությունների 5,9 %-ը, իսկ 1928 թվականին՝ 38,5 %-ը: Առանձին շրջաններում, հատկապես Արարատյան դաշտավայրում, որտեղ բարձր էր ապրանքայնությունը, այդ տոկոսը ավելի բարձր էր: Օրինակ՝ Երևանի զավառում կոոպերացված էր գյուղացիական տնտեսությունների 52,7, Էջմիածնի զավառում՝ 61,4, Մեղրիի զավառում՝ 90 տոկոսը և այլն:

Գյուղատնտեսական կոոպերացիայի ցանցի ընդարձակման հետ միասին, Հայգյուղկոոպի սիստեմում կազմակերպվեցին մասնագիտական կենտրոններ՝ Պանիրյուղկենտրոն, Այգոգիկոոպ, Բամբակմիություն:

Պետությունից ստանալով բազմակողմանի օգնություն, գյուղատնտեսական կոոպերացիան զգալիորեն բարելավում էր գյուղի չքավոր և միջակ տնտեսությունների վիճակը, իր հերթին նպաստում քաղաքային բնակչությանը գյուղատնտեսական մթերքներով ապահովելու, մանրածախ ապրանքաշրջանառությունը ծավալելու գործին:

Մեծ աշխատանք կատարվեց ոչ միայն աշխատավոր գյուղացիության, այլև արհեստավորության կոոպերացման ուղղությամբ: Այդ տարիներին թե՛ քաղաքում և թե՛ գյուղում ավելի ընդարձակվեց արհեստագործական կոոպերացիայի ցանցը: ՀՍՍՀ Ժողկոմխորհի որոշմամբ 1926 թ. կազմակերպվեց Հայաստանի տնայնաարհեստագործական կոոպերատիվների միություն՝ Հայտնահողոպ:

Հայաստանում կոլեկտիվացումը հիմնականում սկսվեց ՀամԿ(բ)Կ

XV համագումարից հետո: 1928 թ. հոկտեմբերի 1-ի տվյալներով Հայաստանում կար 75 կոլտնտեսություն, որոնց մեջ ընդգրկված էին գյուղացիական բոլոր տնտեսությունների 0,9 %-ը (1500 տնտեսություն): Հողօգտագործական ընկերություններից և գյուղատնտեսական արտիկներից բացի, դեռևս 1925 թվականից կազմակերպվել էին նաև կոմունաներ, որոնք հետագայում դադարեցին գոյություն ունենալուց: 1928 թվականին Հայաստանում կար 5 կոմունա՝ Յովայտում (Ղամարլուի շրջան), Խոտարջրում (Ախտալի շրջան), Թաքիայում (Աշտարակի շրջան) և Կուրաշինի անվան (Ղուրղուղու շրջան) և Արփայում (Դարալագյազի շրջան):

Սովետական պետությունը ամեն կերպ խրախուսում էր կոլտնտեսությունների կազմակերպումը և ուժեղացնում նրանց ցույց տրվող օգնությունը: Կոլտնտեսություններին առաջին հերթին էին բաց թողնվում տրակտորներ, գյուղատնտեսական մեքենաներ, տեսակարար սերմացու, վարկ և այլն: Նրանց ավելի մեծ արտոնություններ էին տրվում գյուղատնտեսական հարկի գանձման ժամանակ:

Հայաստանում կոլտնտեսային շարժման հետագա ծավալման գործում կարևոր նշանակություն ունեցավ կոլտնտեսականների հանրապետական I համագումարը, որը տեղի ունեցավ 1928 թ. նոյեմբերին: Համագումարը քննության առավ Հայաստանում կոլտնտեսային շինարարության մեկ տարվա արդյունքները, միջոցառումներ մշակվեց նրա հետագա ծավալման համար: Համագումարը միաժամանակ որոշեց ստեղծել կոլտնտեսային շինարարության ղեկավար օրգան՝ Կոլտնտեսություններին հողաշինարարության և կոլտնտեսությունները գյուղատնտեսական մեքենաներով ու վարկով ապահովելու ուղղությամբ:

ՀԿ(բ)Կ Կենտկոմը, ՀՍՍՀ Կենտգործկոմը և ՀՍՍՀ Ժողկոմխորհը 1928 թ. դեկտեմբերին մի շարք նոր միջոցներ ձեռնարկեցին կոլտնտեսությունների հողաշինարարության և կոլտնտեսությունները գյուղատնտեսական մեքենաներով ու վարկով ապահովելու ուղղությամբ:

Կուսակցությունը և սովետական կառավարությունը հատուկ ուշադրություն էին դարձնում սովխոզային շինարարությանը: Սովխոզները հանդիսանում էին գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման լավագույն բաղաներ: Նրանք մեծ դեր էին խաղում գյուղացիներին խոշոր տնտեսությունների առավելությունները գործնականում ցույց տալու, մեքենայական տեխնիկայով նրանց օգնելու գործում: 1928 թվականին Հայաստանում կար 15 սովխոզ:

Գասակարգային պայքարի սրվելը գյուղում

Ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման քաղաքականությունը հանդիպեց գյուղի և քաղաքի կապիտալիստական տարրերի կատաղի դիմադրությանը: Նրանք ամեն կերպ աշխատում էին ձախողել կոմունիստական կուսակցության և սովետական պետության քաղաքականությունը: Կուլակները կատաղի պայքար սկսեցին

կոլտնտեսային շարժման դեմ. հրաժարվում էին պետական կայուն զինրով վաճառել իրենց հացը, ձգտում էին ծանրացնել սովետական երկրի պարենային գրույթունը, դրանով իսկ ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության մեջ ճգնաժամ ստեղծել, տապալել երկրի ինդուստրացման գործը:

Սովետական պետությունը վարում էր դասակարգային քաղաքականություն: Նա բազմակողմանի օգնություն էր ցույց տալիս գյուղի և քաղաքի աշխատավորությանը: Չքավոր գյուղացիության համար սահմանված էին արտոնյալ պայմաններ՝ առաջին հերթին օգտվելու գյուղատնտեսական տեխնիկայից, պետական վարկից և այլն: 1925—1926 թվականներից գյուղում ստեղծվեցին շքավորական խմբեր, որոնք մեծ դեր էին խաղում կուլակության դեմ մղվող դասակարգային պայքարում:

Արտոնություններ տալով շքավոր ու միջակ տնտեսություններին, սովետական պետությունը, մյուս կողմից, ուժեղացնում էր ճնշումը կուլակության վրա: Կուլակության նկատմամբ վարվող քաղաքականությունն ավելի խստացավ հատկապես այն ժամանակ, երբ նա բացարձակ սարսափ էնթարկեց հացամթերումների գործը: Ի պատասխան դրա, պետությունը վարչական միջոցներ կիրառեց հացի շարաշահումների դեմ. որոշվեց պետության օգտին բռնագրավել սպեկուլյացիայի առարկա դարձած հացահատիկը և նրա 25 %-ը տրամադրել շքավոր գյուղացիությանը որպես երկարաժամկետ վարկ: Պետությունն ավելացրեց կուլակներից գանձվող դրամական հարկի չափերը, միաժամանակ հարկից աղատելով բոլոր շքավորներին ու թեթևացնելով միջակների դրույթունը:

Այդ ամենը գյուղում ավելի սրեց դասակարգային պայքարը. կուլակները հրդեհում և ոչնչացնում էին կոլտնտեսությունների ունեցվածքը, կոտորում էին անասուններին, զանազան պրովոկացիոն լուրեր տարածում: Դեռ ավելին. նրանք ծայրահեղ միջոցների դիմեցին՝ սպանում էին կոլտնտեսային շինարարության ղեկավարներին, գյուղի առաջավոր մարդկանց: Հենվելով գյուղի աշխատավոր տարրերի աջակցության վրա, սովետական պետությունը վճռական միջոցներ ձեռք առավ կուլակների հանցագործություններին վերջ տալու և հանցավորներին խստորեն պատժելու համար:

Գյուղում դասակարգային պայքարը սրվում էր ոչ միայն կոլտնտեսային շարժման կապակցությամբ, այլև բազմաթիվ այլ առիթներով, ամենից առաջ սովետների ընտրությունների ժամանակ: Դասակարգային պայքարը սրվում էր նաև հողաշինարարության ասպարեզում, որտեղ կուլակներն աշխատում էին իրենց ձեռքում պահել գյուղի լավագույն հողերն ու արոտավայրերը:

Գյուղի սոցիալիստական վերակառուցման դժվարությունները և դասակարգային պայքարի ուժեղացումը դրսևորվեցին նաև բնակչության տեղաշարժում խավերի մեջ, ինչպես նաև կուսակցության շարքերում: Այդ

ժամանակ կուսակցության գլխավոր գծի դեմ դուրս եկան աչ օպորտունիստները (Բուխարին, Ռիկով և ուրիշներ), որոնց կուսակցությունը մերկացրեց ու ջախջախեց: Աչ կապիտուլյատները փաստորեն ժխտում էին մեր երկրում սոցիալիզմի կառուցման հնարավորությունը, կտրականապես մերժում էին կուլակային-կապիտալիստական տարրերի դեմ մղվող պայքարը, ձգտում էին համաձայնության գալ վերջինների հետ:

Աչ թեքումը իր արտահայտությունը գտավ նաև Հայաստանում: Աչերը հանդես էին գալիս հանրապետությունում կոլտնտեսություններ և սովխոզներ կազմակերպելու դեմ, թերազնահատում էին կուլակային վտանգը, օգնում և հովանավորում էին կուլակային տնտեսություններին, թերազնահատում չքավորության մեջ կատարվող աշխատանքները: Հայաստանում աչ թեքումը միահյուսվում էր բուրժուազգայնական տրամադրություններին: Ինչպես ամբողջ Միության մեջ, այնպես էլ սովետական Հայաստանում աչերը ջախջախիչ հակահարված ստացան:

3. ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԻ ԿԱՌՈՒՑՈՒԹՅՈՒՆ

ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության գարգացման առաջին հնգամյա պլանի ընդունումը

Համ(բ)Կ XV համագումարը, ամփոփելով սոցիալիստական ինդուստրացման առաջին հաջողությունները, դիրեկտիվներ ընդունեց ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման առաջին հնգամյա պլան կազմելու վերաբերյալ: Համագումարը մատնանշեց, որ առաջին հնգամյակի հիմնական տնտեսական խնդիրներն են՝ անշեղորեն զարգացնել սոցիալիստական ծանր ինդուստրիան և, այդ հիման վրա, ապահովել ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի արագ աճը, սոցիալիստական սեկտորի տեսակարար Այդուի բարձրացումը: Նկատի ունենալով ամբողջ ճակատով հարձակման անցնելը, համագումարը խնդիր դրեց՝ ավելի վճռականորեն դուրս մղել կապիտալիստական տարրերին:

Ղեկավարվելով XV համագումարի դիրեկտիվներով, ՍՍՀՄ Պետպլանը և Ժողտնտգերխորհուրդը ձեռնամուխ եղան առաջին հնգամյա պլանի մշակմանը: 1929 թ. ապրիլին Համ(բ)Կ XVI կոնֆերանսը հանգամանորեն քննեց և հավանություն տվեց ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման առաջին հնգամյա պլանին՝ 1928/1929—1932/33 թվականների համար, իսկ մեկ ամիս հետո այն հաստատվեց ՍՍՀՄ սովետների V համագումարում:

Կուսակցության XVI կոնֆերանսը առաջին հնգամյա պլանը բնութագրեց որպես ամբողջ ճակատով սոցիալիզմի ծավալուն հարձակման ծրագիր: «Այն նախատեսված էր սոցիալիստական էկոնոմիկայի հիմքի կառուցման և քաղաքի ու գյուղի կապիտալիստական տարրերի հետագա

դուրս մղման համար՝ նրանց լիակատար վերացման նպատակով»: Առաջին հնգամյա պլանում հատուկ ուշադրություն էր նվիրվում ազգային հանրապետությունների տնտեսական ու կուլտուրական զարգացմանը:

1928 թ. հունվարին Հ(բ)Կ Կենտկոմի պլենումը, քննարկելով ՀՍՍՀ Ժողկոմխորհի նախագահ Ս. Համբարձումյանի ղեկուցումը «Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացման հեռանկարների մասին», հանձնարարեց Հայաստանի պետպլանին ԱՍՖՍՀ պետպլանի հետ միասին մշակել ՀՍՍՀ հնգամյա պլանի ստուգիչ թվերը: 1929 թ. սկզբին արդեն պատրաստ էր ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության զարգացման առաջին հնգամյա պլանը, որը կազմում էր ԱՍՖՍՀ և ՍՍՀՄ հնգամյա պլանի բաղկացուցիչ մասը: 1929 թ. հունվարին Հ(բ)Կ VI համագումարը հավանություն տվեց հնգամյա պլանի նախագծին, իսկ ապրիլին այն հաստատվեց Հայաստանի սովետների VI համագումարում: 1929 թ. մայիսին ԱՍՖՍՀ սովետների V համագումարը ևս հավանություն տվեց Անդրկովկասի սովետական հանրապետությունների առաջին հնգամյա պլանին:

Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացման առաջին հնգամյա պլանը մեծ խնդիրներ էր դնում առաջին հերթին ծանր արդյունաբերության զարգացման, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման և կուլտուրական հեղափոխության իրականացման ուղղությամբ:

Սոցիալիստական մարտության ծավալումը

Սովետական Հայաստանի աշխատավորությունը մեծ խանդավառությամբ ընդունեց առաջին հնգամյա պլանը և սկսեց լարված աշխատանք կատարել հնգամյակի առաջադրանքները ժամկետից շուտ կատարելու և գերակատարելու համար: Սակայն պետք է հաղթահարվեին շատ դժվարություններ ու խոչընդոտներ, որոնք կապված էին հնգամյա պլանի մեծ խնդիրների կատարման, գյուղի կուլեկտիվացման խնդրի բարդության և մեր երկրի կապիտալիստական շրջապատի թշնամական վերաբերմունքի հետ: Այդ դժվարությունները մեծանում էին, քանի որ ամբողջ ճակատով սոցիալիզմի հարաձուռն հարձակման շնորհիվ երկրում աճում էր կապիտալիստական տարրերի դիմադրությունը, սրվում էր դասակարգային պայքարը: Կուսակցության XVI կոնֆերանսը մի շարք միջոցառումներ մշակեց առաջին հնգամյա պլանի իրականացման հետ կապված դժվարությունները հաղթահարելու համար: Այդ միջոցառումներից էին աշխատանքային կարգապահության ամրապնդումը, արտադրության

1 ՍՄԿԿ պատմություն, Երևան, 1963, էջ 505:

ռացիոնալացու՛մը, կազրերի պատրաստումը և այլն: Առաջին հնգամյակի խնդիրները հաջողութեամբ կատարելու համար անհրաժեշտ էր նաև վերակառուցել կուսակցական, սովետական, կոմերիտական, ինչպես և արհմիութենական, կոոպերատիվ կազմակերպութունների ամբողջ աշխատանքը:

1929 թ. ապրիլի 29-ին ՀամԿ(բ)Կ XVI կոնֆերանսն ընդունեց ՍՍՀՄ բոլոր աշխատավորներին ուղղված դիմում, որով կոչ էր արվում սոցիալիստական մրցույթուն ծավալել հնգամյա պլանը հաջողութեամբ կատարելու համար: «Մրցույթունն ու հնգամյակը անխղճիտեն կապված են միմյանց հետ», — ասված էր դիմումի մեջ: «Սոցիալիզմը, — գրել է Վ. Ի. Լենինը, — ոչ միայն չի մարում մրցութունը, այլ, ընդհակառակը, առաջինն է հնարավորութուն ստեղծում իրոք լայնորեն կիրառելու այն, իրոք մասսայական շահով, իրոք աշխատողների մեծամասնութունը ներգրավելու այնպիսի աշխատանքի ասպարեզը, որտեղ նրանք կարող են երևան բերել իրենց, ծավալել իրենց ընդունակութունները, գրասերել տաղանդներ, որոնք ժողովրդի մեջ անսպառ աղբյուր են և որոնց կապիտալիզմը ճմլել, ճնշել, խեղդել է հազարներով ու միլիոններով»¹:

Կուսակցության կոչը մեծ ոգևորություն առաջ բերեց ամբողջ երկրում: Սոցիալիստական մրցութունը լայնորեն տարածվեց նաև Սովետական Հայաստանում: Լենինգրադի «Կրասնի վիբորժեց» գործարանի բանվորների մրցահրավերին հանրապետության մեջ առաջինն արձագանքեց Երևանի կարբիդի գործարանի կուլեկտիվը: 1929 թ. ապրիլի 24—25-ը Երևանում տեղի ունեցավ ձեթ-օձառի, կաշվի, մեխանիկական, կարբիդի գործարանների, Հայբամբակի և գարածների բանվորների ներկայացուցիչների կոնֆերանսը, որտեղ և այդ ձեռնարկութունների կուլեկտիվների մեջ կնքվեց Սովետական Հայաստանում առաջին սոցիալիստական մրցութան պայմանագիրը: Նրանք պարտավորվեցին իջեցնել արտադրանքի ինքնարժեքը, բարձրացնել աշխատանքի արտադրողականութունը, թողարկվող արտադրանքի որակը և այլն: Կոնֆերանսը որոշեց նաև սոցիալիստական մրցութան հրավիրել Լենինականի տեքստիլ կոմբինատի բանվորներին: Մայիսին սոցիալիստական մրցութան մեջ մտան հանրապետության բոլոր արտադրական ձեռնարկութունները:

Շուտով մրցութունը դուրս եկավ հանրապետության սահմաններից: Սոցիալիստական մրցութան պայմանագրեր կնքվեցին Անդրկովկասի եղբայրական հանրապետությունների արտադրական ձեռնարկութունների կուլեկտիվների միջև: Հաջողությամբ մրցում էին Չորահէկի և Ռիոնհէկի կառուցողները, Հայբամբակումի Երևանի և Գյանջայի (Կիրո-

վաբադ) ձեթ-օձառի գործարանների, Երևանի ու Բաքվի Ֆ. Չերժինսկու անվան մեխանիկական գործարանների կուլեկտիվները, Լենինականի, Բաքվի, Խաշուրի երկաթուղայինները և ուրիշներ: Սոցիալիստական մրցութան մեջ էր մտնում նաև գյուղը: 1929 թ. հուլիսին սոցմրցման առաջին պայմանագիրը կնքվեց Լենինականի նոր կազմակերպված սովխոզի և Վաղարշապատի շրջանի № 3 սովխոզի միջև:

1929 թվականը մեր հայրենիքի պատմության մեջ մտավ որպես մեծ բեկման տարի: Լայն թափով առաջ էր ընթանում Չորահէկի շինարարութունը: Նախնական մեծ ծավալի աշխատանքներ էին կատարվում Քանաքեռհէկի կառուցումն սկսելու համար, հիմնադրվեց Ղարաքիլիսայի քիմիական գործարանը, սկսեց արտադրանք տալ Երևանի Չերժինսկու անվան նորակառույց մեխանիկական գործարանը, հաջողությամբ էին ընթանում Ալավերդու և Ղափանի պղնձարդյունաբերության վերականգնման աշխատանքները: Իրենց արտադրական կարողութունները ընդարձակեցին հանրապետության արդյունաբերական բազմաթիվ ձեռնարկութուններ: Շահագործման հանձնվեցին Լենինական—Արթիկ և Անի—Անի-պեմզա երկաթգծերը:

Երկրի սոցիալիստական ինդուստրացման ծրագիրը հաջողությամբ կենսագործելու համար մղվող պայքարում ծնունդ էին առնում մրցութան նորանոր ձևեր: Արձագանքելով Մոսկվայի, Լենինգրադի, Գոնբասի բանվորների նախաձեռնությանը, Սովետական Հայաստանում լայն շարժում ծավալվեց մասսայական շարաթոյակներ, «ինդուստրացման օր», «սև հացի» կամպանիա, «հասարակական բուքսի» կազմակերպելու, հանդիպական պլաններ ընդունելու համար: Այդ ժամանակ առաջ քաշվեց «Հնգամյակը չորս տարում» լոզունգը, որը ջերմորեն պաշտպանվեց Սովետական Միության բոլոր աշխատավորների կողմից:

«Հնգամյակը չորս տարում» լոզունգը ջերմ արձագանք գտավ Հայաստանի արտադրական ձեռնարկութունների կուլեկտիվների շրջանում: Հանրապետութունում ավելի լայն ծավալ ստացան սոցիալիստական մրցութունը և հարվածայնութունը: Ալավերդու պղնձագործները, Լենինականի տեքստիլագործները, Երևանի կարբիդագործները, մեքենաշինարանները, կաշեգործները, հանրապետության երկաթուղայինները և բազմաթիվ այլ բանվորական կուլեկտիվներ, ընդգրկվելով հարվածային բրիգադների մեջ, հերոսական պայքար էին մղում հնգամյակը չորս տարում կատարելու համար: 1930 թվականի սեպտեմբերին հանրապետութունում հարվածայինների շարքերում ընդգրկված էր 17 հազար մարդ:

Ինչպես նոր շարք մտած գործարանները, ֆաբրիկաները, էլեկտրակայանները, այնպես էլ վերականգնված ու վերակառուցված հին ձեռնարկութունները զինվում էին նոր, ժամանակակից տեխնիկայով, մինչդեռ բանվորների տեխնիկական գրագիտութունը դեռևս ցածր էր: Կու-

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 493—494:

սակցութիւնը բանվորներին, ինժեներներին ու տեխնիկներին կոչ արեց՝ տիրապետել տեխնիկային: Այդ կոչին շերմորեն արձագանքեցին արդյունաբերութեան աշխատողները: Տեխնիկական գիտելիքներ ձեռք բերելու նպատակով արդյունաբերական ձեռնարկութեան ներքին կազմակերպիչ-ցին տեխնիկայի ուսումնասիրման դասընթացներ, խմբակներ, որոնց մեջ ընդգրկված մեծ թվով բանվորներ ուսումնասիրում էին նոր տեխնիկան:

Համատարած կոլեկտիվացման քաղաքականությունը, կուլակությունը վերացումը որպէս դասակարգ

Մեր երկրում 1929 թվականը մեծ բեկման տարի էր ոչ միայն արդյունաբերութեան, այլև գյուղատնտեսութեան բնագավառում: Աշնանը մասսայական կոլեկտիվացում սկսվեց նաև Սովետական Հայաստանում: Աշխատավոր գյուղացիները ոչ միայն առանձին տնտեսություններով, այլ ամբողջ

գյուղերով մտնում էին կոլտնտեսությունների մեջ:

1930 թ. հունվարի 5-ին ՀամԿ(բ)Կ Կենտկոմը ընդունեց «Կոլեկտիվացման տեմպի ու կոլտնտեսային շինարարութեանը պետության կողմից օգնելու միջոցառումների մասին» որոշումը, որը զրկեց գյուղում կուսակցության և սովետական իշխանության քաղաքականության հիմքում: Այն պահանջում էր՝ ավարտել գյուղացիական տնտեսությունների համատարած կոլեկտիվացումը և այդ հիման վրա վերացնել կուլակությունը որպէս դասակարգ: Սակայն դա չպետք է տեղի ունենար միանգամից: ՍՍՀՄ տարբեր տնտեսական շրջանների համար սահմանվեցին կոլեկտիվացումն ավարտելու տարբեր ժամկետներ: Անդրկովկասում, ինչպէս նաև երկրի մի շարք այլ մարզերում ու ազգային հանրապետություններում, ելնելով տեղական տնտեսական և սոցիալ-քաղաքական առանձնահատկություններից, նախատեսվում էր կոլեկտիվացումը հիմնականում ավարտել 1933 թվականին: Կուսակցության Կենտրոնական կոմիտեն միաժամանակ նախադրուշացնում էր կոլտնտեսային շարժումը տեղերում վերելից դեկրետավորելու փորձերից, տեղական կազմակերպություններից պահանջում էր խստիվ առաջնորդել կամավորության լենինյան սկզբունքով:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի որոշումից հետո ինչպէս ամբողջ երկրում, այնպէս էլ Սովետական Հայաստանում կոլտնտեսային շարժումը լայն թափ ստացավ: 1930 թ. սկզբներին Հայաստանի շատ շրջաններ՝ Ղուրդուղուլին (Հոկտեմբերյան), Էջմիածինը, Աշտարակը, Ղամարլուն (Արտաշատ), Մեղրին, Գուգրենը (Ախուրյան) և այլ շրջաններ անցել էին համատարած կոլեկտիվացման: Եթե մինչև 1930 թ. հունվարի 1-ը Հայաստանում կար 300 կոլտնտեսություն, ապա փետրվարի վերջերին դրանց թիվը հասավ 668-ի: Միաժամանակ տեղի էր ունենում անցում հողօգտագործական ընկերություններից գյուղատնտեսական արտելների: Գյու-

ղատնտեսական արտելը դառնում էր կոլտնտեսային շինարարության ավելի մասսայական, հիմնական ձևը: 1930 թ. մարտին ՍՍՀՄ Կենտրոնկոմը և Ժողկոմխորհը հաստատեցին գյուղատնտեսական արտելի կանոնադրությունը, որը մեծ չափով նպաստեց կոլտնտեսային շարժման հետագա ծավալմանը:

Կուսակցությունը և սովետական կառավարությունը լայն օգնություն էին ցույց տալիս գյուղի սոցիալիստական վերակառուցման գործին: Մեծ աշխատանք կատարվեց գյուղում տեխնիկական բազա ստեղծելու ուղղությամբ: Գյուղատնտեսությունը սոցիալիստական ուղու վրա փոխադրելու հզոր լծակ հանդիսացան մեքենատրակտորային կայանները: 1930 թ. մարտի 1-ին Սարգարապատում սկսեց գործել հանրապետության առաջին մեքենատրակտորային կայանը:

Քաղաքի կուսակցական, կոմերիտական և արհմիութենական կազմակերպությունների նախաձեռնությամբ լայն շարժում սկսվեց գյուղին շեֆաչան օգնություն ցույց տալու համար: Այդ գործը առաջինը սկսեցին Երևանի մեխանիկական գործարանի, երկաթուղու և Հայբամբակի մի արտադրական ձեռնարկությունների կոլեկտիվները: Հաջողությամբ էր գործում քաղաքի և գյուղի զոգմանն աջակցող ընկերությունը:

Կոլտնտեսային շարժումը տեղերում կազմակերպելու գործում մեծ դեր կատարեցին 25-հազարակազմները: 1930 թվականին Հայաստանում շատ առաջավոր բանվորներ մեկնեցին գյուղ մշտական աշխատանքի: Նրանցից շատերն ընտրվեցին կոլտնտեսությունների նախագահներ: Միայն Ալավերդու առաջավոր պղնձագործներից այդ պաշտոնում աշխատում էր 19 մարդ: Ուշագրավ է նաև, որ 1930 թ. հունվարին Հայաստանի կոլտնտեսություններում մշտական աշխատանքի անցան արդյունաբերական թափից եկած 100 հազ և ազդեցանցի բանվորներ:

Հանրապետական օրգանների ղեկավարությունն ավելի ուժեղացնելու, գյուղին մոտեցնելու նպատակով 1930 թ. աշնանը Սովետական Հայաստանում վերացվեցին գավառները (օկրուգները): Կազմակերպվեցին 25 շրջաններ, որոնց թիվը հետագայում մեծացավ:

Գյուղի սոցիալիստական վերակառուցումը խաղաղ ու հարթ չէր ընթանում: Այն տեղի էր ունենում դասակարգային սուր պայքարի պայմաններում: Եվ դա հասկանալի է: Կոմունիստական կուսակցությունը և սովետական պետությունը կուլակության սահմանափակման ու արտամղման քաղաքականությունից անցել էին համատարած կոլեկտիվացման հիման վրա նրան որպէս դասակարգ վերացնելու քաղաքականությանը: Այն շրջաններում, որտեղ տեղի էր ունենում համատարած կոլեկտիվացում, արգելվեց հողի վարձակալությունը և վարձու աշխատանքը մասնավոր տնտեսություններում: Տեղական իշխանություններին իրավունք տրվեց կուլակներից վերցնելու հողերը, այգիները, անասունները, գյուղա-

արևտեսական գույքը և հանձնելու կոլտնտեսություններին, իսկ առավել վտանգավոր կուլակներին՝ իրենց բնակավայրերից արտաքսելու այլ շրջաններ:

Կուլակության դեմ մղվող պայքարում մեծ դեր էին խաղում բառարակ-չբավորական խմբերը: Կուլակաթափության ժամանակաշրջանում եռանդուն գործունեություն ծավալեցին գյուղական սովետները:

Կոլտնտեսային Զարմանք մեջ կատարված շեղումների դեմ մղված պայքարը

Չնայած կոլտնտեսային շինարարության բնագավառում ձեռք բերված խոշոր հաջողություններին, Սովետական Միության մի շարք մարզերում և ազգային հանրապետություններում, այդ թվում և Սովետական Հայաստանում, թույլ տրվեցին կոպիտ խախտումներ:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1930 թ. հունվարի 5-ի որոշմամբ Սովետական Հայաստանում համատարած կոլեկտիվացումը պետք է ավարտվեր առաջին հնգամյակի վերջում, սակայն Անդրկովկասի և Հայաստանի կուսակցական ու սովետական որոշ ղեկավար օրգաններ, ինչպես և տեղական կազմակերպություններ, հաշվի չառնելով երկրամասի և հանրապետության առանձին շրջանների առանձնահատկությունները, նրանց յուրահատուկ պայմանները, հանդես բերեցին ավելորդ շտապողականություն: Տարվելով կոլտնտեսային շարժման առաջին հաջողություններով, հատկապես հրապուրվելով կոլեկտիվացման տոկոսներով, մի շարք կազմակերպությունների ղեկավարներ գլխապտույտի մեջ ընկան: Նրանք առանց անհրաժեշտության իրար հետ մրցում էին, թե ո՞վ կարող է իր գյուղում, շրջանում, հանրապետությունում և երկրամասում ավելի արագ ավարտել համատարած կոլեկտիվացումը: Հենց այդ էր պատճառը, որ նրանք մոռացան ՀամԿ(բ)Կ Կենտկոմի ցուցումները, կոլեկտիվացման գործում շեղվեցին կուսակցության գլխավոր գծից, թույլ ավելցին լուրջ սխալներ: Շատ տեղերում խախտվում էր կամավորության լենինյան սկզբունքը: Մի շարք շրջաններում կուլակ էր համարվում և կուլակաթափ էր արվում նաև միջակ գյուղացիների որոշ մասը: Խեղաթյուրելով կուսակցության գիծը, Արարատյան և Շիրակի դաշտերի գյուղերում որոշ ղեկավար աշխատողներ փորձեցին կոլեկտիվ տնտեսության հիմնական ձևի՝ գյուղատնտեսական արտելի վրայով ուղղակի անցնել կոմունաների:

Կոլտնտեսային շարժման ասպարեղում թույլ տրված սխալներն ու շեղումներն օգտագործում էին կուլակները և մյուս դասակարգային թըշնամիները: Նրանք ուժեղացնում էին պայքարը կոլեկտիվացման քաղաքականության դեմ: Գաշնակ-կուլակային տարրերը որոշ տեղերում անցան նույնիսկ բանդիտական զինված պայքարի ընդդեմ սովետական իշխանության: Հայաստանում կուլակային-բանդիտական զինված ելույթ-

ներ տեղի ունեցան Դարալագյազի, Վեդու, Մարտունու, Ստեփանավանի և այլ շրջաններում:

Կուսակցության և կառավարության վճռական միջոցառումների շնորհիվ շուտով վերջ տրվեց դասակարգային թշնամու ոտնձգություններին: Կոմունիստական կուսակցությունը միաժամանակ հետևողական պայքար ծավալեց կոլտնտեսային շինարարության գործում թույլ տրված շեղումներն ու սխալները վերացնելու համար:

1930 թ. մարտի 2-ին հրապարակված գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրության մեջ սահմանված էին կոլտնտեսականների իրավունքներն ու պարտականությունները: Միաժամանակ ՀամԿ(բ)Կ Կենտկոմը ընդունեց որոշում «Կոլտնտեսությունների արտոնությունների մասին»: Թույլ տրված սխալները հիմնովին վերացնելու համար ՀամԿ(բ)Կ Կենտկոմը 1930 թ. մարտի 14-ին ընդունեց նոր որոշում՝ «Կոլտնտեսային շարժման մեջ կուսակցության գծից կատարված խեղաթյուրումների դեմ պայքարելու մասին»: Սխալների ուղղման գործում որոշակի դեր խաղացին նաև մարտ-ապրիլ ամիսներին հրապարակված Ի. Վ. Ստալինի «Գլխապտույտ հաջողություններից» և «Պատասխան ընկեր կոլտնտեսականներին» հոդվածները:

Ամբողջ երկրում լայն պայքար ծավալվեց սխալները վերացնելու համար: Այդ ուղղությամբ մեծ աշխատանք կատարվեց նաև Սովետական Հայաստանում: Ճիշտ է, կոլտնտեսությունների թիվը քանակապես կրճատվեց, սակայն դա կամավորության սկզբունքի վերականգնման և թույլ, անկաշուն կոլտնտեսությունների վերացման արդյունք էր: Օրինակ՝ եթե 1930 թ. փետրվարին Հայաստանում կար 668 կոլտնտեսություն, ապա մայիսին՝ 410, հունիսին՝ 380: Որոշ մաղում տեղի ունեցավ նաև մնացած կոլտնտեսություններում: Եթե 1930 թվականի փետրվարին կոլտնտեսություններում ընդգրկվել էր գյուղացիական տնտեսությունների 63 %-ը, հունիսին այն իջավ 8,5 %-ի:

Արդյունավետ աշխատանք կատարվեց կուլակաթափման գործում թույլ տրված սխալներն ուղղելու համար: Այսպես, կառավարության որոշմամբ ստեղծված հատուկ հանձնաժողովները պարզեցին, որ շատ միջակների, որոնց սխալմամբ կուլակաթափ էին արել, պետք է ճանաչել աշխատավորական տնտեսություններ և վերականգնել նրանց իրավունքները: Օրինակ՝ Ալավերդու շրջանում կուլակաթափ էին արվել 48 տնտեսություն, սակայն նրանք բոլորն էլ ճանաչվեցին որպես աշխատավորական տնտեսություններ:

Շուտով կոլտնտեսային շարժման գործում ձեռք բերվեցին նշանակալի հաջողություններ: Կոլտնտեսությունները զնալով ամրապնդվում էին, կազմակերպվում էին նոր կոլտնտեսություններ:

1930 թ. մայիսին տեղի ունեցավ ՀԿ(բ) VII համագումարը, որն ամփոփեց հանրապետությունում կոլտնտեսային շարժման պրոցեսները, դատապարտեց այդ գործում թույլ տրված «ձախ» պրակտիկան և մի շարք կարևոր միջոցառումներ մշակեց սխալները հիմնովին վերացնելու, կոլտնտեսությունները տնտեսապես, կազմակերպորեն ու քաղաքականապես ամրապնդելու համար:

Համագումարից երկու շաբաթ առաջ տեղի էր ունեցել ՀԿ(բ) Կենտկոմի պլենումը, որն ազատել էր Կենտկոմի առաջին քարտուղար Հ. Կոստանյանին՝ ՀամԿ(բ) Գրիմի մարդկոմի առաջին քարտուղար ընտրվելու կապակցությամբ և ՀԿ(բ) Կենտկոմի առաջին քարտուղար էր ընտրել Ազատի Խանջյանին:

Կոլտնտեսային շինարարության հետ կապված հարցերը հանգամանորեն քննության առավ նաև կոլտնտեսականների հանրապետական երկրորդ համագումարը, որը տեղի ունեցավ 1931 թ. մարտին:

Արդյունաբերության բնագավառում ճրգամյա պլանը չորս տարում կատարելու համար մղված պայքարը

Սովետական ժողովուրդը հերոսական աշխատանք էր կատարում առաջին հնգամյա պլանը ժամկետից շուտ կատարելու համար: ՀամԿ(բ) XVI համագումարը, որը մեր հայրենիքի պատմության մեջ մտավ որպես ամբողջ նակատով սոցիալիզմի ծավալուն հարձակման համագումար, ամփոփելով հնգամյա-

կի երկու տարվա ընթացքում ձեռք բերված խոշոր հաջողությունները, դիրեկտիվ տվեց անվերապահորեն կենսագործելու աշխատավոր մասսաների ստեղծագործական վերելքի պայմաններում ծնված «հնգամյակը չորս տարում» լոզունգը: Այդ նպատակին հասնելու համար լայնորեն ծավալվեց սոցիալիստական մրցությունն ու հարվածայնությունը: Արտադրական պլանները կատարելու գործում մեծ դեր էին խաղում հարվածային բրիգադները: 1930 թ. հունվարի մի քանի օրվա ընթացքում «Արարատ» գործարանում իրենց հարվածային հայտարարեցին 60, մեխանիկական գործարանում՝ 70 բանվորներ, կաշվի գործարանում՝ 4 բրիգադ և այլն: Սովետական Հայաստանում ջերմ արձագանք գտավ նաև ՀԱՄԿԿ-ի և ՀամԿԵՄ Կենտկոմի նախաձեռնությամբ 1930 թ. հունվարին հրապարակված հարվածայինների լենինյան կոչը:

Սոցիալիստական մրցությունն ու հարվածայնությունը աննախընթաց ծավալ ստացավ հատկապես հնգամյակի երրորդ տարում, որը պատմության մեջ մտավ որպես վճռական տարի: 1931 թ. մայիսին Հայաստանի 57 արդյունաբերական ձեռնարկություններում սոցմրցման մեջ ընդգրկված էին բանվորների և ծառայողների ավելի քան երկու երրորդը:

Հայաստանում գործարանների, հիդրոէլեկտրակայանների, ջրանցքների կառուցման գործում խոշոր նշանակություն ունեցավ ոչ միայն սո-

ցիալիստական մրցությունը, այլև ժողովուրդների ինտերնացիոնալ բարեկամությունը: Հանրապետության նորակառուցներում հայրենի հետ կողք-կողքի աշխատում, սիրագործում էին բազմաթիվ ուսանողներ, ուղբախնայիներ, ազրբեջանցիներ, մեր բազմազգ հայրենիքի տարբեր ժողովուրդների ներկայացուցիչներ: Օրինակ՝ Չորահեկի շինարարության առաջին տարում հայերը կազմում էին նրա 800 կառուցողների միայն 41 %-ը:

1931 թ. փետրվարին տեղի ունեցավ Հայաստանի սովետների VII համագումարը, որը ամփոփեց հնգամյակի երկու տարվա արդյունքները և նոր առաջադրանք տվեց նրա երրորդ, վճռական տարվա համար: Հնգամյակի երրորդ տարում նախորդ տարվա համեմատությամբ հանրապետության արդյունաբերության արտադրանքը գրեթե կրկնապատկվեց: Կառուցվեցին և շահագործման հանձնվեցին արդյունաբերական մի շարք նոր ձեռնարկություններ: Մեծ աշխատանք կատարվեց պղնձարդյունաբերության զարգացման ուղղությամբ, որն զգալիորեն ետ էր մնում արդյունաբերության մյուս ճյուղերից:

Հնգամյակի երրորդ տարվա պլանները ժամկետից շուտ կատարելու համար ՀՍՍՀ Կենտգործկոմը 1931 թ. նոյեմբերին ՀՍՍՀ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով պարգևատրեց Երևանի կարի ֆաբրիկայի, ձկն-օճառի գործարանի, Անիպեմզայի և Հայկինոյի կոլեկտիվներին, ինչպես նաև հանրապետության մի շարք աշխատողների: Նույն որոշմամբ աշխատավորների մի մեծ խմբի շնորհից Աշխատանքի հերոսի կոչում:

1932 թ. մարտին Անդրֆեդերացիայի 10-ամյակի առթիվ ԱՍՖՍՀ Աշխատանքային կարմիր դրոշի և ՀՍՍՀ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշաններով պարգևատրվեցին ՀԿ(բ) Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Խանջյանը, Ժողկոմխորհի նախագահ Ս. Տեր Գաբրիելյանը, ականավոր գրող Գ. Գեմիլճյանը, ժողովրդական արտիստ Ա. մո Խաբազյանը, ճարտարապետ Ն. Տեր-Մարտիրոսյանը, Լենինականի շոգեքարշային ղեկույցի հարվածային վարպետ Գ. Հակոբյանը, Երևանի կաշվի գործարանի հարվածային բանվոր Շ. Հակոբյանը և ուրիշներ:

Հնգամյակի երրորդ տարվա պլանների կատարման արդյունքներն ամփոփվեցին ՀԿ(բ) VIII համագումարում, որը տեղի ունեցավ 1932 թ. վականի հունվարին:

Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունների աշխատողները մեծ ջանքեր գործադրեցին հնգամյակի չորրորդ, ավարտական տարվա պլանները կատարելու համար:

Առաջին հնգամյա պլանի կատարման արդյունքները արդյունաբերության բնագավառում

Սոցիալիստական մրցույթյունը և հարվածայնությունը լայնորեն ծավալելու շնորհիվ հաջողությամբ և ժամկետից շուտ (չորս տարի և երեք ամսում) կատարվեց առաջին հնգամյա պլանը: Դա բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության մեծագույն հաղթանակն էր սոցիալիզմի կառուցման վեճ գործում: Առաջին հնգամյա պլանի կատարման հետևանքով ՍՍՀՄ-ում կառուցվեց սոցիալիզմի տնտեսական հիմքը: ՍՍՀՄ-ն հետամնաց ագրարային երկրից դարձավ հզոր ինդուստրիալ տերություն:

Առաջին հնգամյա պլանը հաջողությամբ կատարվեց նաև Սովետական Հայաստանում, արմատական փոփոխություններ մտցնելով նրա տնտեսական և մշակութային կյանքում: Ուշադրով է, որ սոցիալիստական արդյունաբերությունը Հայաստանում ավելի բարձր տեմպերով էր աճում, քան ամբողջ Սովետական Միությունում: Դա կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության փայլուն հաղթանակն էր:

Առաջին հնգամյակի տարիներին հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ ներդրվեց ավելի քան 319 միլիոն ռուբլի՝ պլանով նախատեսված 276,8 միլիոնի դիմաց: Միայն արդյունաբերության մեջ, էլեկտրիֆիկացման հետ միասին, ներդրվեց 135,6 միլիոն ռուբլի: Հրնգամյակի առաջին երկու տարում արդյունաբերության մեջ ներդրվեց ավելի շատ գումար, քան ներդրվել էր նախորդ 8 տարվա ընթացքում: Արդյունաբերության ընդհանուր արտադրանքը հնգամյակի վերջում 4,5 անգամ գերազանցեց 1927—1928 թթ. մակարդակը:

Հնգամյակի տարիներին շահագործման հանձնվեցին Երևանի մետաքսի, պահածոների, ծխախոտի-ֆերմետացիոն գործարանները, մսի կոմբինատը, Երևանի և Լենինականի կարի նոր ֆաբրիկաները, շինանյութերի արտադրության մի խումբ ձեռնարկություններ՝ Գավալվում (Արարատ), Ղարաքիլիսայում (Կիրովական), և արդյունաբերական այլ ձեռնարկություններ: Մեծ նվաճումներ ձեռք բերվեցին էլեկտրիֆիկացման գործում: 1930 թ. մայիսին հիմնադրվեց Քանաքեռէէկը: 1932 թվականին շարք մտավ Երևանի և Լենինականի երկրորդ հիդրոէլեկտրակայանները, Գիլիջանի և Ստեփանավանի էլեկտրակայանները: Հնգամյակի տարիներին լայն թափով առաջ էր գնում և մասամբ ավարտվեց 140 կմ ընդհանուր երկարություն ունեցող բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերի կառուցումը:

1932 թվականի նոյեմբերի 15-ին տեղի ունեցավ հանրապետության ամենամեծ էլեկտրակայանի՝ Չորահէկի հանդիսավոր բացումը: Այդ օրը մեծ տոն էր Հայաստանի և Անդրկովկասի աշխատավորության համար: Չորահէկի բացման հանդեսին մասնակցում էին Հայաստանի,

Վրաստանի և Ադրբեջանի աշխատավորության ներկայացուցիչները: Չորահէկն ուներ միութենական նշանակություն: Նա երկրին տվեց 86 միլիոն կվտ էլեկտրաէներգիա, որը շատ ավելի էր, քան հանրապետության ունեցած բոլոր կայանների կարողությունը միասին վերցրած: Չորահէկը էլեկտրաէներգիա էր մատակարարելու Ալավերդու պղնձաձուլական գործարանին և Կիրովականի քիմիական կոմբինատին: Հնգամյակի վերջում հանրապետությունում գործում էր 29 էլեկտրակայան, որոնց կարողությունը 4 անգամ ավելի էր, քան հնգամյակի սկզբում: Այդ օրերին ՀՍՍՀ Կենտգործկոմը, հաշվի առնելով երիտասարդության անձնվեր աշխատանքը հանրապետության էլեկտրիֆիկացիայի զարգացման ասպարեզում, Հայաստանի կոմերիտմիությանը պարգևատրեց ՀՍՍՀ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

Առաջին հնգամյակի տարիներին արմատապես վերակառուցվեցին նաև արդյունաբերական հին ձեռնարկությունները: Մեծ աշխատանք կատարվեց հատկապես Ալավերդու և Ղափանի պղնձարդյունաբերության զարգացման ուղղությամբ: Սկսվեց խոշոր նշանակություն ունեցող մի շարք գործարանների շինարարությունը, որն ավարտվեց հաջորդ հրնգամյակում: Տեղական արդյունաբերության զարգացման հետ միասին զարկ տրվեց արհեստագործական կոոպերացիային: Ղափանի, հետագայում նաև ամբողջ Ձանգեղուրի պղնձարդյունաբերության զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ 1932 թ. շահագործման հանձնրված 40 կմ երկարությամբ Մինչևան—Ղափան երկաթուղին:

Սոցիալիստական արդյունաբերության բուռն զարգացման շնորհիվ աճեց Հայաստանի բանվոր դասակարգը: 1928 թվականի համեմատությամբ հնգամյակի վերջում կրկնապատկվեց արդյունաբերության մեջ աշխատող բանվորների և ծառայողների թիվը: Բանվոր դասակարգը փոխվեց նաև որակապես: Զգալիորեն նվազեց սեզոնային բանվորների և աճեց կադրային բանվորների թիվը:

Արդյունաբերության արագընթաց զարգացումը փոխեց ժողովրդական տնտեսության մեջ արդյունաբերության և գյուղատնտեսության արտադրանքի տեսակարար կշռի հարաբերակցությունը: Եթե 1927—1928 տնտեսական տարում արդյունաբերության ընդհանուր արտադրանքի տեսակարար կշիռը կազմում էր 21,5%, ապա հնգամյակի վերջին տարում՝ 1932 թվականին, հասավ 58%-ի:

Առաջին հնգամյակի ընթացքում հսկայական փոփոխություններ տեղի ունեցան նաև գյուղատնտեսության ասպարեզում: Գյուղում հիմնականում հաղթեց կոլտնտեսային կարգը: Համատարած կոլեկտիվացման հիման վրա վերացվեց շահագործող դասակարգի վերջին մնացորդը՝ կուլակությունը: Կոլտնտեսային գյուղա-

ցիտեթյունը դարձավ սովետական իշխանության ամուր հենարանը գյուղում: Ամրապնդվեց բանվոր դասակարգի և գյուղացիության տնտեսական ու քաղաքական դաշինքը: Գյուղատնտեսության կոլեկտիվացման շնորհիվ ՍՍՀՄ-ը մանր գյուղացիական երկրից դարձավ խոշոր սոցիալիստական գյուղատնտեսական երկիր:

Առաջին հնգամյակի տարիներին գյուղատնտեսության բնագավառում նշանակալից հաջողություններ ձեռք բերվեցին նաև Սովետական Հայաստանում: Գյուղատնտեսության մեջ մեծ չափերի էին հասնում կապիտալ ներդրումները: Եթե Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց մինչև 1927—1928 տնտեսական տարին ներառյալ գյուղատնտեսության մեջ ներդրվել էր ընդամենը 17,8 միլիոն ռուբլի, ապա առաջին հնգամյակի շրջա տարում՝ 96,6 միլիոն ռուբլի:

Զգալի չափով ավելացան ցանքատարածությունները: 1928 թվականի համեմատությամբ 1932 թվականին հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունն ավելացավ 59,5 հազար հեկտարով, տեխնիկական կուլտուրաներինը՝ 22,5 հազար հեկտարով: Սակայն միանգամայն այլ էր պատկերը անասնաբուծության բնագավառում: Կոլեկտիվացման տարիներին տեղի ունեցավ անասունների գլխաքանակի ղզալի անկում: Օրինակ՝ 5 տարվա ընթացքում, 1928 թվականի հունվարից մինչև 1933 թվականի հունվարը, հանրապետության խոշոր եղջերավոր անասունների գլխանակը նվազեց 35 %-ով, իսկ մանր եղջերավոր անասուններինը՝ 45 %-ով:

Հանրապետությունում արագ թափ էր ստացել կոլտնտեսային շարժումը: 1932 թ. հուլիսին Հայաստանում կոլտնտեսությունների թիվը հասավ 892-ի, որոնց մեջ ընդգրկվել էր 63,1 հազար գյուղացիական տնտեսություն: Դա կազմում էր գյուղացիական տնտեսությունների մոտ 40 %-ը: Հանրապետության առանձին շրջաններում (Ղուրղուղուլի, Ղամարու, էջմիածին, Մեղրի և այլն) կոլեկտիվացման տոկոսը անհամեմատ ավելի բարձր էր:

Զարկ տրվեց նաև սովխոզային շինարարությանը: Մեծ աշխատանք կատարվեց գյուղում տեխնիկական բազա ստեղծելու ուղղությամբ: Գյուղըն ստացավ մեծ քանակությամբ նոր մեքենաներ ու գործիքներ: 1932 թվականին հանրապետության դաշտերում աշխատում էր 540 տրակտոր՝ 1928 թվականի 166-ի դիմաց: Աճեց մեքենա-տրակտորային կայանների թիվը: Հնգամյակի վերջում Հայաստանում գործում էր 7 ՄՏԿ: Զգալի էին գյուղի էլեկտրիֆիկացման ուղղությամբ կատարված աշխատանքները:

Առաջին հնգամյակի տարիներին գյուղում նշանակալի աշխատանք կատարվեց նաև կադրերի պատրաստման ուղղությամբ: Բարձրորակ և միջին որակի մասնագետներից բացի, համապատասխան դասընթացներ

րի միջոցով պատրաստվեցին և վերապատրաստվեցին մեծ թվով տրակտորիստներ, ավտովարորդներ և բրիգադիրներ:

Իրականացնելով Վ. Ի. Լենինի ցուցումը, Հայաստանի աշխատավորությունը հսկայական աշխատանք կատարեց հողերի ոռոգման գծով: Կառուցվեցին նոր ջրանցքներ: Այդ նպատակի համար հատկացվեց 33,8 միլիոն ռուբլի: 1930 թվականին շարք մտան Փոքր-Սարգարապատի և Կարճևանի (Մեղրու շրջան) ջրանցքները: Լայն ծավալ ստացան Երևանի մոտակա դռերի ոռոգման աշխատանքները:

Ժողովրդի կենսամակարդակի բարձրացումը Առաջին հնգամյա պլանի հաջող ըրականացումն զգալիորեն բարելավեց աշխատավորների նյութական դրությունը և բարձրացրեց նրանց կուլտուրական մակարդակը: Սոցիալիզմի տնտեսական հիմքի ստեղծման շնորհիվ մեր երկրում վերացավ մարդու շահագործումը մարդու կողմից, վերջ տրվեց դսրծադրկությանը:

Աշխատավորների կուլտուր-կենցաղային պայմանների բարելավման պերճախոս ցուցանիշներից մեկը հանրապետության ազգաբնակչության աճն էր: Եթե 1928 թ. Սովետական Հայաստանն ուներ 896 հազար 800 բնակիչ, ապա հնգամյակի վերջում, 1932 թվականին այդ թիվն հասավ մեկ միլիոն 124 հազարի: Ազգաբնակչության բնական աճի տեսակետից Սովետական Հայաստանը Միության մեջ զբաղում էր առաջին տեղերից մեկը: Սակայն Հայաստանում տեղի էր ունենում ոչ միայն բնակչության քանակական աճ, այլև փոփոխվում էր այդ բնակչության սոցիալական կազմը: Զգալի չափով աճել էր բանվոր դասակարգը, բարձրացել էր բանվոր-ծառայողների աշխատավարձը:

Պետությունը խոշոր գումարներ ներդրեց բնակարանային-կոմունալ շինարարության, առողջապահական հիմնարկների ստեղծման, աշխատավորների սոցիալական ապահովության, հասարակական սննդի և այլ բնագավառներում: Միայն բնակարանային շինարարության վրա ծախսվեց 22,1 միլիոն ռուբլի:

Առաջնորդվելով քաղաքային տնտեսության զարգացման վերաբերյալ Համկ(բ)Կ կենտկոմի 1931 թ. հունիսյան պլենումի որոշմամբ, առաջին հնգամյակի տարիներին աչքի ընկնող աշխատանք կատարվեց քաղաքաշինության ասպարեզում: Առանձնապես մեծ աշխատանք ծավալվեց Երևանը սոցիալիստական բարեկարգ մայրաքաղաք դարձնելու ուղղությամբ: Այդ նպատակի համար հսկայական միջոցներ ներդրվեցին: Լայնորեն ծավալվեց բնակարանային-կոմունալ շինարարությունը, ըստ ստեղծվեցին կոմունալ տնտեսության մի շարք նոր ճյուղեր, կառուցվեցին մշակույթի նոր օջախներ, բարեկարգվեցին փողոցները: 1932 թվականի վերջում հիմնականում ավարտվեց տրամվայի շինարարությունը, շա-

հազարծման հանձնվեց նոր ջրմուղը, սկսվեց նոր կոյուղու կառուցումը և այլն:

Բարեկարգվում և զեղեցկանում էին նաև հանրապետության մյուս քաղաքները: Խոշոր աշխատանքներ կատարվեցին հատկապես Լենինականում, որը մեծ շահով տուժել էր 1926 թ. ուժեղ երկրաշարժից: Քաղաքի վերաշինության համար միայն միութենական բյուջեից բաց էր թողնվել 6 միլիոն ուրլի: Շինարարական մեծ աշխատանքներ կատարվեցին նաև Զանգեզուրում, ուր նույնպես ուժեղ երկրաշարժ էր տեղի ունեցել 1931 թ. դարնանը: Ստեղծվեցին նոր քաղաքներ: 1931 թ. ամառի տարածության վրա հիմնադրվեց Հոկտեմբերյան քաղաքը: Երեվանի շուրջը առաջ եկան նոր բարեկարգ արվարձաններ, իսկ նոր կառուցվող արդյունաբերական ձեռնարկությունների տերիտորիաներում՝ բանավաններ, օրինակ՝ Լենինականի տեքստիլ, Ղարաքիլիսայի քիմիական կոմբինատներ, Դավալուի ցեմենտի գործարանի և այլ բանավաններ:

Զգալիորեն բարձրացավ գյուղական բնակչության կենսամակարդակը: Կոլտնտեսային կարգի հաղթանակի շնորհիվ վերացավ գյուղացիների սոցիալական շերտավորումը (բատրակ-չբավորներ, կուլակներ): Մեկընդմիջտ վերջ տրվեց գյուղի աղքատությանը:

Արդյունաբերության և գյուղատնտեսության անշեղ զարգացման շնորհիվ աճեցին ինչպես բանվոր-ծառայողների, այնպես էլ գյուղացիների եկամուտները: Զգալիորեն բարձրացավ աշխատավորների գնողունակությունը: Լայնորեն ծավալվեց ապրանքաշրջանառությունը գյուղի և քաղաքի միջև, թեև դեռևս զգացվում էր պարենային, հատկապես հացի ու արդյունաբերական ապրանքների պակաս: Այդ էր պատճառը, որ մինչև 1934—1935 թվականները պահպանվում էր հացի և մյուս մթերքների քարտային սիստեմը: 1928 թվականի համեմատությամբ սննդի գծով ապրանքաշրջանառության ծավալը հնգամյակի վերջում մեծացավ ավելի քան 11 անգամ: Առևտրի ոլորտից դուրս մղվեց մասնավորը, կազմակերպվեց կոլտնտեսային առևտուր:

Այսպիսով, հաջողությամբ կատարվեց երկրի սոցիալիստական ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման հռչակապ ծրագիրը՝ առաջին հնգամյա պլանը: Կառուցվեց սոցիալիզմի հիմքը մեք երկրում:

ՍՈՎԵՏՍՈՒԿԱՆ ՀԱՅՍՏԱՆԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՑՄԱՆ ԱՎԱՐՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ: ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՄԵՐ ԵՐԿՐՈՒՄ (1933—1937)

1. ՍՈՎԵՏՍՈՒԿԱՆ ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՋՈՂՈՒԹՈՒՆՆԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Ժողովրդական տնտեսության զարգացման երկրորդ հրահանգը

Սովետական ժողովուրդը երկրորդ հնգամյա պլանը կատարում էր միջազգային լարված իրադրության մեջ: 1933 թ. Գերմանիայում իշխանության գլուխ անցան ֆաշիստները, որոնք ձգտում էին համաշխարհային տիրապետության: Շուտով Գերմանիային միացան Իտալիան և Ճապոնիան: Զեւավորվեց երեք ագրեսիվ պետությունների բուլդը: Այդ պետությունները վարում էին իմպերիալիստական զավթումների քաղաքականություն:

Թեպետև այդ ագրեսիվ պետությունները ոտնահարում էին նաև Անգլիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի շահերը, սակայն վերջիններս թողտվության, բացարձակ զիճոմների քաղականություն էին վարում ագրեսորների նկատմամբ:

Դրան հակառակ, Սովետական Միությունը մի կողմից ջանքեր էր թափում իր ռազմական հզորությունը մեծացնելու համար, մյուս կողմից վարում էր խաղաղասիրական քաղաքականություն, բոլոր հնարավոր միջոցներով աշխատում էր կանխել պատերազմը:

Հայ ժողովուրդը, ինչպես և սովետական բոլոր ժողովուրդները, ակտիվորեն պաշտպանում էր սովետական կառավարության արտաքին խաղաղասիրական քաղաքականությունը, աջակցում էր նրա այն բոլոր միջոցառումներին, որոնք ուղղված էին նոր համաշխարհային պատերազմը կանխելու, ֆաշիստական ագրեսորներին հակահարված տալու նպատակին:

ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման երկրորդ հնգամյա պլանը հաստատվեց Համկ(բ)Կ XVII համագումարում, որը տեղի ունեցավ 1934 թ. հունվարին: Համագումարը երկրորդ հնգամյակի հիմնական խնդիրներ համարեց՝ «Կապիտալիստական տարրերի վերջնական լիկվիդացումը, կապիտալիզմի մնացուկների հաղթահարումը էկոնոմիկայում և մարդկանց դիտակցության մեջ, ամբողջ ժողովրդական տնտեսության վերակառուցման ավարտումը նորագույն տեխնիկական

բազայի վրա, նոր տեխնիկայի և նոր ձեռնարկությունների յուրացումը, գյուղատնտեսության մեքենայացումը և նրա արդյունավետության բարձրացումը»¹։

ՀամԿ(բ)Կ XVII կոնֆերանսի (1932 թ. հունվար) դիրեկտիվների հիման վրա մշակվեց Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացման երկրորդ հնգամյա պլանը։ Այդ պլանով նախատեսվում էր՝ ավարտել ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի վերակառուցումը, կառուցել արդյունաբերական նոր ձեռնարկություններ, ինչպես նաև ընդլայնել գործող ձեռնարկությունները, լիովին օգտագործել հանրապետության բնական հարստությունները։ Հատուկ ուշադրություն պետք է դարձվեր աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, արտադրանքի ինքնարժեքի իջեցմանը և հատկապես արտադրանքի որակի բարելավմանը։ Այդ բոլորին հասնելու համար նախատեսվում էր էլ ավելի լայնորեն ծավալել սոցիալիստական մրցությունը և հարվածայնությունը։ Երկրորդ հնգամյակում ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության կապիտալ ներդրումները պետք է աճեին երեք անգամ։ Խնդիր էր դրվում առաջին հերթին զարգացնել արդյունաբերության այն ճյուղերը, որոնք ունեին ոչ միայն հանրապետական, այլև միութենական նշանակություն։ Այդպիսի ճյուղեր էին գունավոր մետալուրգիան, քիմիական և շինանյութերի արդյունաբերությունը։

Երկրորդ հնգամյակում պետք է լիովին ավարտվեր գյուղատնտեսության կռիվատիվացումը։ Հսկայական գումարներ էին նախատեսվում գյուղատնտեսության տեխնիկական բազայի ընդլայնման, ռոտորի ջրբարանցների շինարարության, ցանքատարածությունների ընդարձակման, բերքատվության ու մթերատվության բարձրացման համար։

Հնգամյակում վճռական նոր քայլեր պետք է արվեին ժողովրդի կենսամակարդակի հետագա բարձրացման և կուլտուրական հեղափոխության իրականացման ուղղությամբ։

Ինչպես ամբողջ Սովետական Միության, այնպես էլ նրա բաղկացուցիչ մասը կազմող Սովետական Հայաստանի աշխատավորները լարված պայքար էին մղում երկրորդ հնգամյա պլանը ժամկետից շուտ կատարելու համար։ Ամբողջ երկրով մեկ ծավալվում էին սոցիալիստական մրցությունը և հարվածայնությունը։

Սովետական Հայաստանի արդյունաբերության, շինարարության աշխատողների մեծ մասը մասնակցում էր սոցիալիստական մրցությունը։ Արտադրության, ինչպես և հարվածային շինարարությունների շատ առաջավորներ կատարում ու գերակատարում էին իրենց արտադրական նորմաները։ Ժողովրդական տնտեսության մի շարք ճյուղերում

սահմանվեցին համամիութենական ռեկորդներ։ 1933 թ. մայիսին Լենինականի շոգեքարշային դեպոն համամիութենական մրցությունում գրավեց առաջին տեղը, 1934 թ. հուլիսին լավագույն բամբակազտիչ գործարանների ու մթերակայանների համամիութենական մրցության ժյուրիի որոշմամբ առաջին մրցանակը տրվեց Սարդարապատի բամբակազտիչ գործարանին։ Չորագետի հիդրոէլեկտրակայանի կառուցման և երկրի սոցիալիստական վերակառուցման գործում ցուցաբերած աչքի ընկնող ծառայությունների համար 1933 թ. Սովետական Հայաստանում առաջինը Լենինի շքանշանով պարգևատրվեց նշանավոր հիդրոէներգաշինարար Հովսեփ Տեր-Աստվածատրյանը։

Երկրորդ հնգամյակի տարիներին ստեղծագործական լայն աշխատանք էր ծավալվում սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում։ Սակայն աշխատանքի արտադրողականության հետագա բարձրացումը կախված էր նոր տեխնիկայի յուրացումից։ 1935 թ. կուսակցությունն առաջ քաշեց «Կադրերն են վնասում ամեն ինչ» լոզունգը։ Այն տրամաբանորեն լրացնում էր «Տեխնիկան է վնասում ամեն ինչ» լոզունգը, որը կուսակցությունն առաջադրել էր վերակառուցման շրջանի սկզբում, երբ երկիրը ամենից առաջ տեխնիկայի կարիք ուներ։

Բանվոր դասակարգը խանդավառությամբ ընդառաջեց կուսակցության այդ նոր կոչին և մեծ եռանդով ձեռնամուխ եղավ տեխնիկայի տիրապետման գործին։ Այդ ուղղությամբ զգալի աշխատանք կատարվեց նաև Սովետական Հայաստանում։ Կադավակերպվեց առանց արտադրությունից կտրվելու կադրերի պատրաստման գործը։ Արդյունաբերական ձեռնարկություններում, կառույցներում, սովխոզներում ու կուլտնտեսություններում ստեղծվեցին տեխնիկական բազմաթիվ խմբակներ ու դասընթացներ։

Հայ բանվորների որակի բարձրացման գործում մեծ դեր խաղացին Ռուսաստանից, Ուկրաինայից և եղբայրական մյուս հանրապետություններից եկած որակյալ մասնագետները։ Քանաքեռհէկում աշխատող 500 թունելագործ բանվորներ, որոնք եկել էին Մոսկվայից և Դոնբասից, ոչ մի ջանք չէին խնայում իրենց մասնագիտությունը հայ ընկերներին սովորեցնելու համար։

Երկրորդ հնգամյա պլանի կատարման համար աշխատավորության մղած հերոսական պայքարի բովում ծնունդ առավ սոցիալիստական մրցության նոր, ավելի բարձր ձևը՝ ստախանովյան շարժումը։

Հայաստանում ստախանովյան շարժմանը առաջինն արձագանքեցին Ղափանի և Ալավերդու պղնձագործները, Քանաքեռհէկի և Երևանի Ս. Մ. Կիրովի անվան գործարանի շինարարները, Լենինականի տեքստիլագործները, Կիրովականի քիմիագործները, Հայաստանի երկաթուղայինները և ուրիշներ։ Հանրապետության ժողովրդական տնտեսության շատ առա-

¹ ՍՄԿԿ-ն... բանաձևերում ու որոշումներում, III մաս, Երևան, 1955, էջ 279—280։

ջավորների անուններ մտան երկրորդ հնգամյակի կենսագործման համար մղվող պայքարի փառավոր տարեգրության մեջ:

Ղափանի լենինյան հանքերում աշխատող կոմունիստ Մինաս Պապյանը 1935 թ. նոյեմբեր ամսին 5—6 անգամ գերազանցեց սահմանված արտադրական նորման: Շարունակելով կատարելագործել աշխատանքի կազմակերպման մեթոդները, նա 1936 թ. հունվարին հորատման իր պլանը կատարեց 900 %-ով և պարզևատրվեց լենինի շքանշանով: Շուտով անվանի հանքափորի աշխատանքի մեթոդով սկսեցին աշխատել պղնձարդյունաբերության նոր ստախանովականներ:

1937 թ. հունվարի 1-ին Ալավերդու հանքափորներից 183-ն արդեն ստախանովականներ էին: Նրանց մեջ ամենից ավելի աչքի էին ընկնում հորատող Անդրեաս Զաքարյանը, որը 1937 թ. դեկտեմբերին ընտրվեց ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատ: Հնագույն հանքագործ Մատվեյ Բատմանովին շնորհվեց Աշխատանքի հերոսի կոչում: Աշխատանքի առաջավոր մեթոդների արմատավորման համար մղված պայքարում լավ նախաձեռնություն հանդես բերեցին Ալավերդու պղնձաձուլարանի անվանի վարպետներ Սեդրակ Ուլիխանյանը, Հակոբ Մոսինյանը, Մանթաշ Սիմոնյանը: Կիրովականի կարբիդագործների բրիգադի Գևորգ Ղազարյանը, որը Անդրկենտգործկոմի անդամ էր, 6 ամիս շարունակ իր ձեռքում էր պահում կոմբինատի փոխանցիկ դրոշը:

Երկաթուղային տրանսպորտում կրիվոնոսյան շարժմանը առաջինն արձագանքեցին մեքենավար Թորգոմ Պողոսյանը, Գարեգին Աբաջյանը, Բաղդիկ Շիգանյանը, Անդրանիկ Խաչատրյանը և ուրիշներ: Նրանք կրկնապատկեցին զնացքների արագությունը, միաժամանակ տնտեսելով մեծ քանակությամբ վառելիքայուղ: Կոմերիտական մեքենավար Թ. Պողոսյանը զնացքի շարժման արագությունը մեկ ժամում նախատեսված 23 կմ-ից հասցրեց 58 կմ-ի, որի համար պարգևատրվեց լենինի շքանշանով:

Աշխատանքի արտադրողականության բարձրացմանը և ստախանովյան շարժման ծավալմանը մեծապես նպաստում էին նաև հաճախակի կազմակերպվող ստախանովյան օրերը, տասնօրյակները և ստախանովականների համագործարանային հավաքներն ու կոնֆերանսները:

Երկրորդ հնգամյակի պլանների կատարման համար մղված պայքարում և առանձնապես ստախանովյան շարժման ծավալման գործում նշանակալից աշխատանք կատարեցին Հայաստանի արհմիութենական ու կոմերիտական կազմակերպությունները:

Սոցիալիստական մրցությունը լայնորեն ծավալվեց նաև Հայաստանի գյուղերում, ուր կային հազարավոր հարվածային կոլտնտեսականներ: 1933 թ. հունիսի 14-ին Երևանում բացվեց Հայաստանի հարվածային

կոլտնտեսականների առաջին համագումարը, որն ամփոփեց հանրապետության կոլտնտեսությունների ձեռք բերած նվաճումները և մասնանշեց նրանց առաջիկա անելիքները: Համագումարի աշխատանքներին մասնակցում էին Վրաստանի, Ադրբեջանի, ինչպես նաև Միջին Վոլգայի Բեզենչուկի շրջանի կոլտնտեսությունների ու սովխոզների պատվիրակները, որոնք համագումարին պատմեցին բարձր բերքի ստացման գործում իրենց ձեռք բերած նվաճումների մասին:

Կոլտնտեսությունները և սովխոզները տնտեսապես ու քաղաքականապես ամրապնդելու գործում կարևոր դեր խաղացին ՄՏԿ-ների և սովխոզների ֆալքաժինները, որոնք ստեղծվեցին ՀամԿ(բ)Կ կենտկոմի և ԿՎՀ-ի 1933 թ. հունվարյան պլենումի որոշմամբ: Հայաստանում կազմակերպվեց 18 քաղբաժին: Կուսակցությունը քաղբաժիններում աշխատանքի ուղարկեց լավագույն կադրերին: Քաղբաժինները պատվով կատարեցին իրենց առջև դրված խնդիրները:

Կոլտնտեսային աշխատանքը հաջող կազմակերպելու նպատակով այդ տարիներին կոլտնտեսություններում ստեղծվեցին արտադրական բրիգադներ, նրանց տրվեցին մշտական հողամասեր, անասուններ, գյուղատնտեսական մեքենաներ, գործիքներ: Ստեղծվեց եկամուտների բաշխման կայուն սկզբունք, որի հիմնական էությունն այն էր, որ կոլտնտեսականի եկամուտը պետք է կախման մեջ գրվեր նրա աշխատանքի քանակից և որակից, որը հաշվվում էր աշխօրերով: Հենց այդ ժամանակ էլ կուսակցությունը առաջ քաշեց «Կոլտնտեսությունները դարձնել բոլշևիկյան, իսկ կոլտնտեսականներին՝ ունևոր» լոզունգը:

Կոլտնտեսային շինարարության բնագավառում նոր հաջողություններ ձեռք բերելու և կոլտնտեսություններում սոցիալիստական մրցությունն ու հարվածայնությունն ավելի լայնորեն ծավալելու գործում կարևոր նշանակություն ունեցավ հարվածային կոլտնտեսականների համամիութենական երկրորդ համագումարը, որը տեղի ունեցավ 1935 թ. փետրվարին: Այդ համագումարին մասնակցում էին նաև Հայաստանի կոլտնտեսականների ներկայացուցիչները՝ ՍՍՀՄ կենտգործկոմի անդամ, հարվածային կոլտնտեսուհի Աննաման Խաչատրյանի զխաչորությունով: Համագումարը հաստատեց գյուղատնտեսական արտելի նոր օրինակելի կանոնադրություն, որը դարձավ կոլտնտեսային կյանքի հիմնական օրենքը:

Արձագանքելով համագումարի և նրա Հայաստանի պատվիրակների կոչին, Հայաստանի կոլտնտեսականները և գյուղատնտեսական բնագավառի աշխատողները ջանք չէին խնայում երկրորդ հնգամյակի պլանները ժամկետից շուտ կատարելու համար:

Բարձր բերք ստանալու համար մղվող պայքարում կարևոր նշանակություն ունեցավ նաև Հայաստանի և եղբայրական մյուս հանրապե-

տությունների կոլտնտեսությունների միջև ծավալված մրցությունը: 1935 թ. հունիսին կնքվեց սոցիալիստական մրցության առաջին պայմանագիրը Հայաստանի և Հյուսիսային Օսեթիայի անասնապահների միջև: Հացահատիկի բարձր բերք ստանալու համար 1936 թ. ապրիլին սոցմրցման պայմանագիր կնքվեց նաև Հայաստանի և Ադրբեջանի կոլտնտեսականների միջև:

Շուտով Հայաստանի բաղնաթիվ գյուղերում շատ կոլտնտեսականներ դարձան բարձր բերքի առաջավորներ: Արդյունաբերության մեջ աշխատող ստախանովականների օրինակով Հայաստանի սոցիալիստական դաշտերում հերոսական աշխատանք էին կատարում Հոկտեմբերյանի, Դուզբենդի, Մարտունու տրակտորիստներն ու կոմբայնավարները, Հոկտեմբերյանի և էջմիածնի բամբակագործները, Նոր Բայազետի, Բասարգեչարի, Մարտունու, Ստեփանավանի անասնապահներն ու հողագործները և շատ ուրիշներ: Կուսակցությունը և կառավարությունը բարձր գնահատեցին գյուղատնտեսության առաջավորների հերոսական աշխատանքը: Նրանցից շատերը պարգևատրվեցին ՍՍՀՄ շքանշաններով, մեդալներով, պատվոգրերով, ստացան ՀՍՍՀ Աշխատանքի հերոսի կոչում և այլն:

ՍՍՀՄ Կենտգործկոմը մի շարք մարզերի, երկրամասերի ու հանրապետությունների թվում առաջավոր ճանաչելով նաև Սովետական Հայաստանը, Լենինի շքանշանով պարգևատրեց Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանին, որը մեծ ծառայություններ էր մատուցել հանրապետության ժողովրդական տնտեսության ու մշակույթի զարգացման գործին:

Երկրորդ հնգամյա պլանի կատարման արդյունքները

Փամկետից շուտ, 1937 թ. ապրիլին, կատարվեց ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման երկրորդ հնգամյա պլանը, որի շնորհիվ ՍՍՀՄ-ը դարձավ խոշոր ինդուստրիալ երկիր: Այդ տարիներին շարք մտան առաջնակարգ տեխնիկայով հագեցված 4500 նոր ձեռնարկություններ:

Հաջողությամբ էր կենսագործվում ամբողջ ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցումը, որը երկրորդ հնգամյակի հիմնական տնտեսական խնդիրն էր: Հնգամյակի ամենաակնառու նվաճումներից մեկն էլ այն էր, որ հաջողությամբ կենսագործվեց նախկինում հետամնաց աղքատի հանրապետությունների ինդուստրացումը:

Երկրորդ հնգամյակի տարիներին խոշոր նվաճումներ ձեռք բերվեցին նաև Հայաստանի արդյունաբերության զարգացման գործում: Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ (առանց կոլտնտեսությունների) կապիտալ ներդրումները և շինմոնտաժային աշխատանքները կազմեցին 1124 միլիոն ռուբլի՝ առաջին հնգամյակի 419 միլիոն ռուբ-

լու դիմաց: Այդ գումարն ավելի քան երկու անգամ գերազանցեց նախորդ 12 տարիների և մոտ երեք անգամ՝ առաջին հնգամյակի տարիների կապիտալ ներդրումները: Միայն արդյունաբերության մեջ կապիտալ ներդրումները կազմեցին 386 միլիոն ռուբլի: Հնգամյակի ընթացքում Հայաստանում շարք մտան տասնյակ արդյունաբերական նոր ձեռնարկություններ, մի քանի էլեկտրակայաններ, հանքահորեր:

Երկրորդ հնգամյակի առաջին տարում շարք մտան հանրապետության քիմիական արդյունաբերության հզոր նորակառուցներից մեկը՝ Կիրովականի Ա. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատը, Դավալուի (Արարատ) ցեմենտի գործարանը, Երևանի ծխախոտի ֆաբրիկան, Սարգարապատի բամբակազտիչ գործարանը և այլն: 1933 թ. հունվարին շահագործման հանձնվեց Երևանի տրամվայը: Հոկտեմբերին սկսվեց Ս. Մ. Կիրովի անվան սինթետիկ կաուչուկի գործարանի շինարարությունը: Նոյեմբերին ավարտվեց Չորահէկի վերջին, երրորդ ագրեգատի փորձարկումը:

Հնգամյակի երկրորդ տարում գործարկվեցին արդյունաբերական նոր ձեռնարկություններ, այդ թվում կարևոր նշանակություն ունեցող Ղափանի պղնձի հարստացուցիչ ֆաբրիկան: Հատուկ ուշադրություն դարձվեց տեղական արդյունաբերության զարգացմանը: Այդ նպատակով 1934 թ. հոկտեմբերին կազմակերպվեց ՀՍՍՀ տեղական արդյունաբերության ժողովրդական կոմիսարիատ: Հնգամյակի երկրորդ տարում շահագործման հանձնվեց ժողովրդատնտեսական խոշոր նշանակություն ունեցող Երևան—Աղստաֆա երկաթուղու զլխամասը՝ Երևան—Քանաքեռ երկաթգիծը:

Հնգամյակի վերջին տարիներին Հայաստանում կառուցվեցին և շահագործման հանձնվեցին Երևանի խրոմպիկի, կարբիդի, մոլիբդի, ապակու, Ալավերդու պղնձարջասպի գործարանները, Լենինականի մսի կոմբինատը, Երևանի կոշիկի ու հրուշակեղենի ֆաբրիկաները:

Խոշոր նվաճումներ ձեռք բերվեցին էներգետիկ արդյունաբերության բնագավառում: 1936 թ. դեկտեմբերին գործարկվեց Քանաքեռ-հէկի առաջին հերթը՝ 10,5 հազար կվտ կարողությամբ, իսկ հաջորդ տարվա սկզբներին սկսեցին գործել նաև երկրորդ և երրորդ հերթերը: Այդ տարիներին շարք մտան նաև Շաքիի, Մեղրու, Թալինի և մի քանի այլ էլեկտրակայաններ, վերակառուցվեցին մի շարք շրջանային էլեկտրակայաններ: Եթե առաջին հնգամյակի վերջերին հանրապետության մեջ գործում էր 29 էլեկտրակայան, ապա երկրորդ հնգամյակի վերջում՝ 48 էլեկտրակայան:

Բուռն զարգացում ստացավ քիմիական արդյունաբերությունը, որի արտադրանքը 1932 թ. համեմատությամբ աճեց 23 անգամ: Այդ նույն ժամանակամիջոցում մետաղամշակման արտադրությունն աճեց երեք

անգամ: Ուշագրավ է, որ երկրորդ հնգամյակի տարիներին հանրապետության արդյունաբերական արտադրանքի մեծ մասը տալիս էին նոր գործարաններն ու ֆաբրիկաները: Ընդլայնվեցին և վերակառուցվեցին արտադրական մի շարք ձեռնարկություններ, օրինակ՝ Երևանի Ձերժինակու անվան մեխանիկական, Ալավերդու պղնձածուլական գործարանները, Ալավերդու և Ղափանի պղնձահանքերը և այլն: Այդ տարիներին Հայաստանի արդյունաբերական շատ ձեռնարկությունների արտադրանքն արդեն արտահանվում էր այլ հանրապետություններ: Երկրորդ հնգամյակի տարիներին զգալիորեն ավելացավ թեթև և սննդի արդյունաբերության արտադրանքը:

Առաջին հնգամյակի համեմատյալը զգալիորեն փոխվեց արդյունաբերության տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության համախառն արտադրանքի մեջ՝ երկրորդ հնգամյակի վերջում հասնելով 72,1 %-ի: Այսպիսով, երկրորդ հնգամյակի վերջում Սովետական Հայաստանը դարձավ Սովետական Միության զարգացած արդյունաբերություն ունեցող հանրապետություններից մեկը:

Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ հնգամյակում հաջողությամբ էր իրագործվում կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության ազգային քաղաքականությունը, որի նպատակն էր անցյալում հետամնաց ազգային մարդերն ու հանրապետությունները հասցրնել տնտեսական և կուլտուրական զարգացման բարձր աստիճանի: Եթե երկրորդ հնգամյակում արդյունաբերության արտադրանքի միջին տարեկան աճը ՍՍՀՄ-ում 17%-էր, ապա Հայաստանում այն կազմում էր 26%:

Երկրորդ հնգամյակում մեծ նվաճումներ ձեռք բերվեցին նաև գյուղատնտեսության բնագավառում: Հնգամյակի տարիներին ինչպես ամբողջ Սովետական Միության մեջ, այնպես էլ Սովետական Հայաստանում լիակատար հաղթանակ տարավ կոլտնտեսային կարգը, հաջողությամբ լուծվեց գյուղում հեղափոխության զժվարին խնդիրը՝ գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխումը: Հնգամյակի վերջում հանրապետությունում կար 1074 կոլտնտեսություն, որոնք միավորում էին Հայաստանի գյուղացիական տնտեսությունների 88,7%-ը: Մեծ նրվաճումներ ձեռք բերվեցին գյուղատնտեսության տեխնիկական վերազինման ուղղությամբ: Հնգամյակի վերջում Հայաստանում գործում էր 24 մեքենա-տրակտորային կայան: Վճռական քայլեր կատարվեցին գյուղի էլեկտրիֆիկացման ուղղությամբ: Երկրորդ հնգամյակի տարիներին կրկնապատկվեցին գյուղատնտեսության մեջ կապիտալ ներդրումները: 40 հազար հեկտարով ավելացան ոռոգելի ցանքատարածությունները:

Չնայած գյուղատնտեսության բնագավառում գոյություն ունեցող թերություններին, հնգամյակի ընթացքում կոլտնտեսությունների համա-

խառն եկամուտներն ավելացան ավելի քան 4, իսկ դրամական եկամուտները՝ ավելի քան 5 անգամ: Բարձրացավ նաև գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը:

Աշխատավորների կենսամակարդակի բարձրացումը

Երկրորդ հնգամյակի քաղաքական և տնտեսական խնդիրների հաջող լուծումը զգալիորեն նպաստեց աշխատավորների կենսամակարդակի բարձրացմանը: Բոլոր արդյունաբերական ձեռնարկություններում մտցվեց 7-ժամյա, առանձին ճյուղերում՝ 6-ժամյա աշխատանքային օր: Ազգային եկամտի ավելացման հիման վրա զգալիորեն աճեցին բանվոր-ծառայողների աշխատավարձը և կոլտնտեսականների եկամուտները: Սովետական Հայաստանի բանվորների և ծառայողների միջին տարեկան աշխատավարձը 1932 թվականի համեմատությամբ 1937 թվականին աճեց ավելի քան երկու անգամ:

Աշխատավորների եկամուտների աճի հիման վրա էլ ավելի ծավալվեց սովետական առևտուրը: Հնգամյակի վերջում Սովետական Հայաստանում ապրանքաշրջանառությունն աճեց մոտ երեք անգամ: Դրան նպաստեց հատկապես 1935—1936 թթ. մեր երկրում սննդամթերքների և արդյունաբերական ապրանքների քարտային սիստեմի ու առևտրի փակ ձևերի վերացումը:

Երկրորդ հնգամյակի տարիներին խոշոր գումարներ ներգրվեցին բնակարանային շինարարության, առողջապահական, կոմունալ-կենցաղային հիմնարկների ցանցի ընդարձակման համար: Եթե առաջին հնգամյակի տարիներին Սովետական Հայաստանում կառուցվել էր 186 հազար բառ. մ բնակելի տարածություն, ապա երկրորդ հնգամյակի տարիներին կառուցվեց 483 հազար բառ. մ: Լայն աշխատանք կատարվեց քաղաքների, բանավանների, շրջկենտրոնների և գյուղերի բարեկարգման ուղղությամբ: Հատուկ ուշադրություն դարձվեց հայրենադարձ հայերի համար կառուցված ավանների բարեկարգման գործին: Այդ նպատակով միայն միութենական բյուջեից բաց թողնվեց 7 միլիոն ռուբլի: Կառուցվեցին նոր ավաններ:

2. ՍՈՅՒԱԼԻԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՄԵՐ ԵՐԿՐՈՒՄ: ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՍՍՀՄ նոր սահմանադրության ընդունումը

Երկրորդ հնգամյակի տարիներին մեր երկրում ավարտվեց արդյունաբերության և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը: Վերջնականապես վերացվեցին կապիտալիստական տարրերը: Մեր ամբողջ երկրում հիմնականում կառուցվեց սոցիալիզմը:

Սոցիալիստական շինարարության տարիներին սովետական երկրի

սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում արմատական փոփոխություններ տեղի ունեցան: Հիմնովին փոխվեց բնակչության դասակարգային կազմը:

ՍՍՀՄ-ում առաջացել էին միանգամայն նոր բանվոր դասակարգ և նոր, կոլտնտեսային գյուղացիություն: Ստեղծվել էր նոր մտավորականություն, որը ճնշող մեծամասնությամբ դուրս էր եկել աշխատավորության ծոցից և ակտիվորեն մասնակցում էր սոցիալիզմի կառուցման գործին: Քաղաքում և գյուղում անշեղորեն աճում էին աշխատավորների նյութական պայմանները և կուլտուրական մակարդակը:

Սոցիալիստական հասարակարգի հաղթանակի շնորհիվ վերջնականապես ձևավորվեցին սոցիալիստական ազգերը, այդ թվում հայ սոցիալիստական ազգը, որն իր սոցիալ-տնտեսական գոյավիճակով, քաղաքական ձգտումներով, իր հոգևոր կերպարով բոլորովին նոր որակ կազմեց: Է՛լ ավելի ամրապնդվեց սովետական հասարակության բարոյաքաղաքական միասնությունը, ավելի ամրակուռ դարձավ ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը, աղբյուրի պես հորդեց սովետական կենսատու հայրենասիրությունը:

Այս ամենի հետևանքով անհրաժեշտ էր համապատասխան փոփոխություններ մտցնել 1924 թվականին հաստատված ՍՍՀՄ սահմանադրության մեջ, օրենսդրական կարգով ամրապնդել սոցիալիզմի կառուցման գործում սովետական ժողովրդի ձեռք բերած համաշխարհային պատմական հաղթանակները: ՍՍՀՄ նոր սահմանադրության մեջ պետք է փոփոխություններ կատարվեին հիմնականում ընտրական սիստեմի հետագա ղեկավարացման և նրա սոցիալ-տնտեսական հիմքի ճշգրտման ուղղությամբ:

1936 թվականի նոյեմբերի 25-ին Մոսկվայում բացվեց ՍՍՀՄ սովետների VIII արտակարգ համագումարը, որը քննարկեց և հաստատեց ՍՍՀՄ նոր սահմանադրությունը: ՍՍՀՄ նոր սահմանադրության ընդունումը խոշորագույն իրադարձություն էր սովետական ժողովրդի կյանքում:

ՍՍՀՄ նոր սահմանադրության համաձայն վերացավ Անդրկովկասյան Ֆեդերացիան, որն արդեն կատարել էր իր պատմական դերը: Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը դարձան միութենական հանրապետություններ: Միութենական հանրապետություններ դարձան նաև Ղազախական և Կիրգիզական ավտոնոմ հանրապետությունները: Սեյպիստով, ՍՍՀՄ-ը կազմվեց 11 միութենական հանրապետություններից:

Միութենական հանրապետություն դառնալու համար անհրաժեշտ էին որոշակի պայմաններ: Այդ տարիներին Սովետական Հայաստանն արդեն ուներ այդ պայմանները: Նախ, նա ծայրամասային հանրապետություն էր, սահմանակից էր օտար պետություններին, երկրորդ, Սովետական Հայաստանում հայերը մեծամասնություն էին կազմում (1939 թվականի

մարդահամարի տվյալներով՝ 82,8% -ը), երրորդ, ՍՍՀՄ-ն ուներ մեկ միլիոնից ավելի բնակչություն (այն ժամանակ՝ 1,280 հազար):

Հայկական ՍՍՀ ՍՍՀՄ նոր սահմանադրության հիման վրա մշակասահմանադրության վեց Հայկական ՍՍՀ նոր սահմանադրության նախագիծ, որը 1937 թ. փետրվարին դրվեց համաժողովրդական քննարկման: 1937 թ. մարտի 23-ին սովետների IX արտակարգ համագումարը քննարկեց ու հաստատեց Հայկական ՍՍՀ նոր սահմանադրությունը:

Սահմանադրության առաջին գլխում ասված է, Հայկական ՍՍՀ-ն բանվորների և գյուղացիների սոցիալիստական պետություն է, որի քաղաքական հիմքն են կազմում աշխատավորների դեպուտատների սովետները, իսկ տնտեսական հիմքը՝ տնտեսության սոցիալիստական սիստեմը և արտադրության միջոցների սոցիալիստական սեփականությունը: Սահմանադրության մեջ ասված է, որ Հայկական ՍՍՀ պետական իշխանության բարձրագույն օրգանը Հայկական ՍՍՀ Գերագույն սովետն է:

Սովետական սահմանադրությունը բոլոր քաղաքացիների համար պահանջում է ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունք՝ զազանի քվեարկությամբ: Նրա մեջ շարադրված են Հայկական ՍՍՀ քաղաքացիների աշխատանքի, հանգստի, կրթության, սոցիալական պահովության իրավունքները: Նա աշխատավորների համար երաշխավորում է խոսքի, մամուլի, ժողովների, ցույցերի ազատություն: Սովետական սահմանադրության համար խորթ է ազգային և ռասայական խտրականությունը: Բոլոր ազգերն ունեն հավասար իրավունքներ:

Սահմանադրությունը օրենսդրորեն ապահովելով Հայկական ՍՍՀ քաղաքացիների իրավունքները, միաժամանակ նրանց վրա դնում է մի շարք պարտականություններ: Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է կատարել սովետական օրենքները, պահպանել աշխատանքային կարգապահությունը, ազնվորեն վերաբերվել հասարակական պարտքին, հարգել սոցիալիստական համակեցության կանոնները: Աշխատանքը հանդիսանում է աշխատանքի ընդունակ յուրաքանչյուր քաղաքացու պարտականությունն ու պատվի գործը: Իրագործվում է «ով չի աշխատում, նա չի ուտում» սկզբունքը: Սովետական յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է պահպանել հանրային սոցիալիստական սեփականությունը որպես սովետական կարգի սրբազան ու անձեռնմխելի հիմք, որպես հայրենիքի հզորության, աշխատավորների բարեկեցության և կուլտուրական կյանքի աղբյուր:

Ձինվորական ծառայությունը ՍՍՀՄ զինված ուժերի շարքերում բոլոր քաղաքացիների պատվավոր պարտականությունն է, Հայրենիքի պաշտպանությունը՝ Հայկական ՍՍՀ յուրաքանչյուր քաղաքացու սրբ-

բազան պարտքը: «Հայրենիքին դավաճանելը՝ երգումը խախտելը, թըշնամու կողմն անցնելը, պետության ռազմական հղորությունը վնաս հասցնելը, լրտեսությունը, պատժվում է օրենքի ամբողջ խստությամբ, որպես ամենածանր շարագործություն»:

Հայկական ՍՍՀ սովետների IX արտակարգ համագումարը, ելնելով ՍՍՀՄ նոր սահմանադրության 13-րդ հոդվածից, որով սահմանվում է Ադրբեջանական ՍՍՀ, Վրացական ՍՍՀ և Հայկական ՍՍՀ անմիջական մուտքը ՍՍՀՄ մեջ, միաձայն որոշեց վերացնել Անդրկովկասյան Ֆեդերացիան: Համագումարի որոշման մեջ ասված է, որ Անդրկովկասյան Ֆեդերացիան խոշոր դեր խաղաց Անդրկովկասի ժողովուրդների քաղաքական և տնտեսական կյանքում: Ֆեդերացիան ապահովեց Անդրկովկասի ազգությունների եղբայրական բարեկամության ամրապնդումը, նրանց համերաշխությունն ու համագործակցությունը: Ֆեդերացիան ապահովեց սոցիալիզմի հաղթանակը անդրկովկասյան հանրապետություններում: Նույնաման որոշումներ ընդունվեցին նաև Վրացական ՍՍՀ ու Ադրբեջանական ՍՍՀ սովետների համագումարներում:

Այսպիսով, Հայկական ՍՍՀ դարձավ միութենական հանրապետություն: Պատմական այդ ակտը մեծ իրադարձություն էր հայ ժողովրդի կյանքում: Դառնալով ՍՍՀՄ իրավահավասար հանրապետություններից մեկը, Սովետական Հայաստանը քակոխեց իր զարգացման նոր շրջանը՝ սոցիալիզմի վերջնական կառուցումն ավարտելու ժամանակաշրջանը:

ՍՍՀՄ և ՀՍՍՀ Գերագույն սովետների ղեկավարությունները ՍՍՀՄ նոր սահմանադրության հիման վրա 1937 թ. դեկտեմբերի 12-ին տեղի ունեցան ՍՍՀՄ Գերագույն սովետի ընտրություններ, որոնք անցան մեր երկրի աշխատավոր մասսաների աշխատանքային և քաղաքական բուռն վերելքի պայմաններում:

Սովետական Հայաստանի աշխատավորությունը, ՍՍՀՄ բոլոր աշխատավորների հետ միասին, միահամուռ կերպով ձայն տվեց կոմունիստների և անկուսակցականների բոլոր թեկնածուների օգտին: Սովետական Հայաստանից ՍՍՀՄ Գերագույն Սովետի ղեկավար ընտրվեց 29 մարտ, որոնցից 25-ը Ազգությունների սովետում, 4-ը՝ Միության սովետում: Դեպուտատների թվում էին ՍՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի անդամ Անաստաս Միկոյանը, ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանը, ճարտարապետության ակադեմիկոս Կարո Հալաբյանը, Ղափանի անվանի հանքափոր Մինաս Պապյանը, առաջավոր կոլտնտեսուհի Կալիպսե Կարապետյանը, ուսուցչուհի Արուսյակ Խաչիկյանը և ուրիշներ:

1938 թ. հունիսի 12-ին տեղի ունեցան Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի առաջին ընտրությունները: Ընտրություններին մասնակցեց բո-

լոր ընտրողների 99,67%-ը: Կոմունիստների և անկուսակցականների բոլոր թեկնածուների օգտին ձայն տվեց քվեարկությանը մասնակցողների 99,6%-ը: Հայկական ՍՍՀ Գերագույն սովետում ընտրվեց 256 դեպուտատ, որոնք հանրապետության աչքի ընկնող և առաջավոր մարդիկ էին:

1938 թ. հուլիսի 12-ին Երևանում գումարվեց Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի առաջին սեսիան: Սեսիան ընտրեց Գերագույն սովետի մշտական հանձնաժողովներ, նախագահություն, կազմեց Հայկական ՍՍՀ կառավարություն՝ Հայկական ՍՍՀ ժողովրդական կոմիսարների խորհուրդ: Հետագայում՝ 1946 թվականին Հայկական ՍՍՀ ժողովուրդները վերանվանվեց Մինիստրների խորհուրդ: Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ ընտրվեց նախկին բատրակ, հետագայում կոլտնտեսության նախագահ Մացակ Պապյանը, իսկ ժողովուրդի նախագահ՝ հեղափոխական բանվորի որդի Արամ Փիրուզյանը:

Նոր սահմանադրության համաձայն բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների ղեկավարների գյուղական, ավանալին և քաղաքային ու շրջանային սովետները վերակազմվեցին աշխատավորների ղեկավարների սովետների, որոնց ընտրությունները Հայկական ՍՍՀ-ում տեղի ունեցան 1939 թվականի դեկտեմբերին:

Սակայն սահմանադրության կենսագործման ճանապարհին առաջ եկան լուրջ դժվարություններ, որոնք կապված էին Ստալինի անձի պաշտամունքի հետ: Ստալինը խախտում էր կոլեկտիվ ղեկավարության լենինյան նորմաները, հաճախ չէր ունկնդրում արդարացի քննադատության ձայնին, ճանաչված լավագույն կադրերի նկատմամբ թույլ էր տալիս վարչարարություն, բռնություն և այլն: Հատկապես 30-ական թվականների երկրորդ կեսից սկսած մեր երկրում թույլ տրվեցին կուսակցական և սովետական ղեմնկրատիայի, սոցիալիստական օրինականության կոպիտ խախտումներ: 1936—1937 թթ. տարածվեց ապօրինի հետապնդման պրակտիկան: Դրան մեծապես նպաստում էր Ստալինի առաջ քաշած սխալ դրույթը, թե իբր սովետական երկիրը որքան մոտենում է սոցիալիզմին, այնքան դասակարգային պայքարն ավելի է սրվում:

Անհատի պաշտամունքը մեծ վնաս հասցրեց նաև Անդրկովկասի ժողովուրդներին: Օգտվելով Ստալինի հովանավորությունից, քաղաքական ավանտյուրիստ Բերիան իր գործակիցների հետ միասին, որակելով որպես ժողովրդի թշնամիներ, շարքից հանեց կուսակցական ու պետական բազմաթիվ աչքի ընկնող գործիչների, գիտության, գրականության ու արվեստի ականավոր շատ ներկայացուցիչների: 1936 թվականի հուլիսին Բերիայի կամայականության զոհ դարձավ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար, հավատարիմ լենինյան Աղասի Խանջյանը:

1937 թ. ՀԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումը մերկացրեց

Կենտրոնի ղեկավարության կազմում խցկված ջարդարարներին, ժողովրդի իսկական թշնամիներին: Պլենումը ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար ընտրեց Գրիգոր Հարությունյանին:

Ինչ խոսք, անհատի պաշտամունքը ծանր հարված հասցրեց սոցիալիզմի կառուցման գործին: Մեր հաջողությունները շատ ավելին կլինեին, եթե նման վիճակ չստեղծվեր:

XXX Գ Լ Ո Ի Խ

ԿՈՒՆՏՐԱԿՍՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԵՏՍԿԱՍՆ ՀԱՅՍՍՏՍՆՈՒՄ (1920—1940)

Պայքար անգրագիտության և վերացման համար

Մեր երկրում սոցիալիզմի հաղթանակն ապահովելու կարևորագույն պայմաններից մեկը ժողովրդի կուլտուրական վերելքն էր: Վ. Ի. Լենինը կուլտուրական հեղափոխությունը համարում էր կոմունիստական հասարակության կառուցման բաղկացուցիչ մասը:

Կուլտուրական հեղափոխությունն իր առջև դնում էր մի շարք կարևորագույն խնդիրներ: Նրա իրականացումը պահանջում էր իսպառ վերացնել մեծահասակ բնակչության անգրագիտությունն ու կիսագրագիտությունը, աշխատավորության մեջ լայնորեն ծավալել կուլտուրալուսավորական աշխատանք, նրանց դարձնել կուլտուրական, քաղաքականապես գրագետ, դաստիարակել սովետական հայրենասիրության և պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարներով, կազմակերպել աճող սերնդի կրթության և դաստիարակության գործը, ապահովել բարձրագույն դպրոցի, գիտության, գրականության ու արվեստի զարգացումը, աճեցնել իսկական ժողովրդական հայրենասեր մտավորականություն:

Լենինը բազմիցս նշել է, որ անգրագետ երկրում կոմունիստական հասարակարգ կառուցել չի կարելի: «Անգրագետ մարդը քաղաքականությունից դուրս է...», — ասում էր Լենինը 1921 թվականին¹:

Նախասովետական Հայաստանում բնակչության ճնշող մեծամասնությունն անգրագետ էր: Նշելով լենինյան սկզբունքներից, Սովետական իշխանության հաստատման առաջին իսկ օրերից պայքար ծավալվեց անգրագիտության վերացման համար:

ՀՍՍՀ Ժողովրդային 1921 թ. սեպտեմբերի 21-ին հրապարակեց,

Ս. Մյասնիկյանի ստորագրությամբ, դեկրետ «Հայաստանում անգրագիտությունը վերացնելու մասին»: Այդ դեկրետի համաձայն 16—50 տարեկան բոլոր անգրագետ և կիսագրագետ քաղաքացիները պարտավոր էին մայրենի լեզվով գրագիտություն սովորել: Հանրապետության աշխատավորությունը զոհունակությամբ ընդունեց կառավարության այդ դեկրետը և մեծ եռանդով լծվեց նրա կենսագործմանը: Անգրագիտության վերացման գործը կազմակերպելու և ղեկավարելու համար ՀՍՍՀ լուսավորության ժողովրդական կոմիսարիատին կից ստեղծվեց անգրագիտության վերացման արտակարգ հանձնաժողով: Շուտով գլուղներում և քաղաքներում մասսայական կերպով կազմակերպվեցին անգրագիտության վերացման խմբակներ (լիկկայաններ): Մեծահասակների համար հետագայում բացվեցին նաև հանրակրթական դպրոցներ: Շատ անգրագետներ պարապում էին տներում, անհատական կարգով: Անգրագիտության վերացման խմբակներ կազմակերպվեցին նաև աղյակին փոքրամասնությունների համար: 1922—1923 ուս. տարում հանրապետությունում գործում էին անգրագիտության վերացման 316 լիկկայաններ, որտեղ ընդգրկված էր 6400 մարդ:

1923 թվականին ՀՍՍՀ լուսժողկոմատի արտակարգ հանձնաժողովին կից ստեղծվեց «Անգրագիտության վերացմանն օժանդակող ընկերություն», որը 1924 թվականին վերածվեց «Կորչի անգրագիտությունը ընկերություն»:

Շուտով անգրագիտության վերացման գործը համաժողովրդական բնույթ ստացավ: Այդ ասպարեզում մեծ եռանդ ցուցաբերեցին արհմիությունները և կոմերիտիությունը: Պայքարի առաջին գծում էր մասսայական ուսուցչությունը: Կառավարությունը ստեղծում էր բոլոր պայմանները լիկկայանների անխափան աշխատանքի համար:

Կուսակցության և կառավարության ձեռնարկած միջոցառումների շնորհիվ արագորեն աճում էր գրագիտական դպրոցների և նրանցում ընդգրկվածների թիվը: Ժողովրդական տնտեսության վերականգնման վերջում՝ 1925—1926 ուս. տարում, հանրապետության մեջ գործող լիկկայաններում և գրագիտական դպրոցներում սովորում էր մոտ 20 հազար մարդ: Չնայած ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին անգրագիտության և կիսագրագիտության վերացման ուղղությամբ հսկայական աշխատանք էր կատարվել, սակայն անգրագետ-կիսագրագետների թիվը դեռևս մեծ էր:

1926 թվականի մարդահամարի տվյալների համաձայն Սովետական Հայաստանում ապրում էր 16-ից 39 տարեկան 312844 մարդ, որոնց ավելի քան երկու երրորդը անգրագետ էր: Անգրագետ կանանց թիվը երկու անգամ մեծ էր տղամարդկանց թվից: Դրությունը հատկապես անմխիթար էր աղյակին փոքրամասնությունների շրջանում: Օրի-

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 72:

նակ՝ հանրապետության ազրբեջանական բնակչության 92,4%-ը անգրագետ էր: Այդ տեսակետից մեծ տարբերություն կար նաև քաղաքի և գյուղի բնակչության միջև: Օրինակ, եթե քաղաքային բնակչության գրագետների թիվը կազմում էր 51%, ապա գյուղականինը՝ 19,2%:

Վերոհիշյալ տվյալները ցույց են տալիս, որ դեռևս շատ աշխատանք պետք է կատարվեր հանրապետության բնակչության անգրագիտության վերացման ուղղությամբ, մանավանդ այն պատճառով, որ երկիրը թևակոխում էր իր զարգացման նոր էտապը՝ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման, սոցիալիզմի տնտեսական հիմքի կառուցման ժամանակաշրջանը:

1928 թվականի աշնանը սկիզբ առավ մի նոր նախաձեռնություն՝ կուլտուրալը, որի կազմակերպիչները Սարատովի կոմերիտականներն էին: Այդ նոր նախաձեռնության էությունն այն էր, որ անգրագիտության վերացման գործին պետք է մասնակցեին պետական ու հասարակական բոլոր կազմակերպությունները, որը հնարավորություն կտար ավելի լայնորեն ընդարձակելու անգրագիտության վերացման ցանցը:

Մասսայական կոլեկտիվացման հետևանքով 1929 թվականի կեսերից կուլտուրական շինարարության ծանրության կենտրոնը փոխազդրվեց գյուղ: Այդ ժամանակ հանրապետությունում գործող լիկկայանների մոտ 90%-ը գյուղական լիկկայաններն էին: Լայնորեն տարածվեց քաղաքից կուլտուրիզացիայի ուղարկումը գյուղ:

Առաջին հնգամյակի վերջում և երկրորդ հնգամյակում զգալիորեն բարելավվեց անգրագիտության վերացման գործի գրվածքը: 1939 թ. մարդահամարի տվյալներով հանրապետության բնակչության 84%-ն արդեն գրագետ էր, իսկ 1940 թվականին Սովետական Հայաստանը դարձավ համատարած գրագիտության հանրապետություն: Դա հայ ժողովրդի խոշորագույն նվաճումներից մեկն էր կուլտուրական հեղափոխության իրականացման ասպարեզում:

Կուլտուր-լուսավորական աշխատանքը: Հրատարակչական գործը և մամուլը

Կուլտուրական հեղափոխության իրականացման գործում կարևոր դեր էին կատարում կուլտուր-լուսավորական հիմնարկները, հրատարակչությունները և մամուլը: Նրանց հիմնական նպատակն էր բարձրացնել ժողովրդական մասսաների, հատկապես գյուղական բնակչության կուլտուրական մակարդակը, նրանց դաստիարակել կոմունիստական ոգով: Դա չափազանց բարդ և պատասխանատու խնդիր էր: Վ. Ի. Լենինը մեծ նշանակություն էր տալիս մասսաների քաղաքական դաստիարակության գործին, այն համարելով կոմունիզմի կառուցման անհրաժեշտ նախապայմաններից մեկը:

1922 թ. նոյեմբերին Նրևանում բացվեց հանրապետական գրագրանք, որը 1925 թվականին կոչվեց Ա. Մյասնիկյանի անունով: Հան-

րային գրագրանքը մեծ դեր խաղաց հայ ժողովրդի կուլտուրական կյանքում, դառնալով հայ գրքի հավաքման խոշոր կենտրոն: 1925 թվականին գրագրանքն արդեն ուներ 200 հազար գիրք: Տարեցտարի աճում էին նրա գրքային ֆոնդը և ընթերցողների թիվը: Շուտով հանրային գրագրանքը դարձավ Սովետական Միության խոշորագույն գրագրանքներից մեկը: Գրքային հարուստ ֆոնդերով գրագրանքներ ստեղծվեցին նաև պետական համալսարանում, հանրապետության մյուս բուհերում, ինչպես նաև գիտական հիմնարկներում: Հանրապետության մի շարք քաղաքներում և շրջանային կենտրոններում ստեղծվեցին մասսայական գրագրանքներ, որոնց ցանցը զնալով ընդարձակվում էր:

1932 թվականին Հայաստանում գործում էր 388 գրագրանք՝ 332 հազար գրքային ֆոնդով, իսկ 1940 թվականին հանրապետության մասսայական գրագրանքների թիվը հասավ 908-ի: Այդ ժամանակամիջոցում նուսպատկվեց գրքային ֆոնդը:

Մասսաների կոմունիստական դաստիարակության և գիտության զարգացման գործում կարևոր դեր էին կատարում թանգարանները: ՀՍՍՀ Ժողկոմխորհի ղեկընտով 1921 թվականին հիմնվեց Հայաստանի հեղափոխության թանգարանը: 1922 թվականին բացվեց Հայաստանի պետական թանգարանը, որի բաժիններից մի քանիսը հետագայում վերածվեցին ինքնուրույն թանգարանների: Ստեղծվեցին Հայաստանի պատմության, գրական և կերպարվեստի պետական թանգարաններ: 1940 թվականին Հայաստանում արդեն գործում էր 11 թանգարան:

Հանրապետության մեջ լայն աշխատանք ծավալվեց գյուղական ակումբների, խրճիթ-ընթերցարանների և կուլտուր-լուսավորական այլ հիմնարկների ցանցն ընդարձակելու ուղղությամբ: Խրճիթ-ընթերցարանը կուլտուր-քաղաքական աշխատանքի կազմակերպման գլխավոր կենտրոնն էր գյուղում: 1924 թվականին Հայաստանում գործում էր մոտ 200 խրճիթ-ընթերցարան: Սակայն դա չէր բավարարում գյուղում կուլտուր-քաղաքական աշխատանքի ծավալման նվազագույն պահանջները: Գրությունը փոխվեց գյուղի կոլեկտիվացման տարիներին:

30-ական թվականների կեսերից սկսած գյուղում կուլտուր-քաղաքական աշխատանքի մեջ գլխավոր դեր էին խաղում կոլտնտեսային ակումբները: 1940 թվականին հանրապետությունում գործում էր 897 ակումբ, որոնցից 737-ը՝ գյուղերում և շրջկենտրոններում: Ակումբային գործը ծավալվում էր նաև քաղաքներում:

Մեծ աշխատանք կատարվեց հրատարակչական գործը կազմակերպելու ուղղությամբ: 1921 թ. հուլիսին ՀՍՍՀ Ժողկոմխորհի ղեկընտով ստեղծվեց ՀՍՍՀ պետհրատը: 1924 թվականին անվանի նկարիչ Մ. Սարյանի նախագահությամբ կազմակերպվեցին «Գիրք» հրատարակչական ընկերությունը: 30-ական թվականներին հիմնադրվեց Քաղհրատը: Նոր

թափ ու ծավալ ստացավ հայերեն լեզվով դասագրքերի, գեղարվեստական, գիտական ու քաղաքական գրականության հրատարակման գործը: Այդ տարիներին մեծ տպաքանակով հրատարակվեցին ինչպես հայ, ռուս, ՍՍՀՄ մյուս ժողովուրդների, այնպես էլ եվրոպական գրականության նշանավոր ներկայացուցիչների երկերը: Մասսաների կոմունիստական դաստիարակության գործում խոշոր նշանակություն ունեցան մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրների երկերի հայերեն հրատարակությունները: 1933 թվականին լույս տեսավ Կ. Մարքսի «Կապիտալ»-ի առաջին հատորը: 1940 թվականին հանրապետությունում հրատարակվեց 700 անուն գիրք:

Աշխատավորների զաղափարական դաստիարակության գործում մեծ դեր կատարեց պարբերական մամուլը: 1920 թվականի դեկտեմբերի 5-ին երևանում լույս տեսավ Սովետական Հայաստանի առաջին պարբերականը՝ ՀԿ(բ)Կ Կենտկոմի և Հեղկոմի օրգան «Կոմունիստ» օրաթերթը, որը 1921 թվականի մայիսից վերանվանվեց «Նորհրդային Հայաստան» (այժմ՝ «Սովետական Հայաստան»): Շուտով լույս տեսան նաև «Սամկալ», «Ավանգարդ» և բազմաթիվ այլ թերթեր: Թերթեր լույս տեսան նաև զավառային և շրջանային կենտրոններում: Այդ տարիներին հրատարակվեցին նաև մի շարք բուհերի, գործարանների, շինարարական կազմակերպությունների բազմատիրաժ թերթեր:

Սովետական իշխանության առաջին տարիներին սկսեցին թերթեր լույս տեսնել նաև ազգային փոքրամասնությունների լեզուներով՝ ադրբեջաներեն «Ռանչպար» (այժմ՝ «Սովետ էրմանիստանի»), քրդերեն «Ռյա-թազա», ռուսերեն «Կոմունիստ»: 1940 թվականին հանրապետությունում լույս էին տեսնում 80 անուն թերթ և ամսագիր:

Հայերեն պարբերականներ էին լույս տեսնում նաև Սովետական Հայաստանից դուրս՝ Վրաստանում, Ադրբեջանում, ինչպես նաև արտասահմանում: 1920 թվականից սկսած Բաքվում լույս էր տեսնում «Կոմունիստ», 1921 թվականից Թիֆլիսում՝ «Կարմիր աստղ», ապա «Մարտակոչ», «Պրոլետար», հետագայում՝ «Սովետական Վրաստան» և այլ օրաթերթեր:

Սովետական դպրոցի գաղափարումը

Վ. Ի. Լենինը բազմիցս հիշեցնում էր, որ սովետական դպրոցի հիմնական խնդիրն է պատրաստել կոմունիզմի ակտիվ կառուցողներ: Այդ պահանջը հստակորեն շարադրված էր նրա կողմից գրված կուսակցության ծրագրում, որն ընդունվել էր 1919 թվականին ՌԿ(բ)Կ VIII համագումարում: 1920 թվականի հոկտեմբերին, հանդես գալով Ռուսաստանի կոմերիտիության երրորդ համագումարում, Վ. Ի. Լենինն ասում էր. «Ձեր առաջ ծառայած է շինարարության խնդիրը, և դուք կարող եք վճռել այն, միայն տիրապետելով ժամանակակից ամբողջ գիտությանը, կարողանալով կոմունիզմը սերտած պատրաստի ֆորմուլաներից, խոր-

հուրդներից, գեղատոմսերից, առաջադրություններից, ծրագրերից վերածել ձեր անմիջական աշխատանքը միավորող կենդանի գործի, կոմունիզմը դարձնել ձեր գործնական աշխատանքի ուղեցույցը»¹:

Սովետական իշխանության հաստատման առաջին տարիներից ծավալվեց ժողովրդական կրթության գործը: Մեծ աշխատանք էր տարվում հատկապես դպրոցական ցանցի ստեղծման ուղղությամբ: Մի քանի ամիսների ընթացքում Հայաստանում ավելի շատ նոր դպրոցներ բացվեցին, քան նախորդ 100 տարում: Այս բնագավառում ևս շատ դժվարություններ հաղթահարվեցին: Չկային դպրոցական շենքեր, եղածներն էլ գտնվում էին խախլված վիճակում: Չկային բավարար թվով ուսուցչական կադրեր, ուսուցիչների մեծ մասը չէր բավարարում նոր, սովետական դպրոցի պահանջները, չկային ծրագրեր, դասագրքեր, կահավորում և այլն: 1923 թ. դպրոցական ցանցում ընդգրկված էր հանրապետության դպրոցական հասակի երեխաների միայն մեկ քառորդը:

Կուսակցության և կառավարության հոգատարության շնորհիվ շուտով նոր հիմքերի վրա դրվեց մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործը: Զգալի աշխատանք կատարվեց հատկապես ուսուցման նոր, սովետական սիստեմ ստեղծելու ուղղությամբ: Վերանայվեցին հին ծրագրերը, հրատարակվեցին նոր դասագրքեր: 1922 թ. մարտին Հայկական ՍՍՀ ժողովուրդի հեղինակ ընդունեց ուղղադրության սեֆորմի մասին:

20-ական թվականներից սկսած մի շարք միջոցառումներ իրականացվեցին ուսուցչական կադրեր պատրաստելու, նրանց որակը բարձրացնելու նպատակով: Երևանում, Լենինականում, Ստեփանավանում, Վաղարշապատում և այլ վայրերում բացվեցին մանկավարժական տեխնիկումներ: 1924—1926 թվականներին մանկավարժական տեխնիկումներ կազմակերպվեցին նաև Թիֆլիսում և Գյանջայում (Կիրովաբադ)՝ տեղի հայկական դպրոցներն ուսուցիչներով ապահովելու նպատակով: Բարձրագույն կրթությամբ մանկավարժական կադրեր էին պատրաստում Երևանի պետական համալսարանը, Երևանի և Լենինականի մանկավարժական ինստիտուտները:

Չնայած նյութական ծանր պայմաններին, 20-ական թվականներին ծավալվեց դպրոցական շենքերի շինարարությունը: 1921—1922 ուս. տարում Սովետական Հայաստանում գործում էր 506 հանրակրթական դպրոց, որտեղ սովորում էր 47700 աշակերտ: Դաշնակցականների տիրապետության ժամանակ գործում էր միայն 166 դպրոց, որտեղ սովորում էր 18600 աշակերտ: Ժողովրդական տնտեսության վերականգնման ժա-

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 353:

մանակաշրջանի վերջում զգալիորեն աճեց մասսայական դպրոցների թիվը:

Այդ տարիներին հիմնովին վերափոխվեց ամերիկյան կոմիտեի որբանոցներում գտնվող երեխաների դաստիարակության և կրթության գործի դրվածքը: 1924 թվականին ամերիկյան որբանոցներում տեղավորված էին շուրջ 30 հազար որբ երեխաներ, որոնց թիվը աստիճանաբար կըրճատվում էր: 1928 թվականին բոլոր երեխաները աղատագրվեցին ամերիկյան «բարեգործությունից»:

Տարրական (I աստիճանի) և միջնակարգ (II աստիճանի) դպրոցներից բացի, հիմնվեցին նաև միջնակարգ մասնագիտական դպրոցներ՝ տեխնիկումներ, որոնց նպատակն էր առաջին հերթին ժողովրդական տնտեսությանը տալ միջին որակավորման մասնագետներ: Հայաստանի տարբեր վայրերում, առաջին հերթին Երևանում, բացվեցին ինդուստրիալ, գյուղատնտեսական, մանկավարժական, գեղարվեստական, քիմիական, լեռնամետալուրգիական, բժշկական և այլ տեխնիկումներ: 1931—1932 ուս. տարում Հայաստանում գործում էին 64 տեխնիկում և միջնակարգ մասնագիտական ուսումնական այլ հաստատություններ, որտեղ սովորում էր 6700 երիտասարդ:

20-ական թվականներին ստեղծվեցին նոր տիպի դպրոցներ՝ բանվորական ֆակուլտետներ (բանֆակներ), որոնք զգալի զեր կատարեցին արտադրության մեջ աշխատող բանվորներին միջնակարգ կրթություն տալու, ինչպես և բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու գործում: Առաջին բանֆակը բացվեց Երևանում 1923 թվականի հունվարին՝ Երևանի ժողովրդական համալսարանին կից: Նույն տարում բացվեց Ալեքսանդրապոլի բանֆակը: 1930 թվականին Հայաստանում գործում էր 11 բանֆակ, որտեղ սովորում էր 2600 ուսանող: Այդ ժամանակ բանֆակների բնույթը փոխվեց: Նրանք վերակառուցվեցին՝ բոս համապատասխան մասնագիտության (ինդուստրիալ-տեխնիկական, գյուղատնտեսական, հասարակագիտական և այլն):

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը անհրաժեշտաբար պահանջում էր բարելավել կրթության գործը գյուղում: 1924—1925 ուսումնական տարվանից ստեղծվեցին գյուղական երիտասարդության (գյուղերիտ, հետագայում՝ կոլերիտ) յոթնամյա դպրոցներ, որոնք, ընդհանուր գիտելիքներ տալուց բացի, սովորողներին ծանոթացնում էին գյուղատնտեսության հիմունքներին:

Մեծ աշխատանք կատարվեց հանրապետությունում ալրող ազգային փոքրամասնությունների համար դպրոցական ցանց ստեղծելու ուղղությամբ: Հայկական դպրոցներին զուգընթաց բացվեցին ռուսական, ադրբեջանական և քրդական դպրոցներ: 1923 թվականին ՀՍՍՀ լուսավորության ժողովրդական կոմիսարիատին կից ստեղծվեց ազգային

փոքրամասնությունների խորհուրդ, որը կուտուր-լուսավորական լայն աշխատանք ծավալեց ազգային փոքրամասնությունների մեջ: 1929 թվականին ՀՍՍՀ լուսավորումատը հաստատեց քրդական նոր այբուբենը: Քուրդ ժողովրդի կյանքում մեծ իրադարձություն էր 1931 թ. հունվարին աշխարհում միակ քրդական մանկավարժական տեխնիկումի բացումը Երևանում: Գաշնակցականների տիրապետության ժամանակաշրջանում Հայաստանում չէր գործում ազգային փոքրամասնության ոչ մի դպրոց, մինչև 1930—1931 ուս. տարում այդպիսի դպրոցների թիվը հասնում էր 336-ի:

Սովետական դպրոցի կյանքում նշանակալից երևույթ էր պարտադիր ուսուցմանն անցնելը: 1930 թվականի հուլիսի 25-ին ՀամԿ(բ)Կ կենտկոմը որոշում ընդունեց ընդհանուր պարտադիր տարրական ուսուցման մասին:

Պարտադիր ուսուցման իրականացումը կուսակցական ու սովետական կազմակերպությունների կարևորագույն խնդիրներից մեկն էր: Պարտուհին օժանդակելու նպատակով ՀՍՍՀ ժողկոմխորհին կից ըստ ստեղծվեց պարտադիր ուսուցմանն օժանդակող հանրապետական կոմիտե: Նույնանման կոմիտեներ ստեղծվեցին նաև շրջանային ու գյուղական սովետներին կից: Ձեռք առնված միջոցների շնորհիվ տակավին 1930 թվականի վերջերին հանրապետության մեջ պարտուհի ենթակա երեխաների մոտ 90%-ն ընդգրկված էր դպրոցներում, իսկ 1932 թվականին պարտուհի իրագործվեց լիովին:

Պարտադիր տարրական կրթության հաջող իրականացումը պայմաններ ստեղծեց նաև պարտադիր յոթնամյա կրթության համար, որը րադաքներում և բանավաններում սկսեց իրագործվել 1930—1931 ուս. տարվանից, գյուղերում՝ երկրորդ հնգամյակի տարիներին: Կարճ ժամանակամիջոցում աճեց դպրոցական ցանցը: Օրինակ՝ 1937—1938 ուս. տարում Հայաստանում գործում էր տարրական, յոթնամյա և միջնակարգ 1180 դպրոց: Ուշագրավ է, որ այդ ժամանակ ժողովրդական կրթության դարգացման աստիճանով Սովետական Հայաստանը 5,3 անգամ ավելի բարձր էր կանգնած, քան Թուրքիան և 12 անգամ բարձր, քան Իրանը: Թնորոշ է նաև մի այլ փաստ. Հայաստանում սովորողների թվի աճը ավելի բարձր էր, քան ՍՍՀՄ-ի միջինը: Օրինակ՝ ՍՍՀՄ-ում 1938—1939 ուս. տարում յուրաքանչյուր 1000 բնակչին ընկնում էր 200 սովորող, Հայաստանում՝ 263 սովորող: Հայրենական մեծ պատերազմի նախօրյակին, 1940—1941 ուս. տարում, հանրապետության հանրակրթական դպրոցներում սովորում էր 326600 աշակերտ: Լայն թափով առաջ էր գնում դպրոցաշինարարությունը: Երկրորդ հնգամյակի վերջում արդեն կառուցվել էր 823 դպրոցական շենք, որը կազմում էր հանրապետության բոլոր դպրոցական շենքերի մոտ 70%-ը: Մեծ աշխատանք էր կատարվում մանկա-

վարժական կազմերի պատրաստման, դպրոցները ծրագրերով ու դասագրքերով ապահովելու ուղղությամբ:

Սովորողների ուսման որակի բարձրացման և գաղափարական դաստիարակության գործում կարևոր դեր խաղացին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ՍՍՀՄ Ժողկոմխորհի որոշումները: Սովետական դպրոցի կյանքում շրջադարձային կետ հանդիսացավ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1931 թ. սեպտեմբերի 5-ի որոշումը «Տարրական ու միջնակարգ դպրոցի մասին»: Կենտկոմի որոշման մեջ ասված է, որ շնայած ժողովրդական կրթության բնագավառում ձեռք բերված խոշոր նվաճումներին, այնուամենայնիվ, սովետական դպրոցի վիճակը դեռևս չի համապատասխանում այն պահանջներին, որ նրան առաջադրվում են սոցիալիստական շինարարության տվյալ էտապում: Կենտկոմը մերկացրեց «դպրոցի մասացման» հակագիտական տեսությունը և խիստ դատապարտեց ամեն տեսակ մեթոդական պրոֆեսիոնալիզմը դպրոցի ուսումնական աշխատանքում («Դալտոն-պլան», «լաբորատոր-բրիգադային» մեթոդ և այլն): ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1932 թվականի օգոստոսի 25-ի որոշման մեջ քննադատվեցին գործող ծրագրերը և մի շարք միջոցառումներ նշվեցին դպրոցի աշխատանքը բարելավելու ուղղությամբ: ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1936 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ դատապարտվեց մանկաբանական կեղծ գիտությունը, որը սովետական դպրոցին մեծ վնաս էր հասցրել, բացահայտվեց նրա հակամարքսիստական էությունը:

Կուսակցությունն ու կառավարությունը միջոցներ ձեռք առան ոչ միայն դպրոցական նոր շենքեր կառուցելու, այլև դպրոցները լաբորատոր-կաբինետային անհրաժեշտ սարքավորումներով ապահովելու և հատկապես պոլիտեխնիկական կրթությունն իրագործելու ուղղությամբ: Տարեցտարի ավելանում էր մասսայական դպրոցներում աշխատող ուսուցիչների թիվը, բարձրանում էր նրանց որակը: Եթե 1932—1933 ուս. տարում հանրապետության մասսայական դպրոցներում աշխատում էր 4472 ուսուցիչ, ապա 1939—1940 ուս. տարում այդ թիվը հասավ մոտ 11 հազարի:

Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը մշտապես հոգատարություն էին ցուցաբերում մասսայական ուսուցչության նկատմամբ: Երեխաների կոմունիստական դաստիարակության և ուսուցման ասպարեզում մատուցած ծառայությունների համար մի շարք լավագույն ուսուցիչներ պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով: Դեռևս 1930 թվականին Սովետական Հայաստանի կառավարությունը սահմանեց հանրապետության վաստակավոր ուսուցչի կոչում: Այդ կոչմանն առաջինն արժանացավ հնագույն մանկավարժ և ակտիվ հասարակական գործիչ Սիմակ Սահակյանը:

Նախապատերազմյան հնգամյակների տարիներին զգալի չափով

աճեց միջին որակի մասնագիտական կազմեր պատրաստող ուսումնական հաստատությունների ցանցը: 1940 թ. աշնանը ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով ստեղծվեցին պետական աշխատանքային ռեզերվներ: ՄՍՄԸ Ժողկոմխորհին կից կազմակերպվեց Աշխատանքային ռեզերվների վարչություն: Հանրապետությունում շուտով ստեղծվեց ֆաբրիկա-գործարանային ուսուցման դպրոցների, արհեստագործական և երկաթուղային ուսումնարանների լայն ցանց:

Ժողովրդական տնտեսության վերականգնման, նրա հետագա զարգացման, ինչպես և կուլտուրական շինարարության ծավալման համար անհրաժեշտ էին մեծ թվով բարձրորակ մասնագետներ: Այդ հարցը հաջողությամբ կարող էր լուծել միայն բարձրագույն դպրոցը:

Նախասովետական Հայաստանում պայմաններ չկային բարձրագույն ուսումնական հաստատություններ ստեղծելու համար: Միայն գործում էր էջմիածնի Գևորգյան ճեմարանի լսարանական բաժինը, իսկ ինչ վերաբերում է 1920 թվականի հունվարին Ալեքսանդրապոլում բացված համալսարանին, ապա նա փաստորեն չգործեց: Հայ երիտասարդներից շատ քչերին էր հաջողվում բարձրագույն կրթություն ստանալ Ռուսաստանում և Արևմտյան Եվրոպայում: Սովետական իշխանությունը նրանց առջև լայնորեն բացեց բարձրագույն դպրոցի դռները:

Հանրապետության ժողովրդական տնտեսության համար բարձրագույն կրթությամբ մասնագետներ պատրաստելու, ինչպես նաև գիտական միտքը զարգացնելու գործում խոշոր դեր խաղաց Երևանի պետական համալսարանը, որը մինչև 1933 թվականը կոչվում էր ժողովրդական համալսարան: Բարձր գնահատելով նրա դերը, ՄՍՄԸ Ժողկոմխորհի նախագահ Ա. Մյասնիկյանը գրել է. «Մեր կուլտուրայի կենտրոնն է կազմելու պետական համալսարանը Երևանում: Նրա համար միջոցներ չըպետք է խնայել, ինչպես և գրագիտության տարածման համար: Սրանք համարժեք և կենսական մեծություններ են: Որովհետև համալսարանն այն հնոցն է ու լաբորատորիան, որից կենսատու ճառագայթներ են ցրվում դեպի ծայրերը: Գիրն ու ընթերցանությունը տարածելու համար պետք են լուսավոր գլուխներ, որ կտա համալսարանը: Հողի մշակությունը պահանջում է դաշտագետներ, որոնց ստեղծելու է դարձյալ համալսարանը: Արդյունաբերությունն ու արհեստը չեն կարող բարգավաճել առանց ճարտարապետի, որին նույնպես պատրաստելու է համալսարանը: Ընդհանուր կուլտուրայի զարկերակը բանելու է շարունակ և անընդհատ, եթե առողջ պահվի սիրտը: Համալսարանը այդ սիրտն է»:

Երևանի համալսարանն այն ժամանակ ուներ միայն բնագիտական և հասարակագիտական ֆակուլտետներ, իսկ 1921—1922 թթ. նրա ֆակուլտետների թիվն աճեց: Համալսարանի առաջին ռեկտորն էր ակադեմի-

վոր հայագետ Հ. Մանանդյանը: Համալսարանում դասախոսում էին անվանի գիտնականներ Մ. Աբեղյանը, Հ. Աճառյանը, Լեոն, Ա. Տերտրյանը, Ստ. Ղամբարյանը, Պ. Քալանթարյանը, Ա. Տոնյանը, Մ. Թումանյանը, Վ. Արծրունին և ուրիշներ, որոնց մի մասին ՀՍՍՀ լուսժողովատը առաջին անգամ 1925 թվականի դեկտեմբերին շնորհեց պրոֆեսորի կոչում:

Զնայած նյութական սուղ պայմաններին, Հայաստանի կառավարությունը առաջին իսկ օրերից մեծ հոգատարություն ցուցաբերեց համալսարանի կարիքների նկատմամբ: Այդ տեսակետից ուշագրավ են ՀՍՍՀ սովետների IV համագումարում համալսարանի պրոֆեսոր Ստ. Ղամբարյանի ելույթի հետևյալ խոսքերը. «Համալսարանը հիմնվեց այն ժամանակ, երբ դրա համար միջոցներ չկային, դուք վերջին կոպեկները տվեցիք համալսարանին, երբ ամեն մի կոպեկը թանկ էր... Հայոց պատմությունը դա երբեք մոռանալ չի կարող»: Շուտով համալսարանին տրամադրվեց մեծ գումար՝ լաբորատորիաներ, գրականություն և ուսումնական անհրաժեշտ պարագաներ ձեռք բերելու համար: 1922 թվականին համալսարանում ստեղծվեց տպարան, որի շնորհիվ սկիզբ դրվեց բարձրագույն դպրոցի ուսումնական ձեռնարկների և դասագրքերի հրատարակման գործին: Երևանի համալսարանում տարեցտարի աճում էր ուսանողների թիվը: 1921—1922 ուս. տարում այնտեղ սովորում էր 255 ուսանող, 1927—1928 ուս. տարում՝ 1300:

Առաջին հնգամյակի տարիներին Սովետական Հայաստանում կատարվեց բարձրագույն և միջնակարգ կրթության ամբողջ սիստեմի վերակառուցում: Շուտով ստեղծվեցին ժողովրդական տնտեսության պահանջներին համապատասխան ճյուղային բարձրագույն ուսումնական հաստատություններ: 1930 թ. հունիսին ԱՍՖՍՀ կառավարության որոշմամբ Երևանի պետական համալսարանը լիկվիդացվեց: Նրա ֆակուլտետներից ստեղծվեցին ինքնուրույն նոր բուհեր՝ բժշկական, պոլիտեխնիկական, գյուղատնտեսական, մանկավարժական և առևտրակոոպերատիվ: Սակայն կյանքը ցույց տվեց, որ այդ վերակառուցումը սխալ էր: Ուստի 1933 թվականի սեպտեմբերին նորից սկսեց գործել Երևանի պետական համալսարանը, բայց այս անգամ մանկավարժական և առևտրակոոպերատիվ ինստիտուտների բազայի վրա:

Հայ ժողովրդի մշակութային կյանքում խոշոր երևույթ էր երաժրտական բարձրագույն հաստատության՝ Երևանի պետական կոնսերվատորիայի հիմնումը, որը տեղի ունեցավ 1923 թվականին (1957 թվականից՝ Կոմիտասի անվան): Կոնսերվատորիայի առաջին ղեկավարն էր անվանի կոմպոզիտոր, երաժիշտ-մանկավարժ Ռոմանոս Մելիքյանը: 1928 թվականին Երևանում բացվեց հանրապետության երրորդ բուհը՝ Անդրերկրկասյան անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտը: Առաջին

հնգամյակի վերջերին Հայաստանում գործում էր 9 բուհ՝ 3500 ուսանողով՝ 1927—1928 ուս. տարվա 2 բուհի և 1600 ուսանողի դիմաց:

Բարձրագույն դպրոցի աշխատանքի գործուն ծրագիր հանդիսացավ ՍՍՀՄ Ժողովրդական հանրապետության և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1936 թվականի հունիսի 23-ի «Բարձրագույն ուսումնական հաստատությունների աշխատանքի և բարձրագույն դպրոցի ղեկավարման մասին» որոշումը, որն արմատական բեկում մտցրեց բուհական աշխատանքի բոլոր բնագավառներում: Զգալիորեն բարելավվեց նաև ուսանողների գաղափարական-քաղաքական դաստիարակության գործը: 1938 թվականին Հայաստանի բուհերում նույնպես կազմակերպվեցին մարքսիզմ-լենինիզմի ամբիոններ, որոնք մեծ դեր խաղացին ուսանողությանը մարքս-լենինյան տեսությունում գիներև գործում:

Սովետական Հայաստանի բուհերը մինչև առաջին հնգամյակի վերջերք երկրին տվեցին ավելի քան 1500 մասնագետներ, այդ թվում՝ 425 մանկավարժ, 296 բժիշկ, 130 ինժեներ, 324 գյուղատնտես, 93 անասնաբույժ և անասնաբույժ, 252 տնտեսագետ, 11 արվեստի աշխատող: Բարձրորակ կադրերի պատրաստման ուղղությամբ ավելի մեծ աշխատանք կատարվեց երկրորդ հնգամյակի տարիներին: Իրականացնելով կառավարության առաջ քաշած «կադրերն են որոշում ամեն ինչ» լուրնազր, Սովետական Հայաստանի բուհերն այդ ժամանակը շահանում պատրաստեցին երկու անգամ ավելի շատ մասնագետներ, իսկ 20 տարվա ընթացքում այդ թիվը հասավ ավելի քան յոթ հազարի:

1940—1941 ուս. տարում հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում էր ավելի քան 11 հազար ուսանող: Հայաստանից մեծ թվով ուսանողներ սովորում էին նաև Սովետական Միության տարբեր քաղաքներում, որոնց զգալի մասը, ավարտելով այդ քաղաքների բուհերը, վերադառնում էր Հայաստան և իր հարուստ գիտելիքները ի սպաս դնում սոցիալիստական շինարարության գործին:

Այսպիսով, կոմունիստական կուսակցության ազգային ճիշտ քաղաքականության շնորհիվ մեր երկրում հաջողությամբ էր լուծվում ազգային կադրերի պատրաստման պրոբլեմը: Սովետական Հայաստանում ստեղծված ազգային նոր մտավորականությունը հսկայական դեր խաղաց սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում:

Սովետական Հայաստանում կուլտուրական հեղափոխության խոշորագույն նվաճումներից մեկը գիտության զարգացումն էր: Նախասովետական Հայաստանում չկային գիտահետազոտական հիմնարկներ, եթե չհաշվենք էջմիածնի մատենադարանը, որից օգտվում էին շատ փոքր թվով գիտնականներ: Հայ գիտնականներ կային աշխարհի շատ երկրներում, սակայն

Գիտության զարգացումը

նրանք զրկված էին բուն հայրենիքում մշտապես աշխատելու և ստեղծագործելու հնարավորությունից: Միայն սովետական հասարակարգի պայմաններում հայ ժողովուրդը հնարավորություն ունեցավ անկաշկանդ կերպով զարգացնելու իր մտավոր կարողությունները, իր գիտական-ստեղծագործական ուժերը:

1921 թվականի փետրվարին Հայաստանի Հեղկոմի գեկրետով էջմիածնի մատենադարանի և թանգարանի բազայի վրա հիմնադրվեց Հայաստանի կուլտուր-պատմական ինստիտուտը, որը շուտով վերանվանվեց Հայաստանի գիտական ինստիտուտ: Դա առաջին գիտահետազոտական հիմնարկն էր Սովետական Հայաստանում: Նորաստեղծ այդ ինստիտուտը 1921—1922 թթ. հրատարակեց հայագիտական մի շարք աշխատություններ և ձեռնամուխ եղավ ձեռագրական ֆոնդը հարստացնելու գործին:

Կառավարության որոշմամբ 1939 թ. Մատենադարանը էջմիածնից տեղափոխվեց Երևան՝ գործելով որպես ՀՍՍՀ Ժողկոմխորհին կից պետական ձեռագրատուն: Մատենադարանը մեր ժողովրդի բազմադարյան մշակույթի հարուստ գանձարանն է, ուր պահվում են տասնյակ հազարավոր հայերեն հին ձեռագրեր, արխիվային փաստաթղթեր, մեծ քանակությամբ հնատիպ գրքեր, բազմաթիվ հին թերթեր և ամսագրեր: Մատենադարանի ձեռագրերում կան ինչպես զուտ պատմության, այնպես էլ փիլիսոփայության, իրավունքի, տիեզերագիտության, բժշկության, արվեստի, գեղարվեստական գրականության և արվեստի համաշխարհային արժեք ներկայացնող հնագույն հուշարձաններ: Դրանցից շատերը արժեքավոր են ոչ միայն հայ ժողովրդի, այլև Հին Աշխարհի և Մերձավոր Արևելքի ժողովուրդների պատմության գիտական ուսումնասիրության համար: Այնտեղ պահվում են նաև հին հունական, ասորական, վրացական, արաբական և այլ ժողովուրդների գիտնականների ու բանաստեղծների հնագույն ու հազվագյուտ թարգմանությունների ձեռագրեր, որոնցից մի քանիսի բնագրերը չեն պահպանվել:

1925 թվականին Երևանում բացվեց ՀՍՍՀ գիտության ու արվեստի ինստիտուտը, որը 1930 թվականին վերածվեց ՀՍՍՀ գիտությունների ինստիտուտի: 30-ական թվականներին Հայաստանում ստեղծվեցին նաև գիտահետազոտական այլ հաստատություններ՝ մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտ, որը կազմակերպվեց հիմնականում գիտությունների ինստիտուտի բազայի վրա, նյութական կուլտուրայի պատմության ինստիտուտ, ապա սրանց բազայի վրա կազմակերպված պատմության ու գրականության ինստիտուտ և այլն: Լայն գործունեություն ծավալեց Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ինստիտուտը (Կուսպատ): Բեղմնավոր աշխատանք էին կատարում գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման, կառուցվածքների, կիրառական հանրաբա-

նություն, բուսաբանության, տրոպիկական, ֆիզիոթերապիայի ինստիտուտները: 1933 թվականին Սովետական Հայաստանում գործում էին 39 գիտահետազոտական հիմնարկներ:

1935 թ. փետրվարին Երևանում հիմնվեց ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի անդրկովկասյան ֆիլիալի հայկական բաժանմունք: Նույն տարվա հուլիսին հիմնադրվեց ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալ (Արմֆան), որի առաջին նախագահն էր նշանավոր բնագետ-երկրաբան, ակադեմիկոս Ֆ. Լեհնսոն-Լեսսինգը: 1938 թվականի սկզբներին Արմֆանի նախագահ նշանակվեց ականավոր արևելագետ, ակադեմիկոս Հովսեփ Օրբելին:

Սովետական Հայաստանի գիտնականների առաջնահերթ խնդիրն էր՝ լուծել հանրապետության ժողովրդական տնտեսության և կուլտուրական շինարարության կարևոր պրոբլեմները, գիտությունն ի սպաս դնել հանրապետության արտադրողական ուժերի զարգացման գործին: Օրինակ, պրոֆեսոր Ստ. Ղամբարյանը 30-ական թվականներին գիտահետազոտական եռանդուն աշխատանք էր կատարում օրգանական քիմիայի բնագավառում: Նրա և աշխատակիցների գիտական քրտնաջան պրպրտումների արդյունք հանդիսացավ սինթետիկ կաուչուկի արտադրությունը, որը ժողովրդատնտեսական խոշոր նշանակություն ունեցավ ոչ միայն հանրապետության, այլ ամբողջ Միության համար: Հայ նշանավոր ինժեներ-էներգետիկ Հ. Տեր-Աստվածատրյանը զլխավորում էր Հայաստանի հիդրոտեխնիկական շինարարությունը, իր շուրջը համախորհրդով հանրապետության լավագույն հիդրոտեխնիկ-շինարարներին: Կիրառական հանրաբանության գծով լայն աշխատանք էր ծավալել երկրաբան Հովհ. Կարապետյանը: 1925 թվականին հայ գիտնական Հովհաննես Աղամյանը աշխարհում առաջինը ստեղծեց և մեծ հաջողությամբ Երևանում ցուցադրեց եռագույն հեռուստատեսության և լուսահեռադրության սարքը:

Հայտնի է, որ անցյալում հայ գիտնականները հնարավորություն են ունեցել ամենից շատ հայագիտությամբ զբաղվելու, սակայն այն զարգացել է հայրենի երկրից դուրս: Սովետական կարգերի հաստատումից հետո հայագիտության կենտրոն դարձավ մայր հայրենիք՝ Սովետական Հայաստանը, որտեղ իր բեղմնավոր գիտական աշխատանքը ծավալեց հայագետների մի փայլուն համաստեղություն: Հին Հայաստանի պատմության վերաբերյալ իր արժեքավոր աշխատություններով Հ. Մանանդյանը մեծ ծառայություններ մատուցեց սովետական պատմագիտության զարգացման գործին: 1939 թվականին նա ընտրվեց ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ: Հայ պատմագրության վաստակաշատ մշակներից էր պրոֆ. Լեոն Առաքել Բաբախանյանը, որը այդ տարիներին նոր աշխատություններ գրեց: Այդ աշխատություններում

նա մեր ժողովրդի պատմության մի շարք հարցեր, ցավոք, սխալ մեկնաբանեց: 1926 թվականից Երևանի պետական համալսարանը սկսեց հրատարակել հռչակավոր լեզվաբան Հ. Աճառյանի բազմահատոր «Հայերեն արմատական բառարանը», որն ունի բացառիկ գիտական արժեք: Հայ հին գրականության պատմության հետազոտության բնագավառում աչքի ընկնող դեր խաղաց ակնանավոր հայագետ Մ. Աբեղյանը: Նա Կ. Մեյիթ-Օհանջանյանի հետ մշակեց ու հրատարակեց «Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք տեքստը: Մեծ է հայ ճարտարապետության պատմության տաղանդավոր հետազոտող Թ. Թորամանյանի վաստակը: Նրա ջանքերի շնորհիվ վերականգնվեց միջնադարյան հայ ճարտարապետության հուշակապ կոթող Զվարթնոց տաճարի հատակագիծը:

Պետք է նշել, որ Սովետական Հայաստանում գիտության զարգացմանը տարբեր ժամանակներում մեծ շահով նպաստել են Սովետական Միության այնպիսի ակնանավոր գիտնականներ, ինչպիսիք են Ն. Մառը, Ի. Մեղանյանը, Վ. Կոմարովը, Ֆ. Լեինսոն-Լեսսինգը, Ն. Վավրիլովը, Կ. Պաֆենհոլցը, Բ. Պրոտոզևսկին և ուրիշներ:

Սովետաճայ գրականության զարգացումը

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո սկսվեց հայ բազմադարյան գրականության իսկական վերածնունդը: Սովետական իշխանության տարածումը նպաստավոր պայմաններ ստեղծեց նրա աննախընթաց ծաղկման համար:

1921 թվականին, պատասխանելով Ավ. Իսահակյանի նամակին, Հովհ. Թումանյանը գրել է. «Քեզ պետք է ասեմ, որ մեր այժմյան կանավարությունը շատ ավելի լավն է, քան կարող ես երևակայել: Մանավանդ գրականությունն ու գեղարվեստը երբեք էսքան ուշադրության առարկա չեն եղած մեր աշխարհքում: Տալիս են ամեն հարմարություն ու հնարավորություն: Արի՛: Արի՛, Ավո ջան»:

Տարբեր երկրներում ցրված հայ գրողները, շնչին բացառությամբ, իրենց հայացքն ուղղեցին դեպի Սովետական Հայաստան, դեպի ամբողջ աշխարհում սփռված հայության մայր հայրենիքը: Նրանք ամբողջ հոգով ողջունեցին սովետական հասարակարգի հաղթանակը և, քաղաքականապես ճիշտ կողմնորոշվելով, որոշեցին ակտիվորեն լծվել նոր, սովետական գրականության ստեղծման գործին:

Սովետահայ գրականության զարգացման ուղին ոտք գրին գեղարվեստական խոսքի ակնանավոր վարպետներ Հովհաննես Թումանյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Նար-Դոսը, Դերենիկ Դեմիրճյանը, Միքայիլ Մանվելյանը, Ստեփան Զորյանը, Վահան Թոթովենցը և ուրիշներ:

Սովետահայ գրականության նոր էջեր գրեցին հայ պրոլետարական գրականության ներկայացուցիչները՝ նրա հիմնադիր Հակոբ Հակոբյանը, Շուշանիկ Կուրդինյանը, Մովսես Արազին և ուրիշներ:

Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո իր տաղանդով փայլեց բանաստեղծ Եղիշ Չարենցը: Այդ տարիներին գրականության մեջ աչքի ընկավ արթնացող Արևելքի երգիչ Ազատ Վշտունին:

20-ական թվականներին ասպարեզ մտավ գրական նոր սերունդը՝ Ակսել Բակունցը, Նաիրի Զարյանը, Վահրամ Ալազանը, Գուրգեն Մահարին, Մկրտիչ Արմենը, Գեղամ Սարյանը, Հմայակ Սիրասը և ուրիշներ:

Սովետահայ գրականության զարգացման գործում նշանակալից դեր խաղաց հայ մարքսիստական գրաքննադատությունը, որի լավագույն ներկայացուցիչներն էին Ալեքսանդր Մյասնիկյանը, Հայկ Գյուլիբեկյանը, Պողոս Մակինցյանը, Արտաշես Կարինյանը և ուրիշներ: Հայ գրաքննադատության բնագավառում աչքի ընկնող դեր խաղացին նաև Արսեն Տերտերյանը, Հարություն Սուրխավյանը, Յուրակ Խանզադյանը, Սիմոն Հակոբյանը և ուրիշներ:

Այդ տարիներին Հայաստանում ստեղծվեցին գրական մի շարք կազմակերպություններ, խմբակներ, որոնց մեջ գրական պայքար էր մղվում նոր, սովետահայ գրականության ստեղծման հարցերի շուրջը: 1921 թ. դեկտեմբերին Երևանում կազմակերպվեց գրական առաջին խմբակը՝ «Հայ գեղարվեստական գրականության աշխատավորների միություն» անունով: Միության մեջ մտնում էին Յ. Խանզադյանը, Պ. Մակինցյանը, Հ. Սուրխավյանը և ուրիշներ: Թիֆլիսում ստեղծվել էր «Հայ գրչի մշակների ընկերություն»: Մեկ տարի հետո, 1922 թվականի դեկտեմբերին, Երևանում հիմնադրվեց «Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիա», որի վարչության նախագահ ընտրվեց Ա. Վշտունին: 1922 թվականի հունվարին հրապարակվեց «Երեքի» (Ե. Չարենց, Գ. Աբով, Ա. Վշտունի) դեկլարացիան, որը, մի շարք ճիշտ հարցադրումներով հանդերձ, ժխտում էր անցյալի գրական ժառանգության օգտագործման անհրաժեշտությունը: 1925 թվականի նոյեմբերին ստեղծվեց Հայաստանի պրոլետարական գրողների «Նոյեմբեր» միությունը Ե. Չարենցի դեկլարությամբ:

Կոմունիստական կուսակցությունը, առաջնակարգ նշանակություն տալով գրականության հարցերին, աշխատում էր ճիշտ ուղղություն տալ նրան: Այս տեսակետից կարևոր նշանակություն ունեցավ ՌԿ(Բ)Կ Կենտկոմի 1925 թ. հունիսի 18-ի «Կուսակցության քաղաքականությունը գեղարվեստական գրականության բնագավառում» որոշումը: Կուսակցությունը գրողների առջև խնդիր դրեց՝ ազնվորեն ծառայել պրոլետարական գաղափարախոսությանը, լինել անհաշտ դասակարգային թշնամու նրկատմամբ, անողոք պայքար մղել բուրժուական գաղափարախոսության մնացորդների դեմ: 1926 թվականի հունիսին հրապարակվեց նաև ՀԿ(Բ)Կ Կենտկոմի «Հայաստանի կոմկուսի քաղաքականությունը գեղարվեստական գրականության ասպարեզում» որոշումը: Թեև Կենտկոմի վերահիշ-

յալ որոշումը հնարավոր համարեց գրական երկու կազմակերպություններին՝ «Պրոլետարական գրողների ասոցիացիա»-յի և «Նոյեմբեր» միութեան ղեկավարները, սակայն շուտով դրանք միավորվեցին, ստեղծվեց «Հայաստանի պրոլետարական գրողների միություն»։ Մեկ տարի հետո կազմակերպվեց «Հայաստանի աշխատավորական գրողների միություն», որի վարչության նախագահ ընտրվեց Գ. Գեմիրճյանը։ Այս կազմակերպության մեջ մտան Ստ. Զորյանը, Մ. Մանվելյանը և ուրիշներ, այսպես կոչված՝ «ուղեկիցները»։ 1929 թվականին գրական այդ կազմակերպությունները միավորվեցին, և ստեղծվեց «Հայաստանի խորհրդային գրողների ֆեդերացիա»։

Չնայած գրական հարցերի շուրջը եղած տարածայնություններին, 20-ական թվականներին սովետահայ գրականությունն ունեցավ ստեղծագործական մեծ նվաճումներ։ Սովետահայ գրողներն ստեղծեցին ժողովրդի ազգային վերածնունդը, սոցիալիստական շինարարությունը, սովետական հայրենասիրությունը, պրոլետարական ինտերնացիոնալիզմը, ժողովուրդների բարեկամությունը, հայ ժողովրդի հերոսական անցյալը պատկերող և այլ թեմաներով գեղարվեստական բարձրարժեք ստեղծագործություններ։

Այդ տարիներին եղիշե Զարենցը, որը դեռևս քաղաքացիական կռիվների ժամանակ գրել էր «Ամբոխները խելագարված» նշանավոր պոեմը, գրեց մի շարք նոր երկեր, ինչպես ռազիոպոեմները, «Ամենապոեմը», «Ես իմ անուշ Հայաստանի» և հայրենասիրական այլ բանաստեղծությունների հայտնի շարքը, «Խըմբապետ Շավարշը» սատիրական պոեմը, «Երկիր Նաիրի» վեպը և նշանավոր լենինյան բալլադները։ Ուշագրավ են Ա. Վշտունու արթնացող Արևելքին նվիրված 20-ական թվականների բանաստեղծություններն ու պոեմները, որոնք լույս տեսան «Նոր Արևելք», «Սպայմնամե» և «Արևելքը հուր է հիմա» ժողովածուներով։

Հարուստ է հատկապես այդ տարիների արձակը։ Սովետահայ արձակի լավագույն երկերից են Ստ. Զորյանի «Հեղկոմի նախագահը» և «Գրադարանի աղջիկը» վիպակները, որոնց մեջ նկարագրված է սովետական կարգերի հաստատումը Հայաստանում։ Հայտնի են Մ. Արագու «Ընկեր Մուկուլը» պատմվածքը, որն արժանացել է Մ. Գորկու գրական գնահատականին, Ա. Բակունցի «Մթնածոր» պատմվածքների շարքը, որը պատկերում է հայ գյուղը, Գ. Գեմիրճյանի «Մանրթներ», «Նրանց ժպիտը» պատմվածքների ժողովածուները և «Քաջ Նապար» կատակերգությունը։

Սովետահայ գրականության զարգացման գործին մեծ ծառայություն մատուցեցին հայ կլասիկներ Ավ. Իսահակյանը և Ա. Շիրվանզադեն, որոնք 1926 թվականին արտասահմանից հայրենիք վերադարձան։

«Մեր գրականությունն ու կուլտուրան, — իր վերադարձի օրերին ասել է Շիրվանզադեն, — պիտի զարգանան Խորհրդային Հայաստանի սահմաններում, որովհետև դրան նպաստում և օգնում է Խորհրդային կառավարությունը, որը ժողովրդի մեջ է քաշում բոլոր գրականագետներին և արվեստագետներին։ Այդ երևույթը ինձ չափազանց շատ է ուրախացնում, և ես մեկն եմ այն գրականագետներից, որ ողջունելով կառավարության այդ քաշը, եկել եմ ուժերիս չափով այդ ուղղությամբ աշխատելու»։ Հայրենիքում Ա. Շիրվանզադեն գրեց «Մորգանի խնամին» նշանավոր քաղաքական կատակերգությունը, իսկ ավելի ուշ՝ «Կյանքի բովից» հուշերը։ «Հայ աշխատավոր ժողովրդի ֆիզիկական գոյությունն ու կուլտուրական ապահովությունը, — ասել է Ավ. Իսահակյանը, — հնարավոր է միայն խորհրդային երկրի ու ռուսական մեծ ժողովրդի հետ։ Ընդունելով այդ փաստը, վերադարձա իմ ուժերի չափ աշխատելու և իմ տուրքը տալու Հայաստանի վերելին»։ Ցտար ափերից հայրենիք վերադառնալով, նշանավոր բանաստեղծը գրեց հայրենասիրական բանաստեղծությունների շարքը, «Սասմա Մհեր» պոեմի հայտնի վերջերգը և այլ ստեղծագործություններ։

30-ական թվականներին սովետահայ գրականության զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ Հայաստանի գրական-գեղարվեստական կազմակերպությունների նոր վերակառուցումը։ Ելնելով ՀամԿ(բ)Կ Կենտկոմի որոշումից, 1932 թվականի ապրիլին ՀԿ(բ)Կ Կենտկոմի որոշմամբ Հայաստանում, ստեղծվեց մեկ միասնական գրական կազմակերպություն՝ Հայաստանի սովետական գրողների միություն։

1934 թվականի օգոստոսին Երևանում տեղի ունեցան Հայաստանի սովետական գրողների, իսկ Մոսկվայում՝ ՍՍՀՄ սովետական գրողների առաջին համագումարները, որոնք խոշոր նշանակություն ունեցան սովետական գրականության հետագա զարգացման համար։

Սովետահայ գրականության առաջընթացն անխզելիորեն կապված էր ամբողջ սովետական գրականության զարգացման հետ։ Այն տեղի էր ունենում ռուս գրականության և սովետական մյուս ժողովուրդների գրականությունների փոխազդեցության և փոխհարստացման պայմաններում։ Սովետահայ գրականության զարգացման վրա բարերար ազդեցություն էին գործում ռուս սովետական գրականության այնպիսի ականավոր դեմքերի ստեղծագործությունները, ինչպիսիք էին Մ. Գորկին, Վ. Մալախովսկին, Մ. Շոլոխովը, Ա. Տոլստոյը, Ա. Ֆադեևը, Ն. Տիխոնովը և ուրիշներ։ Տարեցտարի ավելի էին ամրապնդվում սովետահայ գրականության կապերը եղբայրական մյուս ժողովուրդների գրականությունների, ինչպես և արտասահմանյան հեղափոխական գրողների հետ։

30-ական թվականներին նոր գործեր ստեղծեց սովետահայ պոեզիայի ականավոր ներկայացուցիչ Հ. Հակոբյանը։ Ստեղծագործական նոր

նվաճումներ ունեցավ սովետահայ պոեզիայի մեծ վարպետ Ե. Չարենցը: «Չարենցը հոկտեմբերյան սոցիալիստական էպոխայի ամենամեծ բանաստեղծն է հայ գրականության մեջ» — ասել է Ա.վ. Իսահակյանը: 1930 թ. լույս տեսավ նրա «էպիքական լուսաբաց» բանաստեղծությունների ժողովածուն, որը, որպես սոցիալիստական ռեալիզմի լավագույն կոթող, վիթխարի ազդեցություն թողեց սովետահայ պոեզիայի և առհասարակ մեր ամբողջ գրականության վրա: Չարենցը խորապես կապված էր իր դարի հետ: «էպիքական լուսաբաց»-ում նա գրել է.

Եվ կերպեմ կրկին:— Եվ ոչ մի ժանիք
Ինձ չի բաժանի լեռնինյան դարից,
Ինչպես ոչ մի ուժ ինձ չի բաժանի
Իմ շունդալից, պայծառ քնարից...

Չարենցի ստեղծագործական զարգացման նոր փուլը նշանավորվեց նրա «Գիրք ճանապարհի» ժողովածուի հրատարակմամբ (1933 թ.), որի մեջ զետեղված պոեմներն ու բանաստեղծությունները գրված են զեղարվեստական մեծ վարպետությամբ, պատմափիլիսոփայական ներհուն մտահայեցողությամբ: Սակայն դրանցից մի քանիսը՝ «Պատմության քառուղիներով», «Մահվան տեսիլ» պոեմները զերծ չեն նաև սայթաքումներից:

30-ական թվականների սովետահայ պոեզիայի նշանավոր երկերից է ն. Չարյանի «Ռուշանի քարափը» պոեմը, որի մեջ պատկերված է գյուղի կոլեկտիվացումը: Նոր երկերով հանդես եկան Ա. Վշտունին, Գ. Սարյանը, Վ. Ալազանը, Վ. Նորենցը, Սարմենը և ուրիշներ:

Սովետահայ գրականությունը հարստացավ նաև արձակ երկերով: Գեղագետի վարպետ գրող է գրված Ա. Բակունցի պատմվածքները, որոնք լույս տեսան 1934 թվականին «Սև ցլերի սերմնացանը» ժողովածուում: Մամուլում հատվածներ հրատարակվեցին Ա. Բակունցի «Նաչատուր Աբովյան» անավարտ պատմավեպից, որի մեջ հեղինակը, հակառակ հայ մեծ լուսավորչի նկատմամբ այն ժամանակվա գոհճիկ սոցիոլոգիական մոտեցմանը, փորձեց ճիշտ մեկնաբանել նրա գործունեությունը:

Այդ ժամանակաշրջանում են գրված Ստ. Չորյանի «Մի կյանքի պատմություն» վեպը, Մ. Արմենի «Հեղինար աղբյուր» պատմվածքը, Գ. Մահարու «Մանկություն» և «Պատանեկություն» վիպակները: Գյուղի սոցիալիստական վերակառուցումը ռեալիստորեն արտացոլված է ն. Չարյանի «Հացավան» վեպում:

Մեծ զարգացում ապրեց նաև սովետահայ դրամատուրգիան: Հիշատակության արժանի են Գ. Գեորգիանի «Երկիր հայրենի» պատմահայրենասիրական դրաման, որի մեջ պատկերված է XI դարում հայ

ժողովրդի մղած պայքարը իր անկախության համար, Վ. Վաղարշյանի «Օղակում», Ա. Գուլակյանի «Արշալույսին» պիեսները՝ նվիրված սովետական կարգերի հաստատման համար հայ ժողովրդի մղած պայքարին, Մ. Զանանի «Շահնամե» դրաման և այլն:

Սակայն շատ ավելի մեծ կլինեին սովետահայ գրականության ըստեղծագործական նվաճումները, եթե անհատի պաշտամունքի տարիներին թույլ տրված կամայականությունների զոհ չդառնային այնպիսի ականավոր գրողներ ու գրականագետներ, ինչպիսիք էին Ե. Չարենցը, Ա. Բակունցը, Զ. Եսայանը, Վ. Թոթովենցը, Մ. Զանանը, Պ. Մակինցյանը, Հ. Սուրխաթյանը, Մ. Հակոբյանը, ծանր հետապնդումների չենթարկվեին Վ. Ալազանը, Գ. Մահարին, Մ. Արմենը, Վ. Նորենցը և ուրիշներ:

Հայ ժողովրդի մշակութային կյանքում խոշոր իրադարձություն էր «Սասունցի Դավիթ» էպոսի հազարամյակի տոնակատարությունը, որը վերածվեց ՍՍՀՄ ժողովուրդների մշակույթի մեծ տոնի:

Այդ օրերին հանրապետության մայրաքաղաք էին ժամանել սովետական ականավոր գրողներ Ա. Ֆադեևը, Պ. Տիլինան, Ա. Նովիկով-Պրիբոյը և ուրիշներ: Տոնի առթիվ Երևանում տեղ են ունենում ՍՍՀՄ Գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի՝ Արմֆանի գիտական նստաշրջանը, ՍՍՀՄ Գրողների միության վարչության հոբելյանական պլենումը, հանրապետական հոբելյանական հանդիսավոր նիստ և այլն: Լույս է տեսնում «Սասունցի Դավիթ» էպոսի ակադեմիական հրատարակությունը հայերեն, ռուսերեն, վրացերեն, ադրբեջաներեն, ուզբեկերեն, ուկրաիներեն լեզուներով: «Սովետական մշակույթի միջոցով» — ասված է «Պրավդա» թերթի առաջնորդող հոդվածում, — «Սասունցի Դավիթը» մըտնում է համաշխարհային մշակույթի ոլորտի մեջ և դառնում մարդկության հերոսական մեծ էպոսի մի մասը»:

Հայ գրականության նվաճումների վառ ցուցադրումն էր 1941 թ. մայիսին Մոսկվայում տեղի ունեցած հայ գրականության տասնօրյակը, որի ընթացքում Մոսկվայի գրական հասարակայնությունն ավելի մոտիկից ծանոթացավ հայ գրողների և նրանց ստեղծագործությունների հետ: Տասնօրյակի առթիվ կազմակերպված երեկույթներում հայ գրականության զարգացման մասին զեկուցումներով ու ճառերով հանդես եկան սովետական անվանի գրողներ Ա. Ֆադեևը, Ալ. Տոլստոյը, Վ. Վիշնևսկին, Լեբեդև-Վոմաչը, ակադեմիկոս Բ. Գրեկովը, պրոֆ. Վ. Կիրպոտինը, ինչպես նաև Ա.վ. Իսահակյանը, Հ. Օրբելին և րիշներ:

Սովետական իշխանությունը նպաստավոր պայմաններ ստեղծեց նաև սովետահայ արվեստի զարգացման համար:

Չնայած հայ թատրոնն ունի երկուհարյուրամյա պատմություն,

բայց նա Հայաստանում ծաղկեց միայն սովետական կարգեր հաստատվելուց հետո: Նախասովետական Հայաստանում մշտական գործող թատրոն գոյություն չուներ: Հայ դերասանները և թատերական խմբերը երբեմն շրջում էին բաղաբից բաղաբ, գյուղից գյուղ և ներկայացումներ կազմակերպում հայ բնակչության համար:

1918—1920 թվականներին Սովետական Ռուսաստանի մի շարք հայաբնակ բաղաբներում՝ Պյատիգորսկում, Կրասնոդարում, Դոնի Ռոստովում, Ստավրոպոլում Հայկական գործերի կոմիսարիատի ջանքերով կազմակերպվեցին թատերական խմբեր: 1919 թվականից Մոսկվայում սկսեց գործել հայկական դրամատիկական ստուդիան, որը մեծ դեր կատարեց հայ թատերական կարգեր պատրաստելու գործում: Հիշատակության արժանի են տաղանդավոր ռեժիսորներ Եվգենի Վախթանգովի և Ռուբեն Սիմոնովի կատարած բեղնավոր աշխատանքները: Ստուդիայի աշխատանքները շարունակվում էին մինչև Հայրենական մեծ պատերազմի տարիները:

Սովետական Հայաստանում թատերական առաջին մեծ օջախը Երևանի պետական դրամատիկական թատրոնն էր, որը բացվեց 1922 թ. հունվարին «Պեպո» պիեսի բեմադրությամբ: 1937 թվականին թատրոնը կոչվեց հայ մեծ դրամատուրգ Գ. Սունդուկյանի անունով: Թատրոնն անցավ ստեղծագործական փայլուն ուղի: Նա կարճ ժամանակամիջոցում իր շուրջը համախմբեց տարբեր վայրերում ցրված հայ շնորհալի դերասաններին՝ Վահրամ Փափազյանին, Հովհաննես Աբելյանին, Հասմիկ Հակոբյանին, Միքայել Մանվելյանին, Արուս Ոսկանյանին, Գրիգոր Ավետյանին, Իսահակ Ալիխանյանին, Հրաչյա Ներսիսյանին և ուրիշներ: Թատրոնի առաջին գլխավոր ռեժիսորն էր Լևոն Քալանթարը: Երևանի պետական թատրոնում բեմադրվում էին ինչպես հայ դրամատուրգներ Գ. Սունդուկյանի, Ա. Շիրվանզադեի, Գ. Գեմիրճյանի, այնպես էլ ռուսական և եվրոպական դրամատուրգների գործերը:

1928 թվականին Լենինականում հիմնադրվեց երկրորդ դրամատիկական թատրոնը, որը հետո կոչվեց Ա. Մոսկվանի անունով: Հաջորդ տարին հիմնվեց Երևանի Ա. Միկոյանի անվան պատանի հանդիսատեսի թատրոնը: 1937 թ. Երևանում բացվեց Ստանիսլավսկու անվան ռուսական պետական թատրոնը: Երևանում գործում էին Զ. Զաքարյի անվան ադրբեջանական, իսկ Ապարանում՝ քրդական թատրոնները: Հաջողությամբ էր գործում նաև Ամոն Խարազյանի գլխավորած պետական գյուղըջրիկ թատրոնը, որը հիմնադրվել էր 1922 թվականին: 1940 թվականին Հայաստանում գործում էր 27 թատրոն: Արդյունավետ գործունեություն էին ծավալել Քիֆլիսի, Բաքվի, Լեոնային Ղարաբաղի և այլ վայրերի հայկական թատրոնները, որոնք փաստորեն ստեղծվել էին սովետական իշխանության տարիներին:

Կուլտուրական հեղափոխության իրականացման գործում իր արժանի տեղն է գրավում նաև Հայաստանի կինեմատոգրաֆիան, որն ամբողջովին սովետական կարգերի ծնունդ է: 1923 թվականին Երևանում ստեղծվեց Հայաստանի «Պետկինոն» (1926 թվականից՝ «Հայկինո»), իսկ 1957 թվականից՝ «Հայֆիլմ» կինոստուդիա):

1925 թ. էկրան բարձրացավ «Խորհրդային Հայաստան» կինոակնարկը, որը պատկերում էր Սովետական Հայաստանի առօրյան: Նույն տարում ցուցադրվեց «Նամուս»-ը՝ հայ անդրանիկ գեղարվեստական կինոնկարը, որի ռեժիսորն էր հանրապետության կինոարվեստի նշանավոր գործիչ Համո Բեկնազարյանը:

Հայ կինոարվեստի խոշոր հաղթանակը հանդիսացավ «Պեպո» առաջին հնչուն կինոնկարի ցուցադրումը 1935 թվականին: «Պեպոն»-ն աննախընթաց հաջողությամբ ցուցադրվեց ոչ միայն մեր լայնածավալ հայրենիքում, այլև Արևմտյան Եվրոպայում, Ամերիկայում, Մերձավոր Արևելքի երկրներում: 1936—1938 թթ. նկարահանվեցին մի շարք պատմահեղափոխական ֆիլմեր:

Հանրապետության մեջ տարեցտարի աճում էր կինոթատրոնների ցանցը: 1940 թվականին Սովետական Հայաստանում գործում էր 168 կինոսարքավորում:

Սովետական Հայաստանում մեծ դարկ ստացավ երաժշտական մրջակույթը: Հանրապետության առաջին երաժշտական հիմնարկը Երևանի երաժշտական ստուդիան էր, որն ստեղծվեց 1921 թվականի դեկտեմբերին: Շուտով հանրապետությունում ստեղծվեցին երաժշտական մշակույթի նաև այլ օջախներ:

Սովետահայ երաժշտության զարգացման գործում բացառիկ դեր խաղաց տաղանդավոր կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանը, որը Հայաստան եկավ 1924 թվականին և շուտով Երևանում ավարտեց «Ալմաստ» նշանավոր օպերան: Պահպանելով հայ կլասիկ երաժշտության լավագույն ավանդույթները, նոր գործեր ստեղծեցին կոմպոզիտորներ Արմեն Տիգրանյանը, Ռոմանոս Մելիքյանը, Սպիրիդոն Մելիքյանը, Նիկողայոս Տիգրանյանը, Անուշավան Տեր-Ղևոնդյանը, Սարգիս Բարխուդարյանը, Հարո Ստեփանյանը և ուրիշներ:

30-ական թվականներին սովետահայ երաժշտական մշակույթը բուռն վերելք ապրեց: Մեծ աշխատանք կատարվեց երաժշտական կադրեր պատրաստելու ուղղությամբ: Այս բնագավառում արդյունավետ աշխատանք էին կատարում Կոմիտասի անվան կոնսերվատորիան, ինչպես և երաժշտական դպրոցներն ու ուսումնարանները: Կատարողական կոլեկտիվներից աչքի էր ընկնում Հայֆիլհարմոնիան, որը կազմակերպվեց 1932 թվականին: Այդ ժամանակ Հայֆիլհարմոնիայի մեջ մտնում էին սիմֆոնիկ և արևելյան գործիքների նվագախմբերը, Կոմիտասի ան-

վան ներկայիս աշխարհահռչակ կվարտեւոր, որը կազմակերպվել էր 1925 թվականին: Հայֆիլհարմոնիայի ցանցն աստիճանաբար ընդարձակվում էր: Հետագայում ստեղծվեցին ստեղծագործական նոր կոլեկտիվներ, որոնց մեջ աչքի ընկան Թաթուլ Ալթունյանի գլխավորած հայկական ժողովրդական երգի և պարի անսամբլը, ինչպես նաև Արտեմի Ալվազյանի ղեկավարած Հայաստանի պետական էստրադային նվագախումբը, գուսանական երգի անսամբլը և այլն:

Սովետահայ երաժշտական արվեստի խոշորագույն օջախ դարձավ Ա. Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնը, որի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ 1933 թվականի հունվարի 20-ին «Ալմաստ» օպերայի ներկայացմամբ: Այդ օրերին կազմակերպվեց Հայաստանի կոմպոզիտորների միությունը:

Սովետահայ երաժշտական մշակույթի խոշոր հաջողություններն ակնառու դարձան 1939 թվականին Մոսկվայում կազմակերպված հայկական արվեստի տասնօրյակի օրերին: ՍՍՀՄ Լենինի շքանշանակիր պետական ակադեմիական մեծ թատրոնում բեմադրվեցին Ա. Սպենդիարյանի «Ալմաստ», Ա. Տիգրանյանի «Անուշ», Հ. Ստեփանյանի «Լուսաբացին» օպերաները և Ա. Խաչատրյանի «Երջանկություն» (հետագայում՝ «Գայանե») բալետը: Հայկական արվեստի տասնօրյակին մեծ հաջողությամբ ելույթներ ունեցան նաև Կոմիտասի անվան կվարտեւոր, Հայֆիլհարմոնիայի երգի և պարի անսամբլը և այլ խմբեր: «Սովետական Հայաստանի արվեստի ծաղկումը իրոք հռչակալ է, — ասված է «Պրավդա»-ի առաջնորդող հոդվածում: — Իրագործվեց հայ ժողովրդի երազանքը... Խնամով պահպանելով անցյալի կյանքի արվեստի հուշարձանները, հայ ժողովուրդը նոր, հիանալի արվեստ է ստեղծում»:

Սովետական կառավարությունը բարձր գնահատեց հայ վարպետների երաժշտական արվեստը: ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնը պարգևատրվեց Լենինի, Հայֆիլհարմոնիան՝ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշաններով: Հայ արվեստի գործիչներից առաջինը շքանշանակալոր արտիստուհի Հայկանուշ Գանիելյանին շնորհվեց ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհու բարձր կոչում: ՍՍՀՄ Ժողովուրդների 1941 թ. մարտի 15-ի որոշմամբ պետական մրցանակի դափնեկրի կոչում շնորհվեց շքանշանակալոր արտիստ, կոմպոզիտոր Ա. Խաչատրյանին՝ ջութակի համար գրած նշանավոր կոնցերտի համար: Զութակի և հատկապես դաշնամուրի համար նրա գրած կոնցերտները համաշխարհային համբավ բերեցին կոմպոզիտորին:

Նշանակալից հաջողություններ ձեռք բերվեցին կերպարվեստի զարգացման գործում: Ստեղծագործական նոր վերելք ապրեցին կերպարվեստի

արվեստի ավագագույն վարպետներ Մարտիրոս Սարյանը, Փանոս Թերլեմեզյանը, Նդիշե Թադևոսյանը, Ստեփան Աղաջանյանը, Գաբրիել Գյուրջյանը, Հակոբ Կոչոյանը և ուրիշներ: Հանրապետությունում աճեց երիտասարդ նկարիչների նոր սերունդը:

20-ական թվականներից սկսած ստեղծվեցին հայ կերպարվեստագետների մի շարք կազմակերպություններ, որոնք օժանդակում էին արվեստի այդ ճյուղի զարգացմանը Սովետական Հայաստանում: 1932 թրվականի ապրիլին ՀԿ(բ)Կ Կենտկոմի «Հայաստանի գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին» որոշման համաձայն այդ բոլոր կազմակերպությունների փոխարեն ստեղծվեց «Հայաստանի սովետական նկարիչների և կերպարվեստի աշխատողների միություն»:

Սովետահայ նկարիչների լավագույն գործերը բազմիցս ցուցադրվել են ինչպես քաղաքային, համահայաստանյան, այնպես էլ համամիութենական և համաշխարհային ցուցահանդեսներում: Բարձր գնահատականի արժանացան Մ. Սարյանի նկարները 1924 թվականին Նյու-Յորքում և 1925 թվականին Վենետիկում բացված ցուցահանդեսներում: «Իզվեստիա» թերթը 1925 թվականին գրել է. «Սարյանը Սովետական Հայաստանի հանրապետության ազգային նկարիչն է»: 1926 թրվականին շքանշանակալոր կոչումից զրկվեց Մ. Սարյանին շնորհվեց հանրապետության ժողովրդական նկարչի կոչում: «Ալմաստ» օպերայի ձևավորման համար անվանի նկարիչը 1941 թ. մարտին ՍՍՀՄ Ժողովուրդների որոշմամբ արժանացավ պետական մրցանակի:

Սովետական Հայաստանում բուռն զարգացում էին ապրում նաև ճարտարապետությունը և քանդակագործությունը: Այս բնագավառում աչքի ընկան Ալեքսանդր Թամանյանը, Կարո Հալաբյանը, Նիկողայոս Բունիաթյանը, Արա Սարգսյանը և ուրիշներ: Ա. Թամանյանը հանդիսացավ սովետահայ ճարտարապետության հիմնադիրը և մեծ դեր խաղաց Սովետական Հայաստանի ճարտարապետության զարգացման գործում: Նա ղեկ 1914 թվականին Ռուսաստանում արժանացել էր ճարտարապետության ակադեմիկոսի կոչման, 1917 թվականին՝ ընտրվել Պետերբուրգի գեղարվեստների ակադեմիայի խորհրդի նախագահ՝ փոխպրեզիդենտի իրավունքներով: Սակայն նշանավոր ճարտարապետի տաղանդը վառ կերպով դրսևորվեց հատկապես սովետական իշխանության տարիներին: 1923 թվականին նա Սովետական Հայաստան եկավ մշտական բնակություն համար և եռանդուն աշխատանք ծավալեց հատկապես Երևանի գլխավոր հատակագիծը կազմելու ուղղությամբ: Կարճ ժամանակամիջոցում Ա. Թամանյանը կազմեց մի շարք կարևոր կառույցների նախագծեր: Սովետահայ ճարտարապետության ու քանդակագործության զարգացման փայլուն վկաներն են Երևանի Լենինի հրապարակի ճար-

տարապետական ձևավորումը, Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնի շենքը և այլն: Հայկական ՍՍՀ կառավարական տան նախագծի համար Ա. Թամանյանը համահունչ արժանացավ ՍՍՀՄ պետական մրցանակի:

1940 թ. նոյեմբերին նորաստեղծ հրապարակում մեծ հանդիսավորությամբ բացվեց Վ. Ի. Լենինի հոյակապ հուշարձանը, որի հեղինակն է ականավոր քանդակագործ, ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ Սերգեյ Մերկուրովը:

Այսպիսով, ՍՍՀՄ ժողովուրդների մեծ ընտանիքում, կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության հոգատարության շնորհիվ, բուռն քափով ծաղկում էր ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական հայկական մշակույթը, հաջողությամբ իրականացվում էր կուլտուրական հեղափոխությունը Սովետական Հայաստանում:

XXXI Գ Լ Ո Ւ Ն

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌԸ

Սփյուռքահայ կյանքը

20-ական թվականների սկզբներին ոչ լրիվ տվյալներով շուրջ մեկ միլիոն գաղութահայ կար: Ամենախոշոր գաղթավայրերն էին. Սիրիան ու Լիբանանը, որտեղ ապրում էին մոտ 150 հազար հայեր, ԱՄՆ-ը (մոտ 130 հազար), Բալկանները (մոտ 170 հազար), Կ. Պոլիսը (150 հազար) և այլն: Իհարկե, այս թվերը հաճախակի փոփոխվում էին, որովհետև ուժեղ տեղաշարժեր էին կատարվում գաղութահայության մեջ: Օրինակ, եթե 1922 թվականին Լատինական Ամերիկայի երկրներում (Արգենտինա, Բրազիլիա, Ուրուգվայ, Մեքսիկա, Կուբա և այլն) բնակություն էին հաստատել 3 հազար հայեր, ապա 1925 թվականին այդ թիվը հասավ 15 հազարի: Արագորեն աճում էին նաև հունահայ, ֆրանսահայ գաղթավայրերը: 1925 թվականին Ֆրանսիայում ապրում էր մոտ 45 հազար հայ:

Երկրից երկիր հայ տարագիր բնակչության տեղաշարժերի հիմնական պատճառն այն էր, որ կապիտալիստական երկրները հաճախ մեծ խոչընդոտներ էին ստեղծում հայ գաղթականությանը մշտական բնակավայրեր տրամադրելու հարցում: «Արտասահմանում, այսինքն՝ Եվրոպայում, Ամերիկայում, Աֆրիկայում և այլուր, բացի խորհրդային երկրներից, — գրել է Ա. Մյասնիկյանը, — կա մեկ միլիոնից ավելի հայություն: Նրա խոշոր մեծամասնությունը բանվորներ, աշխատավոր գյուղացիք և մանր արհեստավորներ են: Դա հայ գաղթականությունն է մա-

սամբ նստակյաց արդեն, մասամբ էլ կարոտ հողի, աշխատանքի ու հացի: Աստանդական է հայ գաղթականը: Դժբախտ օրեր է նա անցկացնում: Նրա կրծքումն են կսկիծը, անցյալի տխուր օրերը, հուսախաբությունը, նացիոնալիզմի ապիկար քաղաքականությունը, ասիական անլուր կոտորածները: Նրա անցյալը տխուր է, իսկ ներկան դժբախտ: Բայց կա նրա «վաղը», նրա ապագան, որ պիտի լինի լավ, ուրախ և երջանիկ»:

Այսպիսով, հայկական գաղթօջախները սոցիալ-տնտեսական և քաղաքական տեսակետից միատարր չէին: Այնտեղ նույնպես կային դասակարգային ներհակ ուժեր, սոցիալական սուր հակասություններ: Դրանով էլ պայմանավորված էր հայ քաղաքական տարբեր կուսակցությունների առկայությունը: Սփյուռքում գործում էին հնչակյան, ռամկավար-ազատական և դաշնակցություն կուսակցությունները: Հայ կոմունիստներն առանձին կուսակցություն չէին կազմում, այլ մտնում էին տվյալ երկրի կոմունիստական կուսակցության մեջ, իսկ առանձին երկրներում, օրինակ՝ Բուլղարիայում, Հունաստանում, Ֆրանսիայում, Ամերիկայում, որոշ ժամանակ գոյություն ունեին այդ երկրների կոմկուսակցությունների հայկական սեկցիաներ:

Սփյուռքահայ կուսակցություններից հնչակյանները և ռամկավար-ազատականները հիմնականում առաջադիմական դեր էին խաղում, Սովետական Հայաստանի նկատմամբ բարյացակամորեն էին տրամադրված, խնդրի էին դնում՝ աջակցել մայր հայրենիքի զարգացմանը, պայքարել սփյուռքահայությանը ապազգայնացումից փրկելու համար, նպաստել հայրենադարձությանը և այլն: Իսկ դաշնակցությունը սովետական իշխանության կատաղի թշնամին էր: Պատմության կողմից դատապարտված այդ կուսակցությունը վեր էր ածվել բախտախնդիրների լամբի, որը հավատարմորեն ծառայում էր միջազգային իմպերիալիզմին և իր ազգադավ քաղաքականությամբ կազմալուծիչ աշխատանք կատարում սփյուռքում:

Հայկական գաղթօջախներում կարևոր դեր էին խաղում հայրենակցական միությունները, որոնք մեծ մասամբ ստեղծվել էին դեռ առաջին համաշխարհային պատերազմից առաջ: Սկզբում նրանց հիմնական նրպատակն էր նյութական և կուլտուրական աջակցություն ցույց տալ թուրքական ծանր լծի տակ հեծող իրենց հայրենակիցներին, իսկ Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո շատ հայրենակցական միություններ մեծ ջանքեր էին գործադրում արևմտահայերին մայր հայրենիքում համախմբելու և իրենց ծննդավայրի անունը հավերժացնելու նպատակով այնտեղ նույնանուն ավաններ կառուցելու համար: Մի քանի տասնյակ հայրենակցական միություններից այդ ուղղությամբ առանձնապես ակտիվորեն էին գործում արաբկիրցիների, մալաթիացի-

ների, սեբաստիացիների, խարբերոցիների, կեսարիացիների, տիգրանա-
կերտցիների, երզնկացիների հայրենակցական միությունները:

Սփյուռքում գործում էին նաև բարեգործական, մշակութային, սպոր-
տային և այլ կազմակերպություններ, դպրոցներ, հրատարակվում էին
թերթեր, ամսագրեր, գրականություն և այլն: Լայն ցանց և մեծ ազդեցու-
թյուն ուներ հայկական եկեղեցին:

Հակառակ դաշնակցության կատաղի թշնամանքին ու դավերին,
20-ական թվականներից սկսած մեծ աշխատանք էր կատարվում սփյուռ-
քի և հայրենիքի միջև սերտ կապեր հաստատելու ուղղությամբ: «Թող
գոռան ու սարսափեն դաշնակցականները,— գրել է այն ժամանակ Ա.
Մյասնիկյանը,— թող շարունակեն հորինել իրենց ստերը: Մենք ու
զաղութահայ աշխատավորները իրար հետ կապված ենք և ավելի ևս
պիտի սեղմենք մեր շարքերը»:

Սփյուռքում ջերմ արձագանք գտավ Հայաստանի սովետների ա-
ռաջին համագումարի՝ սփյուռքահայությանն ուղղված դիմումը: Նրանում
սովետահայ աշխատավորության անունից սրտազին ողջույն էր հղվում
աշխարհով մեկ ցրված հայ տարագիրներին և միաժամանակ հույս հայտ-
նրվում, որ սփյուռքահայությունը ևս իր արժանի ներդրումը կունենա
Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության վերականգման,
նրա հետագա բարգավաճման գործում:

Հանրապետության պետական իշխանության բարձրագույն օրգանի
կողմ հսկայական նշանակություն ունեցավ սփյուռքահայերին դեպի Սո-
վետական Հայաստան կողմնորոշելու համար:

Սփյուռքի և մայր հայրենիքի միջև կապ ստեղծելու գործում նշա-
նակալից աշխատանք էր կատարում ՀՕԿ-ը՝ իր բազմաթիվ մասնաճյուղե-
րով: Այդ կարևոր գործին նպաստում էին նաև արտասահմանում սովե-
տական դիվանագիտական և տնտեսաառևտրական ներկայացուցիչները,
արտասահման մեկնող պատվիրակությունները և այլն:

Սփյուռքահայ
մշակույթը

Չնայած անբարենպաստ պայմաններին, սփյուռ-
քահայերը հայրենիքից հեռու, օտարության մեջ,
ամեն ջանք գործադրում էին, որպեսզի պահպանեն
իրենց մայրենի լեզուն, զարգացնեն հայ ազգային մշակույթը: Սփյուռ-
քում հայ ժողովրդի մշակույթի զարգացման և պրոպագանդման հարցե-
րով զբաղվել են գերադանցապես մշակութային, հայրենակցական, բարե-
գործական կազմակերպություններն ու միությունները, բայց ամենից
ավելի լայն շահերով՝ Հայոց բարեգործական ընդհանուր միությունը:

Սփյուռքահայ մշակույթի կարևոր օջախներից մեկը դպրոցն է, որը
մեծ դեր է խաղում ազգային մշակույթի զարգացման գործում: Տակա-
վին անցյալ դարում և XX դարի առաջին քսանամյակում բացված և

գրեթե անընդմեջ գործող մի շարք դպրոցներից բացի ստեղծվում են
նաև նոր դպրոցներ, որոնցից շատերը մեծ համբավ ձեռք բերեցին
սփյուռքահայության մեջ: Հին դպրոցներից շարունակում էին գործել
Կահիրեի Գալուստյան և 1924 թ. Կ. Պոլսից փոխադրված Պերպերյան
ազգային վարժարանները, Ալեքսանդրիայի Պողոսյան, Բեյրութի Եփ-
րեմյան, Մեսրոպյան, Հայկազյան վարժարանները, Սահակյան լիցեյը,
Կ. Պոլսի Կենտրոնական, Պերպերյան, Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան
վարժարանները: Վերջինս անընդմեջ գործում է շուրջ 130 տարի:

20—30-ական թվականներին Բալկանների, Մերձավոր Արևելքի,
Արևմտյան Եվրոպայի, Ամերիկայի և այլ հայկական գաղթօջախներում
բացվում են մի շարք նոր դպրոցներ, որոնց մեջ աչքի են ընկնում Նու-
պարյան ազգային վարժարանը (Եգիպտոս), ազգային բարձրագույն
վարժարանը (Սիրիա), Պոլվդիվի վարժարանը (Բուլղարիա), Սերի
(Փարիզ) Մխիթարյանների վերաբացված Սամվել-Մուրադյան վարժա-
րանը և այլն: Սփյուռքում գործում էին նաև բազմաթիվ այլ դպրոցներ:
Սակայն դրանցից շատերը, մասնավորապես, Ամերիկայում, Ֆրանսիա-
յում, Հունաստանում, ապահով վիճակում չէին, հաճախ փակվում էին:
Հայ երեխաների մի զգալի մասը հարկադրված օտար կրթություն և դաս-
տիարակություն էր ստանում, մշտապես ենթակա ապազգայնացման
վտանգին:

Սփյուռքահայ հասարակական-քաղաքական կյանքի մեջ կարևոր
դեր էր խաղում հայ պարբերական մամուլը: 20-ական թվականներին
սփյուռքում լույս էր տեսնում տարբեր ուղղության մոտ 60 պար-
բերական: Օրինակ՝ ԱՄՆ-ում լույս էին տեսնում «Բանվոր», «Գործավոր»,
«Նոր աշխարհ», «Պրոլետար», Փարիզում՝ «Բանվոր Պարիզ», «Հայ բան-
վոր», «Վերելք», «Երևան», Սալոնիկում՝ «Աշխատանք», Բուլղարիայում՝
«Կարմիր լուրեր», «Նոր աշխարհ» բանվորական (կոմունիստական) պար-
բերականները:

Հնչակյան և ռամկավարական կուսակցությունների պարբերական-
ներից հայտնի են «Նոր ալիք» (Սալոնիկ), «Երիտասարդ Հայաստան»,
«Պայքար» (ԱՄՆ) և այլն, որոնք սովետական իշխանության նկատ-
մամբ դրավել էին բարյացակամ դիրք: Սփյուռքում լույս էին տեսնում
նաև դաշնակցական պարբերականներ, որոնք շեշտված հակասովետա-
կան ուղղություն ունեին: Գրանցից էին «Հայրենիք» օրաթերթը և նույն-
անուն ամսագիրը (ԱՄՆ), «Յուսաբեր»-ը (Կահիրե) և այլն: Մխիթար-
յանները շարունակում էին «Բազմավեպ» (Վենետիկ) և «Հանդես ամս-
օրյա» (Վիեննա) հանդեսների հրատարակումը:

Գրական-գեղարվեստական պարբերականներից նշանավոր էին
«Արեգը», որ հրատարակում էր գրականագետ Սիմոն Հակոբյանը Վի-
եննայում, «Անահիտը», որը լույս էր տեսնում Փարիզում ակնավոր

գիտնական Արշակ Չոպանյանի խմբագրությամբ, Կահիրեում՝ «Արև»-ը և այլն:

Սփյուռքահայ առաջադիմական մամուլի շուրջը համախմբված էին բազմաթիվ գրողներ, գրականագետներ, հրապարակախոսներ, գիտնականներ՝ Կարապետ Սիտալ, Զապել Նսալյան, Երվանդ Օտյան, Վահան Թեքեյան և ուրիշներ:

Սփյուռքահայ պարբերականներում աչքի էին ընկնում նաև տարեցույցները, որոնք հարուստ նյութ էին պարունակում սփյուռքահայության սոցիալ-տնտեսական և կուլտուրական կյանքի վերաբերյալ: Դրանց մեջ հիշատակության արժանի է Թեոդիկի «Ամենուն տարեցույցը», որը լույս էր տեսնում 1907—1929 թվականներին Կ. Պոլսում, ապա՝ Փարիզում:

Արտասահմանյան երկրներում բազմաթիվ հայեր մեծ համբավ էին ձեռք բերել նաև գիտության բնագավառում: Հայկական գաղթօջախներում առանձնապես դարգանում էր հայագիտությունը: Սփյուռքահայ քանասիրության ու հայագիտության աչքի ընկնող դեմքերից մեկը Ներսես Ալիկյանն էր, որի գրչին են պատկանում 500-ից ավելի աշխատություններ: 1909 թվականից սկսած, մոտ կես դար, նա «Հանդես ամսօրյա» պարբերականի խմբագիրն էր: Հայագիտության բնագավառում աչքի ընկնող դեր էին խաղում Նիկողայոս Ադոնցը, Արշակ Ալպոյաճյանը, Փարեգին Հովսեփյանը, Կարապետ Բասմաջյանը, Հակոբ Տաշյանը և ուրիշներ:

Սփյուռքում հրատարակվել են նաև դաշնակցական գործիչների («Ս. Վրացյան, Ա. Խատիսյան, Ռ. Դարբինյան, Մ. Վարանդյան, Վ. Նավասարդյան, Սեպուհ և ուրիշներ») պատմական, հրապարակախոսական, ինչպես և մեմուարային բնույթ կրող աշխատություններ, որոնք գրված են սուբյեկտիվ, նեղկուսակցական դիրքերից և որոնցում պատմական շատ դեպքեր ու դեմքեր խեղաթյուրված են:

20—30-ական թվականներին զարգանում էր նաև սփյուռքահայ գրականությունը: Այդ տարիներին գրականության հիմնական թեմաներն էին հայկական մեծ եղեռնը, արևմտահայ և, հատկապես, գաղութահայ կյանքը՝ իր սոցիալ-տնտեսական, քաղաքական, կենցաղային, հոգեբանական կողմերով և այլն: Ինչպես ամբողջ հայ մշակույթի, այնպես էլ գրականության մեջ որոշակիորեն դրսևորվում էին գաղափարական և գրական տարբեր ուղղություններ՝ դեմոկրատական-առաջադիմական, հետադիմական, բուրժուա-ազգայնական և այլն:

Սփյուռքում ապրող նախասովետական հայտնի գրողների մի խումբ (Տիգրան Կամսարական, Ավետիս Ահարոնյան, Լևոն Շանթ և ուրիշներ) փաստորեն զաղարկել էր ստեղծագործելուց: Վերջին երկուսը, ինչպես հայտնի է, դաշնակցական գործիչներ էին: Անցյալի գրողներից բեղմնավոր էր արևմտահայ նշանավոր գրող Երվանդ Օտյանի գրչը:

Սփյուռքահայ նշանավոր գրողներից էին Հակոբ Օշականը, Հակոբ Մնձուրին և ուրիշներ:

Սփյուռքահայ գրողների մի զգալի մասը հանդես բերեց սովետական կողմնորոշում և փորձեց կամուրջ ստեղծել սփյուռքի և Սովետական Հայաստանի միջև: Օրինակ՝ Զապել Նսալյանը (մինչև հայրենագարձվելը), Կարապետ Սիտալը, Վահան Թեքեյանը և ուրիշներ: Հետագայում այդ ուղղությամբ էին ընթանում նաև Կոստան Զարյանը, Վաղգեն Շուշանյանը, Վահե Վահյանը և շատ ուրիշներ: 20-ական թվականներից սկսած գաղութահայ կյանքը ռեալիստորեն պատկերելու ուղղությամբ Փարիզում կազմավորվեց երիտասարդ գրողների մի խումբ, որի մեջ աչքի էին ընկնում Շահան Շահնուրը, Զարեհ Որբունին, Հրաչյա Զարդարյանը և ուրիշներ:

Սովետական Հայաստանի նկատմամբ մեծ հավատով տոգորված ամերիկահայ գրողներ Կ. Սիտալին, Հ. Գույումեճյանին և մյուսներին 30-ական թվականների կեսերին միացան ուրիշներ, որոնց մեջ աչքի էր ընկնում ֆրանսահայ երիտասարդ բանաստեղծ Միսաք Մանուշյանը: 1930 թվականին նրա և Ա. Սեմայի ջանքերով Փարիզում կազմակերպվում է «Ֆրանսահայ նորագույն գրողների ընկերություն», որը հրատարակում է «Ջանք» պարբերականը: Ըստ էության վերահիշյալ գրողներն էլ հանդիսացան սփյուռքահայ հեղափոխական նոր պոեզիայի հիմնադիրներ:

Սփյուռքահայ մշակութային կյանքում կարևոր տեղ էր գրավում նաև արվեստը՝ թատրոնը, երաժշտությունը, նկարչությունը և քանդակագործությունը:

Հայ արվեստագետներին արտասահմանյան ոչ մի երկրում չհաջողվեց ստեղծել մշտական գործող թատրոն: Փորձեր եղան ստեղծելու միայն առանձին թատերախմբեր: Դրանք թեև երկար չէին պահպանում իրենց գոյությունը, այնուամենայնիվ, մեծ դեր էին խաղում սփյուռքում թատերական գործը զարգացնելու ուղղությամբ:

Սփյուռքահայ բեմարվեստի զարգացմանը մեծապես նպաստեց հայ տաղանդավոր դերասանների մի փայլուն համաստեղություն (Սիրանուշ, Հովհաննես Աբելյան, Հովհաննես Զարիֆյան, Վահրամ Փափազյան և ուրիշներ), որը մեծ համբավ ձեռք բերեց ամբողջ աշխարհով մեկ ցրված հայության մեջ: Ուշագրավ է, որ նրանցից մի քանիսը (Հ. Աբելյան, Վ. Փափազյան) վերադարձան հայրենիք և իրենց շողողուն տաղանդով մեծ ներդրում կատարեցին սովետահայ թատրոնի զարգացման գործում:

Սփյուռքահայ բեմի խաղացանկում առավել մեծ տեղ էին գրավում հայ դրամատուրգների՝ Ա. Շիրվանզադեի, Լ. Շանթի, Հ. Պարոն-

ջանի, Տ. Կամսարականի և ուրիշների գործերը: Օտար դրամատուրգներից ամենասիրվածը Շեքսպիրն էր:

Հայ արվեստի կարևոր բնագավառներից մեկը երաժշտությունն էր, որը, սակայն, այն ժամանակ սփյուռքում անհրաժեշտ չափով չզարգացավ: Շատ հայ երիտասարդներ, ավարտելով աշխարհի նշանավոր երաժշտական ուսումնական հաստատությունները, կատարում էին ոչ այնքան հայկական, որքան օտար երգեր: Նրանցից շատերը մեծ ճանաչում գտան Արևմտյան Եվրոպայում և ԱՄՆ-ում: Հայ հեղինակներից կատարվում էին Կոմիտասի, Մ. Եկմալյանի, Գր. Սյունու և այլոց երգերը: Տարագիր հայության մեջ մեծ մասամբ երգվում էին հեղեմներ, գաղթը, գաղթավայրերի ծանր գոյավիճակը արտացոլող երգեր: Դրանց կատարման մեջ մեծ համբավ ձեռք բերեց Արմենակ Շահմուրադյանը:

Սփյուռքում ապրում և ստեղծագործում էին նաև հայ անվանի ներկարիչներ ու քանդակագործներ: Նրանց մեջ աչքի էին ընկնում էդգար Շահինը, Փանոս Թերլեմեղյանը, Սարգիս Խաչատրյանը, Ռաֆայել Շիշմանյանը, Տիրգրան Պոլատը, Ալեքսանդր Սարուխանը, Հովսեփ Փուշմանը, Ժիրայր Օրագյանը, Հակոբ Գյուրջյանը և ուրիշներ: Նրանցից մի քանիսը տարբեր ժամանակներում վերադարձան Սովետական Հայաստան և իրենց տաղանդն ի սպաս դրին սովետահայ արվեստի ծաղկմանը:

Միջազգային դիվանագիտությունը և հայկական հարցը

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո Անտանտի իմպերիալիստները և դաշնակցականները օրակարգից չհանեցին հայկական հարցը: Ազգերի լիզան հաճախակի անդրադառնում էր այդ հարցին, սակայն, ինչպես և դրանից առաջ, հայ ժողովուրդը մընում էր խաբված: Իհարկե, 1921 թվականից սկսած, երբ Թուրքիան ուժեղացել էր, հաշտության պայմանագիր կնքել Ֆրանսիայի հետ, ապա լիզու գտել Անգլիայի հետ, արևմտյան իմպերիալիստները այլևս հին ձևով չէին դնում հայկական հարցը, Սևրի ոգով չէին խոսում:

Լոզանի կոնֆերանսում (1922 թ. նոյեմբեր—1923 թ. հուլիս) հայկական հարցը կենտրոնական հարցերից մեկն էր: Հայ պատվիրակները հույս ունեին, որ Անտանտի պետությունների աջակցությամբ հնարավոր կլինի լուծել հայկական հարցը: Լոզանի կոնֆերանսում Անգլիայի կառավարության պրեմիեր-մինիստր Լոյդ Ջորջը և արտաքին գործերի մինիստր լորդ Քերզոնը առաջ քաշեցին, այսպես կոչված, հայկական օջախի հարցը, որին և փարվեց հայկական պատվիրակությունը: Սակայն հայկական օջախի ստեղծման պահանջը ամենևին չէր բխում հայ ժողովրդի շահերից, նպատակ չունեի ստեղծելու իսկական հայկական պետություն, այլ ելնում էր իմպերիալիստական տերությունների, առաջին հերթին Անգլիայի գաղութային շահերից: Անգլիական դիվանագիտու-

թյան նպատակն էր՝ հայկական հարցը, ինչպես միշտ, այս անգամ ևս դարձնել շարաշահման առարկա, դիվանագիտական ճնշում գործադրել Թուրքիայի վրա, սպառնալ նրան՝ մի նոր պատառ կորզելու համար: Լոզանի կոնֆերանսում Անգլիան մասնավորապես նպատակ ուներ հայկական օջախի հարցի առաջադրումով Թուրքիային ստիպել զիջումներ անելու նեղուցների, օտտոմանյան պարտքի, Մոսուլի և այլ հարցերում:

Թուրքական պատվիրակությունը կտրականապես դեմ էր հայկական հարցի լուծմանը և լսել անգամ չէր ուզում հայկական օջախի մասին: Սակայն այն բանից հետո, երբ Թուրքիայի ներկայացուցիչները խոստացան որոշ զիջումներ անել մեծ տերությունների ղեկավարներին, վերջիններս հրաժարվեցին հայկական օջախի հարցը քննարկման դնելուց: «Ազգերի լիզան ոչինչ է,— իրավացիորեն գրել է Ա. Մյասնիկյանը:— Նա պատրանք է, նա խաբող է, նա դավաճան է, նա օգտաշահող է և ոչ թե օգնող: Գիշատիչների շահերի համար ստեղծված որչք այլ կերպ չի էլ կարող լինել: Խաբեբայություն և կեղտոտություն է նաև եվրոպական դիվլոմատիան»:

Լոզանի կոնֆերանսը չլուծեց նաև հայ գաղթականության հարցը: Իմպերիալիստները նպատակ ունեին հայ գաղթականության հարցը ևս օգտագործել հօգուտ իրենց նպատակների, այն դեմք դարձնելու մի կողմից ընդգեմ Սովետական Միության, մյուս կողմից՝ նոր ճնշում գործադրելու Թուրքիայի վրա: Թուրքիան մերժեց նաև հայ գաղթականության՝ իր նախկին բնակավայրերը վերադառնալու վերաբերյալ առաջարկը:

Լոզանի կոնֆերանսում և ապա Ազգերի լիզայի նիստերում առաջ քաշելով այդ առաջարկը, Անտանտի դիվանագետները նպատակ ունեին հարված հասցնելու ՄՍՀՄ-ի հեղինակությունը արտասահմանում, վարկաբեկելու, մեղադրելու նրան այն բանում, թե նա իբր չի ուզում տեղավորել հայ փախստականներին, չի ուզում իր երկրում հայկական օջախ ստեղծել: Միջազգային իմպերիալիզմի սպասարկու դիվանագետները ավելի հեռու էին գնում իրենց նպատակադրումների մեջ: Նրանք հույս ունեին, որ հայ գաղթականությանը Սովետական Միության տերիտորիայում տեղավորելու դեպքում Սովետական Միությունը հարկադրված կլինի պատերազմի մեջ մտնել Թուրքիայի դեմ՝ Արևմտյան Հայաստանը ետ ստանալու նպատակով: Իմպերիալիստական պետությունները միաժամանակ ոչ մի ջանք չէին խնայում Թուրքիային սովետական երկրի դեմ ոտքի հանելու, սովետա-թուրքական հարաբերությունները սրելու, նրանց միջև ռազմական կոնֆլիկտ ստեղծելու ուղղությամբ: Այսպիսով, միջազգային դիվանագիտությունը նորից ձգտում էր հայերի արյունը թափել իր սևփական շահերի համար:

Սակայն բուրժուական դիվանագիտությանը չհաջողվեց այդ ուղղու-

թյամբ շոշափելի արդյունքների հասնել: 1923 թ. հունվարի 27-ին Սովետական Միության արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գ. Չիչերինը կոզանի կոնֆերանսին ուղղեց գրավոր հայտարարություն այն մասին, որ Սովետական Միությունը համաձայն է հայ գաղթականությանը տեղավորել իր տերիտորիայում: Սովետական կոմիսարը կառավարության անունից միաժամանակ հայտնեց, որ հայկական հարցը չի կարող քննվել և լուծում ստանալ, եթե քննարկմանը չմասնակցի Սովետական Միությունը: Գ. Չիչերինի նամակը մեծ արձագանք գտավ արտասահմանում: Մամուլում հանդես եկան մի շարք ակնավոր հայասեր եվրոպացիներ, որոնք Սովետական Միության այդ քայլը բարձր գնահատեցին և իրենց կոնկրետ առաջարկներն արեցին այդ հարցը լուծելու համար:

ՆԱՆԱԵՆՆՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Հայասեր եվրոպացիների մեջ աչքի ընկնող գործուհեություն ծավալեց Ֆրիտցոֆ Նանսենը, որը Ազգերի լիգայի խորհրդի գաղթականական գործերի գլխավոր կոմիսարն էր: Նա Սովետական Ռուսաստանի բարեկամն էր և 1921—1922 թթ. մեծ դեր էր խաղացել Պոլսի սովյալներին օգնելու գործում: Ամենայն դրվատանքի արժանի են մեծ աշխարհաքաղաքացու եռանդուն ջանքերը հայ ժողովրդի բազմահազար տարագիր զավակների հայրենադարձության գործում: Նախ և առաջ նրա ջանքերի շնորհիվ էր, որ Ազգերի լիգայի խորհուրդը 1924 թ. հուլիսին որոշում կայացրեց նանսենյան միջազգային անձնագրեր տալ նաև թուրք շարդարարների սրից փրկված բազմահազար այն հայ գաղթականներին, որոնք, թափառելով երկրից երկիր, չունեին իրենց քաղաքացիությունը հաստատող փաստաթղթեր, չէին համարվում որևէ պետության հպատակ և, հետևաբար, չունեին անձնագրեր: Այլ ազգությունների տարագիրների պես օրինականացնելով իրենց քաղաքացիությունը, հայ գաղթականները հնարավորություն ունեցան որոշ չափով թեթևացնելու իրենց ծանր դրությունը:

Ֆ. Նանսենի ծառայությունն առանձնապես մեծ է սփյուռքահայերի հայրենադարձության կազմակերպման գործում: Այդ հարցը, որը կենսական նշանակություն ուներ հայ ժողովրդի համար, մի քանի տարի շարունակ քննվում էր Ազգերի լիգայի նիստերում, սակայն վրձնական որևէ քայլ չէր արվում այդ ուղղությամբ:

Ազգերի լիգայի մեջ մտնող պետությունները փաստորեն մերժեցին Ֆ. Նանսենի առաջարկությունը փոխառության միջոցով ձեռք բերելու այն մեկ միլիոն ֆունտ ստեռլինգը, որն անհրաժեշտ էր 50 հազար հայ գաղթականներին Հայաստանում տեղավորելու և նրանց կյանքի համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նպատակով: Չնայած դրան, նանսենին հաջողվեց 1924 թ. սեպտեմբերին Ազգերի լիգայի խորհրդում ընդունել տալ մի որոշում, որով աշխատանքի միջազգային բյուրոյին հանձ-

նարարվում էր ուսումնասիրել Սովետական Հայաստանում հայ գաղթականներին տեղավորելու հնարավորությունները: 5 հոգուց բաղկացած հանձնաժողովը Նանսենի գլխավորությամբ, 1925 թ. հունիսի 18-ին ժամանեց Երևան:

Նանսենի հանձնաժողովը ավելի քան երկու շաբաթ շրջազայեց Հայաստանում, եղավ Սարդարապատում, Արագածի ստորոտներում, ուսումնասիրեց այդ վայրերի ոռոգման, այգեգործության ու տեխնիկական կուլտուրաների զարգացման հարցը, ինչպես նաև հայրենադարձ հայերին այդ վայրերում բնակեցնելու և բազմաթիվ այլ հարցեր: Հանրապետության տնտեսական ու մշակութային կյանքի հետ ծանոթանալուց հետո հանձնաժողովը վերադարձավ Եվրոպա: Նա ՀՍՍՀ կառավարությանը ներկայացրեց մի հուշագիր, որի մեջ իր հավանությունն էր արտահայտելու հայ գաղթականներին Հայաստանում տեղավորելու ուղղությամբ ՀՍՍՀ կառավարության նախագծերին:

Հայաստանից վերադառնալուց հետո Նանսենը Ազգերի լիգային ներկայացրեց մանրամասն ղեկուցագիր: Այս հանդես գալով Ազգերի լիգայի պլենար նիստում, շարադրեց Սովետական Հայաստանում սփյուռքահայ գաղթականությանը տեղավորելու իր պլանը, որը և հայտնի է «ՆԱՆԱԵՆՅԱՆ ԾՐԱԳԻՐ» անունով: Իր ղեկուցման մեջ նշել է Նանսենը. եվրոպական տերությունները պատասխանատվություն են կրում հայ ժողովրդի ողբերգության համար և այժմ անհրաժեշտ է, որ նրանք միջոցներ ձեռք առնեն ոտնահարված մի ազգի բեկորների համար ստեղծելու կյանքի նպատակով պայմաններ:

Ուշագրավ է, որ Նանսենը Ազգերի լիգայի հինգերորդ կոմիտեում մի շաբաթ հետո տված ղեկուցման մեջ առաջարկում էր հայ գաղթականությանը Սովետական Հայաստան տեղափոխելու հետ կապված ծախսերը հոգալու համար հատկացնել այն հինգ միլիոն ֆունտ ստեռլինգը, որ թուրքական կառավարությունը կողոպտել էր արևմտահայերից և 1916 թ. պահ տվել Բեռլինի բանկում, բայց ղինադադարից հետո բռնագրավել էր Անգլիան և փոխադրել Լոնդոն: Նա միաժամանակ մեծ տերություններին առաջարկում էր Սովետական Հայաստանին տրամադրել մոտ մեկ միլիոն ֆունտ ստեռլինգի փոխառություն: Սակայն ազգերի լիգայում նստած մեծ տերությունների ներկայացուցիչները մերժեցին Նանսենի առաջարկները և, տարիներ շարունակ ձգձգելով հայ գաղթականության տեղավորման հարցը, վերջ էր վերջո մոռացության տվին այն:

Այսպիսով, չնայած հայ ժողովրդի նկատմամբ ունեցած իր անկեղծ, սրտացավ վերաբերմունքին, Ազգերի լիգայում հօգուտ հայ գաղթականության ծավալած բազմամյա եռանդուն գործունեությունը, Նանսենը որևէ շոշափելի արդյունքի չհասավ: Իրականում Նանսենը հուսախաբ

եղավ Ազգերի լիգայից ունեցած իր ակնկալությունների մեջ: Այդ բանը նա շուտով հասկացավ և, վշտանալով Աղգերի լիգայում հայ գաղութականության հարցի վերջնական տապալումից, նորվեգերեն, ապա կայացրիզում գերմաներեն, Լոնդոնում անգլերեն և Փարիզում ֆրանսերեն հրատարակեց իր «Խարված ծողվուրդ» գիրքը: Նկարագրելով սովետական իշխանության շինարար գործունեությունը Հայաստանում, նա իր գրքում միաժամանակ խստորեն մեղադրեց Անտանտին, որը, գրծելով իր բոլոր խոստումները, չկատարեց իր պարտականությունները հայ ժողովրդի նկատմամբ: Նանսենի գրքի գերմաներեն հրատարակության գրքակապի վրա, կարմիր տառերով գրված է. «Մեղադրանք Անտանտին և Ազգերի լիգային»:

**Մփյուռքահայերի
առաջին ցերեպալը**

Հայաստանում սովետական կարգեր հաստատվեցին մի այնպիսի ժամանակ, երբ երկիրը գտնվում էր ծանր վիճակում: Փոքր տերիտորիա ունեցող հանրապետությունում կուտակված էին ավելի քան 200 հազար հայ գաղթականներ և խնամքի ու հոգատարության կարոտ մոտ 50 հազար որբ ու անապաստան երեխաներ:

1921—1922 թթ. մեծ աշխատանք էր կատարվում արևմտահայ գաղթական աշխատավորության մեջ: 1921 թ. հուլիսի կեսերին ՀՍՍՀ ժողկոմխորհին առընթեր ստեղծվեց գաղթականական գործերի գլխավոր վարչություն, որը չնայած իր կարճատև գոյությունը, մեծ դեր խաղաց ինչպես հանրապետությունում գտնվող հայ գաղթականության օգնելու, այնպես էլ ներգաղթի կազմակերպման գործում: Գրեթե միաժամանակ կազմակերպվեց ՀՍՍՀ արևմտահայ աշխատավորության կենտրոնական վարչություն:

Արևմտահայ աշխատավորությանը սովետական իշխանության շուրջը համախմբելու գործում կարևոր նշանակություն ունեցավ Անդրրկովկասի արևմտահայ աշխատավորների համագումարը, որը տեղի ունեցավ Նրևանում 1922 թ. ապրիլին: Համագումարը ողջույնի հեռագիր ուղարկեց Վ. Ի. Լենինին և կոչ՝ գաղութահայ աշխատավորությանը: «Անդրկովկասյան արևմտահայ աշխատավորության անդրանիկ համագումարը, — գրված է Լենինին ուղղված հեռագրում, — ողջունում է ընկեր Լենինին իր հանդիսավոր նիստում և հայտարարում է, որ ինքը ժխտում է ամեն մի կապ իմպերիալիստական երկրների հետ, լիովին ընդունում է Խորհրդային հեղափոխական Ռուսաստանի օրինատացիան և կարմիր բանակի հաղթության հետ կապում իր աշխատավորական, դարերից ի վեր արևակոխված բոլոր իդձերը»:

Սովետական իշխանության հաստատման առաջին իսկ տարվանից հսկայական աշխատանք կատարվեց թուրքական բռանկալության արյունոտ սրից փրկված և կապիտալի աշխարհում դեգերող անօթևան տաս-

նյակ հազարավոր հայ աշխատավորներին հայրենիք վերադարձնելու ուղղությամբ:

Արտասահմանում ապրող տարագիր հայությունը գոտեպնդվելով սովետական իշխանության ցուցաբերած հոգատարությամբ, 1921 թվականից սկսած բռնեց «դեպի տուն, դեպի հայրենիք, դեպի Խորհրդային Հայաստան» ուղին: Միջագետքից Հայաստան մեկնել ցանկացող 12000 հայ գաղթականներ Սովետական Հայաստանի գաղթականական գործերի վարչությանը հասցեագրած նամակում գրել են. «Բնաջնջումի նախօրյակին այս բազմահազար գաղթականությունը կսիրե հուսալ իր փրկությունը միայն իր հարազատ հայրենիքից: Այժմ լիահույս ենք, որ Խորհրդային Հայաստանի կառավարությունը ոչ մի զոհողության վարույթյան առաջ կանգ չի առնի փրկելու համար հայ գաղթականության այդ բեկորները, տեղափոխելով Բասրայից դեպի հարազատ հայրենիք»: Աթենքից մի հայ աշխատավոր ՀՍՍՀ ժողկոմխորհին ուղղած դիմումի մեջ գրել է. «Սրտի անսահման ուրախությամբ այսօր կուզամ հայտնելու այն փափազը, որ ծնունդ է առած հայրենաբաղձ կրծքիս տակ: Այդ փափազը մեր դարավոր երազներու իրականացման արդյունքն է: Բառ մը միայն՝ Հայաստան երթալ, ուրիշ ոչինչ»: Սեբաստացի հայ աշխատավորների ՀՍՍՀ ժողկոմխորհին ուղղած դիմումի մեջ ասված է. «Գիրկը գալ կբաղձանք Խորհրդային Հայաստանի, այս է մեր խնդրանքը, որոշումը և անհուն բաղձանքը»:

Սովետական Հայաստանի կառավարությունը, ընդառաջելով արտասահմանում ապրող հայ աշխատավորների բուռն ցանկությանը, որոշեց կազմակերպել նրանց հայրենադարձությունը, այդ ուղղությամբ կատարելով հսկայական ծախսեր: Չնայած հայրենադավ դաշնակցականների և հայ ժողովրդի մյուս թշնամիների հակասովետական պրոպագանդային, ներգաղթը ձախողելու ուղղությամբ նրանց ձեռնարկած խափանիչ գործողություններին, 1921 թ. վերջերից սկսվեց հայերի հայրենադարձությունը: Սկզբում Սովետական Հայաստան ներգաղթեց Միջագետքում (Իրաք), գլխավորապես Բաքուբայում, անասելի պայմաններում զբաղվող ավելի քան 15 հազար տարագիր հայերի մեծ մասը՝ 9 հազար մարդ:

Հայրենադարձությունը մասսայական բնույթ ստացավ 1924—1925 թվականներից սկսած: Ներգաղթը և ներգաղթողների բնակեցման գործը պլանավորված ու հաջող կազմակերպելու նպատակով 1925 թ. սեպտեմբերին ՀՍՍՀ ժողկոմխորհին առընթեր ստեղծվեց Աշխատավորական բերին Հանձնաժողով՝ ժողկոմխորհի նախագահի տեղակալ և լուսներգաղթի հանձնաժողով՝ ժողկոմխորհի նախագահի տեղակալ և լուսնժողկոմ Ա. Մոսվյանի գլխավորությամբ: Այդ գործին մեծապես նպաստում էր նաև 204-ը՝ արտասահմանում գտնվող իր բազմաթիվ բաժանումում էր նաև 204-ը՝ արտասահմանում գտնվող իր բազմաթիվ բաժանմունքներով: Մինչև 1925 թվականի վերջերը Միջագետքից, Իրանից,

Թուրքիայից, Ֆրանսիայից, Հունաստանից և Սիրիայից Սովետական Հայաստան ներգաղթեցին ավելի քան 20 հազար հայ աշխատավորներ: Ներգաղթածները հիմնականում բանվորներ, արհեստավորներ և երկրագործներ էին: Բանվորներն ու արհեստավորները տեղավորվեցին զլխավորապես Երևանում և Լենինականում, իսկ երկրագործները՝ Արագ-դաշանում (Վեդու շրջան):

Սովետական Հայաստանի կառավարությունը հայրենադարձների նկատմամբ ցուցաբերում էր մեծ հոգատարություն, նրանց ապահովում բնակարաններով ու աշխատանքով: Շուտով նրանց համար կառուցվեցին առանձին ավաններ՝ դպրոցներով, հիվանդանոցներով, արտադրական ձեռնարկություններով, խանութներով և այլն: Գյուղատնտեսական և կոմունալ բանկերի միջոցով ներգաղթողներին բաց թողնվեցին երկարատև վարկեր գյուղատնտեսական գործիքներ, սերմացու և շինանյութեր ձեռք բերելու համար: Զգալի թվով չքավորներ և որբեր սնվում էին պետության հաշվին:

Ի պատասխան Սովետական կառավարության այդ ջերմ հոգատարության, հայրենադարձները ոչ մի ջանք չէին խնայում հանրապետության ժողովրդական տնտեսության վերականգնման ու դարգացման գործին ակտիվորեն մասնակցելու համար: Նրանք միաժամանակ կոչ էին անում արտասահմանում գտնվող տարագիր հայությանը նույնպես վերադառնալու Սովետական Հայաստան: 1924 թվականին Կ. Պոլսից Սովետական Հայաստան ներգաղթած մի խումբ հայ աշխատավորներ գրել են. «Թո՛ղ լսեն օտաբ երկրներում թափառող մեր աստանդական եղբայրները, որ միայն և միայն հորհրդային Հայաստանում վերջ գտան մեր տառապանքները, և մենք տեսանք մարդկային, բնկերական վերաբերմունք, որին մինչև այժմ այնքան ծառավի էինք»:

Տարեցտարի ավելի լայն թափ էր ստանում հայրենադարձությունը: Շուտով սփյուռքահայության մեջ ծավալվեց հայրենակցական միություններով Հայաստան ներգաղթելու լայն շարժում: Այդ հայրենակցական միությունների նախաձեռնությամբ և Սովետական Հայաստանի կառավարության գործուն աջակցությամբ ստեղծվեցին բազմաթիվ նոր ավաններ, որոնց հայրենադարձները կոչեցին իրենց ծննդավայրերի անուններով:

Հայրենակցական ավանների առաջնեկը եղավ Նոր Արաբկիրը, որը հիմնադրվեց 1925 թվականին՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման 5-րդ տարեդարձի օրը: Այդ նույն օրերին Երևանում հիմնադրվեց նաև Նոր Բուխանիան:

Այսպիսով, ժողովրդական տնտեսության վերականգնմանը զուգընթաց Սովետական Հայաստանը դառնում էր ամբողջ աշխարհով մեկ սփռված հայ աշխատավորության օրրանը, իր գիրկն ընդունելով կապի-

տալիստական երկրներում դեգերող բազմահազար տարագիր աշխատավորներին:

Հայերի հայրենադարձությունը պատմական խոշոր նշանակություն ունեցող երևույթ էր: Գրանուվ վերջ էր դրվում այն դարավոր պրոցեսին, երբ հայը հարկադրված էր իր հայրենի երկրից գաղթել աշխարհի տարբեր երկրներ: Այժմ սկսվում էր հակառակ երևույթը: Սփյուռքահայությունը վերադառնում էր Հայաստան, ուր ծածանվում էր հայ սոցիալիստական պետականության դրոշմը: «Հայ ժողովուրդը, — ասել է սովետահայ կերպարվեստի նահապետ Մ. Սարյանը, — նման է մագաղաթյա մի մատչանի, որի թերթերը ճակատագրի քմահաճ խաղով ցրվել են աշխարհի տարբեր կողմերը: Սովետական իշխանության շնորհիվ այդ թերթերը հավաքվում են, և մատչանը ամբողջանում է»:

Հայ ժողովրդի կյանքում հայրենադարձության խոշոր նշանակությունը ոչ միայն այն էր, որ նա բազմահազար հայ տարագիրների փրկուկեց դժնդակ կյանքից, ապազգայնացման վտանգից, այլև նպաստեց հայ ժողովրդի համախմբմանը, նրա սոցիալիստական հայրենիքի բարգաժանմանը: Լծվելով սոցիալիզմի կառուցման մեծ գործին, հայրենադարձներից շատերը դարձան Սովետական Հայաստանի ճանաչված մասնագետներ՝ ինժեներներ, գյուղատնտեսներ, մանկավարժներ, բժիշկներ, գրողներ, գիտնականներ, դերասաններ, նկարիչներ, երաժիշտներ և այլն:

1926—1936 թթ. հայրենադարձների նորանոր քաշարվաններ էին շարժվում դեպի Սովետական Հայաստան, այն դիտելով որպես ամբողջ աշխարհով մեկ ցրված հայության միակ հայրենիք: Սովետական Հայաստանի կառավարությունը և այդ նպատակով ստեղծված ներգաղթի կառավարական հանձնաժողովը ձեռք էին առնում բոլոր միջոցները հայրենադարձությունն ավելի հաջող կազմակերպելու համար: Այդ տարիներին լայն գործունեություն էին ծավալել նաև 204-ը և նրա արտասահմանյան բաժանմունքները, որոնց թիվը 1936 թ. հասնում էր 200-ի: Սակայն 1937 թվականին 204-ը վերացվեց: Սովետական Միության մեջ նրա մասնաճյուղերը վերացվել էին դեռևս 1926 թվականին:

1926—1929 թթ. Հունաստանից, Թուրքիայից և Ֆրանսիայից ներգաղթեց մոտ 6000 մարդ: Նախատեսվում էր նոր, ավելի մասսայական ներգաղթ: 1931 թվականի օգոստոսին ՀՍՍՀ Կենտրոնից և Ժողովուրդից 1931 թվականի օգոստոսին ՀՍՍՀ սահմաններն արտասահմանի աշխարհը որոշում ընդունեցին «ՀՍՍՀ սահմաններն արտասահմանի աշխատավոր հայերի մասսայական նոր ներգաղթ արտոնելու մասին»: Այդ նպատակով Ֆրանսիա, Գերմանիա և այլ երկրներ ուղարկվեց ՀՍՍՀ Ժողովուրդի նախագահ Ս. Տեր-Գաբրիելյանը, որը և զբաղվեց տասը հազար հայերի ներգաղթի հարցով:

1932—1933 թվականների ընթացքում ավելի քան 8 հազար մարդ

հայրենիք վերադարձավ Հունաստանից, Բուլղարիայից, Ֆրանսիայից: 1936 թվականին Ֆրանսիայից Հայաստան ներգաղթեց 1800 մարդ: Նշված տասնամյակում Սովետական Հայաստան ներգաղթեց մոտ 7000 մարդ անհատական կարգով: Մինչև 1936 թվականը Սովետական Հայաստան վերադարձան ավելի քան 42 հազար տարագիր հայեր:

1936 թվականի հուլիսին հրապարակվեց ՍՍՀՄ Ժողովուրդների և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի որոշումը «Հայաստանի ՍՍՀ ներգաղթած հայերի համար հարմարություններ ստեղծելու միջոցառումների մասին»: Այդ որոշմամբ նախատեսվում էր նաև նախապատրաստական լայն աշխատանք կատարել 1937—1938 թվականներին մեծ թվով հայեր Սովետական Հայաստան ընդունելու ուղղությամբ: Սակայն միջազգային դրությունների լարվածության և մի շարք այլ պատճառներով հայրենադարձությունը դադարեց:

Հայրենադարձությանը հռանդուն կերպով աջակցում էին արտասահմանում գտնվող հայ հայրենակցական միությունները: Նոր Արաբկիրից և Նոր Բուլթանիայից բացի, լայնորեն ծավալվում էին Նոր Մալաթիա և Նոր Սեբաստիա, Նոր Խարբերդ, Նուբարաշեն (այժմ՝ Սովետաշեն) և այլ ավանների կառուցման ու բարեկարգման աշխատանքները:

Սովետական Հայաստանի տարեցտարի աճող հաջողությունները մեծ ուրախություն և ոգևորություն էին առաջ բերում սփյուռքահայության մեջ: Նրանք իրենց բախտն ու ապագան ավելի ու ավելի էին կապում մայր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի հետ:

ՎԵՑԵՐՈՐԻ ԲԱԺԻՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՍՈՑԻԱԼԻՉՄԻ ՀԵՏԱԳԱՋԱՐԳԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ: ՍՈՑԻԱԼԻՉՄԻ ԼԻԱԿԱՍԱՐ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ (1938—1958)

XXXII ԳՂՈՒՆ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐՍԿՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊԵՂՈՒՄԸ (1938—1941)

Հայաստանի աշխատավորների պայքարը Երրորդ հեղափոխության պայքարի կատարման համար

Երկրորդ հնգամյա պլանի կատարմամբ մեր երկիրը թևակոխեց զարգացման նոր փուլ՝ սոցիալիզմի կառուցումն ավարտելու և աստիճանաբար կոմունիզմին անցնելու ժամանակաշրջանը:

Կոմունիստական կուսակցության XVIII համագումարը, որը գումարվեց 1939 թ. մարտին, Սովետական Միության հիմնական տնտեսական խնդիրը համարեց՝ կարճ ժամանակամիջոցում տնտեսական տեսակետից հասնել և անցնել գլխավոր կապիտալիստական երկրներից: Համագումարը հաստատեց ՍՍՀՄ Ժողովրդական տնտեսության զարգացման երրորդ հեղափոխության պլանը (1938—1942 թթ.), որը նշանակալից բայց էր սոցիալիզմից կոմունիզմին անցնելու ճանապարհին:

Երրորդ հնգամյա պլանը նախատեսում էր ազգային հանրապետությունների տնտեսության ու մշակույթի մեծ առաջընթաց: Զարգացման նոր հեռանկարներ էր բացում հնգամյա պլանը նաև Հայաստանի համար: ՀԿ(բ) XII համագումարը, որը տեղի ունեցավ 1939 թվականի փետրվարին, քննարկեց ՍՍՀՄ Ժողովրդական տնտեսության զարգացման երրորդ հնգամյա պլանի վերաբերյալ ՀամԿ(բ) XVIII համագումարին ներկայացված թեզիսները և հավանություն տվեց դրանց: Համագումարը այդ թեզիսների հիման վրա մշակեց Հայկական ՍՍՀ Ժողովրդական տնտեսության զարգացման երրորդ հնգամյա պլանի հիմնական խնդիրները: Հնգամյակում Ժողովրդական տնտեսության մեջ

կապիտալ ներդրումների ծավալը Հայաստանում պետք է գերազանցեր նախորդ երկու հնգամյակների կապիտալ ներդրումների շահերը:

ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների հետ միասին Սովետական Հայաստանի աշխատավորությունը մեծ ոգևորությամբ ձեռնամուխ եղավ երրորդ հնգամյա պլանի կենսագործմանը:

Համկ(բ)Կ XVIII համագումարը բոլոր կուսակցական, սովետական, տնտեսական և արհմիութենական կազմակերպությունների առջև խնդիր դրեց՝ «Ծավալել սոցիալիստական մրցությունը և ստախանովյան շարժումը, ձեռնարկություններում ու հիմնարկներում ապահովելով աշխատանքային ամուր կարգապահություն և բոլոր աշխատավորների աշխատանքի բարձր արտադրողականություն»¹:

1937 թ. դեկտեմբերին Մոսկվայի մարզի արդյունաբերական ձեռնարկությունների ստախանովյանները դիմեցին ՍՍՀՄ բոլոր բանվոր-ծառայողներին երրորդ հնգամյակի առաջին տարվա արտադրական պլանները ժամկետից շուտ կատարելու կոչով: Այդ դիմումը լայն արձագանք գտավ Սովետական Հայաստանում: Մոսկվացիների օրինակով մրցության մեջ մտան Երևանի Կիրովի անվան կոմբինատի շինարարները, կաշվի, պահածոների, ծխախոտի, կոնյակի գործարանների, կարամելի ֆաբրիկայի, Լենինականի թեթև արդյունաբերության ձեռնարկությունների բանվոր-ծառայողները, Ղափանի, Ալավերդու պղնձագործները և ուրիշներ:

Հանրապետության շատ արտադրական ձեռնարկություններ (Կիրովականի Ա. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատ, Երևանի Ֆ. Ջերժինսկու անվան մեխանիկական գործարան, Լենինականի տեքստիլ կոմբինատ և այլն) մտան Համկ(բ)Կ XVIII համագումարի պատվին կազմակերպված համամիութենական սոցիալիստական մրցության մեջ, որը հիանալի արդյունքներ տվեց: Հայաստանում լաշտրեն ծավալվեց Ուրալի, Խարկովի, Սվերդլովսկի մեքենաշինական գործարանների բանվորների նախաձեռնությամբ սկսված բազմահաստոցայինների նորարարական շարժումը:

Շուտով Սովետական Հայաստանի արդյունաբերական ձեռնարկություններում շարժում ծավալվեց նաև պրոֆեսիաների համատեղման համար: 1938—1941 թթ. լայն տարածում ստացան ստախանովյան դպրոցները: Աշխուժացավ ռացիոնալիզատորների և գյուտարարների գործունեությունը: 1939 թվականին միայն Երևանի Ս. Մ. Կիրովի անվան կոմբինատում արվեց 104 ռացիոնալիզատորական առաջարկություն: Ալավերդու պղնձաձուլական գործարանում 30 ռացիոնալիզատոր-

րական առաջարկություններ արտադրության մեջ արմատավորելու շնորհիվ տնտեսվեց 320 հազար ռուբլի: Երևանի մեխանիկական գործարանի առաջավոր բանվոր, ՀՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ Պ. Մկրտչյանի ռացիոնալիզատորական առաջարկը ներդրվեց Սովետական Միության բազմաթիվ մեխանիկական գործարաններում:

Ինչպես նախորդ հնգամյակներում, այնպես էլ երրորդ հնգամյակում, սոցիալիստական մրցությունը ծավալվում էր ոչ միայն հանրապետության, այլև հարևան հանրապետությունների արդյունաբերական ձեռնարկությունների միջև: Հիանալի արդյունքներ տվեց Երևանի և Թբիլիսիի, Երևանի և Բաքվի, Լենինականի և Կիրովաբադի արդյունաբերական ձեռնարկությունների կոլեկտիվների միջև ծավալված մրցությունը:

Հնգամյակի տարիներին սոցիալիստական մրցության զարգացումը վարևոր դեր խաղաց աշխատանքի արտադրողականության բարձրացման գործում: Արտադրանքի սեկորդային աճ տվեցին պղնձագործները:

Երրորդ հնգամյակը կատարելու համար մղվող պայքարին ակտիվ մասնակցություն էին ցույց տալիս նաև գյուղի աշխատավորները: Լայնորեն ծավալվում էր տրակտորիստների ու կոմբայնավարների մրցությունը: Համառ պայքար էր մղվում գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման համար: Սոցիալիստական մրցությունը շարունակվում էր ծավալվել եղբայրական հանրապետությունների կոլտնտեսությունների միջև: Հիանալի արդյունքներ էր տալիս Վրացական ՍՍՀ Մախարաձեի շրջանի Նաթանբել գյուղի և Հայկական ՍՍՀ Հոկտեմբերյանի շրջանի Մեծ Շահրիար գյուղի, Կոտայքի շրջանի Քանաքեռ գյուղի և Վրացական ՍՍՀ Լյուբսեմբուրգի շրջանի Ֆախրուս գյուղի, Շամշադինի շրջանի և Աղբբեջանական ՍՍՀ Ղազախի շրջանի կոլտնտեսականների միջև օրեցօր ծավալվող մրցությունը:

Հնգամյա պլանի կատարման համար մղվող պայքարում աչքի ընկան Հայաստանի կոմերիտական կազմակերպությունները: Նրանք իրենց հատկապես լավ դրսևորեցին հարվածային կառույցներում, որոնք ունեին ժողովրդատնտեսական խոշոր նշանակություն: Հանրապետության նորակառույցներում, ինչպես և գործարաններում, ֆաբրիկաներում հաջողությամբ էին գործում կոմերիտական հարվածային բրիգադները:

Սոցիալիստական մրցության ծավալման գործում աչքի ընկան նաև Հայաստանի արհմիությունները: Նրանք մեծ գործ էին կատարում աշխատանքի արտադրողականության բարձրացման, աշխատավորների կուլտուր-կենցաղային պայմանների բարելավման ուղղությամբ:

¹ ՍՄԿԿ-ն... բանաձևերում և որոշումներում, III մ., էջ 459:

Հնգամյակի կատարման ընթացքը արդյունաբերության բնագավառում

Երրորդ հնգամյակի առաջին երեք տարվա պլանների կատարման արդյունքները ցույց տվեցին, որ հնգամյակը նույնպես ժամկետից շուտ կկատարվեր, եթե ֆաշիստական Գերմանիայի ուխտադրուժ հարձակմամբ ժամանակավորապես չընդհատվեր սովետական ժողովրդի խաղաղ ստեղծագործական աշխատանքը:

Սովետական Հայաստանի աշխատավորությունը մեծ նվաճումներ ձեռք բերեց երրորդ հնգամյակի առաջին երեք տարիներին: 1940 թ. մարտին 24(բ) Կ XIII համագումարն ամփոփեց հնգամյակի առաջին երկու տարվա պլանների կատարման արդյունքները և միջոցառումներ նշեց ամբողջ պլանի հետագա կատարման համար:

1938—1940 թվականներին Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ ներդրվեց 911,3 միլիոն ռուբլի, որը նշանակալի չափով գերազանցեց նախորդ հնգամյակում ներդրված գումարին: 1940 թվականին արդյունաբերական արտադրանքի աճն առաջին հնգամյակի արդյունաբերական արտադրանքի ամբողջ ծավալը գերազանցեց 180 %-ով, իսկ երկրորդ հնգամյակինը՝ 75 %-ով:

Այդ տարիներին հանրապետությունում շարունակում էին նոր թափով զարգանալ արդյունաբերության բոլոր ճյուղերը: Էլեկտրաէներգիայի արտադրության գծով Հայաստանն անցավ Սովետական Միության առաջավոր հանրապետությունների շարքը: Եթե 1940 թ. ՍՍՀՄ-ում մեկ շնչին ընկնող էլեկտրաէներգիայի քանակը 1913 թ. համեմատությամբ աճեց 15,5 անգամ, ապա Հայաստանում՝ 52 անգամ: Սկսվեց Սևանա լճի ստորերկրյա հիդրոէլեկտրակայանի շինարարությունը: Հանրապետությունում լայն ծավալ ստացավ գյուղական էլեկտրակայանների կառուցումը:

Հանրապետության քիմիական արդյունաբերության հսկան՝ Ս. Մ. Կիրովի անվան գործարանը 1940 թ. աշխարհում առաջինն սկսեց թողարկել նոր առևտրային սինթետիկ քլորոպրենային կաուչուկ: Կիրովի անվան գործարանն ստացավ միութենական նշանակություն և առաջնակարգ տեղ գրավեց հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների շարքում: Այնուհետև սկսեցին աշխատել Ալավերդու ծծմբաթթվի գործարանը, Կիրովականի քիմիական կոմբինատի ցիանամիդի ցեխը և այլն:

Երրորդ հնգամյակի տարիներին ծավալվեց նաև գունավոր մետալուրգիան և մեքենաշինական արդյունաբերությունը: Երևանի Ֆ. Չերժինսկու անվան մետաղամշակման գործարանն ամբողջապես վերազինվեց նոր տեխնիկայով և վերածվեց մեքենաշինական խոշոր գործարանի:

Նախապատերազմյան տարիներին հանրապետությունում ընդարձակվեց շինանյութերի արդյունաբերությունը: Մեծ աշխատանք կատարվեց տեքստիլ և թեթև արդյունաբերության զարգացման ուղղությամբ: 1940 թ. նոր գործարաններ ու ֆաբրիկաներ կառուցվեցին նոր Բայազետում, Կիրովականում և Ստեփանավանում: Ընդարձակվեց Լենինականի տեքստիլ կոմբինատի արտադրական կարողությունը: Հայաստանում առանձնապես արագ թափով էր զարգանում սննդի արդյունաբերությունը: 1939 թ. շահագործման հանձնվեց Երևանի ալրաղաց կոմբինատը, որը սարքավորված էր նորագույն տեխնիկայով: Հնգամյակի տարիներին մեծ աշխատանք կատարվեց պահածոների արտադրության ընդլայնման ուղղությամբ:

Արդյունաբերության հարաճուն վերելքի շնորհիվ զգալիորեն աճեց նրա տեսակարար կշիռը հանրապետության ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ, 1940 թվականին կազմելով 80,8 տոկոս՝ 1937 թվականի 72,1 տոկոսի դիմաց:

Հնգամյակի կատարման ընթացքը գյուղատնտեսության բնագավառում

Որոշ հաջողությունների հասավ նաև գյուղատնտեսությունը: 1940 թվականին Հայաստանում կոլտնտեսությունների մեջ ընդգրկվել էր բոլոր գյուղացիական տնտեսությունների 98,3 %-ը: Զգալի աշխատանք կատարվեց կոլտնտեսային կարգի ամրապնդման ուղղությամբ:

Սակայն, ինչպես ՍՍՀՄ մյուս հանրապետություններին, այնպես էլ Սովետական Հայաստանի առանձին շրջաններում, խախտելով գյուղատնտեսական արտելի կանոնադրությունը, շուտով սկսեցին թուլանալ կոլտնտեսային հողօգտագործման բնագավառում: Շատ տեղերում կոլտնտեսականների տնամերձների շափերը արհեստականորեն ավելացվել էին հանրային հողերի հաշվին: Օրինակ՝ 1939 թվականին Հայաստանում շուտով էր ավելի քան 22 հազար հեկտար հանրային հող: Առանձին դեպքերում կոլտնտեսականներին թույլատրվել էր իրենց տնամերձ հողամասերը փոխարինել կոլտնտեսության ավելի լավ հողամասերով: Կոլտնտեսային հողօգտագործման բնագավառում տեղ գտած լուրջ սխալներն ուղղելու գործում կարևոր նշանակություն ունեցավ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ՍՍՀՄ Ժողովրդխորհրդի 1939 թ. մայիսի 27-ի «Կոլտնտեսությունների հանրային հողերը շուտովից պահպանելու միջոցառումների մասին» որոշումը:

Հնգամյակի տարիներին ընդարձակվեցին հատկապես տեխնիկական կուլտուրաների ցանքատարածությունները, բարձրացավ բերքատրվությունը:

Շոշափելի աշխատանքներ կատարվեցին ոռոգման գծով: 1939 —

1940 թթ. շահագործման հանձնվեցին Գալմայի (Երևան), Նալբանդի (Սպիտակի շրջան) և Սիսիանի ջրանցքները: Ղամարլուի և Զանգիբասարի շրջաններում ավարտվեցին ավելի քան չորս հազար հեկտար ճահկալած հողերի շորացման ու ոռոգման աշխատանքները:

Զգալի չափով ամրապնդվեց գյուղատնտեսության տեխնիկական դինվածությունը: 1940 թվականին ՄՏԿ-ների թիվը հասավ 33-ի: Այդ նշանակում է, որ մեքենա-տրակտորային կայաններ էին գործում հանրապետության բոլոր շրջաններում: Որոշակի հաջողություններ ձեռք բերվեցին գյուղատնտեսության էլեկտրիֆիկացման բնագավառում:

Հանրապետության լավագույն կուլտնտեսությունները, սովխոզները, մեքենա-տրակտորային կայանները և գյուղատնտեսության առաջավորներն իրենց նվաճումները ցուցադրեցին 1939 թվականի օգոստոսին Մոսկվայում բացված համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսում: Հայկական ՍՍՀ-ից ցուցահանդեսին մասնակցում էին 241 կազմակերպություն և 1517 առաջավորներ:

Գյուղատնտեսության ասպարեզում ձեռք բերած աչքի ընկնող հաջողությունների և ցուցահանդեսի մասնակիցների համար սահմանված ցուցանիշները գերակատարելու համար առաջին աստիճանի դիպլոմի արժանացավ 8 կազմակերպություն: 35 կազմակերպություն ստացավ երկրորդ աստիճանի դիպլոմ: Գյուղատնտեսության 199 առաջավորներ պարգևատրվեցին ոսկե և արծաթե մեդալներով: ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Վաղարշապատի շրջանի «Անաստված» կուլտնտեսությունը պարգևատրվեց Լենինի շքանշանով, Ղամարլուի շրջանի «Փարիզյան կոմունա» կուլտնտեսությունը՝ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

Չնայած գյուղատնտեսության ընդհանուր վերելքին, մասնավորապես, հիշյալ ցուցանիշներին, երրորդ հնգամյակում դեռևս շատ էր ետ մնում անասնապահությունը: Երկրորդ հնգամյակի համեմատությամբ անասնապահական մթերքների արտադրությունը գրեթե մնաց նույն մակարդակի վրա:

**Ժողովրդի կենսա-
նպաստի բարձ-
րացումը**

Կոմունիստական կուսակցության մշտական հոգատարության շնորհիվ երրորդ հնգամյակի տարիներին անշեղորեն աճում էր ժողովրդի նյութական և կուլտուրական բարեկեցությունը: Բարձրանում էր բանվորների և ծառայողների ռեալ աշխատավարձը, աճում էին կուլտնտեսությունների եկամուտները: Օրինակ՝ 1936 թվականին մեկ աշխատավորի միջին տարեկան աշխատավարձը կազմում էր 3095 ռուբլի, իսկ 1939 թվականին՝ 4105 ռուբլի: Կուլտնտեսականների դրամական եկամուտները 1935 թվականի համեմատությամբ ավելացան հինգ անգամ: Զգալիորեն

աճում էր սովետական առևտուրը: 1937 թվականի համեմատությամբ 1940 թվականին մանրածախ ապրանքաշրջանառությունը կրկնապատկվեց:

Ժողովրդի նյութական բարեկեցության անշեղ վերելքի պայմաններում զգալիորեն ավելացավ նաև հանրապետության բնակչության թիվը: 1939 թվականին Հայաստանում ապրում էր 1 281 599 մարդ: Առանձնապես արագ թափով էր աճում քաղաքային բնակչությունը:

Հանրապետությունում լայնորեն ծավալվում էր բնակարանային շինարարությունը: 1938—1941 թվականներին Հայաստանի քաղաքներում շահագործման հանձնվեց 247 հազար քառ. մ բնակելի տարածություն: Անճանաչելիորեն փոխվել էին քաղաքներն ու գյուղերը: Առանձնապես ծաղկում էր հանրապետության մայրաքաղաք Երևանը: Յուրաքանչյուր ծաղկում էր հանրապետության մայրաքաղաք Երևանը: Յուրաքանչյուր հայ մարդու մեջ օրինական հպարտության զգացմունք էր առաջացնում քաղաքի մայրուղիների հանգուցակետ հանդիսացող Լենինի հրապարակը՝ իր ճարտարապետական մոնումենտալ կառույցներով: Երևանը դարձավ հանրապետության տնտեսական և մշակութային կյանքի խոշոր կենտրոն: Կարճ ժամանակամիջոցում աճեց նաև նրա բնակչության թիվը: 1920 թվականին Երևանն ուներ 30 հազար բնակիչ, իսկ 1939 թվականին՝ ավելի քան 200 հազար բնակիչ:

Բուռն թափով զարգանում էին Լենինականը, Կիրովականը, Ալավերդին, Ղափանը, Արթիկը: Բարեկարգվում էին հանրապետության մյուս բնակավայրերը: Ընդարձակվեց ժողովրդական առողջապահության ցանցը, բարելավվեց աշխատավորության բժշկական սպասարկումը, խոշոր նվաճումներ ձեռք բերվեցին կուլտուրական շինարարության բնագավառում: Հաջողությամբ իրագործվեց կուլտուրական հեղափոխությունը Հայկական ՍՍՀՄ-ում:

Գյուղում կուլտուրական հեղափոխության հաղթանակին մեծապես նպաստեց կուլտնտեսային շինարարությունը՝ գյուղի սոցիալիստական վերակառուցումը, որն սկսվել էր դեռևս առաջին հնգամյակի տարիներին: Կուլտնտեսային կարգի հաղթանակի շնորհիվ զգալիորեն փոխվել էր գյուղի դեմքը, այն դարձել էր անճանաչելի: Գնալով գյուղում ավելի լայն թափ էր ստանում կուլտուր-կենցաղային նոր շինարարությունը: Օրինակ՝ 1938—1940 թթ. միայն Ղամարլուի շրջանում կուլտնտեսականները կառուցեցին մոտ 3500 նոր բնակարան, կուլտնտեսությունները՝ 20 ակումբ, 4 կուլտնտեսային ծննդատուն, 100 մանկամասեր ու մանկապարտեզ: Շրջանի բոլոր գյուղերում գործում էին մասսայական դպրոցներ: 13 գյուղում անցկացվեց էլեկտրական լուսավորություն: 1939 թ. ավարտվեց շրջանի մեծ ջրմուղի կառուցումը, որն ավելի քան 30 գյուղ ավարտվեց շրջանի մեծ ջրմուղի կառուցումը, որն ավելի քան 30 գյուղ ապահովեց աղբյուրի սառնորակ ջրով: Կառուցվեց շրջանային թատրոնի

գեղեցիկ շենք և այլն: Նույնաման նվաճումներ ձեռք բերեցին նաև Հաստատանի շատ այլ շրջաններ:

Հայրենական պատերազմի ճախարակին

1938—1940 թթ. Սովետական Միության միջազգային կյանքում կարևոր իրադարձություններ տեղի ունեցան: Այդ տարիներին սովետական կառավարությունը, հավատարիմ մնալով իր խաղաղասիրական քաղաքականությանը, բոլոր հնարավոր միջոցներով աշխատում էր հակահարված տալ ֆաշիստական ագրեսորներին՝ առաջին հերթին ֆաշիստական Գերմանիային, որը շարունակում էր ավելի մեծ թափով նոր երկրներ զավթել:

1939 թ. սեպտեմբերին սկսվեց համաշխարհային երկրորդ պատերազմը: Այդ ժամանակ սովետական զորքերը մեր երկրի արևմտյան սահմանները հիտլերյան հարձակումից պաշտպանելու համար անցան սովետա-լեհական սահմանը և ազատագրեցին Արևմտյան Ուկրաինան և Արևմտյան Բելոռուսիան:

1939—1940 թթ. ձմռանը սովետական զորքերը շախչախեցին ֆին ռազմամոլներին, որի շնորհիվ ամրապնդվեց մեր երկրի հյուսիս-արևմտյան սահմանը: Շուտով սովետական իշխանությունը վերականգնրվեց Մերձբալթիկայում: Այդ նույն ժամանակ ՍՍՀՄ-ի կազմի մեջ մտան նաև Բեսարաբիան և Հյուսիսային Բուկովինան: Սովետական Միությունը դարձավ 16 եղբայրական միութենական հանրապետություններից կազմված հզոր տերություն:

1938—1939 թթ. սովետական բանակը կործանել հարվածներ էր հասցրել ճապոնական սամուրայներին խասան լճի (Վլադիվոստոկի մոտ) և խալխին-գյոլ գետի (Մոնղոլական Ժողովրդական Հանրապետություն) շրջաններում:

1940 թվականի դարնանը համաշխարհային պատերազմն ավելի բորբոքվեց: Ապրիլին ֆաշիստական Գերմանիան օկուպացիայի ենթարկեց Դանիան և Նորվեգիան, մայիսին՝ Հոլանդիան, Բելգիան և Լյուքսեմբուրգը: Հունիսին Գերմանիային անձնատուր եղավ Ֆրանսիան: Շուտով Գերմանիայի դաշնակիցներ դարձան Իտալիան, Հունգարիան, Ռումինիան: 1941 թ. գարնանը գերմանական զորքերը մտան Բուլղարիա, Հարավսլավիա և Հունաստան:

Պատերազմի վտանգը մոտենում էր մեր երկրի սահմաններին: Գերմանա-ֆաշիստական զավթիչներն արագացրին ՍՍՀՄ-ի վրա հարձակվելու նախապատրաստական աշխատանքները, մեծ քանակությամբ զորքեր կենտրոնացրին սովետա-գերմանական սահմանում: Կարված իրագործություն էր ստեղծվել նաև ՍՍՀՄ հարավային սահմանների մոտ: Իմպերիալիստական պետությունները Մերձավոր Արևելքում, զխավո-

րապես Թուրքիայում, ռազմական պատրաստություններ էին տեսնում հարմար առիթի դեպքում ՍՍՀՄ-ի վրա հարձակվելու համար: Գեռևս 1939 թ. հոկտեմբերին Անկարայում Անգլիայի, Ֆրանսիայի և Թուրքիայի միջև կնքվել էր փոխադարձ օգնության պայմանագիր, որը, փաստորեն ուղղված լինելով ՍՍՀՄ-ի դեմ, անմիջական սպառնալիք էր ստեղծում առաջին հերթին Անդրկովկասի սովետական հանրապետությունների համար:

1938—1940 թթ. սովետական բանակի մղած ազատագրական մարտերին ՍՍՀՄ մյուս ժողովուրդների զավակների հետ միասին ակտիվ մասնակցություն ունեցան նաև հայ ժողովրդի զավակները: Նրանցից շատերը աչքի ընկան խասան լճի և խալխին-գյոլի շրջաններում, Արևմտյան Ուկրաինայի, Արևմտյան Բելոռուսիայի, Մերձբալթիկայի ազատագրման համար մղված մարտերում:

Սովետա-ֆիննական պատերազմում 7-րդ բանակի հրետանու հրամանատարն էր Միքայել Պարսեղովը, որը մարտերը ղեկավարելու գործում ցուցաբերած հմտության և քաջագործության համար ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով արժանացավ Սովետական Միության հերոսի կոչման, իսկ ՍՍՀՄ Ժողովմիտրոֆի որոշմամբ՝ գեներալ-լեյտենանտի զինվորական կոչման: Մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և մարտերում ցուցաբերած խիզախության ու հերոսության համար ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Սովետական Միության հերոսի կոչման արժանացավ կարմիրբանակային Կարապետ Սիմոնյանը: Նա հայ ժողովրդի զավակներից առաջինն էր, որ արժանացավ այդ բարձր կոչմանը: Սովետական Միության հերոսի կոչում ստացան նաև կրտսեր հրամանատարներ Իսահակ Մանասյանը և Գրիգոր Հայրապետյանը: Շատ հաճախում էր կուրծքը զարդարվեց Սովետական Միության շքանշաններով ու մեդալներով:

Սովետական բանակի ազատագրական միսիան մեծ հիացմունք էր առաջ բերել հայ ժողովրդի մեջ: 1939—1940 թթ. հանրապետության քաղաքներում ու գյուղերում տեղի էին ունենում աշխատավորների բազմամարդ միտինգներ՝ Արևմտյան Ուկրաինայի, Արևմտյան Բելոռուսիայի, Բեսարաբիայի, Մերձբալթիկայի ազատագրման, սպիտակ ֆիններին հակահարված տալու առթիվ, որտեղ հավանություն էին տալիս սովետական կառավարության բոլոր միջոցառումներին:

նենգ թշնամուն խորտակիչ հարվածներ էր հասցնում գրոհային օդաչու, հայ ժողովրդի պանծալի զավակ Նելսոն Ստեփանյանը, որի հուշակը տարածվեց ամբողջ երկրում:

Հայրենական պատերազմում աչքի ընկած առաջին հայ խիզախներից էր նաև էսկադրիլայի հրամանատարի տեղակալ, ավագ լեյտենանտ Պատրիկ Գազազյանը: Նա առաջին հայ ռազմիկն էր, որ Հայրենական պատերազմի սկզբին, 1941 թվականի հուլիսի 8-ին, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով:

1941 թվականի հոկտեմբերի սկզբներին «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթում հրատարակված մի ռազմաճակատային հաղորդման մեջ Հայաստանի կոմերիտմիության լավագույն սաներից մեկը՝ Սերգեյ Գրիգորյանը, իր կատարած սխրագործությունների համար ստացել էր «Սասունցի Դավթի կրտսեր եղբայր» անունը: Երբ ռազմաճակատի հատվածներից մեկում թշնամին շարքից դուրս է բերում Ս. Գրիգորյանի հրացանը, նա գոտուց հանելով սակրավորի կացինը, բարձրանում է գերմանական տանկի վրա և ոչնչացնում տանկի ողջ անձնակազմը:

1942 թվականի հունիսի 20-ին «Պրավդա» թերթում հաղորդում տպագրվեց քաղաքի տեղակալ Արզամ Պետրոսյանի քաջագործության մասին: Երբ ֆաշիստները համոզվում են, որ սոսկալի տանջանքներից հետո անհնարին է Արզամից որևէ ռազմական գաղտնիք իմանալ և լսելով նրա «կմեռնեմ, բայց հայրենիքս չեմ դավանանի» պատասխանը, նրանք Արզամին հրամայում են գերեզման փորել իր համար: Սակայն փոսը փորելիս Արզամը բահի հարվածով սպանում է ֆաշիստ պահակին, ոչնչացնում է նաև մյուս դահիճներին և ծանր վիրավորված վիճակում անցնում ռազմաճակատի գիծը: Ապաքինվելուց հետո նա շարունակում է իր պայքարը թշնամու դեմ:

Հայրենական մեծ պատերազմի առաջին հայ խիզախների թիվը մեծ է: Նրանց մեջ արժանի է հիշատակության նաև օդաչու կազմակերպիչ Զափախյանը, որը հայ ռազմիկներից առաջինն է արժանացել Սովետական Միության հերոսի կոչման (1942 թ. հուլիս):

Հայրենական պատերազմի առաջին ամիսներին թշնամու դեմ մղվող պայքարում հայ ժողովրդի գործադրած մեծ ջանքերը արժանացան կուսակցության և սովետական կառավարության բարձր գնահատականին: «Պրավդա» թերթի 1941 թվականի օգոստոսի 25-ի առաջնորդող հոդվածը կրում էր «Հայ ժողովուրդը Սովետական Միության ազատագրական պատերազմի մարտական մասնակիցն է» վերնագիրը: «Հայ ժողովուրդը, — ասված է այդ հոդվածում, — հաստատապես իր մարտա-

կան տեղն է գրավել անկախության և ազատության համար Սովետական Միության բոլոր ժողովուրդների մղած ընդհանուր պայքարում»:

1941 թվականի վերջերին Հայաստանի կոմունիստական կուսակցությունն ու կառավարությունը ձեռնամուխ եղան հանրապետության տերիտորիայում կարմիր բանակի ազգային զորամիավորումներ ստեղծելու գործին: Հայրենական պատերազմի առաջին շրջանում ազգային զորամասերի ստեղծումը կարևոր նշանակություն ունեցող միջոցառում էր: Ազգային դիվիզիաներում ռազմաքաղաքական ուսուցումը տարվում էր մայրենի լեզվով: Դա անհամեմատ հեշտացնում էր բանակ կանչված, գլխավորապես շարքային մարտիկների ռազմական ուսուցումը հաջողությամբ կազմակերպելու գործը: Ազգային հանրապետությունների ղուկայում կազմակերպվող գործը: Ազգային հանրապետությունների կուսակցական և սովետական կազմակերպությունները ամեն տեսակ աջակցություն էին ցույց տալիս նոր կազմակերպվող դիվիզիաներին: Նրանք հոգ էին տանում այդ դիվիզիաների սպառազինման, հանդերձավորման, սննդի մասին, ինչպես և հանրապետության ղեկավար կազմակերպության մոբիլիզացնում և ուղարկում էին այդ դիվիզիաները որպես քաղաշխատողներ, հրամանատարներ և այլն:

1941 թ. դեկտեմբերին Երևանում զնդապետ Սիմոն Զաքյանի հրամանատարությամբ ձևավորվեց 89-րդ հրաձգային դիվիզիան: Դա ապագա Թամանյան դիվիզիան էր, որը փառավոր ուղի անցավ Կովկասյան լեռներից մինչև Քեոլին:

1942 թվականի հունվարին Կերչում Ս. Զաքյանի հրամանատարությամբ ստեղծվեց հայկական 390-րդ դիվիզիան, որը մինչև 1942 թվականի մայիսը Դրեմի ռազմաճակատի մյուս զորամասերի հետ միասին մասնակցեց Կերչի պաշտպանությանը: Այդ նույն օրերին Հայաստանում գտնվող 409-րդ դիվիզիայի զորամասերը համալրվեցին հայ ռազմիկներով ու սպաներով, այն դարձավ հայկական դիվիզիա: 1942 թվականի գարնանը ձևավորվեց հայկական 408-րդ զորամիավորումը, իսկ նրանում կազմակերպվեց 261-րդ դիվիզիան: Հարավ-արևմուտքյան ռազմաճակատում հերոսաբար էր կռվում Կ. Ն. Վորոշիլովի անվան 76-րդ լեռնահրաձգային դիվիզիան, որը ձևավորվել էր դեռևս Հայաստանում սովետական իշխանության հաստատման օրերին և Հայրենական պատերազմի սկզբներին կանգնած էր Արաքսի ափին:

Հայկական ազգային դիվիզիաներում ծառայում էր բանակ կանչված հայ զինվորների և հրամանատարների մի մասը: Ծառայողները գտնվում էին սովետական բանակի տարբեր զորամասերում: Անդրկովկասի տերիտորիայում ձևավորված մի քանի ոչ ազգային դիվիզիաների կանգնակազմի 30—40 % -ը հայեր էին: Իրենց հերթին հայկական դիվի-

գիտնեցող ևս զուտ ազգային չէին: Նրանց շարքերում կային ուսանող-վրացիներ, ադրբեջանցիներ, քրդեր և այլ ազգությունների պատկանող-ներ:

Հայկական դիվիզիաներն ունեին իրենց թերթերը, որոնք մեծ դեր էին խաղում հայ մարտիկների ուղղափառական դաստիարակության գործում, նրանց ոգեշնչում հերոսական սխրագործությունների: Հայրենական մեծ պատերազմի ժամանակ սովետական բանակում հրատարակվում էր հայկական 16 անուն թերթ, որոնցից 7-ը ուղղափառապաշտական օրգաններ էին: Հայկական առաջին ուղղափառապաշտական թերթը («Մարտական գրոհ») լույս տեսավ 1942 թվականի հունվարին, Արիմում:

Հայ ուղղափառական
մասնակցությունը
Մոսկվայի պաշտ-
պանությունը

1941 թվականի աշնանը արյունահեղ մարտեր էին տեղի ունենում Մոսկվայի մատույցներում: Նպատակ ունենալով «կայծակնային» հարվածով գրավել սովետական երկրի սիրտը՝ Մոսկվան, գերմանական հրամանատարությունը այստեղ կենտրոնացրել էր 80 դիվիզիա:

Մեր բազմազգ երկրի ամբողջ ժողովուրդը ոտքի կանգնեց հարազատ մայրաքաղաքը պաշտպանելու համար: Շուտով թշնամին Մոսկվայի տակ ջախջախվեց և ետ շարժվեց դեպի արևմուտք: Հույս ցնդեց գերմանական բանակի անպարտելիության առասպելը:

Մոսկվայի պաշտպանների շարքերում հերոսաբար կռվում էին բազմաթիվ հայեր՝ շարքային մարտիկից մինչև ականավոր զորավարը: Մոսկվան թանկ էր նաև ամբողջ հայ ժողովրդի համար:

Մոսկվա քաղաքի օդային պաշտպանության կազմակերպիչներից էր ավիացիայի գեներալ-մայոր, հետագայում ավիացիայի մարշալ Արմենակ Խանփերյանցը (Սերգեյ Խուդյակովը): Այդ օրերից սկսեց դրսևորվել նրա փայլուն ուղղափառ տաղանդը:

Մոսկվայի պաշտպանության գործում ներդրում ունի հրետանու գեներալ-լեյտենանտ, Սովետական Միության հերոս Միքայել Պարսեղովը, որը հարավ-արևմտյան ուղղափառապաշտական հրետանու հրամանատարն էր: Նրա տեղակալն էր գնդապետ Իվան Վեբելովը, որին Մոսկվայի համար մղված մարտերում ցուցաբերած ուղղափառ հմտության համար շնորհվեց հրետանու գեներալ-մայորի կոչում: Մոսկվայի մոտ գտնվող Ռազոչ և Կլին քաղաքների ազատագրման համար մղված մարտերում աչքի ընկավ գնդապետ Ստեփան Կինոսյանը (հետագայում՝ գեներալ-լեյտենանտ):

Ռուսական զենքի հինավուրց դարբնոց Տուլայի հատվածում հերոսաբար էր կռվում հրաձգային 340-րդ դիվիզիան գնդապետ (հետագա-

յում՝ գեներալ-լեյտենանտ) Սարգիս Մարտիրոսյանի հրամանատարությամբ: Սովետական մյուս զորամասերի հետ միասին Ս. Մարտիրոսյանի դիվիզիայի գլուցադրվածները ետ մղեցին հիտլերյան զենքավոր Գուդեի զորանի տանկային զորհները: Թշնամուն չհաջողվեց մտնել Տուլա, որը քրեանի տանկային զորհները: Թշնամուն չհաջողվեց մտնել Տուլա, որը Մոսկվայի պաշտպանության կարևորագույն հանգույցներից էր: Սովետական Միության մայրաքաղաքի համար մղված հարձակողական ճակատամարտում Ս. Մարտիրոսյանի մարտական գործունեությանը բարկատաճարում Ա. Մարտիրոսյան է տվել ականավոր զորավար, Արևմտյան ուղղափառապաշտական Գ. Կ. Ժուկովը:

Մոսկվայի պաշտպանների շարքերում էին հայր և որդի՝ գնդապետ (հետագայում՝ գեներալ-մայոր) Նիկոլայ Հովհաննիսյանը և 20-ամյա կապիտան Ռեմիկ Հովհաննիսյանը: Գեներալների 6-ին Մոսկվայի մոտ հարձակման անցավ գնդապետ (հետագայում՝ գեներալ-մայոր) Հայկ Մարտիրոսյանի 239-րդ հրաձգային դիվիզիան:

Մոսկվայի մոտ, Նարո-Ֆոմինսկ քաղաքի ազատագրման համար մղված մարտերում, առավել աչքի ընկնելու համար մոտո-հրաձգային գնդի հրամանատար, մայոր (հետագայում՝ գնդապետ) Ներսես Բալուգնի հրամանատար, մայոր (հետագայում՝ գնդապետ) Մոսկվայի հայ պաշտպաններից յանը ստացավ «Բագրատիոն» անունը: Մոսկվայի հայ պաշտպաններից են ինժեներ-փոխգնդապետ (հետագայում՝ գեներալ-մայոր) Ալեքսանդր Կարաօզլյանը, մայոր Հրանտ Գրիգորյանը, ավագ լեյտենանտ (այժմ՝ գեներալ-մայոր) Համբարձում Համբարձումյանը, գնդի հրամանատար Համբարձում Մելիքյանը, կրտսեր լեյտենանտ Հայկ Շաղունցը և շատ ուրիշներ: Շատ հայեր հերոսաբար կռվում էին Մոսկվայի ժողովրդական աշխարհազորի և կոմունիստական դամարտակների շարքերում: Մոսկվայի պաշտպանության մարտերում հերոսի մահով ընկան հրետանային միազորման հրամանատար մայոր Հայկ Ղազարյանը, ժողովրդական աշխարհազորայիններ, պրոֆ. Հովհ. Ալիբեկյանը, Երևանի պետական համալսարանի դասախոս Գրիգոր Կուլոզլյանը, Մոսկվայի Պլեխանովի անվան ինստիտուտի դասախոս, տնտեսական գիտությունների թեկնածու Արսեն Աբրահամյանը և ուրիշներ:

Հայ ուղղափառական
սխրագործությունները
Լեհիզգրադի
պաշտպանության
ժամանակ

Հայրենական պատերազմի էպոպեայի նշանավոր դրվագներից մեկը Լեհիզգրադի հրետանական պաշտպանությունն էր: Ավելի քան երկու և կես տարի տևեցին Հոկտեմբերյան հեղափոխության օրրան Լեհիզգրադի համար մղված ծանր մարտերը:

Այստեղ ևս հերոսության ու անվնասության փայլուն օրինակներ ցույց տվեցին նաև հայ ժողովրդի զավակները: Նրանցից շատերի անուն-

ները մտել են այդ հերոս քաղաքի պաշտպանության համար մղված պայքարի տարեգրության մեջ:

Բլոկադայի օրերին Լենինգրադի պաշտպանության կազմակերպիչներին մեկը նավատորմի ծովակալ Հովհաննես Իսակովն էր, որը մեծ դեր խաղաց նաև մյուս ռազմաճակատներում: Երբ սկսվեց Հայրենական պատերազմը, նա ՍՍՀՄ ռազմածովային ուժերի ժողովրդական կոմիսարի առաջին տեղակալն էր: Շուտով Հ. Իսակովը նշանակվում է հյուսիս-արևմտյան ուղղությամբ գործող զորքերի հրամանատարի տեղակալ և գլխավորում ռազմածովային ուժերի մարտական գործողությունները: Լենինգրադի պաշտպանության գործում անօրինակ հերոսական սխրագործություններ կատարեցին Իսակովի ղեկավարած բալթյան կարմրագրոշ նավատորմի և կաղոզայի ռազմական նավատորմիկի հերոս ծովայինները:

Լենինգրադի պաշտպանության համար մղված մարտերում աչքի ընկավ գրոհային օդաչու, գվարդիայի փոխգնդապետ Նելսոն Ստեփանյանը: Հայ ժողովրդի այդ խիզախ զավակի անունը առհավետ մտավ Հայրենական մեծ պատերազմի փառապանծ տարեգրության մեջ: Նա ֆաշիստական զավթիչների դեմ հերոսաբար մարտնչել է նաև Ուկրաինայում, Ղրիմում և այլ տեղերում, բայց ամենից շատ՝ Լենինգրադում: Իր մարտական սխրագործությունների համար «բալթյան մրրկահավը», ինչպես ռազմաճակատում անվանում էին Նելսոն Ստեփանյանին, 1942 թվականի հոկտեմբերին արժանացավ Սովետական Միության հերոսի բարձր կոչման: «Քաջերից քաջի, այդ երեկի մարդու մասին, — գրել է ծովակալ Իսակովը, — շատ գրեթե կարելի է գրել՝ այնքան շատ ուսանելի բան է կապված նրա փառավոր անվան հետ»: Նելսոն Ստեփանյանը հերոսի մահով ընկավ 1944 թվականի դեկտեմբերին թշնամու դեմ մղված անհավասար գոտեմարտում: ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությանը համահունչ նրան շնորհեց Սովետական Միության կրկնակի հերոսի կոչում: Սովետական խիզախ բազեի կիսանդրին կանգնեցվել է իր ծննդավայր Շուշի քաղաքում և Երևանում, ուր նա անց է կացրել իր մանկությունն ու պատանեկությունը:

Լենինգրադի պաշտպանության ժամանակ հերոսի մահով զոհվեց հայ ժողովրդի անվեհեր զավակ, գեներալ-մայոր Բենիամին Գալստյանը: «Գալստյանի անունը, — գրել է ռուս նշանավոր գրող Ն. Տիխոնովը, — մենք կմտցնենք Լենինգրադի հերոս պաշտպանների անջնջելի ցուցակում և կհիշենք նրան ընդմիշտ, որպես մեր մեծ քաղաքի սքանչելի հայրենասերի»: Լենինգրադում Նեսկիե կավրի գերեզմանոցում, մի գերեզմանաքարի վրա փորագրված են հետևյալ սրտառու խոսքերը. «Ընկեր, հանիր գլխարկդ, այստեղ թաղված է հայ ժողովրդի նշանավոր

զավակ, Լենինգրադի հերոսական պաշտպան, գեներալ-մայոր Բենիամին Հովհաննեսի Գալստյանը»:

Լենինգրադի հերոսական պաշտպանության գործում քաջի համբավված ստակեց հետախույզ Գեորգ Իսրայելյանը: Մարտական առաջադրանքները օրինակելիորեն կատարելու համար խիզախ սակրավորը առաջինը սովետական բանակում արժանացավ «Փառքի» երրորդ աստիճանի շքանշանի: Հետագայում նա պարգևատրվեց նաև «Փառքի» երկրորդ և առաջին աստիճանի շքանշաններով: Մարտերում աչքի ընկան նաև կոմերիտականներ Ավագ Անտինյանը, հետագայում՝ Սովետական Միության հերոս, Սուրեն Ղազարյանը և ուրիշներ: Մեծ Լենինի քաղաքի համար մղված հերոսամարտում իրենց արժանի ներդրումն ունեն նաև հայ ծովայինները:

Լենինգրադի պաշտպանության օրերին հերոսական աշխատանք էր կատարում նաև քաղաքի բազմամիլիոն բնակչությունը, այդ թվում և մտավորականությունը: Չնայած բլոկադայի հետևանքով ստեղծված ծանր վիճակին, քաղաքում շարունակվում էր գիտական աշխատանքը: Էրմիտաժի դիրեկտոր, ակադեմիկոս Հ. Օրբելին մեծ ջանքեր էր թափում ֆաշիստական ուժերի թիրախներից փրկելու ռուսական մշակույթի համաշխարհային նշանակություն ունեցող գանձերը: Պատերազմի տարիներին Լենինգրադում իր արտիստական փայլուն գործունեությունը չէր դադարեցնում մեծատաղանդ դերասան Վահրամ Փափաղյանը: Նա իր արվեստով ակտիվ մասնակցություն էր ցուցաբերում հերոս քաղաքի պաշտպանության գործին:

Հայ ռազմիկները
Ղրիմի համար մղված
մարտերում

1941 թվականի աշնանը ֆաշիստական հորդանքերը ներխուժեցին Ղրիմ: Կովկասի համար լուրջ վրտանդ ստեղծվեց: Թշնամին ռազմաճակատի այդ հատվածում կենտրոնացրել էր մեծ ուժեր, որի շնորհիվ նրան հաջողվում էր առաջ շարժվել:

Կերչի թերակղզում տեղի ունեցած կատաղի մարտերում աչքի ընկավ հայկական 390-րդ դիվիզիան: Այդ մարտերում հերոսի մահով ընկան դիվիզիայի հրամանատար Ս. Զաքարյանը և հայ ժողովրդի շատ այլ զավակներ: 1942 թվականի ապրիլին դիվիզիան համալրվեց նոր, թարմ ուժերով: Այդ նույն ժամանակ Հայկական ՍՍՀ աշխատավորության ռազմաճակատ այցելած պատվիրակությունից դիվիզիան մարտական դրոշներ ստացավ: Ռազմիկները երգվեցին հաղթանակի փառքով օժել այդ դրոշները: Դիվիզիան ահեղ մարտեր մղեց թշնամու դեմ, բայց սովետական մյուս զորամասերի հետ միասին հարկադրված եղավ մայիսին թողնել Կերչի թերակղզին:

Շատ հայ ուղղափառներ արիության շտեմով օրինակներ ցույց տրվեցին Սևաստոպոլի հերոսական պաշտպանության ժամանակ:

Ղրիմի և ապա Կովկասի սեծովյան ափերի պաշտպանության համար մղված մարտերում խոշոր դեր կատարեց ծովակալ Հ. Իսակովը, որը 1942 թվականի գարնանից նշանակվել էր հյուսիս-կովկասյան ուղղամասակառի հրամանատարի տեղակալ:

Սևաստոպոլի պաշտպանության գործում աչքի ընկան 386-րդ հրաձգային դիվիզիայի քաղաքաժնի պետ, գումարտակային ավագ կոմիսար Մամիկոն Ղուկասյանը, գնդապետ Հմայակ Մեհրաբյանը, 25-րդ հրաձգային դիվիզիայի գումարտակներից մեկի կոմիսար Գրիգորյանը և շատ ուրիշներ:

Սևաստոպոլի հերոսական պաշտպանության օրերին թշնամուն ահա սարսափ էր պատճառում «Ժելեզնյակով» լեգենդար զրահագնացքը, որի հրամանատարն էր կապիտան Գ. Սահակյանը: Քաղաքի պաշտպաններին թնդանոթային կրակով մեծ օգնություն էր ցույց տալիս «Սևաստոպոլ» գծանավը, որի հրետանու հրամանատարն էր Մ. Պետրոսյանը: Կուսակցության Սևաստոպոլի քաղաքային կոմիտեի շենքում փակցված հուշատախտակին, զոհվածների շարքում, ոսկե տառերով գրված է նաև քաղկոմի արդյունաբերական բաժնի վարիչ, ինժեներ Ալեքսանդր Պետրոսյանի անունը: Նա մեծ դեր խաղաց քաղաքում մնացած պաշտպանական ձեռնարկությունների ղեկավարման գործում: «Յոթ ամսում մենք բնաջնջել ենք տասնյակ հազարավոր հիտլերյան ավազակների, — ասված է աղջիկ ծովային Ստեփանյանի՝ իր հորը գրած նամակում, — բայց այժմ հասել են վճռական օրերը: Մենք ֆաշիստներին կոչնչացնենք մինչև մեր վերջին արյան կաթիլը, ես նրանց երբեք չեմ ների մեր քաղաքի ավերածությունների, հազարավոր ումբերից ոչընչացված մեր խաղաղ բնակիչների համար: Հայրի՛կ, եթե ինձնից այլևս նամակ չստանաս, ապա հիշիր, որ քո աղջիկը սեծովյան նավատորմի ամրոցը պաշտպանել է հերոսաբար և զոհվել է զենքը ձեռքին»: Ստեփանյանի այս հուշիչ նամակը Սևաստոպոլի պաշտպանության օրերին տպագրվեց սեծովյան նավատորմի թերթում:

Ղրիմը երկար շմուշ ֆաշիզմի լծի տակ: 1944 թվականի մայիսին այն լիովին ազատագրվեց ֆաշիստական զավթիչներից: Ղրիմն ազատագրող զորամասերի մեջ ակտիվորեն գործում էր նաև հայկական 89-րդ դիվիզիան: Կերչ քաղաքի և ամրոցի ազատագրմանն առավել ակտիվ մասնակցություն ունենալու համար ՍՍՀՄ Գերագույն սովետի հրամանագրով դիվիզիան պարգևատրվեց Կարմիր աստղի, իսկ Սևաստոպոլի համար մղված մարտերում աչքի ընկնելու համար՝ Կարմիր գրոշի շքանշաններով: Դիվիզիայի երկու գնդերին շնորհվեց Սևաստոպոլյան

անունը: Հարյուրավոր հայ մարտիկներ և սպաներ պարգևատրվեցին ՍՍՀՄ շքանշաններով ու մեդալներով: Նրանցից հինգը՝ Սիմոն Բաղդասարյանը, Ալդին Հարությունյանը, Խորեն Խաչատրյանը, Հարություն Մկրտչյանը և Վարդգես Ռոստոմյանը, արժանացան Սովետական Միության հերոսի կոչման:

1944 թվականի օգոստոսին Գորնայա բարձունքի լանջին, Բալակլավա քաղաքի մոտ, հուշարձան կանգնեցվեց Սևաստոպոլի պաշտպանության մարտերում հերոսաբար զոհված հայ ուղղափառների հիշատակին: Հուշարձանի վրա փորագրված են հետևյալ սրտաուռ խոսքերը. «Հավերժ հիշատակ 89-րդ հայկական հրաձգային թամանյան կարմիրգրոշ, Կարմիր աստղի շքանշանով պարգևատրված զորամասի ուղղափառներին, որոնք զոհվեցին Սևաստոպոլ քաղաքը գերմանական զավթիչներից ազատագրելիս»: Սևաստոպոլի ազատագրման համար մղված մարտերում 89-րդ հայկական դիվիզիայի զոհված մարտիկների հիշատակին 1961 թ. հունիսին կառուցվեց նոր, մոնումենտալ հուշարձան: Կոթողը կանգնեցվել է Հայաստանի աշխատավորների, սևաստոպոլյանների և սեծովյան ուղղափառների միացյալ ուժերով՝ սրպես ժողովուրդների բարեկամության խորհրդանիշ:

1942 թ. ամռանը գերմանա-ֆաշիստական զորքերը թափանցեցին Կովկաս: Գերմանացիները հույս ունեին կարճ ժամանակամիջոցում զավթել Կովկասը, տեր դառնալ նրա հարստություններին, ստրկացնել նրա ժողովուրդներին: Իր զավթողական նպատակներին հասնելու համար թշնամին աշխատում էր բազմազգ Անդրկովկասում հրահրել ազգային թշնամանք, Կովկասի ժողովուրդներին դուրս բերել ուսս ժողովրդի և միմյանց դեմ: Բայց թշնամու հաշիվները սխալ դուրս եկան: Հայրենիքի ազատության ու անկախության համար մղվող պայքարում է՛լ ավելի ամրապլրնդվեց ժողովուրդների, այդ թվում և Անդրկովկասի ժողովուրդների դարավոր բարեկամությունը:

1942 թվականի օգոստոսի 23-ին Թբիլիսիում գումարվեց Անդրկովկասի ժողովուրդների հակաֆաշիստական բազմամարդ միտինգ, որտեղ Անդրկովկասի ժողովուրդները երգվեցին ոչ մի ջանք չխնայել կոմունիստական կուսակցության ղեկավարությանը, իրենց ավագ եղբայր ուսս մեծ ժողովրդի հետ միասին, Անդրկովկասի մատուցներին հասած ֆաշիստական հորդաներին լիովին ջախջախելու համար: Ամբողջ աշխարհով մեկ հնչեց Անդրկովկասի՝ եղբայրական ժողովուրդների մեծ բարեկամության, միասնական կամքի և համախմբվածության, սիրելի հայրենիքի ազատության համար մինչև վերջ պայքար մղելու ահեղ ձայնը: Միտինգում Հայաստանից ելույթ ունեցան ակադեմիկոս Հ. Օր-

բելին, ժողովրդական ուսուցիչ Սիմակը, բանաստեղծ Ն. Զարյանը, ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի Հ. Դանիելյանը:

Միտինգում ընդունվեց Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի ժողովուրդներին ուղղված դիմում, որի մեջ կոչ էր արվում բոլոր ուժերով պայքարել թշնամու դեմ: 1942 թ. սեպտեմբերի 27-ին տեղի ունեցավ Անդրկովկասի երիտասարդության հակաֆաշիստական միտինգ: Երկրամասի երիտասարդության ներկայացուցիչները երզվեցին հավատարիմ մնալ հայրենիքին, համատեղ ջանքերով ջախջախել թշնամուն: Անդրկովկասի աշխատավորության երդումը սրբություն էր կատարվեց:

Կովկասի պաշտպանության օրերին Հայաստանի ամբողջ աշխատավորությունը, հաղթանակի անդրդվելի հավատով ներշնչված, մի մարդու պես ոտքի ելավ պայքարելու թշնամու դեմ:

Այդ ժամանակ հայ ժողովուրդը սրտառուչ և հուզիչ նամակ ուղղեց ռազմաճակատում գտնվող իր քաջարի զավակներին, կոչ անելով նրանց՝ չհանչել իրենց կյանքը, կովել թշնամու դեմ մինչև արյան վերջին կաթիլը: «Հիշեցե՛ք մեր ժողովրդի իմաստուն խոսքերը, — ասված էր կոչում, — «Չգիտակցված մահը մահ է, գիտակցված մահը՝ անմահություն»:

Հայ ժողովրդի այդ նամակը, որը 1943 թ. փետրվարին հրատարակվեց նաև «Պրավդա» թերթում, լայն արձագանք գտավ ռազմաճակատի հայ ռազմիկների մեջ: Նրանք հայրենասիրական բարձր խանդավառությամբ քննարկեցին նամակը և գրեցին պատասխան, հավաստիացնելով, որ իրենք բարձր կպահեն հայ ժողովրդի պատիվը, նրանցյալի մարտական ավանդույթները: «Ի պատասխան մեր հարազատ ժողովրդի նամակի, — ասված է հայ ռազմիկների պատասխան նամակում, — ի պատասխան ձեր սրտագին խոսքերի, մեր սիրելի, թանկագին հայրեր, մայրեր, քույրեր, կանայք, երեխաներ, մենք երզվում ենք, որ չենք վերադառնա տուն, մեր հայրենի օջախը, մեր սուրբ պատյան շենք դնի, մինչև չհասնենք լիակատար հաղթության, մինչև չոչնչացնենք վերջին հիտլերականին, որ ներխուժել է մեր սովետական հողը»:

Հիրավի հայ ռազմիկները պատվով կատարեցին ժողովրդին տված իրենց երդումը:

Հայկական դիվիզիաները, Կովկասյան ռազմաճակատի մյուս զորամասերի հետ միասին, հերոսական մարտեր էին մղում Կուբանի և Քերեքի բնագծերում, Նովորոսիյսկի, Տուսայսե, Գրոզնի և Մոզդոկ քաղաքների մատուցներում: Թշնամին ճգնում էր առաջ շարժվել դեպի Անդրկովկաս, սակայն 1942 թ. դեկտեմբերից սկսվեց սովետական զորքերի հարձակումը: Շուտով գերմանացիները ջախջախվեցին և դուրս շարժվեցին Կովկասից:

Հյուսիսային Կովկասի ազատագրման համար մղված մարտերում առանձնապես աչքի ընկավ հայկական 89-րդ դիվիզիան: Նրա 400-րդ գնդի ստորաբաժանումները սրբնթաց գրոհով 1943 թ. հունվարի 3-ին ազատագրեցին Մալգոբեկ քաղաքը: Անցնելով Քերեք գետը, նա թշնամուն ետ մղեց մինչև Ազովի ծովափը: Մոզդոկի և Նովորոսիյսկի ուղղությամբ քաջարար կովում էին նաև հայկական 408-րդ և 409-րդ դիվիզիաների զորամասերը: 409-րդ դիվիզիան մասնակցեց Ստավրոպոլի, Արմավիրի և այլ քաղաքների ու բնակավայրերի ազատագրմանը:

Կովկասի մատուցներում՝ Մատվեև Կուրգանում, տեղի ունեցած գոտեմարտում հերոսի մահով զոհվեց հրետանային մարտկոցի կոմերիտական հրամանատար լեյտենանտ Սերգեյ Օհանյանը, որը ետմահու արժանացավ Սովետական Միության հերոսի կոչման: Կովկասի համար մղված մարտերում անվահեր օդաչուի համբավ էր ձեռք բերել Սովետական Միության հերոս զանգեղուրցի Սամսոն Մկրտումյանը: Կապիտան Սամսոնի մարտական ընկերները նրա մասին ասում էին. «Նա շեշտակի է, ինչպես արծիվը, քաջ է ինչպես առյուծը, սրտով մաքուր է ինչպես երեխան»:

Կովկասի պաշտպանության հերոսներից են 89-րդ հրաձգային դիվիզիայի սակրավոր, ջոկի հրամանատար Զահան Կարախանյանը և ավագ սերժանտ Սուրեն Առաքելյանը, որոնց ետմահու շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում: Ռոստով քաղաքի ազատագրման մարտերում ցուցաբերած խիզախության համար Սովետական Միության հերոսի կոչում շնորհվեց ավագ լեյտենանտ (հետագայում՝ փոխգնդապետ) Դուկաս Մադոյանին:

1942 թ. հոկտեմբերին Սովինֆորմբյուրոն հաղորդեց սակրավոր Մեսրոպ Ղազարյանի անմահ սխրագործության մասին: Նա իր կյանքի գնով պայթեցնում է Քերեքի վրա գտնվող երկաթուղային այն կամուրջը, որի վրայով պետք է անցնեք թշնամու զորքը:

Հայ ռազմիկները անօրինակ սխրագործություններ կատարեցին Թամանյան թերակղզու ազատագրման համար մղված մարտերում: Նրանցից առանձնապես նշանավոր է կոմերիտական Հունան Ավետիսյանը, որի անմահ անունը անջնջելի տառերով գրվեց հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ: 1943 թ. սեպտեմբերի 16-ին, երբ Նովորոսիյսկի ուղղությամբ դասակը գրոհում էր Դոլգայա բարձունքի վրա, ավագ սերժանտ Հունան Ավետիսյանը նկատեց, որ գերմանական մի կրակակետ գնդացրային տեղատարափ կրակով խանգարում է սովետական զինվորների առաջխաղացմանը: Հ. Ավետիսյանը որոշեց իր ջոկատի մարտիկներին հետ միասին ոչնչացնել թշնամու այդ կրակակետը: Խիզախ մարտիկները առաջ նետվեցին: Հունանը տեսավ, որ թշնամու զնդակից վիրավորվեց իր ընկերներից

մեկը: Շուտով վիրավորվեց նաև ինքը, բայց քաջարի ուղղվելը ծանր վիճակում, արյունաքամ լինելով, մազլցեց մինչև թշնամու կրակակետը և, կրկնելով ուս դուցազն Ա. Մատրոսովի օրինակը, իր մարմնով փակեց գնդացրային հրակնատը: Գնդացիքը դադարեց կրակելուց, բայց դադարեց գործելուց նաև Հունանի սիրտը: Նա ընկավ հերոսի մահով, գիտակցաբար: Նրա սիրագործության շնորհիվ դասակը առաջ սլացավ: ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությանը Հունան Ավետիսյանին 1944 թ. մայիսի 16-ին հրամանագրով ետմահու շնորհեց Սովետական Միության հերոսի կոչում: ՍՍՀՄ Զինված ուժերի մինիստրի 1949 թ. ապրիլի 22-ի հրամանով Հ. Ավետիսյանի անունը առհավետ գրանցվեց այն ստորաբաժանման մարտիկների ցուցակում, որտեղ նա ծառայում էր: «Նրա անձնագրն նվիրվածությունը սոցիալիստական հայրենիքին և անասնման հավատարմությունը երզմանը՝ օրինակ պետք է ծառայեն զինված ուժերի ամրոցը անձնակազմի համար», — ասված է այդ հրամանում:

Թամանյան թերակղզու ազատագրման համար մղված մարտերում առավել աչքի ընկնելու համար 1943 թ. հոկտեմբերին Գերագույն գլխավոր հրամանատարի հրամանով հայկական 89-րդ հրաձգային դիվիզիան կոչվեց Թամանյան: Դիվիզիայի 2000 ռազմիկներ պարզեատըրվեցին շքանշաններով ու մեդալներով: Դիվիզիայի հրամանատար Նվեր Սաֆարյանին շնորհվեց գեներալ-մայորի կոչում: Հազարավոր հայ ռազմիկներ և թիկունքի աշխատավորներ պարգևատրվեցին «Կովկասի պաշտպանության համար» մեդալով:

Հայ ռազմիկների մասնակցությունը Ստալինգրադի ճակատամարտին Հայրենական մեծ պատերազմի պատմության ամենափայլուն էջերից մեկը Ստալինգրադի ճակատամարտն էր, որը համաշխարհային պատմական նշանակություն ունեցավ:

Ռուսական մայր գետի ափերին մղված հերոսամարտերում ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների զավակների հետ կողք-կողքի անօրինակ քաջություններ էին կուլում նաև հայ ժողովուրդի զավակները: Այստեղ իր մարտական սիրագործություններով հռչակվեց 76-րդ հայկական հրաձգային դիվիզիան, որը ճակատամարտի ամբողջ ընթացքում գտնվում էր կրակի առաջավոր գծում: Խիզախության և ռազմական հմտություն ցուցաբերելու համար ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով 1943 թվականի նոյեմբերին դիվիզիային շնորհվեց զվարդիական կոչում և վերանվանվեց 51-րդ զվարդիական դիվիզիա: Նրեք հազարից ավելի ռազմիկներ պարգևատրվեցին Սովետական Միության շքանշաններով ու մեդալներով: Շատ հայերի կրծքերին փայլում էր «Ստալինգրադի պաշտպանության համար» մեդալը: Դիվիզիայի դրոշը զարգարվեց Լենինի շքանշանով:

Ստալինգրադի հերոսամարտերում աչքի ընկան գեներալ-մայոր Ասքանազ Կարապետյանի հրամանատարությունը գործող մոտո-մեքենայացված գործասերը, որոնք արժանացան զվարդիական և ստալինգրադյան կոչումների: Ռազմաճակատում արիաբար էին կուլում հրետանու գեներալ-լեյտենանտ Իվան Վեբլիովի, Հայկ Թումանյանի, Դոնի ռազմաճակատի քաղվարչության պետ Սերգեյ Գալաչևի, ռազմաօդային ուժերի կապի պետ գնդապետ Անուշավան Ստեփանյանի, գեներալ-մայոր Սերգեյ Կարապետյանի, զվարդիայի փոխգնդապետ Մաթևոս Մադաթյանի, զվարդիայի կապիտան Արամ Միրզոյանի զորամասերի մարտիկները:

Քաջ ռազմիկի համբավ ձեռք բերեց Օշական գյուղի նախկին կուլտուրական կազմակերպչությանը: Նրա մարտական սիրագործություններին էր նվիրված «Գերոիչեսկի պոխոդ» բանակային թերթի 1942 թվականի հոկտեմբերի 20-ի համարի ամբողջ առաջին էջը: Մի քանի օր հետո, հոկտեմբերի 26-ին, հայ մարտիկի մասին հիացմունքով է խոսում նաև «Կրասնոյե զնամյա» ճակատային թերթը: «Գնդացրորդ կազմակերպչությանը ոչնչացրել է 245 գերմանացի. փառք և պատիվ սովետական զույգազնին, կարմիր բանակի անվահեր ու հմուտ ռազմիկին, արևավառ Հայաստանի քաջ զավակին»: Թերթի առաջնորդողը վերնագրված էր «Գեղացրորդ, եղի՛ր այնպիսին, ինչպիսին կազմակերպչությանն է»:

Անմահ փառքի արժանացավ ավագ լեյտենանտ, էսկադրիլիայի հրամանատար Սերգեյ Բուսնազյանը, որին հետագայում շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում: Տանկիստ Սարգիս Սաղաթելյանը բաղմիցս մասնակցել է թե՛ կռիվների և ոչնչացրել հակառակորդի մեծ թվով կենդանի ուժ ու տեխնիկա: Ստալինգրադի մատուցների պաշտպանության ժամանակ աչքի ընկավ Հայաստանի կոմերիտմիության սան, նախկին ուսուցիչ Արզամ Հակոբյանը:

Ստալինգրադի ճակատամարտում քաջաբար էին կուլում նաև Սովետական Միության հերոս Միհրան Բոստանջյանը, խիզախ հետախույզ Գարեգին Հարությունյանը, բժշկական ծառայությունների լեյտենանտ Վիրաբ Սաֆարյանը և ուրիշներ: Հարյուրավոր մարտիկների ու հրամանատարների կյանքը փրկելու համար 16-ամյա Ասյա Քեքելյանը, որը ռազմաճակատում սանիտարական հրահանգչուհի էր, պարզեատըրվեց Կարմիր աստղի շքանշանով:

Հայ ռազմիկները Ուկրաինայի ազատագրման համար մղված մարտերում Ստալինգրադի մոտ գերմանա-ֆաշիստական զորքերի ջախջախումից հետո սովետական բանակը շարունակեց իր հաղթական մարտերը և շուտով մտավ Ուկրաինայի հողը: Մինչ այդ, 1943 թ. հուլիս-օգոստոս ամիսներին, ահեղ կռիվներ տեղի ունեցան Կուրսկի ռազմաճակատում, որին իրենց ակտիվ մասնակցությունը ցուցաբերեցին

նաև հայ ժողովրդի զավակները: Այստեղ աչքի ընկան 11-րդ զվարդիական բանակի հրամանատար Հ. Բաղրամյանը, տանկային բրիգադի հրամանատար Հ. Բաբաջանյանը, սակրային զորամասի հրամանատար, մայոր Գրիգոր Բաղրամյանը, մեքենայացված զորամասի հրամանատար, զվարդիայի փոխգնդապետ Նավասարդ Հարությունյանը և ուրիշներ:

Հայ ժողովրդի զավակները իրենց արժանի ներդրումն ունեցան նաև Ուկրաինայի, Բելոռուսիայի ու Մերձբալթիկայի ազատագրման համար մղված հերոսամարտերում:

1942 թվականի դեկտեմբերին ուկրաինական ժողովրդին ուղղված հայ ժողովրդի ողջույնի հեռագրում ասված է. «... Ուկրաինացի եղբայրներ ու քույրեր: Թշնամու դեմ մղվող մահացու կռիվ այս օրերին հայ ժողովուրդն ամբողջապես ձեզ հետ է»: Այնուհետև այնտեղ ասված է, որ հայ ժողովուրդը միշտ բարեկամական ամուր կապերով կապված է եղել ուկրաինական ժողովրդի հետ և որ այդ բարեկամությունն այժմ ամբաստանաբար Ուկրաինայի և Հայաստանի լավագույն զավակների արջուկով, որը թափվեց ընդհանուր թշնամու՝ զերմանական բարբարոսների դեմ ուղղադատությամբ մղվող մահու և կենաց պայքարում: «Այսօր մենք երգվում ենք մարտում քափված այդ արյամբ, — ասված է հիշյալ փաստաթղթում, — որ հայ ժողովուրդը ցած չի դնի իր մարտական զենքը, մինչև որ չազատագրվի Ուկրաինայի սրբազան հողը, մինչև լիովին չմաքրվի մեր սովետական հայրենիքի հողը հիտլերյան արյունաբերուներից»:

Այդ երգումը սրբություն է կատարվեց: Ուկրաինայի ազատագրման համար մղված մարտերում իրեն փառքով պսակեց հայկական 409-րդ զինվորական Նա ախտիվ մարտեր մղեց Նարկով, Զմիև, Դնեպրոպետրովսկ, Դնեպրոդոնսկ քաղաքների և բազմաթիվ այլ բնակավայրերի ու երկաթուղային հանգույցների ազատագրման համար: Կիրովոգրադ քաղաքի ազատագրման համար զինվորական պարգևատրվեց Բոգդան Խմելնիցկու շքանշանով և արժանացավ «Կիրովոգրադյան» կոչման: Դիվիզիայի 1700 հայ զինվոր և սպա պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով: Մի շարք խիզախներ արժանացան Սովետական Միության հերոսի կոչման:

Հայ ռազմիկները բացառիկ հերոսություն ցուցաբերեցին թշնամու կրակի տակ լայնահուն Դնեպրն անցնելիս: 23 հայեր արժանացան Սովետական Միության հերոսի կոչման, այդ թվում գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանը, որի զինվորի առաջինների թվում անցավ Դնեպրը, Գարեգին Բալայանը, Գեղեոն Միքայելյանը, Միհրան Բոստանջյանը, Արամայիս Պողոսյանը, Գևորգ Հակոբյանը, Սուրեն Սարգսյանը և ու-

րիշներ: Դնեպրի ափերին քաջի մահով ընկան շատ հայ ռազմիկներ՝ գրոհային օդաչու Սերգեյ Բուռնազյանը, լեյտենանտ Անդրանիկ Մուրադյանը, 409-րդ զինվորի հրետանային գնդի հրամանատար Սարգիս Ղազարյանը, մոտո-մեքենայացված բրիգադի հրամանատար Լևոն Գարբինյանը, հետևազորային կապիտան Գարեգին Բալայանը և ուրիշներ:

Ռազմաճակատում մարտիկները շատ երգեր էին հորինել կապիտան Բալայանի մասին: Դնեպրի մի այլ հերոսի՝ Անդրանիկ Մուրադյանի մասին ուկրաինացի գեներալ Գրիգորենկոն գրել է. «...Այդ անմահ հերոսին չի կարելի մոռանալ, որը բողեց մարտական լավագույն ավանդույթներ: Այդ դյուցազնի անունը ոսկե տառերով պետք է գրվի հայ ժողովրդի պատմության մեջ և Ուկրաինայի ազատագրման շարժում»:

Ուկրաինայի ազատագրման համար մղված կռիվներում առանձնապես աչքի ընկավ գեներալ-մայոր Սարգիս Մարտիրոսյանը: Նրա հրամանատարությամբ գործող կորպուսի զորամասերը մարտերով անցան ամբողջ Ուկրաինան, ազատագրելով բազմաթիվ բնակավայրեր: Կիևի ազատագրման ժամանակ առաջինը քաղաք մտավ նրա հրամանատարությամբ գործող կորպուսը: Անվանի գեներալը այդ օրերին նշանակվեց Կիևի կայազորի պետ:

Մելիտոպոլ քաղաքի ազատագրման համար մղված համառ մարտերը հռչակ բերեցին գնդապետ Ասքանազ Կարապետյանի զինվորիչային, որն արժանացավ «Մելիտոպոլյան» կոչման, իսկ նրա հրամանատարը՝ Սովետական Միության հերոսի կոչման: Գնդապետ Լևոն Գարբինյանը, որն անձնազոհությամբ էր մասնակցել Նարկովի, Դոնբասի և Կիևի ազատագրմանը, համահուն արժանացավ Սովետական Միության հերոսի կոչման: Նրա ղեկավարած միավորումը կոչվեց «Կորոսանյան»:

Ուկրաինայի մայրաքաղաք Կիևի, ինչպես նաև Լվով, Պերեմիշլ քաղաքների և բազմաթիվ այլ բնակավայրերի ազատագրման կռիվներում աչքի ընկավ գեներալ-մայոր Նիկոլայ Հովհաննիսյանը: Ուկրաինայի ազատագրման համար քաջաբար կռվում էր նաև որդին՝ Ռեմիկը: Եզրայրական Ուկրաինայում կռվում էին նաև բազմաթիվ խիզախ հայուհիներ:

1944 թվականին վճռական մարտեր էին տեղի ունենում Բելոռուսիան և Մերձբալթյան հանրապետությունները գերմանա-ֆաշիստական զավթիչներից մաքրելու համար: Բելոռուսիայի և Մերձբալթիկայի ազատագրման գործում խոշոր ծառայություններ ունի հայ ժողովրդի պանծալի զավակ,

Հայ ռազմիկներ Բելոռուսիայի և Մերձբալթիկայի ազատագրման համար սըղված մարտերում

սովետական բանակի ախանավոր զորավար Հովհաննես Բաղրամյանը: 1943 թվականի աշնանը նա նշանակվեց Մերձբալթյան առաջին ռազմաճակատի

զորքերի հրամանատար: Գեկտեմբերին Բաղրամյանի հրամանատարությամբ գործող զորամասերը հարձակողական համառ մարտեր էին մղում Նեկից հարավ ամրացած գերմանա-ֆաշիստական զորքերի դեմ, ճեղքելով հակառակորդի պաշտպանական գոտին: Այդ մարտերում սովետական զորքերը ջախջախեցին գերմանացիների 3 հետևակային, 1 տանկային դիվիզիա և մի քանի այլ զորամասեր: Զարգացնելով հարձակումը Մերձբալթյան առաջին ռազմաճակատի զորքերն ազատագրեցին Գորոդոկ քաղաքը: Թշնամին մարտի դաշտում թողեց ավելի քան 20 հազար սպանված:

Բաղրամյանի զորավարական տաղանդը փայլեց առանձնապես 1944 թվականի ամռանը: Բանակի գեներալ Չերնյախովսկու երրորդ բելտոտական ռազմաճակատի զորքերի հետ միասին օդակի մեջ սեղմելով թշնամուն, ազատագրեցին Բելոռուսիայի մարզային կենտրոն Վիտեբսկ քաղաքը և 700 այլ բնակավայրեր:

Բաղրամյանի մշակած պլանով խորտակվեց Պոլոցկ քաղաքի հզոր պլացդարմը: Ռազմաճակատի զորքերը գրավեցին Պոլոցկը և առաջ շարժվելով ավելի քան 500 կմ, ազատագրեցին Մերձբալթիկայի և Բելոռուսիայի զգալի մասը: 1944 թ. հուլիսի 27-ին Բաղրամյանի զորքերը գրավեցին Մերձբալթիկան Արևելյան Պրոտսիայի հետ կապող կոմունիկացիաների խոշոր հանգույց Շաուլայ (Շավլի) քաղաքը: Հենց այդ օրերին, հուլիսի 25-ին, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով բանակի գեներալ Հ. Բաղրամյանին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում: Բարձր գնահատելով Հ. Բաղրամյանի զորավարական արվեստը և մարտական ծառայությունները, 1955 թվականին նրան շնորհվեց Սովետական Միության մարշալի կոչում:

Մերձբալթիկայի և Բելոռուսիայի ազատագրման համար մղված մարտերում իրենց անունը անթառամ փառքով պսակեցին բազմաթիվ հայ զենեռալներ, տասնյակ հազարավոր սպաներ ու մարտիկներ: Գեներալ-մայոր Ս. Կարապետյանի զորամիավորումը 1944 թվականի ամռանը Օստրով քաղաքի ազատագրմանը մասնակցելու համար ստացավ «Օստրովյան» անունը, ապա մասնակցեց էստոնիայի Տարտու (Գորպատ) քաղաքի ազատագրմանը: Նեմանի գետանցի և Մոգիլև ու Մինսկ քաղաքների ազատագրման համար մղված մարտերում մեծ են 9-րդ բանակի շտաբի պետ, գեներալ-մայոր Ստեփան Կինոսյանի ծառայությունները: Իրենց ղեկավարած միավորումներով եղբայրական Բելոռուսիան և Մերձբալթյան հանրապետությունների հողը գերմանա-ֆաշիստական զավթիչներից ազատագրելու գործում աչքի ընկան գեներալներ Բազրատ Առուշանյանը, Իսահակ Գասպարյանը, Գևորգ Տեր-Գասպարյանը, Հայկ Մարտիրոսյանը, զնդապետներ Համազասպ Բաբաջանյանը,

Կարապետ Հախնազարյանը և ուրիշներ: Հերոսական սխրագործություններ կատարեցին ռազմիկներ Արամայիս Սարգսյանը, Կոստանդին Նազարովը, Վարդան Տոնիկյանը, Գևորգ Իսրայելյանը, Բաբկեն Ելոյանը և շատ ուրիշներ: «Հայրենական մեծ պատերազմի հերոս Վարդանի պանծալի կերպարը, — գրել է Հ. Բաղրամյանը Տոնիկյանի մասին, — խոր և մեկընդմիջ թափանցեց իմ հոգում և այն երբեք չի ջնջվի հիշողությունից»:

Բելոռուսիայի և Մերձբալթիկայի ազատագրման համար մղված մարտերում աչքի ընկավ Վորոշիլովի անվան 51-րդ զվարդիական դիվիզիան, որն արժանացավ «Վիտեբսկյան» կոչման: Դիվիզիան հերոսական մասնակցություն ունեցավ նաև Պոլոցկ քաղաքի ազատագրմանը, նրա կոսվա գունդը (այդպես էր անվանվում 1921 թվականից) կոչվեց «Լոռի-Պոլոցկյան»:

Հայ պարտիզանները Հայրենական պատերազմի տարիներին թշնամու հարված տերիտորիայում ծավալվեց պարտիզապատերազմում նական շարժում: Ժողովրդական վրիժառուները մեծ դեր կատարեցին ֆաշիստական զավթիչներին ջախջախելու գործում: Թիկունքում խիզախ հարձակումներով նրանք ոչնչացնում էին թշնամու կենդանի ուժն ու տեխնիկան, պայթեցնում էին կամուրջներն ու երկաթուղիները, խորտակում հակառակորդի զորքերն ու բեռներ տեղափոխող գնացքները: Պարտիզանական ջոկատները, հենվելով ժողովրդի աջակցության վրա, ֆաշիստական զավթիչներից ազատագրում էին ամբողջ շրջաններ ու երկրամասեր, վերականգնում այնտեղ սովետական իշխանությունը: Պարտիզաններից և թշնամու թիկունքում ընդհատակյա աշխատողներից շատերը զոհվեցին հանուն սովետական հայրենիքի ազատության ու անկախության: Հայրենիքի առջև իրենց պարտքը սրբություններ կատարող հարյուր հազարավոր պարտիզանների շարքերում հերոսաբար կոչում էին մեծ թվով պատանիներ ու երիտասարդներ:

Պարտիզանական մարտերի հրդեհն առանձնապես ուժեղ բորբոքվեց Ուկրաինայում, Բելոռուսիայում, Ղրիմում, Հյուսիսային Կովկասում, Լենինգրադի մարզում և Մերձբալթիկայում: Ժողովրդական վրիժառուների մեծ բանակում ՍՍՀՄ մյուս ազգերի զավակների հետ միասին մարտնչում էին նաև մեծ թվով հայեր (ավելի քան 2000 մարդ): Միայն Ուկրաինայում մարտերին մասնակցում էին մոտ 1000 հայ պարտիզաններ:

Մեծ թվով հայ պարտիզաններ կային պարտիզանական շարժման փառաբանված ղեկավար, Սովետական Միության կրկնակի հերոս Ս. Կովպակի միավորման կազմում: Նրանք շարունակում էին կովել նաև այդ միավորումը Կովպակի անվան ուկրաինական առաջին պարտիզա-

նական դիվիզիայի վերակազմվելուց հետո: Շուտով այդ դիվիզիայի մեջ է մտնում 75 հոգուց կազմված հայ պարտիզանների «Հաղթանակ» ջոկատը, որի հրամանատարն էր կոմունիստ Սերգեյ Հարությունյանը: Այդ ջոկատում աչքի էին ընկնում նաև Բագրատ Գալստյանը, Հովհաննես Պետոյանը և ուրիշներ: Զոկատը միայն 1944 թվականին Ուկրաինայում, Բելոռուսիայում, Լեհաստանում մարտերով անցավ 4000 կմ: «...Ուկրաինայի, Բելոռուսիայի տափաստաններում,— գրել է դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Պ. Վերշիգորան,— հայերը պաշտպանում էին մեր ընդհանուր գործն ու բազմազգ հայրենիք՝ Սովետական Միությունը: Ուկրաինայում գոյություն ունեին մի քանի պարտիզանական խմբեր, որոնք կազմված էին բացառապես հայերից»:

Սովետական Միության հերոս, գեներալ-մայոր Մ. Նաումովի պարտիզանական հեծյալ բրիգադի կազմում 1943—1944 թթ. գործում էր Ա. Միկոյանի անվան հայկական պարտիզանական ջոկատը, որի հրամանատարն էր լեյտենանտ Արամայիս Հովսեփյանը: Զոկատում ակտիվ մարտական գործողություններ էին ծավալում Սուխարիչ Հարությունյանը, Ժորա Բաղդասարյանը, Վերա Հովսեփյանը, Արտո Բակունցը և ուրիշներ: Նրանց ավելի քան 300 մարդուց բաղկացած ջոկատը մարտեր էր մղում Կիևի, Ժիտոմիրի, Լվովի մարզերում և Լյուբլինի մոտ (Լեհաստան): «Միկոյանի անվան ջոկատը լավ է հարվածում,— հպարտությամբ ասում էր գեներալ Նաումովը:— Նա իմ լավագույն և փառապանծ ջոկատներից մեկն է բրիգադում»:

Հայ պարտիզանները արիության մեջ կռվում էին նաև այլ միավորումների կազմում: Վորոշիլովի անվան բրիգադում աչքի ընկան ստորաբաժանման հրամանատարներ Սարգիս Ազարյանը, Գալուստ Ստեփանյանը, Ղրիմում՝ Սուրեն Պողոսյանը, Հրանուշ Մխիթարյանը, Բելոռուսիայում՝ բրիգադի հրամանատարներ Սմբատ Արզումանյանը, Խաչիկ Մաթևոսյանը, Միքայել Բաղդասարյանը և ուրիշներ: Վերջինիս կուրծքը զարդարվեց «Հայրենական պատերազմի պարտիզանին» մեդալով, երկու Կարմիր դրոշի, երկու Կարմիր աստղի, «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի» շքանշաններով: «Ի փառս հայրենիքի» ճակատային թերթը նրա մասին գրել է. «Սկսած 1941 թվականից մինչև 1944 թվականի հոկտեմբեր, պայքարելով գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ թշնամու թիկունքում, ընդհատակում, պարտիզանական ջոկատում և սովետական բանակի շարքերում, Միքայել Բաղդասարյանը ոչնչացրել է 318 ֆաշիստական զինվոր և սպա, իր ընկեր պարտիզանների հետ միասին խորտակել 17 ֆաշիստական էջելոն»: Սովետական Միության հերոս Աշոտ Գասպարյանը թշնամու ուժեղ զենիթային կրակի տակ իր ինքնաթիռով շորս հարյուր մարտական թռիչք կատարեց, որից 28 անգամ վայրէջք կատարեց թշնամու խոր թիկունքում՝ պարտիզանների մոտ: Նրա կուրծքը զարդարող բազմաթիվ շքանշաններից ու մեդալներից մեկն էլ «Հայրենական պատերազմի պարտիզանին» առաջին աստիճանի մեդալն էր:

Շատ հայեր քաջ պարտիզանի համբավ ստացան Լենինգրադի և Կալինինի մարզերում գործող Սովետական Միության հերոս Գերմանի անվան պարտիզանական երրորդ բրիգադի շարքերում: Նրանցից հայտնի է ջոկատի հրամանատար կապիտան Արտեմ Սաղումյանը:

Հայ ժողովրդի շատ զավակներ տոկունության և արիության օրինակներ ցույց տվեցին ընդհատակում և գերության մեջ: Սովետական հայրենասերների ընդհատակյա կազմակերպություններում ակտիվորեն գործում էին հրաձգային դիվիզիայի նախկին հրամանատար գեներալ-մայոր Քրիստափոր Ալավերդյանը, փոխգնդապետ Մուշեղ Մալխասյանը և ուրիշներ: Մոգիլյովում հերոսի մահով զոհվեց «Անընկճելիներ» հակաֆաշիստական ընդհատակյա խմբի կազմակերպիչներից մեկը՝ Կիրովականցի Հենրիկ Զաքարյանը: Նրա սիրանքների մասին հիացմունքով են խոսել Սովետական Միության մարշալ Ա. Նրյումենկոն և խմբի ղեկավար Ի. Գուրերը: Բելոռուսիայում և Լենինգրադում պարտիզանական շարժման մեջ ղեկավար աշխատանք էր կատարում գեներալ-մայոր Հայկ Թումանյանը:

Վորոշիլովյանների մարզի Կրասնոդոն քաղաքի կոմերիտական «Նրիտասաբդ գվարդիա» ընդհատակյա կազմակերպության մեջ աչքի ընկնող աշխատանք էին կատարում Գևորգ (Ժորա) Հարությունյանցը և Մայա Պեղիվանովան (Փահլևանյանը): Վերջինս ստոր մատնության հետևանքով ընկնում է ղեկավարի ձեռքը, սոսկալի տանջանքների ենթարկվում ու շարանենգորեն սպանվում: ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1943 թ. սեպտեմբերի 13-ի հրամանագրով քաջ պարտիզանուհին համահու պարգևատրվեց «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի» շքանշանով:

Մեծ թվով սովետական պարտիզաններ ֆաշիզմի դեմ հերոսաբար մարտնչում էին նաև արտասահմանում, գլխավորապես, Ֆրանսիայում: Նրանք ֆաշիստական համակենտրոնացման ճամբարներից և աղզային լեգեոններից փախած սովետական հայ ռազմագերիներ էին, որոնք գործում էին տարբեր երկրների պարտիզանական միավորումներում և նույնիսկ կազմակերպում ինքնուրույն խմբեր:

Ֆրանսիայի հարավում քաջ պարտիզան Բարդուղ Պետրոսյանի հրամանատարությամբ գործում էր սովետահայ ռազմիկներից կազմված պարտիզանական խումբը, որի բազայի վրա 1944 թվականի ամռանը ձևավորվեց սովետական առաջին պարտիզանական գունդը՝ օդաչու մարտիկներից և զինվորներից:

Ֆրանսիայի հարավում քաջ պարտիզան Բարդուղ Պետրոսյանի հրամանատարությամբ գործում էր սովետահայ ռազմիկներից կազմված պարտիզանական խումբը, որի բազայի վրա 1944 թվականի ամռանը ձևավորվեց սովետական առաջին պարտիզանական գունդը՝ օդաչու մարտիկներից և զինվորներից:

յոր Ալեքսանդր Ղազարյանի հրամանատարութեամբ: 1944 թվականին գունդն ընդգրկում էր մոտ 2000 պարտիզան, որոնց մեջ կային նաև Սովետական Միության այլ ազգութայինների զավակներ: Պարտիզանների այդ գունդը ակտիվ մասնակցություն ունեցավ Ֆրանսիայի բազմաթիվ քաղաքների ու գյուղերի ազատագրման համար մղված մարտերին: Իր կատարած հերոսական սխրագործությունների համար գունդը պարգևավատրվեց ֆրանսիական Դիմադրության պատվո դրոշմով, «Զինվորական խաչ» շքանշանով և արծաթե աստղով: Գնդի շորս հարյուր ռազմիկներ պարգևատրվեցին ֆրանսիական մարտական շքանշաններով: Գնդապետ Ա. Ղազարյանը Ֆրանսիայի ազատագրման մարտերում ցուցաբերած խիզախության և արիության համար 1964 թվականին Փարիզում ստացավ «Գարիբալդիական աստղ» շքանշան:

Շատ հայեր աչքի ընկան Իտալիայի, Զեխստլովակիայի, Հարավ-սլավիայի, Լեհաստանի, Հունաստանի և այլ երկրների պարտիզանական շարժման մեջ: 1963 թ. ետմահու Իտալիայի ազգային հերոսի կոչման արժանացավ Մկրտիչ Դաշտոյանը, որը քաջաբար կռվել էր 54-րդ գարիբալդիական «Մակարիո» պարտիզանական բրիգադում: 1965 թ. մայիսին ՍՍՀՄ-ում Իտալական Հանրապետության ղեկավար «Ռազմական արիության համար» մեդալը Երևանում հանդիսավոր կերպով հանձնեց հերոսի դուստր Վիլենա Դաշտոյանին: Դա երկրորդ դեպքն էր, երբ Իտալական պարզե էր հանձնվում սովետական պարտիզանին: Սովետահայ ռազմիկ Գևորգ Քոլոզյանը ֆաշիզմի դեմ մղված պայքարի տարիներին Իտալական հողում կատարել է նույնպիսի սխրագործություն, ինչպիսին Հունան Ավետիսյանը, Սուրեն Առաքելյանը և Ապավին Ռոստոմյանը: Իտալական կառավարությունը 1966 թվականին հայ հերոսին ետմահու պարգևատրեց «Ռազմական արիության համար բրոնզե մեդալ» շքանշանով:

Զեխստլովակիայում սովետական պարտիզանների խմբի մեջ խիզախորեն կռվում էր Արտյոմ Պետրոսյանը: Նրա անունը հայտնի էր ամբողջ երկրին, նրան կոչում էին «Մորավիայի արծիվ»: Պետրոսյանը մինչև պատերազմի վերջը կռվեց Զեխստլովակիայում: Նա կատարել է մոտ 60 դիվերսիոն և հետախուզական դժվարին առաջադրանքներ: Զեխստլովակիայի կառավարությունը հայ պարտիզանին արժանացրեց բարձրագույն պարգևի՝ նրան հանձնելով «Զեխստլովակյան զինվորական խաչ» և «Զեխստլովակյան պարտիզանի աստղ» շքանշաններ: 1967 թվականին Երևանում լույս տեսավ «Մորավիայի արծիվ» գրքույկը, որը պատմում է հայ պարտիզանի սխրանքների մասին: Գրքի առաջաբանը գրել են չեխ գեներալ Լ. Սվոբոդան (հետագայում ՉՍՄՀ-ի պրեզիդենտ) և փոխգնդապետ Զ. Կոժնարը, որոնք Ա. Պետրոսյանին համարում են «քաջ

դուցագուն»: «Նրա վառ հիշատակը, — գրում են նրանք, — ամենայն սիրով կհարգեն նաև չեխ ժողովրդի ապագա սերունդները: Հերոսների փառքը չի խամրի երբեք: Հերոսներն անմահ են»:

Ֆաշիզմի դեմ հարավսլավական լեռներում հերոսաբար մարտնչում էին հայ պարտիզաններ Առաքել Սահակյանը, Յուլի Աֆրիկյանը և Թիրշներ: Առաջինը 1945 թ. մարտին արժանացել է «Քաջության համար» հարավսլավական մեդալի: «Պրավդա»-ն գրեց սովետական խիզախ ռազմիկ քաջարանցի Վաղարշակ Առաքելյանի՝ «Արաբսի» մասին: Նա զործում էր Բեռլինի մոտերքում, հայ ռազմագերիներին կազմված «Սովետական հայրենասերներ» հակաֆաշիստական ընդհատակյա կազմակերպությունում:

Մի շարք հայեր հերոսաբար կռվում էին հռչակավոր «Նորմանդիա—Նեման» ավիացիոն զնգում, որն անմոռանալի սխրանքներ կատարեց Ֆրանսիայի ազատագրման զործում: Նրանց մեջ աչքի ընկավ զնդի ղլխավոր ինժեներ, զնդապետ Սերգեյ Աղավելյանը, որի կուրծքը զարգարվեց նաև Ֆրանսիայի բարձրագույն պարգևով՝ պատվավոր լեգիոնի շքանշանով:

Հայ ռազմիկների մասնակցությունը եվրոպական ժողովուրդների ազատագրմանը և ֆաշիզմի վերջնական ջախջախմանը:

1944 թվականին սովետական բանակը ջախջախեց թշնամուն և դուրս շարտեց մեր հայրենիքի սահմաններից: Սակայն սովետական բանակի առջև դրվեց նոր խնդիր՝ օգնել Արևմտյան Եվրոպայի ժողովուրդներին փշրելու ստրկության շղթաները, վերականգնելու իրենց ազատությունն ու անկախությունը: Եվրոպայի ժողովուրդները մեծագույն խանդավառությամբ ընդունեցին իրենց ազատարար սովետական բանակին:

Ֆաշիզմի լծից եվրոպական ժողովուրդների ազատագրման համար սովետական բանակի շարքերում անվահեր կերպով կռվում էին նաև հայկական դիվիզիաները, հայ զենեակներ, տասնյակ հազարավոր հայ ռազմիկներ: Առանձնապես աչքի ընկան 89-րդ և 409-րդ հայկական դիվիզիաները:

Բելոռուսական առաջին ռազմաճակատի զորքերի կազմում Թամանյան 89-րդ դիվիզիան մարտեր մղեց Լեհաստանում և Գերմանիայում: Մասնակցելով սովետական բանակի մեծ հարձակմանը, 1945 թվականի հունվարի 14-ից մինչև փետրվարի 9-ը 89-րդ դիվիզիան համառ կռիվներով անցավ մոտ 600 կմ մարտական ուղի: Դիվիզիան այդ ժամանակամիջոցում ակտիվ մարտեր մղելու համար երեք անգամ արժանացավ Գերագույն ղլխավոր հրամանատարության շնորհակալությանը: Փետրվարի 15-ի լույս 16-ի գիշերը դիվիզիայի մարտիկները, մեծ գծավարություններ հաղթահարելով, անցան Օդերը և ամրացան նրա ձախ

ափին՝ մի փոքրիկ ճահճակալված տարածության վրա: Թամանյան դի-
վիզիայի զորամասերը 60 օր շարունակ հերոսաբար կռվում էին այդ
սլացողարմի վրա, որը ռազմաճակատում անվանում էին «հայկական
փոքրիկ հող»: Հայ ռազմիկները, շնորհիվ իրենց կայունության, հմտու-
թյան ու արիության, ոչ միայն կարողացան թշնամու ուժեղ կրակի տակ
երկու ամիս շարունակ պահել ու ընդլայնել այդ սլացողարմը, այլև ճեղ-
քելով նրա պաշտպանությունը, կատաղի մարտերից հետո, առաջինը
մտան Օդերի Ֆրանկֆուրտ քաղաքը:

Իր դրոշները մարտական նոր փառքով պսակեց 409-րդ դիվիզիան,
որն ակտիվորեն մասնակցեց Յասսի-Քիշնև խմբավորման ջախջախմա-
նը, ապա Հունգարիայի ազատագրմանը: 1945 թվականի սկզբներին
դիվիզիայի զորամասերը մարտական գործողություններ էին ծավալել
Չեխոսլովակիայի ազատագրման համար: Բրատիսլավ քաղաքի ազա-
տագրմանը մասնակցելու համար դիվիզիան արժանացավ նաև «Բրատիս-
լավյան» կոչման՝ վերանվանվելով «Կիրովոգրադյան-բրատիսլավյան»:

Գններալ Հ. Բաղրամյանի զորքերը, 1945 թվականի գարնանը, կոտ-
րելով թշնամու դիմադրությունը, մտան Արևելյան Պրուսիա և մասնակ-
ցեցին Քյոնիգսբերգ (այժմ՝ Կալինինգրադ) քաղաքի ազատագրմանը:
Լեհաստանում և Արևելյան Պրուսիայում գերմանա-ֆաշիստական զավ-
թիչների ջախջախմանը ակտիվորեն մասնակցեցին նաև գններալ-
ներ Համազասպ Բաբաջանյանի, Բագրատ Առուշանյանի, Ստեփան
Կինոսյանի, Նիկոլայ Հովհաննիսյանի, Իսահակ Գասպարյանի, Կա-
րապետ Հախնազարյանի, Հայկ Մարտիրոսյանի հրամանատարու-
թյամբ գործող զորքերը: Եվրոպական հողի վրա թշնամու ջախ-
ջախման գործում մեծ են նաև գններալ Սարգիս Մարտիրոսյանի
ծառայությունները: Նրա զորամասերը ակտիվորեն մասնակցեցին Ռու-
մինիայի, Լեհաստանի և Չեխոսլովակիայի, հատկապես Պրագայի ազա-
տագրմանը: Ուկրաինական առաջին ռազմաճակատի զորամասերի հետ
Ս. Մարտիրոսյանի զորամիավորումներն առաջինը մտան Գերմանիա:

Սովետական զորքերը ապրիլի 30-ին գրավեցին Բեռլինի կենտրո-
նը: Ռայխստագի վրա բարձրացավ հաղթանակի դրոշը: Մայիսի 2-ին
Բեռլինի կայազորը անձնատուր եղավ: Մայիսի 8-ին անվերապահ կեր-
պով անձնատուր եղան գերմանական բոլոր զինված ուժերը: Խորտակ-
վեց գերմանա-ֆաշիստական պետությունը: Սովետական ժողովրդի հաշ-
րեկական մեծ պատերազմը պսակվեց լիակատար հաղթանակով: Ի նը-
շանավորումն այդ պատմական հաղթանակի, մայիսի 9-ը հայտարարվեց
Հաղթանակի տոն:

Բեռլինի համար մղված ահեղ կռիվներում իր մարտական պատ-
վավոր տեղը գրավեց 89-րդ հայկական Թամանյան դիվիզիան: Դիվի-

զիայի ստորաբաժանումները ապրիլի 29-ից սկսած համառ մարտեր
էին մղում Բեռլինի փողոցներում: Մայիսի 2-ին նրանք գրավեցին Հուն-
բուրգ-Հայն այգու անառիկ ամրոցը, վերցնելով ավելի քան 5000 գերի և
մեծ քանակությամբ զենք ու զինամթերք: Բեռլինը գրավելու առթիվ սո-
վետական զինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատարության մա-
յիսի 2-ի հրամանում առավել աչքի ընկած զորամասերի թվում նշվեց-
ցին նաև հայկական Թամանյան դիվիզիան և նրա խիզախ հրամանա-
տար գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանի անունը:

Թամանյան դիվիզիայից բացի, Բեռլինի գրավմանը մեծ թվով հայ
ռազմիկներ էին մասնակցում սովետական բանակի նաև մյուս միավո-
րումների շարքում: Այդ գործում իրենց արժանի ներդրումն ունեն ավիա-
ցիայի մարշալ Արմենակ Խանփերյանցը, գններալ-լեյտենանտներ Սերգեյ
Գալաշևը, Իվան Վեբիլովը, գններալ-մայորներ Սերգեյ Կարապետյանը,
Իսահակ Գասպարյանը, Հմայակ Բաբաջանը, գնդապետներ Համազասպ
Խաբաջանյանը, որը Բեռլինի գրավումից հետո արժանացավ գններալ-մա-
յորի կոչման, Նիկոլայ Թումանյանը, Սամվել Հարությունյանը, Սովետա-
կան Միության հերոսներ Սարիբեկ Չիլինգարյանը, Աշոտ Ասատրյանը, Ա-
շոտ Ամատունին և շատ ուրիշներ: Հայ ժողովրդի հազարավոր զա-
վակներին կուրծքը զարգարվեց «Բեռլինի գրավման համար» մեդալով:

Հայ ռազմիկների մասնակցությունը ճապոնական միլի- տարիզմի ջախջախ- մանը Հեռավոր Արևելքում

Չնայած ֆաշիստական Գերմանիան ջախջախվել էր, բայց երկրորդ համաշխարհային պատերազմը դեռ չէր ավարտվել: 1945 թվականի օգոստոսի 9-ին սովետական զորքերը Հեռավոր Արևելքում հարձակում սկսեցին Կվանտունյան բանակի դեմ: Շուտով ճապոնիան պարտություն կրեց և սեպ- տեմբերի 2-ին ստորագրեց անվերապահ կապիտուլյացիայի ակտ: Ավարտվեց երկրորդ համաշխարհային պատերազմը:

Ինչպես գերմանական ֆաշիզմի, այնպես էլ ճապոնական միլիտա-
րիզմի դեմ մղված ընդհանուր պայքարում աչքի ընկան բազմաթիվ հայ
ռազմիկներ: Սովետական բանակի ռազմաօդային ուժերի շտաբի պետ,
ավիացիայի մարշալ Ա. Խանփերյանցը 1945 թվականի օգոստոսին նշա-
նակվեց հեռավորարևելյան ռազմաճակատի 12-րդ օդային բանակի
հրամանատար: Փառաբանված մարշալի հրամանատարությունամբ գործող
ավիացիոն միավորումները օդից կործանիչ հարվածներ էին հասցնում
ճապոնական ռազմամուկներին: Մի այլ ավիամիավորում ղեկավարում
էր գններալ-մայոր Գրիգոր Տոլմաշյանը:

Ճապոնական զավթիչների դեմ մղված կռիվներում արժանի ծա-
ռայություններ մատուցեց հեռավորարևելյան երկրորդ ռազմաճակատի

հրետանու հրամանատար, Սովետական Միության հերոս Միքայիլ Պարսեղովը: Մինչ այդ նրա ստացած լենինի 3 և Կարմիր դրոշի 4 շքանշաններին այստեղ ավելացավ նաև Սովետական Կոմունիզմի շքանշանը:

Սովետական Միության հերոս, գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանը, որը աչքի էր ընկել Հայրենական պատերազմի մի շարք ռազմաճակատներում, հատկապես Ուկրաինայի ազատագրման գործում, մեծ համբավ ձեռք բերեց նաև ճապոնական զավթիչների դեմ մղած մարտերում: Նրա հրամանատարությամբ գործող դիվիզիան առաջիններից մեկն էր, որ մտավ Մանջուրիա և, հաղթահարելով դժվարանց տեղանքը, 500 կմ առաջ շարժվեց, սովետական մյուս զորամասերի հետ միասին մասնակցեց մի շարք քաղաքների ազատագրմանը: Սովետական և շինական կառավարությունները նոր շքանշաններով պարգևատրեցին խիզախ գեներալի կուրծքը:

Եվրոպայում տարած փայլուն հաղթանակներից հետո Հեռավոր Արևելք տեղափոխվեց և ճապոնական Կվանտունյան բանակի դեմ ահեղ մարտեր ծավալեց գեներալ-գնդապետ Կրավչենկոյի և գեներալ-լեյտենանտ Հայկ Թումանյանի ղեկավարած տանկային փառապանծ բանակը, որը խաղաղօվկիանոսյան սովետական ժողովուրդների հետ առաջիններից էր, որ մտավ Պորտ-Արտուր:

Հեռավորարևելյան ռազմաճակատներում թշնամու ջախջախման գործում աչքի ընկան նաև հրետանու գեներալ-մայորներ Գևորգ Զայլախյանը, Տիմոֆեյ Դեդոլյանը, գնդապետներ Բագրատ Միղոջանը, Սարգիս Խաչիկյանը և հարյուրավոր այլ հրամանատարներ ու զինվորներ, որոնք պարգևատրվեցին մարտական շքանշաններով ու մեդալներով:

2. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԹԻԿՈՒՆՔՈՒՄ

Հայաստանի բանվոր դասակարգի անձնվեր աշխատանքը

Հայրենական մեծ պատերազմի տարիներին թիկունքի և ռազմաճակատի կուռ միասնությունը այն կարևորագույն նախապայմաններից մեկն էր, որոնց շնորհիվ սովետական ժողովուրդը հաղթանակ տարավ գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ:

Հայրենական պատերազմի ծանր տարիներին հերոսական աշխատանք կատարեց Հայաստանի բանվոր դասակարգը: Կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների կոլեկտիվները իրենց ամբողջ աշխատանքը վերակառուցեցին պատերազմի պահանջներին համապատաս-

խան: Հանրապետության արդյունաբերության գրեթե բոլոր ճյուղերը աշխատում էին ռազմաճակատի կարիքների համար: Հայաստանից ամեն օր ռազմաճակատ էին ուղարկվում մեծ քանակությամբ մեքենաներ, գեներ, ռազմամթերք, հանդերձանք, պարենային և արդյունաբերական ապրանքներ: Երկրի ռազմական արդյունաբերության կենտրոններն էին ուղարկվում հարյուրավոր տոննաներով հումք՝ պղինձ, կաուչուկ, կարբիդ և այլ նյութեր:

ՍՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեի առաջադրանքները ժամկետին կատարելու գործում աչքի էին ընկնում Ալավերդու պղնձաձուլական, Երևանի Ս. Կիրովի անվան սինթետիկ կաուչուկի, հաստոցաշինական գործարանները, Ղափանի պղնձի հարստացուցիչ ֆաբրիկան, Կիրովականի Ա. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատը և բազմաթիվ այլ ձեռնարկություններ:

Չնայած ստեղծված դժվարություններին, պատերազմի տարիներին Սովետական Հայաստանում շահագործման հանձնվեցին ավելի քան 30 արդյունաբերական նոր ձեռնարկություն և 110 նոր արտադրամաս, այդ թվում Երևանի Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական, ավտոպահեստամասերի, ավտոդողերի, էլեկտրաշարժիչների, կոմպրեսորների, ժամացույցի, Հոկտեմբերյանի պահածոների գործարանները և այլն: Արագ թափով առաջ էր գնում մի քանի խոշոր գործարանների և հիգրոէլեկտրակայանների շինարարությունը, որոնք շահագործման հանձնվեցին պատերազմից հետո՝ չորրորդ հնգամյակում: Պատերազմի տարիներին հանրապետության արդյունաբերական ձեռնարկություններում յուրացվեց 300 տեսակի նոր արտադրանք, այդ թվում գեներ, և զինամթերքի (ականանետերի, ականների, արկերի, նոնականների, փամփուշտների և այլնի) արտադրությունը:

Այդ տարիներին կառուցվեց Ջուլֆա—Մինջևան 125 կմ երկարությամբ երկաթգիծը, որը Մեղրու շրջանում 45 կմ անցնում է Սովետական Հայաստանի տիրիտորիայով: Այդ գծի կառուցումով հանրապետությունը ունեցավ երկրորդ ելքը իր հարավ-արևելյան սահմաններով դեպի Անդրկովկասի երկաթուղային մայրուղի:

Սոցիալիստական հայրենիքի նկատմամբ ունեցած սերը սովետական մարդկանց ոգեշնչում էր աշխատանքային նորանոր սխրանքների: 1942 թ. մայիսին ծավալվեց համամիութենական սոցիալիստական մերցություն, որը նպաստեց աշխատանքի արտադրողականության բարձրացման գործին: Շատ բանվորներ իրենց օրական պլանը կատարում էին մի քանի հարյուր տոկոսով: Շատերը աշխատում էին ոչ թե մեկ, այլ մի քանի հաստոցների վրա: Այսպես սկսվեց ծավալվել թիկունքի

«գվարդիականների»՝ երկուհարյուրականների, երեքհարյուրականների, հինգհարյուրականների, հազարականների և բազմահաստոցայինների հայրենասիրական շարժումը: Այդ գործում մեծ նախաձեռնություն հանդես բերեց երիտասարդությունը: Հայաստանի արդյունաբերական ձեռնարկություններում գործում էր ավելի քան 750 կոմերիտական-երիտասարդական ճակատային բրիգադ, որոնց մեջ ընդգրկված էին 6000 երիտասարդ:

Հանրապետության արդյունաբերության մի շարք ձեռնարկություններ հաղթող ճանաչվեցին սոցիալիստական մրցության մեջ և արժանացան համամիութենական մրցանակների: Զորահեղի կուլեկտիվը 1944 թվականին նվաճեց ՀՍՄԿՍ-ի և ՍՍՀՄ էլեկտրակայանների ժողովրդական կոմիտատի փոխանցիկ կարմիր դրոշմը: Հայրենիքի պաշտպանության գործում աչքի ընկնող ներդրում կատարելու համար 1945 թ. հուլիսին հանդիսավոր իրադրության մեջ Երևանի Ս. Մ. Կիրովի անվան գործարանին հանձնվեց ՍՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեի փոխանցիկ կարմիր դրոշմը:

Սոցիալիստական արդյունաբերության մեջ հսկայական դեր էին խաղում կանայք, աղջիկներն ու պատանիները: 1942 թվականին Հայաստանի արդյունաբերության մեջ աշխատող բանվորների 54,4%-ը կանայք էին: Նրանք աշխատանքային հերոսության հիանալի օրինակներ ցույց տվեցին: Արդյունաբերության մեջ հանդես եկան հազարավոր նորարարներ, գյուտարարներ ու ռացիոնալիզատորներ:

Լավագույն ձևով էր կազմակերպված երկաթուղայինների աշխատանքը: Երկաթե ռելսերի վարպետները գիշեր-ցերեկ աշխատում էին ռազմական բեռները և զորքերը ժամկետից շուտ տեղ հասցնելու համար: Առանձնապես աչքի էր ընկնում Լենինականի շոգեքարշային դեպոյի կուլեկտիվը: Մեքենավար Անդրանիկ Խաչատրյանը իր շոգեքարշով, առանց վերանորոգման, 515 հազար կմ վազք կատարեց, խնայելով 450 տ վառելիքային: Նա Սովետական Հայաստանում առաջինն էր, որ 1943 թ. նոյեմբերին արժանացավ սոցիալիստական աշխատանքի հերոսի բարձր կոչման:

Այսպիսով, Հայաստանի բանվոր դասակարգը պատվով կատարեց իր պարտքը հայրենիքի հանդեպ:

Կոլտնտեսային գյուղացիությունը պատերազմի տարիներին

Գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ հաղթանակն ապահովելու համար հերոսական աշխատանք էր կատարում կոլտնտեսային գյուղացիությունը: Հայաստանի կոլտնտեսականները, հաղթահարելով պատերազմի հետևանքով ստեղծված դժվարությունները, արժանի ներդրում կատարեցին սովետական բանակին և բնակչությանը

պարենամթերքով, իսկ արդյունաբերությունը՝ հումքով ապահովելու գործում:

Կուսակցության Կենտրոնական կոմիտեն ու կառավարությունը մի շարք միջոցառումներ մշակեցին կոլտնտեսություններն ամրապնդելու համար: Գյուղում կուսակցական-քաղաքական աշխատանքն ուժեղացնելու նպատակով ՀամԿ(բ)Կ Կենտկոմը 1941 թ. աշնանը որոշում ընդունեց ՄՏԿ-ների և սովխոզների քաղբաժիններ ստեղծելու մասին:

Պատերազմի տարիներին հանրապետությունում ցանքատարածությունները ոչ միայն չկրճատվեցին, այլև մեծ մասամբ տեղական միջոցներով կառուցված մի շարք նոր ջրանցքների շնորհիվ, ընդարձակվեցին 27 հազար հեկտարով: Ցանքատարածությունների ավելացման հետ միասին զգալիորեն բարձրանում էր նաև բերքատվությունը:

Տոգորված հայրենիքի հանդեպ ունեցած պարտքի բարձր գիտակցությամբ, Հայաստանի կոլտնտեսականները պետական բոլոր տեսակի պարտավորությունները կատարում էին ժամկետից շուտ: Նրանք ռազմաճակատի և երկրի կարիքների համար պլանից դուրս պետությանը հանձնեցին մեծ քանակությամբ գյուղատնտեսական մթերքներ:

Գյուղատնտեսության մեջ ևս մեծ դեր էին կատարում կանայք: Նրանցից շատերն աշխատում էին որպես կոլտնտեսության նախագահներ, բրիգադիրներ, տրակտորիստներ, կոմբայնավարներ: Հայրենասիրական մեծ սիրանքներ կատարեց կոլտնտեսային երիտասարդությունը: Հայաստանի գրեթե բոլոր գյուղերում կազմակերպվեցին բարձր բերքի կոմերիտական-երիտասարդական օղակներ և բրիգադներ: 1943 թվականից սկսեց լայն ծավալ ստանալ գիշերային հունձը: Մեծ արդյունք տվեցին կիրակնօրյակները: Կարևոր նշանակություն ունեցան նաև կոմերիտական-երիտասարդական հսկիչ պոստերը, որոնք գիշեր-ցերեկ հետևում էին բերքահավաքին: Գյուղատնտեսական աշխատանքներին ակտիվորեն մասնակցում էին նաև պիոներ-դպրոցականները:

1944 թ. օգոստոսին Սովետական Հայաստանը անասնաբուծության դժով շահեց համամիութենական մրցանակ և նվաճեց Պաշտպանության պետական կոմիտեի փոխանցիկ կարմիր դրոշմը: Այդ կոմիտեի փոխանցիկ դրոշմը նվաճեց նաև Հայկական ՍՍՀ Ստեփանավանի շրջանը: ՄՏԿ-ների համամիութենական մրցության մեջ մի քանի անգամ մրցանակ շահեց Հոկտեմբերյանի մեքենատրակտորային կայանը:

Հայաստանի մտավորականությունը Հայրենական պատերազմի ժամանակաշրջանում

Հայրենանվեր անդուլ աշխատանք կատարող Հայաստանի բանվոր դասակարգից և կոլտնտեսային գյուղացիությունից ետ չմնաց նաև մտավորականությունը: Պատերազմի տարիներին հանրապետության գիտնականները նորանոր հայտնագործություններ կատարեցին:

ղեցին, իրեց ամբողջ գիտելիքները ի սպաս դրեցին սովետական ժողովրդի հաղթանակի գործին:

Աստղաֆիզիկայի գծով անվանի գիտնական Վիկտոր Համբարձումյանի կատարած հայտնագործությունը խոշոր ներդրում հանդիսացավ մեր երկրի պաշտպանության ամրապնդման գործում: «Լույսի ցրումը պղտոր միջազլայում» նոր տեսություն ստեղծելու համար նա 1946 թ. արժանացավ պետական մրցանակի: Բացառիկ կարևոր նշանակություն ունեցան ռադիոակտիվության ասպարեղում պետական մրցանակի դափնեկիրներ Աբրահամ և Արտեմ Ալիխանյան եղբայրների գիտական հետազոտությունները: Շատ հաշիբ աչքի ընկան մեր երկրի ռազմական տեխնիկայի կատարելագործման բնագավառում: Հրանոթների արտադրության տեխնոլոգիայի արմատական կատարելագործման համար սոցիալիստական աշխատանքի հերոս Համո Յուլյանը, ինքնաթիռների անրոզինամիկական փորձարկման նոր սարքավորում ստեղծելու համար Ն. Ժուկովսկու անվան ինստիտուտի պրոֆեսոր Գուրգեն Մուսիսյանը արժանացան պետական մրցանակի: Ինքնաթիռաշինության գործում մեծ ներդրում ունի եռակի պետական մրցանակակիր, սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս Արտեմ Միկոյանը:

Պատերազմի տարիներին մեծ դեր կատարեցին բժշկական գիտության ականավոր ներկայացուցիչները: Այս բնագավառում նշանակալից ավանդ ունի ակադեմիկոս, բժշկական ծառայության գեներալ-գնդապետ, սոցիալիստական աշխատանքի հերոս Լեոն Օրբելին: Բժշկական կադրեր պատրաստելու, ինչպես և հատկապես հանրապետության հոսպիտալներում գտնվող սովետական բանակի վիրավոր ու հիվանդ ռազմիկների բուժման ուղղությամբ արդյունավետ աշխատանք էր կատարում հայ անվանի բժիշկ-գիտնականների մի մեծ խումբ:

Սովետական Հայաստանի ինժեներներն ու տեխնիկները մեծ եռանդով կատարելագործում էին արտադրության տեխնիկան, հաջողությամբ յուրացնում տեղական պայմաններում ռազմական արտադրանք տալու մեթոդներն ու ձևերը: Այս գործում աչքի ընկավ Երևանի Ց. Զերժինսկու անվան հաստոցաշինական, Ս. Կիրովի անվան սինթետիկ կաուչուկի, Ալավերդու պղնձածուլական գործարանների, Կիրովականի Ա. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի և բազմաթիվ այլ արտադրական ձեռնարկությունների ինժեներատեխնիկական անձնակազմը:

Հետևելով քաղաքի իժեներատեխնիկական անձնակազմի լավ օրինակին, մեծ աշխատանք էին կատարում նաև գյուղատնտեսության մեջ աշխատող ինժեներները, մեխանիկները, գյուղատնտեսները և մյուս մասնագետները:

Հայ ժողովրդի կյանքում խոշորագույն իրադարձություն էր պատե-

րազմի ծանր օրերին՝ 1943 թ. նոյեմբերին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի կազմակերպումը: Գիտությունների ակադեմիան իր բազմաթիվ ինստիտուտներով ու գիտահետազոտական այլ հիմնարկներով դարձավ հանրապետության գիտական մտքի խոշոր կենտրոն: Նրա խկական անդամների կազմում էին ականավոր գիտնականներ Զ. Օրբելին, Լ. Օրբելին, Զ. Մանանդյանը, Մ. Աբեղյանը, Զ. Աճառյանը, Ստ. Մալխասյանը, Ա. Ալիխանովը, Վ. Համբարձումյանը, Խ. Կոշտոյանցը, Ա. Տերտերյանը և ուրիշներ: Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի առաջին պրեզիդենտ ընտրվեց անվանի հայագետ Հովսեփ Օրբելին:

ՀՍՍՀ ԳԱ մի շարք ինստիտուտներ (ֆիզիկայի, ջրաէներգետիկ, շինանյութերի և կառուցվածքների, քիմիայի, գենետիկայի և այլն) բեղմնավոր աշխատանք էին կատարում ինչպես երկրի պաշտպանության, այնպես էլ ժողովրդատնտեսական նշանակություն ունեցող կարևոր պրոբլեմների լուծման ուղղությամբ: Թիկունքում քիչ գործ չկատարեցին նաև պատմաբաններն ու զրականագետները: Ակադեմիկոսներ Զ. Օրբելին, Զ. Մանանդյանը և ուրիշներ անդուլ կերպով աշխատում էին մեր ժողովրդի հերոսական անցյալի փառահեղ էջերի վերհանման վրա: Հայկական ՍՍՀ ԳԱ պրեզիդենտ Զ. Օրբելու նախաձեռնությամբ «Հայաստանի զավակների մարտական սխրագործությունները» մատենաշարով հրատարակվեցին հայ նշանավոր զորավարների, Հայրենական պատերազմում փառաբանված հայ գեներալների, Սովետական Միության հերոսների մասին առանձին գրքույկներ:

Հայրենական պատերազմի դժվարին տարիներին մեծ գործ էր կատարում մտավորականության խոշոր ջոկատներից մեկը՝ մասսայական ուսուցչությունը: Նա զբաղված էր մատաղ սերնդի կրթության և կոմունիստական դաստիարակության վեհ ու պատվավոր գործով: Հեշտ չէր պատերազմի պայմաններում դպրոցի աշխատանքը: Քաղաքային դպրոցական շենքերի մի մասը վեր էր ածվել հոսպիտալների: Շատ դպրոցներ աշխատում էին երեք և նույնիսկ չորս հերթ, ուսուցչական կադրերի զգալի մասը մեկնել էր բանակ և այլն: Սակայն, չնայած այդ դժվարություններին, բոլոր միջոցները ձեռնարկվում էին դպրոցի անխափան աշխատանքն ապահովելու համար:

Սովետական կառավարությունը բարձր գնահատեց դպրոցի աշխատանքը մատաղ սերնդին հայրենասիրական զազափարներով դաստիարակելու գործում: 1944—1945 թթ. հանրապետության 22 դպրոցներ արժանացան Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրի: Դրանցից են Երևանի Մաքսիմ Գորկու, Պուշկինի անվան, Ղափանի շրջանի Մավ, Նոյեմբերյանի շրջանի Կողբ գյուղերի դպրոցները, որոնք դաստիարակել

են Սովետական Միության հերոսներ ներսոն Ստեփանյանին, Սերգեյ Քուռնազյանին, Հունան Ավետիսյանին, Զահան Կարախանյանին:

Այդ տարիներին անդուլ աշխատանք էր կատարում նաև բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների պրոֆեսորադասախոսական անձնակազմը: Այդ հաստատություններն ավարտեցին ավելի քան 10 հազար մասնագետներ: Այդ թվում բժիշկներ, ինժեներներ, անասնաբույժներ, որոնց զգալի մասը ծառայության էր ուղարկվում սովետական բանակ:

Հանրապետության թատրոններում մեծ տեղ էր արվում հայրենասիրական թեմաներով պիեսների բեմադրությունը: Օրինակ՝ դրամատիկական թատրոններում բեմադրվում էին Ն. Զարյանի «Վրեժ», Գ. Դեմիրճյանի «Երկիր հայրենի», Կ. Սիմոնովի «Ռուս մարդիկ», Ա. Կորնեյչուկի «Ռազմաճակատ» և այլ պիեսներ: Երևանի օպերայի և բալետի պետական թատրոնում մեծ հաջողությամբ էին ընթանում Մ. Գլինկայի «Իվան Սուսանին», Զ. Պալիաշվիլու «Դաիսի», Ուլ. Հաջիբեկովի «Քյոոօզլի» օպերաները: Թատրոնի ստեղծագործական կոլեկտիվի համար մեծ ներդրում էր XIX դարի հայ ականավոր կոմպոզիտոր Տիգրան Զուխաշյանի «Արշակ երկրորդ» պատմահայրենասիրական օպերայի բեմադրությունը: Հայկինոն արտադրեց պաշտպանական թեմաներով մի շարք կինոֆիլմեր: Պատերազմի դժվարին պայմաններում, 1942—1943 թթ., Հայկինոն նկարահանեց և 1944 թվականին ցուցադրեց «Դավիթ-Քեղ» պատմահայրենասիրական կինոֆիլմը:

Հայրենիքի պաշտպանության թեմատիկայով նոր, արժեքավոր գործեր ստեղծեցին Հայաստանի կոմպոզիտորները: Նրանց լավագույն ստեղծագործությունները հնչեցին 1944 թվականին Մոսկվայում տեղի ունեցած հայկական երաժշտության օրերին:

Հայաստանի կերպարվեստագետները հա շմնացին արվեստի բնագավառի մյուս գործիչներից: Նրանց ստեղծագործություններում ևս վառ կերպով արտացոլվում էր հայրենիքի պաշտպանության գաղափարը: Պատերազմի տարիներին ստեղծվեցին ռազմաճակատների հայ ռազմիկների և թիկունքի աշխատավորների կատարած հերոսական սխրագործությունները պատկերող բազմաթիվ բարձրորակ կտավներ:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին իրենց խնդիրները պատվով էին կատարում նաև սովետահայ գրողները: Սովետահայ գրականության այդ տարիների առաջնահերթ խնդիրն էր ճշմարտացիորեն արտացոլել սովետական բանակի հերոսամարտերը, բացահայտել սովետական ռազմիկի քաղաքական-բարոյական կերպարը, նրա հոգեկան բարձր հատկությունները՝ վառ հայրենասիրությունը, արիությունը, հաղթանակի հասնելու անհողողղ կամքը: Հայ գրողները միա-

ժամանակ պատկերում էին թիկունքի աշխատանքային խանդավառությունը, բանվորների, կոլտնտեսականների, մտավորականության հայրենանվեր անձնագոհ աշխատանքը:

Մեծանուն բանաստեղծ Ավ. Իսահակյանը իր հայրենասիրական բանաստեղծություններով սովետական ժողովրդին կոչ էր անում հերոսաբար մարտնչել անարգ թշնամու դեմ: Նա իր «Իմ հայրենիքին», «Ռազմակոչ», «Միրելի հերոս Ս. Գ. Զաքյանի անմահ հիշատակին» և մի շարք այլ բանաստեղծությունների համար արժանացավ պետական մրցանակի դափնեկրի կոչման:

Գրականության առաջին գծում էր նախիր Զարյանը: Այդ ժամանակաշրջանում հրատարակվեցին նրա «Մարտակոչ», «Շիկացած հոգով», «Լսեք դարեր» ժողովածուները, «Զայն հայրենական», «Անմահության պարը» պոեմները, «Վրեժ» և «Այրող դիմակ» դրամատիկական երկերը, «Արա Գեղեցիկ» պատմադրիցաբանական ողբերգությունը: Հայրենասիրական մոտիվները ուժգնությամբ էին հնչում բանաստեղծներ Գ. Սարյանի, Ա. Վշտունու, Գ. Բորյանի, Հ. Շիրազի և ուրիշների ստեղծագործություններում:

Հայրենական պատերազմի թեմաներով արժեքավոր գործեր ստեղծեցին սովետահայ արձակագիրները: Հիշատակության արժանի են Հ. Քոչարի, Հ. Սիրասի, Վ. Անանյանի և ուրիշների պատմվածքներն ու ակնարկները ռազմաճակատային կյանքի մասին: Հայրենական պատերազմի ժամանակաշրջանի սովետահայ արձակի մեծագույն նվաճումներից են Գ. Դեմիրճյանի «Վարդանանք» (առաջին հատոր) և Ստ. Զորյանի «Պասթիվավոր» պատմավեպերը:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին ռազմաճակատ մեկնեցին ավելի քան 40 գրողներ, որոնք գրչով և զենքով կռվում էին թշնամու դեմ:

Թիկունքի աշխատավորները ռազմաճակատիև ցույց էին տալիս բազմապիսի օգնություն: Պատերազմի սկզբներին հանրապետությունում լայնորեն ծավալվեց սովետական բանակին նվեր-ծանրոցներ և տաք հագուստ ուղարկելու, պաշտպանական զանազան ֆոնդեր ստեղծելու, ինչպես նաև ֆաշիստական օկուպացիայից ազատագրված շրջաններին օգնություն կազմակերպելու կամպանիա: Կովկասի ռազմաճակատի մարտիկներին և սևծովյան նավատորմայիններին Հայաստանից ուղարկվել է 1136000 տաք հագուստ, 45 վագոն մթերք, պտուղներ և ավելի քան 200 հազար նվեր-ծանրոցներ: Հանրապետության աշխատավորները կամավոր կերպով իրենց խնայողությունները պաշտ-

այանական զանազան ֆոնդերին մուծեցին 215 միլիոն ռուբլի: Այդ գումարներով պատրաստվեցին և մարտաշարք մտան «Սովետական Հայաստան», «Հայաստանի ֆիզիկուլտուրնիկ» ավիամիավորումները, «Հայաստանի կոլտնտեսական», «Հայաստանի կոմերիտական» տանկային շարասյունները և այլն: Միայն գերմանական զավթիչներից ազատագրված շրջանների վերականգնման ֆոնդին մուծվեց 8 միլիոն ռուբլի: Հատկապես մեծ օգնություն ցույց տրվեց Ստալինգրադի, Լենինգրադի, Ինչպես նաև Ուկրաինայի քաղաքների վերականգնմանը: Հայաստանի աշխատավորությունը ֆաշիստական օկուպացիայի հետևանքով ավերված քաղաքների ու շրջանների վերականգնման օգնում էր ոչ միայն դրամով, այլև զանազան սարքավորումներով, մեքենաներով, անասուններով, սերմացուով, գյուղատնտեսական գործիքներով, գրականություններով և այլն:

Պատերազմի տարիներին Սովետական Հայաստանում հյուրընկալվել և ջերմ հոգատարությամբ էին շրջապատվել հազարավոր էվակուացված ընտանիքներ և մանկատան երեխաներ, որոնց ծնողները զոհվել էին կամ գտնվում էին ռազմաճակատներում:

**Միջուռքահայությունը
Ֆաշիզմի դեմ մղվող
պայքարում**

Գերմանական ֆաշիզմի դեմ ոտքի ելավ նաև առաջադեմ սփյուռքահայությունը:

Հայրենական պատերազմի առաջին օրերին Սովետական Հայաստանի մտավորականության մի խումբ աչքի ընկնող գործիչներ դիմեցին արտասահմանյան երկրներում ապրող հայերին: «Մենք դիմում ենք ձեզ և կոչ ենք անում՝ համախմբել ձեր բոլոր ուժերը հանուն Սովետական Միության պաշտպանության, հանուն մարդկության խարդախ ու վտանգավոր թշնամու՝ ֆաշիզմի ոչնչացման»:

Ջերմորեն արձագանքելով այդ դիմումին, աշխարհի բոլոր կողմերում ապրող հայ աշխատավորները պաշտպանում էին Սովետական Միությանը, ուրախանում սովետական բանակի տարած հաղթանակներով: «Բոլորս ոգևորված ենք այն հերոսական պայքարով, որ կարմիր բանակը և եղբայրական սովետական ժողովուրդները մղում են հիտլերյան բարբարոսության դեմ», — ասված է նյու-Յորքի 3000 ամերիկահայերի՝ ՄՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ Մ. Ի. Կալինինին 1941 թ. դեկտեմբերին ուղղած հեռագրում:

Միջուռքահայերը, շնչին բացառությամբ, ոչ միայն անսահման ոգևորությամբ էին համակվում, լսելով սովետական բանակի և, հատկապես, նրա շարքերում կռվող հայ ռազմիկների հերոսական սխրագործությունների, թիկունքում Հայաստանի աշխատավորների կատարած անձնազոհ աշխատանքի մասին, այլև իրենց պատրաստակամություն

էին հայտնում օգնություն ցույց տալու իրենց հայրենակիցներին ֆաշիզմի դեմ մղվող ազատագրական պայքարում: «Հայրենական ներկա պատերազմը, — ասված է սիրիահայ և լիբանանահայ աշխատավորների նամակում, — պատմական մեծ հեղափոխություն առաջ բերեց նաև մեր գաղութի մեջ: Այսօր Սուրիո և Լիբանանի հայությունը համախմբված է հայրենասիրական դրոշակի տակ և պատրաստ է հայրենիքի համար որևէ զոհողության առաջ կանգ չառնել»: ԱՄՆ-ի հայ համայնքից Հայաստանի կառավարության անունով ստացված հեռագրում ասված էր. «Մենք պարծենում ենք կարմիր բանակի շարքերում կռվող և թիկունքում աշխատող հայաստանցի զավակների ու զուտարների հերոսական պայքարով: Մենք ցույց կտանք մեր լիակատար օգնությունը: Անհողողող է մեր հավատքը զազրելի Հիտլերի ջախջախման նկատմամբ»:

Այդ տարիներին մի շարք երկրներում հայերը ստեղծեցին առաջադիմական նոր կազմակերպություններ, որոնք միավորում և զլխավորում էին սփյուռքահայ աշխատավորների պայքարը ֆաշիզմի դեմ, ամեն կերպ աշխատում էին ուժեղացնել կապը Սովետական Հայաստանի հետ և հանգանակությունների միջոցով իրենց համեստ ներդրումն էին կատարում սովետական երկրի պաշտպանության հզորացման գործում: Այդպիսի կազմակերպություններից էին «Սովետական Հայաստանի բարեկամների ընկերությունը» Սիրիայում, «Սովետական Հայաստանի պաշտպանության լիգան» Պաղեստինում, «Ամերիկահայ ազգային խորհուրդը», «ՄՍՀՄ բարեկամների միությունը» Թավրիզում, «Հայերի ազգային ճակատը» Փարիզում և այլն:

Այդ կազմակերպությունների ջանքերի շնորհիվ էր, որ հսկայական գումարներ հավաքվեցին «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն ստեղծելու համար, որը և 1944 թվականի գարնանը մարտաշարք մտավ: Միջուռքահայության հավաքած գումարներով շուտով կազմվեց նաև «Սասունցի Դավիթ» երկրորդ տանկային շարասյունը: 1945 թվականին արտասահմանյան երկրներում հանգանակություն կատարվեց Բաղրամյանի անվան տանկային շարասյուն կառուցելու համար: Սակայն այդ շարասյան ստեղծման օգտին սկսված հանգանակությունը զաղարեց՝ պատերազմն ավարտվելու պատճառով:

Երկրորդ համաշխարհային պատերազմում հազարավոր հայեր հերոսաբար կռվում էին դաշնակիցների բանակներում: Միայն ամերիկյան բանակում ֆաշիստական զորքերի դեմ մարտնչում էին ավելի քան 18 հազար հայ ռազմիկներ: Հերոսական սխրագործություններ կատարելու համար ամերիկյան բարձրագույն շքանշանների արժանացան Ճանին

Պատրոսյանը, էրնստ Դերվիշյանը, օդաչուներ Փիրայր Գևորգյանը, Փիրայր Զարգավաթյանը, Զարլզ Տերտերյանը և շատ ուրիշներ: Ուշագրավ է, որ ամերիկյան հերոսի պատվին արժանացած է. Դերվիշյանը պարգևատրվել է «Կոնգրեսի պատվո մեդալ» շքանշանով, որով ամերիկյան բանակից պարգևատրվել են ընդամենը 87 մարդ:

Սփյուռքահայերից շատերն ակտիվորեն մասնակցում էին նաև պարտիզանական շարժմանը:

Մեծ թվով հայեր մասնակցում էին ֆաշիզմի դեմ ֆրանսիական ժողովրդի մղած հերոսական պայքարին, որն ստացավ Դիմադրության շարժում անունը: 1941 թվականի ամռանը ֆրանսահայ կոմունիստների նախաձեռնությամբ ստեղծվեց Հայ ազգային նակաուր, որին մասնակցում էին ֆրանսահայ դադուի գրեթե բոլոր խավերից ու կուսակցություններից: Հայ ազգային ճակատը սեղերում, գլխավորապես Յրանսիայի հարավում, ստեղծել էր կոմիտեներ, ուներ ընդհատակյա տպարաններ, հրատարակում էր թերթիկներ, գրքուկներ, «Հայ ռազմաճակատ», «Ազատություն», «Ժողովուրդ» թերթերը, որոնք հայերին կոչ էին անում ակտիվորեն ներգրավվել պարտիզանական պայքարի մեջ հանուն Յրանսիայի՝ ֆրանսահայերի երկրորդ հայրենիքի ազատագրության:

Հարյուրավոր ֆրանսահայեր ընդգրկվեցին Յրանսիայի պարտիզանական ջոկատներում ու «Ազատ հրաձիգների» ընդհատակյա մարտական խմբերում: Ստեղծվեցին նաև առանձին հայկական պարտիզանական ջոկատներ, որոնց թիվը 1944 թվականին անցավ մեկ տասնյակից: Շատ հայեր հերոսական սխրագործություններ կատարեցին և զոհվեցին: Ամբողջ Յրանսիայում ազգային հերոսի համբավ վաստակեց Փարիզի ինտերնացիոնալ պարտիզանական ջոկատի հրամանատար, կոմունիստ բանաստեղծ Միսաք Մանուշյանը: 1944 թվականի փետրվարին ֆաշիստները զնդակահարեցին Մանուշյանին և նրա 22 խիզախ ընկերներին: «Հայ ժողովուրդը, — գրել է Յրանսիայի կոմունիստական կուսակցության Կենտկոմի քարտուղար Ժակ Դյուկլոն, — իրավունք ունի պարծենալու Մանուշյանի խմբի հերոսներով, որոնք շարունակելով նույն պայքարը, որ Սովետական Միության պաշտպանության և ժողովուրդը մղում էին ֆաշիզմի դեմ, իրենց կյանքը տվին հաճուն ժողովուրդների ազատության... Մանուշյանի և նրա ընկերների հիշատակը ապրում է և կապրի Յրանսիայի բանվոր դասակարգի սրտում»:

1939 թվականից սկսած Յրանսիայում հիտլերյան զավթիչների դեմ մղվող պայքարում հայկական դիմադրության ղեկավարներից էր Յրանսիայի կոմունիստական կուսակցության անդամ Լուիզա Ասլանյանը

(Լաուր), որին 1944 թ. հուլիսի խեղդեցին ֆաշիստական բանտում: Որպես հերոս պարտիզան, ապա պարտիզանական խմբի կազմակերպիչ ու հրամանատար, Յրանսիայի հարավում քաջաբար կռվում էր 22-ամյա նշան Տեր-Մարտիրոսյանը, որը նույնպես զոհվեց:

«Հայ ժողովրդին նկարագրելու համար ֆրանսիացի բանաստեղծները թուղթ ու թանաք քիչ չեն գործածել, բայց հայ ժողովուրդը թանաքի փոխարեն իր արյունն է թափել Յրանսիայի ազատագրման համար»: Այսպես է արտահայտվել ֆրանսիական ականավոր բանաստեղծ Լուի Արագոնը:

1943 թվականի հունվարից Ստարա Բլանինայի լեռներում գործող «Չավդար» պարտիզանական ջոկատում ծանր պայմաններում հետախուզական կարևոր առաջադրանքներ էր կատարում 19-ամյա բուլղարահայ պարտիզանուհի Հերմինե Ռազդարալյանը (Սաշկա): 1944 թ. հունիսին ֆաշիստներին հաջողվում է գրել հերոս պարտիզանուհուն և երկու շաբաթ սոսկալի տանջանքների ենթարկելուց հետո զազանաբար սպանել:

Հայկական դիմադրական շատ միավորումներ էին գործում նաև Հունաստանում: Դրանցից առավել ակտիվ էր գործում «Ազատություն» հայկական պարտիզանական ջոկատը: 1945 թվականին, երբ հունական հողը ազատագրվել էր ֆաշիստական զավթիչներից, «Ազատություն» ջոկատը պարգևատրվեց Հունաստանի ժողովրդաազատագրական բանակի (ԷԼԱՍ) կարմիր դրոշի շքանշանով: Ֆաշիզմի դեմ մղվող պայքարում հերոսի մահով ընկան շատ հունահայ պարտիզաններ, որոնց թվում Անդրանիկ Ղուկասյանը, Վահրամ Սարգսյանը և ուրիշներ: «Հունահայ երիտասարդները, — գրել է հունական «Նոր ճշմարտություն» թերթը, — ազատագրական պայքարի ժամանակ ցույց տվին արիություն և, հերոսաբար մարտնչելով, զոհվեցին: Հելլադայի լեռներում և քաղաքներում կողք-կողքի կռվեցին մեր երկիրը ներխուժող ֆաշիստական զավթիչների դեմ»:

Մեծ թվով սփյուռքահայեր անձնվիրաբար կռվում էին նաև Իտալիայի, Բուլղարիայի, Ռումինիայի, Մերձավոր ու Միջին Արևելքի և այլ երկրների պարտիզանների շարքերում:

Ֆաշիզմի դեմ արտասահմանյան առաջադեմ հայերի մղած պայքարը միաժամանակ պայքար էր գերմանա-ֆաշիստական բանակում ծառայության մտած դաշնակցականների դեմ: Դաշնակ պարագլուխներից ոմանք 30-ական թվականների կեսերից կապեր էին հաստատել հիտլերականների հետ և ոչ մի ջանք չէին խնայում նպաստելու նրանց հակասովետական պլանների իրականացմանը: Ստեղծվել էր այսպես կոչված բյուրո-գեստապո գործակցություն: «Եթե Գերմանիան և Ճապոն-

նիան Խորհրդային Միության վրայ յարձակին,— գրել է դաշնակցականների «Հայրենիք» օրաթերթը,— ապա դաշնակցությունը Խորհ. Միության թշնամիներուն բանակի մեջ կը մնայ»:

1942 թ. աշնանը դաշնակցական արկածախնդիրները մահվան սպանալիքի տակ, զլխավորապես հայ ռազմագերիներից, գերմանա-ֆաշիստական բանակի կազմում ստեղծել էին այսպես կոչված «հայկական ազգային լեգեոն»՝ նացիստների կողմից գններալի աստիճան ստացած Դրո Կանայանի ղեկավարությամբ:

1942 թ. դեկտեմբերին դաշնակցականները Բեռլինում կազմակերպեցին «ապագա հայկական կառավարություն», որը եռանդուն աշխատանք էր կատարում ֆաշիստական Գերմանիայի կողմից նվաճված երկրներում դտնվող հայերին հավաքագրելու, հայկական լեգեոնը համալրելու ուղղությամբ: Շուտով լեգեոնը, չնայած նրա մարտիկների ճնշող մեծամասնության ուժեղ դիմադրությանը, ուղարկվեց Հյուսիսային Կովկաս: Սակայն 1943 թ. փետրվար-մարտ ամիսներին գերմանա-ֆաշիստական բանակը զլխովին ջախջախվեց Հյուսիսային Կովկասում և ետ շարտվեց: Լուրջ հարված ստացավ և ղզալիորեն նոսրացավ մոտ 8000-անոց հայկական լեգեոնը: Լեգեոնականներից շատերը անցան սովետական բանակի կողմը, մի մասը ոչնչացվեց ռազմաճակատում, ուստի հիտլերյան հրամանատարությունը հարկադրված էր լեգեոնի մնացորդները փոխադրել Գերմանիա, այնտեղից էլ Ֆրանսիա և օկուպացված ուրիշ երկրներ: Այստեղ շատ հայեր, հրաժարվելով ֆաշիստներին ծառայելուց, մտան պարտիզանական ջոկատները և հերոսաբար կռվեցին հանուն ֆաշիզմի վերջնական ջախջախման:

Այսպիսով, հայ ժողովրդի ղավակները, ՍՍՀՄ մյուս ժողովուրդների ղավակների հետ միասին, անօրինակ սիրազորություններ կատարեցին հայրենական մեծ պատերազմի բոլոր ռազմաճակատներում և թիկունքում: Մեծ հայրենականին մասնակցեցին ավելի քան կես միլիոն հայեր, որոնցից 100 հազարը կոմերիտականներ էին: Գերմանա-ֆաշիստական արյունարբու հրոսակների դեմ մղված մարտերում ցուցաբերած խիզախության և արիության համար հայ ժողովրդի քաջարի ղավակներից 100 հոգի արժանացան Սովետական Միության հերոսի կոչման, Սովետական բանակի ականավոր զորավարների շարքում կային մարշալներ, ծովակալներ, 60 հայ գեներալներ: 70 հազար հայ ռազմիկներ պարգևատրվեցին ՍՍՀՄ շքանշաններով ու մեդալներով, 27 հայ ռազմիկներ պարգևատրվեցին «Փառքի» բոլոր երեք աստիճանի շքանշաններով՝ ստանալով «Փառքի ասպետի» կոչում: Թիկունքի աշխատավորներից ավելի քան 380 հազար մարդ պարգևատրվեց «Կովկասի պաշտպանության համար» և «1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում աշխատանքային արիության համար» մեդալներով, 9 հոգի արժանացան սոցիալիստական աշխատանքի հերոսի բարձր կոչմանը: Ֆաշիզմի դեմ մղված պայքարում իր ներդրումն ունեցավ նաև սփյուռքահայ աշխատավորությունը:

Պատերազմի անծայրածիր դաշտերում շատ հայ ռազմիկներ ընկան: Երախտապարտ հայ ժողովուրդը հարյուրավոր հուշարձաններ է կառուցել Հայրենիքի համար զոհվածների հիշատակին: 1970 թ. Մայիսի 9-ին Երևանի «Հաղթանակ» զբոսայգում տեղի ունեցավ Անճայտ զինվորի անյունի թաղման արարողությունը: Հավերժ փառք նրան:

«Պրավդա» թերթը Սովետական Հայաստանի 25-ամյակին նվիրված առաջնորդում, անդրադառնալով Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցությանը, գրել է. «Հայաստանում չեն որոտացել բնդանորներ, Հայաստանը չի իմացել գերմանական արշավանքի սարսափներ: Բայց հայ ժողովուրդը հասկանում էր, որ Գոնի և Կուրանի, Ուկրաինայի և Ռեյտոսիայի դաշտերում վնդվում է նաև նրա հակառակորդը, պաշտպանվում է նաև նրա անկախությունը, ազատությունը, երջանկությունը: Այդ պատճառով հայ ժողովրդի ղավակները, Սովետական Միության եղբայրական բոլոր ժողովուրդների հետ միասին, ոտքի էլան ի պաշտպանություն սովետական հայրենիքի և անձնուրաց կերպով մարտնչում էին գերմանա-ֆաշիստական ղավթիչների դեմ: Սովետական Միության հերոսների փառապանք ընտանիքում կան հայ ժողովրդի մոտ 100 ղավակ: Հազարավոր հայ ռազմիկներ պարգևատրվել են մարտական շքանշաններով: Նրանք կովել են Մոսկվայի, Մալինգրադի մատույցներում, Ղրիմում, նրանք պաշտպանել են Լենինգրադը, նրանք հարձակվել են Քյոնիգսբերգի վրա, Օդեսի Ֆրանկֆուրտի և Բեռլինի վրա: Հայրենական մեծ պատերազմի պատմության մեջ վառ էլ է գրել Հայկական թամանյան 89-րդ դիվիզիան, որը Գրոգնու մատույցներից հասել է մինչև Բեռլին»:

XXXIV Գ Լ Ո Ւ Ն

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԵՏՊԱՏԵՐԱԶՄՑԱՆ ՎԵՐՍԿԱՆԳՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱՆՐՁԱՆՈՒՄ (1945—1950)

Աճյունը խաղաղ շինարարության: Չորրորդ հեղափոխությունը

Հայրենական պատերազմն ավարտվելուց հետո սովետական ժողովուրդն անցավ խաղաղ շինարարության: Գերմանա-ֆաշիստական ղավթիչները ահռելի վնաս էին պատճառել Սովետական Միությանը: Մեծ էին սովետական ժողովրդի կրած մարդկային և նյութ-

թական կորուստները: Կուսակցությունը խնդիր դրեց ամենակարճ ժամանակամիջոցում բուժել պատերազմի հասցրած վերքերը: Դա չափազանց դժվարին խնդիր էր: Առանձնապես ուժերի մեծ լարում էր պահանջվում օկուպացիայից ազատագրված շրջանների ժողովրդական տնտեսության վերականգնման համար, որտեղ ֆաշիստական զավթիչները մեծ ավերածություններ էին կատարել:

Սովետական պետությունը մի շարք կարևոր քայլեր կատարեց երկրի կյանքը խաղաղ ռեյսերի վրա դնելու ուղղությամբ: Պատերազմն ավարտվելուց անմիջապես հետո սկսվեց սովետական բանակի զորացումը: 3 տարվա ընթացքում զորացրվածների թիվը հասավ ավելի քան 8 միլիոնի: Բացի այդ, ֆաշիստական գերությունից հայրենիք վերադարձավ մոտ 5 միլիոն մարդ: Նրանք բոլորն անցան խաղաղ շինարարական աշխատանքի: Վերականգնվեց ութժամյա աշխատանքային օրը, բանվորներին և ծառայողներին արձակուրդներ տալը: Վերացվեց պարտադիր արտաժամյա աշխատանքը և այլն:

1946 թվականի մարտին ՍՍՀՄ երկրորդ գումարման Գերագույն սովետի առաջին սեսիան քննարկեց և հաստատեց ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման չորրորդ հնգամյա պլանը (1946—1950 թթ.): Հնգամյա պլանի մեջ իրենց լիակատար արտացոլումն էին գտել Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության և մշակույթի զարգացման խնդիրները: 1946—1950 թթ. հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ կապիտալ ներդրումները պետք է կազմեին մեկ միլիարդ 420 միլիոն ռուբլի: Նախատեսված էր կառուցել միջին և խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ: Առանձնապես մեծ զարգացում պետք է ստանար ծանր արդյունաբերությունը, առաջին հերթին էներգետիկան, քիմիական արդյունաբերությունն ու գունավոր մետալուրգիան: Չորրորդ հնգամյակում, հանրապետության գունավոր մետալուրգիայի ամենահին ճյուղից՝ պղնձարդյունաբերությունից բացի, զարգանալու էր բոլորովին նոր ճյուղերի՝ ալյումինի և մոլիբդենի արդյունաբերությունը:

Նոր հնգամյակի գլխավոր խնդիրներից մեկը լայն սպառման հիմնական ապրանքների արտադրության ընդլայնումն էր: Այդ նպատակով հնգամյա պլանում նախատեսված էր մեծ ուշադրություն դարձնել նաև տեքստիլ, թեթև և սննդի արդյունաբերության հետագա զարգացմանը:

Շինարարական մեծ աշխատանքներ էին նախատեսված գյուղատնտեսության բնագավառում: Հատուկ ուշադրություն պետք է դարձվեր նոր ջրանցքների կառուցմանը, որի շնորհիվ պետք է ղգալիորեն ավելանային ցանքատարածությունները և բարձրանար բերքատվությունը:

Չորրորդ հնգամյակի վերջում Հայաստանի արդյունաբերության

արտադրանքը պետք է 2,3 անգամ գերազանցեր 1940 թվականի մակարդակը, իսկ գյուղատնտեսության արտադրանքը պետք է աճեր 75% -ով: Հսկայական գումարներ էին նախատեսված հանրապետության աշխատավորության նյութական բարեկեցության և մշակույթի հետագա բարձրացման համար: 1946 թվականի հուլիսի 30-ին հրավիրվեց Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի 11-րդ սեսիան, որը քննարկեց և ընդունեց «Օրենք Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման 1946—1950 թթ. հնգամյա պլանի մասին»:

20—30-ական թվականներին արտասահմանյան Սփյուռքահայերի մեծ թայրենադարձությունը տարբեր երկրներից Սովետական Հայաստան էին վերադարձել մոտ 75 հազար հայեր:

Հայրենական պատերազմից հետո էլ ավելի մեծացավ սփյուռքահայության՝ մայր հայրենիք վերադառնալու ձգտումը: Չնայած կապիտալիստական պետությունները և նրանց կամակատար դաշնակները շատ քանակությամբ թափեցին ձախողելու հայերի հայրենադարձության գործը, սակայն նրանք չկարողացան կանգնեցնել հայրենասիրական այդ հզոր շարժումը: Աշխարհի տարբեր երկրներում ապրող մոտ մեկ միլիոն տարագիր հայ աշխատավորներ ցանկություն հայտնեցին վերադառնալ Սովետական Հայաստան:

Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը ընդառաջեցին օտարության մեջ գտնվող հայերի՝ հայրենիք վերադառնալու բուռն ցանկությանը: 1945 թվականի նոյեմբերին ՍՍՀՄ կառավարությունը հատուկ որոշում ընդունեց հայերի հայրենադարձության մասին: Այդ կառավարությամբ մի շարք անհրաժեշտ միջոցներ ձեռնարկվեցին: ՀՍՍՀ ժողովուրդի կից ստեղծվեց Ներգաղթող հայերի ընդունման և տեղավորման կոմիտե: Կառավարության որոշումը անհուն բերկրանքով ընդունեցին թե՛ սփյուռքահայերը և թե՛ մայր հայրենիքի աշխատավորները:

1946 թվականի հուլիսին սկսվեց հայերի մասսայական հայրենադարձությունը: Հայրենադարձների առաջին քարավանը Սովետական Միություն եկավ Բելյուսից: Երեք տարվա ընթացքում Սիրիայից, Իրաքից, Իրանից, Պաղեստինից, Լիբանանից, Հունաստանից, Եգիպտոսից, Բուլղարիայից, Ֆրանսիայից, Ամերիկայից և այլ երկրներից Սովետական Հայաստան ներգաղթեցին մոտ հարյուր հազար հայեր:

Հայաստանի աշխատավորները ջերմորեն ընդունեցին իրենց պանդուխտ եղբայրներին և քույրերին: Հանրապետության կայարաններում տեղի էին ունենում հուզիչ հանդիպումներ: Հայրենադարձները փարվում էին Սովետական Հայաստանի հողին, համբուրում այն, ուրախության արցունքներն աչքերին գրկախառնվում էին իրենց հայրենակիցներին

հետ: «Մեր պայերը մեռան հայրենիքեն կարոտ,— Զուլֆայի կայա-
րանում տեղի ունեցած միտինգում ասում էր Իրանից վերադարձած 65-
ամյա Ա. Ծատուրյանը,— մենք նույնպես կարոտ էինք հայրենիքեն,
իրականացավ մեր երազը, այժմ մենք գտնվում ենք մեր ազատ Հայաս-
տանի մեջ»:

Սովետական Հայաստանում հայրենադարձների համար ստեղծվե-
ցին կյանքի անհրաժեշտ պայմաններ: Պետությունը նրանց բազմաթիվ
արտոնություններ տվեց: Կազմակերպվեց նրանց ապրուստի և աշխա-
տանքի գործը: Լայնորեն ծավալվեց բնակարանային շինարարությունը:
Տասը տարվա ընթացքում (1946—1956 թթ.) անհատական բնակարա-
նային շինարարության համար պետությունը հայրենադարձներին բաց
թողեց 473 միլիոն ուրլու վարկ: Այդ նույն ժամանակաշրջանում նրանք
պետության օգնությամբ քաղաքներում և քաղաքատիպ ավաններում
կառուցեցին 800 հազար ֆառ. մ բնակելի տարածություն, իսկ գյուղա-
կան վայրերում՝ ավելի քան 40 հազար անհատական բնակարան:

Մի քանի տարվա ընթացքում Երևանում կառուցվեցին հայրենա-
դարձների նոր թաղամասեր՝ Զեյթուն, Կիրիկիա և այլ անուններով: Բա-
րեկարգ ավաններ կառուցվեցին նաև հանրապետության մյուս քաղաք-
ներում: Սովետական Հայաստանի դպրոցներն ու բարձրագույն ուսում-
նական հաստատություններն իրենց դոները լայնորեն բացեցին հայրե-
նադարձ երեխաների ու երիտասարդության առաջ:

Ի պատասխան կուսակցության և կառավարության ցույց տված
հոգատարության, հայրենադարձները մեծ եռանդով լծվեցին Սովետա-
կան Հայաստանի ծաղկման գործին: Նրանցից շատերը կարճ ժամա-
նակամիջոցում դարձան արդյունաբերության և գյուղատնտեսության
առաջավորներ, իսկ մի քանիսն արժանացան սոցիալիստական աշխա-
տանքի հերոսի բարձր կոչման:

Ավարտելով Սովետական Հայաստանի բարձրագույն ուսումնական
հաստատությունները, շատ երիտասարդներ դարձան ինժեներներ, բը-
ժիշկներ, մանկավարժներ, գյուղատնտեսներ և այլ մասնագետներ:
Նրանցից շատերը հետագայում դարձան անվանի գիտնականներ:

Շատ հայրենադարձներ աչքի ընկան սովետահայ մշակույթի աս-
պարեզում: Սովետական երկիրը նպաստավոր պայմաններ ստեղծեց
նրանց տաղանդի ծաղկման համար: Եգիպտահայ Գոհար Գասպարյա-
նը դարձավ ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի, որին այժմ ճանաչում է
ամբողջ աշխարհի երաժշտական հասարակայնությունը: Մեծ համբավ
ձեռք բերեցին երգիչներ Միհրան Երկաթը, Հովհաննես Բազալյանը,
Արթուր Այդինյանը և ուրիշներ:

Իրենց լավագույն գրվածքներով սովետահայ գրականությունը

հարստացրին հայրենադարձ գրողներ Ստեփան Ալաջաջյանը, Աբիգ
Ավագյանը, Հովհաննես Ղուկասյանը և ուրիշներ: Կերպարվեստի բնա-
զավառում աչքի ընկնող վաստակ ունեն Ռաֆայել Շիշմանյանը, Գրիգոր
Ահարոնյանը և ուրիշներ:

1947—1948 թթ. հայրենադարձ աշխատավորներից 3 հոգի ընտր-
վեցին Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի, մոտ 400 հոգի՝ քաղաքային,
շրջանային և գյուղական սովետների ղեպուստատներ:

1946—1948 թթ. մասսայական հայրենադարձությունից հետո
սփյուռքահայության վերադարձը Սովետական Հայաստան շրջադարեց:
1961 թ. օգոստոսին ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը որոշում ընդունեց
հայերի նոր հայրենադարձության մասին, որով վերսկսվեց և պարբե-
րական դարձավ սփյուռքահայության վերադարձը Սովետական Հայաս-
տան: Սովետական իշխանության տարիներին արտասահմանյան տար-
րեր երկրներից հայրենադարձվեցին 230 հազար հայեր:

ՀՍՍՀ աշխատավորու- Սովետական Հայաստանի աշխատավորների հե-
թյան պայքարը ճրգո- ռուսական աշխատանքի շնորհիվ շորորդ հնգամ-
ամյա պլանի կատար- յակի առաջին իսկ տարում զգալի նվաճումներ
ման Ռամար ձեռք բերվեցին: Խաղաղ պայմաններին համա-
պատասխան վերակառուցվեցին արդյունաբերական այն ձեռնար-
կությունները, որոնք պատերազմի տարիներին ՍՍՀՄ Պաշտպանության
պետական կոմիտեի պատվերներով արտադրանք էին տալիս բանակի
կարիքների համար: Ազատվելով ռազմական պատվերներից, հանրա-
պետության շատ ձեռնարկություններ անցան քաղաքացիական արտադը-
րանքի թողարկմանը, որն զգալիորեն նպաստեց հանրապետության ժողո-
վրդական տնտեսության բոլոր ճյուղերի վերելքին: Նախորդ տարվա
համեմատությամբ 1946 թվականին 40%-ով աճեց կապիտալ շինարա-
րության ծավալը: Շարք մտան արդյունաբերական մի շարք նոր ձեռ-
նարկություններ:

Ննգամյա պլանը ժամկետից շուտ կատարելու նպատակով հան-
րապետության արտադրական ձեռնարկություններում և շինարարական
կազմակերպություններում լայնորեն ծավալվեց սոցիալիստական մըը-
ցությունը: Մի շարք ձեռնարկությունների կոլեկտիվներ մտան համա-
միութենական մրցության մեջ: Ամենուրեք ծնունդ էին առնում ստեղ-
ծադրածական նորանոր նախաձեռնություններ: Առանձնապես լայն տա-
րածում ստացավ տեխնիկա-տնտեսական հնացած նորմաները վերանա-
յիլու և նոր, առաջադեմ նորմաներ ստեղծելու համար մղվող պայքարը:

Սովետական Հայաստանի արտադրական ձեռնարկություններում
լայնորեն արմատավորվում էին ՍՍՀՄ առաջավոր ձեռնարկությունների
նորարարների առաջադիմական մեթոդները, որոնց շնորհիվ զգալիորեն

Հնգամյա շինարարության վիժխարի պլանները կատարելու համար առաջնակարգ նշանակություն ունեն շինանյութերի արտադրությունը, որը նույնպես զարգանում էր արագ թափով: Հնգամյակի տարիներին կառուցվեցին շինանյութերի մի շարք նոր գործարաններ:

Սանր արդյունաբերության ճյուղերից համեմատաբար դանդաղ էր զարգանում էներգետիկան: Թեև գոյություն ունեցող հիդրոէլեկտրակայանների, հատկապես Քանաքեռէէկի ագրեգատների վերակառուցման, Երևանի հիդրոկայանի ավտոմատացման, Սևանի ջրընդունիչ կառուցի ավարտման և, վերջապես 1949 թվականին Սևանի՝ ՍՍՀՄ-ում առաջին լեռնային ստորերկրյա հիդրոէլեկտրակայանի գործարկման շնորհիվ, հանրապետության էլեկտրաէներգիայի արտադրությունը ավելացավ 115,8%-ով, սակայն դա չէր բավարարում արդյունաբերության էներգատար ճյուղերի զարգացման պահանջները: Միաժամանակ զարկ տրվեց տեղական էլեկտրակայանների շինարարությանը: 1950 թվականին հանրապետությունում արդեն գործում էին 48 գյուղական ու շրջանային էլեկտրակայաններ:

Սանր արդյունաբերության զարգացմանը զուգընթաց այդ տարիներին մեծ ծավալ ստացավ լայն սպառման ապրանքների արտադրությունը: Կառուցվեցին և շահագործման հանձնվեցին թեթև ու սննդի արդյունաբերության մի շարք ձեռնարկություններ: Նշանակալի չափերով ընդլայնվեցին և վերակառուցվեցին Հոկտեմբերյանի և Արտաշատի բամբակազտիչ գործարանները, Լենինականի տեքստիլ կոմբինատը, Շահումյանի շրջանի տրիկոտաժի ու մետաքսագործական ֆաբրիկաները և այլն: 1947 թ. Երևանում շահագործման հանձնվեց մահուղի ֆաբրիկան, որն սկսեց արտադրել բրդյա բարձրորակ գործվածքներ: Հնգամյակի տարիներին շահագործման հանձնվեցին գինու, կոնյակի, պահածոների, մսեղենի-կաթնեղենի և այլ ձեռնարկություններ: 1947 թ. շարք մտավ Սպիտակի շաքարի գործարանը:

Չորրորդ հնգամյա պլանի առաջադրանքները գերակատարեցին նաև տեղական արդյունաբերությունը և արհեստագործական կոոպերացիան: 1946—1950 թթ. գործարկվեցին տեղական արդյունաբերության մի շարք նոր ձեռնարկություններ, այդ թվում մեքենաշինական, հախճապակու գործարանները, կահույքի ֆաբրիկան:

Այսպիսով, կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության ֆաղափականության շնորհիվ Սովետական Հայաստանը չորրորդ հնգամյակի վերջում դարձավ բարձր զարգացած արդյունաբերական երկիր: Հայաստանը կանգնեց տնտեսական զարգացման լայն ուղու վրա:

Հնգամյակի կատարման արդյունքները գյուղատնտեսության բնագավառում

Հնգամյա պլանի առաջադրանքները հիմնականում կատարվեցին նաև գյուղատնտեսության բնագավառում: Է՛լ ավելի ամրապնդվեց կոլտնտեսային արտադրության նյութատեխնիկական բազան: 1950 թվականին հանրապետությունում գործում էր 46 մեքենա-տրակտորային կայան: Հնգամյակի ընթացքում տրակտորային պարկի կարողությունը 1940 թ. համեմատությամբ գրեթե կրկնապատկվեց: Գյուղատնտեսական աշխատանքների մեծ մասը մեքենայացվեց: Խոշոր աշխատանքներ կատարվեցին գյուղատնտեսության էլեկտրիֆիկացման ուղղությամբ:

Ընդարձակվեց ոռոգման ցանցը: Շահագործման հանձնվեցին ստորին Հրազդանի ջրանցքի առաջին հերթը, որն ապահովեց էջմիածնի և Շահումյանի շրջաններում 5 հազար հեկտար նոր հողերի ոռոգումը, Կոտայքի բարձր ճնշման ջրհան կայանը, որն ապահովեց հազար հեկտար հողերի յուրացումը: Արփի լճի ջրամբարի կառուցման շնորհիվ Շիրակի ոռոգման սիստեմն ստացավ մեծ քանակությամբ լրացուցիչ ջուր: Հնգամյակի վերջին սկսվեց Նորքի ջրանցքի երկրորդ հերթի և վերսկսվեց Թալինի ջրանցքի շինարարությունը: Արարատյան դաշտում չորացվել էին 4 հազար հեկտար ճահճակալած հողեր: Այս և մի շարք այլ միջոցառումների շնորհիվ հնգամյակի վերջում հանրապետության ոռոգվող հողերի ընդհանուր տարածությունը հասավ 219 հազար հեկտարի:

Չորրորդ հնգամյակի տարիներին որոշ չափով բարձրացավ գյուղատնտեսական, գլխավորապես տեխնիկական, կուլտուրաների բերքատվությունը և ավելացավ համախառն բերքը: Անշեղորեն աճում էին կոլտնտեսությունների եկամուտները: 1949 թվականին հանրապետությունում կար 112 միլիոնատեր կոլտնտեսություն: Հնգամյակի տարիներին զգալի աշխատանք կատարվեց գյուղատնտեսական մասնագետների պատրաստման ուղղությամբ:

Չնայած այդ բոլոր հաջողություններին, գյուղատնտեսությունը դեռևս ետ էր մնում երկրի աճող պահանջներից: Շատ կոլտնտեսություններում ցածր էր աշխատանքի արտադրողականությունը: Քիչ բան էր արվում կոլտնտեսականների նյութական շահագրգռվածությունը բարձրացնելու ուղղությամբ: Մի շարք շրջաններում կատարվել էին գյուղատնտեսական արտելի կանոնադրության կոպիտ խախտումներ, որոնք գլխավորապես արտահայտվել էին հանրային հողերը վատնելու, կոլտնտեսային սեփականությունը հափշտակելու, աշխօրերը շուայելու, կոլտնտեսության վարչա-կառավարչական ապարատն ավելորդ հաստիքներով մեծացնելու մեջ:

Հնգամյակի տարիներին մի շարք միջոցառումներ ձեռնարկվեցին

Քիշյալ խախտումները վերացնելու և կոլտնտեսությունները կազմա-
 երկրորեն-տնտեսապես ամրապնդելու ուղղությամբ: 1946 թվականի
 սեպտեմբերին հրապարակվեց ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի և
 ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի որոշումը «Կոլտնտեսություններում գյուղատն-
 տեսական արտելի կանոնադրության խախտումները վերացնելու միջո-
 ցառումների մասին»: Այդ որոշման կենսագործման շնորհիվ Հայաս-
 տանի կոլտնտեսություններին վերադարձվեցին նրանցից ապօրինաբար
 խլված ավելի քան 5,3 հազար հեկտար հող, մեծ քանակությամբ խոշոր
 և մանր եղջերավոր անասուններ, հացահատիկ և այլն: Կոլտնտեսու-
 թյունների վարչական-սպասարկող անձնակազմի հաստիքները կրճատ-
 վեցին մոտ 5 հազար միավորով:

Գյուղատնտեսության վերականգնման հարցը քննարկվեց Համ(Բ)Կ
 Կենտկոմի 1947 թվականի փետրվարյան պլենումում, որը որոշում ըն-
 դունեց «Ետպատերազմյան ժամանակաշրջանում գյուղատնտեսության
 բարձրացման միջոցառումների մասին»: Կարգավորվեց կոլտնտեսու-
 թյուններում աշխատանքի վարձատրման կարգը: Խնդիր դրվեց կոլտն-
 տեսականի աշխատանքը վարձատրել՝ ելնելով բրիգադների և օղակնե-
 րի կատարած փաստական աշխատանքից, բերքատվության բարձրա-
 ցումից և անասունների մթերատվությունից:

**Ժողովրդի կենսամա-
 կարգակի բարձրա-
 ցումը**

Արդյունաբերության և գյուղատնտեսության բնա-
 զավառներում ձեռք բերված նվաճումներն ապա-
 հովեցին աշխատավորության կենսամակարդակի
 բարձրացումը: Այդ ուղղությամբ կուսակցությունը
 և կառավարությունը կատարեցին մի շարք նոր քայլեր: 1947 թվակա-
 նից սկսվեց իրագործվել լայն սպառման ապրանքների գների իջեցման
 քաղաքականություն, լիովին վերացվեց արդյունաբերական և պարենա-
 յին ապրանքների քարտային սիստեմը, որը մտցվել էր պատերազմի
 տարիներին: Կատարվեց դրամական ռեֆորմ, որն ամրապնդեց ռուբլու
 գնողունակությունը: Այդ բոլորի շնորհիվ ծավալվեց պետական, կոոպե-
 րատիվ ու կոլտնտեսային առևտուրը:

Հնգամյակի տարիներին բարձրացավ բանվորների և ծառայողների
 ունալ աշխատավարձը, աճեցին կոլտնտեսականների եկամուտները:
 Զգալիորեն ավելացան այն գումարները, որ պետությունը ծախսում էր
 աշխատավորների սոցիալական ապահովության, նպաստների, կենսա-
 թոշակների, սանատորիաների ու հանգստյան տների ձրի կամ արտոն-
 յալ գներով ուղեգրերի, բազմազավակ մայրերին տրվող նպաստների,
 ձրի բժշկական օգնություն ցույց տալու համար: Այս ծախսերի ընդհա-
 նուր գումարը 1950 թվականին երեք անգամ ավելի մեծ էր, քան 1940
 թվականին:

Մեծ թափ ստացավ բնակարանային շինարարությունը, ինչպես
 նաև քաղաքների, շրջանային կենտրոնների ու գյուղերի բարեկարգումը:
 Հնգամյակի տարիներին կառուցվեցին մեկ միլիոն 85 հազար քառ. մ
 ընդհանուր տարածությամբ բնակելի տներ: Բացի դրանից, գյուղական
 վայրերում կառուցվեց 15 հազար բնակարան:

Նոր աշխատանքներ կատարվեցին բնակչության բուժսպասար-
 կումը բարելավելու ուղղությամբ: Հնգամյակի ընթացքում բժիշկների
 թիվը կրկնապատկվեց: Կառուցվեցին նոր հիվանդանոցներ և բուժկա-
 յաններ: Ավելացավ սանատորիաների և հանգստյան տների թիվը: Նոր
 սանատորիաներ կառուցվեցին Ջերմուկում: Ընդարձակվեց աշխատազն-
 րության կոմունալ սպասարկման ցանցը:

Այսպիսով, շորորդ հնգամյակը ոչ միայն ժողովրդական տնտեսու-
 թյան վերականգնման ու զարգացման, այլև աշխատավորության նյու-
 թական պայմանների բարելավման, նրանց բարեկեցության մակարդա-
 կի բարձրացման հնգամյակ էր:

XXXV Գ Լ Ո Ւ Ս

**ՍՈՎԵՏՍԿԱՆ ՀԱՅՍՏԱՆԸ ԶՍՐԳԱՅՍԾ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ
 ԿՍՌՈՒՅՄԱՆ ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՓՈՒԼՈՒՄ (1951—1958)**

Հայ ժողովրդի պաշ-
 քարը խաղաղության
 համար

1950-ական թվականներին ավելի ամրապնդվե-
 ցին ՍՍՀՄ-ի միջազգային դիրքերը: Հենց այդ
 պատճառով էլ ավելի լայնորեն ծավալվեց խաղա-
 ղության կողմնակիցների համաշխարհային շարժումը:

Սովետական Միության ժողովուրդների հետ միասին խաղաղու-
 թյան պաշտպանության գործում իր համեստ ներդրումը կատարեց նաև
 հայ ժողովուրդը: Սովետական Հայաստանի աշխատավորությունը ջեր-
 մորեն արձագանքեց խաղաղության համաշխարհային խորհրդի 1951
 թվականի օգոստոսի վերջին աշխարհի բոլոր ժողովուրդներին ուղղված
 դիմումին, որով կոչ էր արվում հինգ մեծ պետությունների՝ ՍՍՀՄ-ի,
 Չինաստանի, ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի միջև կնքել խաղաղու-
 թյան պակտ: 1951 թվականի սեպտեմբերի 12-ին Երևանում գումարվեց
 խաղաղության կողմնակիցների հանրապետական կոնֆերանս, որը
 միակամ պաշտպանեց հիշյալ դիմումը: «խաղաղության կողմնակիցների
 հայկական հանրապետական կոնֆերանսը կոչ է անում հանրապետու-
 թյան բոլոր աշխատավորներին,— ասված է կոնֆերանսի բանաձևում,—
 միահամուռ կերպով ստորագրել խաղաղության համաշխարհային խոր-

հըրդի դիմումի տակ, դրանով իսկ հայ ժողովրդի մեծ ավանդը դնել խաղաղության պաշտպանության ազնիվ գործի մեջ»:

Հանրապետական կոնֆերանսի անունով սփյուռքից ստացվել էին բազմաթիվ ողջույնի հեռագրեր, որոնց մեջ սփյուռքահայերը իրենց պատրաստակամությունն էին հայտնում բոլոր միջոցներով օգնել խաղաղության գործին: «Ողջունում ենք խաղաղության կողմնակիցների հայկական կոնֆերանսը,— ասված է ամերիկահայ առաջադիմական լիգայի հեռագրի մեջ:— Ներկայիս ամենավսեմ գործն է աշխատել խաղաղության համար և ազատել մարդկությունը պատերազմի վտանգից: Մեր լիգան Ամերիկայի հասարակ մարդկանց հետ միասին ձգտում է խաղաղության վեհ նպատակին»:

Կոնֆերանսն ընտրեց Խաղաղության պաշտպանության հանձնարարական կոմիտե, որի կազմի մեջ մտան ակադեմիկոս Վ. Համբարձումյանը (նախագահ), անվանի գրող Գ. Դեմիրճյանը, ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ Մ. Սարյանը, ՍՍՀՄ ժողովրդական դերասանուհի Հ. Դանիելյանը, Ամենայն հայոց կաթողիկոս Գ. Զորեքչյանը և ուրիշներ (ընդամենը 43 մարդ): Դեռևս 1950 թ. Հայաստանից Խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեի անդամներ էին ընտրվել Ավ. Իսահակյանը, Վ. Համբարձումյանը, Ն. Զարյանը և Գ. Զորեքչյանը:

Քաղաքական և աշխատանքային բարձր վերելքի պայմաններում հանրապետությունում սկսվեց Խաղաղության համաշխարհային խորհրդի դիմումի տակ ստորագրությունների հավաքման կամպանիան:

Սովետական Հայաստանի աշխատավորները նույնպիսի ակտիվությամբ մասնակցեցին նաև խաղաղության ամրապնդման նպատակին ուղղված մյուս միջոցառումներին: Օրինակ՝ նրանք միահամուռ կերպով իրենց ստորագրությունները դրին նաև 1954 թվականի ապրիլին ատոմային պատերազմի սպառնալիքի վերաբերյալ Խաղաղության համաշխարհային խորհրդի դիմումի տակ:

Սովետական Հայաստանի աշխատավորությունն իր հողում ջերմ սիրով ու հարգանքով ընդունեց խաղաղության համաշխարհային շարժման ականավոր գործիչներին, «Ժողովուրդների միջև խաղաղությունն ամրապնդելու համար» միջազգային մրցանակի դափնեկիրներին, արտասահմանյան երկրներում կազմակերպված խաղաղության պաշտպանության ազգային կոմիտեների, Սովետական Միության հետ բարեկամության ընկերությունների բազմաթիվ պատվիրակներին: «Ժողովուրդների միջև խաղաղությունն ամրապնդելու համար» միջազգային մրցանակի դափնեկիրներից Սովետական Հայաստանն այցելեցին Քենտրբերի մայր տաճարի վանահայր ղոկտոր Հյուլետ Զոնսոնը (1945 թ.), բրազիլական ականավոր գրող Ժորժի Ամադուն (1953 թ.), չիլիական

ականավոր բանաստեղծ և հասարակական գործիչ Պաբլո Ներուդան (1957 թ.) և ուրիշներ: «Շփվելով Սովետական Հայաստանի աշխատավորների հետ,— Երևանից մեկնելիս ասաց Խաղաղության պաշտպանության շվեդական կոմիտեի պատվիրակության ղեկավարը,— մենք հասկացանք, որ նրանց համար չկա ավելի նվիրական բան, քան խաղաղությունը»:

Խաղաղության պաշտպանության գործում անմասն չմնաց նաև սփյուռքահայ աշխատավորությունը: Հակառակ դաշնակ վարձկանների հակասովետական գործունեությանը, սփյուռքահայ առաջադիմական շրջանները ջերմորեն պաշտպանում էին խաղաղության գործը, իրենց երկրների խաղաղասեր ուժերի հետ միասին համառ պայքար էին մղում ընդդեմ պատերազմի սպառնալիքի, հանուն կայուն խաղաղության ամբողջ աշխարհում:

Հանրապետության աշխատավորների պայքարը հինգերորդ հնգամյա պլանի կատարման համար

1952 թվականին ՍՄԿԿ XIX համագումարը հաստատեց ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1951—1955 թթ. հինգերորդ հնգամյա պլանի վերաբերյալ դիրեկտիվները: Դա տնտեսական և կուլտուրական վերելքի նոր ծրագիր էր:

ՍՄԿԿ XIX համագումարի նախօրյակին, 1952 թվականի սեպտեմբերին, Երևանում տեղի ունեցավ ՀԿԿ XVI համագումարը: Համագումարը քննարկեց և հավանություն տվեց ՍՍՀՄ հինգերորդ հնգամյա պլանի վերաբերյալ դիրեկտիվների նախագծին, որի մեջ իրենց լիակատար արտացոլումն էին գտել նաև Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության ու մշակույթի հետագա զարգացման հիմնական խնդիրները:

Սովետական Հայաստանի բանվորները, գյուղացիները և մտավորականությունը մեծ ջանք ու եռանդ էին թափում հինգերորդ հնգամյա պլանը կատարելու համար: Հանրապետությունում նոր թափ ստացավ սոցիալիստական մրցությունը: Մեծ արդյունք էր տալիս կենդանական ու Կիրովաբաղի տեքստիլ արդյունաբերության աշխատողների ավանդական մրցությունը: Երևանի ծխախոտի ֆաբրիկայի կոլեկտիվը սոցիալիստական մրցման մեջ էր մտել Ռիգայի ծխախոտի № 2 ֆաբրիկայի կոլեկտիվի հետ: Եղբայրական Վրաստանի Զեստաֆոնիի ֆեռոնուվածքների գործարանի մետաղագործները մրցում էին Ալավերդու պղնձագործների հետ: Շարունակվում էր մրցությունը Երևանի Յ. Զերժինսկու և Թբիլիսիի Ս. Կիրովի անվան հաստոցաշինական գործարանների միջև:

Սոցիալիստական մրցությունը լայն ծավալ էր ստացել նաև գյուղատնտեսության մեջ: Հաջողությամբ էին մրցում Ագրբեջանական ՍՍՀ նորաշենի և Հայկական ՍՍՀ Արտաշատի, Ուկրաինական ՍՍՀ Կիևի

մարզի Զերնոբիլի և Հայկական ՍՍՀ Ստեփանավանի, Մոլդավական ՍՍՀ Չադր-Լոմնգի և Հայկական ՍՍՀ Արթիկի, Վրացական ՍՍՀ Մախարաձեի և Հայկական ՍՍՀ Հոկտեմբերյանի շրջանների կոլտնտեսականները, Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի անասնապահները:

Սոցիալիստական մրցության մեջ աչքի ընկնող հաջողությունների հասան Երևանի, Լենինականի, Կիրովականի, Ալավերդու, Ղափանի և այլ քաղաքների արդյունաբերական ձեռնարկությունները: Նրանցից շատերը ժամկետից շուտ կատարեցին հինգերորդ հնգամյա պլանը: Սովետական Հայաստանի արդյունաբերական մի շարք ձեռնարկությունների կոլեկտիվներ, ինչպես օրինակ, Երևանի ավտոդողերի, Կիրովի անվան գործարանները մի քանի անգամ հաղթող ճանաչվեցին համամիութենական սոցիալիստական մրցությունում:

Արտադրության շատ առաջավորներ ոչ միայն կատարում, այլև գերակատարում էին իրենց տարեկան առաջադրանքները: 1952 թ. նոյեմբերին Երևանի էլեկտրատեխնիկական և «ավտոդետալ» գործարանների մի խումբ առաջավոր բանվորներ, արդեն կատարել էին իրենց հինգերորդ հնգամյա պլանը: Հինգերորդ հնգամյակում լայն շարժում ծավալվեց ոչ միայն պլանները ժամկետից շուտ կատարելու, այլև արտադրանքի որակը բարձրացնելու համար: Էլ. ավելի զարկ տրվեց ուսուցիչականությանն ու գյուտարարությանը:

Զնայած գյուղատնտեսության բնագավառում եղած որոշ դժվարություններին ու թերություններին, այստեղ ևս շատ առաջավորներ աչքի ընկան իրենց աշխատանքային բարձր ցուցանիշներով: 1951—1953 թթ. հանրապետության գյուղատնտեսության 22 առաջավորներ արժանացան սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման:

Սովետական հասարակական և պետական կարգի ամրապնդման միջոցառումները

Ի. Վ. Ստալինի մահից հետո (1953 թ.) կուսակցությունը մերկացրեց ժողովրդի թշնամի Բերիային, որը, օգտվելով Ստալինի թույլ տված սխալներից, հասել էր բարձր դիրքի և մեծ վնաս հասցրել սովետական պետությանը: ՍՍՀՄ բոլոր աշխատավորների հետ միասին Սովետական Հայաստանի աշխատավորները խոր ցասումով նշավակեցին այդ քաղաքական ավանտյուրիստի և նրա գործակիցների հանցավոր գործողությունները:

ՍՄԿԿ Կենտկոմի հուլիսյան պլենումի որոշումներից հետո վճարական միջոցներ ձեռնարկվեցին սոցիալիստական օրինականությունն ամրապնդելու, սովետական դեմոկրատիան զարգացնելու ուղղությամբ: Արդարացվեցին անհիմն կերպով դատապարտված տասնյակ հազարավոր սովետական քաղաքացիներ: Կուսակցության մեջ վերականգնվեցին այն կոմունիստները, որոնք անարգարացի կերպով հետապնդվել էին և

վտարվել կուսակցությունից: Մեծ գոհունակությամբ ընդունվեց նաև այն միջոցառումը, որի շնորհիվ հազարավոր հայ ընտանիքներ վերադարձան Ալթայի երկրամասից, ուր նրանք արտաքսվել էին 1949 թվականին ժողովրդի թշնամի Բերիայի և նրա գործակիցների դավերի հետևանքով:

Սովետական Հայաստանում անհատի պաշտամունքի տարիներին թույլ տրված սխալները բացահայտվեցին ՀԿԿ Կենտկոմի 1953 թ. նոյեմբերյան պլենումում: Քննարկելով ՍՄԿԿ Կենտկոմի հուլիսյան և սեպտեմբերյան պլենումների որոշումների կատարման ընթացքը, պլենումը գտավ, որ ՀԿԿ Կենտկոմի ղեկավարությունը չի կարողացել ապահովել այդ որոշումների կատարումը: Պլենումը Գրիգոր Հարությունյանին ազատեց ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնից և ընտրեց Կենտկոմի նոր ղեկավարություն:

1954 թ. փետրվարին տեղի ունեցավ Հայաստանի կոմունիստական կուսակցության XVII համագումարը, որը հավանություն տվեց ՀԿԿ Կենտկոմի նոյեմբերյան պլենումի որոշումներին: Համագումարում ծավալվեց ՀԿԿ Կենտկոմի նախկին ղեկավարության թույլ տված սխալների քննադատությունը և մի շարք կարևորագույն միջոցառումներ մշակվեցին այդ սխալներն ուղղելու համար:

Հեղափոխության պլանի կատարումը արդյունաբերության բնագավառում

Սովետական ժողովրդի հերոսական աշխատանքի շնորհիվ հաջողությամբ կատարվեց նաև հինգերորդ հնգամյա պլանը: ՍՍՀՄ արդյունաբերական արտադրանքի աճի գծով հնգամյակի առաջադրանքները կատարվեցին ժամկետից շուտ՝ 1955 թվականի մարտի 1-ին: Հնգամյակի ընթացքում արդյունաբերության համախառն արտադրանքն ավելացավ 85%-ով: Առանձնապես արագ տեմպերով էին զարգանում մեքենաշինությունը, էներգետիկան, լայն սպառման ապրանքների արտադրությունը: Շարք մտան 3 հազարից ավելի արդյունաբերական խոշոր ձեռնարկություններ: 1954 թվականին գործարկվեց ատոմային էներգիայով աշխատող աշխարհում առաջին արդյունաբերական էլեկտրակայանը:

Հինգերորդ հնգամյակում խոշոր նվաճումներ ձեռք բերվեցին նաև Սովետական Հայաստանում: Պետական և կոոպերատիվ կազմակերպությունների (առանց կոլտնտեսությունների) գծով 3602 միլիոն ուրբի կապիտալ ներդրումների մեծ մասը հատկացվեց արդյունաբերական նոր ձեռնարկությունների շինարարությանը: 1951—1955 թթ. կառուցվեցին և շահագործման հանձնվեցին ավելի քան 40 խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ: Զգալիորեն ավելացավ արդյունաբերության ար-

տաղրանքը: 1955 թվականին արդյունաբերության համախառն արտադրանքը 1940 թ. համեմատությամբ ավելացավ 4,7 անգամ, իսկ 1950 թ. համեմատությամբ՝ մոտ երկու անգամ: Այդ նույն ժամանակամիջոցում արտադրության միջոցների արտադրության ընդհանուր ծավալն աճեց ավելի քան երկու և կես անգամ: 30 %-ով բարձրացավ բանվորների աշխատանքի միջին արտադրողականությունը:

Հնգամյակի տարիներին նոր հաջողություններ ձեռք բերվեցին էներգետիկայի զարգացման ուղղությամբ: Արագ թափով առաջ էր ընթանում Սևան-Հրազդան կասկադի հիդրոէլեկտրակայանների շինարարությունը: 1953 թ. ապրիլին շահագործման հանձնվեց Գյումուշի հիդրոէլեկտրակայանը: Հնգամյակի վերջում Հայաստանի էլեկտրակայանների արտադրությունը 440 անգամ ավելի էր, քան 1913 թվականին և 1200 անգամ ավելի, քան 1919 թվականին: Ուշագրավ է, որ Սովետական Հայաստանում էլեկտրաէներգիայի արտադրության աճի տեմպերը բարձր էին ՍՍՀՄ-ի միջին տեմպերից: Բնակչության մեկ շնչին ընկնող էլեկտրաէներգիայի քանակով Հայկական ՍՍՀ-ն առաջ էր անցել արդյունաբերական տեսակետից զարգացած այնպիսի կապիտալիստական երկրներից, ինչպիսիք են Ֆրանսիան, Իտալիան, Բելգիան, Հոլանդիան, Ճապոնիան, Իսպանիան, իսկ Թուրքիայի համեմատությամբ այն ավելի էր 30 անգամ, Իրանի համեմատությամբ՝ մոտ 100 անգամ:

Մանր արդյունաբերության ճյուղերից հինգերորդ հնգամյակում իր զարգացմամբ աչքի էր ընկնում նաև մեքենաշինությունը: Հնգամյակի շրջա տարվա ընթացքում մեքենաշինության արտադրանքն աճեց 2,6 անգամ: Հանրապետության մեքենաշինական ձեռնարկություններն արտադրում էին մեծ քանակությամբ գեներատորներ, հիդրոտուրբիններ, տրանսֆորմատորներ, շարժական էլեկտրակայաններ, էլեկտրաշարժիչ սարքեր, մետաղահատ հաստոցներ, կոմպրեսորներ, ավտոպահեստամասեր և այլն, որոնք ուղարկվում էին ոչ միայն ՍՍՀՄ մյուս հանրապետությունները, այլև ժողովրդական դեմոկրատիայի երկրները:

Սովետական Հայաստանի արդյունաբերության մեջ կարևոր տեղ էին գրավում գունավոր մետաղների արտադրությունը և մետաղամշակումը: 1951 թվականին շահագործման հանձնվեցին Քաջարանի, 1952 թվականին՝ Դաստակերտի պղնձամոլիբդենային կոմբինատները: Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի ամբողջ կարողության շահագործումն սկսվեց 1953 թ. սկզբներից, երբ կառուցվեց և գործարկվեց կոմբինատի հարստացուցիչ ֆաբրիկան: Հնգամյակի վերջում գունավոր մետաղների համախառն արտադրանքը 1950 թ. համեմատությամբ ավելացավ 3,3 անգամ: 1950 թ. համեմատությամբ 2,5 անգամ ավելացավ քիմիական արդյունաբերության համախառն արտադրանքը: Կառուցվե-

ցին և շահագործման հանձնվեցին շինանյութերի նոր ձեռնարկություններ, օրինակ Երևանի շինանյութերի, Թումանյանի հրակայուն աղյուսի, Արարատի ազրոշիֆերի, Լենինականի երկաթ-բետոնե կոնստրուկցիաների գործարանները:

Հնգամյակի տարիներին մեծ զարգացում ստացավ լայն սպառման ապրանքների արտադրությունը: Շահագործման հանձնվեցին Երևանի մարգարինի, կոնյակի գործարանները, կաթնամթերքների վերամշակման 6 գործարաններ Հայաստանի շրջաններում և այլն: Մետաքսագործությունը գլխավորապես կենտրոնացվեց Ծահումյանի շրջանում: 1952 թվականին շահագործման հանձնվեց Ծահումյանի շրջանի Վ. Ի. Լենինի անվան մետաքսի կոմբինատը:

Ինչպես ամբողջ Սովետական Միությունում, այնպես էլ Սովետական Հայաստանում լայնորեն ծավալվեց տեխնիկական պրոգրեսի և արտադրության կազմակերպումը բարելավելու համար մղվող պայքարը: Արդյունաբերության բուռն զարգացման շնորհիվ զգալիորեն աճեց հանրապետության բանվոր դասակարգը: Բանվորների և ծառայողների թիվն ավելացավ հատկապես արդյունաբերության կարևորագույն ճյուղերում:

Հնգամյակի կատարման արդյունքները գյուղատնտեսության բնագավառում

Չնայած գյուղատնտեսության ձեռք բերած հաջողություններին, ժողովրդական տնտեսության այդ ճյուղը նկատելիորեն ետ էր մնում ժամանակի պահանջներից: Հատկապես հնգամյակի առաջին տարիներին ցածր էր գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը, անասունների մթերատվությունը, անբավարար էր գյուղատնտեսության մեքենայացումը:

Ինչպես ամբողջ ՍՍՀՄ, այնպես էլ Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության մեջ բեկում սկսվեց ՍՄԿԿ Կենտկոմի 1953 թ. սեպտեմբերյան պլենումի որոշումներից հետո:

Սովետական Հայաստանում հնգամյակի վերջում 1950 թ. համեմատությամբ 10 հազար հեկտարով ավելացան ընդհանուր ցանքատարածությունները, որոշ չափով աճեց մթերատու անասունների գլխաքանակը, ավելացավ անասունների մթերատվությունը: Նոր քայլեր կատարվեցին գյուղատնտեսության տեխնիկական բազան ամրապնդելու ուղղությամբ: Կազմակերպվեցին 4 նոր մեքենա-տրակտորային կայաններ, ավելացավ տրակտորների, կոմբայնների, ավտոմեքենաների քանակը: Զգալի չափով աճեց գյուղատնտեսական մասնագետների թիվը: Խոշոր արդյունք տվեց 1955 թվականին կուսակցության կողմ կազմակերպված Երեսուճագաբաղականների շարժումը: Մեծ թվով լավագույն կազմեր մեկնեցին գյուղ՝ մշտական աշխատանքի: Լայնորեն ծավալվեց

բազաբի արդյունաբերական ձեռնարկությունների շեֆական աշխատանքը գյուղում: Կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ այս գործում մեծ նախաձեռնություն հանդես բերեցին արհմիությունները և կոմերիտմիությունը:

Հաջողությամբ էր ընթանում սովխոզային շինարարությունը: Ավելաացել էր սովխոզների թիվը և նրանց տնտեսական հզորությունը: 1955 թվականին հանրապետությունում արդեն կար 48 սովխոզ՝ 1950 թվականի 27-ի փոխարեն:

Սովետական Հայաստանի գյուղատնտեսության նվաճումները լայնորեն ցուցադրվեցին 1954 թվականի օգոստոսին Մոսկվայում վերաբացված համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսում և Երևանի հանրապետական, մշտապես գործող, գյուղատնտեսական ցուցահանդեսում, որը բացվեց 1955 թվականի հոկտեմբերին:

Հայաստանի աշխատավորների մասնակցությունը հինգերորդ հնգամյակի հիդրոտեխնիկական մեծ կառուցումներին և խամու խոպան հողերի յուրացմանը

Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ըստեղծման գործում կարևոր նշանակություն ունեցան հինգերորդ հնգամյակի հիդրոտեխնիկական մեծ կառույցները, որոնց մասնակցում էր ամբողջ երկիրը: Համաժողովրդական այդ մեծ գործին պատիվորեն էին մասնակցում նաև Սովետական Հայաստանի աշխատավորները:

Այդ խոշորագույն կառույցների պատվերները պատվով էին կատարում Սովետական Հայաստանի

150 արդյունաբերական ձեռնարկություններ, որոնցից աչքի էին ընկնում Երևանի Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական, էլեկտրատեխնիկական, կաբելի, կոմպրեսորների, ավտոպահեստամասերի, փոքր հիդրոտուրբինների, կարբիդի, Ջերժինսկու անվան հաստոցաշինական գործարանները, Կիրովականի քիմիական կոմբինատը և այլն:

Ամեն օր Կուլբիշևի, Ստալինգրադի, Կախովկայի, Վոլգա-Դոնի և այլ կառույցների շինարարություններն էին ուղարկվում ոչ միայն արտադրական ձեռնարկությունների արտադրանքը, այլև բանվորներ, վարպետներ, ինժեներներ, տեխնիկներ և այլ աշխատողներ: Շատ ձեռնարկություններ, իրենց պատրաստի արտադրանքն ուղարկելուց բացի, հաճախ ստեղծում էին նորերը, յուրացնում էին նոր արտադրանքի տեխնոլոգիան: Օրինակ՝ Երևանի էլեկտրամեքենաշինական գործարանում սկսվեց թողարկվել նոր տիպի տրանսֆորմատորներ:

Մեծ կառույցների պատվերները ժամանակին և բարձր որակով կատարելու համար ամբողջ երկրում, այդ թվում և Սովետական Հայաստանում, ծավալվեց սոցիալիստական մրցություն: Երևանի էլեկ-

տրատեխնիկական գործարանում Ստալինգրադի հիդրոէլեկտրակայանի շինարարության գեներատորների պատվերը կատարելու համար ստեղծվել էին «Մեծ կառույցների» անվան երիտասարդական բրիգադներ: Երիտասարդ էնտուզիաստների աշխատանքը գլխավորում էր անվանի վարպետ, պետական մրցանակի դափնեկիր Մարգար Գալֆայանը:

Մեծ կառույցների շինարարությանն ակտիվ մասնակցություն ունեցան նաև Սովետական Հայաստանի գիտնականները: 1950 թ. երկրորդ կեսին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիային կից ստեղծվեց այդ կառույցներին աջակցող կոմիտե, որի նախագահն էր Հայկական ՍՍՀ ԳԱ փոխպրեզիդենտ ակադեմիկոս Ա. Իոսիֆյանը: Կոմիտեն կորոզինացնում էր Հայաստանի գիտնականների կատարած աշխատանքը և ուղղություն տալիս նրանց: Առանձին հիշատակության է արժանի Հայկական ՍՍՀ ԳԱ ջրաէներգետիկ ինստիտուտի կոլեկտիվի կատարած աշխատանքը, որին գլխավորում էր ակադեմիկոս Ի. Նղիազարյանը: Նրա ղեկավարությամբ Երևանում (Նորբում) պատրաստվեց Կուլբիշևյան հիդրոհանգույցի էքսպերիմենտալ մոդելը, որի վրա կատարած հետազոտությունները կարևոր նշանակություն ունեցան նորակառույցի շինարարության համար:

Դրական արդյունքներ տվեցին նաև Հայկական ՍՍՀ ԳԱ շինանյութերի ու կառուցվածքների և երկրաբանական ինստիտուտների գիտնականների արշավախմբի Վոլգայի ափերին կատարած հետազոտությունները տեղական շինանյութերի հայտնաբերման ուղղությամբ: Երևանում կազմակերպվեց հայտնաբերված քարերի ֆիզիկա-տեխնիկական հատկությունների ուսումնասիրման գործը, պրոֆ. Ա. Նազարովի ղեկավարությամբ պատրաստվեց նոր սեյսմոմետր, ուսումնասիրվեց կարծր քարերի մշակման տեխնոլոգիան:

Արձագանքելով կուսակցության կոչին, Սովետական Հայաստանի աշխատավորները, մասնավորապես կոմերիտականները, 1954—1955 թթ. ակտիվորեն մասնակցեցին խամու խոպան հողերի յուրացման գործին: 1954 թ. մարտի 15-ին Ղազախական ՍՍՀ Պավլոգարի մարզ մեկնեց Հայաստանի կոմերիտականների առաջին խումբը (թվով 115 մարդ): Շուտով Ղազախական ՍՍՀ Կուստանայի մարզ մեկնեց Կիրովականի Ա. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի բրիգադը: 1955 թ. մարտին Երևանից խամու խոպան հողերը մշտական աշխատանքի մեկնեց 650 հոգի: Մեկնողների մեծ մասը մասնագետներ էին և որակյալ բանվորներ: Երկու տարվա ընթացքում Հայաստանից խամու խոպան հողեր աշխատանքի մեկնեց մոտ 2500 մարդ: Բացի այդ, բերքահավաքի ժամանակ այնտեղ էին մեկնում հանրապետության բուհերի և տեխնիկումների հազարավոր ուսանողներ: Հայրենասիրական

այդ հիանալի շարժումը հետագա տասնամյակներում ավելի լայն ծավալ ստացավ:

Աշխատավորության կենսամակարդակի բարձրացումը հրճագամյակի տարիներին

Հինգերորդ հնգամյակում զգալիորեն բարձրացավ Սովետական Հայաստանի աշխատավորության կենսամակարդակը: Լայն սպառման ապրանքների պետական մանրածախ գների հաջորդական իջեցումների շնորհիվ հանրապետության աշխատավորների ստացած օգուտը 1955 թվականին, 1950 թվականի համեմատությամբ, կազմեց մոտավորապես մեկ միլիարդ 230 միլիոն ռուբլի: Ավելի քան մեկ երրորդով աճեց բանվորների և ծառայողների միջին աշխատավարձի ֆոնդը: Զգալիորեն ավելացան քաղաքի և գյուղի բնակչության զրամական եկամուտները, որի հիման վրա էլ ավելի ծավալվեց ապրանքաշրջանառությունը:

Հինգերորդ հնգամյակում պետությունն ավելացրեց նաև սոցիալ-կուլտուրական միջոցառումների գծով կատարվող ծախսերը: Միայն բնակարանային շինարարության վրա պետական միջոցներից ծախսվեց ավելի քան կես միլիարդ ռուբլի: Կառուցվեց և շահագործման հանձնվեց 611 հազար քառ. մ բնակելի տարածություն: Աշխատավորների կենսամակարդակի բարձրացման շնորհիվ հնգամյակի տարիներին լայն ծավալ ստացավ անհատական բնակարանային շինարարությունը: Պետության օգնությամբ հանրապետության քաղաքներում ու բանավաններում կառուցվեց և շահագործման հանձնվեց 475 հազար քառ. մ բնակելի տարածություն, գյուղական վայրերում՝ 25,8 հազար նոր բնակարաններ: Առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում հայրենադարձ հայերի համար կառուցված ավանների բարեկարգման վրա:

Սովետական Հայաստանում շարունակվում էին նոր թափով զարգանալ քաղաքներն ու քաղաքատիպ ավանները: Հնգամյակի վերջում Սովետական Հայաստանում արդեն կար 12 քաղաք:

Հնգամյակի տարիներին զգալիորեն բարելավվեց բնակչության բուժսպասարկումը և աշխատավորների հանգստի կազմակերպումը: 1956 թվականին Հայաստանում գործում էին 19 առողջարան և 8 հանգրստյան տուն: Հանրապետությունում մեծ ծավալ ստացան նաև ֆիզկուլտուրան և սպորտը: Կառուցվեցին նոր մարզադաշտեր, հրապարակներ, մարմնամարզական դահլիճներ, ջրավազաններ, ընդարձակվեց մարզական դպրոցների ցանցը:

Պայքար վեցերորդ հնգամյա պլանի կախատարման համար

Կոմունիստական կուսակցության և սովետական ժողովրդի կյանքում խոշոր իրադարձություն էր ՍՄԿԿ XX համագումարը, որը տեղի ունեցավ 1956 թ. փետրվարին: Համագումարը քննարկեց և հաստատեց ՍՄԶՄ ժողովրդական տնտեսության զարգացման վեցերորդ

հնգամյա պլանի (1956—1960 թթ.) դիրեկտիվները: Գրանից առաջ, 1956 թ. հունվարին, ՀԿԿ XVIII համագումարը հավանություն էր տվել այդ նախագծին, որը ինչպես ՍՄԶՄ մյուս հանրապետությունների, այնպես էլ Հայկական ՍՄԶ հետագա զարգացման նոր, փայլուն հեռանկարներ էր բացում: ՍՄԿԿ XX համագումարի հաստատած վեցերորդ հնգամյա պլանի դիրեկտիվներում իրենց արտացոլումը գտան նաև մեր հանրապետության զարգացման հիմնական խնդիրները:

ՍՄԿԿ XX համագումարը, նշելով Ի. Վ. Ստալինի ծառայությունները կուսակցության և սովետական ժողովրդի հանդեպ, միաժամանակ սուր քննադատության ենթարկեց նրա թույլ տված սխալները: Համագումարը ՍՄԿԿ Կենտկոմին հանձնարարեց հետևողականորեն կենսագործել միջոցառումներ, որոնք ապահովեն մարքսիզմ-լենինիզմին խորթ անհատի պաշտամունքի հաղթահարումը կուսակցական, պետական և զաղափարական աշխատանքի բոլոր բնագավառներում:

XX համագումարից հետո զգալի աշխատանք կատարվեց կուսակցական և պետական կյանքում լենինյան նորմաները վերականգնելու ուղղությամբ: Վճռական միջոցներ ձեռնարկվեցին սոցիալիստական օրինականության ամրապնդման, սոցիալիստական դեմոկրատիայի հետագա զարգացման համար: Բարելավվեց սովետների աշխատանքը: Զգալիորեն ընդարձակվեցին միութենական հանրապետությունների իրավունքները:

Կուսակցությունը և կառավարությունը նոր միջոցառումներ մշակեցին ժողովրդական տնտեսության ղեկավարումը բարելավելու ուղղությամբ: 1957 թվականի մայիսին ՍՄԶՄ Գերագույն սովետի սեսիան օրենք ընդունեց արդյունաբերության և շինարարության ղեկավարումն էլ ավելի կատարելագործելու մասին: Այդ հարցը քննարկվեց նաև Հայկական ՍՄԶ Գերագույն սովետի սեսիայում, որը որոշեց վերացնել մի շարք ճյուղային մինիստրություններ և ստեղծել Հայկական ՍՄԶ ժողովրդական տնտեսության խորհուրդ՝ Ժողտնտխորհ:

Ղեկավարվելով ՍՄԿԿ XX համագումարի որոշումներով, Հայաստանի բանվորները, գյուղացիները և մտավորականությունը վեցերորդ հնգամյակի երեք տարում (1956—1958 թթ.) հասան խոշոր հաջողությունների: Այդ հաջողությունների գրավականներից մեկը սոցիալիստական մրցության լայն ծավալումն էր: Հանրապետության շատ ձեռնարկություններ, մտնելով համամիութենական սոցիալիստական մրցության մեջ, արժանացան առաջին կարգի մրցանակների:

Վեցերորդ հնգամյակի տարիներին շահագործման հանձնվեցին արդյունաբերական մի շարք նոր ձեռնարկություններ, այդ թվում Երեվանի մետաղահատ հաստոցների, սարքաշինական, էլեկտրագործիքա-

շինական, կենսականի հղկող հաստոցների, էլեկտրատեխնիկական, Կիրովականի ավտոմատիկա գործիքաշինական, Լուսավանի (այժմ՝ Զարենցավան) ներտաշ հաստոցների, երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարանները:

Վերցրորդ հնգամյակի և ընդհանրապես հտպատերազմյան հնգամյակների տարիները Սովետական Հայաստանի համար մեքենաշինական և մետաղամշակման արդյունաբերության բուռն զարգացման ժամանակաշրջան էին: Ուշագրավ է, որ հանրապետությունում այդ ճյուղերի զարգացումն ընթանում էր ավելի բարձր տեմպերով, քան ամբողջ ՍՍՀՄ-ում: Օրինակ, եթե արդյունաբերության բնագավառում 1958 թվականին, 1940 թվականի համեմատությամբ, ՍՍՀՄ-ում այդ ճյուղերն աճել էին 6 անգամ, Հայկական ՍՍՀ-ում՝ 31 անգամ: 1958 թվականին Հայկական ՍՍՀ-ն էլեկտրատեխնիկական արտադրության արտադրանքի ծավալով ՍՍՀՄ-ում բունեց երրորդ տեղը (ՌՍՖՍՀ-ից և Ուկրաինական ՍՍՀ-ից հետո):

Հանրապետության աշխատավորությունը նոր հաջողություններ ձեռք բերեց երկրի էլեկտրիֆիկացման բնագավառում: Լայն թափով առաջ էր ընթանում Սևան-Հրազդան կասկադի հիդրոէլեկտրակայանների շինարարությունը: 1957 թ. գարնանը լրիվ կարողությամբ գործարկվեց շինարարական տեխնիկայի վերջին խոսքով կառուցված Արզնիճէկը. որի շնորհիվ զգալիորեն ավելացավ հանրապետության էլեկտրաէներգիայի արտադրանքը: Նույն տարում ավարտվեց Գյումուշդէս-Քաջարան 250 կՎ երկարություն ունեցող էլեկտրահաղորդման բարձրավոլտ գիծը:

Ուժեղ թափով առաջ էր ընթանում Երևան—Աղստաֆա երկաթուղու շինարարությունը: 1957 թ. դեկտեմբերին շահագործման հանձնվեց այդ երկաթուղու գլխամասը՝ 60 կՎ երկարություն ունեցող Երևան—Հրազդան գիծը, որը կարևոր դեր խաղաց Աբովյանի, Հրազդանի, Սևանի և հարեվան շրջանների տնտեսական ու կուլտուրական կյանքում: Այն հատկապես մեծ նշանակություն ունեցավ Հրազդանի լեռնաքիմիական հսկա կոմբինատի շինարարության համար: 1958 թվականին երթուղի դուրս եկավ Երևան—Հրազդան առաջին մարդատար գնացքը:

Գեռ վեցերորդ հնգամյակի տարիներից Սովետական Հայաստանի արդյունաբերական ձեռնարկություններն սկսեցին ավելի հաճախ մասնակցել միջազգային ցուցահանդեսներին ու տոնավաճառներին: Մեծ ծավալ ստացավ հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքի արտահանումը Սովետական Միության մյուս հանրապետությունները և արտասահմանյան երկրներ:

Նոր վերելք ապրեց հանրապետության գյուղատնտեսությունը: Այդ

ժամանակամիջոցում պետական միջոցներից մեծ գումարներ ներդրվեցին գյուղատնտեսության մեջ: Շահագործման հանձնվեցին Աբովյանի ջրանցքը և Արզնի—Շամիրամ ջրանցքի առաջին հերթը: Զգալիորեն ընդարձակվեց գյուղատնտեսության տեխնիկական բազան: Սակայն նկատի ունենալով, որ ՄՏԿ-ների միջոցով կոլտնտեսությունները ղեկավարելու սխտեմը հնացել էր և կոլտնտեսային կարգի զարգացման տվյալ էտապին չէր համապատասխանում, 1958 թ. մարտին ՍՍՀՄ Գերագույն սովետի որոշմամբ վերացվեցին մեքենա-տրակտորային կայանները և նրանց տեխնիկական վաճառվեց կոլտնտեսություններին:

Գյուղատնտեսության զարգացման գործում կարևոր նշանակություն ունեցան գյուղատնտեսական արտադրության պլանավորման նոր կարգը, ինչպես նաև կոլտնտեսությունների, ՄՆԿ-ների և սովխոզների աշխատողների նյութական շահագրգռվածության բարձրացումը:

Գյուղատնտեսության զարգացման ասպարեզում ձեռք բերված աչքի ընկնող հաջողությունների համար Սովետական Հայաստանը ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1958 թվականի դեկտեմբերի 29-ի հրամանագրով պարգևատրվեց կենսի շքանշանով:

Կենսի շքանշանի հանձնումը Սովետական Հայաստանին, որը տեղի ունեցավ 1959 թ. հուլիսին, վերածվեց հայ ժողովրդի ցնծալից տոնի: Հանրապետության աշխատավորությունը դրսևորեց իր անսահման սերն ու երախտագիտությունը կոմունիստական կուսակցության ու սովետական կառավարության նկատմամբ: Բարձր պարզև հանրապետության բանվորներին, կոլտնտեսականներին և մտավորականությանը ոգեշնչեց աշխատանքային նորանոր սխրանքների:

50-ական թվականների վերջում սովետական ժողովրդի պայքարը նշանալիորվեց սոցիալիզմի լիակատար ու վերջնական հաղթանակով:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԶԱՐԳԱՑԱԾ ՍՈՑԻԱԼԻՉՄԻ ԵՎ ԱՍՏԻՃԱՆԱԲԱՐ ԿՈՄՈՒՆԻՉՄԻՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1959—1978)

XXXVI Գ Լ Ո Ւ Ն

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐՍԿՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ՎԵՐԱՃՈՒՄԸ ԿՈՄՈՒՆԻՉՄԻ

1. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՅՈՒՆԱՄՅԱԿԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1959—1965)

Յոթնամյա պլանի ընդունումը

1959 թ. հունվարին Մոսկվայում բացվեց ՍՄԿԿ XXI արտահերթ համագումարը, որը քննարկեց և միահամուռ կերպով հաստատեց Սովետական Միությանում կոմունիստական շինարարության նոր, հոյակապ ծրագիրը՝ յոթնամյա պլանը (1959—1965 թթ.): Համագումարը յոթնամյակի զխավոր խնդիրներ համարեց կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը, ծանր ինդուստրիայի առավել զարգացման հիման վրա Սովետական Միության տնտեսական ու պաշտպանական հզորության հետագա ամրապնդումը և սովետական ժողովրդի նյութական-կուլտուրական մակարդակի զգալի բարձրացումը:

1959 թ. հունվարին Երևանում տեղի ունեցավ Հայաստանի կոմունիստական կուսակցության XX արտահերթ համագումարը, որը հավանություն տվեց մեր հայրենիքի նոր, հզոր վերելքի ծրագրին: Համագումարը հանրապետության բոլոր աշխատավորներին կոչ արեց համաժողովրդական մրցություն ծավալել յոթնամյակի առաջադրանքները ժամկետից շուտ կատարելու համար:

Յոթնամյակում Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության մեջ կատարվելու էին խոշոր կապիտալ ներդրումները, որոնք շատ ավելի էին, քան Սովետական Հայաստանի գոյության 38 տարում: Յոթ-

նամյա պլանով նախատեսվում էր 1965 թվականին արդյունաբերության համախառն արտադրանքը 1958 թվականի համեմատությամբ ավելացնել 2,3 անգամ: Զգալի աճ էր տեղի ունենալու գյուղատնտեսական արտադրության բնագավառում: Խոշոր միջոցառումներ էին նախատեսվում ժողովրդի նյութական և կուլտուրական մակարդակի հետագա բարձրացման համար:

ՀՍՍՀ աշխատավորության պայքարը յոթնամյա պլանի կատարման համար ՍՄԿԿ XXI համագումարի որոշումները հաջողությամբ կենսագործելու համար մեր երկրում ծանալվեց համաժողովրդական շարժում «Սովորել՝ աշխատել և ապրել կոմունիստաբար» նշանաբանով: Հանրապետության աշխատավորների հարյուրավոր կուլեկտիվներ արդյունաբերական ձեռնարկություններում, սովխոզներում և կոլտընտեսություններում պայքարում էին կոմունիստական աշխատանքի բրիգադներին կոչման համար: 1959 թվականին միայն Հայկական ՍՍՀ ժողովրդատիրոջի ձեռնարկություններում կային 500-ից ավելի այդպիսի կուլեկտիվներ: Յոթնամյակի վերջում հանրապետության արդյունաբերության մեջ կոմունիստական աշխատանքի կոչման համար պայքարում էին 57 հազար մարդ, 4944 բրիգադ, 952 արտադրամաս, հերթափոխ, աշխատամաս, 91 ձեռնարկություն: Այս գործում մեծ էր Հայաստանի արհեստակցական միությունների և կոմերիտմիության դերը: Հայաստանի կոմերիտմիությունը վերցրել էր հանրապետության 10 խոշոր նորակառույցների շեֆությունը: Կոմերիտմիության ուղեգրերով այդ նորակառույցներն ուղարկվեց շորս հազար երիտասարդ բանվոր: 950 կոմերիտական-երիտասարդական բրիգադներ արժանացան կոմունիստական աշխատանքի բրիգադի պատվավոր կոչման: Կոմերիտական կազմակերպությունները մեծ աշխատանք էին կատարում նաև գյուղատնտեսության բնագավառում: 1961 թվականին հանրապետության կուլտնտեսություններում ու սովխոզներում «հարուստ հեկտարի համար» պայքարում էին մոտ հազար կոմերիտական-երիտասարդական բրիգադներ և օղակներ:

1960 թ. մայիսին Մոսկվայում տեղի ունեցավ կոմունիստական աշխատանքի բրիգադի և հարվածայինի կոչման համար պայքարող առաջավորների համամիութենական խորհրդակցություն, որին մասնակցում էր նաև Հայկական ՍՍՀ պատվիրակությունը: Արտադրական աչքի ընկնող հաջողությունների և կոմունիստական աշխատանքի բրիգադների ու հարվածայինների կոչման մրցության կազմակերպման գործում ցուցաբերած նախաձեռնության համար այդ օրերին ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում շնորհվեց Կիրովի անվան գործարանի

ապարատավարների բրիգադավար Սերյոժա Ամիրխանյանին և Ղափանի պղնձահանքային կոմբինատի հորատողների բրիգադավար Աշոտ Մելքոնյանին:

Յոթնամյակի կատարման համար հանրապետությունում նոր թափով ծավալվեց սոցիալիստական մրցությունը: Իրենց ստանձնած սոցիալիստական պարտավորությունները կատարում և գերակատարում էին հարյուրավոր ու հազարավոր աշխատավորներ: Սոցիալիստական մրցությունը լայնորեն ծավալվեց նաև ՍՍՀՄ եղբայրական հանրապետությունների միջև: Սովետական Հայաստանը սոցիալիստական մրցության մեջ մտավ Ադրբեջանի, Վրաստանի, Կիրգիզիայի և Տաջիկստանի հետ: Արդյունավետ էր 1956 թվականից սկսված Երևան—Կիև և ապա՝ Երևան—Կիև—Բաքու—Թբիլիսի մրցությունը:

Յոթնամյակի կատարման գործում կարևոր դեր խաղաց մեր երկրի ժողովուրդների բարեկամությունը, նրանց միջև օրըստօրե ծավալվող ինտերնացիոնալ համագործակցությունը: Երևանի չերմաէլեկտրակայանի կառուցմանը մասնակցեցին Ռուսաստանյան Ֆեդերացիայի, Ուկրաինայի, Բելոռուսիայի, էստոնիայի, կատվիայի, Ադրբեջանի, Վրաստանի և այլ եղբայրական հանրապետությունների բանվորներն ու մոնտաժողները: Կիրովականի արհեստական մանրաթելի գործարանի կառուցմանը մասնակցեցին ՍՍՀՄ գրեթե բոլոր հանրապետությունները: Երկրի 248 ձեռնարկություններ Հայաստանի ինդուստրիայի այդ հսկա նորակառույցն ապահովեցին անհրաժեշտ սարքավորումներով ու նյութերով: Իր հերթին Հայաստանի աշխատավորությունը ակտիվ մասնակցություն ցույց տվեց մեր լայնածավալ հայրենիքի տարբեր մասերում հիմնվող հզոր նորակառույցներին:

Յոթնամյակի տարիներին ավելի ընդլայնվեցին հանրապետության և արտասահմանյան երկրների արդյունաբերական ձեռնարկությունների գործնական կապերը:

Կուսակցությունը և կառավարությունը բարձր գնահատեցին յոթնամյակի կատարման գործում աչքի ընկած կոլեկտիվների հերոսական աշխատանքը: Յոթնամյակում ձեռք բերած խոշոր հաջողությունների համար ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրերով Լենինի շքանշանով պարգևատրվեց Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատը, իսկ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով՝ Երևանի Ս. Մ. Կիրովի անվան սինթետիկ կաուչուկի, Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական գործարանները, Լենինականի Մալխոյան ապրտամբուլայան անվան տեքստիլ կոմբինատը: Սովետական Միության շքանշաններով ու մեդալներով պարգևատրվեցին հանրապետության արդյունաբերության և գյուղատնտեսության մոտ երեք հազար առա-

ջավորներ, իսկ 17 հոգի արժանացան սոցիալիստական աշխատանքի հերոսի բարձր կոչման:

1961 թ. հոկտեմբերին տեղի ունեցավ ՍՄԿԿ XXII համագումարը: Համագումարը հաստատեց կուսակցության նոր ծրագիրը, որը ինչպես ամբողջ երկրի, այնպես էլ Սովետական Հայաստանի առջև բացեց կոմունիստական շինարարության հույսալից հեռանկարներ: Սովետական ժողովուրդը, այդ թվում և հայ ժողովուրդը, խանդավառությամբ ընդունեց հարազատ կուսակցության XXII համագումարի համաշխարհային-պատմական նշանակություն ունեցող որոշումները և հերոսական աշխատանք ծավալեց դրանք կենսագործելու համար:

Համագումարից հետո մեր երկրում ընդլայնվեց սովետական դեմոկրատիան: Բարձրացավ սովետների դերը որպես մասսաների կազմակերպչի: Անշեղորեն միծայցավ հասարակայնության դերը, պետական օրգանների մի շարք ֆունկցիաներ աստիճանաբար անցան աշխատավորների մասսայական կազմակերպություններին: Առանձնապես աճեց արհմիությունների նշանակությունը: Ընդլայնվեցին նրանց իրավունքներն ու խնդիրները: Կոմունիզմի ծավալումն կառուցման շրջանում խոշոր աշխատանք էր կատարում լենինյան կոմերիտմիությունը: Մի շարք միջոցներ ձեռնարկվեցին երկրի ժողովրդական տնտեսության ղեկավարումը բարելավելու նպատակով:

Սակայն ՍՄԿԿ Կենտկոմը 1964 թ. հոկտեմբերյան պլենումից հետո վերանայեց վերջին տարիներին կատարված մի շարք անհիմն վերակառուցումները, որոնք խանգարում էին ժողովրդական տնտեսության հետագա զարգացմանը: Օրինակ՝ իրեն շարդարացրեց կուսակցական, այնուհետև սովետական, արհմիութենական և կոմերիտական կազմակերպությունների բաժանումը արդյունաբերականի և գյուղականի: ՍՄԿԿ Կենտկոմի նոյեմբերյան պլենումը (1964 թ.) որոշում ընդունեց արդյունաբերական և գյուղական կուսակցական կազմակերպությունների միավորման մասին, իսկ ՍՍՀՄ Գերագույն սովետի սեսիան 1964 թ. դեկտեմբերին որոշեց միացնել սովետական օրգանները: Արդյունաբերության ղեկավարումը բարելավելու համար ՍՄԿԿ Կենտկոմի 1965 թ. սեպտեմբերյան պլենումը որոշեց վերացնել 1957 թ. ստեղծված ժողտնտիսորհները և կազմակերպել ճյուղային միևնույնություններ: 1965 թ. դեկտեմբերյան պլենումը որոշում ընդունեց կուսակցական-պետական վերհսկողությունը վերակազմել ժողովրդական վերահսկողության: Կուսակցության ու կառավարության այդ միջոցառումներն արժանացան սովետական ժողովրդի միահամուռ հավանությունը:

1964 թվականի հունվարին տեղի ունեցավ Հայաստանի կոմկուսակցության XXIII համագումարը, որն ամփոփեց յոթնամյակի 5 տա-

րում Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների ձեռք բերած հաջողությունները հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ և մշակույթի ասպարեզում:

Յոթնամյակի կատարման արդյունքները արդյունաբերության բնագավառում

Սովետական ժողովուրդը նախատեսված ժամկետում կատարեց յոթնամյա պլանը: Առանձնապես խոշոր հաջողություններ ձեռք բերվեցին արդյունաբերության բնագավառում: ՄՍՀՄ յոթնամյա պլանով նախատեսված 80%-ի փոխարեն արդյունաբերական արտադրանքի ծավալն ավելացավ 84%-ով, շարք մտավ 5500 արդյունաբերական նոր ձեռնարկություն: Յոթնամյակի հաջողությունները ցուցադրվեցին 1959 թ. Մոսկվայում բացված ԺՏՆՅ-ում, որտեղ գործում էր նաև Հայկական ՄՍՀ տաղավարը:

Յոթնամյակի տարիներին խոշոր նվաճումներ ձեռք բերվեցին նաև Սովետական Հայաստանում: Հանրապետության արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալը 1958 թվականի համեմատությամբ ավելացավ ավելի քան երկու անգամ: Առանձնապես արագ տեմպերով զարգացան մեքենաշինությունը և մետաղամշակումը, քիմիական արդյունաբերությունը, գունավոր մետալուրգիան և շինանյութերի արտադրությունը: Յոթնամյակի ընթացքում կառուցվեցին և շահագործման հանձնվեցին 300 արդյունաբերական ձեռնարկություններ և խոշոր արտադրամասեր: Յուրացվեց ավելի քան 600 տեսակի նոր սարքավորումների, մեքենաների ու ժողովրդական սպառման առարկաների արտադրությունը: Ստեղծվեցին արդյունաբերության այնպիսի նոր ճյուղեր, ինչպիսիք են էլեկտրոնային, ռադիոէլեկտրոնային, գործիքաշինական, դարբնոցամամլիչային, սարքաշինական, հաշվիչ և հաշվիչ-մաթեմատիկական մեքենաների, արհեստական սինթետիկ թելերի, սինթետիկ ու պլաստիկ առարկաների արտադրությունը և այլն:

Յոթնամյակի տարիներին ՀԿԿ Կենտկոմը և ՀՄՍՀ կառավարությունը հատուկ ուշադրություն դարձրին հանրապետության արդյունաբերական կարողությունները լավագույն ձևով օգտագործելու և արտադրողական ուժերը ճիշտ տեղաբաշխելու գործին: Դրա շնորհիվ արդյունաբերական նոր կենտրոններ ստեղծվեցին Լուսավանդում, Աբովյանում, Ազարակում: Արդյունաբերական ձեռնարկություններ կառուցվեցին Արզրնիում, Դիլիջանում, Սևանում, Կամոյում, Իջևանում, Մարալիկում, Սպիտակում, Գորիսում, Շամշադինում և այլ վայրերում:

Յոթնամյակում շարք մտած մեքենաշինական և մետաղամշակման նոր ձեռնարկություններից են Լուսավանի գործիքաշինական գործարանը, նույն գործարանի կենտրոնական ձուլարանը՝ տարեկան տասնյակ հազար տոննա շուգունի ձուլվածքի կարողությամբ, Կիրովականի ճրշ-

գրրիտ հաստոցների, Լենինականի «Ստրոմաշին», հղկիչ հաստոցների, միկրոէլեկտրաշարժիչ, Երևանի ավտոբեռնիչների, ֆրեզերային հաստոցների և այլ գործարանները:

Քիմիական արդյունաբերության բնագավառում յոթնամյակի կառուցներից է պոլիվինիլացետատ գործարանի ացետացելյուլովի արտադրության կոմպլեքսը: Դա մի գործարան է գործարանի ներսում, որն իր կարողությամբ խոշորագույններից մեկն է ՄՍՀՄ-ում:

Գունավոր մետալուրգիայի ամենախոշոր նորակառույցը Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատն է, որը շահագործման է հանձնվել 1963 թվականին:

1962 թվականին շարք մտավ հանրապետության շինանյութերի արտադրության հսկաներից մեկը՝ Արարատի ցեմենտի-շիֆերի կոմբինատի շորորոգ տեխնոլոգիական գիծը: Յոթնամյակի կառուցներից է նաև Լենինականի երկաթբետոնե և բետոնե կոստրուկցիաների ու զետալների գործարանը:

Քուռն առաջընթաց տեղի ունեցավ էլեկտրաէներգիայի արտադրության բնագավառում: Յոթնամյակի տարիներին շարք մտան Երևանի և Աթարբեկյանի հիդրոէլեկտրակայանները, Երևանի ջերմաէլեկտրակենտրոնի առաջին հերթը: Արագ թափով առաջ էին գնում Տաթևի հրվոր հիդրոէլեկտրակայանի կառուցման աշխատանքները: Էներգետիկ բազայի ընդլայնման հետ միասին 1960 թվականին ավարտվեց և շահագործման հանձնվեց Աղստաֆա—Աթարբեկյան էլեկտրահաղորդման բարձրավոլտ գիծը: Դրանով ավարտվեց Անդրկովկասի եղբայրական երեք հանրապետությունների էներգասիստեմաների միացումը, որը նախատեսված էր յոթնամյա պլանով:

Ժողովրդատնտեսական կարևոր նշանակություն ունեցավ Ղարադաղ—Ղազախ—Երևան 700 կիլոմետրանոց գազամուղը, որը ժողովուրդն անվանեց «Բարեկամության գազամուղ»: 1960 թվականի փետրվարի 10-ին Երևանի Լենինի հրապարակում հանդիսավոր իրադրության մեջ վառվեց գազի կապույտ կրակը:

Յոթնամյակի տարիներին մեծ աշխատանք կատարվեց նաև Սևանի պրոբլեմի լուծման ուղղությամբ: 1961 թ. օգոստոսին ՄՍՀՄ Մինիստրների խորհուրդը ընդունեց «Սևանա լճի մակարդակը բնական պայմաններին մոտ բարձրության վրա պահպանելու նպատակով Արփա գետի ջրի մի մասը Սևանա լիճ շուրջ տալու միջոցառումների մասին» որոշումը: 1963 թվականին սկսվեց ավելի քան 48 կիլոմետր երկարություն ունեցող Արփա—Սևան ստորերկրյա ջրային ուղու կառուցումը, որը թունելաշինության համաշխարհային պրակտիկայում աննախադեպ երևույթ է: Հիդրոտեխնիկական այդ բարդ կառուցվածքի շինարարու-

թյունը դարձավ իսկական համաժողովրդական գործ, որին օգնության եկան Սովետական Միության եղբայրական մյուս ժողովուրդների շատ զավակներ:

Յոթնամյակի ընթացքում կառուցվեցին և շահագործման հանձնվեցին թեթև և սննդի արդյունաբերության բազմաթիվ ձեռնարկություններ: 1962 թվականին շարք մտավ Կիրովականի, տեխնիկայի վերջին խոսքով կառուցված, արհեստական մետաքսաթելի գործարանը: Իջևանի գորգագործական կոմբինատի գործարկումով վճռական բեկում առաջացավ Հայաստանի արդյունաբերության հնագույն ճյուղերից մեկի՝ գորգագործության բնագավառում: Նոր կոմբինատը տարեկան թողարկում էր մոտ մեկ միլիոն քառ. մ բարձրորակ գորգ՝ հայկական զարդանախշերով: Յոթնամյակի նվաճումներից է նաև Երևանի դաշնամուրի ֆաբրիկան: Մանդարդյունաբերության նորակառույցներից են Այրումի պահածոների, Հոկտեմբերյանի գինու և այլ գործարաններ:

Արդյունաբերական նորակառույց ձեռնարկություններից բացի, յոթնամյակի տարիներին մեծ աշխատանք կատարվեց նաև Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի, Երևանի Ս. Մ. Կիրովի անվան սինթետիկ կաուչուկի, պոլիվինիլացետատ, Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական, էլեկտրալամպերի գործարանների, մետաքսի կոմբինատի և այլ ձեռնարկությունների արտադրական կարողություններն ընդլայնելու ուղղությամբ:

Լուրջ աշխատանք կատարվեց նոր տեխնիկայի տեխնոլոգիայի արմատավորման, հին սարքավորումները նորերով փոխարինելու և արտադրության ավտոմատացման ուղղությամբ:

Արագ թափով էր ընթանում Երևան—Աղստաֆա երկաթուղու շինարարությունը: 1963 թվականին երկաթուղին հասավ Սևան:

Յոթնամյակի ընթացքում հանրապետությունում կատարվել է ավելի քան երկու միլիարդ ուղբու կապիտալ ներդրում, որը մեկ ու կես անգամ ավելի է, քան Հայաստանում սովետական իշխանության գոյության բոլոր նախորդ 38 տարիներին:

Գյուղատնտեսության զարգացումը

Նշանակալից հաջողություններ ձեռք բերվեցին նաև գյուղատնտեսության բնագավառում: Զգալիորեն ավելացան խաղողի- և պտղատու այգիների, հացահատիկի, շաքարի ճակնդեղի, ծխախոտի, բանջարեղենի և այլ կուլտուրաների ցանքատարածությունները: Միայն յոթնամյակի վերջին երկու տարում հանրապետության կոլտնտեսություններում և սովխոզներում հիմնվեցին ավելի քան յոթ հազար հեկտար նոր այգիներ: Որոշ հաջողություններ ձեռք բերվեցին գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման ուղղությամբ:

Յոթնամյակի տարիներին սկսվեց Արարատյան հարթավայրի 30 հազար հեկտարի համեմատելի յուրացման աշխատանքները: Հանրապետության գյուղատնտեսության զարգացման գործում կարևոր դեր խաղաց մի շարք նոր ջրամբարների կառուցումը: Մեծ աշխատանք կատարվեց գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապլնդման ուղղությամբ: Զգալիորեն ավելացավ տրակտորների, ավտոմեքենաների, կոմբայնների և գյուղատնտեսական այլ մեքենաների քանակը:

Չնայած ձեռք բերված նվաճումներին, ինչպես ամբողջ երկրի, այնպես էլ հանրապետության գյուղատնտեսության զարգացման գործում գոյություն ունեին լուրջ թերություններ ու սխալներ: Տնտեսապես բավարար չափով հիմնավորված չէին գյուղատնտեսական մի շարք մթերքների մթերման գները, անբավարար էին պետական կապիտալ ներդրումները գյուղատնտեսության մեջ, հացահատիկային կուլտուրաների բերքատվության բարձրացման հարցում հաճախ հանդես էր բերվում սխալ մոտեցում, պլանավորելիս երբեմն հաշվի չէին առնվում իրական հնարավորությունները: Այդ բոլորի հետևանքով հիմնականում չկատարվեցին գյուղատնտեսական մթերքների արտադրության յոթնամյա պլանով նախատեսված առաջադրանքները: Օրինակ՝ ՍՍՀՄ-ում գյուղատնտեսության արտադրանքն ավելացավ միայն 14%-ով՝ պլանով նախատեսված 70%-ի փոխարեն:

ՍՄԿԿ Կենտկոմը ձեռք առավ մի շարք կոնկրետ միջոցներ, որոնց շնորհիվ արմատապես բարելավվեց գյուղատնտեսության վիճակը մեր երկրում: Այս տեսակետից կարևոր նշանակություն ունեցան ՍՄԿԿ Կենտկոմի 1964 թ. փետրվարյան և 1965 թ. մարտյան պլենումների որոշումները: Փետրվարյան պլենումը նշեց, որ մեր երկրում գյուղատնտեսության արտադրության ինտենսիվացումը պետք է ընթանա երեք հիմնական ուղղությամբ՝ հողագործության և անասնաբուծության լայն քիմիացման, ոռոգվող հողագործության ամեն կերպ զարգացման և կոմպլեքսային մեքենայացման ու էլեկտրիֆիկացման ուղղությամբ:

Ժողովրդի կենսամակարդակի բարձրացումը

Ժողովրդական տնտեսության բուռն վերելքի շրջանում յոթնամյակում նոր հաջողություններ ձեռք բերվեցին նաև ժողովրդի նյութական բարեկեցության բարձրացման ուղղությամբ: Աղգային եկամուտն աճեց 1,8 անգամ: Աշխատավորների դրամական եկամուտներն ավելացան 1,9 անգամ, տարեկան միջին աշխատավարձը՝ 28%-ով: Այդ բոլորին զուգընթաց աճեց բնակչության գնողունակությունը: Մեծ չափերով ընդարձակվեց ապրանքաշրջանառությունը, հատկապես պարենային ապրանքների վաճառքը:

Շարունակվում էր ծավալվել բնակարանային շինարարությունը: Յոթ տարվա ընթացքում հանրապետությունում կառուցվեցին 5,3 միլիոն քառ. մ տարածությամբ բնակելի շենքեր: Դա ավելի է, քան կառուցվել է Հայաստանում սովետական իշխանության հաստատումից հետո անցած 38 տարում:

Պետությունը հսկայական գումարներ ներդրեց առողջապահական և կոմունալ-կենցաղային սպասարկման ցանցի ընդլայնման համար: Զգալիորեն աճեց բժիշկների թիվը: Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց առաջ կար 77 բժիշկ, իսկ 1960 թվականին նրանց թիվը հասավ 4000-ի: Բավական է ասել, որ Կիրովական քաղաքում (նախկին Մեծ Ղարաքիլիսա գյուղում) հեղափոխությունից առաջ կար միայն մեկ զեմստվային բժիշկ, իսկ 1960 թվականին այնտեղ արդեն գործում էր 34 բուժֆիմնարկ՝ 900 բուժաշխատողով:

2. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ VIII ՀՆԳԱՄՅԱԿԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Հնգամյակի կատարման արդյունքները արդյունաբերության բնագավառում

1966 թ. մարտին Հայաստանի կոմունիստական կուսակցության XXIV համագումարը, հանրագումարի բերելով Հայկական ՍՍՀ յոթնամյա պլանի կատարման արդյունքները, միահամուռ հավանություն տվեց «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1966—1970 թվականների հնգամյա պլանի վերաբերյալ ՍՄԿԿ XXIII համագումարի դիրեկտիվներին» նախագծին: Շուտով ՍՄԿԿ XXIII համագումարում քննարկվեցին և հաստատվեցին ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1966—1970 թվականների հնգամյա պլանի դիրեկտիվները:

Հայ ժողովուրդը խոր գոհունակությամբ ընդունեց կուսակցության XXIII համագումարի որոշումը VIII հնգամյակի մասին, որը մեր երկրում կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման կարևոր փուլն էր: Հնգամյակը հոյակապ հեռանկարներ բացեց մեր հանրապետության հետագա ծաղկման համար:

Սովետական Միության աշխատավորները, իրագործելով XXIII համագումարի որոշումները, նոր հնգամյակում խոշոր նվաճումներ ձեռք բերեցին ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի զարգացման ասպարեզում:

Հնգամյակի առաջադրանքները հաջողությամբ են կատարվել նաև Սովետական Հայաստանում: Արդյունաբերական արտադրանքի ծավալը մեծացավ մոտ 1,8 անգամ: Բուռն թափով աճեցին արդյունաբերության բոլոր, բայց հատկապես առավել երիտասարդ ճյուղերը՝ ճշգրիտ սարքաշինությունը, էլեկտրոնային և ռադիոտեխնիկական արդյունաբերությունը: Ստեղծվեցին արդյունաբերության նոր ճյուղեր՝ ավտոմոբիլային

և բժշկական արդյունաբերությունը, դրվեցին միկրոբիոլոգիական արդյունաբերության հիմքերը:

Էլ ավելի հզորացավ հանրապետության էներգետիկան՝ արդյունաբերության զարգացման հիմքը: 1967 թվականի հոկտեմբերին Երևանի հարավ-արևելյան ծայրամասում հանդիսավոր պայմաններում լրիվ կարողությամբ շահագործման հանձնվեց Հայաստանի ջերմաէներգետիկայի առաջնեկը՝ Երևանի ջերմաէլեկտրակենտրոնը, որը արտադրում էր զգալիորեն ավելի էլեկտրաէներգիա, քան Հայաստանի մնացած բոլոր էներգետիկ կայանները միասին վերցրած: Հանրապետության էներգետիկայի այդ հսկան կառուցվել է ՍՍՀՄ 30 ազգությունների ներկայացուցիչների ջանքերով: Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի հրամանագրով կայանը կոչվեց մեծ Հոկտեմբերի 50-ամյակի անվան: Հնգամյակի ընթացքում հանրապետության էներգաշինարարների ջանքերով ավարտվեց նաև Հրազդանի և Կիրովականի ջերմաէլեկտրակայանների, Որոտանի կասկադի առաջնեկի՝ Տաթևի հիդրոէլեկտրակայանի, կառուցումը: Շահագործման հանձնվեց Հրազդանի պետական շրջանային էլեկտրակայանի առաջին մասը: Այդ ամենի շնորհիվ 1965 թվականի համեմատությամբ 1970 թվականին էլեկտրաէներգիայի արտադրությունը կրկնապատկվեց՝ հասնելով 6 միլիոն կվտ ժամի:

1969 թվականին Արարատյան դաշտում սկսվեց Հայաստանի ատոմային էլեկտրակայանի շինարարությունը, որը նախատեսված էր ավարտել 9-րդ հնգամյակում: Ուշադրավ է, որ այդ էլեկտրակայանը մեկ տարում պետք է տար այնքան էլեկտրաէներգիա, որքան տալիս էին Հայաստանի բոլոր ջերմաէլեկտրակենտրոնները և հիդրոէլեկտրակայանները միասին վերցրած:

1967 թվականին ավարտվեց Երևան—Թբիլիսի երկաթուղագծի էլեկտրիֆիկացումը: Դրանով ամբողջական դարձավ աշխարհում էլեկտրիֆիկացված խոշորագույն պողպատե մագիստրալներից մեկը, որը ձեռք էր բերել քան 3600 կիլոմետր՝ Նևայի ափերից մինչև գեղատեսիլ Սևանա լիճը:

Հնգամյակի տարիներին շահագործման հանձնվեցին 110 արդյունաբերական ձեռնարկություններ և խոշոր արտադրամասեր, այդ թվում Երևանի քիմիական ռեակտիվների և կենցաղային քիմիայի, Արզնու բյուրեղապակու գործարանները, Հրազդանի լեռնաքիմիական հսկա կոմբինատի ցեմենտի արտադրության առաջին հերթը, Ղափանի պղնձահանքային կոմբինատի հարստացուցիչ ֆաբրիկան և այլ ձեռնարկություններ: 1966 թվականին Երևանի ավտոմոբիլային երիտասարդ գործարանը թողարկեց «Երազ» ավտոմեքենան:

Հիմնականում ավարտվեց արդյունաբերական ձեռնարկությունների

անցումը պլանավորման տնտեսական խթանման նոր սիստեմին: Այդ սիստեմով աշխատող ձեռնարկությունները հնգամյակի վերջին տարում թողարկում էին արդյունաբերական արտադրանքի 90 տոկոսը:

Հնգամյակի տարիներին կարևոր նվաճումներ ձեռք բերվեցին հանրապետությունում արտադրողական ուժերի ճիշտ տեղաբաշխման, շրջանների էկոնոմիկայի կոմպլեքսային զարգացման, արտադրության մասնագիտացման և կոոպերացման բնագավառներում: Ուշագրավ է, որ հնգամյակի ընթացքում արդյունաբերական առավել բարձր աճ տվեցին արդյունաբերության տեսակետից մինչ այդ ոչ այնքան հայտնի քաղաքները: Այսպես, օրինակ, եթե 1970 թ. հանրապետության արդյունաբերական արտադրանքի ծավալի մեջ Երևանի, Լենինականի և Կիրովականի տեսակարար կշիռը 1965 թ. համեմատությամբ 76,9 տոկոսից իջավ 72,0 տոկոսի, ապա Աբովյանի շրջանի արդյունաբերական ձեռնարկությունների համախառն արտադրանքն աճեց 3,4 անգամ, Հրազդանի շրջանինը՝ 3 անգամ, Կամոյի շրջանինը՝ 2,6 անգամ և այլն:

Հնգամյակի տարիներին մեծ աշխատանք կատարվեց գիտության և տեխնիկայի նվաճումները ժողովրդական տնտեսության մեջ արմատավորելու ուղղությամբ: Միայն 1967 թվականին նախագծվել և պատրաստվել են ավելի քան 73 տեսակ նոր մեքենա, սարքավորում, ապարատ և սարք: Տեխնիկական առաջադիմությանն զգալիորեն նպաստեց հազարավոր գյուտարարների և արտադրության ուսցիտնալիզատորների ստեղծագործական ակտիվությունը: Միայն հնգամյակի երրորդ տարում, 1968 թվականին, ժողովրդական տնտեսության մեջ արմատավորվեց մոտ 14 հազար գյուտ և ուսցիտնալիզատորական առաջարկություն:

Արդյունաբերության զարգացմանը զուգընթաց տեղի էր ունենում բանվոր դառակարգի քանակական, մանավանդ, որակական աճ: 1928 թ. համեմատությամբ 1970 թվականին քսան անգամ ավելացավ արդյունաբերական—արտադրական անձնակազմի թիվը: Որակյալ բանվորական և շինարարական կադրերի պատրաստման գործում մեծ դեր է խաղում մասնագիտական տեխնիկական կրթությունը, որի ցանցը վերջին տարիներին զգալիորեն ընդլայնվեց:

Հանրապետության արդյունաբերական ձեռնարկություններում լայնորեն ծավալվեց սոցիալիստական մրցությունը: Շատ ձեռնարկություններ հաղթող ճանաչվեցին համամիութենական սոցիալիստական մրցության մեջ և արժանացան ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի և ՀԱՄԿՆ-ի փոխանցիկ դրոշին: Երևանի Ս. Մ. Կիրովի անվան գործարանը տարբեր ժամանակներում 60 անգամ արժանացել է ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի և ՀԱՄԿՆ-ի փոխանցիկ կարմիր դրոշներին: Հանրապետության

մեջ առաջինը այդ գործարանին է շնորհվել կոմունիստական աշխատանքի ձեռնարկության բարձր կոչումը:

Յոթնամյակի և հատկապես VIII հնգամյակի տարիներին Սովետական Հայաստանի արդյունաբերական արտադրանքի ավելի շատ նմուշներ ցուցադրվեցին և մրցանակներ շահեցին միջազգային տոնավաճառներում ու ցուցահանդեսներում: Եթե 1957 թվականին մեր հանրապետությունը մասնակցել է միջազգային 11 տոնավաճառների և ցուցահանդեսների, ապա 1967 թվականին այդ թիվը հասավ 22-ի: Միայն 1966 թվականին Կիրովականի հաստոցաշինական գործարանի արտադրած էլեկտրակայծային գերձշգրիտ հաստոցը երեք անգամ շահեց ոսկե մեծ մեդալ: Ոսկե մեդալի արժանացավ նաև Երևանի «Նաիրի» էլեկտրոնային հաշվիչ մեքենան: Լայպցիգի տոնավաճառում 1965 թ. ոսկե մեծ մեդալների արժանացան Երևանի Ֆրեդերային հաստոցների գործարանի արտադրած հաստոցներից մեկը և «Երևան» գորգը: 75 մեդալ նվաճեցին «Արարատ» տրեստի արտադրած հայկական կոնյակներն ու գինիները:

Միջազգային տոնավաճառներն ու ցուցահանդեսները մեծ դեր խաղացին արտասահմանյան երկրների հետ մեր հանրապետության տնտեսական կապերն ընդլայնելու գործում: Միայն 1966 թվականին արտասահմանյան ավելի քան 70 երկրներ ուղարկվեց 150 տեսակի արտադրանք, այդ թվում մեծ քանակությամբ էլեկտրական մեքենաներ, տարբեր տիպի հաստոցներ, ճշգրիտ շափիչ մեխանիզմներ, կոմպրեսորներ, տրանսֆորմատորներ, գեներատորներ, ինչպես նաև ժողովրդական ըսպուման բազմապիսի ապրանքներ: Սովետական Հայաստանից հաստոցներ արտահանվեցին այնպիսի զարգացած երկրներ, ինչպիսիք են Նորվեգիան, Իտալիան, Ֆրանսիան, Ֆինլանդիան, էլեկտրական շարժիչներ, տարբեր տեսակի սարքեր, ժամացույցներ ուղարկվեցին Իրան, Թուրքիա, Ավստրիա, Անգլիա և սոցիալիստական երկրներ: Հայաստանի արդյունաբերական արտադրանքը հասավ մինչև Կուբա, Աֆրիկայի խորքերը՝ Գվինեա և այլ երկրներ:

Միայն հիշյալ արտադրանքներով չեն սահմանափակվում Սովետական Հայաստանի արտադրական-տնտեսական կապերը արտասահմանի հետ: Հանրապետության շատ մասնագետներ մասնակցում են գլխավորապես Ասիայի և Աֆրիկայի մի շարք երկրների նորակառույցների նախագծային և շինարարական աշխատանքներին:

Հայ շինարարների հետ ուս ուսի տված աշխատում են ՍՍՀՄ ավելի քան 40 ազգությունների ներկայացուցիչներ: Մեծ համբավ ձեռք բերեցին Արփա—Սևան թունելի շինարարությունում Հայկական ՍՍՀ վաստակավոր շինարար, տեղամասի պետ, ուկրաինացի Իվան Նուժին, Երե-

ընդլայնվեց բուժհիմնարկների ցանցը, ավելացավ բժիշկների թիվը: Ուշագրավ է հետևյալ փաստը: 10 հազար բնակչին ընկնող բժիշկների թվով Հայաստանը ՍՍՀՄ-ում այն ժամանակ գրավում էր չորրորդ տեղը, հրկու անգամ գերազանցում էր ԱՄՆ-ին, Իտալիային, Ֆրանսիային, 2,2 անգամ՝ Անգլիային, 9 անգամ՝ Թուրքիային, 14 անգամ՝ Իրանին:

Կեսդարյա Ռոբեյանը Սովետական բոլոր ժողովուրդների հետ միասին 1967 թ. նոյեմբերին հայ ժողովուրդը մեծ խանդավառությամբ տոնեց Հոկտեմբերյան հեղափոխության փառապանծ 50-ամյակը: Ի պատիվ այդ մեծ տոնի հանրապետությունը պարգևատրվեց ՍՍՀՄ Կենտկոմի, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի և ՀԱՄԿ-ի հուշադրոշով:

Տնտեսական և կուլտուրական շինարարության ասպարեզում հանրապետության աշխատավորների ձեռք բերած հաջողությունների համար 1968 թ. հոկտեմբերին ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Սովետական Հայաստանը պարգևատրվեց Լենինի երկրորդ շքանշանով, որը մեծ ցնծություն առաջ բերեց հանրապետության աշխատավորության մեջ:

1970 թվականը՝ հնգամյակի վերջին տարին, մեծ հոբելյանների տարի էր: Երախտապարտ հայ ժողովուրդը արժանավայել նշեց Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակը, իր խորին հարգանքի տուրքը մատուցեց հանձարեղ առաջնորդի հիշատակին: Հանրապետության շատ առաջավոր հիմնարկ-ձեռնարկություններ և տասնյակ հազարավոր աշխատավորներ պարգևատրվեցին Լենինյան հուշամեդալներով:

Նոյեմբերի վերջին հայ ժողովուրդը անմոռանալի օրեր ապրեց: Չտեսնված խանդավառությամբ ու մեծ շուքով տոնվեց Հայաստանում սովետական կարգերի հաստատման ու կոմունիստական կուսակցության կազմավորման կեսդարյա հոբելյանը:

Նախատոնական օրերին հանրապետությունում քաղաքական և աշխատանքային բուռն վերելք էր ստեղծվել: Բոլոր ծայրերից զեկուցյնոր էին ստացվում արդյունաբերական ձեռնարկությունների, շինարարական կոլեկտիվների, կոլտնտեսությունների ու սովխոզների հնգամյա առաջադրանքները ժամկետից շուտ ավարտելու մասին:

Հոբելյանական հանդիսությունները վերածվեցին համաժողովրդական ցնծության: Կեսդարյա պանծալի հոբելյանը դարձավ ոչ միայն հանրապետության աշխատավորների ազգային տոնը, այլև մեր մեծ հայրենիքի բոլոր ժողովուրդների տոնը: Տոնահանդեսներին մասնակցելու համար Սովետական Հայաստան էին ժամանել ՍՍՀՄ եղբայրական բոլոր հանրապետությունների պատվիրակությունները և մեծ թվով

սփյուռքահայեր: Հոբելյանական օրերին Հայաստանում էր գտնվում ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևը, որը և ընդարձակ ճառով հանդես եկավ Երևանում տեղի ունեցած հոբելյանական հանդիսավոր նիստում ու Սովետական Հայաստանի պետական գրողին ամրացրեց Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանը, որով նա դարձավ եռակի շքանշանակիր հանրապետություն: Դա Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության և մտավորականության անձնվեր աշխատանքի արժանի գնահատումն էր:

Սովետական Հայաստանի 50-ամյա հոբելյանը հանդիսավորությամբ նշվեց նաև հայկական սփյուռքում:

3. ՆՈՐ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ IX ՀՆԳԱՄՅԱԿՈՒՄ

ՍՄԿԿ XXIV համագումարը: IX հնգամյա պլանի ընդունումը

Կոմունիստական կուսակցության և ամբողջ սովետական ժողովրդի կյանքում նշանավոր իրադարձություն էր ՍՄԿԿ XXIV համագումարը, որը տեղի ունեցավ 1971 թ. գարնանը: Համագումարը

հաստատեց ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1971—1975 թվականների հնգամյա պլանի դիրեկտիվները, որոնցով սահմանվեցին երկրի տնտեսության զարգացման հիմնական ուղղությունները, նոր հրնգամյակի հեռանկարային խնդիրները: Այդ խնդիրները, հիրավի, վիթխարի էին: Իններորդ հնգամյա պլանը կարևոր էտապ էր սովետական հասարակության հետագա առաջընթացի, կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ամրապնդման գործում: «Հնգամյակի գլխավոր խնդիրն է, — ասված է դիրեկտիվներում, — ապահովել ժողովրդի կյանքի նյութական ու կուլտուրական մակարդակի նշանակալի վերելք սոցիալիստական արտադրության զարգացման արագ տեմպերի, նրա արդյունավետությունը բարձրացնելու, գիտատեխնիկական առաջադիմության և աշխատանքի արտադրողականության աճը արագացնելու հիման վրա»:

ՍՄԿԿ XXIV համագումարի նախօրյակին՝ 1971 թ. փետրվարին, տեղի էր ունեցել ՀԿԿ XXV համագումարը, որը հավանություն էր տրվել IX հնգամյակի դիրեկտիվներին, հանրագումարի էր բերել նախորդ հնգամյակում ձեռք բերած նվաճումները:

Սովետական Միության բոլոր ժողովուրդների հետ միասին, Սովետական Հայաստանի աշխատավորությունը ևս ալտիվորեն լծվեց նոր հնգամյակի կատարման մեծ ու պատվավոր գործին: Արդյունքները գոհացուցիչ էին: IX հնգամյակը ինչպես ամբողջ երկրի, այնպես էլ մեր հանրապետության համար նշանավորվեց էկոնոմիկայի նոր վերելքով, գիտության և մշակույթի բուռն ծաղկմամբ:

Հաջողութեամբ լուծվեցին IX հնգամյակի սոցիալ-տնտեսական հիմնական խնդիրները:

Հնգամյա պլանի կատարումը արդյունաբերության բնագավառում

Հայաստանի աշխատավորները, կենսագործելով ՍՄԿԿ XXIV համագումարի որոշումները, սոցիալիստական լայն մրցութուն ծավալեցին IX հնգամյա պլանը ժամկետից շուտ կատարելու համար:

1976 թ. հունվարին ՀԿԿ XXVI համագումարը ամփոփեց Հայկական ՍՍՀ IX հնգամյա պլանի կատարման արդյունքները: Հնգամյակում հանրապետության ազգային եկամուտն աճեց 46 տոկոսով, արդյունաբերական արտադրության ծավալն ավելացավ 45 տոկոսով: Զգալիորեն բարձրացավ աշխատանքի արտադրողականությունը: Հնգամյակի առաջին տարում արդյունաբերական արտադրանքի ամբողջ աճի 70 տոկոսը ստացվել էր աշխատանքի արտադրողականության բարձրացման հաշվին: Միայն մեկ տարում՝ 1971-ին, ժողովրդական տնտեսության մեջ ներդրվեց մոտ 15 հազար գյուտ և ռացիոնալիզատորական առաջարկություն:

Սովետական Հայաստանում իրացվեց 4,5 միլիարդ ռուբլու կապիտալ ներդրում: Կառուցվեցին և շահագործման հանձնվեցին 45 արդյունաբերական նոր ձեռնարկություններ և տասնյակ խոշոր արտադրամասեր: Թողարկվեց արտադրանքի ավելի քան 300 նոր տեսակ: Արդյունաբերական 500 արտադրատեսակներ արժանացան պետական որականիշի:

Արագ տեմպերով զարգացան մեքենաշինությունը և մետաղամշակությունը: Մեքենաշինության մեջ հատկապես աչքի ընկան սարքաշինության, ռադիո և էլեկտրոնային արդյունաբերությունը: Ուշադրավ է, որ եթե հնգամյակի վերջին տարում՝ 1975-ին, 1913 թվականի համեմատությամբ Սովետական Հայաստանում ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքը աճեց 267 անգամ, ապա մեքենաշինության և մետաղամշակման արտադրանքը աճեց 6432 անգամ, իսկ 1940 թ. համեմատությամբ՝ ավելի քան 417 անգամ: Զարգացան նոր ճյուղեր՝ միկրոկենսաբանական, բժշկական և այլն: Զգալի առաջընթաց ապրեցին նաև հանրապետության արդյունաբերության ավանդական ճյուղերը: ՍՄԿԿ XXIV համագումարի պահանջներին համապատասխան հատուկ ուշադրություն դարձվեց սպառման առարկաների արտադրությանը: Հնգամյակում բուռն թափով աճեց էներգետիկան:

Իններորդ հնգամյակում մեծացան Հրազդանի պետական շրջանային էլեկտրակայանի էներգետիկ կարողությունները, շարք

մտան զտված երկաթի արտադրության փորձնական-արդյունաբերական գործարանը Երևանում, Իջևանի «Բենտոնիտ» կոմբինատը, Չարենցավանի լիզինի արտադրության, Աբովյանի բիոքիմիական պատրաստուկների, «Արզնի» հանքային ջրերի գործարանները և այլն: Հնգամյակի վերջում հանրապետությունում կային ավելի քան 600 արդյունաբերական ձեռնարկություններ:

ՀԿԿ XXVI համագումարում նշվեց, IX հնգամյա պլանը ժամկետից շուտ ավարտեցին «Հայէլեկտրալույս» միավորումը, «էլեկտրոն» գործարանը, Քանաբեռի ալյումինի, Երևանի արհեստական ալմաստե գործիքների, Չարենցավանի գործիքաշինական և «Ցենտրոլիտ», Դիլիջանի «Իմպուլս», Կիրովականի գերձշգրիտ հաստոցների, կենինականի դարբնա-մամլակային սարքավորումների գործարանները, Երևանի «Գարուն» կարի արտադրական միավորումը, Իջևանի գորգագործական կոմբինատը և այլ ձեռնարկություններ: Դրանցից շատերը ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության կողմից պարգևատրվեցին շքանշաններով:

Հաջողություններ IX հնգամյակի տարիներին նշանակալի հաջողությամբ IX հնգամյակի տարիներին նշանակալի հաջողությամբ հասավ հանրապետության գյուղաբնագավառում տնտեսությունը: VIII հնգամյակի համեմատությամբ համախառն արտադրանքի միջին տարեկան ծավալը ավելացավ 21,9 տոկոսով: Է՛լ ավելի ամրապնդվեց ու հարստացավ գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան: Հնգամյակի ընթացքում առանձնահատուկ ուշադրություն դարձվեց հողերի միլիորացմանը: Կառուցվեցին մի շարք նոր ջրանցքներ, ընդարձակվեցին ոռոգման սխեմաները: 49 հազար հեկտարով ավելացան ոռոգելի հողատարածությունները:

IX հնգամյակում որոշակի հաջողություններ ձեռք բերվեցին նաև գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության, որոշ չափով նաև անասունների մթերատվության բարձրացման ուղղությամբ: «Մեզ չեն կարող շուրախացնել, — ասված է ՀԿԿ XXVI համագումարին տված ՀԿԿ Կենտկոմի հաշվետվության մեջ, — Անիի շրջանի դաշտավարների, Մասիսի բանջարաբույծների, Ախուրյանի ճակնդեղագործների, Արարատի խաղողագործների, Նոյեմբերյանի պտղաբույծների, Վարդենիսի ծխախոտագործների, Կալինինոյի անասնապահների և մի շարք այլ շրջանների շատ կոլտնտեսությունների ու սովխոզների առաջավոր կոլեկտիվների հաջողությունները»:

Հնգամյակի առաջին տարում գյուղատնտեսության բնագավառում ձեռք բերված հաջողությունների համար ՍՍՀՄ ԺՏՆՑ-ի գլխավոր կոմիտեն Սովետական Հայաստանին պարգևատրեց առաջին կարգի դիպլոմով:

Ժողովրդի կենսա-
մակարդակի բարձ-
րացումը

Ժողովրդական տնտեսության, գիտության ու տեխնիկայի զարգացման շնորհիվ մեծ առաջընթաց տեղի ունեցավ ժողովրդի նյութական ու կուլտուրական մակարդակի բարձրացման բնագավառում:

IX հնգամյակում մեկ շնչին ընկնող ռեալ եկամուտներն ավելացան ավելի քան 22 տոկոսով: Բանվորների ու ծառայողների միջին աշխատավարձն ավելացավ 12,8 տոկոսով, իսկ կոլտնտեսականների աշխատանքի վարձատրությունը՝ 18,4 տոկոսով: Մեծացավ ապրանքաշրջանառության ծավալը:

Իրագործվեց բնակարանային շինարարության խոշոր ծրագիր: Հանրապետությունում կառուցվեց և շահագործման հանձնվեց 6,5 միլիոն քառ. մ բնակելի տարածություն՝ կես միլիոն ավելի, քան VIII հնգամյակում: Էլ ավելի բարելավվեց ազգաբնակչության բուժսպասարկման գործը:

ՍՍՀՄ-ի կազմա-
վորման 50-ամյակը

Իններորդ հնգամյակի՝ երկրորդ տարվա վերջում լրացավ ՍՍՀՄ-ի կազմավորման 50 ամյակը: Այդ պանծալի տարեդարձը մեր բազմազգ երկրի բոլոր ժողովուրդների հետ միասին քաղաքական և աշխատանքային վիթխարի խանդավառության մթնոլորտում տոնեց նաև Սովետական Հայաստանի աշխատավորությունը: Եղբայրության այդ համաժողովրդական տոնը ամենուրեք նշանավորվում էր աշխատանքային նորանոր նրվածումներով: Ժողովուրդը իններորդ հնգամյակի ինտերնացիոնալ կառույցներ անվանեց Հայաստանի ատոմային էլեկտրակայանը, Արփա-Սևան ստորերկրյա ջրատարը, Տաթևի հիդրոէլեկտրակայանը, Հրազդանի լեռնաքիմիական կոմբինատը, ուր իրենց հայ եղբայրների հետ աշխատում են սովետական մոտ 40 ազգերի ու ազգությունների զավակներ:

Հանրապետության քաղաքներում ու գյուղերում տեղի էին ունենում հանդիսավոր նիստեր, ուր նշվում էր այն մեծ դերը, որ ունեցավ ՍՍՀՄ-ի կազմավորումը հայ ժողովրդի ծաղկման ու բարգավաճման գործում: Գեկտեմբերի 12-ին Երևանում բացվեց Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի հանդիսավոր նիստը, որը փայլուն կերպով ցուցադրեց մեր հայրենիքի ժողովուրդների անխախտ բարեկամությունը, Սովետական Հայաստանի աշխատավորների կուռ համախմբվածությունը հարազատ կոմունիստական կուսակցության, նրա լենինյան Կենտրոնական կոմիտեի շուրջը:

Հանդիսավոր նիստի մասնակիցները հսկայական խանդավառությամբ ընդունեցին ողջույնի նամակ՝ հասցեագրված ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեին, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությանը և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին: «Այս հիշարժան օրը, — ասված է նամակում, —

մենք, Սովետական Հայաստանի բոլոր կոմունիստների ու աշխատավորների անունից, ՍՄԿԿ լենինյան Կենտրոնական կոմիտեին հանդիսավոր կերպով հավաստիացնում ենք, որ այսուհետև ևս կրկնապատկված եռանդով կպայքարենք մեր կուսակցության գլխավոր գծի կենսագործման համար, սրբությամբ կպահպանենք ու կամրապնդենք մեր եղբայր ժողովուրդների ինտերնացիոնալ բարեկամությունը, բոլոր ուժերը կնվիրենք մեր մեծ հայրենիքի՝ ՍՍՀՄ-ի հզորության հետագա ամրապնդմանը»:

ՍՍՀՄ-ի կազմավորման կեսդարյա հոբելյանի պատվին նվիրված համամիութենական սոցիալիստական մրցության մեջ առավել բարձր արդյունքների հասնելու համար հանրապետության 50 ձեռնարկություններ, կոլտնտեսություններ, կազմակերպություններ և հիմնարկների կոլեկտիվներ պարգևատրվեցին ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի և ՀԱՄԿԽ-ի Հոբելյանական պատվո նշանով, 188 կոլեկտիվներ պարգևատրվեցին ՀԿԿ Կենտկոմի, ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի և ՀԱՄԽ-ի հոբելյանական պատվոգրերով:

Ի նշանավորումն ՍՍՀՄ-ի կազմավորման 50-ամյակի, ՍՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով հիմնվեց Ժողովուրդների բարեկամության շքանշան, որով ի թիվս ՍՍՀՄ բոլոր հանրապետությունների, պարգևատրվեց նաև մեր հանրապետությունը: Սովետական Հայաստանը դարձավ քառակի շքանշանակիր հանրապետություն:

Քաղաքների զարգացումը Սովետական Հայաստանում

Ժողովրդական տնտեսության ու մշակույթի անախընթաց զարգացման հետ միասին արագորեն աճեցին նաև Հայաստանի քաղաքները:

Հեղափոխությունից առաջ այժմյան Սովետական Հայաստանի տերիտորիայում կար ընդամենը չորս քաղաք՝ Երևան, Ալեքսանդրապոլ, Նոր Բայազետ և Գորիս: Սովետական իշխանության տարիներին քաղաքների և քաղաքատիպ ավանների թիվն զգալիորեն աճեց: Այժմ կա 24 քաղաք, 33 քաղաքատիպ ավան:

Աննախընթաց բուռն զարգացում ապրեց հինավուրց Երևանը՝ հանրապետության մայրաքաղաքը: Վերջին տասնամյակներում նա փոխվել է անճանաչելիորեն: Երևանը դարձել է Սովետական Միության տնտեսական ու մշակութային խոշորագույն կենտրոններից մեկը, լայն ճանաչում ստացել ամբողջ աշխարհում: Երևանի բուռն զարգացման մասին է վկայում նախ այն փաստը, որ սովետական իշխանության օրոք բուռն թափով աճել է բնակչության թիվը և ընդարձակվել տարածքը: Օրինակ, և՛ 1920 թվականին Երևանի բնակչությունը կազմում էր 30 հազար՝ 1830 թվականի համեմատությամբ աճելով միայն երեք անգամ, ապա 1978 թ. նոյեմբերի 29-ին Երևանն ուներ մեկ միլիոն բնակիչ՝ 58 տարում

աճելով ավելի քան 33 անգամ: Երևանում վերջին տասնհինգ տարում ստեղծվել են նոր քաղաք-թաղամասեր՝ Արաբկիրը, Աջափնյանկը, Նոր Նորքը, Ջեյթունը, Արարատյան զանգվածը և այլն:

Երևանը ծանր արդյունաբերության քաղաք է: Նրա ավելի քան 300 արդյունաբերական ձեռնարկություններ 1977 թ. տալիս էին հանրապետության արդյունաբերական արտադրանքի կեսից ավելին:

Երևանը մի լայնատարած շինարարական հրապարակ է, ուր գիշեր-ցերեկ լավում է կառուցվող քաղաքի հեքը: Հայ ճարտարապետներն ու շինարարները կերտել են հոյակապ անսամբլներ, լայն մայրուղիներ: Հին, կավածեփ հյուղակներով, նեղ, ծուռումուռ, փոշու մեջ կորած փողոցներով Երևանը այժմ դարձել է ժամանակակից, խոշոր, սոցիալիստական գեղեցիկ քաղաք: Բոլորին հիացմունք են պատճառում նրա շքեղ հրապարակները, լայնահուն պողոտաները, նորակառույց փողոցները, տուֆակերտ բազմահարկ շենքերը, գեղեցիկ պուրակներն ու զբոսայգիները, արհեստական լճակները, բազմաշիթ շատրվաններով ավազանները, սառնորակ ջրի ցայտաղբյուրները, արդյունաբերական ու մշակութային մոնումենտալ կոթողները: Երևանը հարուստ է բազմաթիվ տեսարժան վայրերով, և պատահական չէ, որ օտարերկրյա այցելուներն այսօրվա Երևանը համարում են հայ նոր ճարտարապետության բացօթյա ցուցահանդես:

Երևանի զարդն է կազմում Լենինի հրապարակը: «Երևանի Լենինի հրապարակը ճարտարապետական գլուխ գործոց է համաշխարհային չափանիշով, — գրել է ամերիկյան ականավոր նկարիչ, գրող, հասարակական գործիչ Ռոբուել Քենտը: — Եթե հազար բծախնդիր մասնագետ այսօր կազմելու լինեն աշխարհի յոթ հրաշալի հրապարակների ցուցակը, ապա Երևանյանը կմտնի դրա մեջ»:

1968 թ. հոկտեմբերին մեծ հանդիսավորությամբ տոնվեց Երևանի հիմնադրման 2750-ամյակը, որը խոշոր իրադարձություն էր հայ ժողովրդի կյանքում:

Բուռն թափով ծաղկեց Շիրակի զարդը՝ Լենինականը, որը հանրապետության արդյունաբերական երկրորդ խոշոր կենտրոնն է: Այստեղ գործում են ոչ միայն թեթև արդյունաբերության, այլև մեքենաշինական, սարքաշինական, էլեկտրատեխնիկական բազմաթիվ ձեռնարկություններ: Նա տալիս է հանրապետության տեքստիլ-տրիկոտաժի և գուլպեղենի արտադրանքի 90 0/0-ը: 1968 թվականին Լենինականն արդեն ամսական տալիս էր այնքան արտադրանք, որքան Հայաստանը 1913 թվականի ընթացքում: Մեծ աշխատանքներ են կատարվում 207 հազար բնակչություն ունեցող քաղաքի բարեկարգման ու գեղեցկացման ուղղությամբ: Բացվում են նոր փողոցներ ու պողոտաներ, հրապարակ-

ներ, կառուցվում են ճարտարապետական նոր հոյակապ կոթողներ: Քաղաքը մեծ նվաճումներ է ձեռք բերել նաև կուլտուրական շինարարության բնագավառում: Այստեղ գործում են ավելի քան 160 միջնակարգ ուսումնական հաստատություն, մանկավարժական ինստիտուտ, պոլիտեխնիկական ինստիտուտի մասնաճյուղ, գեոֆիզիկայի և ինժեներական սեյսմոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտ և այլն:

Կիրովականը, նախկին Ղարաբաղի սահման գյուղը, բարգավաճել և դարձել է Գուգարքի գեղեցկուհին՝ հանրապետության երկրորդ խոշոր քաղաքը, որը միաժամանակ հանրապետության մեծ քիմիայի կենտրոնն է: Այդ նորակերտ քաղաքում գործում են միութենական նշանակություն արտադրական ձեռնարկություններ: Կան գիտահետաուենցող արտադրական մասնավարժական ինստիտուտ և պոլիտեխնիկական ինստիտուտի մասնաճյուղը: Խոշոր աշխատանք է կատարվում քաղաքի ճարտարապետական ձևավորման ուղղությամբ: Կիրովականը քաղաքի ճարտարապետական ձևավորման բնակավայրերից մեկն է: Եթե 1897 թվականի մարդահամարի տվյալներով նրա բնակչության թիվը կազմում էր 3917 մարդ, ապա 1978 թ. վերջում նա արդեն ուներ 145 հազար բնակիչ:

Մեծ թափով զարգանում են նաև հանրապետության մյուս քաղաքները, հատկապես վերջին քսանամյակում կառուցվածները՝ Հրազդանը, Աբովյանը, Չարենցավանը, Քաջարանը:

4. ՄՄԿԿ XXV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԿԱՐԵՎՈՐ ԲՆԱԳԻԾ Է ԿՈՄՈՒՆԻՉՄԻ ԶԱՆԱՊԱՐԸՆ

ՄՄԿԿ XXV համազումարը: X հեղափոխության պահի հաստատումը

1976 թ. փետրվարի 24-ից մինչև մարտի 5-ը Մոսկվայում տեղի ունեցավ սովետական կոմունիստների մեծ ֆորումը՝ ՄՄԿԿ XXV համազումարը, որը խոշոր իրադարձություն էր մեր կուսակցության և ժողովրդի կյանքում:

Համազումարը քննարկեց ՄՄԿԿ Կենտկոմի հաշվետվությունը և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում հարցը, որի մասին զեկուցեց ՄՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար ընկեր Լ. Ի. Բրեժնևը, ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1976—1980 թվականների հիմնական ուղղությունները (զեկուցող՝ ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ ընկեր Ա. Ն. Կոսիգին) և այլ հարցեր:

Հնկ. Լ. Ի. Բրեժնեի խորապես բովանդակալից զեկուցման մեջ տրրվեց միջազգային իրազրույթյան և ՍՄԿԿ միջազգային գործունեության, մեր հայրենիքի սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման, մեր կուսակցության տնտեսական քաղաքականության, գաղափարազաստիարակչական աշխատանքների փայլուն վերլուծությունը: Նրանում շարադրվել է ՍՍՀՄ-ում կոմունիզմի հետագա կառուցման հոյակապ ծրագիրը:

ՍՄԿԿ XXV համագումարը միաձայն հաստատեց «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1976—1980 թվականների հիմնական ուղղությունները»: Համագումարը գտավ, որ X հնգամյակը նոր, կարևոր փուլ է կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման, հասարակական հարաբերությունների կատարելագործման և նոր մարդու ձևավորման, սոցիալիստական ապրելակերպի զարգացման գործում: Նոր հնգամյակը արդյունավետության ու որոկի հնգամյակ է—ահա համագումարի նշանաբանը. «Տասներորդ հնգամյակի գլխավոր խնդիրն է,—ասված է համագումարի որոշման մեջ,— հետևողականորեն իրականացնել ժողովրդի կյանքի նյութական և կուլտուրական մակարդակը բարձրացնելու կոմունիստական կուսակցության կուրսը՝ հանրային արտադրության զինամիկ ու համամասնական զարգացման և նրա արդյունավետության բարձրացման, գիտատեխնիկական առաջադիմության արագացման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, ժողովրդական տնտեսության բոլոր օղակներում աշխատանքի որակի ըստ ամենայնի բարելավման հիման վրա»¹:

Համագումարը որոշեց բարձրացնել միութենական հանրապետությունների զերն ու պատասխանատվությունը արտադրական և սոցիալ-կուլտուրական շինարարության հարցերի, ժողովրդական սպառման ապրանքների թողարկումն ավելացնելու, տեղական և ազգային առանձնահատկությունների հաշվառմամբ առևտուրը և բնակչությանը մատուցվող ծառայությունները ընդլայնելու, բնական, աշխատանքային և մյուս ռեսուրսները ավելի լրիվ օգտագործելու հարցերի լուծման բնագավառում:

Ելնելով բոլոր միութենական հանրապետություններում էկոնոմիկայի հետագա վերելքը ապահովելու սկզբունքից, համագումարը առանձին-առանձին հաստատեց այն հիմնական խնդիրները, որոնք պետք է իրականացվեն X հնգամյակում:

Հայկական ՍՍՀ-ում նախատեսվեց ազգային եկամուտը ավելացնել 36 տոկոսով, արդյունաբերական արտադրանքի ծավալը մեծացնել

43—47 տոկոսով: Զարկ տալ էլեկտրոնային, ռադիոտեխնիկական, էլեկտրատեխնիկական, հաստոցաշինական ու գործիքաշինական արդյունաբերության և սարքաշինության զարգացմանը: Համագումարի որոշման մեջ նշված էր՝ ապահովել էլեկտրաէներգետիկայի, գունավոր մետալուրգիայի, քիմիական, թեթև ու սննդի արդյունաբերության հետագա աճը: Ավարտել ատոմային էլեկտրակայանի առաջին հերթի և Մասիս—Նուռնուս երկաթուղագծի կառուցումը, արագացնել Իջևան—Հրազդան երկաթուղագծի կառուցումը:

Գյուղատնտեսության բնագավառում նախատեսվեց համախառն արտադրանքի տարեկան միջին ծավալը մեծացնել 22—25 տոկոսով: Ապահովել խաղողի, մրգի, եթերայուղային կուլտուրաների, անասնապահության արտադրանքի արտադրության աճը: Շահագործման հանձնել 20 հազար հեկտար ոռոգելի հողատարածություն, ջրաբերացնել 60 հազար հեկտար արտաավայր: Նախատեսվեց նաև աշխատանքներ կատարել Արարատյան դաշտավայրի աղուտները մշակովի դարձնելու ուղղությամբ: Էական տեղաշարժեր էին կատարվելու աշխատավորության կենսամակարդակի բարձրացման գործում: Խոշոր միջոցառումներ էին նախատեսվում մշակույթի ասպարեզում:

Հանրապետության առավել բուռն զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Միխատրների խորհրդի 1975 թ. ապրիլի 16-ի «Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության հետագա զարգացման միջոցառումների մասին» որոշումը: Այդ որոշումը մեր հանրապետության, հայ ժողովրդի բարօրության նկատմամբ ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի և նրա գլխավոր քարտուղար Լեոնիդ Իլյին Բրեժնեի ցուցաբերած հոգատարության վառ դրսևորումն է:

ՍՍՀՄ բոլոր եղբայրական հանրապետությունների աշխատավորների հետ միասին Սովետական Հայաստանի աշխատավորությունը մեծ հուանդով ու խանդավառությամբ լծվեց X հնգամյակի հոյակապ խնդիրների իրականացման գործին:

Տասներորդ հնգամյակի կատարման ընթացքը	Սովետական Հայաստանի աշխատավորները, կենսագործելով ՍՄԿԿ XXV և ՀԿԿ XXVI համագումարների պատմական որոշումները, նոր հաջողությունների հասան տասներորդ հնգամյակի առաջին երեք տարում:
---	--

1975 թ. համեմատությամբ 106 տոկոսով աճեց հնգամյակի առաջին տարվա՝ 1976 թ. ազգային եկամուտը, իսկ 1960 թ. համեմատությամբ՝ ավելի քան 3,6 անգամ: Կատարվել ու գերակատարվել են արդյունաբերության արտադրանքի իրացման ծավալի տարեկան պլանները:

¹ ՍՄԿԿ XXV համագումարի նյութերը, «Հայաստան» հրատ., 1976, էջ 246—247:

Արդյունաբերության, ինչպես նաև գյուղատնտեսության շատ առաջավորներ Հոկտեմբերյան հեղափոխության 60-ամյակի նախօրեին զեկույցներ տվեցին, որ ավարտել են իրենց տասներորդ հնգամյա պլանը: Յուրաքանչեւ է ժամանակակից տեխնիկական պահանջներին համապատասխանող ավելի քան 200 անուն արդյունաբերական նոր արտադրատեսակների արտադրությունը, 1600 արտադրատեսակ արժանացել էին պետական որականիշի: Հանրապետության էլեկտրաէներգիայի խոշորագույն հաջողություններից էր Անդրկովկասում միակ ատոմային էլեկտրակայանի առաջին էներգաբլոկի գործարկումը՝ 405 հազար կվտ հզորությամբ: Մեծ նվաճում ձեռք բերեցին հանրապետության շինարարները, տրանսպորտի, կապի սպասարկման ոլորտի աշխատողները:

Չգալի չափով բարձրացավ գյուղատնտեսական մթերքների արտադրությունը: Հացահատիկի բերքատվությունը մեկ հեկտարից կազմեց 19 ցենտներ, որը 21,8 տոկոսով ավելի է 9-րդ հնգամյակի տարեկան միջին բերքատվությունից: Ռեկորդային բերք աճեցրին նաև հանրապետության բանջարաբույծները, խաղողագործները, ճակնդեղագործները և գյուղի մյուս աշխատավորները:

Խոշոր աշխատանքներ կատարվեցին գյուղատնտեսության տեխնիկական զինվածության բնագավառում: 1928 թ. 166 տրակտորների և 27 կալիչների դիմաց 1978 թ. հանրապետության դաշտերում աշխատում էին ավելի քան 12 հազար տրակտոր, մոտ 1500 հացահատիկահամվաք կոմբայն, 14,7 հազար բեռնատար ավտոմեքենա, հազարավոր գյուղատնտեսական այլ մեքենաներ: Միայն 1976 թ. իրիգացիոն-մեխիորատիվ շինարարության մեջ ներդրվեց ավելի քան 6 միլիոն ուրլի: Թալինում, Եղվարդում, Սևանում, Զրառատում և այլ վայրերում կառուցվեցին անասնապահական հսկա համալիրներ, թռչնաֆաբրիկաներ:

Մեծ աշխատանքներ են կատարվում Արփա-Սևան հիդրոտեխնիկական թունելի շինարարությունն ավարտելու ուղղությամբ: Նրա գործարկումով զգալիորեն կբարելավվի հանրապետության ջրային տնտեսության դեմքը, կնպաստի Սևանի պրոբլեմի արագ լուծմանը: Մեծ հոկտեմբերի 60-ամյակի օրերին Շամշադինի շրջանում գործարկվեց Տաուշի հսկա ջրամբարը:

1978 թ. նոյեմբերին ՍՄԿԿ Կենտկոմը և ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը ընդունեցին ևս մեկ բացառիկ կարևոր որոշում՝ «Սևանա լճի բնական ռեսուրսների պահպանման և ռացիոնալ օգտագործման միջոցառումների մասին»: Այդ որոշմամբ կոմպլեքսային լուծում է ստանում Սևանի պրոբլեմը, այն դառնում է ընդհանուր միութենական նշանակություն ունեցող խնդիր, որի լուծումը իրականացվելու է խիստ գիտական հիմքի վրա: Նախատեսվում է Որոտան գետի վերին հոսանքից

200 միլիոն խորանարդ մետր ջուր մղել նախ Արփա գետը, իսկ այնուհետև Արփա-Սևան թունելով՝ Սևանա լիճ, որը կնպաստի հայրենի բնության այդ եզակի պարզևի՝ Հայաստանի պապուլյտ մարգարիտի բնական ռեսուրսների պահպանման գործին: 1979—1985 թթ. կառուցելու են մի շարք ջրամբարներ և ջրատնտեսական այլ կառույցներ:

Հանրապետության էկոնոմիկայի հետագա զարգացման գործում պատմական նշանակություն ունի ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի «Հայկական ՍՍՀ-ում օոոգելի տարածության հետագա զարգացման և արդյունավետության բարձրացման միջոցառումների մասին» որոշումը, որով նախատեսվում է կառուցել 16 խոշոր ջրամբար՝ մեկ միլիարդ իւմ ջրատարողությամբ:

Որոշակի նվաճումներ ձեռք բերվեցին ժողովրդի կենսամակարդակի բարձրացման ուղղությամբ: Բանվորների ու ծառայողների ամսական միջին դրամական աշխատավարձը 1976-ին հասավ 146 ուրլով՝ 1975 թվականի 139 ուրլու դիմաց: Շարունակվում էր ծավալվել բնակարանային շինարարությունը: Ավելի բարելավվեց բնակչության բուժսպասարկումը: 1978 թ. հանրապետությունում աշխատում էր ավելի քան 10 հազար 400 բժիշկ:

Ժողովրդի կենսամակարդակի անշեղ բարձրացման և առողջապահության գործի բարելավման մասին է վկայում նաև հանրապետության բնակչության արագ աճը: Եթե 1920 թ. Հայաստանի բնակչությունը կազմում է 720 հազար, 1959 թ. հունվարին՝ մեկ միլիոն 763 հազար, ապա 1978 թ. վերջին այն հասավ 3 միլիոնի: Դեռևս 1970 թվականին հանրապետության մայրաքաղաք Երևանում ապրում էր ավելի շատ մարդ, քան ամբողջ Հայաստանում 1920 թվականին: Բնակչության բնական աճով Հայաստանը միութենական հանրապետությունների մեջ գրավում է միջին տեղերից մեկը, իսկ ԱՄՆ-ին, Ֆրանսիային, Անգլիային գերազանցում է 5—7 անգամ:

Աշխատավորների առողջության պահպանման գործի նկատմամբ կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության հոգատարության վառ արտահայտություններից մեկը ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի նոր որոշումն է Հրազդանի լեռնաքիմիական կոմբինատի շինարարությունը դադարեցնելու մասին: Այդ որոշման կենսագործումով ժողովրդի կողմից սիրված մասսայական հանգստի և բուժման գոտիները կփրկվեն աղտոտման վտանգից, կպահպանվի բնությունը: Մայրաքաղաքի բնակիչների տրանսպորտային փոխադրումների պրոբլեմը լուծելու գործում խոշոր նշանակություն ունի ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1977 թ. հոկտեմբերի 6-ի որոշումը Երևան քաղաքում ստորգետնյա արագընթաց տրամվայի ստեղծված կառուցվածքնե-

րի բազայի հիման վրա մետրոպոլիտեն կառուցելու մասին: Նրա առաջին հերթի երկարությունը կազմելու է մոտ 12 կիլոմետր:

Սովետական Հայաստանի աշխատավորները այսպիսի փայլուն նըվաճումներով փակեցին տասներորդ հնգամյակի 3 տարին և հաջողությամբ շարունակում են շորորդ, վճռական տարվա առաջադրանքների կատարումը:

Հայրենիքը բարձր գնահատեց մեր հանրապետության հերոսական բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության, մտավորականության, բոլոր աշխատավորների անձնվեր աշխատանքը: Համամիութենական սոցիալիստական մրցույթյան մեջ առավելագույն արդյունքների հասնելու, արդյունավետությունը և որակը բարձրացնելու, ժողովրդատնտեսական պլանները կատարելու համար Սովետական Հայաստանին երեք անգամ անընդմեջ շնորհվեց ՄՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի, ՀԱՄԿ-ի և ՀամԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ կարմիր դրոշ:

Տասներորդ հնգամյակի երեք տարում առավել ցայտուն հաջողությունների հասնելու համար ՄՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի, ՀԱՄԿ-ի և ՀամԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ կարմիր դրոշի են արժանացել նաև Երևան (3 անգամ), Կիրովական (2 անգամ), Լենինական քաղաքները և Ախուրյանի, Նաիրիի, Հրազդանի (2 անգամ), Արարատի (2 անգամ) շրջանները, ինչպես նաև 54 աշխատանքային կոլեկտիվ:

Լենինական, Կիրովական, Դիլիջան քաղաքները և հանրապետության շատ շրջաններ, այդ թվում Աբովյան, Ղափան, Միսիան, Մասիս, Արարատ և այլն, ինչպես նաև մեծ թվով աշխատանքային կոլեկտիվներ արժանացան Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի, ՀԱՄԿ-ի և ՀԼԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ կարմիր դրոշին: Հանրապետության վեց աշխատավորներ արժանացան Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման, իսկ մեկ և կես հազարով ավելացավ ՍՍՀՄ շքանշաններով ու մեդալներով պարգևատրվածների թիվը:

ՍՍՀՄ և ՀՍՍՀ հոր
սահմանադրությու-
նների ընդունումը
1977 թ. Սովետական Հայաստանի աշխատավորությունը մեծ բերկրանքով տոնեց Հոկտեմբերյան հեղափոխության պանծալի 60-ամյակը: Փառապանծ հոբելյանի նախօրյակին՝ հոկտեմբերի 7-ին, ՍՍՀՄ Գերագույն սովետի յոթերորդ արտահերթ նստաշրջանը միահամուռ ընդունեց ՍՍՀՄ նոր սահմանադրությունը՝ զարգացած սոցիալիզմի մանիֆեստը: Այն լիովին արտացոլում է ՄՄԿԿ լենինյան քաղաքականության բարձրագույն նպատակը՝ «Ամեն ինչ մարդու բարօրության համար,

ամեն ինչ հանուն մարդու»: Նոր սահմանադրության ընդունումը մեր երկրում վերածվեց համաժողովրդական մեծ տոնի: ՍՍՀՄ բոլոր աշխատավորների հետ միասին հայ ժողովուրդը ևս խանդավառությամբ ընդունեց զարգացած սոցիալիզմի սահմանադրությունը:

ՍՍՀՄ նոր սահմանադրության հիման վրա կազմվեց և Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի արտակարգ յոթերորդ (1978 թ. ապրիլ) նըստաշրջանում հաստատվեց նաև Հայկական ՍՍՀ նոր սահմանադրությունը: Այն հիմնականում պահպանելով ու զարգացնելով նախորդ 2 սահմանադրությունների բնորոշ գծերը, պարունակում է նոր գրույթներ, որոնք արտացոլում են մեր կյանքում տեղի ունեցած արմատական փոփոխությունները:

Հայկական ՍՍՀ նոր սահմանադրությունը մեծ հոկտեմբերի գաղափարների, ժողովուրդների ինտերնացիոնալ անխախտ բարեկամության, ժողովրդապետության սկզբունքների հաղթանակի վառ վկայությունն է: Նոր սահմանադրությունը, — Գերագույն սովետի նստաշրջանում ասաց Հայկական ՍՍՀ դիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանը, — ապահովում է մեր ժողովրդի գոյության կարևորագույն պայմանը՝ անխախտ դաշինքը սովետական ժողովուրդների միասնական ընտանիքի հետ:

1978 թ. նոյեմբերին մեծ հոկտեմբերի ծնունդ Սովետական Հայաստանը 58 տարեկան էր դարձել: Պատմության համար զա շնչին ժամանակաշրջան է, սակայն անցնելով բազմադարյան պատմության քառուղիներով, լենինյան լույսով ազատագրված հայ ժողովուրդն այդ կարճ ժամանակահատվածում աննախընթաց բարձունքների հասավ:

Հեթաթախին փյունիկ թռչունի պես նա վեր հանեց մոխիրներից, ֆանտաստիկական թռիչք կատարեց կործանման եզրին հասած օրհասական վիճակից՝ ղեպի նոր, լուսավոր կյանք, սովի և մահվան ճիրաններից, սղբի և որբի հայրենիքից՝ ղեպի ծաղկող սոցիալիստական հանրապետություն:

Հիրավի, կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության հետևողական կենսագործման շնորհիվ Սովետական Հայաստանը հասավ սոցիալ-տնտեսական ու հոգևոր կյանքի բուռն բարգավաճմանն ու ծաղկմանը, դարձավ զարգացող բազմաճյուղ արդյունաբերության, սոցիալիստական գյուղատնտեսության և բարձր մշակույթի երկիր: Բավական է ասել, որ 1920 թ. համեմատությամբ հանրապետության արդյունաբերության արտադրանքի ծավալը 1977 թ. աճեց 307 անգամ: 1971—1976 թթ. հանրապետությունում թողարկվեց արդյունաբերական արտադրանքի մոտ 500 նոր տեսակներ: Ուշագրավ է, որ եթե Հայաստանը նախասովետական տարիներին ներմուծում էր թել,

ասեզ, մեխ, ապա այժմ նրա արդյունաբերության 180 արտադրատեսակներ արտահանվում են աշխարհի ավելի քան 80 երկրներ, այդ թվում այնպիսի դարգացած կապիտալիստական երկրներ, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան և այլն: Հանրապետության գյուղատնտեսության համախառն արտադրանքը 1913 թ. համեմատության մեջ է մոտ 7 անգամ: 1977 թ. Հայաստանի արդյունաբերությունը միայն մեկ օրում թողարկում էր այնքան արտադրանք, որքան թողարկվել է ամբողջ 1913 թվականին: Դեռևս 1970 թվականին 8 անգամ ավելի մետաղահատ հաստոցներ էր արտադրվում, քան ամբողջ ցարական Ռուսաստանը արտադրել է 1913 թվականին: Այժմ հանրապետությունում գործում են մոտ 700 արդյունաբերական ձեռնարկություններ:

Սովետական Հայաստանը միութենական հանրապետություններից ամենափոքրն է: Նրա տերիտորիան մոտ 30 հազար քառ. կմ է, որը կազմում է Միության ամբողջ տարածքի ընդամենը 0,13 տոկոսը, իսկ բնակչությունը՝ ՍՍՀՄ բնակչության ընդհանուր թվի 1,1 տոկոսը: Չնայած դրան, Սովետական Հայաստանն ունի իր սրբազան տեղն ու կշիռը ՍՍՀՄ տրանսպորտային կյանքում: Նա միութենական հանրապետությունների մեջ առաջավոր տեղ է զբաղում արդյունաբերական արտադրանքի մի շարք տեսակների գծով (գինեբատոններ, հաստոցներ, լուսատեխնիկական սարքավորումներ, պղինձ, կոնյակ և այլն): Մեր հանրապետության ճշգրիտ և զերճշգրիտ հաստոցները կազմում են ՍՍՀՄ արտադրության 37 տոկոսը և հանրապետությունն առաջին տեղն է զբաղում Միության մեջ:

X հնգամյակում էլ ավելի ուժեղացավ ՍՍՀՄ ժողովուրդների միջև եղբայրական համագործակցությունն ու փոխօգնությունը: Հայաստանի ատոմակայանում ձեռք ձեռքի տված աշխատում են ՍՍՀՄ 26 ազգությունների զավակներ: Իր հերթին Սովետական Հայաստանի աշխատավորությունը շարունակում է ակտիվ մասնակցություն ունենալ ՍՍՀՄ մեծ կառույցներին, ինչպես, օրինակ, դարի մեծ կառույց ԲԱՄ-ին:

1978 թ. հոկտեմբերին մեծ շուքով ու հանդիսավորությամբ տոնվեց Արևելյան Հայաստանի Ռուսաստանի կազմի մեջ մտնելու 150-ամյակը: Այն վերածվեց ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության, ռուս ժողովրդի նկատմամբ հայ ժողովրդի անսահման սիրո և երախտագիտության մեծ ցույցի: Է՛լ ավելի ցայտունորեն դրսևորվեց հայ ժողովրդի խոր համոզմունքը այն մասին, որ իր պատմական ճակատագրի մեջ կատարված այդ շրջադարձը վիթխարի առաջադիմական նշանակություն ունեցող իրադարձություն էր, որը հետագայում հայ ժողովրդի մի մեծ

հատվածին՝ արևելահայությանը հանդեցրեց ազգային և սոցիալական ազատագրության:

Հոկտեմբերի 14-ին մեծ հոբելյանի առթիվ տեղի ունեցավ Հայաստանի կոմկուսի Կենտրոնական կոմիտեի և Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի հանդիսավոր նիստ, որտեղ ղեկուցումով հանդես եկավ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Կ. Գեմիրձյանը: Հանդիսավոր նիստում հրապարակվեց ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը տնտեսական և կուլտուրական շինարարության ասպարեզում ձեռք բերած հաջողությունների համար և ի նշանավորումն Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյակի, Սովետական Հայաստանը Լեհիսի երրորդ շքանշանով պարգևատրելու մասին: Սովետական Հայաստանը դարձավ հնգակի շքանշանակիր հանրապետություն:

Մեծ են հայ ժողովրդի ձեռք բերած նվաճումները, բայց առավել հրապիրչ է նրա ապագան, առավել ոգևորիչ են նրա զարգացման հեռանկարները:

XXXVII Գ Լ Ո Ի Ն

ՍՈՎԵՏԱՀՍՅ ՄՇԱԿՈՒՅՓՂ ԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Ժողովրդական կրթությունը

Պատերազմը ոչ միայն ծանր հարված հասցրեց մեր երկրի ժողովրդական տնտեսությանը, այլև սովետական մշակույթին: Հայրենական պատերազմից հետո սովետական ժողովուրդը ձեռնամուխ եղավ ինչպես ժողովրդական տնտեսության վերականգնման, այնպես էլ կուլտուրական շինարարության ծավալման գործին: Չորրորդ և հինգերորդ հնգամյակների ընթացքում ՍՍՀՄ-ում վերականգնվեցին և կառուցվեցին ավելի քան 30 հազար դպրոցներ, բացվեցին ավելի քան 160 բարձրագույն ուսումնական հաստատություններ, հիմնվեցին գիտահետազոտական հարչուրավոր նոր ինստիտուտներ:

Նտպատերազմյան տարիներին ժողովրդական կրթության գործը նոր թափ ստացավ նաև Սովետական Հայաստանում: Անշեղորեն կատարելով կուսակցության ու կառավարության որոշումները, ժողովրդական կրթության օրգանները չորրորդ հնգամյակի վերջերից սկսեցին հաջողությամբ իրագործել ընդհանուր պարտադիր յոթնամյա կրթությունը գյուղում և նախապատրաստել ընդհանուր միջնակարգ կրթության անցումը քաղաքում:

1946—1958 թվականներին Հայաստանում կառուցվել է 152 նոր դպրոցական շենք: Չորրորդ հնգամյակի վերջում՝ 1950—1951 ուսումնական տարում, Սովետական Հայաստանում գործում էր հանրակրթական

բոլոր տեսակի 1405 դպրոց, 319 հազար սովորողով: Հետագայում դրավրոցական ցանցն էլ ավելի ընդարձակվեց:

Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը հսկայական կարևորություն էին տալիս բանվոր և գյուղացի երիտասարդության ուսուցման գործին: Նրանց համար դպրոցներ բացվեցին դեռևս Հայրենական մեծ պատերազմի վերջերին: Այնուհետև զգալի աշխատանք կատարվեց բաներիտ և գյուղերիտ դպրոցների ցանցի ընդարձակման ուղղությամբ, որտեղ առանց արտադրությունից կտրվելու սովորում էին հազարավոր երիտասարդներ: Սկզբնական շրջանում այդ դպրոցներում սովորողների մեծ մասը նրանք էին, ովքեր Հայրենական մեծ պատերազմի պատճառով ժամանակավորապես ընդհատել էին իրենց ուսումը: 1957—1958 ուսումնական տարում Հայաստանում գործում էին 82 բաներիտ և 111 գյուղերիտ դպրոցներ՝ մոտ 16 հազար սովորողներով: Զգալիորեն աճեց նաև տեխնիկումների և այլ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների թիվը: Հինգերորդ հնգամյակի վերջում այդ հաստատությունների թիվը հասավ 45-ի, իսկ սովորողների թիվը 17 հազարի՝ երկու անգամ ավելի, քան 1940 թվականին:

Մեծ աշխատանք կատարվեց դպրոցները որակյալ մանկավարժական կազմերով ապահովելու ուղղությամբ: Մանկավարժական կազմեր էին պատրաստում հանրապետության մանկավարժական ինստիտուտները, պետական համալսարանը, մանկավարժական ուսումնարանները և այլ ուսումնական հաստատություններ:

Վերջին տասնամյակներում նոր, ավելի բարձր հիմքերի վրա դրվեց ժողովրդական կրթության գործը: Այդ տեսակետից կարևոր նշանակություն ունեցան կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության որոշումները՝ կյանքի հետ դպրոցի կապի ամրապնդման, կրթության սիստեմի հետագա զարգացման մասին: Այդ որոշումներով սովետական դպրոցը ոտք դրեց իր զարգացման նոր փուլը:

Ավելի ընդարձակվեց դպրոցական ցանցը: 1977—1978 ուսումնական տարում հանրապետության բոլոր տեսակի հանրակրթական 1522 դպրոցներում սովորում էր 631 հազար աշակերտ: Հիմնականում ավարտվեց անցումն ընդհանուր միջնակարգ կրթության: 65 միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորում էր 54,8 հազար մարդ: 43 հազար պատանիներ ու աղջիկներ սովորում էին պրոֆ-տեխնիկական ուսումնարաններում:

1977—1978 ուսումնական տարում հանրապետության հանրակրթական դպրոցներում աշխատում էր 40,8 հազար ուսուցիչ՝ 1914—1915 ուսումնական տարվա 1146-ի դիմաց: Սովետական ուսուցչությունը վա-

յելում է ժողովրդի սերն ու հարգանքը: Կուսակցությունը և կառավարությունը բարձր են գնահատում ուսուցչի շնորհակալ աշխատանքը: Ավելի քան 1800 ուսուցիչներ արժանացել են Հայկական ՍՍՀ վաստակավոր ուսուցչի կոչման, ավելի քան երկու հազարը պարգևատրվել են կառավարական շքանշաններով ու մեդալներով, մեծ թվով ուսուցիչներ ընտրվել են աշխատավորների դեպուտատների տեղական, քաղաքային սովետներում, մի քանիսը՝ Հայկական ՍՍՀ և ՍՍՀՄ Գերագույն սովետներում:

Բարձրագույն դպրոցի նուպատերազմյան տարիներին աճեց նաև բուցակների ընդարձակումը հական ցանցը: 1944—1948 թթ. Երևանում բացվեցին մի շարք նոր բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ թատերական, գեղարվեստական, ֆիզիկուլտուրայի և օտար լեզուների ինստիտուտները: 1950—1951 ուսումնական տարում հանրապետությունում գործում էր 15 բուհ՝ 15 հազար սովորողներով: Բացի այդ, մեծ թվով ուսանողներ սովորում էին նաև ՍՍՀՄ մի քանի բուհերի՝ Երևանում գործող մասնաճյուղերում (առևտրի, տրանսպորտի և այլ մասնագիտությունների գծով): Սակայն հետագայում նպատակահարմար համարվեց միավորել մի շարք բուհեր, որի հետևանքով հանրապետության բուհերի թիվը նվազեց: 1958—1959 ուսումնական տարում նրանց թիվը հասավ 11-ի, բայց ուսանողների թիվն աճեց, հասնելով մոտ 20 հազարի:

Տարեցտարի ավելանում է բուհերի շրջանավարտների թիվը, որոնք հաջողությամբ աշխատում են հանրապետության ժողովրդական տնտեսության ու մշակույթի տարբեր ճյուղերում: Միայն տասներորդ հնգամյակի առաջին տարում՝ 1978-ին հանրապետության բուհերը երկրին տվեցին 10 հազար մասնագետ:

Նուպատերազմյան տարիներին հանրապետության բարձրագույն կրթության ասպարեզում շարունակում է մեծ դեր խաղալ Երևանի համալսարանը, որը ՍՍՀՄ խոշորագույն բարձրագույն ուսումնական հաստատություններից մեկն է: 1976—1977 ուսումնական տարում համալսարանում սովորում էր ավելի քան 7,5 հազար ուսանող: Պետական համալսարանը ոչ միայն որակյալ կազմեր պատրաստելու խոշոր դարբնոց է, այլ գիտական մարի աչքի ընկնող կենտրոն: Սովետական Հայաստանի առաջնակարգ բուհերից են նաև Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտը, որտեղ սովորում են ավելի քան 20 հազար ուսանող, և Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտը, ուր սովորում են ավելի քան 5,5 հազար ուսանող, բժշկական, գյուղատնտեսական ինստիտուտները, պետական կոնսերվատորիան և այլն: 1975 թ. սկսեց գործել ժողովրդական տնտեսության ինստիտուտը:

Մեծ չափով աճեց բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների թիվը հատկապես վերջին երկու տասնամյակներում: 1977—1978 ուսումնական տարում հանրապետության՝ 13 բուհերում սովորում էր 56,4 հազար ուսանող: Գեոևս յոթնամյակի առաջին տարիներին Սովետական Հայաստանը բարձրագույն կրթության մակարդակով զգալիորեն առաջ էր անցել կապիտալիստական շատ երկրներից: 1976—1977 ուս. տարում Սովետական Հայաստանում յուրաքանչյուր 10 հազար բնակչին ընկնում էր 191 ուսանող, մինչդեռ Իրանում՝ 37, Թուրքիայում՝ 49, ԳՖՀ-ում՝ 70, Անգլիայում՝ 90, Իտալիայում 120 ուսանող: Հայկական ՍՍՀ-ում յուրաքանչյուր երրորդ քաղաքացին սովորում է ուսումնական որևէ հաստատությունում: Սովետական Հայաստանը 10 հազար բնակչին ընկնող սովորողների թվով աշխարհում զբաղում է առաջին տեղերից մեկը:

Մեծ թվով հայ երիտասարդներ սովորում և ավարտում են ՍՍՀՄ այլ բուհեր: Հայրենական պատերազմից հետո՝ վերջին 35 տարում, միայն Լոմոնոսովի անվան պետական համալսարանն ավարտել են ավելի քան 2000 հոգի:

Ուշագրավ է, որ եթե նախասովետական Հայաստանում բարձրագույն կրթությամբ մասնագետների թիվը մեկ հարյուրից չէր անցնում, ապա 1978 թ. վերջում հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ աշխատում էր բարձրագույն կրթություն ունեցող 147 հազար մարդ:

Հանրապետության բուհերում սովորում են արտասահմանից, այդ թվում ԱՄՆ-ից, Կանադայից, Ֆրանսիայից, Եգիպտոսից, Լիբանանից, Վիետնամից և այլ երկրներից եկած շուրջ 500 երիտասարդներ:

Գիտության զարգացումը

Նստապետերազմյան տարիներին սովետական գիտությունը ձեռք բերեց նոր, հոյակապ նվաճումներ: Սովետական գիտության զարգացման գործում որոշակի ներդրում կատարեցին նաև հայ գիտնականները:

Գիտահետազոտական մեծ աշխատանքներ են կատարվում առանձնապես Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայում, որը 1977 թ. ուներ 43 իսկական անդամ, 54 թղթակից-անդամ, 3 օտարերկրյա և 4 պատվավոր անդամ: 1978 թվականին հանրապետությունում գործում էին ավելի քան հարյուր գիտահետազոտական հիմնարկներ: Այդ հիմնարկներում և բուհերում զբաղված էր 17 հազար 7 հարյուր գիտաշխատող: Շատ հայ գիտնականներ համաշխարհային ճանաչման են արժանացել:

Տիեզերքի հետազոտության ասպարեզում Վ. Համբարձումյանի ղեկավարությամբ կարևոր աշխատանք է կատարում Բյուրականի աստղադիտարանի կոլեկտիվը: Գիտնականները հատկապես մեծ արդյունքների

հասնան գալակտիկաների ուսումնասիրության բնագավառում: Բյուրականի աստղադիտարանը զարձեղ է աստղաֆիզիկայի համաշխարհային խոշոր կենտրոններից մեկը: 1967 թվականին աստղադիտարանը, առաջինը Սովետական Միության բոլոր աստղադիտարանների մեջ, պարզեց ավարտից կենսի շքանշանով: Վերջին երկու տասնամյակում ավելի մեծացավ ակադեմիայի աստղաֆիզիկոս Վ. Համբարձումյանի հոշակնամբողջ աշխարհում: Նա ընտրվել է աշխարհի 40 երկրների ակադեմիաների պատվավոր անդամ և համալսարանների պատվավոր դոկտոր: 1961 թվականին Վ. Համբարձումյանն ԱՄՆ-ում ընտրվեց Միջազգային աստղագիտական միության պրեզիդենտ, իսկ 1968 թվականին Փարիզում ընտրվեց Գիտական միությունների միջազգային խորհրդի պրեզիդենտ: 1968 թվականին անվանի գիտնականն արժանացավ սոցիալիստական աշխատանքի հերոսի, իսկ մեկ տասնամյակ հետո՝ կրկնակի հերոսի կոչման:

Կոսմիկական ճանապարհների հետազոտման գծով գիտական փայլուն արդյունքների հասավ Ալիխանյան եղբայրների ղեկավարությամբ Արագածի զագաթին աշխատող ֆիզիկոսների կոլեկտիվը: 40-ական թվականների վերջերին ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների բնագավառում աչքի ընկնող ներդրում կատարեց երիտասարդ տաղանդավոր գիտնական Սերգեյ Մերգելյանը, որն ավարտել է Երևանի պետական համալսարանը: Նա 1949 թվականին կարողացավ լուծել ժամանակակից մաթեմատիկայի դժվարին և մինչ այդ չլուծված մի շարք խնդիրներ, որի համար Մոսկվայի մաթեմատիկական ինստիտուտում նրան շնորհվեց գիտությունների դոկտորի գիտական աստիճան և պրոֆեսորի կոչում: Այդ ժամանակ նա Սովետական Միության ամենաերիտասարդ պրոֆեսորն էր: Ֆունկցիաների կոնստրուկտիվ տեսության ասպարեզում կատարած աշխատանքների համար 1952 թվականին նրան շնորհվեց պետական մրցանակ: 1953 թվականին 25-ամյա գիտնականն ընտրվեց ՍՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ, իսկ երեք տարի հետո՝ Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս:

Վերջին տասնամյակում մեծ աշխատանք կատարվեց մաթեմատիկական գիտությունների ասպարեզում, հատկապես անալիտիկ ֆունկցիաների տեսության մշակման ուղղությամբ: Զգալի հաջողություններ ձեռք բերվեցին կիրառական ֆիզիկայի բնագավառում: Ակադեմիայում մեծ ուշադրություն է դարձվում հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացմանը նպաստող գիտության այնպիսի ուղղություններին, ինչպիսիք են ռադիոֆիզիկան, կիսահաղորդիչների էլեկտրոնիկան, պոլիմերների ֆիզիկան և քվանտային օպտիկան: 1967 թ. նոյեմբերի սկզբներին Երևանում գործարկվեց 6 միլիարդ էլեկտրոն-վոլտ հզորու-

թյան էլեկտրոնային օղակաձև արագացուցիչը, որը Սովետական Միությանում ամենախոշորն էր, իսկ աշխարհում այդ տիպի 3 խոշորագույն արագացուցիչներից մեկը: Այն սովետական գիտատեխնիկական մտքի վիթխարի թռիչքի վառ վկայությունն է:

Սովետական Հայաստանը դարձել է հաշվողական տեխնիկայի արտադրության և կիրառման գծով Սովետական Միության ամենախոշոր կենտրոններից մեկը: 1956 թ. Հայաստանում հիմնադրվեց մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ: Երեք տարի հետո կազմակերպվեց Երևանի մաթեմատիկական հաշվիչ մեքենաների «էլեկտրոն» գործարանը: Հայկական առաջին հաշվիչ մեքենան «Արագած»-ն էր: Շուտով ՍՍՀՄ մի շարք քաղաքներում սկսեցին արտադրվել հայ գիտնականների ստեղծած երրորդ սերնդի հաշվիչ մեքենաներ՝ «Նաիրի» մակնիշով, որն արժանացել է համաշխարհային ճանաչման:

«Նաիրի» հաշվիչ մեքենաների ընտանիքի մշակման և ստեղծման համար ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշմամբ 1971 թ. ՍՍՀՄ պետական մրցանակներ շնորհվեցին 9 մարդու, այդ թվում մաթեմատիկական մեքենաների ինստիտուտի գիրեկտոր Ֆադեյ Սարգսյանին (այժմ Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ):

Հանրապետության գիտնականներն իրենց ավանդն են մուծել նաև տիեզերքի հետազոտման բնագավառում: Նրանք ստեղծել են եզակի աստղադիտարան, որը տեղադրվել է «Սալյուտ-1» առաջին սովետական ուղեծրային կայանում, իսկ այնուհետև «Սոյուզ-13» տիեզերանավում:

Նշանակալի նվաճումներ ձեռք բերվեցին երկրաբանության, բիոքիմիայի, օրգանական և նուրբ-օրգանական քիմիայի, բուսաբանության, ագրոքիմիայի բնագավառում:

Զգալի աշխատանք է կատարվել նաև հասարակական գիտությունների բնագավառում: ՀՍՍՀ գիտությունների ակադեմիան վաղուց դարձել է հայագիտության ճանաչված կենտրոն ամբողջ աշխարհում: Ետպատերազմյան տարիներին հրատարակվել են բազմաթիվ արժեքավոր աշխատություններ հայ ժողովրդի պատմության, լեզվի, գրականության, արվեստի, հայ փիլիսոփայական և տնտեսագիտական մտքի զարգացման պատմության վերաբերյալ:

Հայագիտության զարգացմանը բացառիկ ծառայություններ է մատուցում Երևանի Մատենադարանը՝ հայ դարավոր մշակույթի հարուստ գանձարանը: 1959 թվականին շահագործման հանձնվեց Մատենադարանի նորակառույց շենքը: 1962 թվականին Մատենադարանը կոչվեց հայ գրերի ստեղծող և ակադեմիայի գաղտնի հիմնադիր Մեսրոպ Մաշտոցի անվամբ, որի ծննդյան 1600-ամյակը նշվեց ամբողջ Միության մեջ, վերածվելով սոցիալիստական մշակույթի համաժողովրդական տոնի:

Գիտահետազոտական լայն գործունեություն են ծավալել նաև հանրապետության բուհերը: Գիտությունը զարգանում է ոչ միայն մայրաքաղաքում: Գիտական կենտրոններ կան Լենինականում, Կիրովականում, Գորիսում, Աշտարակում և այլ քաղաքներում ու շրջաններում:

Տարեցտարի ընդլայնվում են Հայաստանի գիտնականների միջազգային կապերը: Նրանք գործարար կապի մեջ են աշխարհի գրեթե բոլոր խոշոր գիտական հիմնարկների հետ: Գիտությունների ակադեմիայի Բյուրականի աստղադիտարանը գիտական կապեր է հաստատել աշխարհի 46 երկրների աստղադիտարանների հետ: Միայն 9-րդ հնգամյակի տարիներին Հայկական ՍՍՀ ԳԱ 340 գիտնականներ եղել են արտասահմանյան գործուղումների մեջ: Այդ նույն տարիներին ավելի քան հազար օտարերկրյա գիտնականներ են այցելել Հայաստան՝ գիտության տարբեր բնագավառներում կատարվող աշխատանքներին ծանոթանալու համար: «Եթե 50 տարի առաջ հայ ժողովուրդը գտնվում էր ֆիզիկական բնաջնջման եզրին, — գրել է ԱՄՆ-ի պրոֆեսոր Ս. Լիվինգստոնը, — ապա այժմ մենք մեր երկու լավագույն դոկտոր ֆիզիկոսների 6 ամսով ուղարկում ենք Երևան, որպեսզի այնտեղ սովորեն տարրական մասնիկների հետազոտման մեզ հետաբերող մի քանի մեթոդներ»:

Վերջին տարիներում Հայաստանն ավելի ու ավելի է դարձել համամիութենական ու միջազգային գիտաժողովների վայր: Միայն 1973—1975 թթ. Սովետական Հայաստանում անցկացվել են այդպիսի մոտ 10 նստաշրջաններ, կոնֆերանսներ, սիմպոզիումներ, խորհրդակցություններ, համագումարներ: Մի շարք հայ գիտնականների աշխատություններ թարգմանվել և հրատարակվել են արտասահմանյան երկրներում:

Սովետական և համաշխարհային գիտության մեջ կարևոր ներդրում ունեն ՍՍՀՄ ԳԱ իսկական և թղթակից-անդամներ Լևոն և Հովսեփ Օրբելիները, Վիկտոր Համբարձումյանը, Հովհաննես Կնունյանցը, Էդրաս Հասրաթյանը, Խաչատուր Կոշտոյանցը, Նորայր Սիսակյանը, Անուշավան Արզումանյանը, Հովհաննես Իսակովը, Արտեմ Միկոյանը և ուրիշներ:

Ստեղծագործական նոր վերելք ապրեց սովետահայ գրականությունը: Ետպատերազմյան տարիներին նրա զարգացմանը մեծ ծառայություններ մատուցեց հայ պոեզիայի խոշորագույն վարպետ Ավ. Իսահակյանը, որը մինչև իր կյանքի վերջը (1957 թվականը) Հայաստանի սովետական գրողների միության նախագահն էր:

ՀԿԿ 17-րդ համագումարից հետո հանրապետությունում մեծ աշ-

խատանք կատարվեց հայ գրական ժառանգության օգտագործման հարցում թույլ տրված սխալներն ուղղելու համար: Վերահրատարակվեցին անցյալ դարի հայ ականավոր գրողներ Բաֆֆու և Ռ. Պատկանյանի, ինչպես և սովետահայ գրականության տաղանդավոր ներկայացուցիչներ Ն. Զարենցի և Ա. Բակունցի ստեղծագործությունները: Լույս տեսան նաև արևմտահայ խոշորագույն գրողներ Հ. Պարոնյանի, Գր. Զոհրապի, Գ. Վարուժանի, Ռ. Սևակի, Սիամանթոյի և ուրիշների երկերը:

Նտպատերազմյան ժամանակաշրջանում սովետահայ գրականությունը հարստացավ նոր անուններով, հանդես եկան նոր գրողներ, որոնք որոշակի տեղ գրավեցին թե՛ արձակուրդ և թե՛ պոեզիայում: Սովետահայ արձակագիրներից շատերը Հայրենական պատերազմի թեմաներով գրեցին ծավալուն և արժեքավոր ստեղծագործություններ: Դրանցից են Հր. Քոչարի «Մեծ տան դավակները», Սերո Խանդավազի «Մեր գնդի մարդիկ» վեպերը:

Մի շարք վեպերում և պատմվածքներում արտացոլված են ետպատերազմյան խաղաղ շինարարական աշխատանքը, սովետական ժողովրդի հերոսական առօրյան:

Այդ ժամանակաշրջանի սովետահայ գրականության զարգացումը թեև նշանավորվեց վճռական շրջադարձով դեպի արդիականության հիմնական խնդիրները, սակայն մեր ժողովրդի պատմական անցյալը շարունակում էր մնալ գրականության հիմնական թեմաներից մեկը: Շարունակելով հայ պատմափյուզողության լավագույն ավանդույթները, ականավոր գրող Գ. Գեմիրճյանը եռանդուն կերպով աշխատում էր «Մեսրոպ Մաշտոց» նոր պատմավեպի վրա, որը, սակայն, անավարտ մնաց հեղինակի մահվան պատճառով: Պատմական թեմաներով ստեղծված արժեքավոր գործերից են Ստ. Զորյանի, Մ. Արազու, Ս. Խանդավազյանի վեպերը:

Նտպատերազմյան տարիներին սովետահայ պոեզիան ևս հարստացավ նոր երկերով: Հրատարակվեցին Ն. Զարյանի, Գ. Մարյանի, Վ. Նորենցի, Հ. Շիրազի, Ս. Կապուտիկյանի, Հ. Սահյանի, Պ. Սևակի, Գ. Բորյանի, Գ. Էմինի, Վ. Դավթյանի և ուրիշների ստեղծագործությունները:

Մեծ են սովետահայ գրամատուրգիայի նվաճումները: Հատկապես նշանակալից է այն երևույթը, որ սովետահայ գրամատուրգիան լուրջ շրջադարձ կատարեց դեպի արդիականությունը:

Հայ գրականությանն ու արվեստին ավելի զարկ տալու նպատակով Հայկական ՍՄ Մինիստրների խորհրդի որոշմամբ 1965 թվականին սահմանվեց Հայկական ՍՄ պետական մրցանակ: Տարբեր տարիներին գրողներից Հայկական ՍՄ պետական մրցանակի դափնեկիրներ դարձան Ն. Զարյանը, Հր. Քոչարը (եռմահու), Պ. Սևակը, Հ. Շիր-

աղը, Հ. Սահյանը, Վ. Դավթյանը, Ս. Խանդավազյանը և ուրիշներ: ՍՄՄ պետական մրցանակի պատվին են արժանացել Ավ. Իսահակյանը, Գ. Էմինը, Ս. Կապուտիկյանը:

Սովետահայ գրականությունը լայն ճանաչում ստացավ ոչ միայն Սովետական Միության մեջ, այլև արտասահմանում: Հայ գրողների երկերը թարգմանվեցին և հրատարակվեցին ինչպես սովետական, այնպես էլ արտասահմանյան բազմաթիվ ժողովուրդների լեզուներով: Բավական է նշել, որ, օրինակ, Վ. Անանյանի «Սևանի ափին» արկածային վեպը ունեցավ ավելի քան 40 հրատարակություն, թարգմանվեց աշխարհի բազմաթիվ լեզուներով, Գ. Սևունցի «Քեհրան» վեպը հրատարակվել է արտասահմանյան 20 լեզուներով:

Սովետահայ գրականությունից անբաժանելի են ՍՄՄ եղբայրական հանրապետություններում ապրող հայ գրողների ստեղծագործությունները: Դրանցից են Մոսկվայում՝ լենինյան մրցանակի դափնեկիր, սոցիալիստական աշխատանքի հերոս Մարիետա Շահինյանը, Վրաստանում՝ Մերուն Քորթոյանը, Բենիկ Սեյրանյանը, Ադրբեջանում՝ Վարսենիկ Աղասյանը, Մարգար Դավթյանը և ուրիշներ:

Սովետական արվեստը

Ստեղծագործական նոր նվաճումներով հարստացավ սովետահայ արվեստը: Հայ երաժշտագետներից աչքի ընկնող հաջողության հասավ ՍՄՄ և ՀՍՄՄ ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը, որի անունը հայտնի է ամբողջ աշխարհի երաժշտական հասարակայնությանը: Երաժշտական բարձր վարպետության համար նա շորս անգամ արժանացել է պետական մրցանակի: «Սպարտակ» բալետի համար 1959 թ. Ա. Խաչատրյանին շնորհվեց լենինյան մրցանակ: Սովետական երաժշտական մշակույթի բնագավառում ունեցած մեծ ծառայությունների համար ականավոր կոմպոզիտորը 1973-ին արժանացավ սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման: Համաշխարհային համբավ ձեռք բերեց նաև ՍՄՄ ժողովրդական արտիստ, պետական մրցանակի դափնեկիր, ՍՄՄ մեծ թատրոնի ղեկավոր դիրիժոր Ալեքսանդր Մելիք-Փաշայանը:

Սովետահայ երաժշտության զարգացման գործում մեծ ներդրում կատարեցին կոմպոզիտորներ Անուշավան Տեր-Ղևոնդյանը, Կարո Զաքարյանը, Հարո Ստեփանյանը, Աշոտ Սաթյանը և ուրիշներ:

Նտպատերազմյան տարիներին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում բեմադրվեցին սովետահայ կոմպոզիտորների նոր ստեղծագործություններ: Սովետահայ օպերային արվեստի բնագավառում նշանակալից երևույթ էր ականավոր կոմպոզիտոր Ա. Տիգրանյանի «Դավիթ-Բեկ» պատմա-հերոսական օպե-

րան, որը հեղինակին ավարտեց իր մահից մի քանի ամիս առաջ, 1950 թվականի վերջերին, և առաջին անգամ ներկայացվեց 1951 թվականին: Աչքի ընկնող ստեղծագործություններից են նաև Գ. Եղիազարյանի «Սևան» բալետը, Ա. Բարակի «Արծվաբերդ» օպերան և այլն: 1956 թվականին ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի որոշմամբ թատրոնը կոչվեց ակադեմիական: Այն դարձավ ժամանակակից հայ կոմպոզիտորների օպերային ժանրի ստեղծագործությունների դարբնոցը, ձեռք բերեց ստեղծագործական նոր նվաճումներ:

Երաժշտագետների ավագ սերնդի ներկայացուցիչների անմիջական օգնությամբ ու ազդեցությամբ երաժշտական արվեստի ասպարեզ մտավ տաղանդավոր երիտասարդ կոմպոզիտորների մի ամբողջ համաստեղություն՝ Առնո Բաբաջանյան, Ալեքսանդր Հարությունյան, որոնք հետո դարձան ՍՍՀՄ պետական մրցանակի դափնեկիրներ և արժանացան ՍՍՀՄ ժողովրդական արտիստի կոչման, էդվարդ Միրզոյան, Ղազարոս Սարյան և ուրիշներ: 1977-ի վերջում ՍՍՀՄ ժողովրդական արտիստի կոչում շնորհվեց կոմպոզիտոր Գրիգոր Եղիազարյանին:

Կատարողական բարձր վարպետության համար երգչուհի Զարուհի Դոլուխանյանը արժանացավ լենինյան մրցանակի, օպերայի երգիչներ Նար Հովհաննիսյանը, Միհրան Երկաթը՝ ՍՍՀՄ ժողովրդական արտիստի կոչման, իսկ Հայկական ՍՍՀ ակադեմիական կապելլայի զեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Հովհաննես Զեքիջյանը՝ դարձավ ՍՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր:

Վերջին տասնամյակում սովետահայ երաժշտության զարգացման գործում աչքի ընկան նաև կոմպոզիտորներ էդգար Հովհաննիսյանը, Կոնստանտին Օրբելյանը, Խաչատուր Ավետիսյանը, Ալեքսանդր Հեքիմյանը և շատ ուրիշներ:

Սովետահայ երաժշտական մշակույթի անբաժանելի մասն է կազմում գուսանական արվեստը: Շարունակելով հայ նշանավոր գուսաններ Սայաթ-Նովայի, Զիվանու, Շերամի և ուրիշների լավագույն ավանդույթները, սովետահայ գուսանական արվեստի փայլուն ներկայացուցիչներ դարձան Հավասին, Աշոտը, Շահենը և ուրիշներ, վայելելով ժողովրդի սերը: Մեծ զարգացում ստացավ ժողովրդական բազմերանգ ինքնագործ արվեստը:

1956 թ. Մոսկվայում տեղի ունեցած հայ գրականության և արվեստի տասնօրյակում վառ կերպով դրսևորվեց սովետահայ գրականության, երաժշտության ու թատրոնի բուռն ծաղկումը: Մայրաքաղաքի աշխատավորների առաջ բացառիկ հաջողությամբ հանդես եկան Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնի, Գ. Սունդուկյանի, Կ. Ստանիսլավսկու, Լենինականի Ա. Մոսկվայի անվան

գրամատիկական թատրոնների և մի շարք այլ ստեղծագործական կոլեկտիվները:

Այդ օրերին սովետահայ արվեստի ականավոր գործիչներ Վահրամ Փափաղյանը, Հրաչյա Ներսիսյանը, Միքայել Թավրիզյանը, Տաթևիկ Սաղանդարյանը և Գոհար Գասպարյանն արժանացան ՍՍՀՄ ժողովրդական արտիստի բարձր կոչման: Մեկ ամիս հետո այդ կոչմանն արժանացավ Հայկական ՍՍՀ ժողովրդական արտիստ, Մեծ թատրոնի մենեդջեր Պավել Լիսիցյանը, իսկ մինչ այդ նույն կոչմանն էր արժանացել տաղանդավոր դերասան Վաղարշ Վաղարշյանը:

Ետպատերազմյան ժամանակաշրջանում նոր գործերով հարստացավ Գ. Սունդուկյանի անվան գրամատիկական թատրոնի խաղացանկը: Սովետահայ թատրոնի կյանքում կարևոր իրադարձություն էր Երևանի նորաստեղծ երիտասարդական թատրոն-ստուդիայի (հետագայում՝ գրամատիկական թատրոն) բացումը 1967 թվականին:

Թատերական արվեստին մատուցած մեծ ծառայությունների համար վերջին տասնամյակում ՍՍՀՄ ժողովրդական արտիստի պատվավոր կոչում շնորհվեց ՀՍՍՀ ժողովրդական արտիստներ Ավետ Ավետիսյանին, Վարդան Աճեմյանին, Գուրգեն Զանիբեկյանին, Հրաչյա Ղափլանյանին, Բաբեկ Ներսիսյանին, Արուս Ասրյանին և Գավիթ Մալյանին:

Սովետական Հայաստանի արվեստի վարպետները բազմիցս հանդես են եկել աշխարհի տարբեր երկրներում, այդ թվում՝ ԱՄՆ-ում, Ֆրանսիայում: Մեծ համբավ են ձեռք բերել հատկապես Հայկական պարի պետական անսամբլի, Հայկական ժողովրդական երգի-պարի պետական անսամբլի, Գ. Սունդուկյանի անվան պետական թատրոնի կոլեկտիվները:

Ետպատերազմյան տարիներին նոր գործեր ստեղծեցին Սովետական Հայաստանի կերպարվեստագետները: Հրաշալի կոթողներ կերտեցին հայ ճարտարապետներն ու քանդակագործները: Բացառիկ հաջողությունների հասավ մեծատաղանդ նկարիչ Մ. Սարյանը: 1960 թվականին նրան շնորհվեց ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ պատվավոր կոչում, հաջորդ տարում՝ լենինյան մրցանակ: 1965 թվականին ՍՍՀՄ Գեղարվեստի սովետի նախագահության հրամանագրով Մ. Սարյանը արժանացավ սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման: Աշխարհահռչակ վարպետի մեծարումը վերածվեց հայ արվեստի իսկական տոնի:

Նոր, հիանալի գործեր ստեղծեցին սովետահայ նկարիչներ Գրիգոր Խանջյանը, էդուարդ Իսաբեկյանը, Հովհաննես Զարդարյանը, Մհեր Աբեղյանը, Հարություն Կալենցը, Մինաս Ավետիսյանը, Հակոբ Հակոբյանը, քանդակագործներ Սուրեն Ստեփանյանը, Երվանդ Քոչարը և

ուրիշներ: Վերջինս 1975 թվականին արժանացավ ՍՍՀՄ ժողովրդական նկարչի պատվավոր կոչմանը:

Սովետահայ ճարտարապետության և քանդակագործության ակնառու նվաճումներից են Երևանի երկաթուղային կայարանի հրապարակում կանգնեցված Սասունցի Դավթի արձանը, Սարգարապատի ճակատամարտի 50-ամյակին և 1915 թ. եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշարձան-կոթողները, Վարդան Մամիկոնյանի արձանը և այլն:

Հայ ժողովրդի մշակութային կյանքում կարևոր իրադարձություններ են հայ արվեստի և գրականության շաբաթների ու տասնօրյակների անցկացումը ոչ միայն ՍՍՀՄ հանրապետություններում, այլև Բուլղարիայում, Չեխոսլովակիայում, Լեհաստանում, Հունգարիայում, Հարավսլավիայում և այլ երկրներում, ինչպես նաև այդ հանրապետությունների մշակույթի շաբաթներն ու տասնօրյակները Սովետական Հայաստանում: Պարբերական բնույթ են կրում ՍՍՀՄ եղբայրական հանրապետությունների ստեղծագործական կոլեկտիվների փոխադարձ հյուրախաղերը: Բացառիկ հաջողություն ունեցավ 1970 թ. Փարիզում կազմակերպված «Հայկական արվեստը Ուրարտուից մինչև մեր օրերը» ցուցահանդեսը:

Մեր ժողովրդի հոգևոր կյանքում մեծագույն իրադարձություն էին հայ մեծ բանաստեղծ և երգիչ Սայաթ-Նովայի 250-ամյակի, մեծ գրողներ Հ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, հանճարեղ կոմպոզիտորներ Կոմիտասի ու Ալ. Սպենդիարյանի ծննդյան 100-ամյակների շքեղ տոնակատարությունները մեր ամբողջ երկրում:

Ստեղծագործական նոր նվաճումներ ձեռք բերեցին «Հայֆիլմ» կինոստուդիան և վավերագրական ու կարճամետրաժ կինոնկարների ստուդիան: Մեծ հաջողություն ունեցան Կամոյին նվիրված եռաֆիլմը, «Մարոյան եղբայրներ», «Պատվի համար», «Բարև, ես եմ», «Նահապետ», և շատ այլ զեղարվեստական, ինչպես նաև վավերագրական ու հեռուստատեսային ֆիլմեր: Կինոռեժիսորներ էրազմ Մելիք-Քարամյանին և Ստեփան Կեորկովին շնորհեց ՍՍՀՄ ժողովրդական արտիստի կոչում:

Կուլտուր-լուսավորական աշխատանքը

Նույնպես ճարտարապետության տարիներին էլ ավելի ընդարձակվեց կուլտուր-լուսավորական հիմնարկների ցանցը: Այդ աշխատանքները զլխավորելու համար 1946 թվականին ստեղծվեց Հայկական ՍՍՀ Ժողովրդատնային կից կուլտուր-լուսավորական հիմնարկների գործերի կոմիտե, որը հետագայում վերածվեց կուլտուրայի մինիստրության:

1976-ին հանրապետությունում գործում էին 1327 մասսայական գրադարան, մոտ 12 միլիոն գրքային ֆոնդով, իսկ բոլոր գրադարանների թիվը հասնում էր 3096-ի՝ 55,5 միլիոն գրքային ֆոնդով: Դա ավելի մեծ է, քան ցարական Ռուսաստանի գրքային ֆոնդն է եղել: Միայն Երև-

վանի հանրապետական գրադարանում կա աշխարհի ավելի քան 30 լեզուներով հրատարակված 7 միլիոն գիրք: Հանրապետությունում գործում էին նաև 1190 ակումբային հիմնարկներ, 14 թատրոն, 803 կինոթատրոն և կինոսարքավորում: 37 թանգարաններում կենտրոնացված են մեր ժողովրդի հազարամյակների և հատկապես վերջին 58 տարիների ստեղծված հոգևոր գունձերը: 1957 թ. շարք մտավ Երևանի հեռուստատեսության ստուդիան:

Նույնպես Երևանի տարիներին բացվեցին մի շարք տուն-թանգարաններ, որտեղ հավաքվում և ցուցադրվում են հայ գրողների կյանքին ու գործունեությանը վերաբերող բազմաթիվ հարուստ նյութեր: Էջմիածնում բացվեց Հ. Հովհաննիսյանի, Աշտարակում՝ Պ. Պոռչյանի, Քանաքեռում՝ Խ. Արսլանյանի, Երևանում՝ Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Ե. Չարենցի տուն թանգարանները:

Զարգանում էր նաև պարբերական մամուլը: 1978 թվականին հանրապետությունում հրատարակվում էին 83 անուն թերթ, 89 ամսագիր և այլ պարբերականներ: Նույնպես Երևանի տարիներին նոր հրատարակված պարբերականներից են «Ռյա թաղա» (1955), «Երևան» (այժմ՝ «Երեկոյան Երևան», 1957), «Պատմա-բանասիրական հանդես» (1958), «Լիտերատուրնայա Արմենիա» (1958), «Բանբեր Հայաստանի արխիվների» (1960), «Գարուն» (1967) և այլն:

Աննախընթաց թափով աճում էր գրքի տպագրությունը: Եթե 1921 թվականին Հայաստանում լույս էր տեսել ընդամենը 10 անուն գիրք, ապա 1978 թվականին՝ մոտ 1400 անուն գիրք: Նույնպես Երևանի տարիներին խոշոր աշխատանք կատարվեց մարքսիզմ-լենինիզմի դասականների երկերի հրատարակման ուղղությամբ: Այդ տարիներին լույս տեսան նաև Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Բ. Կունյանցի, Ա. Մյասնիկյանի երկերը, ինչպես և նրանց կյանքն ու հեղափոխական գործունեությունը լուսաբանող մեկնագրություններ: Հրատարակվեցին հայ, ռուս և արևմտաեվրոպական գրականության ականավոր դասականների, ՍՍՀՄ եղբայրական ժողովուրդների սովետական գրողների ստեղծագործությունները:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌԸ ԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

1. ՍՓՅՈՒՌԸ ԵՎ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻԲԸ

Սփյուռքահայ հասարակական-քաղաքական կյանքը

Ոչ լրիվ տվյալներով 1950-ական թվականներին արտասահմանյան երկրներում ապրում էր ավելի քան 1,5 միլիոն հայ, այժմ այդ թիվը հասել է շուրջ 2 միլիոնի: Հայերը ապրում են աշխարհի շատ երկրներում, սակայն, ավելի քան 30 երկրներում կան հայ գաղթօջախներ: Խոշոր հայ գաղթօջախներ են ստեղծվել ԱՄՆ-ում, որտեղ ապրում է 600 հազար հայ, Թուրքիայում՝ 250 հազար, Ֆրանսիայում՝ 300 հազար, Լիբանանում՝ 280 հազար, Իրանում՝ 200 հազար, Սիրիայում՝ 120 հազար և այլն: Մեծ թվով հայեր ապրում են Արգենտինայում, Իրաքում, Բրազիլիայում, Եգիպտոսում և այլ երկրներում:

Վերջին տարիներին սփյուռքում ստեղծվել են նոր հայկական գաղթավայրեր: Մերձավոր, Միջին ու Հեռավոր Արևելքի երկրներից հայերի մի ուժեղ չոսք տեղի ունեցավ դեպի հինգերորդ աշխարհամաս՝ Ավստրալիա: Եթե 1960 թ. հայերի թիվը այնտեղ եղել է 8 հազար, ապա այժմ այն գրեթե կրկնապատկվել է: Զգալիորեն մեծացել է նաև կանադահայ գաղթօջախը:

Հայրենական պատերազմում Սովետական Միության տարած պատմական մեծ հաղթանակը բուռն ոգևորություն առաջ բերեց սփյուռքի առաջադիմական շրջաններում: Սփյուռքում մեծ վերելք ապրեց հասարակական-քաղաքական կյանքը: Սփյուռքահայերը, իհարկե, միայն գաղթօջախների ներքին կյանքով չէ, որ ապրում են: Նրանք ակտիվորեն մասնակցում են տվյալ երկրի հասարակական-քաղաքական կյանքին, զգալի դեր կատարում նրա տնտեսության ու մշակույթի զարգացման գործում: Ուշադրության արժանի է հայերի ակտիվ մասնակցությունը հատկապես Մերձավոր Արևելքի երկրների ազգային-ազատագրական շարժումներին և նրանց ազգային անկախության ամրապնդման համար մղվող պայքարին:

Թեև սփյուռքահայության ճնշող մեծամասնությունը աշխատավորներ են, սակայն արտասահմանյան գրեթե բոլոր երկրներում կան նաև որոշ թվով մեծահարուստներ, որոնք զգալի կապիտալ ներդրումներ են կատարում տարբեր երկրների արդյունաբերության և առևտրի մեջ:

Ետպատերազմյան տարիներին սփյուռքահայ հասարակական-քա-

ղաքական կյանքում կարևոր տեղ է գրավում առաջադիմական և հետադիմական ուժերի պայքարը: Առաջադեմ կազմակերպությունները շարունակում են արթնանալիս աշխատանք ծավալել ազդեցությանման, ազգային մշակույթի զարգացման, հայրենադարձության, խաղաղության, դեմոկրատիայի և առաջադիմության համար: Առանձնապես հիշատակելի է նրանց աշխատանքը մայր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի, նվաճումների պրոպագանդման գործում: Այդ ուղղությամբ որոշակի դեր են խաղում նաև ս. դ. հնչակյան և ռամկավար ազատական կուսակցությունները:

Հայաստանի կոմունիստական կուսակցության XXII և XXIII համագումարները ճիշտ գնահատեցին հայ քաղաքական այդ կուսակցությունների գործունեությունը: Այդ չի նշանակում, իհարկե, թե գաղթյալների փարական տարածայնություններ չկան մեր և այդ կուսակցությունների միջև: Մի շարք հարցերի վերաբերյալ հնչակյանների և ռամկավարների կարծիքները մենք չենք բաժանում: ՀԿԿ XXII համագումարում նշվեց, որ մեր կուսակցությունը գաղափարական ոչ մի դիջում չի անի նշվեց, որ մեր կուսակցությունը գաղափարական ոչ մի դիջում չի անի այդ կուսակցություններին, բայց ողջունում է նրանց հայրենասիրական գործունեությունը՝ հայկական գաղթօջախներում և ամեն կերպ կօժանդակի նրանց:

Ինչ վերաբերում է դաշնակցական կուսակցությանը, ապա նա, որպես խաղալիք վաղուց ծառայում է միջազգային իմպերիալիզմին, մասնակցում է սոցիալիստական լագերի և, առաջին հերթին, Սովետական Միության դեմ մղվող պայքարին: Կանգնած լինելով հակահայրենասիրական դիրքերում, նա բոլոր միջոցներով աշխատում է վնասել սփյուռք-հայրենիք կապերին: Դաշնակցությունը պառակտիչ դեր է կատարում նաև հայ եկեղեցու գործերում: Դրանով իսկ նա քիչ հարված չի հասցնում ազգապահպանման գործին, որի մեջ կարևոր դեր է խաղում հայ եկեղեցին:

Սփյուռքում ակտիվ գործունեություն են ծավալել հայրենակցական միությունները, որոնք միավորում են Արևմտյան Հայաստանի տվյալ քաղաքի, տվյալ շրջանի կամ գավառի բնակչությունը, ունեն իրենց ծրագիրն ու կազմակերպությունը: Այդ միություններից մի քանիսի անդամների թիվը հազարների է հասնում: Արտասահմանի հայկական գաղթօջախներում այժմ գործում են շուրջ հարյուր հայրենակցական միություններ, որոնք սերտ կապերի մեջ են հայրենիքի հետ: Դրանց զգալի մասը գտնվում է Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Ամերիկայի մայր ցամաքում կազմակերպված հայրենակցական միությունների աշխատանքը միավորելու նպատակով 1947 թվականին Նյու-Յորքում կազմակերպվեց ամերիկահայ Միջհայրենակցական միություն:

Այդ միութեան հիմնական խնդիրն էր «նեցուկ կանգնել Ամերիկահայ ազգային խորհրդին, օժանդակել Սովետ Հայաստան ներգաղթին և հավաքաբար օգնել Սովետ Հայաստանի մեջ կառուցված նոր ավաններու ճարտարվեստական զարգացման և ընդհանուր հայրենաշեն գործին»:

Սփյուռքահայ կյանքում կարևոր տեղ են գրավում մշակութային միութիւնները՝ որոնց մեջ աչքի են ընկնում Լիբանանի, Ֆրանսիայի, Սիրիայի, ԱՄՆ-ի, Արգենտինայի, Իտալիայի և այլ երկրների մշակութային միութիւնները, որոնք սերտ կապ են պահպանում մայր հայրենիքի հետ: Սփյուռքահայ կազմակերպութիւններից շատերն ունեն իրենց պարբերական մամուլը: Օրինակ՝ Ամերիկահայ առաջադիմական միութիւնը հրատարակում է «Լրաբեր» երկօրյա թերթը:

Սփյուռքում իր բազմաթիւ մասնաճյուղերով արդյունավետ գործունեութիւն է ծավալել Հայ բարեգործական ընդհանուր միութիւնը, որը հիմնադրվել է դեռևս 1906 թվականին Կահիրեում, մեծահարուստ Պողոս Նուբար փառաշի և մի խումբ այլ հայ ազգային գործիչների նախանձեռնութեամբ: Այժմ միութիւնն աշխարհի 20 երկրներում ունի 185 մասնաճյուղ, որոնց անդամների թիւը հասնում է 30 հազարի: 1922 թվականից հետո կենտրոնը Փարիզն էր, իսկ 1939 թվականից՝ Նյու-Յորքը: ՀԲԸՄ-ն զգալի միջոցներ է տրամադրել դպրոցական գործի կազմակերպմանը, նրա տնօրինութեան տակ են գտնվում 9 ուսումնական հաստատութիւն, մի քանի հիվանդանոցներ, ծերանոցներ, հրատարակում է թերթեր և այլն: Բարեգործական միութիւնը շոշափելի ֆինանսական միջոցներով 1946—1947 թթ. օգնեց հայերի հայրենադարձութեան գործին:

Սփյուռքահայութեան կյանքում կարևոր իրադարձութիւն էր 1947 թ. ապրիլին առաջադիմական ուժերի և Ամերիկահայ ազգային խորհուրդի կողմից համաշխարհային հայկական կոնֆերանսի հրավերումը: ԱՄՆ-ում: Այդ կոնֆերանսին մասնակցում էր գրեթե բոլոր հայ գաղթօջախների 705 պատգամավոր: Սփյուռքահայութեան այդ մեծ համաժողովում քննարկվեց հիմնականում երեք հարց՝ օժանդակութիւն ներգաղթին և վերաշինութեան, հայրենիքի հետ մշակութային սերտ կապի հաստատումը և հայերի հողային պահանջների առաջադրումն ու այդ հարցի արդար լուծումը ՄԱԿ-ի միջոցով: Այդ հարցերի վերաբերյալ կոնֆերանսն ընդունեց համապատասխան որոշումներ, որոնք մեծ խանդավառութեամբ ընդունվեցին սփյուռքահայութեան լայն զանգվածների կողմից:

Սփյուռքում շարունակվում է մեծ աշխատանք կատարվել հայրենադարձութեան գործի կազմակերպման ուղղութեամբ: Միայն վերջին տասը տարում արտասահմանյան տարբեր երկրներից Սովետական Հայաստան են եկել շուրջ 40 հազար հայեր:

Հայրենիքի և քաղաքի կապերի ամրապնդումը

Հայրենական պատերազմից հետո, տասնամյակի վերջին երկու տասնամյակում, ավելի ամրապնդվեցին հայրենիքի և սփյուռքի միջև եղած կապերը: Դրան նպաստում էր դեռևս 1944 թ. հիմնադրված Արտասահմանի հետ կուլտուրական կապի հայկական ընկերությունը (ԱՕԿՍ), որը 1958 թ. վերակառուցվեց որպես Արտասահմանյան երկրների հետ բարեկամութեան ու մշակութային կապի հայկական ընկերություն: Այժմ հետևողական և ստեղծվեցին Բուլղարիայի, Արաբական Արևելքի, Լատինական Ամերիկայի, Ասիայի և Աֆրիկայի երկրների, Իտալիայի, Իրանի, Չեխոսլովակիայի, ԳԴՀ-ի, Հունգարիայի և այլ երկրների հետ բարեկամութեան և մշակութային կապի ընկերությունների հայկական բաժանմունքներ:

Արտասահմանյան երկրների հասարակական, գիտական, մշակութային և այլ կազմակերպութիւնների ու հաստատութիւնների հետ լայն կապեր են ստեղծել նաև հանրապետութեան արտադրական, արհմիութենական, մշակութային կազմակերպութիւնները, գիտութիւնների ակադեմիան, պետական համալսարանը, գրողների, կոմպոզիտորների, նկարիչների, ճարտարապետների միութիւնները: Վերոհիշյալ բոլոր կազմակերպութիւնները տարբեր ձևերով նպաստում են մայր հայրենիքի կապերի ամրապնդմանը արտասահմանյան երկրներում ապրող հայ զանգվածների հետ:

Սփյուռքի և Հայաստանի միջև կապերի հետագա ամրապնդման հարցը հատուկ ուշադրութեան առարկա դարձավ Հայաստանի կոմունիստական կուսակցութեան XXII և XXIII համագումարներում: Խնդիր դրվեց ավելի սերտ կապեր ստեղծել սփյուռքի առաջադիմական կազմակերպութիւնների հետ և ամեն կերպ օժանդակել նրանց:

Սփյուռքահայութեան նկատմամբ Հայաստանի կոմունիստական կուսակցութեան և կառավարութեան հոգատարութեան վառ արտահայտութիւններից էր այն, որ 1964 թվականին Սովետական Հայաստանում կազմակերպվեց Սփյուռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտե, որը հաջորդ տարվա կեսերից սկսեց հրատարակել «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթը:

Կոմիտեի ստեղծումը կարևոր իրադարձութիւն էր, որը շերմորեն ընդունվեց ոչ միայն հայրենիքում, այլև սփյուռքի աշխատավորութեան կողմից, այն դարձավ, պատկերավոր ասած, մի ոսկե կամուրջ հայրենիքի և սփյուռքի միջև: Նորաստեղծ կոմիտեն ամուր թելերով կապվեց աշխարհի բոլոր կողմերում սփռված հայութեան հետ: 1964 թվականին, կոմիտեի կազմակերպման առաջին տարում, հայրենիքի հետ արդեն կապեր էին հաստատել 415 կազմակերպութիւն ու անհատ գործիչներ,

իսկ 1978 թ. այդ կազմակերպությունների թիվը հասավ մոտ հազարի, անհատ գործիչներինը՝ մոտ 5 հազարի:

1975 թ. վերջին Մոսկվայում հիմնադրվեց Արտասահմանյան հայ-բենակիցների հետ մշակութային կապի սովետական «Ռոդինա» ընկերությունը, որի կոլեկտիվ անդամներից մեկը դարձավ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն: Նորաստեղծ ընկերությունը նպաստավոր պայմաններ է ստեղծում արտասահմանի հայրենակիցներին հետ սովետական հանրապետությունների մշակութային կապերի հետագա զարգացման համար:

Սովետական Հայաստանում նշանակալի աշխատանք է կատարվում սփյուռքահայությանն օգնելու համար: Կազմակերպված է սփյուռքահայ դպրոցների դասագրքեր հրատարակելու գործը, սփյուռք է ուղարկվում նաև մեծ քանակությամբ այլ գրականություն, քարտեզներ, լաբորատոր սարքավորումներ, երաժշտական գործիքներ, մարզական պարագաներ և այլն: Որոշ թվով սփյուռքահայ երեխաներ ամեն տարի հանգստանում են Կիրովականի «Հայկական արտեկ» և ուրիշ ճամբարներում: Մոտ 15 երկրների հայկական դպրոցների ուսուցիչներ հրավիրվում են Հայաստան, որտեղ նրանք կարճատև դասընթացներում կատարելագործվում են: 1977—1978 ուսումնական տարում 375 սփյուռքահայ երիտասարդներ սովորում էին հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում: Հայրենիքում հաճախակի կազմակերպվում են սփյուռքահայ նկարիչների ինչպես հավաքական, այնպես էլ անհատական ցուցահանդեսներ, սփյուռքահայ գրողների հոբելյանական երեկոներ, հանդիպումներ հանրապետության աշխատավորների հետ և այլն: Պարբերաբար սփյուռք են ուղարկվում հանրապետության արվեստի կոլեկտիվներ, ինչպես նաև առանձին հանրաճանաչ արտիստներ, գրողներ, հասարակական-քաղաքական գործիչներ, գիտնականներ:

Սփյուռքի առաջադիմական կազմակերպություններն իրենց հերթին շնորհակալ աշխատանք են կատարում հայ գաղթավայրերի բնակչությանը Մովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության և մշակույթի նվաճումներին ծանոթացնելու ուղղությամբ: Նրանք Սովետական Հայաստանի տարեգարձների առթիվ կազմակերպում են հանդիսավոր նիստեր, զեղարվեստական երեկույթ-ցերեկույթներ, հանդեսներ, Սովետական Հայաստանի կյանքն արտացոլող ցուցահանդեսներ, հայ մշակույթի ականավոր գործիչներին նվիրված հոբելյանական երեկոներ, հայ երգի ու պարի համերգներ, տուրիստական ուղևորություններ զեպի Սովետական Հայաստան, սփյուռքում գտնվող հայ ժողովրդի հոգևոր արժեքները մայր հայրենիք փոխադրելու գործը և այլն:

Հայկական գաղթօջախներում վերջին տարիներին ավելի է աշխու-

ժացել հասարակական և մշակութային կյանքը: Սփյուռքում հրատարակվում են նոր թերթեր, գրքեր, բացվում են նոր դպրոցներ, հայագիտական ամբիոններ, բազմաթիվ կրթական ու մշակութային այլ օջախներ: Սփյուռքահայ կյանքում կարևոր դեր են խաղում նաև աշխարհի ավելի քան 10 երկրներում կազմակերպված հայերեն ռադիոհաղորդումները:

2. ՍՓՅՈՒՌՔԱԶՆՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Կրթությունը և գիտությունը սփյուռքում

Ապագայնայնացման վտանգը դամոկլյան սրի պես կախված է սփյուռքի հայ գաղթօջախների վրա: Հատկապես ԱՄՆ-ում և Ֆրանսիայում այդ վտանգն ավելի մեծ չափեր է ընդունում: Ահա թե ինչու սփյուռքահայությունը գերմարդկային ճիգեր է գործադրում իր ազգային գոյությունը պահպանելու համար:

Նույնպես կազմային տարիներին սփյուռքահայ առաջադեմ շրջանները շարունակում էին մեծ ջանքեր գործադրել հայկական դպրոցները պահպանելու ուղղությամբ: Ոչ լրիվ ավյալներով 1975—1976 ուսումնական տարում սփյուռքում գործում էր շուրջ երեք հարյուր տարրական և միջնակարգ դպրոց՝ մոտ 90 հազար սովորողներով, չհաշված 300 կիրակնօրյա կամ մեկօրյա դպրոցները, որտեղ սովորում էին 15 հազար երեխաներ:

Դպրոցական գործը համեմատաբար ավելի բարվոք վիճակում է Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներում: 1966/1967 ուսումնական տարում Սիրիայում գործում էր 78 հայկական դպրոց, որտեղ սովորում էին 20 հազար պատանիներ ու աղջիկներ: Լիբանանում գործում էր 70 դպրոց: Իրանահայ գաղութում գործող 57 դպրոցներում սովորում էր 20 հազար աշակերտ: Կ. Պոլսում գործում էր 32 հայկական դպրոց:

Սակայն հայ երեխաների կրթության գործը սփյուռքում գոհացուցիչ վիճակում չէ: Շատ երկրներում իշխանությունները զանազան միջոցներով աշխատում են սահմանափակել հայ երեխաների կրթության գործի շրջանակները, արգելում են մայրենի լեզվով կրթությունը: Ֆրանսիայում, ուր հաշվվում է շուրջ 300 հազար հայ, գոյություն ունի ընդամենը 2 հայկական դպրոց: Տարեցտարի կրճատվում է հայկական դպրոցներում սովորողների թիվը: Չկան բավարար քանակությամբ և ուսուցման ժամանակակից պահանջները բավարարող դասագրքեր, որակյալ ուսուցիչներ, թույլ է դպրոցի նյութական բազան, չկան համապատասխան շենքեր և այլն:

Սփյուռքահայ երիտասարդությունը հիմնականում սովորում է

օտար բարձրագույն ուսումնական հաստատություններում, սակայն նրանց թիվը մեծ չէ, որովհետև ուսման բարձր վարձի պատճառով տասնյակ հազարավոր հայ երիտասարդներ զրկված են բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունից:

Արտասահմանի համալսարաններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող հայ ուսանողության զգալի մասի մեջ մեծ ձգտում կա դեպի հայ մշակույթն ու ազգայահայանումը: Այդ է վերկայում թեկուզ այն, որ Արևմտյան Եվրոպայի, Ամերիկայի և Մերձավոր Արևելքի շատ երկրներում գործում են մի շարք հայ ուսանողական միություններ ու խմբեր, որոնք նպաստում են ազգայահայանմանը և երիտասարդության հայացի դաստիարակությանը:

Արտասահմանյան տարբեր երկրներում ապրում են բազմաթիվ հայ գիտնականներ: Իրենց գիտական բեղմնավոր գործունեությունը շարունակում են Վենետիկի և Վիեննայի Միթիթարյան միաբանության գիտնականները: Խոշոր հայագետ էր Համազասպ Ոսկյանը, որի գրչին են պատկանում մի շարք արժեքավոր աշխատություններ: Միջնադարյան արվեստի պատմության, հայագիտության և մանավանդ, բյուզանդագիտության ակնավոր մասնագետ է պրոֆեսոր Սիրարփի Տեր-Ներսիսյանը (Ֆրանսիա): Հայ մշակույթի պատմության մեջ լուրջ ներդրում են հատկապես հայ միջնադարյան մանրանկարչությանը նվիրված նրա մի շարք ուսումնասիրությունները, որոնք հրատարակվել են Ֆրանսերեն և անգլերեն: Ս. Տեր-Ներսիսյանը 1965 թվականին ընտրվել է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ: Սիրարփի Տեր-Ներսիսյանը բարձր գնահատականի է արժանացել նաև արտասահմանում: Նա անդամ է ԱՄՆ-ի միջնադարյան ակադեմիայի և Ֆրանսիայի հնագիտական ազգային ընկերության: 1970 թ. Անգլիայի հնագիտական ընկերությունը նրան պարգևատրեց ոսկե շքանշանով: Ի դեպ, այդ ընկերության հիմնադրումից՝ 1707 թվականից սկսած պրոֆ. Ս. Տեր-Ներսիսյանը երկրորդ կին գիտնականն է, որ արժանացել է այդ բարձր պատվին: Վերջին տարիներում բյուզանդագիտության բնագավառում աչքի ընկավ Նինա Գարսոյանը (Նյու-Յորք), որը բյուզանդագետների միջազգային ընկերության փոխպրեզիդենտն է:

Հայ գաղթավայրերի պատմության ուսումնասիրության բնագավառում մեծ վաստակ ունի եգիպտահայ պատմաբան Արշակ Ալպոյաճյանը: Առանձնապես արժեքավոր է նրա «Պատմություն հայ գաղթականության» եռահատոր աշխատությունը: Հիշատակության արժանի են նաև «Արաբական Միացյալ Հանրապետության Եգիպտոսի նահանգը և հայերը», «Պատմություն Եվրոպիո հայոց», «Պատմություն Մալաթիո հայոց» և այլ մեծածավալ աշխատությունները:

Հայ գրականության, հայ ժողովրդի պատմության և այլ հարցերի մասին, հատկապես ֆրանսերեն լեզվով, մի շարք աշխատություններ է գրել ֆրանսահայ լեզվագետ, պատմաբան, տնտեսագետ ու իրավաբան Հրանտ Թորոսյանը: Ֆրանսիայում ազգագրության մեջ նշանավոր դեմք է Տիգրան Չիթունին: Մեծ վաստակ ունի ֆրանսահայ նշանավոր աշխարհագրագետ, բարեկարգետ Զադիկ Խանդադյանը, որը նույնպես ընտրվել է Հայկական ՍՍՀ ԳԱ արտասահմանյան անդամ:

Գիտական բեղմնավոր գործունեություն էր ծավալել ուսմինահայ բազմավաստակ պատմաբան, բանասեր, գրող և հրատարակագիր Հակոբ Սիրունին, որի գրչին են պատկանում բազմաթիվ հայագիտական աշխատություններ: Սփյուռքահայ նշանավոր պատմաբաններից է նաև Հրանտ Արմենը (Կալիֆորնիա): Հայտնի են նրա «Պապ Արշակունի», «Մեծ Տիգրան», «Մարզպանը և սպարապետը» ու բազմաթիվ այլ աշխատություններ:

Ինչպես և անցյալում, եվրոպական երկրներում հայագիտությամբ զբաղվում են ոչ միայն հայ, այլև օտար գիտնականներ: Արտասահմանյան մի շարք երկրների համալսարաններում ստեղծվել և հաջողությամբ գործում են հայագիտական առանձին ամբիոններ կամ արևելագիտության բաժիններին կից հայագիտական դասընթացներ: Իրենց բեղմնավոր գործունեությամբ հայտնի են Բելգիայի Լովենի համալսարանի, Փարիզի արևելյան կենդանի լեզուների դպրոցի և Բեյրութի Սեն-ժոզեֆ համալսարանի հայագիտական ամբիոնները: Վերջին տարիներին ծնունդ առան Օքսֆորդի, Սպահանի, Լոնդոնի, Հարվարդի, Կոլումբիայի, Կալիֆորնիայի, Բրադլիվայի, Բեյրութի համալսարանների հայագիտական ամբիոնները: Այդ ամբիոնների գծով սովորող ուսանողությունը բազմազգ կազմ ունի:

Օտարերկրյա գիտնականներից հայագիտական ուսումնասիրությունների բնագավառում հայտնի են. Ֆրանսիայում՝ Փարիզի արևելյան կենդանի լեզուների դպրոցի հայագիտական ամբիոնի վարիչ Ֆրեդերիկ Ֆելյոն, Անգլիայում՝ Քեմբրիջի համալսարանի պրոֆեսոր, աշխարհահռչակ ռուս արևելագետ Վ. Մինորսկին և Լոնդոնի համալսարանի հայագիտության պրոֆեսոր Զարզ Դոուսեթը, Ռումինիայում՝ պրոֆեսոր Վլադ Բընըցեանուն, Չեխոսլովակիայում՝ Պրագայի համալսարանի հայերենի դասախոս պրոֆեսոր Յա. էլլիչկան, երիտասարդ շնորհալի բանասեր Վլադիլա Մոտալովան և ուրիշներ:

Հայագիտական կարևոր օջախ է ԱՄՆ-ում գործող «Հայագիտական ուսման և հետազոտություններու ազգային ընկերությունը», որ հիմնադրվել է 1955 թվականին: Ընկերության նպատակն է «ոչ միայն հայուն, այլ նաև օտարին ծանոթացնել հայ լեզուն և անցյալի փառա-

վոր պատմությունը, հաստատելով հայագիտական օջախներ, գրատներ, կազմակերպելով դասախոսություններ և հրատարակելով հայագիտական գրքեր»:

Օտարազգի և հայ հայագետները հրատարակում են բազմաթիվ գիտական ուսումնասիրություններ, ինչպես նաև օտար լեզուներով թարգմանում ու հրատարակում են հայ մատենագիրների գործերը, բազմաթիվ արժեքավոր հայկական հնագույն ձեռագրեր և այլ սկզբնաղբյուրներ: Այս ուղղությամբ շնորհակալ աշխատանք է կատարում վերջին քսան տարում գործող «Հայկական մատենաշար Գալուստ Կյուլպենկյան հիմնարկություն»-ը, 30 տարվա ընդմիջումից հետո Փարիզում վերականգնված «Հայկական ուսմանց հանդես»-ը, որի առաջին հատորը լույս է տեսել 1964 թվականին: Սփյուռքում օտար լեզուներով հրատարակվում են նաև սովետահայ հայագետների գործերը: Օրինակ՝ «Հայկական մատենաշար»-ի հերթական համարներից մեկը ակադեմիկոս Հ. Մանանդյանի «Տիրքան Բ և Հոմեր» մենագրությունն էր: Իտալիայում հրատարակվել են հայկական ճարտարապետական հուշարձաններին նվիրված մի շարք արժեքավոր գործեր:

Հայագիտության զարգացման և հայ ժողովրդի պատմության դեռևս չուսումնասիրված հարցերի լուսաբանության գործին մեծապես նպաստում են հայրենակցական միությունների հրատարակությունները: Վերջին տասնամյակներում հրատարակվել են շուրջ 50 մեծածավալ աշխատություններ՝ նվիրված հայրենի նահանգի, գավառի և նույնիսկ գյուղի պատմությանը, ինչպես նաև սփյուռքում ու հայրենիքում տեղի ունեցած կարևոր անցքերի լուսաբանությանը: Դրանք մեր պատմագրությանը առատ նյութ են տալիս Արևմտյան Հայաստանի և սփյուռքի պատմության գիտական հետազոտության համար:

Բնական գիտությունների բնագավառում աչքի ընկնող գիտնականներ են ամերիկահայ մանրեաբան, բիոքիմիկոս և դեղաբան պրոֆ. Մանասե Սեակը, ռադիոֆիզիկոս Փափազ Չառլզ Հրաչը, որոնք նույնպես ընտրվել են Հայկական ՍՍՀ ԳԱ արտասահմանյան անդամներ, մանրէաբան պրոֆ. Արծրունի Փախչանյանը, ֆրանսահայ աստղաֆիզիկոս Հակոբ Թերզյանը և ուրիշներ:

Սփյուռքահայ գրականությունը

Նուպատերազմյան տարիներին շարունակում էր զարգանալ սփյուռքահայ գրականությունը, որը հայ գրականության անբաժանելի մասն է կազմում: Այդ տարիները նշանավորվեցին նրանով, որ ավելի լայն կապեր հաստատվեցին սփյուռքահայ և մայր հայրենիքի գրողների միջև, ուժեղացավ սովետահայ գրականության բարերար ազդեցությունը: Արտասահմանի հայ գրականության մեջ զաղափարական պայթյուն

ավարտվեց առաջադեմ ուղղության հաղթանակով: Սփյուռքահայ առաջադեմ գրողները, ոգեշնչվելով մայր հայրենիքի վիթխարի նվաճումներով, հաստատուն կերպով կանգնեցին խաղաղության ու դեմոկրատիայի դիրքերում, ջերմորեն պաշտպանեցին ժողովուրդների համերաշխության գաղափարը:

Այդ տարիներին նոր գործեր ստեղծեցին ֆրանսահայ գրականության ավագ սերնդի ներկայացուցիչներ Արշակ Չոպանյանը, Վահան Մալեգյանը, Լեոն Մեսրոպը, Ենովք Արմենը և ուրիշներ: Լեոն Մեսրոպը սփյուռքահայ գրականության նշանավոր դեմքերից է: Նրա գրչին են պատկանում մի շարք ծավալուն վեպեր: 1946 թվականին նա մասնակցեց Հայաստանի սովետական գրողների երկրորդ համագումարին և վերադառնալով Փարիզ, մայր հայրենիքից ստացած իր վառ տպավորությունները դարձրեց տարագիր հայ աշխատավորության սեփականությունը: Այդ տպավորություններն իրենց գեղարվեստական արտահայտությունը գտան գրողի «Կախարդող լեռը և ներդաղթող ձին» սովորածավալ վեպում: Արժեքավոր է նրա խմբագրությամբ 1952 թվականին Փարիզում լույս տեսած «Աղետ և վերածնունդ» գիրքը, որը պատկերում է մեծ եղեռնի սարսափելի դրվագները:

Նուպատերազմյան տարիներին ֆրանսահայ գրականության մեջ աչքի ընկան Շահան Շահնուրը, Զարե Որբունին, Մառի Աթմաճյանը (բանաստեղծ Սեմայի քույրը), Հրաչյա Զարդարյանը, Բյուզանդ Թոփալյանը և ուրիշներ: Ֆրանսահայ գրողներից հայտնի է նաև Հրանտ Գույումճյանը:

Ամերիկահայ գրականության մեջ հայտնի դեմք դարձավ Կարապետ Սիտալը: 1949 թվականին ԱՄՆ-ում լույս տեսավ նրա «Տեսա մեր երկրի արևածագը» գիրքը, որը ամփոփում է հեղինակի անկեղծ և ճշմարտացի տպավորությունները Սովետական Հայաստանի մասին: Այդ գիրքը ջերմ ընդունելություն գտավ սփյուռքի աշխատավորության լայն զանգվածների մեջ, սակայն շարունակվեց դաշնակցական ծախու մամուլի կողմից: Հայրենասեր բանաստեղծի դեմ հանդես եկավ դաշնակցական անփառունակ կառավարության վերջին վարչապետ Ս. Վրացյանը: Կ. Սիտալը նրան պատասխանեց մի ընդարձակ հոդվածով, որը լույս տեսավ նաև առանձին գրքով՝ «Հայաստանի լուսափառ արևածագը և Վրացյանի մարող ձեթի ճրագը» գիպուկ խորագրով:

Ամերիկահայ նշանավոր գրողներից է Վահե Հայկը, որը միաժամանակ աչքի ընկնող հրապարակախոս է և հասարակական գործիչ: Պատմա-գեղարվեստական մեծ արժեք ունեն նրա պատմվածքների շորս ժողովածուները, որոնք հրատարակվել են «Հայրենի ծխան» ընդհանուր խորագրով: Այդ պատմվածքներում նա մեծ վարպետություն է հայրեն-

նասիրական շնչով պատկերել է Արևմտյան Հայաստանի նարբերդ գավառը, սփյուռքահայ կյանքը, վեր է հանել նրա տարագիր բնակիչների ազգապահպանման աներեր կամքը:

Ամերիկահայ գրական դեմքերից են նաև Համաստեղը, Զարուհի Գալեմբարյանը, Անդրանիկ Անդրեասյանը, Հակոբ Գուլումճյանը, Բենիամին Նուրիկյանը, Արամ Հայկազը և ուրիշներ: 1962 թվականին հայրենիք վերադարձավ սփյուռքահայ գրականության ավագ սերնդի աչքի ընկնող ներկայացուցիչ, իտալահայ բաղմաբեզուն գրող Կոստան Զարյանը: Հայրենադարձությունից առաջ նա վերանայեց իր անցյալի սխալները: Երևանում հրատարակվեց նրա «Նավը լեռան վրա» վեպը, որի առաջաբանում նա գրել է. «Լինելով հիացած իմ հայրենիքում կատարված հրաշք վերափոխումներով, հենց այդ ժամանակ էլ հաստատ որոշում ընդունեցի փոխադրվել մշտական բնակության Հայաստան, որպեսզի հայրենիքիս ծառայելուն նվիրեմ թեկուզ իմ կյանքի վերջին տարիները»:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո արաբական երկրների հայ գաղթավայրերում գրական երիտասարդ սերնդի աչքի ընկնող ներկայացուցիչներից են լիբանանահայ գրողներ Արմեն Գարյանը, Գաանիկ Ազդարյանը և ուրիշներ: Առանձնապես հայտնի են Ա. Գարյանի «Կարոտ և կյանք» պատմվածքների ժողովածուն, Գ. Ազդարյանի «Պատանջին վրա» գիրքը: Լիբանանահայ գրող Վահե Վահյանը, որը մինչ այդ հայտնի էր իր «Ոսկե կամուրջ» բանաստեղծությունների ժողովածուով, 1953 թվականին Բեյրութում հրատարակել է «Հարալեզներու հաշտությունը» գիրքը, որի մեջ պատմում է իր սպավորությունները մայր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի մասին: Լիբանանահայ նշանավոր գրող և հրապարակագիր է Անդրանիկ Ծառուկյանը: Հատկապես հայտնի է նրա «Մանկություն շունեցող մարդիկ» գիրքը, որը հրատարակվել է նաև ռուսերեն Մոսկվայում: Սփյուռքահայ գրականության սյուններից է ծերունագարդ Հակոբ Մնձուրին (Կ. Պոլիս):

Սփյուռքում ապրում և օտար լեզվով են ստեղծագործում մի շարք հայագրի գրողներ, որոնք մեծ հռչակ են վայելում գրական աշխարհում: Այդպիսին է Վիլյամ Սարոյանը: Նրա գրչին են պատկանում շուրջ 1500 պատմվածքներ, տասնյակ վեպեր, պիեսներ, որոնց մեծ մասը, թարգմանվել և հրատարակվել է աշխարհի շատ լեզուներով: 1976-ին հայրենասեր գրողը երրորդ անգամ այցելեց Սովետական Հայաստան և, խանդավառված նրա բազում նվաճումներով, հայտարարեց. «Սովետական Հայաստանն իմ կարծիքով, գործնական լավագույն փաստարկներից մեկն է ՍՍՀՄ-ի համար: Ես գիտեմ ինչպիսին է եղել Հայաստանը, ներքան իմ աչքերով եմ տեսել գրեթե կես դար առաջ և տեսնում եմ հիմա:

Խորապես համոզված եմ, որ միայն հպարտ մարդը, սեփական արժանատիությամբ, ես կավելացնեի. նաև ազգային արժանապատվությամբ առկեցուն մարդը կարող է իր հողում կանգնեցնել իր գրեթե բոլոր դասական գրողների հիանալի հուշարձանները: Ես այցելեցի ցեղասպանությանը զոհ գնացած հայերի հուշարձանը և շնորհակալությամբ մտածեցի հայերին կործանումից փրկած ռուս ժողովրդի մասին»: 1978-ի աշնանը մեծանուն գրողը կրկին այցելեց հայրենիք, ուր և տոնվեց նրա ծննդյան 70-ամյակը:

Մեծ ճանաչում ունի նաև Լեոն Սյուրմեկյանը: Հատկապես նշանավոր է անգլերեն լեզվով գրված նրա «Ձեզ եմ դիմում, տիկիններ ու պարոններ» գիրքը, որի մեջ մեծ վարպետությամբ պատկերված է հայ ժողովրդի ծանր, մղձավանջային կյանքը Քուրբայում: Այն հրատարակվել է 1945 թվականին Ամերիկայում, մի տարվա ընթացքում ունեցել հինգ հրատարակություն: Այնուհետև գիրքը թարգմանվել է աշխարհի բազմաթիվ լեզուներով:

Ուշագրության արժանի է Սյուրմեկյանի կատարած աշխատանքը «Սասունցի Գավիթ» ժողովրդական էպոսը և «Հայկական հերիաթները» ժողովածուները անգլերեն հրատարակելու և զիտականորեն մեկնաբանելու ուղղությամբ:

Իսպաներեն լեզվով ստեղծագործում է անվանի բանաստեղծուհի Ալիսա Կիրակոսյանը (ԱՄՆ), որը սերտ կապեր է հաստատել մայր հայրենիքի հետ: Նշանավոր է նրա «Թուղթ առ Հայաստան» ստեղծագործությունը:

Նուպատերազմյան տարիներին «Հայաստան» հրատարակչությունը լույս ընծայեց սփյուռքահայ մի շարք առաջադեմ գրողների երկերը, որոնք լայնորեն տարածվել են ինչպես մեր երկրում, այնպես էլ սփյուռքում:

Ուշագրավ է, որ սփյուռքահայ գրողների գործերը դառնում են նաև ռուս ընթերցողների սեփականությունը:

Սակայն արագորեն տեղի ունեցող ապագալիցացման պատճառով սփյուռքահայ գրականությունը, հատկապես Ֆրանսիայում, Ամերիկայում և այլ երկրներում, զարգացման հեռանկարներ չունի: Սփյուռքում հայ գրականությունը հիմնականում իր ուսերի վրա էր տանում գրական հին սերունդը:

Սփյուռքահայ արվեստագետները

Շատ սփյուռքահայեր աչքի ընկնող տեղ են դրավում երաժշտական արվեստի բնագավառում: Հայ երաժշտության զարգացման գործում մեծ վաստակ ունեն բուլղարահայ երաժիշտ, խմբավար Սարգիս Բալթայանը, «Գուսան» երգչախմբի ղեկավար, Կոմիտասի աշակերտ, լիբանանահայ

Բարսեղ Կանաչյանը, լիբանանահայ վաստակավոր երաժշտագետ Աշոտ Պատմադրյանը, կոմպոզիտորներ Արա Պարթևյանը (Ֆրանսիա), Նիկոլ Գալանտերյանը (Իրան), Համբարձում Պերբերյանը (ԱՄՆ), Ալիսա Թերզյանը (Արգենտինա) և ուրիշներ: Համաշխարհային համբավ ունեն էստրադային երգիչ, կոմպոզիտոր, բանաստեղծ և կինոդերասան Շառլ Ազնավուրը (Ֆրանսիա), օպերայի երգչուհիներ Լուսին Ամարան (Արամադյան), Լիլի Զուքասդյանը (ԱՄՆ), Լուիզա Պողապալյանը (Բելգիա) և ուրիշներ, որոնք սակայն հիմնականում կատարում են օտար լեզվով:

Սփյուռքում գործում են հայկական երաժշտական բազմաթիվ խումբեր, որոնք կոչվում են հայ նշանավոր կոմպոզիտորներ Կոմիտասի, Արամ Խաչատրյանի և ուրիշների անուններով, 20-ական թվականներից սկսած սփյուռքում գործում է Կոմիտասի անվան մոտ 20 երգչախումբ:

Վերջին տասնհինգամյակում երաժշտական արվեստի շատ ներկայացուցիչներ եղան Սովետական Հայաստանում, որտեղ նրանց ջերմ ընդունելություն ցույց տվեցին բազմահազար հայրենակիցներ: Միայն 1965 թվականին աշխարհի տարբեր ծայրերից կարոտաբաղձ սիրով մայր հայրենիք այցելեցին տարբեր սերնդի պատկանող բազմաթիվ հայ շնորհալի երգիչներ ու երաժիշտներ, օրինակ՝ Ալան Հովհաննեսը (Նյու-Յորք), Կարպիս Զոբյանը (Բուխարեստ), Մանուկ Բարիքյանը (Լոնդոն), Ռոզի Արմենը (Փարիզ) և ուրիշներ, ինչպես և Բուլղարիայի 80 հոգուց բաղկացած հայկական երգի ու պարի անսամբլը:

Սփյուռքում ստեղծագործում են նաև մեծ թվով շնորհալի նկարիչներ: Նրանցից են ֆրանսահայ աշխարհահռչակ նկարիչներ Գառզուն (Գառնիկ Զուլումյանը), Ժանսեմը (Ժան Սեմիրյան), Խաչատուր (Ռիշար) Ժերանյանը, Զարեհ Մութաֆյանը, եգիպտահայ անվանի ծաղրանկարիչ Ալեքսանդր Սարուխանը, իտալահայ նկարիչ Գրիգոր Շլիթյանը և շատ ուրիշներ: Մեծ համբավ է վայելում ամերիկահայ քանդակագործ Խորեն Տեր-Հարությունը: Ուշագրավ է, որ առանձին գաղթավայրերում ստեղծվում են նկարչական դպրոցներ: Հայտնի է Մ. Սարյանի անվան զեղարվեստական ակադեմիան, որը հիմնադրվել է 1955 թվականին Հալեպում (Սիրիա):

Շատ հայեր աչքի են ընկել թատերական արվեստի մեջ: Հայտնի են մեծատաղանդ դերասաններ իրանահայ Մկրտիչ Թաշչյանը, ֆրանսահայ Արտաշես Գմբեթյանը, որին բարձր է գնահատել հռչակավոր դերասան Վահրամ Փափաղյանը «Իմ Օթելլոն» գրքում և ուրիշներ: Կինոարվեստի բնագավառում նշանավոր են կինոռեժիսորներ Ռուբեն Մամուլյանը (Ամերիկա), Աշոտ Մալաքյանը (Ֆրանսիա) և ուրիշներ:

Սփյուռքահայ մանուկ

Սփյուռքի հասարակական-բարոյական և մշակութային կյանքում կարևոր դեր է խաղում մամուլը: Այժմ սփյուռքում լույս են տեսնում շուրջ 150 անուն թերթ և ամսագիր, որոնց ճնշող մեծամասնությունը առաջադիմական ուղղություն ունի: Այդ ուղղության թերթերից են «Լրաբեր», «Պայքար», «Նոր օր» (ԱՄՆ), «Արարատ», «Զարթոնք», «Կանչ» (Բելյուսթ), «Աշխարհ» (Փարիզ), «Ներևան» (Սոֆիա), «Նոր կյանք» (Բուխարեստ), «Արև», «Զահակիր» (Եգիպտոս), «Սևան», «Սարդարապատ» (Արգենտինա), «Ապագա» (Կանադա) և այլն, որոնք մասնակիորեն տարածվում են նաև Սովետական Հայաստանում:

Հետադիմական ուղղության թերթերից են՝ «Հայրենիք» (Բոստոն), «Յուսաբեր» (Եգիպտոս), «Ալիք» (Թեհրան), «Յառաջ» (Փարիզ), «Աղբակ» (Բելյուսթ), որոնք հակասովետական պրոպագանդա են մղում և գովերգում արևմուտքի կապիտալիստական կարգը:

Սփյուռքահայ առանձին կազմակերպություններ հրապարակում են նաև թերթեր ինչպես երկլեզվյան, այնպես էլ անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, արաբերեն և այլ լեզուներով:

Սփյուռքահայ մշակույթի դարգացման վրա իր բարերար ազդեցությունն է գործում սովետահայ մշակույթը: Սփյուռքահայության ճնշող մեծամասնությունը իր հայացքը հառել է դեպի մայր հայրենիք՝ Սովետական Հայաստանը, ձգտում է օտար ափերից վերադառնալ և ակտիվորեն մասնակցել նրա առաջընթացի վեհ գործին:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Գ Լ Ո Ւ Խ I. Հայաստանի սոցիալ-տնտեսական դրույթունը XIX դարի սկզբին

1. Հայաստանի քաղաքական վիճակը 3
2. Հայ ժողովրդի իրավական և տնտեսական ծանր դրույթունը 6

Գ Լ Ո Ւ Խ II. Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին

1. 1804—1813 թթ. ռուս-պարսկական և 1806—1812 թթ. ռուս-թուրքական պատերազմները 12
2. 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը 21
3. 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմը 41
4. Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման պատմական նշանակությունը 54

Գ Լ Ո Ւ Խ III. Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմում

1. Վարչական կարգերը 57
2. Սոցիալ-տնտեսական հարաբերությունները 71

Գ Լ Ո Ւ Խ IV. Գյուղացիական շարժումները Հայաստանում XIX դարի առաջին կեսին 87

Գ Լ Ո Ւ Խ V. Արևմտյան Հայաստանը 1830—1850 թվականներին

1. Սոցիալ-տնտեսական հարաբերությունները 101
2. Պոլսի հայ գաղութը 115
3. Արևմտահայ գեմոկրատիայի պայթարը սուլթանական բռնակալության և ամիրանների դեմ 119

Գ Լ Ո Ւ Խ VI. Հայկական կուլտուրան XIX դարի առաջին կեսին 124

ԵՐԿՐՈՐԳ ԲԱԺԻՆ

ՖԵՌՊԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ ԵՎ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ (XIX դարի երկրորդ կես)

Գ Լ Ո Ւ Խ VII. Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական դրույթունը 1850—1860-ական թվականներին

1. Սոցիալ-տնտեսական հարաբերությունները 139
2. Ղրիմի պատերազմը և հայերը 145

Գ Լ Ո Ւ Խ VIII. Հայ հասարակական հոսանքները 1850—1860-ական թվականներին

1. Կղերա-ֆեոդալական հոսանք 155
2. Կիրեբալ-բուրժուական հոսանք 156
3. Հեղափոխական-դեմոկրատական հոսանք 161

Գ Լ Ո Ւ Խ IX. Արևմտահայերի հասարակական-քաղաքական և ազգային-ազատագրական շարժումները

1. Արևմտահայերի Ազգային սահմանադրությունը 169
2. Ղեկիտների 1862 թվականի ասպետամբությունը 178

Գ Լ Ո Ւ Խ X. Բուրժուական ռեֆորմները և կապատալիզմի զարգացումը Հայաստանում

1. Գյուղացիական ռեֆորմը Արևելյան Հայաստանում 187
2. Գյուղացիական շարժումները հետադարձության շրջանում 194
3. Կապիտալիզմի զարգացումը և բանվոր դասակարգի առաջացումը 199

Գ Լ Ո Ւ Խ XI. 1877—1878 թթ. ռուս-բուրժուական պատերազմը և հայկական հարցը

1. Ռուս-թուրքական պատերազմը և հայերը 214
2. Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը 224

Գ Լ Ո Ւ Խ XII. Հայ ազատագրական շարժումները XIX դարի երկրորդ կեսին

1. Ազգային-ազատագրական պայքարի վերելքը. ազատագրական խմբակների առաջացումը 237
2. Քաղաքական կուսակցությունների ձևավորումը 251
3. Հայկական կոտորածները Թուրքիայում 260

Գ Լ Ո Ւ Խ XIII. Բանվորական շարժման սկիզբը: Մարքսիզմի տարածումը Հայաստանում

1. Բանվորական շարժման առաջին քայլերը 266
2. Մարքսիզմի տարածումը Հայաստանում 271
3. Բանվորական և մարքսիստական խմբակների առաջացումը 275

Գ Լ Ո Ւ Խ XIV. Հայկական կուլտուրան XIX դարի երկրորդ կեսին 280

ԵՐՐՈՐԳ ԲԱԺԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ԲՈՒՐՋՈՒԱ-ԳԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈՒՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Գ Լ Ո Ւ Խ XV. Հայաստանի տնտեսական և քաղաքական դրույթունը XX դարի սկզբին

1. Սոցիալ-տնտեսական հարաբերությունները 295
2. Մասսայական հեղափոխական շարժման սկիզբը. սոցիալ դեմոկրատական կազմակերպությունների առաջացումը 300

Գ Լ Ո Ւ Խ XVI. Հեղափոխական շարժումները Հայաստանում 1905—1907 թվականներին

1. Հեղափոխության սկիզբը 312
2. Հեղափոխական շարժումների վերելքը 316
3. Հեղափոխական շարժումների վայրէջքը 323
4. Գյուղացիական շարժումները 1905—1907 թվականներին 329
5. Երիտասարդական շարժումները 1905—1907 թվականներին 332
6. Հեղափոխության նշանակությունն ու դասերը 335

Գ Լ Ո Ւ Խ XVII. Հայաստանը 1907—1914 թվականներին

1. Ռեակցիայի և վերելքի տարիները 338
2. Հայկական հարցը 1912—1914 թվականներին 345

Գ Լ Ո Ւ Խ XVIII. Հայ ժողովուրդը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին

1. Պատերազմական գործողությունները Կովկասյան ռազմաճակատում 354

2. Արևմտահայերի մասսայական կոտորածները	362
3. Հայերի հերոսական ինքնապաշտպանությունը	374
4. Հայ գաղթականությունը	383
5. Իրադրությունը Հայաստանում ֆետրվարյան հեղափոխությունից հետո	385
Գլուխ XIX. Հայկական կուլտուրան 1900—1917 թվականներին	392

ՉՈՐՐՈՐԳ ԲԱԺԻՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵՄ ՀԵՂԱՓՈՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿՍՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՈՒ ԱՄՐԱՊԵՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Գլուխ XX. Իրադրությունը Հայաստանում Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո (1917—1918 թթ.)	400
Գլուխ XXI. Հայաստանի բուրժուական հանրապետությունը (1918—1920)	424
Գլուխ XXII. Մայիսյան ապստամբությունը	
1. Հեղափոխական շարժումները ապստամբության նախօրյակին	438
2. Մալխյան ապստամբությունը	448
Գլուխ XXIII. Քաղաքական իրադրությունը Հայաստանում 1920 թ. կեսերին	463
Գլուխ XXIV. Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում	476
Գլուխ XXV. Սովետական իշխանության առաջին փայլերը	488
Գլուխ XXVI. Քաղաքացիական կռիվները Հայաստանում 1921 թվականին	499
1. Դաշնակցականների փետրվարյան խռովությունը	499
2. Զանգեզուրի ազատագրումը	509

ՀԻՆԳԵՐՈՐԳ ԲԱԺԻՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1921—1937)

Գլուխ XXVII. Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին (1921—1925)	514
1. Սովետական Հայաստանի դրությունը վերականգնման ժամանակաշրջանի սկզբում	514
2. Անցումը նոր տնտեսական քաղաքականության, խաղաղ շինարարության առաջին հաջողությունները	520
3. ՀՍՍՀ առաջին սահմանադրության ընդունումը: Անդրֆեդերացիայի և ՍՍՀՄ-ի կազմակերպումը	528
4. Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանի վերջում	539
Գլուխ XXVIII. Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման ժամանակաշրջանում: Սոցիալիզմի տնտեսական հիմքի կառուցումը (1926—1932)	547
1. Անցումը սոցիալիստական ինդուստրացմանը	547

2. Գյուղատնտեսության կռիվալիցայում	550
3. Սոցիալիզմի տնտեսական հիմքի կառուցումը	554

Գլուխ XXIX. Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման ավարտման ժամանակաշրջանում: Սոցիալիզմի հաղթանակը մեր երկրում (1933—1937)

1. Սովետական Հայաստանի հաջողությունները երկրորդ հնգամյակի տարիներին	569
2. Սոցիալիզմի հաղթանակը մեր երկրում: Հայկական ՍՍՀ նոր սահմանադրությունը	577

Գլուխ XXX. Կուլտուրական հեղափոխությունը Սովետական Հայաստանում (1920—1940)

Գլուխ XXXI. Սովետական Հայաստանը և հայկական սփյուռքը

ՎԵՑԵՐՈՐԳ ԲԱԺԻՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ: ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՊՊԱՆԱԿԸ (1938—1958)

Գլուխ XXXII. Սոցիալիստական հասարակության ամրապնդումը (1938—1941)	621
Գլուխ XXXIII. Սովետական Հայաստանը Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանում (1941—1945)	630
1. Հայրենական մեծ պատերազմի սկիզբը: Հայ ժողովրդի զավակների սերագործությունները ռազմաճակատներում	630
2. Սովետական Հայաստանի աշխատավորների հերոսական աշխատանքը թիկունքում	656
Գլուխ XXXIV. Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության ետպատերազմյան վերականգնման ու զարգացման ժամանակաշրջանում (1945—1950)	669
Գլուխ XXXV. Սովետական Հայաստանը զարգացած սոցիալիզմի կառուցման եզրափակիչ փուլում (1951—1958)	679

ՅՈՒՐԵՐՈՐԳ ԲԱԺԻՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԵՎ ԱՍՏԻՃԱՆԱԲԱՐ ԿՈՄՈՒՆԻՉԻՅԻՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1959—1978)

Գլուխ XXXVI. Սոցիալիստական հասարակության հետագա զարգացումը և նրա վերանումը կոմունիզմի	692
1. Ժողովրդական տնտեսությունը յոթնամյակի տարիներին (1959—1965)	692
2. Սովետական Հայաստանը 8-րդ հնգամյակի տարիներին	700
3. Նոր նվաճումներ IX հնգամյակում	707
4. ՍՄԿԿ 25-րդ համագումարը կարևոր ընագիծ է կոմունիզմի ճանապարհին	713
Գլուխ XXXVII. Սովետաճայ մշակույթը ետպատերազմյան տարիներին	721
Գլուխ XXXVIII. Հայկական սփյուռքը ետպատերազմյան տարիներին	
1. Սփյուռքը և մայր հայրենիքը	734
2. Սփյուռքահայ մշակույթը	739

Պարսամյան Վարդան Արամի
Հարությունյան Եմալուն Ռուբենի

Հայ ժողովրդի պատմություն (1801—1978 թ.թ.)

Խմբագիր՝ Ա. Հովսեփյան
Նկարիչ՝ Խ. Հ. Գլուշամիրյան
Գեղ. խմբագիր՝ Բ. Վ. Մազմանյան
Տեխն. խմբագիր՝ Ռ. Ն. Ախիրյան
Վերստուգող սրբագրիչներ՝ Գ. Մ. Գասպարյան,
Գ. Ն. Երզնկյան

Պատվեր 10

Տպաքանակը՝ 1

Հանձնված է շարվածքի 1. 12. 1978 թ.:

Ստորագրված է տպագրության 17. 12. 1979 թ.:

Թուղթ №3, 60×90¹/₁₆: Բարձր տպագրություն, ատոտեսակը՝ գրքի սովորական:

Տպ. 47,0 մամ., հրատ. 45,16 մամ.: Գինը 1ռ. 55կ.: ՍԵ № 474

«Լույս» հրատարակչություն, Երևան—9, Կիրովի 19ա:

Издательство «Луйс», Ереван-9, Кирова 19а

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի վարչության գորպետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ: Երևան, Տերյան:

Полиграфкомбинат им. Акопа Мегарпата Госкомитета по делам издательства, полиграфии и книжной торговли Арм. ССР. Ереван-9 ул. Теряна, 91.

ԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
406	14 ն	«Թուրքահայաստանի»	«Թուրքահայաստանի»
486	9 ն	Բայց	Բարձր
494	11 Վ	է	էր
540	11 Վ	համարաշխային	համարաշխային
544	11 ն	զանձված	զանձվող
545	1 ն	դասակարգային	դասակարգային
564	9 ն	մտավ	մտան
576	11 Վ	համեմությամբ	համեմատությամբ
585	2 ն	կազմակերպվեցին	կազմակերպվեց
591	17 ն	1933	1923
593	19 Վ	կոտավարության	կոտակցության
634	11 Վ	հրատարակված	հրատարակված
667	14 Վ	գրել	դերել
678	12 Վ	Համ(բ)Կ	ՀամԿ(բ)Կ
714	14 Վ	որոկի	որակի
715	19 ն	Կենտոմի	Կենտկոմի
718	13 ն	Կենտոմի	Կենտկոմի
723	15 ն	1978	1976
733	16 ն	պարբերակներ	պարբերականներ
747	8 ն	հրատարակում	հրատարակում

521 էջի ներքևից 9-րդ տողը կարգալ. պահանջում է, որ նրանք կիրառեն ուսական կոմունիստների փորձի ոչ թե

531 էջի վերևից 26—27-րդ տողերը կարգալ. բի անունից ողջունի հեռագիր ուղարկեց նաև ՌՍՖՍՀ Կենտգործկոմի նախագահ Մ. Ի. Կալինինին՝ արտահայտելով խոր երախտագիտություն ուս մեծ ժողովրդի նկատմամբ:

667 էջի ներքևից 9-րդ տողը կարգալ. լիայի, Բուլղարիայի, Ռումինիայի և այլ